Գիրքը լուսապատճենահանվել է

"ՀամաՀայկական Էլ. Գրադարան"

կայքի՝ www.freebooks.do.am

կողմից եւ ներկայացվում է իր

այցելուների ուշադրությանը:

The book created by "PanArmenian E. Library"

Գիրքը կարող է
օգտագործվել միայն ընթերցանության համար...

For more info: www.freebooks.do.am

ԴՈՒՔ ՆՈՒՅՆՊԵՍ ԿԱՐՈՂ ԵՔ ՁԵՐ ՆԵՐԴՐՈՒՄՆ ՈՒՆԵՆԱԼ ՀԱՅԱՏԱՌ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՎ ԻՆՔՆԵՐԴ ԼՈՒՍԱՊԱՏՃԵՆԱՀԱՆԵԼ ԳՐՔԵՐ:

ԹՎԱՅԻՆ ԳՐՔԵՐԻ ՍՏԵՂԾՄԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԻՄԱՆԱԼ "ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ" ԿԱՅՔԻՑ՝

**www.freebooks.do.am**

ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՆՔ, ՈՐ ՕԳՏՎՈՒՄ ԵՔ ՄԵՐ ԿԱՅՔԻՑ:

ՑԱՆԿԱՆՈՒՄ ԵՆՔ ՀԱՃԵԼԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆ:



ԳՐԵՔ ՄԵԶ՝ freebooks@rambler.ru

# Հիմնական փաստեր

## Միավորված ազգերի կազմակերպության մասին



Երևան 2002 թ.

DEPARTMENT OF PUBLIC INFORMATION

# BASIC FACTS

## About the United Nations

UNITED NATIONS
Yerevan, 2002

*Նվիրվում է Հայաստանի Հանրապետությունում ՄԱԿ-ի գործունեության տասնամյակին*

ՀԱՆՐԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

# ՀԻՄՆԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ

## ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Երևան, 2002

<u>Ծանոթություն.</u> Թարգմանված է Նյու Յորքում 2000թ. հրատարակված **«Հիմնական փաստեր Միավորված ազգերի կազմակերպության մասին»** գրքից (***Basic Facts about the United Nations, New York, 2000***): Արվել են միայն աննշան լրացումներ՝ կապված վերջին իրադարձությունների հետ:

# ԽՈՍՔ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ

«Հիմնական փաստեր Միավորված ազգերի կազմակերպության մասին» գրքի հրատարակումը անհնար կլիներ առանց մի շարք կազմակերպությունների և անհատների գործուն օժանդակության:

Գրքի հրատարակությանը մեծապես նպաստել են Հայաստանում իրենց ներկայացուցչությունը ունեցող այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են **ՄԱԶԾ-ն, ՄԱՀՏՎ-ն, ՄԱՓԳՀԳ-ն, ՊՀԳ-ն, ՄԱՄՀ-ն, ՄԱԲՀ-ն** և **ԱՀԿ-ն** ինչպես նաև Հայաստանում ՄԱԿ-ի համակարգող **Ժոել Բուդրոն**:

Հատուկ շնորհակալություն է հայտնվում ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության Նյու Յորքի գրասենյակին, հատկապես Գլխավոր քարտուղարի հանրային տեղեկատվության և հաղորդակցության հարցերով տեղակալ պարոն **Շաշի Թարուրին**՝ գրքի հրատարակման մտահղացումը քաջալերելու համար:

Գրքի պատրաստման գործընթացում նշանակալի մասնակցություն և աջակցություն ցուցաբերելու համար շնորհակալություն է հայտնվում ՀՀ արտաքին գործոց նախարարության միջազգային կազմակերպությունների վարչությանը, վարչության պետ **Աշոտ Քոչարյանին**, ՄԱԿ-ի բաժնի վարիչ **Աննա Աղաջանյանին**, Հասարակայնության հետ հարաբերությունների վարչությանը, վարչության պետ **Ձյունիկ Աղաջանյանին**, ինչպես նաև Հունաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան **Վահրամ Կաժոյանին**:

Խորին շնորհակալություն և երախտագիտություն է հայտնվում ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության արտաքին հարաբերությունների բաժնի նախկին վարիչ, պրոֆեսոր **Անատոլի Մկրտչյանին** գրքի մասնագիտական խմբագրման գործում ունեցած մեծ ավանդի և արժեքավոր խորհրդատվության համար:

Հրատարակության պատրաստման գործում իրենց նշանակալի ներդրումն են ունեցել նաև հայերեն տեքստի խմբագիր **Անահիտ Հարությունյանը** և գրքի ձևավորող **Վիկտոր Դիշչեկենյանը**:

Գրքի պատրաստման ամբողջ ընթացքում անմիջական ակտիվ մասնակցություն է ունեցել Հայաստանում ՀՏՎ-ի աշխատանքային խումբը՝ ի դեմս աշխատակազմի ղեկավար պարոն **Վալերի Տկաչուկի, Արմինե Հարաչյանի, Գայանե Գաբրիելյանի** և **Սոնա Ազգյանի**:

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Հապավումների ցանկ xi
Նախաբան xiv
Հայերեն հրատարակության առթիվ xvi


## ՄԱՍ ԱՌԱՋԻՆ


### Գլուխ 1. Միավորված ազգերի կազմակերպությունը 1

ՄԱԿ-ի կանոնադրությունը 4
Նպատակներն ու սկզբունքները 5
Անդամակցությունը 6
Պաշտոնական լեզուները 6

Կազմակերպության կառուցվածքը 6
Գլխավոր ասամբլեա 6
Անվտանգության խորհուրդ 9
Տնտեսական և սոցիալական խորհուրդ 11
Խնամակալության խորհուրդ 13
Արդարադատության միջազգային դատարան 13
Քարտուղարություն 15
Գլխավոր քարտուղար 15
ՄԱԿ-ի բյուջեն 20
ՄԱԿ-ի կազմակերպությունների ընտանիքը 22
ՄԱԿ-ի քարտուղարությունը 22
Միջազգային տրիբունալներ 35
ՄԱԿ-ի ծրագրերն ու այլ մարմինները 35
Մասնագիտացված գործակալություններ և այլ կազմակերպություններ 50


## ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ


### Գլուխ 2. Միջազգային խաղաղություն և անվտանգություն 69

Անվտանգության խորհուրդ 70
Գլխավոր ասամբլեա 71
Հակամարտությունների կանխարգելում 72
Խաղաղարարություն 74

Խաղաղապահություն 75
Հարկադրական միջոցներ 79
Խաղաղաշինություն 81

ՄԱԿ-ի գործողությունները հանուն խաղաղության 84

Աֆրիկա 84
- Հարավային Աֆրիկա 84
- Կենտրոնական Աֆրիկա 87
- Արևմտյան Աֆրիկա 92
- Եթովպիա-Էրիթրեա 95

Լատինամերիկյան և Կարիբյան ավազանի երկրներ 95

Ասիա 99
- Մերձավոր Արևելք 99
- Հնդկաստան Պակիստան 103
- Իրաք 103
- Տաջիկստան 106

Եվրոպա 107
- Կիպրոս 107
- Վրաստան 108
- Բալկաններ 108

Զինաթափում 109
- Զինաթափման մեխանիզմները 109
- Զանգվածային ոչնչացման զենքեր 118
- Քիմիական և կենսաբանական զենքի սպառնալիքի չեզոքացում 121
- Սովորական զինատեսակներ, վստահության ամրապնդում և թափանցիկություն 122

Երկրամերձ տիեզերական տարածության օգտագործումը խաղաղ նպատակներով 125

**Գլուխ 3. Տնտեսական զարգացում 133**

Զարգացման բնագավառի գործունեության համակարգումը 134

Տնտեսական զարգացում 136
- Զարգացման նպատակով պաշտոնական օգնություն 137
- Զարգացման աջակցությունն աշխարհում 139

Վարկեր զարգացման համար 141
Վարկեր կայունության համար 143
Ներդրումներ և զարգացում 145
Առևտուր և զարգացում 146
Գյուղատնտեսական զարգացում 150
Արդյունաբերական զարգացում 152
Աշխատանքային հարաբերություններ 153
Միջազգային ավիացիա 155
Միջազգային ծովային փոխադրումներ 156
Հեռահաղորդակցություն 158
Միջազգային փոստային ծառայություն 160
Մտավոր սեփականություն 161
Գլոբալ վիճակագրություն 163
Պետական կառավարում 164
Գիտությունը և տեխնոլոգիան զարգացման համար 164

Սոցիալական զարգացում 165
Աղքատության կրճատում 168
Պայքար սովի դեմ 171
Առողջապահություն 174
Մարդկային բնակավայրեր 179
Կրթություն 181
Հետազոտություններ և վերապատրաստում 183
Բնակչություն և զարգացում 185
Կանանց առաջխաղացումը 188
Օգնություն երեխաներին 191
Սոցիալական ինտեգրացում 193
Հակաքաղաքացիական հասարակություն,
ապօրինի թմրամիջոցներ և ահաբեկչություն 197
Թմրադեղերի վերահսկում 198
Հանցագործության կանխարգելում 201
Գիտություն, մշակույթ և հեռահաղորդակցություն 203

Կայուն զարգացում 205
Օրակարգ 21 208
Գործողություն շրջակա միջավայրի պաշտպանության համար 210
Կլիմայի փոփոխություն և գլոբալ ջերմացում 213
Անտառներ 215
Անապատացում 216
Կենսաբազմազանություն, աղտոտում և
ձկնորսության չափազանց մեծ ծավալներ 217
Ծովային միջավայրի պաշտպանություն 218
Օդերևութաբանություն, կլիմա և ջուր 219

Բնական պաշարներ և էներգիա 222
Միջուկային անվտանգություն 224

**Գլուխ 4. Մարդու իրավունքներ** **229**

Մարդու իրավունքների փաստաթղթերը 230
Մարդու իրավունքների միջազգային օրինագիծ 230
Տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքներ 232
Քաղաքական ու քաղաքացիական իրավունքներ 233
Այլ կոնվենցիաներ 233
Այլ նորմատիվ փաստաթղթեր 236

Մարդու իրավունքների մեխանիզմը 237
Մարդու իրավունքների հանձնաժողով 237
Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատար 238

Մարդու իրավունքների առաջմղումն ու պաշտպանումը 241
Զարգացման իրավունքը 244
Աշխատանքի իրավունքը 245
Պայքար խտրականության դեմ 246

Արդարադատության իրականացումը 255
Ապագա առաջնայնություններ 256

**Գլուխ 5. Մարդասիրական գործողություններ** **261**

Մարդասիրական գործողությունների համակարգումը 262
Օգնության ու պաշտպանության տրամադրումը 265
Փախստականների միջազգային պաշտպանությունը
և օգնության տրամադրումը 269
Պաղեստինի փախստականներ 272

**Գլուխ 6. Միջազգային իրավունք** **277**

Վեճերի դատական կարգավորումը 277
Միջազգային իրավունքի զարգացումն ու կոդիֆիկացիան 280
Միջազգային առևտրային իրավունք 281
Շրջակա միջավայրի իրավունք 282
Ծովային իրավունք 283
Միջազգային մարդասիրական իրավունք 285
Միջազգային ահաբեկչություն 288
Այլ իրավական հարցեր 290

**Գլուխ 7. Ապագաղութացում** **293**

Միջազգային խնամակալական համակարգ 293
Ոչ ինքնակառավարվող տարածքներ 294
Գաղութային երկրներին ու ժողովուրդներին
անկախություն շնորհելու մասին հռչակագիրը 295
Նամիբիա 298
Արևմտյան Սահարա 299
Արևելյան Թիմոր 301

# ՄԱՍ ԵՐՐՈՐԴ

## Հավելվածներ

ՄԱԿ-ի անդամ երկրները 307
Աճը ՄԱԿ-ի անդամակցությունում 1945-2000թթ. 315
Խաղաղապահ գործողություններ, անցյալ և ներկա 318
Ապագաղութացում 324
Տարածքներ, որոնք անկախություն են ստացել 1960թ.-ից 324
Տարածքներ, որոնք ինտեգրվել կամ միացել են
անկախ պետություններին 1960թ. ի վեր 326
Ինքնորոշված խնամակալության տակ գտնվող տարածքներ 327
ՄԱԿ-ի բյուջեն 329
ՄԱԿ-ի հատուկ նշվող տասնամյակները, տարեթվերը և օրերը 331

# Հապավումների ցանկ

ԱՀԿ — Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
WHO — World Health Organization

ԱՀԿ — Առևտրի համաշխարհային կազմակերպություն
WTO — World Trade Organization

ԱՄԿ — Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ILO — International Labour Organization

ԱՄԿ — Առևտրի միջազգային կենտրոն
ITC — International Trade Centre

ԱՄՀ — Արժույթի միջազգային հիմնադրամ
IMF — International Monetary Fund

ԱԷՄԳ — Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն
IAEA — International Atomic Energy Agency

ԲՆԵԳ — Բազմակողմ ներդրումների երաշխիքային գործակալություն
MIGA — Multilateral Investment Guarantee Agency

ԳԶՄՀ — Գյուղատնտեսական զարգացման միջազգային հիմնադրամ
IFAD — International Fund for Agricultural Development

ԶՀԿ — Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպություն
WTO — World Tourism Organization

ԶՀՎ — Զինաթափման հարցերի վարչություն
DDA — Department of Disarmament Affairs

ԹՎՀԿԳ — Թմրադեղերի վերահսկման և հանցագործությունների կանխարգելման գրասենյակ
ODCCP — Office for Drug Control and Crime Prevention

ԻՀԳ — Իրավական հարցերի գրասենյակ
OLA — Office of Legal Affairs

ԾՄԿ — Ծովային միջազգային կազմակերպություն
IMO — International Maritime Organization

| | | |
|---|---|---|
| ԿԱՄՈՒԳԻ | Կանանց առաջխաղացման միջազգային ուսումնական և գիտահետազոտական ինստիտուտ |
| INSTRAW | International Research and Training Institute for the Advancement of Women |
| ՄԱԲԿ | ՄԱԿ-ի բնակավայրերի կենտրոն (Հաբիտատ) |
| UNCHS | UN Centre for Human Settlments (Habitat) |
| ՀՄՄ | Հեռահաղորդակցության միջազգային միություն |
| ITU | International Telecommunication Union |
| ՀՏՎ | Հանրային տեղեկատվության վարչություն |
| DPI | Department of Public Information |
| ՄԱԱԶՀ | ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողով |
| UNCTAD | United Nations Conference on Trade and Development |
| ՄԱԱԶԿ | ՄԱԿ-ի Արդյունաբերության զարգացման կազմակերպություն |
| UNIDO | United Nations Industrial Development Organization |
| ՄԱԲՀ | ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ |
| UNFPA | United Nations Population Fund |
| ՄԱԶԳԻ | ՄԱԿ-ի Զինաթափման գիտահետազոտական ինստիտուտ |
| UNIDIR | United Nations Institute for Disarmament Research |
| ՄԱԶԾ | ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր |
| UNDP | United Nations Development Program |
| ՄԱԹՎԾ | ՄԱԿ-ի Թմրադեղերի վերահսկման ծրագիր |
| UNDCP | United Nations Drug Control Programme |
| ՄԱԿԶՀ | ՄԱԿ-ի Կանանց զարգացման հիմնադրամ |
| UNIFEM | United Nations Development Fund for Women |
| ՄԱԿԿ | ՄԱԿ-ի Կամավորներ |
| UNV | United Nations Volunteers |
| ՄՄԱՀԿ | Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն |
| WIPO | World Intellectual Property Organization |

ՄԱՄՀ ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ
UNICEF United Nations Children Fund

ՄԱՄՔԱԳԻ ՄԱԿ-ի Միջտարածաշրջանային քրեական և
արդարադատության գիտահետազոտական ինստիտուտ
UNICRI UN Interregional Crime and Justice Research Institute

ՄԱՇՄԾ ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիր
UNEP United Nations Environment Programme

ՄԱՍԶԳԻ ՄԱԿ-ի Սոցիալական զարգացման
գիտահետազոտական ինստիտուտ
UNRISD United Nations Research Institute for Social Development

ՄԱՈՒԳԻ ՄԱԿ-ի Ուսուցման և գիտահետազոտական ինստիտուտ
UNITAR United Nations Institute for Training and Research

ՄԱՓԳՀԳ ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն
հանձնակատարի գրասենյակ
UNHCR Office of the United Nations High Commissioner for Refugees

ՄԱՕԱԳ ՄԱԿ-ի Մերձավոր Արևելքում Պաղեստինի փախստականների
օգնության և աշխատանքների գործակալություն
UNRWA United Nations Relief and Works Agency for Palestine Refugees
in the Near East

ՄԶԱ Միջազգային զարգացման ասոցիացիա
IDA International Development Association

ՄԻԳՀԳ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն
հանձնակատարի գրասենյակ
OHCHR Office of the High Commissioner for Human Rights

ՄՀՀԳ Մարդասիրական հարցերի համակարգման գրասենյակ
OCHA Office for the Coordination of Humanitarian Affairs

ՄՖԿ Միջազգային ֆինանսական կորպորացիա
IFC International Finance Corporation

ՅՈՒՆԵՍԿՕ ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի
կազմակերպություն
UNESCO United Nations Educational, Scientific and Cultural Organization

| | |
|---|---|
| ՊԳԿ | ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն |
| FAO | Food and Agriculture Organization of the United Nations |
| ՊՀԾ | Պարենի համաշխարհային ծրագիր |
| WFP | World Food Programme |
| ՎԶՄԲ | Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ |
| IBRD | International Bank for Reconstruction and Development |
| ՏՍՀՎ | Տնտեսական և սոցիալական հարցերի վարչություն |
| DESA | Department of Economic and Social Affairs |
| ՓՀԱՊԿ | Միջուկային փորձարկումների համապարփակ արգելման պայմանագրի կազմակերպություն |
| CTBTO | Comprehensive Nuclear-Test-Ban-Treaty Organization |
| ՓՀՄ | Փոստային համընդհանուր միություն |
| UPU | Universal Postal Union |
| ՔԱՄԿ | Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն |
| ICAO | International Civil Aviation Organization |
| ՔԶԱԿ | Քիմիական զենքի արգելման կազմակերպություն |
| OPCW | Organization for Prohibition of Chemical Weapons |
| ՔՀՎ | Քաղաքական հարցերի վարչություն |
| DPA | Department of Political Affairs |

# ՆԱԽԱԲԱՆ

Նոր դարի արշալույսին Միավորված ազգերի կազմակերպությունը շարունակում է հիմնարար փոփոխությունների ենթարկվել՝ արտացոլելով մեր ժամանակաշրջանի կարևորագույն անցումային երևույթներն ու վերաձևումները:

Գլոբալացումը վերափոխում է աշխարհը: Այն որոշ երկրների ու անհատների մեծ օգուտ է բերում՝ արագ աճ, ավելի բարձր կենսամակարդակ, նոր հնարավորություններ, միաժամանակ բացասական արձագանքներ է առաջացնում, քանի որ այդ օգուտները բաշխվում են շատ անհավասարաչափ, և համաշխարհային շուկայում դեռևս չեն հիմնավորվել այնպիսի արժեքներ ու կանոններ, որոնք լուծեին այնպիսի սոցիալական խնդիրներ, ինչպիսիք են մարդու իրավունքները, աշխատանքային չափանիշները և շրջակա միջավայրի պաշտպանությունը: Գլոբալացումը նաև ակամա հեշտացրել է, ինչպես առիթ եմ ունեցել անվանելու, «հակաքաղաքացիական հասարակության», այսինքն՝ հանցագործության, հիվանդությունների, ահաբեկչության, թմրադեղերի ու զենքի ապօրինի փոխադրումների շարժը սահմաններից դուրս: Այսօր մեր առջև խնդիր է ծառացել գլոբալացումը դարձնել այն շարժիչ ուժը, որը մարդկանց դուրս բերի զրկանքներից ու թշվառությունից, ոչ թե դառնա նրանց հետ պահող ուժ:

Նախորդ կեսդարյա ժամանակահատվածում աննախադեպ տնտեսական նվաճումներ են արձանագրվել: Այսօր մարդկանց մեծ մասը կարող է ակնկալել, որ ծնողներից ավելի երկար կապրի: Նրանք ավելի լավ են սնվում, ավելի լավ առողջություն ունեն, ավելի լավ կրթություն են ստացել և, ընդհանուր առմամբ, ավելի լավ տնտեսական հեռանկարներ ունեն: Բայց զրկանքներն ու հուսահատությունը նույնպես համատարած են: Ավելի քան 1 մլրդ մարդ ստիպված է գոյատևել օրական 1 դոլարից ցածր գումարով: Սարսափելի անհավասարություն է երկրների ներսում և երկրների միջև: Այնպիսի հիվանդություններ, ինչպիսիք են ՁԻԱՀ-ն ու մալարիան, սպառնում են ի չիք դարձնել տարիների առաջընթացը: Տեխնոլոգիապես հարուստ ու տեխնոլոգիապես աղքատ երկրների միջև «թվային բաժանումը» ավելի է մեծացնում աղքատության անջրպետը: Այն դեպքում, երբ տեղեկատվությունն ու գիտելիքը դարձել են հարստության ու հզորության հիմնական աղբյուր, զարգացող աշխարհի բնակչության կեսը երբևէ հնարավորություն չի ունեցել օգտվելու հեռախոսից, առավել ևս՝ համակարգչից: Այս մարդկանց հիմնական հոսանքի մեջ ընդգրկելը մեր ամենամեծ ծրագրերից է: Ես «Մենք՝ ժողովուրդներս» հազարամյակի զեկույցում ևս մի քանի խոշոր նախաձեռնության մասին եմ հայտարարել, որոնք նպատակ ունեն տեղեկատվական տեխնոլոգիաների նորույթն օգտագործել հանուն զարգացման:

Աղքատությունն ու անհավասարությունը պարարտ հող են հակամարտությունների համար: Պետությունների միջև պատերազմները նվազել են, բայց վերջին տասնամյակում ներքին դաժան պատերազմները ավելի քան 5 մլն մարդու կյանք են խլել, իսկ տեղահանվածների թիվը նշվածից մի քանի անգամ ավելի մեծ է: Զանգվածային ոչնչացման զենքերը շարունակում են սարսափ սփռել: Մենք անվտանգության մասին ավելի շատ մարդկանց պաշտպանելու

պետք է մտածենք, քան տարածք պահպանելիս: Եվ թեպետ մենք խոսում ենք միջազգային հանրության զինանոցում առկա հակամարտությունների կանխարգելման, խաղաղապահության, հետկոնֆլիկտային խաղաղաշինության կամ այլ խաղաղարար միջոցների մասին, պետք է վստահ լինենք, որ երբ Միավորված ազգերի կազմակերպությանը փորձելու կոչ է արվում, նրան տրամադրվում են աշխատանքն իրականացնելու համար անհրաժեշտ մանդատն ու միջոցները:

ՄԱԿ-ը անկախ ռազմական հնարավորություններ չունի, իսկ նրա ֆինանսական միջոցները խիստ համեստ են: ՄԱԿ-ի ազդեցությունը բխում է իր արժեքների կշռից, համաշխարհային նորմերի ու միջազգային իրավունքի հաստատման ու պահպանման դերից, համաշխարհային մտահոգությունները արծարծելու և գործողություններ սկսելու նրա կարողությունից և մարդկանց կյանքը բարելավելու ուղղությամբ գործնական աշխատանք տանելու նախապատվությունից: ՄԱԿ-ի արդյունավետությունը այդ բոլոր ձեռնարկումներում կախված է կառավարությունների, հասարակական խմբերի և մասնավոր սեկտորի միջև համագործակցությունից և ամենից առաջ այն մարդկանց միջև, ովքեր հատում են սահմանագծերը: Այսպես նրանք կարող են բաժանարար գծեր դառնալ: Այդ արդյունավետությունն անհնարին է առանց բարձր մակարդակի քաղաքական աջակցության, ինչը դրսևորվեց պատմության մեջ աշխարհի առաջնորդների ամենամեծ հավաքով՝ 2000թ. սեպտեմբերի Հազարամյակի գագաթաժողովով: Արդյունավետությունը կախված է նաև հասարակական կարծիքից: Ես հույս ունեմ, որ «Հիմնական փաստեր Միավորված ազգերի կազմակերպության մասին» այս նոր հրապարակումը կնպաստի ՄԱԿ-ի և մարդկանց կյանքում նրա ներկայության ըմբռնմանը:

*Քոֆի Անան*
*Գլխավոր քարտուղար*

# ՀԱՅԵՐԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Սիրելի ընթերցող,

Տասը տարի է անցել, ինչ Հայաստանի Հանրապետությունը դարձել է Միավորված ազգերի կազմակերպության անդամ, և նրա դրոշը բարձրացվել է Նյու Յորքում տեղակայված ՄԱԿ-ի կենտրոնական գրասենյակի շենքի դիմաց: Տասը տարի է անցել այն օրից, երբ Երևանում հիմնվեց ՄԱԿ-ի գրասենյակը՝ իր ձայնը միացնելով խաղաղության, զարգացման և մարդու իրավունքների խթանման ՄԱԿ-ի համաշխարհային ուղերձին:

Վերջին տասնամյակի ընթացքում առավել մեծ նշանակություն է ձեռք բերել ՄԱԿ-ի համակարգի դերը զարգացման և ժողովրդավարացման գործում՝ համագործակցված կառավարական հաստատությունների հետ: Շատ դժվարություններ են հաղթահարվել և տեխնիկական ու մարդասիրական բազմաթիվ ծրագրեր իրականացվել: Այս ժամանակահատվածում նաև կազմակերպության սկզբունքների, նպատակների և գործունեության մասին հայ ժողովրդի իրազեկության նշանակալի աճ է նկատվել:

Գլխավոր ասամբլեայի 1946թ. ընդունած 13(I) բանաձևում ասվում է. «ՄԱԿ-ը չի կարող հասնել այն նպատակներին, որոնց իրականացման համար է նա ստեղծվել, եթե աշխարհի մարդիկ լիովին տեղեկացված չլինեն նրա նպատակների և գործունեության մասին»: Խոսելով ՄԱԿ-ի գործունեության և նպատակների ըմբռնումը խթանելու մասին՝ Գլխավոր քարտուղար Քոֆի Անանը շեշտել է. «Պատմության պատմելը նույնքան կարևոր է, որքան այն ստեղծելը»: Ահա թե ինչու ես մեծ գոհունակությամբ եմ ձեզ ներկայացնում «Հիմնական փաստեր ՄԱԿ-ի մասին» գրքի հայերեն թարգմանությունը, որը կազմակերպության աշխատանքը նկարագրող հիմնական հրատարակություններից մեկն է: Գիրքը պատկերացում է տալիս ՄԱԿ-ի այն բոլոր ձեռնարկումների մասին, որոնք ուղղված են 21-րդ դարասկզբի հիմնական գլոբալ մարտահրավերների հաղթահարմանը, մասնավորապես տնտեսական և սոցիալական զարգացման ոլորտներում:

Ես կցանկանայի օգտվել առիթից՝ ողջունելու ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի՝ Հայաստանում ՄԱԿ-ի համակարգի և իրենց ներկայացուցչությունը հաստատած ՄԱԿ-ի կազմակերպությունների համակարգի աջակցությամբ և համագործակցությամբ այս կարևոր ծրագրի իրականացմանն ուղղված ջանքերը:

Ես ցանկանում եմ մեծ շնորհակալություն հայտնել այն բոլոր մարդկանց, ովքեր իրենց ներդրումն են ունեցել այս ծրագրում ինչպես հայկական, այնպես էլ միջազգային համայնքներում:

Ու՞մ է անհրաժեշտ այս գիրքը: Ես խորհուրդ կտայի այս գիրքը կարդալ բնակչության բոլոր շերտերին՝ ուսանողներին, ուսուցիչներին, զանգվածային լրատվամիջոցներին, ակադեմիական հանրությանը, հասարակական կազմակերպություններին և առհասարակ ողջ հանրությանը: Այս գիրքը կօգնի մեզ ավելի լավ հասկանալ «Համայն մարդկության անհրաժեշտ ընդհանուր տան» մասին պատմությունը, փարվել այս կազմակերպությանը, որն աշխատում է մեզ համար, պայքարում այսօր մեր բոլորի առջև ծառացած մարտահրավերների դեմ՝ որպես մեր իսկ կազմակերպություն: Այն ցույց է տալիս, որ կազմակերպության նպատակները և գործունեությունը սերտորեն կապված են գլոբալացված աշխարհի ընդհանուր ապագայի հետ:



*Շաշի Թարուր*
*Հաղորդակցության և հանրային*
*տեղեկատվության հարցերով*
*ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի տեղակալ*

# ՄԱՍ ԱՌԱՋԻՆ

## Գլուխ 1

## ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ



# ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

***«Միավորված ազգեր»*** անվանումն առաջարկել է ԱՄՆ նախագահ Ֆրանկլին Ռուզվելտը: Այն առաջին անգամ կիրառվել է Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ՝ 1942թ. հունվարի 1-ի «Միավորված ազգերի հռչակագրում», երբ 26 պետությունների ներկայացուցիչներ պարտավորվեցին շարունակել համատեղ պայքարը ֆաշիստական դաշինքի երկրների դեմ:

Անցյալում էլ պետությունները հիմնում էին հատուկ բնագավառներում համագործակցելուն ուղղված միջազգային կազմակերպություններ: Հեռահաղորդակցության միջազգային կազմակերպությունն ստեղծվել է 1865թ.՝ «Միջազգային հեռագրային կազմակերպություն» անվանումով, իսկ 1874թ. ստեղծվել է Փոստային միջազգային կազմակերպություն: Երկուսն էլ այսօր ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալություն են:

1899թ. Հաագայում անցկացվեց առաջին խաղաղարար համաժողովը, որի նպատակն էր ճգնաժամերի խաղաղ կարգավորման, պատերազմների կանխման և պատերազմական օրենքների կարգավորման փաստաթղթեր մշակել: Այն ընդունեց Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման կոնվենցիան և հիմնեց Միջազգային արբիտրաժի դատարանը, որն սկսեց գործել 1902թվականից:

ՄԱԿ-ին նախորդել է Ազգերի լիգան, որն ստեղծվել է համանման պայմաններում՝ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, 1919թ. Վերսալի պայմանագրով: Նրա նպատակն էր «խթանել միջազգային համագործակցությունը և հասնել խաղաղության ու անվտանգության»: Աշխատանքի միջազգային կազմակերպությունը՝ որպես Լիգայի գործընկեր գործակալություն, նույնպես ստեղծվել է Վերսալի պայմանագրով: Ազգերի լիգան դադարեց գործելուց, երբ նրան չհաջողվեց կանխել Երկրորդ համաշխարհային պատերազմը:

1945թ. 50 պետությունների ներկայացուցիչներ հավաքվեցին Սան Ֆրանցիսկոյում՝ միջազգային կազմակերպությանը նվիրված Միավորված ազգերի համաժողովում մշակելու Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունը: Պատվիրակները քննարկում էին այն առաջարկները, որոնք 1944թ. օգոստոս-հոկտեմբեր ամիսներին ԱՄՆ Դամբըրթըն Օուքսում ներկայացվել էին Չինաստանի, ԽՍՀՄ-ի, Մեծ Բրիտանիայի և ԱՄՆ-ի ներկայացուցիչների կողմից: Կանոնադրությունը 50 պետությունների ներկայացուցիչների կողմից ստորագրվեց 1945թ. հունիսի 26-ին: Լեհաստանը, որ ներկա չէր համաժողովին, Կանոնադրությունն ստորագրեց ավելի ուշ՝ դառնալով հիմնադիր 51 պետություններից մեկը:

Միավորված ազգերի կազմակերպությունը պաշտոնապես հանդես եկավ 1945թ. հոկտեմբերի 24-ին, երբ Չինաստանը, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ն, ԽՍՀՄ-ը և ստորագրած մյուս պետությունների մեծ մասը վավերացրեցին Կանոնադրությունը: Ամեն տարի հոկտեմբերի 24-ին նշվում է **Միավորված ազգերի օրը**:

# ՄԱԿ-ի Կանոնադրությունը

ՄԱԿ-ի հիմնարար փաստաթուղթը նրա Կանոնադրությունն է, որում նշված են անդամ պետությունների այն իրավունքներն ու պարտականությունները, որոնց վրա են հիմնվում ՄԱԿ-ի մարմիններն ու ընթացակարգերը: Լինելով միջազգային պայմանագիր՝ Կանոնադրությունը օրինակարգում է միջազգային հարաբերությունների հիմնական սկզբունքները՝ պետությունների ինքնիշխան հավասարությունից մինչև միջազգային հարաբերություններում ուժի կիրառման արգելքը:

**Կանոնադրության նախաբանը**

Կանոնադրության նախաբանը արտահայտում է այն ժողովուրդների իդեալները և ընդհանուր նպատակները, որոնց կառավարությունները համախմբվեցին՝ ստեղծելու Միավորված ազգերի կազմակերպությունը:

«Մենք՝ միավորված ազգերի ժողովուրդներս, լի վճռականությամբ փրկել գալիք սերունդներին պատերազմի արհավիրքից, որը մեր կյանքի ընթացքում երկու անգամ անասելի վիշտ է պատճառել մարդկությանը, և վերահաստատել հավատը մարդու հիմնական իրավունքների, անհատի արժանապատվության և արժեքի, տղամարդու և կնոջ, ինչպես նաև մեծ ու փոքր ազգերի հավասար իրավունքների նկատմամբ, և ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք ապահովեն արդարություն ու դաշինքներից և միջազգային իրավունքի այլ աղբյուրներից բխող պարտավորությունների հանդեպ հարգանք, և ավելի մեծ ազատության պայմաններում խթանել սոցիալական առաջընթացն ու կենսամակարդակի բարելավումը,

և հանուն այդ նպատակների ցուցաբերել հանդուրժողություն ու միմյանց հետ ապրել խաղաղությամբ, որպես բարի դրացիներ, և միավորել մեր ուժերը միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու համար, և համապատասխան սկզբունքների ընդունման ու մեթոդների սահմանման միջոցով երաշխավորել զինուժի կիրառումը բացառապես ընդհանուր շահերին համապատասխան, և միջազգային լծակները գործադրել բոլոր ժողովուրդների տնտեսական ու սոցիալական առաջընթացը խթանելու համար,

որոշել ենք միավորել մեր ջանքերն այդ նպատակներին հասնելու համար: Ըստ այդմ՝ մեր համապատասխան կառավարությունները, ժողովված Սան Ֆրանցիսկոյում, բավարար ու պատշաճ իրենց լիազորությունները փոխանակած ներկայացուցիչների միջոցով, համաձայնել են ընդունել Միավորված ազգերի կազմակերպության սույն կանոնադրությունը և հիմնում են Միավորված ազգեր անվանումով միջազգային կազմակերպությունը»:

## Նպատակներն ու սկզբունքները

Կանոնադրությամբ հաստատված ՄԱԿ-ի **նպատակներն** են՝

- պահպանել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը,
- զարգացնել պետությունների բարեկամական հարաբերությունները՝ հիմնված հավասար իրավունքների և ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի վրա,
- նպաստել միջազգային համագործակցությանը տնտեսական, սոցիալական, մշակութային և մարդասիրական խնդիրների լուծման հարցում և խթանել մարդու իրավունքների և հիմնական ազատությունների հարգանքը,
- լինել ազգերի՝ այս նպատակներին ուղղված գործողությունների համադասման կենտրոն:

ՄԱԿ-ը գործում է հետևյալ **սկզբունքների** համաձայն.

- այն հիմնված է բոլոր անդամների ինքնիշխան հավասարության վրա,
- բոլոր անդամները պետք է բարեխղճորեն կատարեն Կանոնադրությամբ իրենց ստանձնած պարտավորությունները,
- նրանք պարտավոր են միջազգային վեճերը կարգավորել խաղաղ միջոցներով՝ չվտանգելով միջազգային խաղաղությունը, անվտանգությունն ու արդարությունը,
- նրանք պետք է խուսափեն որևէ այլ պետության դեմ ուժի գործադրումից կամ դրա սպառնալիքից,
- նրանք պետք է ամեն կերպ աջակցեն ՄԱԿ-ին Կանոնադրության համաձայն ձեռնարկված ցանկացած գործողության դեպքում,
- Կանոնադրության մեջ ոչինչ չի կարող լիազորել ՄԱԿ-ին միջամտելու որևէ պետության ներքին իրավասության հարցերին:

---

## ՄԱԿ-ի Կանոնադրության փոփոխությունները

*Կանոնադրությունը կարող է ենթարկվել փոփոխությունների Գլխավոր ասամբլեայի անդամների ձայների երկու երրորդով և ՄԱԿ-ի անդամների երկու երրորդի վավերացմամբ, ներառյալ Անվտանգության խորհրդի հինգ մշտական անդամները: Առայսօր փոփոխության է ենթարկվել Կանոնադրության չորս հոդված, ընդ որում դրանցից մեկը՝ երկու անգամ:*

- *1965թ. Անվտանգության խորհրդի անդամների թիվն ավելացել է 11-ից հասնելով 15-ի (23-րդ հոդված), և որոշում ընդունելու համար կողմ քվեարկողների անհրաժեշտ թիվը ավելացել է 7-ից հասնելով 9-ի, ներառյալ հինգ մշտական անդամների համընկնող ձայները բոլոր այն հարցերի դեպքում, որոնք բովանդակային և ոչ ընթացակարգային բնույթ ունեն (27-րդ հոդված):*
- *1965թ. Տնտեսական և սոցիալական խորհրդի անդամների թիվն ավելացել է 18-ից հասնելով 27-ի, իսկ 1973թ.՝ 54-ի (61-րդ հոդված):*
- *1968թ-ից Կանոնադրությունը վերանայելու նպատակով համաժողով հրավիրելու համար անհրաժեշտ է Անվտանգության խորհրդի ոչ թե 7, այլ 9 ձայն (109-րդ հոդված):*

---

## Անդամակցություն

ՄԱԿ-ի անդամակցությունը բաց է բոլոր խաղաղասեր ժողովուրդների համար, որոնք ընդունում են Կանոնադրությամբ հաստատված պարտավորությունները, ցանկանում են ու ի վիճակի են կատարել այդ պարտավորությունները:

Գլխավոր ասամբլեան նոր անդամներին ընդունում է Անվտանգության խորհրդի առաջարկով: Կանոնադրությունը նախատեսում է անդամակցության սառեցում կամ դադարեցում Կանոնադրության սկզբունքների խախտման համար, սակայն նման միջոց մինչ օրս չի ձեռնարկվել:

## Պաշտոնական լեզուները

Կանոնադրության համաձայն՝ ՄԱԿ-ի պաշտոնական լեզուներն են չինարենը, անգլերենը, ֆրանսերենը, ռուսերենը և իսպաներենը: Արաբերենն ավելացել է որպես Գլխավոր ասամբլեայի, Անվտանգության խորհրդի և Տնտեսական ու սոցիալական խորհրդի պաշտոնական լեզու:

# Կազմակերպության կառուցվածքը

Կանոնադրությունը հիմնել է ՄԱԿ-ի 6 հիմնական մարմինները. Գլխավոր ասամբլեան(ԳԱ), Անվտանգության խորհուրդը (ԱԽ), Տնտեսական և սոցիալական խորհուրդը (Տնտսոցխորհ), Խնամակալության խորհուրդը, Արդարադատության միջազգային դատարանը և Քարտուղարությունը: Սակայն ՄԱԿ-ի ընտանիքը շատ ավելի մեծ է և ներառում է 15 գործակալություն, մի քանի ծրագրեր և մարմիններ:

## Գլխավոր ասամբլեա

Գլխավոր ասամբլեան քննարկումների համար ստեղծված հիմնական մարմինն է: Այն կազմված է բոլոր պետությունների ներկայացուցիչներից, ընդ որում յուրաքանչյուր պետություն ունի մեկ ձայն: Կարևորագույն հարցերին վերաբերող որոշումները, ինչպիսիք են խաղաղությունն ու անվտանգությունը, նոր անդամների ընդունումը և բյուջետային հարցերը, պահանջում են երկու երրորդի մեծամասնություն: Մյուս հարցերի վերաբերյալ որոշումներն ընդունվում են պարզ մեծամասնությամբ:

### Գործառույթներն ու լիազորությունները

Համաձայն Կանոնադրության՝ Գլխավոր ասամբլեայի գործառույթներն ու լիազորությունները ներառում են.

- քննության առնել և առաջարկներ ներկայացնել խաղաղության և անվտան-

գության պահպանման բնագավառում համագործակցության սկզբունքների վերաբերյալ, այդ թվում զինաթափման և զենքի կարգավորման հարցերում:

- քննության առնել միջազգային խաղաղության ու անվտանգության առնչվող ցանկացած հարց և բացառությամբ այն դեպքերի, երբ բանավեճը կամ իրադրությունն ուսումնասիրվում է Անվտանգության խորհրդում, առաջարկներ ներկայացնել:[1]
- քննության առնել և նույն բացառությամբ առաջարկներ ներկայացնել Կանոնադրության սահմաններում ցանկացած հարցի վերաբերյալ կամ այնպիսի հարցերի շուրջ, որոնք ազդում են ՄԱԿ-ի ցանկացած մարմնի գործառույթների և լիազորությունների վրա:
- ուսումնասիրել և առաջարկներ ներկայացնել միջազգային քաղաքական համագործակցության, միջազգային իրավունքի զարգացման և օրինակարգման, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների իրականացման, տնտեսական, սոցիալական, մշակութային, կրթական և առողջապահական բնագավառներում միջազգային համագործակցությանը խթանելու ուղղությամբ:
- առաջարկություններ ներկայացնել ազգերի միջև բարեկամական հարաբերությունները վտանգող ցանկացած իրադրության խաղաղ կարգավորման համար՝ անկախ դրա աղբյուրներից:
- ստանալ և քննության առնել Անվտանգության խորհրդի և ՄԱԿ-ի այլ մարմինների զեկույցները:
- քննության առնել և հաստատել ՄԱԿ-ի բյուջեն և հաստատել անդամների անդամավճարների չափը:
- ընտրել Անվտանգության խորհրդի ոչ մշտական անդամներին, Տնտեսական և սոցիալական խորհրդի անդամներին և Խնամակալության խորհրդի ընտրովի անդամներին,Անվտանգության խորհրդի անդամների հետ համատեղ ընտրել Արդարադատության միջազգային դատարանի դատավորներին և Անվտանգության խորհրդի առաջարկությամբ նշանակել Գլխավոր քարտուղարին:

**Նստաշրջանները**

Գլխավոր ասամբլեայի հերթական նստաշրջանը սովորաբար սկսվում է ամեն տարվա սեպտեմբերին: 2000-2001թթ. Գլխավոր ասամբլեայի հերթական նստաշրջանն, օրինակ, 55-րդն է: Յուրաքանչյուր նստաշրջանի սկզբում Գլխավոր ասամբլեան ընտրում է նոր նախագահին, 21 փոխնախագահներին և

[1] Համաձայն «Միավորվել հանուն խաղաղության» բանաձևի, որը ԳԱ-ն ընդունել է 1950թ. նոյեմբերին, Ասամբլեան իրավասու է գործունեություն ծավալել, եթե Անվտանգության խորհուրդը մշտական անդամների միաձայնության չհասնելու պատճառով չի կարողանում գործել, երբ միջազգային խաղաղությանը վտանգ է սպառնում, տեղի է ունեցել խաղաղության խախտում կամ ագրեսիա: Ասամբլեան իրավասու է անմիջապես քննության առնել հարցը անդամներին համատեղ միջոցառումներ առաջարկելու նպատակով, ինչպես նաև խաղաղության խախտման կամ ագրեսիայի դեպքում անհրաժեշտ զինված ուժ կիրառել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու կամ վերականգնելու նպատակով:

6 գլխավոր կոմիտեների նախագահներից: Հավասար աշխարհագրական բաշխումը ապահովելու համար Գլխավոր ասամբլեայի նախագահությունը պտտվում է ռոտացիայի սկզբունքով պետությունների հինգ խմբերի միջև՝ աֆրիկյան, ասիական, արևելաեվրոպական, լատինաամերիկյան ու կարիբյան, արևմտաեվրոպական ու այլ երկրների:

Բացի դրանից, ասամբլեան կարող է անցկացնել հատուկ նստաշրջաններ Անվտանգության խորհրդի, անդամ երկրների մեծամասնության կամ մեկ անդամի խնդրանքով, եթե անդամների մեծամասնությունը կողմ է: Արտակարգ հատուկ նստաշրջանները կարող են հրավիրվել 24 ժամվա ընթացքում, Անվտանգության խորհրդի պահանջով՝ նրա ցանկացած 9 անդամների ձայներով, անդամ պետությունների մեծամասնությամբ կամ մեկ պետության խնդրանքով, եթե անդամների մեծամասնությունը կողմ է:

Յուրաքանչյուր հերթական նստաշրջանի սկզբում ասամբլեան անցկացնում է ընդհանուր քննարկումներ, որոնց հաճախ մասնակցում են պետությունների և կառավարությունների ղեկավարներ. դրանց ընթացքում անդամ պետությունները ներկայացնում են իրենց տեսակետները առավել կարևոր միջազգային հարցերի վերաբերյալ: Հարցերի մեծամասնությունն այնուհետև քննարկվում է 6 գլխավոր կոմիտեներում.

- **Առաջին կոմիտե** (զինաթափում և միջազգային անվտանգություն)
- **Երկրորդ կոմիտե** (տնտեսական և ֆինանսական)
- **Երրորդ կոմիտե** (սոցիալական, մարդասիրական և մշակութային)
- **Չորրորդ կոմիտե** (հատուկ քաղաքական և ապագաղութացման)
- **Հինգերորդ կոմիտե** (վարչական և բյուջետային)
- **Վեցերորդ կոմիտե** (իրավական)

Որոշ հարցեր քննարկվում են միայն լիագումար նիստերում, ոչ թե գլխավոր կոմիտեներից մեկում: Բոլոր հարցերի կապակցությամբ ընդունվում են բանաձևեր, որոնք քվեարկության են դրվում լիագումար նիստերում սովորաբար նստաշրջանի ավարտին մոտ, երբ կոմիտեները ավարտում են քննարկումները և բանաձևերի նախագծեր են ներկայացնում լիագումար ասամբլեային:

Կոմիտեներում քվեարկությունը կատարվում է պարզ մեծամասնությամբ: Լիագումար նիստերում բանաձևերը կարող են ընդունվել ակլամացիայով (պարզ հավանությամբ), առանց առարկության կամ առանց քվեարկության, կամ քվեարկությունը կարող է լինել գրանցված կամ անվանական:

Չնայած այն հանգամանքին, որ Գլխավոր ասամբլեայի բանաձևերը կառավարությունների համար պարտադիր իրավական ուժ չունեն, համաշխարհային կարծիքի, ինչպես նաև միջազգային հանրության բարոյական հեղինակության կշիռ ունեն:

ՄԱԿ-ի տարեկան աշխատանքը մեծապես կախված է Գլխավոր ասամբլեայի որոշումներից՝ անդամների մեծամասնության՝ Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված բանաձևերում արտահայտված կամքից: Այդ աշխատանքն իրականացնում են.

- Ասամբլեայի կողմից ստեղծված կոմիտեներն ու այլ մարմիններ, որոնց նպատակն է ուսումնասիրել որոշակի հարցեր (ինչպես օրինակ՝ զինաթափումը,

խաղաղապահ գործողությունները, զարգացումը և մարդու իրավունքները) և զեկույցներ ներկայացնել:

- Ասամբլեայի կողմից հրավիրվող միջազգային համաժողովները և
- ՄԱԿ-ի քարտուղարությունը՝ գլխավոր քարտուղարը և միջազգային քաղաքացիական ծառայողներից բաղկացած նրա աշխատակազմը:

## Անվտանգության խորհուրդ

Համաձայն Կանոնադրության՝ Անվտանգության խորհուրդը առաջին հերթին պատասխանատու է միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման համար:

Խորհուրդը 15 անդամ ունի՝ 5 մշտական (Չինաստան, Ֆրանսիա, ՌԴ, Միացյալ Թագավորություն, ԱՄՆ) և Գլխավոր ասամբլեայի կողմից երկու տարի ժամկետով ընտրվող 10 ոչ մշտական:

Յուրաքանչյուր անդամ մեկ ձայնի իրավունք ունի: Վարման կարգի վերաբերյալ որոշումներն ընդունվում են առնվազն 9 անդամի դրական քվեով: Բովանդակային հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման համար պահանջվում է 9 կողմ ձայն, ընդ որում մշտական անդամները չպետք է դեմ քվեարկած լինեն: Սա «մեծ տերությունների միաձայնության» կանոնն է, որը հաճախ անվանում են վետոյի իրավունք: Եթե մշտական անդամը համաձայն չէ որոշմանը, կարող է դեմ քվեարկել, և այդ գործողությունը վետոյի ուժ ունի: Բոլոր մշտական անդամները տարբեր ժամերով օգտագործում են վետոյի իրավունքը: Եթե մշտական անդամը համաձայն չէ որոշմանը, սակայն չի ցանկանում կիրառել վետոյի իր իրավունքը, կարող է ձեռնպահ քվեարկել:

Ըստ Կանոնադրության՝ ՄԱԿ-ի բոլոր անդամները համաձայնում են ընդունել և իրականացնել Անվտանգության խորհրդի որոշումները: Մինչ ՄԱԿ-ի մյուս մարմինները միայն առաջարկներ են ներկայացնում կառավարություններին, Անվտանգության խորհուրդը միակն է, որ իրավասու է որոշումներ ընդունել, որոնց անդամ պետությունները պարտավոր են ենթարկվել:

### Գործառույթներն ու լիազորությունները

Համաձայն Կանոնադրության, Անվտանգության խորհրդի գործառույթներն ու լիազորություններն են.

- պահպանել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը՝ համաձայն ՄԱԿ-ի սկզբունքների և նպատակների,
- քննության առնել ցանկացած բանավեճ կամ իրադրություն, որը կարող է հանգեցնել միջազգային բախման,
- առաջարկել նման բանավեճերը կարգավորելու մեթոդներ,
- մշակել սպառազինությունները կարգավորելու համակարգի նախագիծ,
- որոշել խաղաղության համար սպառնալիքի կամ ագրեսիայի գոյությունը և առաջարկել ձեռնարկվելիք գործողությունները,
- կոչ անել անդամ պետություններին կիրառել տնտեսական պատժամիջոցներ և ձեռնարկել ուժի գործադրում չնախատեսող այլ միջոցառումներ՝ ագրե-

սիան կանխելու կամ դադարեցնելու համար,

- ուժ կիրառել ագրեսորի դեմ,
- առաջարկել ՄԱԿ-ի նոր անդամներ,
- «ռազմավարական բնագավառներում» իրագործել ՄԱԿ-ի խնամակալական գործունեությունը,
- Գլխավոր ասամբլեայի հաստատմանը ներկայացնել Գլխավոր քարտուղարի թեկնածությունը և Գլխավոր ասամբլեայի հետ համատեղ ընտրել Արդարադատության միջազգային դատարանի դատավորներին:

Անվտանգության խորհուրդը կազմակերպված է այնպես, որ ի վիճակի լինի գործել անընդհատ, և նրա անդամներից յուրաքանչյուրի ներկայացուցիչը մշտապես գտնվի ՄԱԿ-ի կենտրոնական գրասենյակում: Խորհուրդը կարող է իր նիստերն անցկացնել այլ վայրերում. 1972թ. նիստը տեղի ունեցավ Ադիս Աբեբայում (Եթովպիա), 1973թ.՝ Պանամայում, (Պանամա) իսկ 1990թ.՝ Ժնևում (Շվեյցարիա):

Երբ Անվտանգության խորհրդին բողոք է ներկայացվում խաղաղության սպառնալիքի վերաբերյալ, նրա առաջին քայլը սովորաբար լինի այն, որ առաջարկի կողմերին կարգավորման հասնել խաղաղ միջոցներով: Խորհուրդը կարող է խաղաղ կարգավորման սկզբունքներ առաջադրել: Որոշ դեպքերում Անվտանգության խորհուրդն ինքն է հետաքննություն անցկացնում և հանդես է գալիս որպես միջնորդ: Նա կարող է առաքելություն ուղարկել, նշանակել հատուկ ներկայացուցիչ կամ խնդրել գլխավոր քարտուղարին կիրառել իր բարի ծառայությունները:

Երբ բանավեճը հանգեցնում է զինված հակամարտության, խորհրդի առաջին մտահոգությունն այն է, որ այն հնարավորինս շուտափույթ հասցնի ավարտին: Խորհուրդը կարող է կողմերին հրադադարի կարգադրություն տալ, որը կարող է հնարավորություն ստեղծել ռազմական գործողությունների ընդլայնումը կանխելու համար:

Խորհուրդը կարող է նաև ռազմական դիտորդներ կամ խաղաղապահ ուժեր ուղարկել՝ լարվածությունը թուլացնելու, հակամարտող ուժերին իրարից անջատելու և խաղաղ կարգավորման հասնելու նպատակով նպաստավոր պայմաններ ստեղծելու համար: Կանոնադրության 7-րդ հոդվածի համաձայն՝ խորհուրդը կարող է պատժամիջոցներ կիրառելու վճիռ կայացնել, ընդ որում՝ տնտեսական (օր. առևտրական էմբարգո), զենքի էմբարգո կամ կոլեկտիվ ռազմական գործողություն (տես՝ 2-րդ գլուխը):

Խորհուրդը հիմնել է երկու քրեական տրիբունալ նախկին Հարավսլավիայում և Ռուանդայում մարդկության դեմ կատարված հանցանքները հետաքննելու համար: Տրիբունալները Անվտանգության խորհրդի օժանդակ մարմիններ են:

Պարսից ծոցի պատերազմից հետո Իրաքում զանգվածային ոչնչացման զենքի վերացումը վերահսկելու նպատակով խորհուրդը հիմնեց ՄԱԿ-ի հատուկ հանձնաժողով (UNSCOM): 2000թ. այն վերածվել է ՄԱԿ-ի Խորհրդատվական, վերահսկման և ստուգման հանձնաժողովի (UNMOVIC):

1993թ. ի վեր Գլխավոր ասամբլեայի աշխատանքային խումբը մշակում է Անվտանգության խորհրդի բարեփոխումը, որը պետք է ներառի անդամության արդար ներկայացուցչություն և անդամակցության ավելացում:

## Տնտեսական և սոցիալական խորհուրդը

ՄԱԿ-ի կանոնադրությամբ Տնտեսական և սոցիալական խորհուրդն ստեղծվել է ՄԱԿ-ի և մասնագիտացված գործակալությունների ու հաստատությունների տնտեսական, սոցիալական և համանման գործունեությունը համակարգելու համար: ՄԱԿ-ը և գործակալությունները միասին հայտնի են ՄԱԿ-ի ընտանիք անվանմամբ: Խորհուրդն ունի 54 անդամ, որոնք ընտրվում են երեք տարի ժամկետով: Խորհրդի որոշումներն ընդունվում են պարզ մեծամասնությամբ, յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն:

### Գործառույթներն ու լիազորությունները

Ըստ Կանոնադրության, Տնտեսական և սոցիալական խորհրդի գործառույթներն ու լիազորություններն են.

- քննարկման ֆորում տրամադրել միջազգային տնտեսական և սոցիալական խնդիրների, ինչպես նաև անդամ պետությունների և ՄԱԿ-ի համակարգին քաղաքական առաջարկություններ ներկայացնելու համար,
- ուսումնասիրություններ կատարել և զեկույցներ ներկայացնել միջազգային տնտեսական, սոցիալական, մշակութային, կրթական և առողջապահական բնագավառներում,
- խթանել մարդու իրավունքների և հիմնական ազատությունների հարգանքը,
- աջակցել տնտեսական, սոցիալական և դրանց առնչվող բնագավառներում խոշոր միջազգային համաժողովների նախապատրաստմանն ու կազմակերպմանը, ինչպես նաև համակարգել դրանց որոշումների կատարմանն առնչվող հետագա գործունեությունը:

Միջազգային տնտեսական և սոցիալական խնդիրների քննարկման և քաղաքական առաջարկներ ներկայացնելու միջոցով Տնտեսական և սոցիալական խորհուրդը կարևոր դեր է խաղում զարգացման բնագավառում միջազգային համագործակցությունը խթանելու և գործողությունների առաջնահերթությունը որոշելու հարցում:

### Նստաշրջաններ

Տարվա ընթացքում խորհուրդը սովորաբար անց է կացնում կարճատև աշխատանքային նստաշրջաններ, իսկ հուլիսին՝ հաջորդաբար Նյու Յորքում և Ժնևում 4-շաբաթյա հիմնական նստաշրջան: Նստաշրջանը ներառում է բարձրաստիճան մաս, որին մասնակցում են նախարարներ և այլ բարձրաստիճան պաշտոնյաներ՝ քննարկելու կարևոր տնտեսական, սոցիալական և մարդասիրական հարցեր: Տարվա ընթացքում խորհրդի աշխատանքն ընթանում է նրա օժանդակ մարմիններում:

### Օժանդակ և այլ մարմիններ

Խորհրդի օժանդակ համակարգը ներառում է.

- Ինը ֆունկցիոնալ հանձնաժողով, որոնց դերն է քննարկել իրենց իրավասության սահմաններում եղած հարցեր և ներկայացնել առաջարկներ. Վիճա-

կարգության համաժողով, Բնակչության և զարգացման համաժողով, Սոցիալական համաժողով, Մարդու իրավունքների համաժողով, Կանանց կարգավիճակի համաժողով, Թմրադեղերի համաժողով, Համագործությունների կանխարգելման և քրեական արդարադատության համաժողով, Զարգացման գիտատեխնիկական համաժողով, Կայուն զարգացման համաժողով:

- Հինգ տարածաշրջանային համաժողով. Աֆրիկայի տնտեսական համաժողով (Ադիս Աբեբա, Եթովպիա), Ասիայի տնտեսական և սոցիալական համաժողով (Բանգկոկ, Թաիլանդ), Եվրոպայի տնտեսական համաժողով (Ժնև, Շվեյցարիա), Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի տնտեսական համաժողով (Սանտյագո, Չիլի), Արևմտյան Ասիայի տնտեսական և սոցիալական համաժողով (Բեյրութ, Լիբանան):
- Հինգ մշտական համաժողով և փորձագիտական մարմին. Ծրագրման և համակարգման համաժողով, Մարդկային բնակավայրերի համաժողով, Ոչ կառավարական կազմակերպությունների համաժողով, Միջկառավարական գործակալությունների հետ բանակցությունների համաժողով, Էներգետիկայի և բնական պաշարների համաժողով:
- մի շարք փորձագիտական մարմիններ, որոնք զբաղվում են այնպիսի հարցերով, ինչպիսիք են՝ զարգացման պլանավորումը, բնական պաշարները, տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները:

Խորհուրդը նաև համագործակցում է ՄԱԿ-ի ծրագրերի (ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր, ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիր, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ, ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ) և մասնագիտացված գործակալությունների հետ (Սննդի և գյուղատնտեսության կազմակերպություն, Առողջապահության միջազգային կազմակերպություն, Աշխատանքի միջազգային կազմակերպություն, ՄԱԿ-ի Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն) և որոշ չափով նաև համակարգում դրանց գործունեությունը: Դրանցից յուրաքանչյուրը զեկույցներ է ներկայացնում խորհրդին և առաջարկություններ ներկայացնում նրա նիստական նստաշրջանին:

**Հարաբերությունները ոչ կառավարական կազմակերպությունների հետ**

Կանոնադրության համաձայն՝ Տնտեսական և սոցիալական խորհուրդը խորհրդակցում է իր իրավասությունների շրջանակում գտնվող հարցերով զբաղվող ոչ կառավարական կազմակերպությունների հետ: Ավելի քան 1600 ոչ կառավարական կազմակերպություն Տնտեսական և սոցիալական խորհրդում խորհրդատվական կարգավիճակ ունի: Խորհուրդը գտնում է, որ նրանք պետք է հնարավորություն ունենան արտահայտելու իրենց տեսակետները, քանի որ հատուկ փորձառություն կամ տեխնիկական գիտելիքներ ունեն, որոնք կարևոր են իր գործունեության համար:

Խորհուրդը ոչ կառավարական կազմակերպությունները դասակարգում է երեք խմբի. I խմբի կազմակերպությունները զբաղվում են խորհրդի գործունեության բնագավառների մեծ մասին առնչվող հարցերով, II խմբի կազմակերպու-

քյունները հատուկ փորձառություն ունեն առանձին բնագավառներում, III խմբի կազմակերպությունները գրանցվում են ցանկում՝ անհրաժեշտության դեպքում նրանց հետ խորհրդակցելու համար:

Խորհրդատվական կարգավիճակ ունեցող կազմակերպությունները կարող են դիտորդներ ուղարկել խորհրդի և նրա օժանդակ մարմինների նստաշրջաններին և իրենց գործունեությանն առնչվող գրավոր ելույթներ ներկայացնել: Նրանք նաև համատեղ հետաքրքրություն ներկայացնող հարցերում կարող են խորհրդակցել ՄԱԿ-ի քարտուղարության հետ:

Տարիների ընթացքում ՄԱԿ-ի և նրա հետ գործակցող ոչ կառավարական կազմակերպությունների հարաբերությունները զգալի զարգացում են ապրել: Ոչ կառավարական կազմակերպությունները հետզհետե դառնում են գործընկերներ, որոնց հետ խորհրդակցում են քաղաքական և ծրագրման հարցերի վերաբերյալ, և որոնք դիտվում են իբրև անգնահատելի կապ քաղաքացիական հասարակության հետ: Ողջ աշխարհում աճում է ՄԱԿ-ի հետ ամենօրյա հիմունքներով համագործակցող ոչ կառավարական կազմակերպությունների թիվը, ինչն օգնում է իրականացնելու ՄԱԿ-ի կանոնադրության նպատակները:

## Խնամակալության խորհուրդ

Խնամակալության խորհուրդը հիմնվել է 1945թ.՝ 7 անդամ պետությունների կառավարման տակ դրված 11 հովանավորվող տարածքների միջազգային վերահսկում ապահովելու և այդ տարածքները ինքնորոշման կամ անկախության նախապատրաստելուն ուղղված համապատասխան քայլերն ապահովելու համար: Կանոնադրությունը Խնամակալության խորհրդին օժտել է հովանավորվող տարածքների ժողովուրդների քաղաքական, տնտեսական, սոցիալական և կրթական առաջընթացի վերաբերյալ վարչական մարմնի զեկույցները քննության առնելու, տարածքներից առաջացող դիմումները ուսումնասիրելու և այդ տարածքներում հատուկ առաքելություններ իրականացնելու իրավասությամբ:

Մինչև 1994թ. բոլոր հովանավորվող տարածքները հասել են ինքնակառավարման կա՛մ որպես անկախ պետություններ, կա՛մ դառնալով հարևան անկախ պետության մաս: Վերջին խնամակալվող տարածքը Խաղաղ օվկիանոսյան կղզիներն էին (Պալաու), որը դարձավ ՄԱԿ-ի 185-րդ անդամը:

Ավարտելով իր գործունեությունը՝ Խնամակալության խորհուրդը, որի կազմում էին Անվտանգության խորհրդի մշտական անդամները՝ Չինաստանը, Ֆրանսիան, Ռուսաստանի Դաշնությունը, Միացյալ Թագավորությունը, ԱՄՆ-ն, փոփոխության ենթարկեց իր վարման կանոնները, որպեսզի այնուհետ հավաքվի միայն ըստ անհրաժեշտության:

## Արդարադատության միջազգային դատարան

Հաագայում տեղակայված Արդարադատության միջազգային դատարանը ՄԱԿ-ի հիմնական դատական մարմինն է: Այն կարգավորում է պետություննե-

րի միջև ծագած բանավեճերը և խորհրդատվական կարծիք է տրամադրում ՄԱԿ-ին և նրա մասնագիտացված գործակալություններին: Նրա ստատուտը ՄԱԿ-ի կանոնադրության անբաժանելի մասն է:

Դատարանը բաց է իր ստատուտի անդամ բոլոր պետությունների համար: Դրանք ՄԱԿ-ի բոլոր անդամներն են և Շվեյցարիան: Դատարանին ներկայացվող գործերում կողմ կարող են լինել միայն պետությունները և միայն պետությունները կարող են հայց ներկայացնել դատարանին: Դատարանը բաց չէ անհատների, հասարակությունների կամ միջազգային կազմակերպությունների համար:

Գլխավոր ասամբլեան և Անվտանգության խորհուրդը կարող են խնդրել դատարանին խորհրդատվական եզրակացություն ներկայացնել ցանկացած իրավական հարցով: ՄԱԿ-ի մյուս մարմինները և մասնագիտացված գործակալությունները ԳԱ կողմից իրավասություն ստանալու դեպքում կարող են խնդրել Դատարանին խնդրել խորհրդատվական եզրակացություն ներկայացնել իրենց իրավասության սահմաններում գտնվող հարցերի վերաբերյալ:

**Իրավազորություն**

Դատարանի իրավազորության մեջ են մտնում պետությունների կողմից արծարծվող բոլոր հարցերը ՄԱԿ-ի Կանոնադրությունում և միջազգային պայմանագրերում ու կոնվենցիաներում նշված բոլոր խնդիրների վերաբերյալ: Պետությունները կարող են նախապես պարտավորվել՝ ընդունելու դատարանի պարտադիր իրավազորությունը: Դա կարող է կատարվել երկու ձևով. ստորագրել պայմանագիր կամ կոնվենցիա, որով հղում է կատարվում դատարանի որոշմանը, կամ ներկայացնել համապատասխան հռչակագիր: Դատարանի վճռի կատարման պարտադիր լինելը ճանաչող այդ հռչակագրերը հաճախ վերապահումներ են պարունակում, որոնք բացառում են բանավեճերի որոշակի հարցեր:

Իր ստատուտի համաձայն՝ Դատարանը բանավեճերի կարգավորման համար կիրառում է.

- բանավիճող պետությունների կողմից բացահայտորեն ճանաչված կանոններ պարունակող միջազգային կոնվենցիաներ,
- միջազգային սովորույթներ, որոնք ընդունվում են որպես օրենք՝ լինելով ընդհանուր գործելակերպի վկայություն,
- ազգերի կողմից ճանաչված իրավունքի ընդհանուր սկզբունքներ,
- դատավճիռներ և տարբեր ազգերի առավել որակյալ փորձագետների կարծիքներ:

**Անդամակցությունը**

Դատարանը բաղկացած է 15 դատավորից, որոնք ընտրվում են միմյանցից անկախ քվեարկով Գլխավոր ասամբլեայի և Անվտանգության խորհրդի կողմից: Նրանք ընտրվում են իրենց որակավորման հիման վրա, և հատուկ ուշադրություն է դարձվում, որպեսզի դատարանում ներկայացված լինեն աշխարհի հիմնական իրավական համակարգերը: Նույն երկրի երկու դատավոր չեն կարող լինել դատարանի անդամ: Դատավորների ծառայության ժամկետը 9 տա-

րի է, որի ընթացքում նրանք չեն կարող զբաղվել որևէ այլ գործունեությամբ: Դատարանը սովորաբար անց է կացնում լիագումար նիստեր, սակայն կողմերի խնդրանքով կարող է ձևավորել նաև ավելի փոքր միավորներ, որոնք կոչվում են պալատներ: Դրանց կայացրած վճիռը դիտվում է լիագումար դատարանի վճիռ: Դատարանն ունի նաև Շրջակա միջավայրի հարցերի պալատ և ամեն տարի ձևավորում է Պարզեցված դատավարության պալատ:

## Քարտուղարություն

Քարտուղարությունը՝ բաղկացած ողջ աշխարհում սփռված ՄԱԿ-ի ներկայացուցչություններում աշխատող միջազգային անձնակազմից, իրականացնում է կազմակերպության ամենօրյա գործունեությունը: Այն սպասարկում է նաև ՄԱԿ-ի մյուս հիմնական մարմիններին և ապահովում դրանց կողմից նախաձեռնված ծրագրերի և քաղաքականության վարչական ղեկավարումը: Այն ղեկավարում է Գլխավոր քարտուղարը, որը նշանակվում է Գլխավոր ասամբլեայի կողմից՝ Անվտանգության խորհրդի հանձնարարականով, նորացման ենթակա հինգ տարի ժամկետով:

Քարտուղարության պարտականությունները նույնքան բազմաբնույթ են, որքան կազմակերպության գործունեությունը՝ խաղաղապահ գործունեության վարչական կառավարումից մինչև միջնորդությունը միջազգային բանավեճերում, տնտեսական և սոցիալական միտումների ուսումնասիրումից մինչև մարդու իրավունքների և կայուն զարգացման վերաբերյալ զեկույցների մշակումը: Քարտուղարության անձնակազմը նաև աշխարհի լրատվական միջոցներին տեղեկացնում է ՄԱԿ-ի գործունեության մասին, կազմակերպում է միջազգային համաժողովներ համաշխարհային կարևորություն ունեցող հարցերի վերաբերյալ, իրականացնում է ելույթների և փաստաթղթերի թարգմանությունը ՄԱԿ-ի պաշտոնական լեզուներով:

Քարտուղարությունն ընդգրկում է սովորական բյուջեից վճարվող մոտ 8900 աշխատակից 160 երկրներից: Լինելով միջազգային ծառայողներ՝ աշխատակազմը և Գլխավոր քարտուղարը իրենց գործունեության համար պատասխանատու են միայն ՄԱԿ-ին և երդում են տալիս ոչ մի պետությունից կամ այլ իշխանությունից ցուցումներ չհայցել և չստանալ: Համաձայն Կանոնադրության, անդամ պետությունները համաձայնում են հարգել Գլխավոր քարտուղարի և անձնակազմի պատասխանատվության բացառապես միջազգային բնույթը և զերծ մնալ նրանց վրա ազդեցություն գործելու փորձերից:

Չնայած ՄԱԿ-ի կենտրոնական գրասենյակը գտնվում է Նյու Յորքում, այն ընդգրկուն ներկայություն է պահպանում Ադիս Աբեբայում, Բանգկոկում, Բեյրութում, Ժնևում, Նայրոբիում, Սանտյագոյում և Վիեննայում, գրասենյակներ ունի նաև աշխարհի տարբեր մասերում:

### Գլխավոր քարտուղար

Լինելով հավասարապես դիվանագետ, փաստաբան, քաղաքացիական ծառայող և բարձրաստիճան ղեկավար՝ Գլխավոր քարտուղարը ՄԱԿ-ի գաղա-

փարների խորհրդանիշն է և աշխարհի ժողովուրդների, մասնավորապես աղքատների և առավել խոցելիների շահերի ներկայացուցիչը: Ներկայիս՝ յոթերորդ Գլխավոր քարտուղարը գանացի Քոֆի Անանն է, որն իր պարտականությունների կատարմանն է անցել 1997թ. հունվարի 1-ին:

Կանոնադրությամբ Գլխավոր քարտուղարը համարվում է կազմակերպության գլխավոր վարչական պաշտոնյա, որը պետք է իրականացնի այդ և Գլխավոր ասամբլեայի, Անվտանգության խորհրդի, Տնտեսական և սոցիալական խորհրդի և այլ մարմինների կողմից «իրեն հանձնարարվող այլ համանման պարտականությունները»: Կանոնադրությունը Գլխավոր քարտուղարին իրավունք է տալիս նաև «Անվտանգության խորհրդի ուշադրությունը հրավիրել այնպիսի հարցերի վրա, որոնք, իր կարծիքով, կարող են վտանգել միջազգային անվտանգությունն ու խաղաղությունը»: Այս ուղեցույցը սահմանում է քարտուղարության իշխանությունը և գործունեության զգալի ծավալները: Գլխավոր քարտուղարը չի կարող գործել առանց անդամ պետությունների մասնակցությունների լիցորեն հաշվի առնելու, բայց նա պարտավոր է նաև պաշտպանել ՄԱԿ-ի արժեքներն ու բարոյական հեղինակությունը, գործել և խոսել հանուն խաղաղության՝ երբեմն նույնիսկ առարկելով անդամ պետություններին կամ անտեսելով նրանց կարծիքը:

Այս «անեղծագործական լարվածությունը» ուղեկցում է Գլխավոր քարտուղարի ամենօրյա գործունեությանը, որը ներառում է մասնակցություն ՄԱԿ-ի մարմինների նստաշրջաններին, խորհրդակցություններ աշխարհի առաջնորդների, պետական պաշտոնյաների հետ, ճամփորդություններ աշխարհի տարբեր կողմեր, որոնք հնարավորություն են տալիս պահպանել կապը Միավորված

---

## Նախորդ Գլխավոր քարտուղարները

*Համաձայն Կանոնադրության Գլխավոր քարտուղարը նշանակվում է Գլխավոր ասամբլեայի կողմից՝ Անվտանգության խորհրդի ներկայացմամբ: Քոֆի Անանին նախորդել են Բուտրոս Բուտրոս-Ղալին (Եգիպտոս), որը զբաղեցրել է այդ պաշտոնը 1992թ. հունվարից մինչև 1996թ. դեկտեմբերը, Խավիեր Պերես դը Կուելյարը (Պերու), որը ծառայել է 1982թ. հունվարից մինչև 1991թ. դեկտեմբերը, Կուրտ Վալդհայմը (Ավստրիա), որը զբաղեցրել է պաշտոնը 1972թ. հունվարից մինչև 1981թ. դեկտեմբերը, Ու Թանը (Բիրմա, այժմ՝ Մյանմար), որը ծառայել է 1961թ. նոյեմբերից, երբ նշանակվել է Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար (պաշտոնապես նա Գլխավոր քարտուղար նշանակվեց 1962թ. նոյեմբերին) մինչև 1971 դեկտեմբերը, Դագ Համարշյոլդը (Շվեդիա), որը ծառայել է 1953թ. ապրիլից մինչև 1961թ սեպտեմբերը, Աֆրիկայում օդային վթարում զոհվելը, Տրիգվե Լին (Նորվեգիա), որը պաշտոնը զբաղեցրել է 1946թ. ապրիլից մինչև 1952թ. իր հրաժարականը:*

---

ազգերի կազմակերպության ժողովուրդների հետ և անմիջական տեղեկություններ ստանալ միջազգային նշանակություն ունեցող այն հարցերի վերաբերյալ, որոնք ընդգրկված են ՄԱԿ-ի օրակարգում: Ամեն տարի Գլխավոր քարտուղարը զեկույց է ներկայացնում կազմակերպության աշխատանքի մասին, որում գնահատական է տալիս նրա գործունեությանը և ներկայացնում հետագա առաջնային խնդիրները:

Գլխավոր քարտուղարի դերի կարևորագույն բաղադրիչներից մեկը իր «բարի ծառայությունների» կիրառումն է. հրապարակային կամ մասնավոր կերպով ձեռնարկվող քայլեր, որոնց նշանակությունը բխում է նրա անկախությունից, անկողմնակալությունից և ազնվությունից: Այդ գործողությունների նպատակն է կանխել միջազգային բանավեճերի ծագումը, ընդլայնումը և տարածումը: Գլխավոր քարտուղարի պաշտոնը ստանձնելուց հետո Քոֆի Անանը գործադրել է իր բարի ծառայությունները զանազան առիթներով, այդ թվում Կիպրոսում, Արևելյան Թիմորում, Իրաքում, Լիբիայում, Միջին Արևելքում, Նիգերիայում և Արևմտյան Սահարայում:

Յուրաքանչյուր Գլխավոր քարտուղար նաև սահմանում է իր դերը իր պաշտոնավարության ժամանակաշրջանին համապատասխան: Պարոն Անանն իր ջանքերը կենտրոնացրել է հետևյալ խնդիրների վրա:

**Բարեփոխում:** Պաշտոնը ստանձնելուց ոչ շատ անց պարոն Անանը ներկայացրեց բարեփոխումների համապարփակ փաթեթ, որը նպատակ ուներ նոր դարաշրջանի ժամանակներին և համաշխարհային իրադրությանը համապատասխան նպաստել ՄԱԿ-ի փոփոխմանը:

Բարեփոխումների այն մասը, որը Գլխավոր քարտուղարի իրավասության սահմաններում է, հիմնականում իրականացվել է կամ իրականացման փուլում է: Դրանց թվում են թե՛ վարչական (զրոյական աճի բյուջեն և վարչական գործունեությունն ավելի արդյունավետ դարձնելուն ուղղված լուրջ ջանքերը), թե՛ կազմակերպչական միջոցառումները, որոնց շեշտը դրվում է ՄԱԿ-ին ներկայացվող նոր պահանջներին (մասնավորապես խաղաղարար և զարգացման բնագավառներում) ավելի արդյունավետ արձագանքելու վրա:

Ստեղծվել է **Գլխավոր քարտուղարի առաջին տեղակալի** նոր պաշտոնը, որի նպատակն է աջակցել Գլխավոր քարտուղարին իր պարտականությունների իրականացման գործում: 1998թ. այս պաշտոնում առաջինը նշանակվեց տիկին Լուիզ Ֆրեշետը, որը մինչ այդ զբաղեցնում էր Կանադայի ազգային պաշտպանության փոխնախարարի պաշտոնը:

Միևնույն ժամանակ Գլխավոր քարտուղարը շարունակում էր ուսումնասիրել իր պատասխանատվությանը ենթակա կառուցվածքային փոփոխությանը վերաբերող որոշ հարցեր, այդ թվում ԱԽ-ի անդամակցության թիվը և կազմությունը, կազմակերպության ֆինանսավորման ձևերը և ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալությունների համակարգի կատարելագործումը:

**Աֆրիկա:** Գլխավոր քարտուղարը մշտապես ուշադրության կենտրոնում է պահում Աֆրիկան և փորձում է համախմբել խաղաղության հաստատման ու զարգացման ավելի բարձր մակարդակի հասնելուն ուղղված միջազգային աջակցությունը: Նրա մոտեցումները ձևակերպված են 1998թ. *«Աֆրիկայում հակամարտությունների պատճառները և տևական խաղաղության ու կայուն զարգացման խթանումը»* զեկույցում, որում աֆրիկյան պետությունների միջև և

միանց ներում քաղաքական լարվածության և բռնության նվազեցմանն ուղղված «փրատեսական և իրականանալի» միջոցառումների համակարգ է ներկայացված: Այն նաև արծարծում է զարգացման այնպիսի կարևոր հարցեր, ինչպիսիք են սեռերը, կառավարումը և ՄԻԱՎ-ի տարածումը:

**Խաղաղարար գործողություններ:** 1990-ականներին զգալիորեն ավելացան ՄԱԿ-ի խաղաղարար և խաղաղապահ գործողությունները, և կտրականապես փոփոխվեց հակամարտությունների բնույթը. նվազեցին հակամարտությունները պետությունների միջև, և աճեցին ներքաղաքական հակամարտությունների հաճախականությունն ու վայրագությունը: Այս բարդ մարդասիրական ճգնաժամերին արձագանքելու դժվարին փորձն ստիպեց Գլխավոր քարտուղարին ջանքեր գործադրել, որպեսզի ՄԱԿ-ը լինի՝ ռազմական, ֆինանսական թե քաղաքական առումներով ի վիճակի լինի իրականացնելու խաղաղարար գործողությունները համապատասխան դիմումի հիման վրա:

Բարեփոխումների ծրագրում ներկայացված միջոցառումներից բացի այդ ջանքերին աջակցելու համար ներկայացվել է նաև երեք զեկույց: Առաջինը, որը 1999թ. Գլխավոր ասամբլեայի խնդրանքով ներկայացվել է Գլխավոր քարտուղարի կողմից, վերաբերում է 1995թ. ՄԱԿ-ի կողմից «անվտանգ գոտի» հայտարարված Սրեբրենիցայում Բոսնիայի մահմեդականների հանդեպ կատարված բռնություններին: Երկրորդը, որը պատրաստվել էր Գլխավոր քարտուղարի կողմից և հրապարակվել 1999թ., 1994թ. Ռուանդայի ցեղասպանության ընթացքում ՄԱԿ-ի գործունեության անկախ հետազոտությունն է, որը ղեկավարել է Շվեդիայի նախկին վարչապետ Ինգվար Կարլսոնը: Երրորդը՝ հրապարակված 2000թ., ՄԱԿ-ի խաղաղարար և անվտանգության գործողությունների ուսումնասիրությունն է, որն իրականացրել է Գլխավոր քարտուղարի կողմից նշանակված Ալժիրի նախկին արտգործնախարար Լախդար Բրահիմիի կողմից ղեկավարվող բարձրաստիճան փորձագետների խումբը: Այս վերջին զեկույցը նպատակ ուներ նախորդ երկուսից եզրակացություններ անել հետագա գործունեության համար և առաջարկությունների լայն շրջանակ ուներ՝ ուղղված քարտուղարությանն ու անդամ պետություններին, հատկապես ԱԽ-ի անդամներին: Գլխավոր քարտուղարն սկսել է իրականացնել իր իրավասությունների սահմաններում գտնվող առաջարկները, իսկ մյուսները դեռ պետք է ստանան ՄԱԿ-ի օրենսդիր մարմինների հավանությունը:

---

## ՄԱԿ-ը՝ որպես փոփոխության խթան

«Հազարամյակի զեկույցում», որը վերնագրված է *«Մենք՝ ժողովուրդներս, ՄԱԿ-ի դերը 21-րդ դարում»*, Գլխավոր քարտուղարը նշում է, որ միջազգային բեմահարթակում այսօրվա դերակատարները ոչ միայն պետություններն են, այլև մասնավոր սեկտորը, հասարակական կազմակերպությունները և միջազգային գործակալությունները, որոնք համագործակցում են պետությունների հետ՝ փորձելով գտնել գլոբալ խնդիրների կարգավորման բոլորի համար ընդունելի ուղիներ:

Հաշվի առնելով, որ իր սեփական միջոցները խիստ սահմանափակ են, ՄԱԿ-ը պետք է ջանա ոչ թե իր վրա վերցնել նրանց դերը, այլ ավելի արդյունավետ

կերպով լսեցնել բարեփոխմանն ուղղված նրանց ջանքերը և համակարգել դրանք՝ ապահովելու համար համատեղ միջազգային գործունեություն: Գլխավոր քարտուղարն առաջարկում է գործել հետևյալ ուղղություններով.

- *Զորացնել ՄԱԿ-ի ուժեղ կողմերը:* Կազմակերպության ուժը ոչ թե նրա իշխանության, այլ իր ներկայացրած արժեքների, համաշխարհային նորմեր սահմանելու և պահպանելու, համաշխարհային գործունեությունը խթանելու իր կարողության մեջ է, ինչպես նաև իր ներշնչած վստահության մեջ, որը բխում է մարդկանց կյանքը բարելավելուն ուղղված կոնկրետ գործողություններից: ՄԱԿ-ը պետք է ամրապնդի իր այդ ուժեղ կողմերը և միաժամանակ հաշվետվողականություն ցուցաբերի, մասնավորապես Անվտանգության խորհրդի բարեփոխման միջոցով, ինչը նրան կդարձնի ավելի արդյունավետ և հարցականի տակ չի դնի իր իրավասությունները: ՄԱԿ-ը պետք է նաև ընդլայնի իր հարաբերությունները քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և մասնավոր սեկտորի հետ:
- *Փոփոխությանն ուղղված կապերի ստեղծում:* ՄԱԿ-ը պետք է լրացնի իր պաշտոնական կառույցները ոչ պաշտոնական քաղաքական կապերով, միմյանց մոտեցնի միջազգային կազմակերպությունները, քաղաքացիական հասարակությունը, մասնավոր սեկտորը և կառավարությունները՝ համատեղ նպատակներին հասնելու համար:
- *Թվային կապերի ստեղծում:* Ավելի արդյունավետ գործելու և աշխարհի հետ իր կապը բարելավելու համար ՄԱԿ-ը պետք է լիակատար օգտագործի նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաները:
- *Խթանել խաղաղ հեղափոխությունը:* ՄԱԿ-ը պահանջում է կառուցվածքային բարեփոխում և անդամ պետությունների միջև ավելի հստակ համաձայնություն առաջնային խնդիրների վերաբերյալ: Գլխավոր ասամբլեան պետք է ընդունի համապատասխան որոշումներ, օրինակ, նոր մանդատներում «մայրամուտի դրույթները» (ժամկետային սահմանափակումներ) ընդգրկելու և դրանց արդյունքների վրա հիմնված բյուջետային համակարգ ստեղծելու նպատակով: Պետություններին և ժողովուրդներին ավելի լավ ծառայելու նպատակով ՄԱԿ-ը պետք է «դառնա ավելի արդյունավետ և ավելի հասանելի աշխարհի ժողովուրդների համար»:

«Հազարամյակի զեկույցը» հրապարակվել էր Հազարամյակի գագաթաժողովի համար, որը դարձավ պետությունների և կառավարությունների ղեկավարների՝ պատմության մեջ խոշորագույն հանդիպումը: ՄԱԿ-ի կենտրոնական գրասենյակում 2000թ. սեպտեմբերի 6-8-ը անցկացված գագաթաժողովում աշխարհի ղեկավարները հստակեցրին կազմակերպության գործունեության ուղղությունները նոր դարում: Միաձայն ընդունված Հազարամյակի հռչակագիրը միջազգային հանրության առաջ հստակ նպատակներ է դնում, որոնց իրականացումն ուղղված է կարևորագույն հարցի լուծմանը՝ գլոբալացումը բոլորի համար դրական ուժ դարձնելուն:

---

**Գլոբալ պայմանագիր:** 1999թ. Դավոսի (Շվեյցարիա) Համաշխարհային տնտեսական համաժողովում Գլխավոր քարտուղարն առաջ քաշեց ՄԱԿ-ի և գործարար աշխարհի միջև «գլոբալ պայմանագրի» գաղափարը: Պայմանագրի նպատակն է աշխարհի ժողովուրդներին հնարավորություն տալ բաժին ունենալ գլոբալացման բարիքներից և միջազգային շուկան դարձնել սոցիալ-տնտեսական պահանջները բավարարելու համար հիմնարար արժեքների և սկզբունքների անբաժանելի մաս: Պայմանագրի հիմքում ընկած են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 9 կարևորագույն սկզբունք, Աշխատանքի միջազգային կազմակերպության՝ աշխատանքի հիմնական իրավունքի հիմնարար սկզբունքները և շրջակա միջավայրի ու զարգացման վերաբերյալ Ռիոյի սկզբունքները, որոնք ստացել են աշխարհի կառավարությունների միաձայն հավանությունը:

Գլխավոր քարտուղարը խնդրել է մասնավոր ձեռնարկություններին ընդունել այս սկզբունքները և դրանք կիրառել ընկերությունների գործունեության մեջ: Նա նաև հորդորում է արհմիութենական և քաղաքացիական կազմակերպությունների ղեկավարներին միանալ պայմանագրին և այն օգտագործել որպես գլոբալացմանն ու զարգացմանը վերաբերող վիճելի հարցերի քննարկման դաշտ: Բոլոր երեք բաժինների մասնակցությամբ առաջին ժողովն անցկացվեց 2000թ.:

## ՄԱԿ-ի բյուջեն

ՄԱԿ-ի կանոնավոր բյուջեն հաստատվում է Գլխավոր ասամբլեայում երկու տարի ժամկետով: Բյուջեի նախագիծը ներկայացնում է Գլխավոր քարտուղարը, որից հետո այն քննության է առնում **Վարչական և բյուջետային հարցերի խորհրդատվական կոմիտեն (ACABQ)**՝ 16 փորձագետներ, որոնք առաջադրվում են կառավարությունների կողմից և ընտրվում Գլխավոր ասամբլեայում սակայն ծառայում են որպես անհատներ, ոչ թե որպես կառավարության ներկայացուցիչներ: Բյուջեի ծրագրային մասը քննության է առնում Ծրագրման և համակարգման կոմիտեն՝ 34 փորձագետ, որոնք ընտրվում են Գլխավոր ասամբլեայի կողմից և արտահայտում են իրենց կառավարությունների տեսակետները:

2000-2001թթ. համար հաստատված բյուջեն կազմում էր 2 535 միլիոն ԱՄՆ դոլար, որը երկու միլիոնով ավելի էր 1998-1999թթ. բյուջեից: Բյուջեից ֆինանսավորվում են քաղաքական, միջազգային արդարադատության ու օրենքի զարգացմանն ուղղված միջազգային համագործակցության, հասարակական տեղեկատվության, մարդու իրավունքների և հումանիտար հարցերին առնչվող ՄԱԿ-ի ծրագրերը:

Բյուջեի հիմնական աղբյուրը անդամ պետությունների անդամավճարներն են, որոնք որոշվում են ըստ Գլխավոր ասամբլեայի հաստատած սանդղակի: Սանդղակը Գլխավոր ասամբլեային է ներկայացնում **Անդամավճարների կոմիտեն**՝ 18 փորձագետներ, որոնք ծառայում են որպես անհատներ և ընտրվում են Գլխավոր ասամբլեայի կողմից վարչական և բյուջետային հարցերի (ԳԱ հինգերորդ) կոմիտեի առաջարկությամբ:

Սանդղակի հիմնական սկզբունքը պետությունների վճարունակությունն է, որը հաշվարկվում է ընդհանուր ազգային համախառն արտադրանքում նրանց համեմատական մասնաբաժնով և հաշվի է առնում մի շարք գործոններ, այդ թվում և նրանց մեկ շնչին ընկնող եկամուտը: Երեք տարին մեկ կոմիտեն ամբողջովին վերանայում է գնահատման սանդղակը՝ հիմնվելով ազգային եկամուտի վերջին վիճակագրական տվյալների վրա՝ ապահովելու համար դրանց արդարությունն ու ճշտությունը: 2000թ. Գլխավոր ասամբլեան ցանկացած անդամի համար վճարման առավելագույն չափը սահմանեց բյուջեի 22 տոկոսը:

Վերջին տարիների ընթացքում ՄԱԿ-ի ֆինանսական վիճակը բավական բարդ է, քանի որ մի քանի երկիր շարունակաբար չեն կատարում իրենց ֆինանսական պարտավորությունները. ժամանակին և ամբողջովին չեն վճարում ի-

րենց անդամավճարները: ՄԱԿ-ն ի վիճակի է շարունակել իր գործունեությունը մի քանի երկրների կամավոր վճարումների և իր աշխատանքային հիմնադրամի (որին անդամ պետությունները կանխավճարի տեսքով փոխանցում են իրենց անդամավճարներին համապատասխան գումարներ) կապիտալի շնորհիվ, ինչպես նաև խաղաղարար գործողություններին տրամադրված գումարներից վարկեր վերցնելով:

2000թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 2000թ. կանոնավոր բյուջեին անդամ պետությունների ընդհանուր պարտքը կազմում էր 222 միլիոն ԱՄՆ դոլար, որից 200 մլն-ը կազմում էր 2000թ. պարտքը, իսկ 22 մլն-ը նախորդ տարիներից կուտակված էր: 187 անդամներից 142-ը լրիվ վճարել էին իրենց անդամավճարները, իսկ 45-ը չէին կատարել ՄԱԿ-ի առջև իրենց ֆինանսական պարտավորությունները:

Բացի կանոնավոր բյուջեից, անդամ պետությունները անդամավճարներ են մուծում միջազգային դատարաններին և, վերանայված հիմնական սանդղակի համաձայն, խաղաղապահ գործողությունների համար:

1995թ. խաղաղարար գործունեության արժեքը հասավ 3 միլիարդի, ինչը հիմնականում արտահայտում էր Սոմալիում և նախկին Հարավսլավիայում խաղաղարար գործողությունների արժեքը: 1998թ. դրանք կազմել են մոտ մեկ միլիարդ, իսկ 1999թ.՝ մոտ 889 միլիոն ԱՄՆ դոլար: Ակնկալվում էր, որ 2000թ. խաղաղարար գործողությունների ընդհանուր ծախսերը կկազմեն առնվազն 2 միլիարդ, հաշվի էին առնվում Կոսովոյում, Արևելյան Թիմորում, Սիերա Լեոնում, Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետությունում և Եթովպիայում ու Էրիթրեայում հավանություն ստացած նոր առաքելությունները:

2000թ. դեկտեմբերի 31-ին շարունակվող և ավարտված խաղաղարար գործողությունների համար չվճարված անդամավճարների գումարը կազմում էր մոտ 2 միլիարդ: Անդամավճարները ժամանակին չստանալով՝ ՄԱԿ-ն ի վիճակի չի եղել հատուցել խաղաղապահ զորքերին զինամթերք և կազմակերպչական աջակցություն տրամադրած պետություններին՝ այդպիսով նրանց վրա դնելով անարդարացի մեծ բեռ:

ՄԱԿ-ի հիմնադրամներն ու ծրագրերը, ինչպիսիք են Մանկական հիմնադրամը (ՄԱՄՀ), ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը (ՄԱԶԾ) և Փախստականների հարցերով ՄԱԿ-ի գլխավոր հանձնակատարի գրասենյակը (ՓԳՀ), առանձին բյուջեներ ունեն: Նրանց միջոցների մեծ մասը գոյանում է անդամ պետությունների կամ անհատների (Մանկական հիմնադրամի դեպքում) կամավոր վճարումներից:

ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալությունները նույնպես առանձին բյուջեներ ունեն: 1999թ. մասնագիտացված գործակալությունների հաստատված կանոնավոր բյուջեն (բացառությամբ Համաշխարհային բանկի և Արժույթի միջազգային հիմնադրամի և Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի) կազմել է 1,987 միլիարդ ԱՄՆ դոլար: Պետությունները նաև կատարում են կամավոր վճարումներ, որոնց ընդհանուր միջին թիվը կազմում է մոտ 5,5 միլիարդ ԱՄՆ դոլար:

# ՄԱԿ-ի կազմակերպությունների ընտանիքը

ՄԱԿ-ի կազմակերպությունների ընտանիքը («ՄԱԿ-ի համակարգ») կազմված է **ՄԱԿ-ի քարտուղարությունից**, ՄԱԿ-ի **ծրագրերից և հիմնադրամներից** (ինչպես Մանկական հիմնադրամը և ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը) և **մասնագիտացված գործակալություններից**: Ծրագրերն ու հիմնադրամները Գլխավոր ասամբլեայի օժանդակ մարմիններ են: ՄԱԿ-ի հետ հատուկ համաձայնագրերով կապված մասնագիտացված գործակալությունները պատասխանատու են Տնտսոցխորհի և/կամ Գլխավոր ասամբլեայի առջև: Նրանք ունեն իրենց սեփական կառավարող մարմինները ու բյուջեները և մշակում են իրենց չափանիշները ու ուղեցույցները: Միասին նրանք տեխնիկական և այլ տեսակի գործնական օգնություն են տրամադրում փաստորեն տնտեսական և սոցիալական գործունեության բոլոր բնագավառներում:

**Համակարգման վարչական կոմիտե:** 26 հիմնադրամները, ծրագրերը և մասնագիտացված գործակալությունները Համակարգման վարչական կոմիտեի անդամ են: Կոմիտեն, որի հիմնական նպատակն է դյուրացնել ՄԱԿ-ի համակարգի կազմակերպությունների վարչական մարմինների հաստատած ծրագրերի համակարգումը, հավաքվում է տարեկան երկու անգամ, Գլխավոր քարտուղարի նախագահությամբ, քննարկելու համար համակարգի առջև ծառացած բովանդակային և կազմակերպչական խնդիրները: Կոմիտեի աշխատանքը մասամբ իրականացվում է նրա օժանդակ մարմինների կողմից, որոնցից յուրաքանչյուրը կենտրոնացած է համակարգի ներսում համադրման որոշակի ճյուղի վրա:

## ՄԱԿ-ի քարտուղարությունը

ՄԱԿ-ի Քարտուղարությունը կազմված է տարբեր ճյուղավորված վարչություններից և գրասենյակներից: **Գլխավոր քարտուղարի գործադիր գրասենյակը**, բաղկացած Գլխավոր քարտուղարից և նրա ավագ խորհրդականներից, մշակում է ընդհանուր քաղաքականությունը և ապահովում կազմակերպության ընդհանուր ղեկավարումը: Քարտուղարության կենտրոնական գրասենյակը գտնվում է Նյու Յորքում, բացի դրանից, գրասենյակներ ունի աշխարհի բոլոր տարածաշրջաններում:

Գործունեության հիմնական կենտրոնները Ժնևում, Վիեննայում և Նայրոբիում են: Ժնևի ՄԱԿ-ի գրասենյակը համաժողովային դիվանագիտության, ինչպես նաև զինաթափման և մարդու իրավունքների հարցերի կենտրոնն է: Վիեննայի ՄԱԿ-ի գրասենյակը թմրամոլության միջազգային վերահսկման, հանցագործության կանխարգելման ու քրեական արդարադատության, տիեզերքի խաղաղ օգտագործման և միջազգային առևտրական իրավունքի բնագավառներում ծավալվող գործունեության կենտրոնական գրասենյակն է: Նայրոբիի ՄԱԿ-ի գրասենյակը շրջակա միջավայրի պահպանության և մարդկային բնակավայրերի բնագավառներում ծավալվող գործունեության կենտրոնական գրասենյակն է:

## Միավորված ազգերի կազմակերպության հիմնական գրասենյակները աշխարհում




Քարտեզ No. 4000 2.1 ՄԱԿ 2000թ., Օգոստոս

Համաշխարհային տեղեկատվության վարչության Քարտեզագրության բաժին

## Ներքին վերահսկման ծառայությունների գրասենյակ (ՆՎԾԳ)

Ներքին վերահսկման ծառայությունների գրասենյակը ստեղծվել է ՄԱԿ-ի գործողությունների վերահսկման վստահելի, արդյունավետ և մշտական համակարգ ապահովելու համար: Գրասենյակը՝

- վերահսկում է ծրագրերի և մանդատների արդյունավետությունը,
- կատարում է համապարփակ ներքին աուդիտ,
- ըստ անհրաժեշտության կատարում է ծրագրերի և կազմակերպչական միավորների ստուգում,
- քննության է առնում թերի ղեկավարման և սխալ վարքի վերաբերյալ զեկուցումները,
- վերահսկում է աուդիտներից, ստուգումներից և հետաքննություններից ծագած առաջարկների կատարումը,
- խորհրդատվություն է տրամադրում ծրագրերի ղեկավարներին իրենց պարտականությունների կատարման վերաբերյալ:

ՆՎԾԳ-ն զբաղվում է քարտուղարության, գործող ծրագրերի և հիմնադրամների, խոշոր խաղաղապահ գործողությունների և զանազան այլ ծրագրերի գործունեությամբ: Այն ունի մոտ 120 հոգուց բաղկացած անձնակազմ և մոտ 22 միլիոն ԱՄՆ դոլարի բյուջե, որն ավելի քիչ է, քան այն գումարը, որ շահում է նա՝ ամեն տարի սխալ ծախսերը բացահայտելով:

Ներքին վերահսկման ծառայության հարցերով Գլխավոր քարտուղարի տեղակալին նշանակում է Գլխավոր քարտուղարը, և հաստատում է Գլխավոր ասամբլեան՝ հինգ տարի չերկարացվող ժամկետով:

## Իրավական հարցերի գրասենյակ (ԻՀԳ)

Իրավական հարցերի գրասենյակը կազմակերպության կենտրոնական իրավական ծառայությունն է: Այն հանրային և մասնավոր միջազգային իրավունքի ոլորտում խորհրդատվություն է տրամադրում Գլխավոր քարտուղարին, քարտուղարության վարչություններին ու գրասենյակներին և հիմնական ու օժանդակ մարմիններին, բովանդակային և կազմակերպչական օժանդակություն է ապահովում հանրային միջազգային իրավունքի, ծովային իրավունքի և միջազգային առևտրական իրավունքի մարմիններին, իրականացնում է Կանոնադրության 102-րդ հոդվածով ու Արդարադատության միջազգային դատարանի կանոնադրությամբ Գլխավոր քարտուղարի վրա դրված պարտականությունները:

ԻՀԳ-ն զբաղվում է միջազգային խաղաղության ու անվտանգության, ՄԱԿ-ի կարգավիճակին, արտոնություններին և անձեռնմխելիությանը, անդամ պետությունների հավատարմագրերին և ներկայացվածությանն առնչվող իրավական հարցերով: Մշակում է միջազգային կոնվենցիաների, պայմանագրերի, ՄԱԿ-ի մարմինների ու համաժողովների վարման կարգերի և այլ իրավական փաստաթղթերի նախագծերը, իրավական ծառայություն և խորհրդատվություն է տրամադրում միջազգային մասնավոր և վարչական իրավունքի հարցերի և Գլխավոր ասամբլեայի բանաձևերի ու որոշումների վերաբերյալ, գործում է որպես Գլխավոր ասամբլեայի վեցերորդ կոմիտեի, Իրավունքի միջազգային հանձնաժողովի, Միջազգային առևտրի հանձնաժողովի, ՄԱԿ-ի Ծովային իրավունքի մասին կոնվենցիայի համաձայն ստեղծված մարմինների, ՄԱԿ-ի Վարչական տրիբունալի և այլ իրավական մարմինների քարտուղարություն, իրականացնում է պայմանագրերի գրանցման և հրապարակման ու բազմակողմ կոնվենցիաների ավանդապահի բնագավառներում Գլխավոր քարտուղարի վրա դրված պարտականությունները:

Գրասենյակի ղեկավարը՝ իրավախորհրդատուն, ներկայացնում է Գլխավոր քարտուղարին իրավական բնույթի ժողովներում և համաժողովներում, ինչպես նաև դատական և արբիտրաժային լսումներում, հաստատում է ՄԱԿ-ի անունից հրապարակվող իրավական փաստաթղթերը և հրավիրում ՄԱԿ-ի համակարգի իրավական խորհրդատուների ժողովներ ու այդ ժողովներում ներկայացնում ՄԱԿ-ը:

## Քաղաքական հարցերի վարչություն (ՔՀՎ)

Քաղաքական հարցերի վարչությունը Գլխավոր քարտուղարին խորհրդատվություն ու աջակցություն է տրամադրում խաղաղության և անվտանգության պահպանման և վերահաստատման բնագավառներում Կանոնադրությամբ նրա վրա դրված պարտականություններից բխող բոլոր քաղաքական հարցերում: Հատկապես ՔՀՎ-ն՝

- վերահսկում, վերլուծում և գնահատում է ողջ աշխարհում տեղի ունեցող քաղաքական զարգացումները,
- որոշում է, թե առկա կամ պոտենցիալ ինչ հակամարտությունների հսկման և կարգավորման հարցերում ՄԱԿ-ը կարող է օգտակար լինել,
- Գլխավոր քարտուղարին առաջարկում է այդ դեպքերի համար համապատասխան գործողություններ և իրականացնում հաստատված քաղաքականությունը,
- աջակցում է Գլխավոր քարտուղարին կանխարգելիչ դիվանագիտության, խաղաղարարության, խաղաղապահության և խաղաղաշինության բնագավառներում նրա, Գլխավոր ասամբլեայի և Անվտանգության խորհրդի կողմից դրված քաղաքական գործողությունների իրականացման հարցում,
- խորհրդատվություն է տրամադրում Գլխավոր քարտուղարին ընտրությունների հարցում աջակցելու մասին անդամ պետություններից ստացված դիմումների վերաբերյալ և այդ դիմումներին համապատասխան համակարգում է հիմնված ծրագրերը,
- խորհրդատվություն ու աջակցություն է տրամադրում Գլխավոր քարտուղարին անդամ պետությունների հետ հարաբերությունների քաղաքական ասպեկտի վերաբերյալ,
- ապահովում է քարտուղարության ծառայությունները Անվտանգության խորհրդին. դրա օժանդակ մարմիններին, ինչպես նաև պաղեստինցիների անքակտելի իրավունքների իրականացման հարցերի կոմիտեին ու ապագաղութացման հարցերով 24-ի հատուկ կոմիտեին:

Վարչության անօրենը, որը նաև Գլխավոր քարտուղարի քաղաքական հարցերով տեղակալն է, այլ պարտականությունների հետ մեկտեղ անց է կացնում խորհրդատվություններ և բանակցություններ բանավեճերի խաղաղ կարգավորման վերաբերյալ և գործում է որպես ՄԱԿ-ի խաղաղաշինության, կանխարգելիչ և ընտրությունների աջակցման գործողությունների համակարգող:

## Զինաթափման հարցերի վարչություն (ԶՀՎ)

Զինաթափման հարցերի վարչությունը ձեռնամուխ է միջուկային զենքի վերացման և չտարածման նպատակներին, ինչպես նաև զանգվածային ոչնչացման այլ սպառազինությունների նկատմամբ զինաթափման ռեժիմի ամրապնդմանը: Այն նաև նպաստում է զինաթափմանը սովորական սպառազինությունների բնագավառներում, հատկապես հակահետևակային ականների և փոքր զեն-

քերի, որոնք առաջին հերթին են կիրառվում արդի հակամարտություններում:

Գլխավոր ասամբլեայի և նրա Առաջին կոմիտեի, Զինաթափման հանձնաժողովի և Զինաթափման հարցերով համաժողովի միջոցով ԶՀՎ-ն բովանդակային և կազմակերպչական աջակցություն է ապահովում զինաթափման նորմերի մշակման գործում: Այն խթանում է զինաթափմանն ուղղված կանխարգելիչ միջոցառումները, ինչպիսիք են երկխոսությունը, թափանցիկությունը և վստահության ստեղծումը ռազմական հարցերում, ինչպես նաև խրախուսում է զինաթափմանն ուղղված տարածաշրջանային միջոցառումները: Դրանց թվում են ՄԱԿ-ի Սովորական սպառազինությունների ցանկը և տարածաշրջանային ֆորումները: Այն նաև տեղեկատվություն է տարածում զինաթափման բնագավառում ՄԱԿ-ի գործունեության վերաբերյալ:

ԶՀՎ-ն սատարում է հակամարտությանը հետևող գործնական միջոցառումների զարգացմանն ու կիրառմանը, ինչպիսիք են զինաթափումը և նախկին մարտիկների զորացրումը, և աջակցում է քաղաքացիական հասարակության մեջ նրանց վերաներգրավման գործին:

## Խաղաղապահ գործողությունների վարչություն (ԽԳՎ)

Վարչությունը ՄԱԿ-ի խաղաղապահ բոլոր գործողությունների գործնական իրականացման մարմինն է և պատասխանատու է այդ գործողությունների անցկացման, ղեկավարման, ուղղություն ցույց տալու, ծրագրման և նախապատրաստման համար: ԽԳՎ-ն մշակում է խաղաղապահ գործողությունների ծրագրերն ու մեթոդոլոգիան. կառավարությունների հետ բանակցությունների անցկացման միջոցով ապահովում է գործողությունների համար անհրաժեշտ անձնակազմն ու սարքավորումները, ապահովում է խաղաղապահ գործողությունների, ինչպես նաև քաղաքական և մարդասիրական առաքելությունների կազմակերպչական ու վարչական աջակցությունը, առաջարկում է պահանջվող միջոցների ցանկը և վերահսկում է խաղաղապահ գործողությունների հետ կապված ֆոնդերը, Անվտանգության խորհրդի որոշումների իրագործման նպատակով կապ է պահպանում հակամարտության կողմերի և խորհրդի անդամների հետ, վերլուծություն է կատարում ծագող քաղաքական հարցերի վերաբերյալ, ինչպես նաև ձևակերպում այդ հարցերի վերաբերյալ քաղաքականությունն ու վարման կարգը: Այն նաև համակարգում է հակահետևակային ականների հարցերում ՄԱԿ-ի գործունեությունը, ինչպես նաև զարգացնում է խաղաղապահ գործունեության կամ ճգնաժամային իրադրության ընթացքում ականների վերացմանն ուղղված ծրագրերը և աջակցում դրանց անցկացմանը:

Վարչության պետը՝ խաղաղապահ գործողությունների հարցերով Գլխավոր քարտուղարի տեղակալը, Գլխավոր քարտուղարի անունից ղեկավարում է խաղաղապահ գործողությունները, մշակում դրանց քաղաքականությունն ու կազմում ուղեցույցները, խորհուրդներ տրամադրում Գլխավոր քարտուղարին դրանց անցկացման վերաբերյալ:

## Մարդասիրական հարցերի համակարգման գրասենյակ (ՄՀՀԳ)

Մարդասիրական հարցերի համակարգման գրասենյակի մանդատը նախատեսում է հատուկ իրավիճակներում օգնություն տրամադրող ՄԱԿ-ի մարմինների գործունեության համակարգում: Գրասենյակը պետք է համաձայնություն ապահովի միջգերատեսչական մշտական համաժողովի կազմակերպությունների միջև պարտականությունների տարանջատման հարցում, ինչպիսիք են համակարգման մեխանիզմների ստեղծումը, կարիքների գնահատման համար առաքելությունների կազմակերպումը, համատեղ դիմումների պատրաստումը և միջոցների հավաքումը:

Հատուկ իրավիճակներում օգնության համակարգողի հիմնական պարտականություններն են.

- քաղաքականության զարգացում և համակարգում, որի նպատակը բոլոր մարդասիրական հարցերի, այդ թվում և գործակալությունների մանդատներով չնախատեսվածների, համապատասխան լուծումներ գտնելն է.
- քաղաքական մարմիններում, մասնավորապես Անվտանգության խորհրդում մարդասիրական հարցերի արծարծում,
- հատուկ մարդասիրական իրավիճակի դեպքում համապատասխան միջոցառումների ապահովում տեղում պատշաճ մեխանիզմների ստեղծման միջոցով: Սա իրականացվում է միջգերատեսչական մշտական համաժողովի միջոցով, որի նախագահը Հատուկ իրավիճակներում օգնության համակարգողն է:

Գրասենյակի ընդհանուր անձնակազմը 439 հոգի է, իսկ 2000-2001թթ. հիմնական բյուջեն կազմել է 45 միլիոն ԱՄՆ դոլար:

## Տնտեսական և սոցիալական հարցերի վարչություն (ՏՍՀՎ)

Տնտեսական և սոցիալական հարցերի վարչության գործունեությունը բաժանվում է երեք ընդարձակ ու շաղկապված ոլորտների:

ՏՍՀՎ-ն առաջին հերթին հավաքում, ընդհանրացնում և վերլուծում է սոցիալական, տնտեսական և բնապահպանական բնագավառների հարցերին ու միտումներին առնչվող լայնածավալ տեղեկատվություն: Դա հնարավորություն է տալիս անդամ պետություններին քննարկումներ անցկացնել՝ հարցին լավատեղյակ լինելով և որոշումներ ընդունել քաղաքական տարբերակների հիման վրա: Երկրորդ հերթին այն դյուրացնում է բանակցությունները բազմաթիվ միջկառավարական մարմինների հետ, որոնք ՄԱԿ-ում ժողովներ են անցկացնում տնտեսական, սոցիալական և բնապահպանական հարցերի շուրջ՝ աջակցություն տրամադրելով անդամ պետություններին, երբ նրանք քննարկում են համաշխարհային խնդիրների լուծման հարցում ընդհանուր գործողությունների ձեռնարկումը: Եվ վերջապես շահագրգիռ կառավարությունների խնդրանքով բաժինը խորհրդատվություն է տրամադրում վերջին շրջանի տնտեսական, սոցիա-

լական և բնապահպանական մի շարք համաժողովներում համաձայնեցված քաղաքական ուղեցույցները երկրների մակարդակով կիրառելու հարցում: Նաև տեխնիկական աջակցության շնորհիվ նպաստում է այդ բնագավառների ազգային մեխանիզմների ստեղծմանը:

ՏՍՎՀ-ի գործունեությունը ներառում է կայուն զարգացման, գենդերային և կանանց առաջադիմության հարցերի, Աֆրիկայի և թերզարգացած պետությունների, քաղաքական վերլուծության զարգացման, բնակչության, վիճակագրության, հասարակական տնտեսագիտության և պետական կառավարման, սոցիալական քաղաքականության և զարգացման խնդիրները: Այն սերտորեն համագործակցում է ոչ կառավարական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության այլ կառույցների հետ՝ ճանաչելով նրանց ներդրումը զարգացման քաղաքական և գործնական ասպեկտներում:

## Գլխավոր ասամբլեայի հարցերի և համաժողովների սպասարկման վարչություն (ԳԱՀՀՍՎ)

Գլխավոր ասամբլեայի հարցերի և համաժողովների սպասարկման վարչությունն ապահովում է Գլխավոր ասամբլեայի, նրա հիմնական կոմիտեների և օժանդակ մարմինների, Տնտեսական և սոցիալական խորհրդի ու նրա օժանդակ մարմինների մեծ մասի, ինչպես նաև տնտեսական և սոցիալական հարցերով համաժողովների տեխնիկական և կազմակերպչական սպասարկումը: Այն նաև միջկառավարական և փորձագիտական մարմիններին, որոնք հավաքվում են Նյու Յորքում և այլ վայրերում, ժողովների կազմակերպման և փաստաթղթերի պատրաստման, ինչպես նաև թարգմանական և հրատարակչական ծառայություններ է մատուցում: Վարչության պետը՝ Գլխավոր ասամբլեայի և համաժողովների սպասարկման հարցերով Գլխավոր քարտուղարի տեղակալը, ներկայացնում է Գլխավոր քարտուղարին վարչությանը առնչվող բոլոր ժողովներում, ինչպես նաև մշակում է ողջ աշխարհում ՄԱԿ-ի համաժողովների սպասարկման քաղաքականությունն ու գործնական ապահովումը:

## Հանրային տեղեկատվության վարչություն (ՀՏՎ)

Վարչությունը միջազգային հանրությանը տեղեկացնում է ՄԱԿ-ի գործունեության և նպատակների մասին: Տեղեկություններ է տարածում ՄԱԿ-ի համակարգի բարդ գործունեության մասին բազմաթիվ միջոցառումների, այդ թվում և ՄԱԿ-ի ինտերնետային էջի, ռադիոյի և հեռուստատեսության, մամլո հաղորդագրությունների, հրապարակումների, վավերագրական ֆիլմերի, հատուկ ձեռնարկների, այցերի, գրադարանների միջոցով: Աշխարհի տարբեր մասերում վարչությունը 70 տեղեկատվական կենտրոններ և ծառայություններ ունի, տեղեկատվական ծառայություններ կան նաև ՄԱԿ-ի 8 ներկայացուցչություններում :

Վարչության պետը պատասխանատու է ՄԱԿ-ի տեղեկատվական քաղաքա-

կանության, ՄԱԿ-ի գործունեության վերաբերյալ համակարգված և հրապարակային տեղեկությունների տարածման, ինչպես նաև կազմակերպության ներսում կազմակերպված հաղորդակցության ապահովման համար:

Հանրային գործերի բաժինը տեղեկատվական քարոզչական աշխատանքներ է վարում համաշխարհային նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ, հատուկ միջոցառումներ, ցուցահանդեսներ, մամլո ասուլիսների կազմակերպում առանձին հարցերի վերաբերյալ, անց է կացնում սեմինարներ և հատուկ ծրագրեր լրագրողների և կրթական բնագավառի աշխատակիցների համար, ապահովում է համագործակցությունը քաղաքացիական հասարակության և մասնավորապես ոչ կառավարական կազմակերպությունների հետ, հասարակության լայն շրջանների համար ծառայում է որպես ՄԱԿ-ի մասին տեղեկատվության աղբյուր և կազմակերպում է տեղեկատվական այլ միջոցառումներ, այդ թվում այցելություններ ՄԱԿ-ի կենտրոնական գրասենյակ:

Լուրերի և մամուլի բաժինը ապահովում է ՄԱԿ-ի և նրա գործունեության մասին լուրերի ու տեղեկատվության մատչելիությունը ամբողջ աշխարհի լրատվական միջոցների և կազմակերպությունների համար: ՀՏՎ-ն օրվա լուրեր է հաղորդում ռադիոյով և ինտերնետով, պատրաստում ռադիո և հեռուստատեսային հաղորդումներ, ապահովում ՄԱԿ-ի ժողովների և միջոցառումների ուղիղ հեռարձակումը և անցկացնում լրատվական միջոցների հավատարմագրում:

Գրադարանի և տեղեկատվական միջոցների բաժինը ապահովում է ՄԱԿ-ի փաստաթղթերի տարածումը, հրապարակումների և ինտերնետային էջի, Դագ Համարշյոլդի անվան գրադարանի ծառայությունների, ինչպես նաև գրադարանի՝ աշխարհի տարբեր մասերում բացված 350 բաժանմունքների միջոցով: Բաժինը նաև քարտեզագրական ծառայություն է տրամադրում և ղեկավարում հրատարակչական ու վաճառքի ծրագրերը:

**Գլխավոր քարտուղարի խոսնակի** գրասենյակը, որը նույնպես վարչության կողմից է ղեկավարվում, պատասխանատու է Գլխավոր քարտուղարի՝ մամուլի հետ առնչություն ունեցող գործունեության ծրագրման համար: Խոսնակը, որն անմիջականորեն ենթարկվում է Գլխավոր քարտուղարին, ամենօրյա մամլո ճեպազրույցներ է վարում:

## Կառավարման վարչություն (ԿՎ)

ԿՎ-ն քարտուղարության բոլոր կառույցներին երեք բնագավառների՝ ֆինանսական, կադրային և օժանդակ ծառայությունների ռազմավարական քաղաքականության հանձնարարականներ է տալիս և ղեկավարում: Այդ հարցերով զբաղվող գրասենյակներն են՝ ծրագրերի մշակման և բյուջեի ու հաշիվների, մարդկային ռեսուրսների ղեկավարման, օժանդակման կենտրոնական ծառայության:

ԿՎ-ն մշակում և իրականացնում է քարտուղարության կառավարման բարելավված քաղաքականությունը, անձնակազմի ղեկավարումն ու վերապատրաստումը, ծրագրերի մշակումը, բյուջետային, ֆինանսական և մարդկային ռեսուրսների ղեկավարումը, տեխնոլոգիական վերափոխումը: Այն նաև տեխնի-

# ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ

**ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿ**

**Միջազգային դատարան**

**Անվտանգության խորհուրդ**

**Գլխավոր աս**

Ռազմական անձնակազմի կոմիտե

Մշտական կոմիտե և ad hoc մարմիններ

Նախկին Հարավսլավիայի հարցերով միջազգային քրեական դատարան

Ռուանդայի հարցերով միջազգային քրեական դատարան

ՄԱԿ-ի դիտորդական, հսկողական և ստուգողական հանձնաժողով (Իրաք)

Խաղաղապահ գործողություններ և առաքելություններ

Հիմնական կոմիտեներ

Նստաշրջանային այլ կոմիտեներ

Մշտական կոմիտեներ և ad hoc մարմիններ

Այլ օժանդակ օրգաններ

## ԾՐԱԳՐԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ

**UNCTAD / ՄԱԱԶՀ**
ՄԱԿ-ի առևտրի և զարգացման համաժողով

**ITC / ՄԱԿ**
Առևտրի միջազգային կենտրոն (UNCTAD/WTO)

**UNDCP / ՄԱԹՎԾ**
ՄԱԿ-ի թմրամիջոցների վերահսկման ծրագիր

**UNEP / ՄԱՇՄԾ**
ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիր

**UNDP / ՄԱԶԾ**
ՄԱԿ-ի Զարգացման ծրագիր

**UNIFEM / ՄԱԿԶՀ**
ՄԱԿ-ի Կանանց զարգացման հիմնադրամ

**UNV / ՄԱԿԿ**
ՄԱԿ-ի Կամավորներ

**UNFPA / ՄԱԲՀ**
ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ

**UNHCR / ՄԱՓԳՀԳ**
ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ

**UNICEF / ՄԱՄՀ**
ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ

**WFP / ՊՀԾ**
Պարենի համաշխարհային ծրագիր

**UNRWA** / ՄԱՕԱԳ**
Մերձավոր Արևելքում Պաղեստինի փախստականների օգնության և աշխատանքների գործակալություն

## ՄԱԿ-Ի ԱՅԼ ՄԻԱՎՈՐՆԵՐ

**OHCHR / ՄԻԳՀԳ**
ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ

**UNCHS / ՄԱԲԿ**
ՄԱԿ-ի Բնակավայրերի կենտրոն (Հաբիտատ)

**UNOPS / ՄԱԾԾԳ**
ՄԱԿ-ի Ծրագրերի ծառայությունների գրասենյակ

**UNU / ՄԱՀ**
ՄԱԿ-ի Համալսարան

## ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

**INSTRAW / ԿԱՈՒՄԳԻ**
Կանանց առաջխաղացման միջազգային ուսումնական և գիտահետազոտական ինստիտուտ

**UNICRI / ՄԱՄՔԱԳԻ**
ՄԱԿ-ի Միջտարածաշրջանային քրեական և արդարադատության գիտահետազոտական ինստիտուտ

**UNITAR / ՄԱՈՒԳԻ**
ՄԱԿ-ի Ուսուցման և գիտահետազոտական ինստիտուտ

**UNRISD / ՄԱՍԶԳԻ**
ՄԱԿ-ի Սոցիալական զարգացման գիտահետազոտական ինստիտուտ

**UNIDIR / ՄԱԶԳԻ****
ՄԱԿ-ի Զինաթափման գիտահետազոտական ինստիտուտ

* Ինքնիշխան կազմակերպություններ, որոնք ՄԱԿ-ի հետ և իրար միջև ունեն աշխատանքային հարաբերություններ Տնտեսական և սոցիալական խորհրդի համակարգման մեխանիզմի միջոցով
** Հաշվետու են միայն Գլխավոր ասամբլեային

# ...ԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

## ...ԻԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

**Տնտեսական և սոցիալական խորհուրդ**

**Խնամակալության խորհուրդ**

**Քարտուղարություն**

...ՈՎՆԵՐ

...ացման

...ի կանխման

...նամբ

...երի կանխարգելման ու ...

...հաշվողական

...ի համաձայնությամբ

...մակի

...ության

...համաձայնությամբ

...ՐԱՆԱՅԻՆ ...ՈՎՆԵՐ

...(ԵՏՀ)

...(ԵՏՀ)

...(ԼԱՏՀ)

...(ԱԽՏՍՀ)

...(ԱԱՏՍՀ)

...ի

...հարցերի

...ՈՒԹՅՈՒՆՆԵՐ

...միջազգային

...կազմակերպություն

...

...պատասխանատվության

...

...ագիտական

...

...

**ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ****

**ILO / ԱԱԿ**
Աշխատանքի միջազգային կազմակերպություն

**FAO / ՊԳԿ**
ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն

**UNESCO / ՅՈՒՆԵՍԿՕ**
ՄԱԿ-ի կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն

**WHO / ԱՀԿ**
Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

**ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԻ ԽՈՒՄԲ**

**IBRD / ՎԶՄԲ**
Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ

**IDA / ՄԶԱ**
Միջազգային զարգացման ասոցիացիա

**IFC / ՄՖԿ**
Միջազգային ֆինանսական կորպորացիա

**MIGA / ԲՆԵԳ**
Բազմակողմանի ներդրումների երաշխիքային գործակալություն

**ICSID / ՆՎԿՄԿ**
Ներդրումների հետ կապված բանավեճերի կարգավորման միջազգային կենտրոն

**IMF / ԱՄՀ**
Արժույթի միջազգային հիմնադրամ

**ICAO / ՔԱՄԿ**
Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն

**IMO / ԾՄԿ**
Ծովային միջազգային կազմակերպություն

**ITU / ՀՄՄ**
Հեռահաղորդակցության միջազգային միություն

**UPU / ՓՀՄ**
Փոստային համաշխարհային միություն

**WMO / ՕՀԿ**
Օդերևութաբանական համաշխարհային կազմակերպություն

**WIPO / ՄՍՀԿ**
Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն

**IFAD / ԳԶՄՀ**
Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ

**UNIDO / ՄԱԶԿ**
ՄԱԿ-ի Արդյունաբերության զարգացման կազմակերպություն

**OSG / ԳՔԳ**
Գլխավոր քարտուղարի գրասենյակ

**OIOS / ՆՎԾԳ**
Ներքին վերահսկման ծառայությունների գրասենյակ

**OLA / ԻՀԳ**
Իրավական հարցերի գրասենյակ

**DPA / ՔՀՎ**
Քաղաքական հարցերի վարչություն

**DDA / ԶՀՎ**
Զինաթափման հարցերի վարչություն

**DPKO / ԽԳՎ**
Խաղաղապահ գործողությունների վարչություն

**OCHA / ՄՀՀԳ**
Մարդասիրական հարցերի համակարգման գրասենյակ

**DESA / ՏՍՀՎ**
Տնտեսական և սոցիալական հարցերի վարչություն

**DGAACS / ԳԱՀՀԱՎ**
Գլխավոր ասամբլեայի հարցերի և համաժողովների սպասարկման վարչություն

**DPI / ՀՏՎ**
Հանրային տեղեկատվության վարչություն

**DM / ԿՎ**
Կառավարման վարչություն

**OIP / ԻԾԳ**
Իրաքի ծրագրի գրասենյակ

**UNSECOORD / ՄԱԱՀՎ**
ՄԱԿ-ի Անվտանգության համակարգման վարչություն

**ODCCP / ԹՎՀԿԳ**
Թմրամիջոցների վերահսկման և հանցագործությունների կանխարգելման գրասենյակ

**UNOG / ՄԱԺԳ**
ՄԱԿ-ի Ժնևի գրասենյակ

**UNOV / ՄԱՎԳ**
ՄԱԿ-ի Վիեննայի գրասենյակ

**UNON / ՄԱՆԳ**
ՄԱԿ-ի Նայրոբիի գրասենյակ

կական աջակցություն է տրամադրում Գլխավոր ասամբլեայի Հինգերորդ (Վարչական և բյուջետային) կոմիտեին, ինչպես նաև կազմակերպչական ծառայություն Ծրագրման և համակարգման կոմիտեին:

Վարչության պետը՝ Գլխավոր քարտուղարի՝ կառավարման հարցերով տեղակալը, ապահովում է կազմակերպության միջին ժամկետի ծրագրի և երկամյա բյուջեի նախապատրաստման ուղեցույցը, համակարգումը և ուղենիշները: Նա ներկայացնում է Գլխավոր քարտուղարին կառավարման հարցերում, վերահսկում է քարտուղարությունում ծագող կառավարմանն առնչվող խնդիրները և ընդհանուր առմամբ վերահսկում համակարգի ներքին արդյունավետությունը:

## Իրաքի ծրագրի գրասենյակ (ԻԾԳ)

Իրաքի ծրագրի գրասենյակը ղեկավարում է «Նավթ սննդամթերքի դիմաց» ծրագիրը, որը հիմնվել է 1995թ. Անվտանգության խորհրդի կողմից հոգալու համար Քուվեյթ ներխուժումից հետո Անվտանգության խորհրդի կողմից Իրաքի վրա դրված պատժամիջոցներից տուժած ժողովրդի մարդասիրական կարիքները: Ծրագրի շրջանակներում նավթի առաջին արտահանումը կատարվել է 1996թ., որից երեք ամիս հետո առաքվել է սննդամթերքի առաջին խմբաքանակը: Այնուհետև ծրագրի շրջանակներում Իրաք է առաքվել 4 միլիարդ ԱՄՆ դոլար արժողությամբ ավելի քան 10 միլիոն տոննա սննդամթերք և 720 միլիոն դոլարի արժողությամբ դեղ ու դեղամիջոց: Բացի դրանից, Իրաք են տեղափոխվել 800 միլիոն արժողությամբ ջրամատակարարման և մաքրման, գյուղատնտեսական, կրթական, ենթակառուցվածքային և ականազերծման սարքավորումներ:

## ՄԱԿ-ի անվտանգության համակարգողի գրասենյակ (ՄԱԱՀԳ)

ՄԱԱՀԳ-ն գործում է Գլխավոր քարտուղարի և գործակալությունների, ծրագրերի և հիմնադրամների ղեկավարների անունից՝ ապահովելու համար ՄԱԿ-ի համակարգված արձագանքը ցանկացած հատուկ իրավիճակին: Նա պատասխանատու է անվտանգությանն առնչվող բոլոր քաղաքական և գործնական հարցերի համար և Գլխավոր քարտուղարի անունից որոշումներ է կայացնում էվակուացման բոլոր ասպեկտների վերաբերյալ:

ՄԱԱՀԳ-ն մանրամասն առաջարկներ է մշակում ՄԱԿ-ի համակարգի աշխատակիցների և նրանց ընտանիքների անվտանգության ապահովման համար, համակարգում է, մշակում և իրականացնում անվտանգությանն ու ապահովությանն ուղղված միջգերատեսչական ծրագրերը և գործում է որպես միջգերատեսչական համագործակցության համակարգման կենտրոն:

Գրասենյակի ծախսերն իրականացվում են միջգերատեսչական հիմունքներով. Համակարգման վարչական կոմիտեի բոլոր մասնակիցների կողմից:

## Տարածաշրջանային հանձնաժողովներ

ՄԱԿ-ի տարածաշրջանային հանձնաժողովները ենթակա են Տնտեսական և սոցիալական խորհրդին և գործում են Գլխավոր քարտուղարի հովանու ներքո: Նրանց մանդատը նախատեսում է յուրաքանչյուր տարածաշրջանի տնտեսական զարգացման խթանումը և տարածաշրջանի երկրների տնտեսական հարաբերությունների ամրապնդումը թե՛ միմյանց միջև, թե՛ աշխարհի մյուս պետությունների հետ: Նրանք ֆինանսավորվում են ՄԱԿ-ի ընդհանուր բյուջեից:

**Աֆրիկայի տնտեսական հանձնաժողով (ԱՏՀ)**

1958թ. ստեղծված հանձնաժողովի նպատակն է նպաստել մայրցամաքի տնտեսական և սոցիալական սեկտորների զարգացմանը: Այն խթանում է մայրցամաքի 53 պետությունների տնտեսական համագործակցությանը և ինտեգրացման զարգացմանն ուղղված քաղաքականության և ռազմավարության մշակումը մասնավորապես արտադրության, առևտրի, դրամական, ենթակառուցվածքային և ինստիտուցիոնալ բնագավառներում: ԱՏՀ-ն տեղեկատվություն և վերլուծություն է տրամադրում տնտեսական և սոցիալական հարցերի վերաբերյալ. սննդի անվտանգության և կայուն զարգացման ամրապնդում, զարգացման ղեկավարման ամրապնդում, տեղեկատվության ոլորտում հեղափոխության և տարածաշրջանային համագործակցության ու ինտեգրման խթանում: Հատուկ ուշադրություն է դարձնում կանանց իրավիճակի բարելավման, զարգացման վերաբերյալ որոշումներ ընդունելու հարցում նրանց ներգրավման խնդիրներին, ինչպես նաև ազգային զարգացման բնագավառում կանանց և գենդերային հավասարության հարցերը առանցքային դարձնելուն:

Կենտրոնական գրասենյակը՝ Ադիս Աբեբայում (Եթովպիա)

**Եվրոպայի տնտեսական հանձնաժողով (ԵՏՀ)**

1947թ. ստեղծված հանձնաժողովը Հյուսիսային Ամերիկայի, Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի պետությունների տնտեսական համագործակցության ուղղությունների մշակման քննարկման դաշտ է տրամադրում: Հանձնաժողովի 55 անդամների թվում է նաև Իսրայելը: ԵՏՀ-ի գործունեության առանցքային մարզերն են. բնապահպանությունը, տրանսպորտը, վիճակագրությունը, առևտրի դյուրացումը, արտադրությունը, գյուղատնտեսությունը և անտառային տնտեսությունը, բնակարանաշինությունը, շինարարությունն ու պլանավորումը: Հանձնաժողովում քննարկվում են համաձայնագրեր և նախապատրաստվում աջակցության ծրագրեր: ԵՏՀ-ի հիմնական նպատակն է ապահովել անդամ պետությունների քաղաքականության և գործունեության ներդաշնակությունը: Այս ներդաշնակեցումը ոչ միայն դյուրացնում է տնտեսական փոխանակումները, ներդրումները և տրանսպորտային ցանցի ինտեգրացումը, այլև ավելի արդյունավետ է դարձնում բնապահպանական ծրագրերը:

Կենտրոնական գրասենյակը՝ Ժնևում (Շվեյցարիա)

**Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի տնտեսական հանձնաժողով (ԼԱԿՏՀ)**

1948թ. հիմնված հանձնաժողովը համակարգում է տարածաշրջանում տնտեսական և սոցիալական զարգացմանն ուղղված քաղաքականությունը:

Համագործակցելով 41 անդամների և 7 ասոցիացված անդամների հետ ԼԱԿՏՀ-ն տարածաշրջանային և ազգային զարգացման ուսումնասիրություն ու վերլուծություն է կատարում: Նաև հասարակական քաղաքականության միջոցառումներ է առաջարկում, գնահատում դրանք և ապահովում դրանց իրագործմանն ուղղված հետագա գործունեությունը, ինչպես նաև տրամադրում մասնագիտացված տեղեկատվություն:

ԼԱԿՏՀ-ն համագործակցում է ազգային, տարածաշրջանային և միջազգային կազմակերպությունների հետ բազմաթիվ բնագավառներում, ինչպիսիք են գյուղատնտեսության զարգացումը, տնտեսական և սոցիալական պլանավորումը, արդյունաբերական, տեխնոլոգիական և ձեռներեցության զարգացումը, միջազգային առևտուրը, ինտեգրացումը և համագործակցությունը, ներդրումները և ֆինանսավորումը, սոցիալական զարգացումն ու հավասարությունը, կանանց ինտեգրացումը զարգացման գործընթացում, բնական պաշարներն ու ենթակառույցները, բնապահպանությունն ու մարդկային բնակավայրերը, վիճակագրությունը, փաստական կառավարումը, ժողովրդագրությունն ու բնակչությանը վերաբերող քաղաքականությունը:

Հանձնաժողովի համակարգում ընդգրկված է Տնտեսության և սոցիալական պլանավորման Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի ինստիտուտը, որը ուսումնասիրություններ է կատարում, կազմակերպում տարածաշրջանի պլանավորող հաստատությունների համագործակցությունը և աշխատակիցների վերապատրաստումը: Երկու ենթատարածաշրջանային կենտրոններ գտնվում են Մեխիկոյում (Մեքսիկայի և Կենտրոնական Ամերիկայի կենտրոն) և Տրինիդադ ու Տոբագոյում (Կարիբյան ավազանի կենտրոն): Հանձնաժողովն նաև հինգ ազգային գրասենյակ ունի Արգենտինայում, Բրազիլիայում, Կոլումբիայում, Ուրուգվայում և ԱՄՆ-ում:

Կենտրոնական գրասենյակը՝ Սանտյագոյում (Չիլի)

**Ասիայի և Խաղաղ օվկիանոսի տնտեսական և սոցիալական հանձնաժողով (ԱԽՏՍՀ)**

1947թ. հիմնված հանձնաժողովի մանդատն է զբաղվել տարածաշրջանի տնտեսական և սոցիալական խնդիրներով: Լինելով Ասիայի և Խաղաղ օվկիանոսի ավազանի բոլոր երկրների միակ միջկառավարական ֆորումը՝ ԱԽՏՍՀ-ն բացառիկ դեր ունի: Նրա 51 անդամները և 9 ասոցիացված անդամները ներկայացնում են աշխարհի բնակչության մոտ 60 տոկոսը: ԱԽՏՍՀ-ն կառավարություններին տնտեսական և սոցիալական զարգացման տեխնիկական աջակցություն է ցույց տալիս, որն իրականացվում է անմիջական խորհրդատվության վերապատրաստման, տարածաշրջանային փորձի փոխանակման, տեղեկատվական շփումների, հրապարակումների և միջպետական ցանցերի միջոցով: Հանձնաժողովի իրականացրած ծրագրերը խթանում են աճը, բարելավում սոցիալ-տնտեսական պայմանները և նպաստում են ժամանակակից հասարակու

թյան հիմքերը գցելում: Նրա հովանու տակ գործում են երեք տարածաշրջանային գիտական ու վերապատրաստման ինստիտուտներ՝ գյուղատնտեսության զարգացման, վիճակագրության և տեխնոլոգիաների փոխանցման: Ներկայիս առաջնային բնագավառների թվում են միջտարածաշրջանային առևտրի և ներդրումների զարգացումը, տեխնոլոգիաների փոխանցումը, մասնավորեցումը ու ձեռներեցությունը, բնապահպանությունը, ուրբանիզացումը, չքավորության վերացումը, թմրամոլության վերահսկումը, բնակչությունը, սոցիալական զարգացումը և աշխատանքային միգրացիան:

Կենտրոնական գրասենյակը՝ Բանգկոկում (Թաիլանդ)

**Արևմտյան Ասիայի տնտեսական և սոցիալական հանձնաժողով (ԱԱՏՍՀ)**

1973թ. հիմնված հանձնաժողովը կոչված է նպաստելու Արևմտյան Ասիայի երկրների տնտեսական և սոցիալական զարգացմանն ուղղված համատեղ գործունեությունը տարածաշրջանում տնտեսական զարգացումը և ինտեգրացիան խթանելու միջոցով: 13 անդամից բաղկացած հանձնաժողովը ծառայում է որպես ՄԱԿ-ի համակարգում տարածաշրջանի տնտեսական և սոցիալական զարգացման հիմնական ընդհանուր ֆորում: ԱԱՏՍՀ-ի ծրագրերն առնչվում են տարբեր բնագավառների. տնտեսական զարգացում, սոցիալական զարգացում, գյուղատնտեսություն, արդյունաբերություն, բնական պաշարներ, բնապահպանություն, տրանսպորտ, կապ և վիճակագրություն:

Կենտրոնական գրասենյակը՝ Բեյրութում (Լիբանան)

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՐԻԲՈՒՆԱԼՆԵՐ

**Նախկին Հարավսլավիայի համար միջազգային քրեական տրիբունալ (ՆՀՄՔՏ)**

Անվտանգության խորհրդի կողմից 1993թ. հիմնված տրիբունալի մանդատն է պատասխանատվության ենթարկել նախկին Հարավսլավիայում 1991թ. սկսված միջազգային մարդասիրական իրավունքի կոպիտ խախտումների համար պատասխանատու անձանց: Այն ունի 14 դատավոր և 1011 հոգուց բաղկացած աշխատակազմ: Տրիբունալի 2000թ. բյուջեն կազմել է 96 միլիոն ԱՄՆ դոլար:

Տրիբունալի ստեղծման օրվանից մեղադրանքներ են ներկայացվել 94 անձի: 2000թ. հուլիսի դրությամբ նրանցից 38-ը ներկայացել են դատարան, իսկ 26-ը գտնվում են ազատության մեջ: Տրիբունալով մեղավոր ճանաչվածներից երկուսն իրենց մեղավոր ճանաչել են, 13-ը մեղավոր են ճանաչվել առաջին ատյանում, չորսը՝ բողոքարկումից հետո, իսկ երկուսի հանդեպ մեղադրանքները հանվել են: 9 վճիռ բողոքարկվել է:

Կենտրոնական գրասենյակը՝ Հաագայում (Նիդեռլանդներ)

**Ռուանդայի հարցերով միջազգային քրեական տրիբունալ (ՌՄՔՏ)**

Անվտանգության խորհրդի կողմից 1994թ. ստեղծված տրիբունալի մանդատն է պատասխանատվության ենթարկել 1994թ. ընթացքում Ռուանդայում կատարված ցեղասպանության և միջազգային մարդասիրական իրավունքի այլ կոպիտ խախտումների համար պատասխանատու անձանց: Տրիբունալը բաղկացած է երեք դատական պալատներից, յուրաքանչյուրը երեք դատավորով, և բողոքարկման պալատից՝ հինգ դատավորով: ՌՄՔՏ-ն ունի 729 հոգուց բաղկացած աշխատակազմ, 2000թ. տարեկան բյուջեն կազմել է 79 միլիոն ԱՄՆ դոլար: Մինչ 2000թ. նրա պահանջով կալանավորվել է ավելի քան 40 անձ, որոնցից մի քանիսի նկատմամբ արդեն մեղադրանք է հարուցվել:

Կենտրոնական գրասենյակը՝ Արուշայում (Տանզանիա)

# ՄԱԿ-Ի ԾՐԱԳՐԵՐՆ ՈՒ ԱՅԼ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

## ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման հարցերի համաժողով (ՄԱԱԶՀ/UNCTAD)

Համաժողովը, որը հիմնվել է 1964թ. որպես մշտական միջկառավարական մարմին, Գլխավոր ասամբլեայի հիմնական մարմինն է առևտրի և զարգացման բնագավառում: Նրա մանդատն է խթանել առևտուրն ու զարգացումը՝ մասնավորապես զարգացող երկրներում:

ՄԱԱԶՀ-ն ՄԱԿ-ի համակարգում հանդես է գալիս որպես առևտրի, ֆինանսների, տեխնոլոգիաների, ներդրումների և կայուն զարգացման բնագավառներում զարգացման և դրան առնչվող խնդիրների համատեղ լուծման կենտրոն: Նրա հիմնական նպատակներն են՝ ավելացնել զարգացող երկրների առևտրի, ներդրումների և զարգացման հնարավորությունները, օգնել նրանց դիմակայել գլոբալացման հետևանքով առաջացած դժվարություններին և հավասար հիմունքներով ինտեգրացվելու համաշխարհային տնտեսության մեջ: ՄԱԱԶՀ-ն այս նպատակներին է հասնում հետազոտությունների և քաղաքական վերլուծությունների, միջկառավարական քննարկումների, տեխնիկական համագործակցության և քաղաքացիական հասարակության ու գործարար աշխարհի հետ համագործակցության միջոցով:

ՄԱԱԶՀ-ի համաժողովը՝ նրա բարձրագույն քաղաքական մարմինը, կազմված է 190 անդամ պետություններից և հավաքվում է չորս տարին մեկ անգամ: 10-րդ համաժողովը տեղի ունեցավ 2000թ. Բանգկոկում: Գործադիր մարմինը՝ առևտրի և զարգացման խորհուրդը, պատասխանատու է ՄԱԱԶՀ-ի գործունեության համաձայնեցված, առաջնային խնդիրներին զուգընթաց տանելու համար:

ՄԱԱԶՀ-ի տարեկան աշխատանքային բյուջեն կազմում է մոտ 50 միլիոն ԱՄՆ դոլար, որն առանձնացվում է ՄԱԿ-ի կանոնավոր բյուջեից: Տեխնիկական համագործակցության բնագավառի գործունեությունը ֆինանսավորվում է արտա-

բյուջետային միջոցներից, ինչը կազմում է մոտ 24 միլիոն: ՄԱԱԶՀ-ի աշխատակազմում ընդգրկված է մոտ 394 մարդ:

Կենտրոնական գրասենյակը՝ Ժնևում (Շվեյցարիա)

## Առևտրի միջազգային կենտրոն ՄԱԱԶՀ/ԱՀԿ (ԱՄԿ) UNCTAD/WTO (ITC)

Առևտրի միջազգային կենտրոնը ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման հարցերի համաժողովի (ՄԱԱԶՀ) և Առևտրի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) տեխնիկական համագործակցության գործակալությունն է, որը զբաղվում է միջազգային առևտրի զարգացման գործնական խնդիրներով և ձեռնարկությունների առնչվող հարցերով: Որպես ՄԱԿ-ի կենտրոնական մարմին առևտրի խթանման գործում՝ Առևտրի միջազգային կենտրոնը համագործակցում է զարգացող և անցումային շրջանում գտնվող երկրների հետ՝ մշակելու նրանց արտահանումները ընդլայնելուն և ներմուծումները զարգացնելուն ուղղված առևտրական ծրագրեր:

Առևտրի միջազգային կենտրոնն Առևտրի համաշխարհային կազմակերպության և ՄԱԿ-ի համատեղ օժանդակ մարմին է, ընդ որում ՄԱԿ-ն այստեղ գործում է իր Առևտրի և զարգացման հարցերի համաժողովի միջոցով: Կենտրոնական գործունեությունը ֆինանսավորվում է ՄԱԿ-ի և Առևտրի համաշխարհային կազմակերպության միջոցով: Տեխնիկական համագործակցության ծրագրերը ֆինանսավորվում են ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի և կամավոր վճարումների միջոցով: Տարեկան բյուջեն կազմում է մոտ 33 միլիոն դոլար: Կենտրոնի աշխատակազմում ընդգրկված է մոտ 180 մարդ:

Կենտրոնական գրասենյակը՝ Ժնևում (Շվեյցարիա)

## Թմրադեղերի վերահսկման և հանցագործությունների կանխարգելման գրասենյակ (ԹՎՀԿԳ / ODCCP)

ԹՎՀԿԳ-ն հիմնվել է 1997թ., որպեսզի հնարավորություն տրվի ՄԱԿ-ին ընդլայնելու թմրանյութերի, հանցագործության կանխարգելման և միջազգային ահաբեկչության դեմ պայքարի կարողությունները: Նրա կազմում են.

- ՄԱԿ-ի Թմրադեղերի վերահսկման ծրագիրը (ՄԱԹՎԾ/UNDCP)
- Հանցագործության կանխարգելման միջազգային կենտրոնը (ՀԿՄԿ/CICP)

ՄԱԹՎԾ-ն թմրադեղերի վերահսկման բնագավառում ՄԱԿ-ի գործունեության համակարգման և ղեկավարման հիմնական մարմինն է: Այն ծառայում է որպես այս բնագավառում տեխնիկական փորձագիտության աղբյուր և անդամ պետությունների տեխնիկական խորհրդատվության է տրամադրում թմրադեղերի վերահսկմանն առնչվող հարցերի վերաբերյալ: Ազգային, տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներով այն իր մանդատն իրականացնում է ներկայացուցչությունների ցանցի միջոցով:

ՀԿՄԿ-ն հանցագործության կանխարգելման և արդարադատության բնագավառներում ՄԱԿ-ի գործունեության կենտրոնական մարմինն է: Այն հատուկ ուշադրություն է դարձնում միջազգային կազմակերպված հանցագործության, մարդկանց ապօրինի տեղափոխման, ֆինանսական հանցագործությունների և ահաբեկչության դեմ պայքարին:

1998-1999թթ. բյուջեն կազմել է 150 միլիոն ԱՄՆ դոլար, որից 141 միլիոնը նախատեսվել է ՄԱԹՎԾ-ի, իսկ 9 միլիոնը՝ ՀԿՄԿ-ի համար: ՄԱԹՎԾ-ի միջոցների 90, իսկ ՀԿՄԿ-ի միջոցների 37 տոկոսը գոյացել են կամավոր վճարումներից, մնացածը՝ ՄԱԿ-ի կանոնավոր բյուջեից:

Կենտրոնական գրասենյակը՝ Վիեննայում (Ավստրիա)

## ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիր (ՄԱՇՄԾ/UNEP)

ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիրը հիմնվել է 1972թ.: Նրա հիմնական նպատակն է ղեկավարել և խրախուսել համագործակցությունը բնության պահպանության գործում՝ պետություններին և ազգերին հնարավորություն տալով բարելավել կենսամակարդակը՝ առանց վտանգելու ապագա սերունդներին:

Որպես ՄԱԿ-ի հիմնական մարմին շրջակա միջավայրի հարցերում՝ այն վեր է հանում շրջակա միջավայրի բնագավառի համաշխարհային խնդիրները, խթանում է կայուն զարգացման շրջակա միջավայրի տարրի իրականացումը ՄԱԿ-ի համակարգում և հանդես է գալիս որպես համաշխարհային շրջակա միջավայրի վստահելի ջատագով:

ՄԱՇՄԾ-ի ղեկավար մարմինը՝ 58 անդամից բաղկացած ղեկավար խորհուրդը, կազմակերպում է ամենամյա հանդիպումներ: Ծրագրերը ֆինանսավորվում են շրջակա միջավայրի հիմնադրամից, որը սնվում է կառավարությունների կամավոր վճարումներից և հատուկ հիմնադրամներից, ինչպես նաև ՄԱԿ-ի կանոնավոր բյուջեի փոքր փոխանցումից: Հիմնադրամի 2000-2001թթ. բյուջեն կազմել է 120 միլիոն ԱՄՆ դոլար: ՄԱՇՄԾ-ի աշխատակազմը բաղկացած է 680 աշխատակիցներից:

Կենտրոնական գրասենյակը՝ Նայրոբիում (Քենիա)

## ՄԱԿ-ի զարգացման ծրագիր (ՄԱԶԾ/UNDP)

ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը զարգացման բնագավառում ՄԱԿ-ի գործունեությունը համակարգող հիմնական մարմինն է: Նրա տարեկան ֆինանսական շրջանառությունը՝ համաշխարհային մասշտաբով, կազմում է 2,3 միլիարդ ԱՄՆ դոլար, ինչը նրան դարձնում է ՄԱԿ-ի համակարգի՝ զարգացման համար օժանդակություն ցուցաբերող խոշորագույն մարմինը:

ՄԱԶԾ-ն վստահելի քաղաքական խորհրդատվություն է իրականացնում և օ-

ժանդակում է հավասար տնտեսական աճի ապահովման համար կառուցվածքային և մարդկային ռեսուրսներ ստեղծելուն: Համագործակցում է պետական և մասնավոր ոլորտների հետ՝ գլոբալացման առաջացրած դժվարությունների հաղթահարման և ընձեռած հնարավորությունների օգտագործման նպատակով՝ օգնությունն առավել արդյունավետ դարձնելու համար: Նրա նպատակներից մեկն է խթանել պետության հաշվետու լինելը հասարակության բոլոր մակարդակներում և ստեղծել դաշինք կայուն մարդկային զարգացման համար առավել կարևոր հարցերի կարգավորման համար:

ՄԱԶԾ-ն կառավարում է հատուկ հիմնադրամներ և ծրագրեր, ինչպիսիք են.

- ՄԱԿ-ի Կանանց զարգացման հիմնադրամը (UNIFEM)
- ՄԱԿ-ի Կամավորների ծրագիրը (UNV)
- ՄԱԿ-ի Կապիտալ զարգացման ծրագիրը (UNDCF):

ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը ղեկավարում է 36 անդամից բաղկացած գործադիր խորհուրդը, որում ներկայացված են թե՛ զարգացած, թե՛ զարգացող երկրները: Նրա հիմնական հրապարակումների թվում է *Մարդկային զարգացման տարեկան զեկույցը*:

Կենտրոնական գրասենյակը՝ Նյու Յորքում (ԱՄՆ)

## ՄԱԿ-ի Կանանց զարգացման հիմնադրամ (ՄԱԿԿԶՀ/UNIFEM)

ՄԱԿ-ի Կանանց զարգացման հիմնադրամը խթանում է կանանց իրավունքների ընդլայնումն ու գենդերային հավասարությունը: Ձգտում է ապահովել կանանց մասնակցությունը զարգացման ծրագրման և իրականացման բոլոր մակարդակներում: Նաև ՄԱԿ-ի ներսում հանդես է գալիս որպես խթանող ուժ պետական, տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում կարևոր հարցերի առնչությամբ կանանց կարիքները և մտահոգությունները հաշվի առնելու հարցում:

Սկսած իր հիմնադրումից (1976թ.)՝ հիմնադրամը սատարել է զարգացող երկրներում այնպիսի ծրագրերի իրականացմանը, որոնք կապահովեն կանանց քաղաքական, տնտեսական և սոցիալական դերի բարձրացմանը, լինի դա մանր ձեռնարկություններում կանանց աշխատանքային պայմանների բարելավումը, կրթական պետական ծրագրերը, թե գենդերային առանձնահատկությունները հաշվի առնող իրավական դաշտի ստեղծումը:

ՄԱԿԿԶՀ-ն գործում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հետ ինքնավար ասոցիացիայի ձևով: Այն հաշվետու է բոլոր տարածաշրջանների ներկայացուցիչներից կազմված խորհրդատվական կոմիտեի և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի գործադիր խորհրդի առջև: Տարածաշրջանային և երկրների մակարդակներով ՄԱԿԿԶՀ-ն ներկայացված է 12 տարածաշրջանային ծրագրերի խորհրդականներով: Տարեկան բյուջեն կազմում է մոտ 20 միլիոն ԱՄՆ դոլար:

Կենտրոնական գրասենյակը՝ Նյու Յորքում (ԱՄՆ)

## ՄԱԿ-ի կամավորները (UNV/ՄԱԿԿ)

ՄԱԿ-ի Կամավորների ծրագիրը ստեղծվել է Գլխավոր ասամբլեայի կողմից 1979թ. որպես զարգացմանն ուղղված համագործակցության գործնական կիրականացման գործում ՄԱԿ-ի օժանդակ մարմին: Լինելով կամավոր հիմունքներով գործող ծրագիր՝ այն առանձնահատուկ տեղ ունի թե՛ ՄԱԿ-ի համակարգում, թե՛ իր միջազգային գործունեության մեջ: Այն աշխատանքային որոշակի փորձ ունեցող անձանց հանձնարարում է առանձին բնագավառներում կամ համայնքներում իրականացնել զարգացման, մարդասիրական օգնության, մարդու իրավունքների և ժողովրդավարության համապատասխան ծրագրեր: Ծրագիրը հաշվետու է ՄԱԶԾ/ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի գործադիր խորհրդի առջև և ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի գրասենյակների միջոցով գործում է աշխարհի տարբեր մասերում:

Ամեն տարի ՄԱԿ-ի կամավորների մոտ 4000 մասնագետներ, աշխատակիցներ, ազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, բիզնեսի և արդյունաբերության բնագավառի կարճաժամկետ խորհրդատուներ, արտասահմանում աշխատած և տուն վերադարձած խորհրդականներ, որոնք ներկայացնում են ավելի քան 140 ազգ, գործում են գրեթե նույնքան երկրներում: Նրանց երկու երրորդը զարգացող երկրների քաղաքացիներ են, իսկ մեկ երրորդը՝ զարգացած: Սկսած 1971թ.՝ ավելի քան 20 հազար մարդ ծառայել է որպես ՄԱԿ-ի կամավոր:

Ծրագրում ընդգրկվելու համար պահանջվում է բարձրագույն կրթություն և մի քանի տարվա աշխատանքային փորձ: Աշխատանքային պայմանագրերը կնքվում են սովորաբար երկու տարով, սակայն մարդասիրական, ընտրությունների և այլ առաքելությունների համար կարող են լինել և ավելի կարճ ժամկետով: Կամավորներն ամսական փոքր աշխատավարձ են ստանում: Ֆինանսավորումն ստացվում է ՄԱԶԾ-ից, ՄԱԿ-ի այլ գործակալություններից և ՄԱԿ-ի կամավորների Հատուկ կամավորական հիմնադրամին արված նվիրատվություններից:

Գլխավոր ասամբլեան ՄԱԿ-ի կամավորներին նշանակել էր **2001թ. ՄԱԿ-ի Կամավորների տարվա** համակարգող:

Կենտրոնական գրասենյակը՝ Բոննում (Գերմանիա)

## ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամ (ՄԱԲՀ/UNFPA)

1969թ.-ի վեր գործող հիմնադրամն ստեղծվել է Գլխավոր ասամբլեայի նախաձեռնությամբ որպես բնակչության հետ կապված հարցերում զարգացող և անցումային շրջանում գտնվող երկրների աջակցության խոշորագույն միջազգային ֆինանսավորման աղբյուր: Պետությունների խնդրանքով այն օգնություն է ցուցաբերում վերարտադրողական և ընտանիքի ծրագրման ծառայությունների բարելավման (ըստ անհատական ընտրության) և բնակչության առ-

ճշվող կայուն զարգացմանն ուղղված քաղաքականության մշակման բնագավառներում: Հիմնադրամը Գլխավոր ասամբլեայի օժանդակ մարմին է: Նրա գործադիր խորհուրդը նույնն է, ինչ ՄԱԶԾ-ինը:

Հիմնադրամը լիովին ֆինանսավորվում է կամավոր վճարումներով, որոնք տարեկան կազմում են մոտ 250 միլիոն ԱՄՆ դոլար: Նրա տրամադրած օգնության մոտ երկու երրորդն օգտագործվում է վերարտադրողական առողջության, այդ թվում ընտանիքի պլանավորման և սեռական առողջության, պատանիների վերարտադրողական առողջության, մայրական մահացության նվազեցման, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի և հատուկ իրավիճակներում օգնություն տրամադրելու վրա: Մոտ մեկ երրորդը ծախսվում է բնակչության և զարգացման ռազմավարության մշակման վրա, որն ուղղված է զարգացման և բնակչության դինամիկայի միջև հավասարակշռության պահպանմանը տեղեկատվության տրամադրման, քաղաքականության վրա ազդելու, բնակչության ծրագրման ազգային միջոցներ ստեղծելու միջոցով: Մնացածն օգտագործվում է միջոցներ հայթայթելու և քաղաքական պարտավորությունների կատարումն ապահովելու համար: Հիմնադրամի աշխատակազմում ներգրավված է 905 հոգի:

Կենտրոնական գրասենյակը՝ Նյու Յորքում (ԱՄՆ)

## ՄԱԿ-ի Փախստականների հարցերով Գերագույն հանձնակատարի գրասենյակ (ՄԱՓԳՀԳ/UNHCR)

Գլխավոր ասամբլեայի կողմից 1950թ. ստեղծված գրասենյակի մանդատը փախստականների համաշխարհային պաշտպանությունն ու նրանց խնդիրների լուծման համակարգումն է: Սկսած ստեղծման պահից՝ գրասենյակն օգնել է մոտ 50 միլիոն փախստականի՝ արժանանալով երկու Նոբելյան մրցանակի (1954 և 1981թթ):

ՄԱՓԳՀԳ-ի կարևորագույն գործը, որը հայտնի է «միջազգային պաշտպանություն» անվամբ, փախստականների՝ մարդու հիմնական իրավունքների ապահովումն է, այդ թվում հանգրվան ստանալու իրավունքը և այն երաշխիքների ստեղծումը, որ նրանցից ոչ ոք իր կամքին հակառակ չի վերադարձվի այն երկիրը, որտեղ նա հետապնդումներից վախենալու պատճառ ունի: ՓԳՀԳ-ն նաև խթանում է փախստականներին վերաբերող միջազգային համաձայնագրերի կնքումը, վերահսկում միջազգային կառավարությունների կողմից միջազգային իրավունքի հարգումը և քաղաքացիական փախստականներին տրամադրում է նյութական օգնություն՝ սնունդ, ջուր, կացարան, բուժօգնություն և այլն:

Այսօր 121 երկրներում գործող 281 գրասենյակների ավելի քան 5000 աշխատակիցների միջոցով գործակալությունն աշխատում է ավելի քան 21,6 միլիոն մարդու հետ, որոնց թվում փախստականներ են, հայրենադարձներ, երկրի ներսում տեղահանվածներ: 544 հասարակական կազմակերպություն գործում է որպես ՓԳՀԳ-ի գործնական գործընկեր:

Գլխավոր հանձնակատարի ծրագրերը հաստատվում և վերահսկվում են

գործադիր կոմիտեի կողմից, որը կազմված է 57 անդամ պետություններից: Ծրագրերը ֆինանսավորվում են կամավոր վճարումներով հիմնականում կառավարությունների, ինչպես նաև անհատների և առանձին կազմակերպությունների կողմից: Գրասենյակը սահմանափակ (երկու տոկոսից պակաս) փոխանցում է ստանում ՄԱԿ-ի կանոնավոր բյուջեից, որն օգտագործվում է բացառապես վարչական ծախսերի համար: 2000թ. բյուջեն կազմել է 965,2 միլիոն ԱՄՆ դոլար:

Փախստականներին առնչվող քաղաքականության և խնդիրների համապարփակ վերլուծությունը՝ *«Փախստականների վիճակն աշխարհում»*, լույս է տեսնում երկու տարին մեկ:

Կենտրոնական գրասենյակը՝ Ժնևում (Շվեյցարիա)

## ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամ (ՄԱՄՀ/UNICEF)

1946թ. հիմնված ՄԱԿ-ի հիմնադրամը օգնում է կառավարություններին, համայնքներին և ընտանիքներին աշխարհը երեխաների համար ավելի բարենպաստ դարձնելու գործում: Լինելով ՄԱԿ-ի՝ բացառապես երեխաներին և կանանց նվիրված միակ կազմակերպությունը, ՄԱՄՀ-ն հանդես է գալիս որպես երեխաների իրավունքների պաշտպան, ընդ որում երեխա է համարվում 18-ից ցածր տարիքի ցանկացած անձ: Իր աշխատանքում հիմնադրամն առաջնորդվում է *Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայով*, որը վավերացվել է աշխարհի գրեթե բոլոր պետությունների կողմից:

Հիմնադրամը գործում է 161 երկրներում, տարածքներում և շրջաններում: Նրա գործունեությունը բազմաբնույթ է, ինչպես և նրա առջև ծառացած խնդիրները. կյանքի առավել բարենպաստ սկզբի ապահովում, մանկական հիվանդությունների և մահացության կանխարգելում, հղիության և ծննդաբերության անվտանգություն, պայքար խտրականության դեմ, համագործակցություն համայնքների հետ՝ ապահովելու աղջիկների և տղաների հավասար կրթությունը, օժանդակություն պատանիների՝ կյանքի համար անհրաժեշտ ունակությունների ձեռքբերմանը և նրանց ներգրավմանը համայնքային կյանքում: Հիմնադրամը նաև օգնություն է ցույց տալիս հատուկ իրավիճակներում՝ նպաստելով կայունության զգացումի վերականգնմանը, դպրոցներ բացելով և երեխաների համար ապահով տարածքներ ստեղծելով:

Հիմնադրամը ղեկավարում է 36 անդամից բաղկացած գործադիր խորհուրդը, որը մշակում է քաղաքականությունը, վերանայում ծրագրերը և հաստատում բյուջեն: 1999թ. դրությամբ այն ուներ 5600 հոգուց բաղկացած անձնակազմ, որի 86 տոկոսն աշխատում էր տեղերում: ՄԱՄՀ-ի ֆինանսավորման միակ աղբյուրը պետությունների և հասարակական կազմակերպությունների կամավոր վճարումներն են: 1999թ. 1,1 միլիարդ եկամուտի մոտ 36 տոկոսը գոյացել է ոչ կառավարական կազմակերպությունների և մասնավոր ձեռնարկությունների ներդրումներից: Հիմնադրամի բյուջեի 91 տոկոսը հատկացվել է առողջապահու-

թյանը, կրթությանը, սնուցմանը, ջրամատակարարմանն ու մաքրությանը:

Ամենածավալուն հրապարակումներն են *«Երեխաների վիճակն աշխարհում»* և *«Ազգերի առաջընթացը»*:

1965թ. Մանկական հիմնադրամը արժանացել է Նոբելյան մրցանակի:

Կենտրոնական գրասենյակը՝ Նյու Յորքում (ԱՄՆ)

## Պարենի համաշխարհային ծրագիր (ՊՀԾ/WFP)

Լինելով ՄԱԿ-ի պարենի հարցերով օգնության գործակալությունը՝ ծրագիրը սննդամթերքի օգնություն տրամադրող խոշորագույն միջազգային կազմակերպությունն է, որը պատասխանատու է տարեկան մոտ 3 միլիոն քառակուսի մետր պարենային օգնության համար: 1963թ. հիմնված ծրագրի մանդատը զարգացող երկրների աղքատ բնակչությանն օգնելն է՝ պայքարելու սովի և չքավորության դեմ: Ծրագիրը պարենի օգնությունն օգտագործում է տնտեսական և սոցիալական զարգացումը խթանելու համար: Հատուկ իրավիճակներում այն արագ կերպով կյանքի համար անհրաժեշտ օգնություն է տրամադրում պատերազմից, տարերային կամ մարդկանց կողմից հարուցված աղետներից տուժածներին: Այդ նպատակների համար օգտագործվում է նրա պաշարների մոտ 80 տոկոսը:

ՊՀԾ-ի անձնակազմը ավելի քան 5000 հոգի է, որոնց կեսը աշխատում է ժամանակավոր հիմունքներով: 1999թ. 82 երկրի 89 միլիոն մարդու տրամադրվել է 3,4 տոննա սննդամթերք: Ընդհանուր ծախսերը կազմել են 1,5 միլիարդ ԱՄՆ դոլար:

Ծրագրի շրջանակներում տրամադրվող օգնության մեծ մասը ստացվում է պետություններից, իսկ ավելի քան 300 միլիոն արժողությամբ սնունդը գնվում է ծրագրի կողմից բազմակողմ կամ երկկողմ հիմունքներով ստացվող դրամով: Այն զարգացող պետություններից ավելի մեծ քանակությամբ ապրանք և ծառայություն է գնում, քան ՄԱԿ-ի որևէ այլ գործակալություն: Միայն 1999թ. այդ գնումների գումարը կազմել է 122 միլիոն դոլար:

Ծրագիրը ղեկավարում է 42 անդամից բաղկացած պարենային օգնության քաղաքականության և ծրագրերի կոմիտեն, որի անդամների կեսը նշանակվում են Տնտեսական և սոցիալական խորհրդի, իսկ մյուս կեսը՝ Գյուղատնտեսության և սննդամթերքի կազմակերպության կողմից: Կոմիտեն հավաքվում է տարեկան երկու անգամ:

Կենտրոնական գրասենյակը՝ Հռոմում (Իտալիա)

## ՄԱԿ-ի Մերձավոր Արևելքում Պաղեստինցի փախստականների օգնության և աշխատանքների գործակալություն (ՄԱՕԱԳ/UNRWA)

Գործակալությունն ստեղծվել է 1949թ. Գլխավոր ասամբլեայի կողմից պաղեստինցի փախստականներին օգնություն տրամադրելու նպատակով: Քանի

որ պաղեստինցի փախստականների խնդիրը լուծում չի գտնում, գործակալության մանդատը երկարացվում է, վերջին անգամ՝ մինչև 2002թ. հունիսի 30-ը:

Սկզբնական շրջանում գործակալությունն օգնություն էր տրամադրում մոտ 750 հազար պաղեստինցու, որոնք 1948թ. արաբա-իսրայելական հակամարտության հետևանքով զրկվել էին օթևանից և ունեցվածքից: 2000թ. դրությամբ գործակալությունը հիմնական առողջապահական, կրթական, մարդասիրական և սոցիալական օգնություն էր ցույց տալիս ավելի քան 3,7 միլիոն պաշտոնապես գրանցված պաղեստինցի փախստականի: Նրանցից մոտ 1,2 միլիոնը բնակվում են գործակալության կողմից Հորդանանում, Լիբանանում, Սիրիայի Արաբական Հանրապետությունում, Գազայի տարածքում և Արևմտյան ափում ստեղծված ճամբարներում:

Գործակալության աշխատանքները ղեկավարում և վերահսկում են Գազայում և Ամմանում (Հորդանան) գտնվող կենտրոնակայանները: Գլխավոր հանձնակատարին, որն ուղղակիորեն պատասխանատու է Գլխավոր ասամբլեայի առաջ, օգնում է խորհրդատվական հանձնաժողովը, որի կազմում են Բելգիան, Եգիպտոսը, Ֆրանսիան, Ճապոնիան, Հորդանանը, Լիբանանը, Սիրիան, Թուրքիան, Միացյալ Թագավորությունը և ԱՄՆ-ն:

Գործակալության կազմում ընդգրկված է ավելի քան 22 հազար տեղի աշխատակից՝ հիմնականում պաղեստինցի փախստականներ: ՄԱԿ-ը վճարում է 98 միջազգային աշխատակիցների աշխատավարձը: Գործակալությունը գրեթե ամբողջովին կախված է կամավոր վճարումներից թե՛ կանոնավոր, թե՛ արտակարգ գործողություններում: Ներդրումների մեծ մասը կատարվում է կանխիկ դրամի տեսքով, սակայն եկամտի 7 տոկոսն տրամադրվում է նյութական օգնության՝ հիմնականում պարենի տեսքով: 2000թ. կանոնավոր բյուջեն կազմել է 360 միլիոն ԱՄՆ դոլար, որից ավելի քան 74 տոկոսը տրամադրվել է կրթությանը, առողջապահությանը, մարդասիրական օգնությանն ու սոցիալական ծառայություններին:

Կենտրոնական գրասենյակը՝ Ամմանում (Հորդանան)

## ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ (ՄԻԳՀԳ/OHCHR)

1993թ. Գլխավոր ասամբլեան հիմնեց ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով գլխավոր հանձնակատարի՝ որպես մարդու իրավունքների բնագավառում ՄԱԿ-ի գործունեության համար պատասխանատու գլխավոր պաշտոնյայի պաշտոնը: Գերագույն հանձնակատարը պետք է ապահովի բոլոր քաղաքացիական, մշակութային, տնտեսական, քաղաքական և սոցիալական իրավունքների հարգումն ու պաշտպանությունը: Մանդատն իրականացվում է մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից:

Գրասենյակը մարդու իրավունքների բնագավառում ՄԱԿ-ի ողջ գործունեության կենտրոնական մարմինն է: Այն պատրաստում է զեկույցներ և ուսումնասիրություններ է կատարում Գլխավոր ասամբլեայի և այլ ղեկավար մարմինե

քի համար: Այն համագործակցում է կառավարությունների և մարդու իրավունքներով զբաղվող միջազգային, տարածաշրջանային և հասարակական կազմակերպությունների հետ: Մարդու իրավունքներով զբաղվող ՄԱԿ-ի մարմինների համար այն հանդես է գալիս որպես քարտուղարություն:

Գրասենյակը, որի աշխատակազմը բաղկացած է մոտ 2000 աշխատակիցներից, երեք բաժին ունի.

- Հետազոտության և զարգացման իրավունքի բաժինը զբաղվում է մարդու իրավունքներին վերաբերող հարցերի ուսումնասիրությամբ և վերլուծությամբ, մշակում է զարգացման իրավունքի իրականացման ռազմավարությունը և վերահսկում դրա իրագործումը:
- Գործունեությունների և ծրագրերի բաժինը պետություններին տեխնիկական օգնություն է ցույց տալիս, աջակցում է ենթադրյալ խախտումները ուսումնասիրող մարդու իրավունքների փաստահավաք մարմիններին (հատուկ զեկուցողներ, աշխատանքային խմբեր և այլն), ինչպես նաև աջակցություն և վերապատրաստություն է ապահովում տեղերում մարդու իրավունքներով զբաղվողներին:
- Օժանդակ ծառայությունների բաժինը աջակցություն է ապահովում մարդու իրավունքներով զբաղվող ՄԱԿ-ի մարմիններին, ինչպիսիք են Մարդու իրավունքների հանձնաժողովը և պայմանագրերի հիման վրա ստեղծված մարմինները:

Կենտրոնական գրասենյակը՝ Ժնևում (Շվեյցարիա)

## ՄԱԿ-ի Մարդկային բնակավայրերի կենտրոն (ՀԱԲԻՏԱՏ/Habitat)

ՄԱԿ-ի Մարդկային բնակավայրերի կենտրոնը խթանում է մարդկային բնակավայրերի կայուն զարգացումը քաղաքականության ձևավորման, կառուցվածքների ստեղծման, գիտության և կառավարությունների ու քաղաքացիական հասարակության միջև համագործակցության ամրապնդման միջոցով:

1978թ. հիմնված կենտրոնը ՄԱԿ-ի համակարգում մարդկային բնակավայրերի զարգացման համակարգման ղեկավար գործակալությունն է և երկու առաջնային ուղղություն ունի՝

- բոլորի համար պատշաճ կացարանի ապահովում,
- քաղաքների կայուն զարգացում:

ՀԱԲԻՏԱՏ-ը աջակցում է կառավարություններին, տեղական իշխանություններին, ոչ կառավարական կազմակերպություններին ու մասնավոր ձեռնարկություններին և գործում է նրանց հետ գործընկերության սկզբունքով: Նրա տեխնիկական ծրագրերը հարցերի լայն շրջանակ են ընդգրկում. քաղաքային բնապահպանություն, քաղաքներում չքավորության նվազեցում, հետաղետային վերակառուցում, ջրամատակարարման կանոնավորում: Այս ծրագրերի մեծ մասն իրականացվում է օգնություն ցուցաբերող այլ երկկողմ կազմակերպությունների հետ համագործակցությամբ:

ՀԱԲԻՏԱՏ-ի հիմնական հրապարակումը *«Մարդկային բնակավայրերի հա-*

*մաշխարհային ցանցը»* է, որը ներկայացնում է ողջ աշխարհում մարդկային բնակավայրերի վիճակի համապարփակ վերլուծությունը:

ՀԱԲԻՏԱՏ-ը ղեկավարում է 58 անդամներից բաղկացած Մարդկային բնակավայրերի հանձնաժողովը, որը հավաքվում է երկու տարին մեկ: Այն ունի 240 հոգուց բաղկացած աշխատակազմ: 1998-1999թթ. նրա ընդհանուր ծախսերը կազմել են մոտ 160 միլիոն ԱՄՆ դոլար:

Կենտրոնական գրասենյակը՝ Նայրոբիում (Քենիա)

## ՄԱԿ-ի ծրագրերի ծառայությունների գրասենյակ (ՄԱԾԾԳ/UNOPS)

ՄԱԿ-ի Ծրագրերի ծառայությունների գրասենյակը ղեկավարում է զարգացող և անցումային շրջանում գտնվող երկրների ծրագրերի ռեսուրսները, որոնք ուղղված են նրանց՝ խաղաղության, սոցիալական կայունության, տնտեսական աճի և կայուն զարգացման նպատակներին:

ՄԱԾԾԳ-ն միջազգային հանրությանը լայնամասշտաբ ծառայություններ է մատուցում՝ ծրագրերի ընդհանուր ղեկավարումից մինչև միանվագ ձեռքբերումը: Իր հաճախորդների պահանջներին ճկուն կերպով արձագանքելու համար գրասենյակը մշակում է նրանց մասնավոր կարիքներին համապատասխանող ղեկավարման ծառայություններ, կիրառում նվազագույն ծախսեր պահանջող մեթոդներ, ներգրավում ծրագրերն իրականացնող բազմազան գործընկերներ:

ՄԱԾԾԳ-ն համագործակցում է ՄԱԿ-ի տասնյակ գործակալությունների, զարգացող և զարգացած երկրների կառավարությունների, մասնավոր ձեռնարկությունների, տեղական և միջազգային կառավարական կազմակերպությունների հետ: Այն լրիվ ֆինանսավորվում է մատուցած ծառայություններից ստացված գումարներով: Նրա աշխատակազմում ներգրավված է 1100 մարդ, այդ թվում և ծրագրերն իրականացնող անձնակազմը:

Կենտրոնական գրասենյակը՝ Նյու Յորքում (ԱՄՆ)

## ՄԱԿ-ի համալսարան (ՄԱՀ/ՅՈՒՆՈՒ)

ՄԱԿ-ի համալսարանը գիտնականների միջազգային համայնք է, որը զբաղվում է ՄԱԿ-ի՝ խաղաղության և առաջընթացի հաստատման նպատակներին ուղղված հետազոտություններով, վերապատրաստման գործունեությամբ և գիտելիքի տարածմամբ: Համալսարանի կանոնադրությունն ընդունվել է 1973թ., սկսել է գործել 1975թվականից:

Աշխարհի տարբեր մասերում համալսարանն ունի 13 հետազոտությունների և վերապատրաստման կենտրոններ և ծրագրեր:

Համալսարանը ֆինանսավորվում է կառավարություններից, գործակալություններից, հիմնադրամներից, անհատ նվիրատուներից ստացվող կամավոր վճարումներով: Այն որևէ ֆինանսավորում չի ստանում ՄԱԿ-ի բյուջեից,

Նրա տարեկան ծախսերն իրականացվում են նվիրատվությունների հիմնադրամից գոյացող ներդրումների եկամուտի հաշվին: 2000թ. համալսարանի բյուջեն կազմել է 35,9 մլն ԱՄՆ դոլար: Աշխատակազմը բաղկացած է 211 հոգուց:

Համալսարանը ղեկավարում է 29 անդամից բաղկացած խորհուրդը, որը հավաքվում է տարեկան մեկ անգամ:

Կենտրոնական գրասենյակը՝ Տոկիոյում (Ճապոնիա)

## Կանանց առաջխաղացման միջազգային ուսումնական և գիտահետազոտական ինստիտուտ (ԿԱՄՈՒԳԻ/ INSTRAW)

Կանանց առաջխաղացման միջազգային ուսումնական և գիտահետազոտական ինստիտուտը հիմնվել է 1976թ. Կանանց հարցերով առաջին համաշխարհային համաժողովի առաջարկությամբ: Նրա մանդատը կանանց առաջընթացին ուղղված քաղաքականության հետազոտության և վերապատրաստման միջազգային ծրագրեր խթանելն ու նախաձեռնելն է, զարգացման գործընթացին կանանց հավասար և ակտիվ մասնակցությանը նպաստելը, գենդերային հարցերում աչալրջության մակարդակը բարձրացնելը, գենդերային հավասարության հաստատման համաշխարհային ցանցի ստեղծումը:

Լինելով ՄԱԿ-ի ինքնավար մարմին՝ ինստիտուտը ղեկավարվում է Տնտսոցխորհրդի կողմից նշանակված 11 անդամից բաղկացած հոգաբարձուների խորհրդի կողմից և ֆինանսավորվում է բացառապես անհատ պետություններից, միջկառավարական մարմիններից, հասարակական կազմակերպություններից և մասնավոր ձեռնարկություններից ստացվող կամավոր վճարումներով:

1998-1999թթ. ինստիտուտի ծախսերը կազմել էին 4,01 մլն ԱՄՆ դոլար:

Կենտրոնական գրասենյակը՝ Սանտո Դոմինգոյում (Դոմինիկյան Հանրապետություն):

## ՄԱԿ-ի Միջտարածաշրջանային քրեական և արդարադատության գիտահետազոտական ինստիտուտ (ՄԱՄՔԱԳԻ/UNICRI)

ՄԱՄՔԱԳԻ-ն հիմնվել է 1968թ. և իրականացնում է հետազոտություններ, վերապատրաստական դասընթացներ, տարածում տեղեկատվություն: Ինստիտուտը՝

- շահագրգիռ պետությունների հետ համատեղ մշակում և աջակցում է այն հետազոտություններին, որոնք նպատակ ունեն ստեղծել կազմակերպված հանցագործության մասին փաստերի և տեղեկատվության պահեստի հիմք, մշակել սոցիալ-տնտեսական զարգացման ու մարդու իրավունքների պաշտպանությանը նպաստելու համար հանցագործության կանխարգելման և վերահսկման ռազմավարություն, ձևավորել գործնական համակարգեր, որոնք ուղղված են քաղաքականության ձևակերպման, իրականացման և գնահատ-

ման աջակցմանը:

- մշակում և անց է կացնում միջտարածաշրջանային և ազգային վերապատրաստում,
- քրեագիտության փաստաթղթերի միջազգային կենտրոնի միջոցով խրախուսում է տեղեկատվության փոխանակումը:

Ինստիտուտը ֆինանսավորվում է անդամ պետությունների, կառավարական և հասարակական կազմակերպությունների, գիտական հաստատությունների կամավոր վճարումներով:

Կենտրոնական գրասենյակը՝ Տուրինում (Իտալիա)

## ՄԱԿ-ի Ուսուցման և գիտահետազոտական ինստիտուտ (ՄԱՈւԳԻ/UNITAR)

ՄԱՈւԳԻ-ն հիմնվել է 1965թ. որպես ՄԱԿ-ի ինքնավար մարմին: Նրա մանդատը վերապատրաստման և հետազոտությունների միջոցով ՄԱԿ-ի արդյունավետությունը բարձրացնելն է: Ինստիտուտը կազմակերպում է վերապատրաստման դասընթացներ 21-րդ դարի խնդիրներին երկրների արձագանքելուն օգնելու նպատակով, ուսումնասիրություններ է կատարում վերապատրաստման և ներուժի ստեղծման նորագույն մեթոդներ մշակելու նպատակով, ՄԱԿ-ի մյուս գործակալությունների, կառավարությունների և ոչ կառավարական կազմակերպությունների հետ միասին մշակում է երկրների կարիքներին համապատասխան ուսուցման և ներուժի ստեղծման ծրագրեր:

ՄԱՈւԳԻ-ն ղեկավարում է խնամակալության խորհուրդը: Այն լրիվ ինքնաֆինանսավորվում է և հովանավորվում է կառավարությունների, միջազգային կազմակերպությունների, հիմնադրամների և այլ ոչ կառավարական կառույցների կողմից: Նրա երկամյա բյուջեն կազմում է մոտ 12,5 միլիոն ԱՄՆ դոլար: Ինստիտուտի գործունեությունն իրականացնում են Ժնևի կենտրոնական գրասենյակը և Նյու Յորքի գրասենյակը: Ինստիտուտի աշխատակազմը բաղկացած է 45 հոգուց:

Կենտրոնական գրասենյակը՝ Ժնևում (Շվեյցարիա)

## ՄԱԿ-ի Սոցիալական զարգացման գիտահետազոտական ինստիտուտ (ՄՍԶԳԻ/UNRISD)

ՄԱԿ-ի Սոցիալական զարգացման գիտահետազոտական ինստիտուտը հիմնվել է 1963թ. որպես ՄԱԿ-ի ինքնավար մարմին: Այն ուսումնասիրում է զարգացման վրա ազդող խնդիրների սոցիալական կողմը: Ինստիտուտը կառավարություններին, զարգացման գործակալություններին, հասարակական կազմակերպություններին և գիտնականներին տրամադրում է տեղեկություններ տար-

բեր սոցիալական խմբերի վրա տնտեսական, սոցիալական և բնապահպանական փոփոխությունների և զարգացման գործընթացի ազդեցության վերաբերյալ:

Ինստիտուտը ֆինանսավորվում է բացառապես կամավոր ներդրումներով: 1999թ. այն մոտ 2 միլիոն ԱՄՆ դոլարի նվիրատվություն է ստացել Դանիայից, Ֆինլանդիայից, Մեքսիկայից, Նիդեռլանդներից, Նորվեգիայից, Շվեդիայից, Շվեյցարիայից և Միացյալ Թագավորությունից: Առանձին ծրագրերի իրականացման համար հատուկ ֆինանսավորում է ստացվել տարբեր մարմիններից, երկկողմ դոնորներից և ՄԱԿ-ի գործակալություններից: 11 անդամից բաղկացած խորհուրդը հաստատում է բյուջեն և հետազոտական ծրագրերը:

Կենտրոնական գրասենյակը՝ Ժնևում (Շվեյցարիա)

## ՄԱԿ-ի Զինաթափման գիտահետազոտական ինստիտուտ (ՄԱԶԳԻ/UNIDIR)

1980թ. հիմնված ՄԱԿ-ի Զինաթափման գիտահետազոտական ինստիտուտը անկախ հետազոտություն է իրականացնում զինաթափման և դրան առնչվող միջազգային անվտանգության հարցերի վերաբերյալ: Հետազոտության ներկայիս բնագավառներն են՝ խաղաղապահ գործունեությունն Աֆրիկայում, խաղաղաշինությունն ու փոքր զենքերը Արևմտյան Աֆրիկայում, փոքր զենքերի խնդիրները Լատինական Ամերիկայում, սեմինարների շարք փոքր զենքերի հարցերով, փոքր զենքերը Կենտրոնական Ասիայում, տակտիկական միջուկային զենքը, ճնշվող ճյութերը.սպառազինությունների վերահսկման ձեռնարկը:

Ինստիտուտը փոքրաթիվ մշտական աշխատակազմ ունի, իսկ հետազոտական առանձին ծրագրերն իրականացնում են կարճատև պայմանագրերով աշխատողները:

Ինստիտուտը ֆինանսավորվում է կամավոր աղբյուրներից՝ պետություններից, պետական կամ հասարակական հաստատություններից: Բյուջեն կազմում է մոտ 1,1 միլիոն ԱՄՆ դոլար:

Կենտրոնական գրասենյակը՝ Ժնևում (Շվեյցարիա)

# Մասնագիտացված գործակալություններ և այլ կազմակերպություններ

## Աշխատանքի միջազգային կազմակերպություն (ԱՄԿ/ILO)

Աշխատանքի միջազգային կազմակերպությունը մասնագիտացված գործակալություն է, որի նպատակն է սոցիալական արդարության և միջազգայնորեն

ճանաչված մարդու և աշխատանքի իրավունքների խթանումը: Այն ստեղծվել է 1919թ. և 1946թ. դարձել է ՄԱԿ-ի առաջին մասնագիտացված գործակալությունը:

Կազմակերպությունը մշակում է աշխատանքի և կյանքի պայմանների բարելավմանն ուղղված միջազգային քաղաքականություն ու ծրագրեր, սահմանում է աշխատանքի միջազգային չափանիշներ, որոնք կառավարությունների համար այդ քաղաքականությունը գործի մեջ դնելու ուղեցույց են ծառայում, իրականացնում է տեխնիկական աջակցության լայնածավալ ծրագիր, որի նպատակն է օգնել կառավարություններին այդ ծրագրերն արդյունավետ դարձնելու գործում, նշված նպատակներին հասնելու համար կազմակերպում է ուսուցում, վերապատրաստում և հետազոտություններ:

ԱՄԿ-ն միակ միջազգային կազմակերպությունն է, որում աշխատավորների և գործատուների ներկայացուցիչները կառավարությունների հետ հավասար հիմունքներով քննարկում են իրենց քաղաքականությունը: Այն բաղկացած է երեք մարմնից.

- Աշխատանքի միջազգային համաժողով, որն ամեն տարի համախմբում է անդամ պետությունների կառավարությունների, աշխատավորների և գործատուների պատվիրակներին: Այն մշակում է աշխատանքի միջազգային չափանիշները և հանդես է գալիս որպես ֆորում, որտեղ քննարկվում են համաշխարհային կարևորություն ունեցող սոցիալական և աշխատանքային հարցերը:
- Կառավարող մարմինը հանդիպում է տարեկան երկու անգամ և ղեկավարում է կազմակերպության գործունեությունը՝ պատրաստելով ծրագրեր ու բյուջե, ուսումնասիրում է կազմակերպության չափանիշների խախտման դեպքերը:
- Աշխատանքի միջազգային գրասենյակը կազմակերպության մշտական քարտուղարությունն է:

Ուսուցման և վերապատրաստման հնարավորությունները ընձեռվում են Թուրինի կրթական կենտրոնում: Աշխատանքի ուսումնասիրության միջազգային կրթական կենտրոնի գործունեությունն ընդգրկում է հետազոտական ցանցեր, սոցիալական քաղաքականության կենտրոնավայրեր, դասընթացներ և սեմինարներ, գիտնականների այցելություններ և ստաժավորման ծրագրեր, հրապարակումներ:

1969թ. իր 50-ամյակի առթիվ Աշխատանքի միջազգային կազմակերպությունն արժանացավ Խաղաղության Նոբելյան մրցանակի:

Կազմակերպության անձնակազմն ընդգրկում է մոտ 2250 հոգի, որոնք աշխատում են կենտրոնական գրասենյակում և աշխարհի տարբեր մասերում գտնվող 40 գրասենյակներում: 2000-2001 թթ. կազմակերպության բյուջեն կազմել է մոտ 467 միլիոն ԱՄՆ դոլար:

Կենտրոնական գրասենյակը՝ Ժնևում (Շվեյցարիա)

## ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն (ՊԳԿ/FAO)

Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը գյուղատնտեսության զարգացման հարցերով զբաղվող ՄԱԿ-ի հիմնական կազմակերպությունն է: Նրա գործունեությունն ուղղված է չքավորության և սովի վերացմանը գյուղատնտեսության զարգացման, բարելավված սնուցման և սննդի անվտանգության խթանման միջոցով: Նրա առաջնային խնդիրն է ապահովել, որ ամեն ոք ամեն պահի կարողանա ակտիվ և առողջ կյանք ապահովող սնունդ ձեռք բերել: ՊԳԿ-ն հիմնվել է 1945թ. հոկտեմբերի 16-ին Քվեբեկում տեղի ունեցած համաժողովում, և այդ ամսաթիվը նշվում է որպեսՊարենի համաշխարհային օր:

ՊԳԿ-ն առաջարկում է զարգացման աջակցություն, կառավարություններին տրամադրում է խորհրդատվություն քաղաքականության և ծրագրերի մշակման հարցերում, տեղեկատվություն է հավաքում, վերլուծում և տարածում, հանդես է գալիս որպես պարենի և գյուղատնտեսության հարցերի շուրջ միջազգային քննարկումներ անցկացնելու ֆորում: Հատուկ ծրագրերի միջոցով օգնում է կառավարություններին պատրաստ լինելու սննդամթերքի ճգնաժամերին և օգնություն է ցույց տալիս արտակարգ իրավիճակներում: ՊԳԿ-ն ունենում է միջինը 1800 միաժամանակ գործող ծրագիր, նրա աջակցությամբ իրականացվող ծրագրերի համար դոնորներն ու կառավարությունները տարեկան տրամադրում են ավելի քան 300 միլիոն ԱՄՆ դոլար:

ՊԳԿ-ն ղեկավարում է անդամ պետությունների համաժողովը, որը հանդիպում է երկու տարին մեկ անգամ: Համաժողովն ընտրում է 49 անդամից բաղկացած խորհուրդ, որը համաժողովների միջև ընկած շրջանում հանդես է գալիս որպես ղեկավար մարմին:

2000-2001թթ. բյուջեն կազմել է 650 միլիոն: ՊԳԿ-ի աշխատակազմը կազմում է 4034 մարդ, որոնք աշխատում են կենտրոնական գրասենյակում և աշխարհի տարբեր մասերում գտնվող ներկայացուցչություններում:

Կենտրոնական գրասենյակը՝ Հռոմում (Իտալիա)

## ՄԱԿ-ի Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն (ՅՈՒՆԵՍԿՕ/ UNESCO)

ՅՈՒՆԵՍԿՕ-ն ստեղծվել է 1946թ. աշխարհում մտավոր և բարոյական համերաշխության վրա հիմնված տևական խաղաղություն ապահովելու նպատակով: Նրա գործունեության բնագավառներն են կրթությունը, բնական գիտությունները, սոցիալական և հումանիտար գիտությունները, մշակույթը և հաղորդակցությունը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի ծրագրերը նպատակ ունեն խթանելու խաղաղության մշակույթը և մարդկային ու կայուն զարգացումը: Նրանց ուշադրության կենտրոնում բոլորի համար կրթության ապահովումն է, միջազգային գիտական ծրագրերի միջոցով բնապահպանական հետազոտության խթանումը, մշակութային ժառ-

նության դրսևորման սատարումը, աշխարհի բնական և մշակութային ժառանգության պաշտպանությունն ու պահպանումը, տեղեկատվության ազատ հոսքի և մամուլի ազատության խթանումը, ինչպես նաև զարգացող երկրներում հաղորդակցության հնարավորությունների ամրապնդումը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ին սատարում են 178 ազգային հանձնաժողովներ և մոտ 5000 ասոցիացիաներ, կենտրոններ և ակումբներ: Այն համագործակցում է ավելի քան 588 հասարակական կազմակերպությունների և հաստատությունների, ինչպես նաև միջազգային ու տարածաշրջանային ցանցերի հետ:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի ղեկավար մարմինը՝ Գլխավոր կոնֆերանսը, կազմված է բոլոր անդամ պետություններից և գումարվում է երկու տարին մեկ անգամ: Գործադիր խորհուրդը, որը կազմված է կոնֆերանսում ընտրվող 58 անդամից, պատասխանատու է կոնֆերանսի ընդունած ծրագրերի իրականացման համար:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի անձնակազմը բաղկացած է 2000 հոգուց: 2000-2001թթ. կանոնավոր բյուջեն կազմել է 544 միլիոն ԱՄՆ դոլար:

Կենտրոնական գրասենյակը՝ Փարիզում (Ֆրանսիա)

## Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ/WHO)

1948թ. հիմնված ԱՀԿ-ն խթանում է առողջապահական բնագավառում պետությունների տեխնիկական համագործակցությունը, իրականացնում է հիվանդությունների վերահսկման ու վերացման ուղղված ծրագրեր և ջանում է բարելավել կենսամակարդակը: Նրա նպատակը բոլոր մարդկանց համար հնարավորինս առավելագույն առողջական մակարդակի ապահովումն է:

Ռազմավարական ուղղություններն են.

- հավելյալ մահացության, հիվանդացության ու անդամալուծության նվազեցումը, հատկապես աղքատ և ծայրահեղ պայմաններում գտնվող հասարակություններում,
- առողջ կենցաղի խթանումը և բնապահպանական, տնտեսական, սոցիալական ու վարքագծային պատճառներով առաջացող հիվանդությունների նվազեցումը,
- առավել արդյունավետ և հավասար, մարդկանց օրինական պահանջներին համապատասխանող և ֆինանսապես արդար առողջապահական համակարգերի զարգացումը,
- համապատասխան առողջապահական քաղաքականության և կառուցվածքային միջավայրի զարգացումը, ինչպես նաև սոցիալական, տնտեսական, բնապահպանական և զարգացման քաղաքականության առողջապահական տարրի խթանումը:

ԱՀԿ-ի ղեկավարող մարմինը Առողջապահության համաշխարհային ասամբլեան է, որը 191 անդամ ունի և գումարվում է տարեկան մեկ անգամ: Նրա դրու-

շումներն ու ընդունված քաղաքականությունն իրականացնում է գործադիր խորհուրդը, որը բաղկացած է կառավարությունների կողմից նշանակված 32 առողջապահական մասնագետներից և հավաքվում է տարեկան երկու անգամ:

Կազմակերպության տարածաշրջանային գրասենյակները գտնվում են Բրազավիլում (Կոնգո, ժամանակավորապես տեղափոխված է Հարարե, Զիմբաբվե), Վաշինգտոնում (ԱՄՆ), Կահիրեում (Եգիպտոս), Կոպենհագենում (Դանիա), Նյու Դելիում (Հնդկաստան), Մանիլայում (Ֆիլիպիններ):

ԱՀԿ-ի անձնակազմը բաղկացած է 3800 հոգուց: 2000-2001թթ. կանոնավոր բյուջեն կազմել է 842 միլիոն ԱՄՆ դոլար:

Կենտրոնական գրասենյակը՝ Ժնևում (Շվեյցարիա)

## Համաշխարհային բանկի խումբը

**Համաշխարհային բանկը հինգ հաստատությունից կազմված խումբ է.** Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ (հիմնված 1945թ.), Միջազգային ֆինանսական կորպորացիա (1956թ.), Միջազգային զարգացման ասոցիացիա (1960թ.), Բազմակողմ ներդրումների երաշխիքային գործակալություն (1988թ.), Ներդրումների հետ կապված բանավեճերի կարգավորման միջազգային կենտրոն (1966թ.):

Բոլոր հաստատությունների ընդհանուր նպատակը ողջ աշխարհում աղքատության նվազեցումն է աղքատ երկրների տնտեսությունների ամրապնդման միջոցով, ինչպես նաև տնտեսական աճի և զարգացման միջոցով մարդկանց կենսամակարդակի բարելավումը:

Բանկի ղեկավար մարմինը Կառավարիչների խորհուրդն է, որում ներկայացված են բոլոր անդամ պետությունները: Ընդհանուր գործողությունները համակարգվում են ավելի փոքր խմբի՝ գործադիր տնօրենների խորհրդի, որը գլխավորում է բանկի նախագահը:

Համաշխարհային բանկը 11 հազար մարդուց բաղկացած աշխատակազմ ունի և մոտ 1,4 միլիարդ ԱՄՆ դոլարի հասնող տարեկան վարչական բյուջե:

Բանկի հիմնական հրապարակումներից մեկը տարեկան *«Համաշխարհային զարգացման զեկույցն»* է:

Կենտրոնական գրասենյակը՝ Վաշինգտոնում (ԱՄՆ)

### Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (ՎԶՄԲ/IBRD)

ՎԶՄԲ-ի փաստաթղթերը մշակվել են 1944թ. Բրետոն Վուդսի համաժողովում, իսկ բանկը սկսել է գործել 1946թ.: Այն-ն վարկեր է տրամադրում և զարգացման աջակցություն ցույց տալիս միջին եկամուտ ունեցող երկրներին ու վարկավորման արժանի ավելի աղքատ երկրներին: Քվեարկելու իրավունքը կախված է անդամների կապիտալ բաժնետիրությունից, որն իր հերթին հիմնված է յուրաքանչյուր երկրի հարաբերական տնտեսական ուժի վրա:

Բանկի հիմնադրամի 90 տոկոսը գոյանում է միջազգային կապիտալի շուկա-

ներում արժեթղթերի վաճառքից: Բանկի 54-ամյա պատմության մեջ նրա փայատերերը վճարել են միայն 11 միլիարդ ԱՄՆ դոլար, սակայն այդ գումարի շնորհիվ հնարավոր է եղել տրամադրել ավելի քան 280 միլիարդ դոլարի վարկեր:

1999թ. ֆինանսական տարում բանկը պարտավորվել է 29 միլիարդ տրամադրել: Վերակառուցման նպատակով տրամադրվող վարկերը, որոնց թվում են նաև կառուցվածքային բարեփոխումները, կառավարումը, տնտեսական քաղաքականությունը և սոցիալական պաշտպանվածությունը, կազմում էր մոտ 15,3 միլիարդ դոլար, որի կեսից ավելին ուղղված էր աղքատության վերացմանը՝ սոցիալական բնագավառի հատուկ աջակցությամբ: Աջակցությունը մարդկային զարգացմանը (կրթություն, առողջապահություն, սնուցում և սոցիալական ապահովում) կազմել է 7,3 միլիարդ դոլար կամ ընդհանուր վարկերի 25 տոկոսը: Վարկերը ներդրվել են նաև այլ բնագավառներում. էներգետիկա, նավթ և գազ, արդյունաբերություն և հանքարդյունաբերություն, տրանսպորտ, քաղաքային զարգացում, ջրամատակարարում և մաքրություն, ֆինանսական բնագավառ:

**Միջազգային զարգացման ասոցիացիա (ՄԶԱ/IDA)**

ՄԶԱ-ն չափազանց բարենպաստ պայմաններով փոխառություններ է տրամադրում աշխարհի ամենաաղքատ երկրներին, որոնք ի վիճակի չեն հատուցել Վերակառուցման և զարգացման միջազգային բանկից ստացված վարկերը: Բանկը պատասխանատու է դրա ղեկավարման համար:

ՄԶԱ-ի փոխառությունները, որոնք հայտնի են որպես վարկեր, հիմնականում տրամադրվում են այն երկրներին, որոնց տարեկան մեկ շնչին ընկնող եկամուտը 895 ԱՄՆ դոլարից ցածր է: Վարկերը տրամադրվում են 35-ից 40 տարի ժամկետով, առանց տոկոսի, բացառությամբ վարչական ծախսերի համար գանձվող փոքր գումարների: Հիմնական գումարի հատուցումը սկսվում է այն ստանալուց 10 տարի անց:

ՄԶԱ-ի ռեսուրսների մեծ մասը գոյանում է դոնոր կառավարությունների ներդրումներից: Այս ներդրումները հիմնականում ստացվում են հարուստ անդամներից, սակայն նրանց թվում են նաև Վերակառուցման և զարգացման միջազգային բանկից վարկ ստացող երկրները: Երեք տարին մեկ անգամ դոնորներին խնդրվում է «թարմացնել» ասոցիացիայի ֆոնդերը: Ասոցիացիայի հիմնումից հետո եղել է 12 նման «թարմացում»:

Ասոցիացիան տրամադրում է տարեկան մոտ 5-6 միլիարդ դոլարի վարկ մասնավորապես մարդկանց հիմնական կարիքների հոգալուն ուղղված զարգացման ծրագրերի իրականացման համար, ինչպիսիք են կրթությունը, հիմնական առողջապահական ծառայությունները, մաքուր ջուրն ու սանիտարա-հիգիենիկ պայմանները: Ասոցիացիան ֆինանսավորում է նաև բնապահպանությանը, մասնավոր ձեռներեցության համար պայմանների բարելավմանը, ենթակառուցվածքի ստեղծմանը և տնտեսության լիբերալիզացմանն ուղղված բարեփոխումների ծրագրերը:

**Միջազգային ֆինանսական կորպորացիա (ՄՖԿ/IFC)**

ՄՖԿ-ն զարգացող երկրներում մասնավոր ձեռներեցության զարգացմանն ուղղված ծրագրերի ֆինանսավորման և վարկերի տրամադրման խոշորագույն միջազգային աղբյուրն է: Այն ֆինանսավորում և խորհրդատվություն է տալիս մասնավոր ձեռնարկություններին և ծրագրերին՝ մասնավոր ներդրողների հետ համագործակցելով և իր խորհրդատվական գործունեության միջոցով օգնում է կառավարություններին ներքին և արտաքին մասնավոր ներդրումները խթանող պայմաններ ստեղծելու գործում:

ՄՖԿ-ի հիմնական նպատակն է խթանել տնտեսական զարգացումը անդամ պետություններում արդյունավետ ձեռնարկությունների և կապիտալ շուկայի աճի խթանման միջոցով: Այն մասնակցում է ներդրմանն այն դեպքում, երբ կարող է շուկայական ներդրողների դերը լրացնող հատուկ ներդրում կատարել: Կորպորացիան նաև խթանիչ դեր է կատարում՝ համոզելով մասնավոր ներդրողներին զարգացող աշխարհում և ցույց տալով, որ այդ ներդրումները կարող են շահավետ լինել:

ՄՖԿ-ն Համաշխարհային բանկի համակարգի առանձին միավոր է, նրա ֆոնդերը Վերակառուցման և զարգացման բանկի ֆոնդերից անջատ են: 1999թ. ֆինանսական տարում կորպորացիայի տնօրենների խորհուրդը հավանություն է տվել 255 նոր ծրագրի, որոնց ընդհանուր գումարը կազմել է 5,3 միլիարդ դոլար:

**Բազմակողմ ներդրումների երաշխիքային գործակալություն (ԲՆԵԳ/MIGA)**

ԲՆԵԳ-ը նպաստում է արտաքին ներդրումների խրախուսմանը զարգացող երկրներում ոչ կոմերցիոն (այսինքն՝ քաղաքական) պատճառներով առաջացած կորուստների համար ապահովագրություն (երաշխիքներ) տրամադրելու միջոցով: Այդ վտանգների թվում են դրամական փոխանցումները, բռնագրավումը, պատերազմն ու քաղաքացիական ապստամբությունը: Այն նաև տեխնիկական օգնություն է ցույց տալիս երկրներին ներդրումների հնարավորությունների մասին տեղեկատվություն տարածելու գործում:

Գործակալության 151 անդամի բաժնեմասնակցության միջոցով ստացված կապիտալն ավելի քան մեկ միլիարդ է: 1999թ. Կառավարիչների խորհուրդը հավանություն տվեց այդ գումարը մոտ 850 միլիոն դոլարով ավելացնելու առաջարկին: Համաշխարհային բանկը որպես գործնական կապիտալ փոխանցել է ևս 150 միլիոն:

ԲՆԵԳ-ը հաջողությամբ խթանել է կապիտալի հոսքը դեպի զարգացող երկրներ: Առայսօր նրա երաշխավորությունն օգնել է զարգացող և անցումային շրջանում գտնվող 69 անդամների ստանալ 33 միլիարդ դոլար անմիջական արտաքին ներդրում:

**Ներդրումների հետ կապված բանավեճերի կարգավորման միջազգային կենտրոն (ՆԿԲԿՄԿ/ICSID)**

Ներդրումների հետ կապված բանավեճերի կարգավորման միջազգային կենտրոնը հաշտեցման կամ արբիտրաժի միջոցով նպաստում է կառավարությունների և մասնավոր արտաքին ներդրողների միջև ծագած բանավեճերը

կարգավորելում: Այն ստեղծվել է 1966թ. *Պետությունների և այլ պետությունների քաղաքացիների միջև ներդրումների հարցերով ծագած բանավեճերի կարգավորման մասին կոնվենցիայի* հիման վրա, որը վավերացրել է 131 անդամ երկիր: Կենտրոնին դիմում են կամավոր սկզբունքով, բայց այն բանից հետո, երբ կողմերը դիմել են կենտրոնին, նրանցից ոչ մեկը չի կարող միակողմանիորեն հրաժարվել իր այդ համաձայնությունից:

ՆԲԿՄԿ-ն անկախ կառույց է, որը սերտ կապեր ունի Համաշխարհային բանկի հետ, նրա բոլոր անդամները բանկի անդամ են: Նրա վարչական խորհուրդը, որը գլխավորում է բանկի նախագահը, ընդգրկում է կոնվենցիան վավերացրած պետությունների մեկական ներկայացուցիչ:

## Արժույթի միջազգային հիմնադրամ (IMF/ԱՄՀ)

1944թ. Բրետոն Վուդսի համաժողովում հիմնված հիմնադրամը՝

- դյուրացնում է միջազգային դրամական համագործակցությունը,
- խթանում է տարադրամի փոխարժեքի կայունությունը և փոխանակման կարգավորումը,
- աջակցում է վճարումների բազմակողմ համակարգի ստեղծմանը և տարադրամի փոխանակման սահմանափակումների վերացմանը,
- օգնում է անդամ պետություններին նրանց վճարումների հաշվեկշռի կարգավորելու համար անհրաժեշտ ժամանակավոր միջոցներ տրամադրելու միջոցով:

ԱՄՀ-ի ֆինանսական միջոցները գոյանում են նրա 182 անդամների բաժանորդագրություններից (քվոտաներից), որոնք ներկայումս կազմում են մոտ 300 միլիարդ ԱՄՆ դոլար: Քվոտաները որոշվում են անդամների տնտեսական չափերի վրա հիմնված բանաձևով: ԱՄՀ-ն «փոխառության հատուկ իրավունքի» ձևով իրավունք ունի միջազգային ֆինանսական պահուստներ ստեղծել և բաշխել իր անդամներին:

ԱՄՀ-ի հիմնական ֆինանսական դերը վճարումների հաշվեկշռի հետ կապված դժվարություններ ունեցող երկրներին ժամանակավոր վարկեր տրամադրելն է: Փոխարենը ԱՀՄ-ից փոխառություն կատարող անդամ պետությունները համաձայնում են այդ դժվարությունների պատճառ դարձած խնդիրների կարգավորմանն ուղղված քաղաքական բարեփոխումներ ձեռնարկել: Անդամ-երկրները կարող են փոխառություն կատարել իրենց քվոտային համապատասխան:

ԱՄՀ-ն ցածր եկամուտ ունեցող պետություններին նաև աջակցություն է առաջարկում՝ հատուկ պայմաններով:

ԱՄՀ-ի ղեկավար մարմինը՝ Կառավարիչների խորհուրդը, որում ներկայացված են բոլոր անդամ երկրները, հավաքվում է տարեկան մեկ անգամ: Ամենօրյա աշխատանքն իրականացնում է 24 անդամից բաղկացած գործադիր խորհուրդը, որը խորհրդակցում է միջանկյալ կոմիտեի հետ:

ԱՄՀ-ի անձնակազմում ընդգրկված է մոտ 2700 մարդ 123 երկրներից: Նրանց

ղեկավարում է գործադիր խորհրդի կողմից ընտրված վարչական տնօրենը: Տարեկան վարչական բյուջեն կազմում է մոտ 650 միլիոն դոլար:

ԱՄՀ-ն տարեկան երկու անգամ հրապարակում է *«Համաշխարհային տնտեսական վերլուծություն»*, իսկ տարեկան մեկ անգամ՝ *«Միջազգային կապիտալի շուկան»* զեկույցները:

Կենտրոնական գրասենյակը՝ Նյու Յորքում (ԱՄՆ)

## Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպություն (ՔԱՄԿ/ICAO)

ՔԱՄԿ-ն ավելի անվտանգ է դարձնում թռիչքը մեկ երկրից մյուսը: 1944թ. ստեղծված կազմակերպությունը մշակում է օդային տրանսպորտի անվտանգության, ապահովության, արդյունավետության և կանոնավորության համար անհրաժեշտ միջազգային չափանիշներն ու կանոնները, ինչպես նաև իր 185 անդամի համար ծառայում է որպես քաղաքացիական ավիացիայի բոլոր բնագավառներում միջազգային համագործակցությունը զարգացնելու դաշտ:

ՔԱՄԿ-ն ունի իր ասամբլեան՝ ինքնավար մարմին, որին անդամակցում են բոլոր մասնակից կողմերի պատվիրակները, ինչպես նաև՝ ասամբլեայի կողմից ընտրված 33 անդամից կազմված խորհուրդ: Ասամբլեան գումարվում է առնվազն երեք տարին մեկ անգամ, մշակում է կազմակերպության քաղաքականությունը և քննարկում ցանկացած հարց, որն ուղղակիորեն չի ներկայացվել խորհրդին: Խորհուրդը գործադիր մարմին է, որը գործում է համաձայն ասամբլեայից ստացված ցուցումների:

2000թ. ՔԱՄԿ-ի բյուջեն կազմել էր 52,6 միլիոն ԱՄՆ դոլար: Այն ունի 793 հոգուց բաղկացած աշխատակազմ:

Կենտրոնական գրասենյակը՝ Մոնրեալում (Կանադա)

## Ծովային միջազգային կազմակերպություն (ԾՄԿ/IMO)

Ծովային միջազգային կազմակերպությունը, որն սկսել է գործել 1959 թվականին, պատասխանատու է միջազգային առևտրային ծովային անվտանգության և նավագնացության հետևանքով շրջակա միջավայրի աղտոտումը կանխելու համար:

ԾՄԿ-ն կառավարությունների մեխանիզմներ է տրամադրում՝ համագործակցելու միջազգային ծովագնացությանն առնչվող տեխնիկական խնդիրների կանոնակարգման և գործունեության ճշգրտման համար, խթանելու ծովագնացության մեջ ծովային անվտանգության և արդյունավետության կիրառելի ամենաբարձր չափանիշների ընդունումը և պաշտպանելու ծովային միջավայրը նավագնացության հետևանքով առաջացող աղտոտումը կանխելու և վերահսկելու միջոցով:

Ներկայումս համաշխարհային մակարդակով ընդունվել և կիրառվում են մոտ 40 կոնվենցիա ու արձանագրություն և մոտ 800 օրենսգիրք ու հանձնարարական:

1983թ. Շվեդիայի Մալմո քաղաքում կազմակերպությունը հիմնեց Ծովային համաշխարհային համալսարան, որտեղ վերապատրաստում են անցնում վարչական աշխատողներ, դասախոսներ և ծովային բնագավառի բարձրաստիճան այլ մասնագետներ: Ծովային միջազգային կազմակերպության Միջազգային ծովային իրավունքի ինստիտուտը (Վալետա, Մալթա), հիմնվել է 1989թ.՝ նպատակ ունենալով պատրաստել Միջազգային ծովային իրավունքի մասնագետներ: Ծովային միջազգային կազմակերպության Ծովային միջազգային ակադեմիան (Տրիեստ, Իտալիա) հիմնվել է 1989թ.՝ նպատակ ունենալով մասնագիտացված կարճաժամկետ դասընթացներ անցկացնել ծովային տարբեր բնագավառների վերաբերյալ:

Ծովային միջազգային կազմակերպության ղեկավար մարմինը՝ Ասամբլեան, կազմված է բոլոր անդամ-պետություններից, հավաքվում է երկու տարին մեկ անգամ: Այն ընտրում է կազմակերպության գործադիր մարմինը՝ 32 անդամից բաղկացած Խորհուրդը, որը հանդիպում է տարեկան 2 անգամ:

Կազմակերպության 2000-2001թթ. բյուջեն կազմել է 56,3 մլն ԱՄՆ դոլար: Այն ունի մոտ 300 հոգուց բաղկացած անձնակազմ:

Կենտրոնական գրասենյակը՝ Ժնևում (Շվեյցարիա)

## Հեռահաղորդակցության միջազգային միություն (ՀՄՄ/ITU)

Հեռահաղորդակցության միջազգային միությունը միջազգային կազմակերպություն է, որը հնարավորություն է տալիս կառավարություններին և մասնավոր սեկտորին համակարգել հեռահաղորդակցության համաշխարհային ցանցերն ու ծառայությունները: Հիմնվելով 1865թ. Փարիզում որպես Միջազգային հեռագրային միություն, կազմակերպությունն իր նոր անվանումն ստացել է 1934թ., իսկ 1947թ. դարձել է ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալություն:

Ըստ իր մանդատի, ՀՄՄ-ն պատասխանատու է հետևյալ բնագավառների համար.

- տեխնիկական բնագավառ. խթանել հեռահաղորդակցության միջոցների զարգացումն ու արդյունավետ գործունեությունը՝ ապահովելու համար հեռահաղորդակցման ծառայությունների արդյունավետությունն ու մատչելիությունը հասարակության համար,
- քաղաքական բնագավառ. խթանել համաշխարհային տեղեկատվական տնտեսության և հասարակության մեջ հեռահաղորդակցման հարցերի հանդեպ ավելի լայն մոտեցումների ընդունումը,
- զարգացման բնագավառ. զարգացող երկրներին հեռահաղորդակցման բնագավառում տեխնիկական աջակցության ցուցաբերել և խթանել այն, խթանել հեռահաղորդակցման տեխնոլոգիաների զարգացման համար անհրաժեշտ մարդկային և ֆինանսական պաշարների համախմբումը, ինչպես նաև ապա-

հովել նոր տեխնոլոգիաների առավելություններից ամենուրեք օգտվելու հնարավորությունը:

ՀՄՄ-ն կազմված է 189 անդամ-պետությունից և մոտ 600 սեկտորային անդամներից (գիտական և արդյունաբերական ընկերություններ, պետական և մասնավոր օպերատորներ, հեռարձակողներ, տարածաշրջանային և միջազգային կազմակերպություններ): Նրա ղեկավար մարմինը Լիազորների համաժողովն է, որը հանդիպում է 4 տարին մեկ անգամ և ընտրում է տարեկան հանդիպումներ անցկացնող 46 անդամից բաղկացած խորհուրդը:

ՀՄՄ-ի աշխատակազմը բաղկացած է 740 հոգուց: 2000-2001թթ. բյուջեն կազմել է 23 մլն ԱՄՆ դոլար:

Կենտրոնական գրասենյակը՝ Ժնև (Շվեյցարիա)

## Փոստային համընդհանուր միություն (ՓՀՄ/UPU)

Փոստային համընդհանուր միությունը մասնագիտացված հաստատություն է, որը կարգավորում է միջազգային փոստային ծառայությունները: Այն հիմնվել է 1874թ.՝ Բեռնի համաձայնագրով, իսկ 1948թ. դարձել է ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալություն:

ՓՀՄ-ն առաջնորդող դեր է կատարում փոստային ծառայությունների շարունակվող աշխուժացման գործում: 189 անդամ ունեցող կազմակերպությունը փոստային ծառայությունների միջև համագործակցության հիմնական մեխանիզմն է: Այն խորհրդատվություն, միջնորդություն ու տեխնիկական աջակցություն է տրամադրում: Նրա հիմնական նպատակներից են փոստային համընդհանուր ծառայության խթանումը, փոստի ծավալների աճի ապահովումը՝ ժամանակակից փոստային ծառայությունների և արտադրանքի տրամադրման միջոցով, փոստային ծառայության որակի բարձրացումը: Դրանով ՓՀՄ-ն իրականացնում է իր հիմնական առաքելությունը՝ աշխարհի բոլոր մարդկանց միջև հաղորդակցման խթանումն ու զարգացումը:

Փոստային համընդհանուր կոնգրեսը կազմակերպության գերագույն մարմինն է: Այն գումարվում է 5 տարին մեկ անգամ՝ քննության առնելու փոստային բնագավառի ռազմավարական հարցերը և ուրվագծելու գործողությունների ընդհանուր ծրագիրը: 23-րդ կոնգրեսը կայացել է 2004թ. Աբիջանում (Կոտ դ'Իվուար):

2000թ. ՓՀՄ-ի բյուջեն կազմել է 22,5 մլն. ԱՄՆ դոլար: Այն ունի 151 հոգուց բաղկացած աշխատակազմ:

Կենտրոնական գրասենյակը՝ Բեռնում (Շվեյցարիա)

## Օդերևութաբանության համաշխարհային կազմակերպություն (ՕՀԿ/WMO)

Օդերևութաբանության համաշխարհային կազմակերպությունը, որը 1951 թվականից ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալություն է, հեղինակավոր գի-

ռակլան փորձագիտություն է տրամադրում մթնոլորտային միջավայրի, Երկիր մոլորակի քաղցրահամ ջրի պաշարների և կլիմայի վերաբերյալ: Այն իրականացնում է եղանակի տեսության ծառայություններ, այդ թվում տարվա եղանակների կտրվածքով և, միջազգային համագործակցության միջոցով, նպաստում է եղանակի համաշխարհային պայմանների միտումների ուսումնասիրմանը, հնարավորություն է ստեղծում արագորեն տեղեկատվություն փոխանակել եղանակի վերաբերյալ և խթանում է գործառնական հիդրոլոգիային առնչվող գործունեությունը:

ՕՀԿ-ի շրջանակներում գործում են զանազան ծրագրեր, այդ թվում՝ կլիմայի, մթնոլորտի, կիրառական օդերևութաբանության, բնապահպանության և ջրային պաշարների բնագավառներում: Այդ ծրագրերը հիմք են ծառայում մթնոլորտային աղետներին ավելի լավ պատրաստվելու և դրանք կանխարգելելու համար, ինչպիսիք են արևադարձային ցիկլոնները, Էլ Նինյո երևույթը, ջրհեղեղները, երաշտները և այլ բնական աղետները, դրանով իսկ հնարավորություն են տալիս խուսափելու զոհերից ու նյութական կորուստներից և բարելավելու շրջակա միջավայրի ու կլիմայի մասին մեր պատկերացումները: ՕՀԿ -ն ուշադրություն է հրավիրել համաշխարհային նշանակություն ունեցող այնպիսի երևույթների, ինչպիսիք են օզոնային շերտի քայքայումը, համաշխարհային ջերմացումը և ջրային պաշարների նվազումը:

ՕՀԿ -ն ունի 185 անդամ՝ բաղկացած 179 պետությունից և 6 տարածքից, որոնք պահպանում են իրենց օդերևութաբանական և հիդրոլոգիական ծառայությունները: Նրա ղեկավար մարմինը՝ Օդերևութաբանության համաշխարհային կոնգրեսը, հանդիպում է 4 տարին մեկ անգամ: 36 անդամից բաղկացած գործադիր խորհուրդը հանդիպում է ամեն տարի:

ՕՀԿ-ի աշխատակազմը բաղկացած է 246 հոգուց: 2000-2003թթ. բյուջեն կազմում է 152 մլն. ԱՄՆ դոլար:

Կենտրոնական գրասենյակը՝ Ժնևում (Շվեյցարիա)

## Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (ՄՍՀԿ/WIPO)

Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը ստեղծվել է 1970թ., իսկ ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալություն է դարձել 1974թ.: Նրա նպատակներն են՝ 175 անդամ պետությունների համագործակցության միջոցով խթանել ողջ աշխարհում մտավոր սեփականության պաշտպանությունը և ապահովել մտավոր սեփականության բնագավառում պահպանությունը երաշխավորելու համար հիմնված Միությունների վարչական համագործակցությունը:

Այդ նպատակով ստեղծված հիմնական միություններն են.

- Փարիզյան միությունը, որի պաշտոնական անվանումն է՝ «Արդյունաբերական սեփականության պահպանության միջազգային միություն»,
- Բեռնի միությունը, պաշտոնապես՝ «Գրական և արվեստի գործերի

պահպանը

Մտավոր սեփականությունը ներառում է երկու հիմնական ճյուղ. արտադրական սեփականություն՝ հիմնականում գյուտեր, ապրանքանիշեր, արտադրական նմուշներ և աղբյուրի դասակարգում, ինչպես նաև հեղինակային իրավունք՝ հիմնականում գրական, երաժշտական, գեղարվեստական, լուսանկարչական և տեսաձայնային գործեր: ՄՍՀԿ-ն ղեկավարվում է 21 միջազգային պայմանագրով (15-ը արտադրական սեփականության վերաբերյալ, 6-ը՝ հեղինակային իրավունքի):

**ՄՍՀԿ-ի ղեկավար մարմինները երեքն են.** Գլխավոր ասամբլեա՝ բաղկացած Փարիզյան և Բեռնի միությունների անդամ հանդիսացող ՄՍՀԿ-ի երկրներից (գումարվում է երկու տարին մեկ անգամ), Համաժողով, որն ընդգրկում է բոլոր անդամ պետություններին և նույնպես հավաքվում է երկու տարին մեկ անգամ, և 72 անդամ ունեցող Համակարգող կոմիտե, որը հավաքվում է տարեկան մեկ անգամ:

ՄՍՀԿ-ի ծրագիրը և բյուջեն հաստատվում են վարչական մարմինների կողմից երկու տարվա համար: 2000-2001թթ. բյուջեն կազմել է մոտ 248 միլիոն ԱՄՆ դոլար: Կազմակերպության անձնակազմում առկա է 765 աշխատակից:

Կենտրոնական գրասենյակը՝ Ժնևում (Շվեյցարիա)

## Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամ (ԳԶՄՀ / IFAD)

ԳԶՄՀ-ն բազմակողմ ֆինանսական հաստատություն է, որը հիմնվել է 1977թ.՝ 1974թ. Պարենի հարցերով համաշխարհային համաժողովի որոշմամբ: Նրա մանդատը զարգացող երկրներում սովի և չքավորության դեմ պայքարելն է:

Հիմնադրամը միջոցներ է հայթայթում զարգացող երկրներում սննդի արտադրությունը և սնուցումը բարելավելու համար՝ շեշտը դնելով ամենաչքավոր գյուղական համայնքների կարիքների վրա: Մոլորակի չքավորության գրեթե մեծ մասը տեղակայված է քրոնիկ սովով ու թերսնմամբ, որի 75 տոկոսը ընկնում է գյուղական շրջաններին:

ԳԶՄՀ-ն անմիջական ֆինանսավորում է կատարում վարկերի և փոխառությունների միջոցով և լրացուցիչ ռեսուրսներ է հայթայթում իր ծրագրերի համար: Վարկեր տրամադրելու պայմանները կախված են առանձին երկրների մեկ շնչին ընկնող ազգային համախառն արտադրանքից: ԳԶՄՀ-ն համագործակցում է բազմաթիվ այլ հաստատությունների հետ, այդ թվում Համաշխարհային բանկի, տարածաշրջանային զարգացման բանկերի, այլ տարածաշրջանային ֆինանսական գործակալությունների և ՄԱԿ-ի գործակալությունների հետ: Այդ հաստատություններից շատերը մասնակցում են ԳԶՄՀ-ի ծրագրերի ֆինանսավորմանը:

ԳԶՄՀ-ն ֆինանսավորվում է կառավարությունների կամավոր նվիրատվու-

թյունների, հատուկ նվիրատվությունների, վարկերի վճարման և ներդրումների հասույթի հաշվին: Նոր ծրագրերի և դրամաշնորհների տարեկան պարտավորությունը հասնում է մոտ 450 ԱՄՆ դոլարի: Հիմնադրամի աշխատակազմում ներգրավված է 266 հոգի:

Ղեկավար մարմինը՝ Կառավարող խորհուրդը, ներկայացնում է բոլոր անդամ պետություններին և հավաքվում է ամեն տարի: Գործադիր խորհուրդը, որը բաղկացած է 18 անդամներից և նրանց 18 տեղակալներից, վերահսկում է հիմնադրամի գործառույթները և հավանություն տալիս վարկերին ու դրամաշնորհներին:

Կենտրոնական գրասենյակը՝ Հռոմում (Իտալիա)

## ՄԱԿ-ի Արդյունաբերության զարգացման կազմակերպություն (ՄԱԱԶԿ/ UNIDO)

ՄԱԱԶԿ-ի մանդատը արդյունաբերության զարգացումն ու համագործակցությունը խթանելն է: Հիմնվել է 1966թ. ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից, մասնագիտացված գործակալություն է դարձել 1985թվականին:

ՄԱԱԶԿ-ն օգնում է մարդկանց կենսամակարդակի բարելավմանը և համաշխարհային բարգավաճման խթանմանը՝ առաջարկելով զարգացող և անցումային շրջանում գտնվող երկրների կայուն արդյունաբերական զարգացման խնդիրների լուծմանն ուղղված հատուկ միջոցներ: Այն համագործակցում է կառավարությունների, գործարար ասոցիացիաների և մասնավոր արդյունաբերողների հետ՝ նպատակ ունենալով ստեղծել գոյություն ունեցող խնդիրների լուծման արդյունաբերական հնարավորություններ և տարածել արդյունաբերության գլոբալացման բարիքները:

ՄԱԱԶԿ-ի ծառայություններին աջակցում են Վիեննայում գործող ինժեներներ, տնտեսագետներ, տեխնոլոգիաների և բնապահպանության մասնագետներ, ինչպես նաև Ներդրումների խթանման ծառայության աշխատակիցներ և տեղական գրասենյակների պրոֆեսիոնալ անձնակազմը: Տեղական գրասենյակները ղեկավարում են ՄԱԱԶԿ-ի տարածաշրջանային և երկրների ներկայացուցիչները:

ՄԱԱԶԿ-ի 168 անդամ պետությունները երկու տարին մեկ անգամ հավաքվում են Գլխավոր համաժողովում, որը հաստատում է բյուջեն և աշխատանքային ծրագիրը: 53 անդամ պետություններից բաղկացած Արդյունաբերական զարգացման խորհուրդը առաջարկներ է ներկայացնում ծրագրի և բյուջեի մշակման և իրագործման վերաբերյալ:

ՄԱԱԶԿ-ի անձնակազմը կենտրոնական գրասենյակում բաղկացած է 650 հոգուց: 1999թ. կազմակերպությունն աշխարհի տարբեր մասերում նշանակված 1830 փորձագետ ուներ, իսկ 2000-2001թթ. բյուջեն կազմել է 133 միլիոն ԱՄՆ դոլար: Ավելանում են երկկողմ և բազմակողմ աղբյուրներից գոյացող լրացուցիչ միջոցներ:

Կենտրոնական գրասենյակը՝ Վիեննայում (Ավստրիա)

## Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն (ԱԷՄԳ /IAEA)

ԱԷՄԳ-ն միջուկային էներգիայի խաղաղ գործածության բնագավառում գիտական և տեխնիկական համագործակցության և ոչ ռազմական միջուկային ծրագրերի անվտանգության վերահսկման և վերիֆիկացման վերահսկիչ համաշխարհային կենտրոնական միջպետական մարմինն է: Այն ստեղծվել է 1957թ. որպես ՄԱԿ-ի հովանու ներքո գործող անկախ գործակալություն:

Գործակալությունը 131 անդամ պետություններին տրամադրում է ինքնաբավ գիտական միջուկային ծրագրերի զարգացման տեխնիկական աջակցություն: Գործակալության աշխատանքի գրեթե կեսն ուղղված է այնպիսի ծրագրերի, որոնք կարող են կիրառվել սննդամթերքի, գյուղատնտեսության, առողջապահության, արդյունաբերության և հիդրոլոգիայի ու բնության՝ հատկապես ծովերի աղտոտման բնագավառներում:

ԱԷՄԳ-ն օգնում է պետություններին հաստատել իրենց գործունեության համապատասխանությունը միջազգային այն պայմանագրերին, որոնց նպատակն է բացառել միջուկային նյութերի օգտագործումը ռազմական նպատակներով: ԱԷՄԳ-ի ապահովության ծրագրերի շրջանակներում աշխարհի տարբեր հատվածների ավելի քան 1000 ձեռնարկություններում նշանակված են մոտ 200 հսկիչներ:

ԱԷՄԳ-ի ղեկավար մարմիններն են տարեկան մեկ անգամ հավաքվող Գլխավոր համաժողովը, որում ներկայացված են բոլոր անդամ պետությունները, և Կառավարիչների խորհուրդը, որի անդամների թիվը հասնում է մինչև 35-ի:

ԱԷՄԳ-ի աշխատակազմը բաղկացած է 2133 հոգուց: 2000թ. տարեկան բյուջեն կազմել է 224 միլիոն ԱՄՆ դոլար, որին գումարվել են 80 միլիոն դոլարի արժողությամբ արտաբյուջետային նվիրատվությունները:

Կենտրոնական գրասենյակը՝ Վիեննայում (Ավստրիա)

## Միջուկային փորձարկումների համապարփակ արգելման պայմանագրի կազմակերպության նախապատրաստական հանձնաժողով (CTBTO/ՓՀԱՊԿ)

Միջուկային փորձարկումների արգելման համապարփակ պայմանագրի կազմակերպության նախապատրաստական հանձնաժողովը հիմնվել է 1966թ. նոյեմբերի 19-ին պայմանագրի մասնակից պետությունների նյույորքյան ժողովում: Որպես մասնակից պետությունների կողմից ֆինանսավորվող միջազգային կազմակերպություն՝ այն ունի երկու մարմին՝ լիագումար, որը ներառում է բոլոր մասնակից պետություններին և հայտնի է նաև որպես նախապատրաստական հանձնաժողով, և նախնական տեխնիկական քարտուղարություն: Նախապատրաստական հանձնաժողովի հիմնական նպատակն է մշակել պայմանագրով նախատեսված համաշխարհային վերիֆիկացման ռեժիմ, որը կսկսի գործել, երբ պայմանագիրը ուժի մեջ մտնի: Հանձնաժողովն ունի երեք օժան-

դակ մարմին՝ «Ա» աշխատանքային խումբ, որը զբաղվում է վարչական և բյուջետային հարցերով, «Բ» աշխատանքային խումբ, որը զբաղվում է ստուգման հարցերով, խորհրդատվական խումբ, որը զբաղվում է ֆինանսական, բյուջետային և դրանց առնչվող վարչական հարցերով:

Կենտրոնական գրասենյակը՝ Վիեննայում (Ավստրիա)

## Քիմիական զենքի արգելման կազմակերպություն (ՔԶԱԿ/OPCW)

ՔԶԱԿ-ի հիմնական խնդիրը Քիմիական զենքի զարգացման, արտադրության և կուտակման արգելման և վերացման մասին կոնվենցիայի իրականացումն է: Կոնվենցիան, որն ուժի մեջ է մտել 1997թ. ապրիլի 29-ին, զինաթափման առաջին միջազգային պայմանագիրն է, որը նախատեսում է զանգվածային ոչնչացման զենքերի վերացում:

Անդամ պետությունների համաժողովը ՔԶԱԿ-ի հիմնական մարմինն է, ընդգրկում է բոլոր անդամ պետություններին և գումարվում է ամեն տարի: Գործադիր խորհուրդը վերահսկում է ՔԶԱԿ-ի ամենօրյա գործունեությունը և ընդգրկում է անդամ պետությունների՝ երկու տարի ժամկետով ընտրված 41 ներկայացուցիչներ: Տեխնիկական քարտուղարությունը կոնվենցիայի մանդատի առաջատար պատասխանատուն է, որն օգնություն է տրամադրում քիմիական զենքի օգտագործման դեպքերում և խթանում քիմիայի խաղաղ օգտագործմանն ուղղված միջազգային համագործակցությունը: Գիտական խորհրդատվական մարմինը մասնագիտացված խորհրդատվություն է տրամադրում կոնվենցիային առնչվող գիտական և տեխնոլոգիական բնագավառներում:

ՔԶԱԿ-ի անձնակազմը բաղկացած է մոտ 500 հոգուց, իսկ տարեկան բյուջեն կազմում է 56 միլիոն ԱՄՆ դոլար:

Կենտրոնական գրասենյակը՝ Հաագայում (Նիդեռլանդներ)

## Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպություն (ԶՀԿ/ WTO)

Դեռևս 1925թ. հիմնված Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպությունը ճանապարհորդության և զբոսաշրջության բնագավառի առաջատար միջազգային կազմակերպությունն է: Այն զբոսաշրջության քաղաքականության և գործնական գիտելիքների քննարկման միջազգային ասպարեզ է տրամադրում: Նրան անդամակցում են 138 պետություն և տարածք, ինչպես նաև ավելի քան 350 գործընկեր անդամներ, որոնք ներկայացնում են տեղական իշխանությունները, զբոսաշրջային ասոցիացիաներ և մասնավոր ընկերություններ, այդ թվում ավիաուղիներ, հյուրանոցային խմբեր և գործակալություններ:

ԶՀԿ-ն ոչ կառավարական կազմակերպություն է, որին ՄԱԿ-ը վստահել է զբոսաշրջության խթանման և զարգացման գործը՝ նրա հետ 1977թ. ստորագրելով համագործակցության ծրագիր: Զբոսաշրջության միջոցով ԶՀԿ-ն նպատակ

ունի խթանել տնտեսական զարգացումը և աշխատատեղերի ստեղծումը, զտնել շրջակա միջավայրի և մշակութային ժառանգության պահպանման երաշխիքներ, նպաստել ազգերի միջև փոխըմբռնման զարգացմանը:

ԶՀԿ-ի գլխավոր մարմինը՝ Գլխավոր ասամբլեան, ձևավորված է լիիրավ և ասոցիացված անդամներից և հավաքվում է երկու տարին մեկ անգամ՝ հաստատելու բյուջեն և աշխատանքային ծրագիրը, քննարկելու զբոսաշրջության բնագավառի հիմնական խնդիրները: ԶՀԿ-ի ղեկավար մարմինը՝ Գործադիր խորհուրդը, կազմված է 26 ընտրովի անդամներից և հավաքվում է տարեկան երկու անգամ: Վեց տարածաշրջանային հանձնաժողովները՝ Աֆրիկա, Ամերիկաներ, Արևելյան Ասիա և Խաղաղ օվկիանոսի ավազան, Եվրոպա, Միջին Արևելք և Հարավային Ասիա, ձևավորվում են տվյալ տարածաշրջանի անդամներից և հանդիպում տարեկան առնվազն մեկ անգամ:

ԶՀԿ-ի աշխատակազմն ընդգրկում է 80 հոգի, իսկ երկու տարվա բյուջեն կազմում է մոտ 18 միլիոն ԱՄՆ դոլար:

Կենտրոնական գրասենյակը՝ Մադրիդում (Իսպանիա)

## Առևտրի համաշխարհային կազմակերպություն (ԱՀԿ /WTO)

Առևտրի համաշխարհային կազմակերպությունը հիմնվել է 1995թ. որպես ազգերի միջև առևտրի համաշխարհային կանոններով զբաղվող միակ միջազգային մարմին՝ փոխարինելով Տարիֆների և առևտրի համաշխարհային համաձայնագրին (GATT): Այն մասնագիտացված գործակալություն չէ, սակայն ՄԱԿ-ի հետ համագործակցելու համաձայնություն և փորձ ունի:

ԱՀԿ-ի նպատակն է նպաստել առևտրի ազատական ընթացքին կանոնների վրա հիմնված համակարգում, անկողմնակալ կերպով կարգավորել կառավարությունների միջև ծագած բանավեճերը, կազմակերպել առևտրային բանակցություններ: Նրա հիմքում ընկած են մոտ 60 համաձայնագրեր, որոնք միջազգային առևտրի և առևտրային քաղաքականության հիմքային կանոններն են:

Այդ համաձայնագրերից յուրաքանչյուրը հիմնված է հետևյալ սկզբունքների վրա. խտրականության բացակայություն («առավել բարենպաստ պայմաններում գտնվող երկրի» դրույթը), առևտրի ազատության ավելացում, մրցակցության խթանում, հավելյալ պայմաններ ավելի քիչ զարգացած երկրների համար: ԱՀԿ-ի նպատակներից մեկը պրոտեկցիոնիզմի նվազեցումն է:

Իր ստեղծումից հետո ԱՀԿ-ն հանդես է եկել որպես հաղորդակցության, տեղեկատվական տեխնոլոգիաների սարքավորումների և ֆինանսական ծառայությունների շուկաները բացելուն ուղղված հաջող բանակցությունների վայր: Այն ներգրավված է եղել ավելի քան 190 բանավեճերի կարգավորման մեջ, շարունակում է վերահսկել համաշխարհային առևտրի վերաբերյալ 1986-1994թթ. Ուրուգվայան բանակցություններում ձեռք բերված համաձայնագրերի իրագործման ընթացքը:

ԱՀԿ-ի անդամ պետությունները 135-ն են: Նրա կառավարող մարմինը՝ Նախարարական համաժողովը, գումարվում է երկու տարին մեկ անգամ, իսկ ամե-

նորյա աշխատանքն իրականացնում է Գլխավոր խորհուրդը:

2000թ. տարեկան բյուջեն կազմել է 77,1 միլիոն ԱՄՆ դոլար: Ունի 500 հոգու բաղկացած աշխատակազմ:

Կենտրոնական գրասենյակը՝ Ժնևում (Շվեյցարիա)

# ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

## Գլուխ 2

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ



# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿ-ի առաջնահերթ նպատակներից մեկը, որը նաև նրա մանդատի հիմնական մասն է, համաշխարհային խաղաղության և անվտանգության պահպանումն է: Իր ստեղծումից ի վեր ՄԱԿ-ը հաճախ է հրավիրվել՝ կանխելու բանավեճերը պատերազմի վերածելը, համոզելու հակադիր կողմերին բանակցությունների սեղանը նախընտրել զենքի ուժից, օգնելու խաղաղության վերականգնմանն այն դեպքերում, երբ հակամարտությունն արդեն սկսվել է: Տասնամյակների ընթացքում ՄԱԿ-ը, հաճախ միջազգային խաղաղության ու անվտանգության հարցերով զբաղվող իր հիմնական մարմնի՝ Անվտանգության խորհրդի գործողությունների միջոցով, նպաստել է բազմաթիվ հակամարտությունների դադարեցմանը:

1990-ականների ընթացքում տեղի են ունեցել հակամարտությունների բնույթի և միջազգային հանրության կողմից հակամարտություններին արձագանքելու ձևերի մեծ փոփոխություններ: Պատճառներից մեկն այն է, որ վերջին շրջանի հակամարտությունների 90 տոկոսը ընթանում է պետությունների ներսում և ոչ թե պետությունների միջև:

Հետևաբար ՄԱԿ-ը վերանայել է իր տրամադրության տակ գտնվող միջոցները՝ ավելի շեշտադրելով հակամարտությունների կանխարգելումը, խաղաղապահ գործողությունները շարունակաբար նոր խնդիրներին համապատասխանեցնելը, ընդլայնելով տարածաշրջանային կազմակերպությունների մասնակցությունը, ամրապնդելով հետկոնֆլիկտային խաղաղաշինությունը: Քաղաքացիական հակամարտությունները բարձրացրել են միջազգային հանրության արձագանքին առնչվող բարդ հարցեր, այդ թվում և քաղաքացիական բնակչությանը պաշտպանելու նպատակով միջամտելու հարցը:

Քաղաքացիական հակամարտությունների կարգավորման նպատակով Անվտանգության խորհուրդը հավանություն է տվել բարդ և նոր բնույթի խաղաղապահական գործողությունների: Սալվադորում և Գվատեմալայում, Կամբոջայում և Մոզամբիկում հակամարտությունների վերջ դնելու և համերաշխությունը խթանելու գործում ՄԱԿ-ը գլխավոր դեր է խաղացել:

Սակայն ուրիշ՝ Սոմալիում, Ռուանդայում, նախկին Հարավսլավիայում էթնիկական բռնություններով լի հակամարտությունները ՄԱԿ-ի խաղաղապահ գործունեության առջև նոր խնդիրներ են դրել: Այդ հակամարտությունների հետ կապված խնդիրների հետևանքով Անվտանգության խորհուրդը 1995-1997թթ. խուսափել է նոր խաղաղարար գործողություններ սկսելուց:

Սակայն խաղաղապահության բնագավառում ՄԱԿ-ի հիմնարար դերը ակնհայտորեն վերահաստատվեց: Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետությունում, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությունում, Արևելյան Թիմորում, Կոսովոյում, Սիեռա Լեոնեում շարունակվող հակամարտությունները ստիպեցին Խորհրդին 1998-1999թթ. հիմնել հինգ նոր առաքելություն: Վեցերորդը հիմնվեց 2000թ. Եթովպիայի և Էրիթրեայի միջև խաղաղության գործընթացը վերահսկելու համար:

Հիմնվելով վերջին տարիների փորձի վրա, ՄԱԿ-ն, ավելի քան երբևէ, իր ուշադրության կենտրոնում է պահում խաղաղաշինությունը՝ խաղաղությանն ամրապնդմանն աջակցող համակարգերի ստեղծումը: Փորձը ցույց է տվել, որ խաղաղության պահպանումը, այն է՝ զինված հակամարտությունից խուսափելը, բավարար չէ հաստատուն և տևական խաղաղության ապահովման համար: Նման անվտանգություն հնարավոր է ապահովել միայն օգնելով պետություններին՝ խթանելու տնտեսական զարգացումը, սոցիալական արդարությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը, արդար կառավարումը և ժողովրդավարական գործընթացը: Չկա այլ հաստատություն, որն ունենա ՄԱԿ-ի բազմակողմ փորձը, իրավասությունը, համակարգման հմտությունը և անկողմնակալությունը, որոնք անհրաժեշտ են այդ նպատակներին հասնելու համար: Սա ցույց է տվել խաղաղաշինության այն բարդ և ծանր առաքելությունը, որով ՄԱԿ-ն օժտված է Արևելյան Թիմորում և Կոսովոյում:

**Անվտանգության խորհուրդը, Գլխավոր ասամբլեան և Գլխավոր քարտուղարը** հիմնական, միմյանց լրացնող դեր են կատարում խաղաղության և անվտանգության խթանման գործում: ՄԱԿ-ի գործունեությունը վերաբերում է մի քանի հիմնական բնագավառների. *կանխարգելում, խաղաղարարություն, խաղաղապահություն, հարկադրական միջոցներ և խաղաղաշինություն*: Արդյունավետ լինելու համար այս գործողությունները պետք է հաջորդեն մեկը մյուսին կամ կատարվեն միաժամանակ:

## Անվտանգության խորհուրդ

Միջազգային պայմանագիր հանդիսացող ՄԱԿ-ի կանոնադրությունը պարտավորեցնում է անդամ պետություններին իրենց միջև ծագած բախումները կարգավորել խաղաղ ճանապարհով, այնպես, որ չվտանգվեն միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը և արդարությունը: Նրանք պարտավոր են զերծ մնալ ցանկացած պետության դեմ ուժի գործադրումից կամ այդ անելու սպառնալիքից և իրավունք ունեն ցանկացած բախում ներկայացնել Անվտանգության խորհրդին:

Անվտանգության խորհուրդը ՄԱԿ-ի՝ խաղաղության և անվտանգության պահպանման համար պատասխանատու հիմնական մարմինն է: Համաձայն Կանոնադրության, անդամ պետությունները պարտավոր են ընդունել և իրականացնել նրա որոշումները: Ի տարբերություն Անվտանգության խորհրդի որոշումների, մյուս մարմինների որոշումներն ու առաջարկները պարտադիր ուժ չունեն, բայց կարող են ազդեցություն ունենալ իրավիճակի վրա, քանի որ արտահայտում են միջազգային հանրության կարծիքը:

Երբ բախումը ներկայացվում է Անվտանգության խորհրդի ուշադրությանը, խորհուրդը նախ խնդրում է կողմերին այն կարգավորել խաղաղ միջոցներով: Նա կարող է կողմերին այդ անելու պաշտոնական առաջարկ ներկայացնել: Կարող է նշանակել հատուկ ներկայացուցիչներ կամ խնդրել Գլխավոր

քարտուղարին՝ գործադրելու իր բարի ծառայությունները: Որոշ դեպքերում խորհուրդն ինքն է քննության և միջնորդության նախաձեռնում:

Երբ բանավեճը վերածվում է ռազմական գործողությունների, խորհուրդը միջոցներ է ձեռնարկում հնարավորինս արագ կերպով ավարտելու այն: Հաճախ խորհրդի ներկայացրած հրադադարի առաջարկները կարևոր դեր են ունեցել ռազմական գործողությունների տարածումը կանխելու հարցում: Խաղաղարար գործընթացին աջակցելու համար խորհուրդը կարող է հակամարտության շրջանում ռազմական դիտորդներ կամ խաղաղարար ուժեր տեղակայել:

Կանոնադրության *VII գլուխը* խորհրդին իրավունք է տալիս միջոցներ ձեռնարկել իր որոշումները իրականացնելու համար: Նա կարող է էմբարգո և պատժամիջոցներ նախաձեռնել կամ թույլատրել ուժի գործադրումը մանդատների իրականացումն ապահովելու համար:

Որոշ դեպքերում խորհուրդը, առաջնորդվելով VII գլխի դրույթներով, ուժի գործադրում է թույլատրել անդամ պետությունների կոալիցիայի կամ տարածաշրջանային կազմակերպության կողմից: Սակայն խորհուրդը նման գործողությունների է դիմում միայն որպես վերջին միջոցի, երբ սպառված են հակամարտության խաղաղ կարգավորման բոլոր ուղիները, և երբ խաղաղության խախտման կամ ագրեսիայի սպառնալիք գոյություն ունի:

Առաջնորդվելով նույն՝ VII գլխի դրույթներով՝ խորհուրդը հիմնել է միջազգային տրիբունալներ՝ միջազգային մարդասիրական և մարդու իրավունքների օրենքների կոպիտ խախտումների, այդ թվում՝ ցեղասպանության մեջ մեղադրվող անձանց պատասխանատվության ենթարկելու համար:

## Գլխավոր ասամբլեա

ՄԱԿ-ի կանոնադրությամբ (հոդված 11) Գլխավոր ասամբլեան իրավասու է «քննության առնել համագործակցության և միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման ընդհանուր սկզբունքները» և «առաջարկներ ներկայացնել.... անդամ երկրներին կամ Անվտանգության խորհրդին կամ էլ դրանց երկուսին»: Ասամբլեան բարդ հարցերի վերաբերյալ միաձայնության հասնելու ուղիներ է առաջարկում, ասպարեզ է դառնում բողոքներ արտահայտելու և դիվանագիտական փոխանակումներ կատարելու համար: Խաղաղության պահպանումն ապահովելու համար ասամբլեան անց է կացրել արտակարգ հատուկ նստաշրջաններ՝ նվիրված զինաթափմանը, Պաղեստինի խնդրին, Աֆղանստանում ստեղծված իրավիճակին և այլ հարցերի:

Խաղաղության և անվտանգության հարցերը Գլխավոր ասամբլեան քննարկում է Առաջին (զինաթափման և միջազգային անվտանգության) և Չորրորդ (հատուկ քաղաքական և ապագաղութացման) կոմիտեներում: Տարիների ընթացքում խաղաղության, հակամարտությունների խաղաղ կարգավորման և միջազգային համագործակցության վերաբերյալ Գլխավոր ասամբլեայի ընդու-

նած հռչակագրերն օգնել են առաջ տանել պետությունների միջև խաղաղ հարաբերությունները:

1980թ. ասամբլեան հավանություն է տվել Սան Խոսեում (Կոստա Ռիկա) **Խաղաղության համալսարանի** ստեղծման առաջարկին: Ինստիտուտն ուսումնասիրում և տեղեկություններ է տարածում խաղաղությանն առնչվող հարցերի վերաբերյալ:

Իր հերթական նստաշրջանի բացման օրը՝ սեպտեմբերին, Գլխավոր ասամբլեան հռչակել է **Խաղաղության միջազգային օր:**

## Հակամարտությունների կանխարգելում

Բանավեճերի վերածումը հակամարտությունների և դրանց կրկնությունը կանխելու հիմնական ռազմավարություններն են կանխարգելիչ դիվանագիտությունը, կանխարգելիչ տեղակայումը և կանխարգելիչ զինաթափումը:

*Կանխարգելիչ դիվանագիտությունը* ներառում է գործողություններ՝ ուղղված բանավեճերի կանխարգելմանը, դրանց կարգավորմանը նախքան հակամարտության վերածելը կամ արդեն ծագած հակամարտությունների տարածման սահմանափակմանը: Այն կարող է կատարվել միջնորդության, հաշտեցման կամ բանակցությունների ձևով: Վաղ նախազգուշացումը կանխարգելման կարևոր տարր է, ուստի ՄԱԿ-ը ուշադիր հետևում է աշխարհում տեղի ունեցող քաղաքական և այլ զարգացումներին՝ միջազգային անվտանգության ու խաղաղության համար սպառնալիքները հնարավորինս շուտ նկատելու և Անվտանգության խորհրդին ու Գլխավոր քարտուղարին կանխարգելիչ գործողություններ ձեռնարկելու հնարավորություն տալու համար:

Պատվիրակներն ու Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչները ողջ աշխարհում զբաղվում են միջնորդությամբ և կանխարգելիչ դիվանագիտությամբ: Որոշ անկայուն շրջաններում հատուկ ներկայացուցչի սոսկ ներկայությունն ինքնին կարող է կանխել լարված իրավիճակի բարդացումը: Այս աշխատանքը հաճախ իրականացվում է տարածաշրջանային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ :

Կանխարգելիչ դիվանագիտությունը լրացվում է կանխարգելիչ տեղակայմամբ և կանխարգելիչ զինաթափմամբ: *Կանխարգելիչ տեղակայումը*՝ հնարավոր հակամարտությունից թույլ չտալու նպատակով խաղաղապահ ուժերի տեղակայումը, նպատակ ունի «բարակ կապույտ գիծ» ստեղծել, որը լարվածության շրջանում փոխվստահություն առաջացնելու միջոցով կօգնի կանխել հակամարտությունը: Առ այսօր նման գործողության եզակի կոնկրետ օրինակները նախկին Հարավսլավիայի Մակեդոնիա Հանրապետությունում և Կենտրոնական Աֆրիկայի Հանրապետությունում ՄԱԿ-ի առաքելություններն են: Կանխարգելիչ տեղակայման հարցը քննարկվել է նաև այլ շրջանների համար և շարունակում է մնալ գործուն տարբերակ:

*Կանխարգելիչ զինաթափման* նպատակն է նվազեցնել զենքերի քանակը հակամարտությունների հակված տարածաշրջաններում: Սալվադորում.

Մոզամբիկում և այլ վայրերում դա կատարվել է մարտիկների զորացրման և զենքերի հավաքման ու ոչնչացման միջոցով, ինչը եղել է խաղաղության ընդհանուր համաձայնագրի մաս: Զենքի ոչնչացումն այսօր կանխում է դրա վաղվա կիրառումը:

---

## Միջամտության խնդիրը

*Պե՞տք է արդյոք միջազգային հանրությունը միջամտի երկրի ներսում մարդու իրավունքների առավել կոպիտ, պարբերական և լայնածավալ խախտումները դադարեցնելու նպատակով: Գլխավոր քարտուղար Քոֆի Անանն այս հարցը բարձրացրեց 1998թ.՝ լայն քննարկումների սկիզբ դնելով:*

*Կենտրոնական Աֆրիկայում, Բալկաններում և այլուր ցեղասպանության, մարդկության դեմ հանցանքների և ռազմական հանցագործությունների համատեքստում Գլխավոր քարտուղարը նշում էր, որ միջազգային հանրությունը պետք է մշակի օրինական և բոլորի համար ընդունելի սկզբունքներ՝ միջազգային իրավունքի սահմաններում, քաղաքացիական բնակչությանը մարդու իրավունքների զանգվածային և կանոնավոր խախտումներից պաշտպանելու համար:*

*Նա ասել է, որ Կանոնադրության, միջազգային մարդասիրական իրավունքին, մարդու իրավունքներին և փախստականներին վերաբերող օրենսդրության մեջ ձևակերպված համաշխարհային նորմերն ապահովում են անհրաժեշտ իրավական դաշտը: Միջամտության գաղափարը վերաբերում է գործողությունների լայն դաշտի, այդ թվում և որոշ պարագաներում Անվտանգության խորհրդի միջամտությանը ներքին հակամարտություններին այդ հակամարտությունների գոտիներում «ապահով միջանցքների» ու «ապահով շրջանների» ստեղծմամբ, ընդհուպ պետությունների նկատմամբ պատժամիջոցների կիրառմամբ կամ այլ միջոցներով:*

*Ծավալված բանավեճի ընթացքում պետությունների մի խումբ պնդում էր, որ մարդու իրավունքների զանգվածային ոտնահարման և ռազմական հանցագործությունների պարագայում միջազգային հանրությունը բռնությանը վերջ դնելու մեծ պատասխանատվություն ունի: Ուստի, որպես ծայրահեղ միջոց, մարդու իրավունքները կարող են օրինական կերպով պաշտպանվել Անվտանգության խորհրդի հավանությունն ստացած ուժի գործադրման միջոցով:*

*Երկրների մեկ այլ խումբ բարձրացրել է երեք հիմնական հարց.*

- *Որտե՞ղ է ավարտվում միջազգային մարդասիրական օգնությունը, և սկսվում միջամտությունը պետության ներքին գործերին:*
- *Ինչպե՞ս տարանջատել մարդասիրական նպատակները քաղաքական ու տնտեսական շահերից:*
- *Արդյո՞ք մարդասիրական միջամտությունը գործում է միայն թույլ պետությունների պարագայում, թե՞ բոլոր պետությունների՝ առանց խտրականության:*

*Այս պետությունները ավելի լայն երկխոսություն են պահանջում և պնդում են, որ ցանկացած որոշում պետք է հիմնված լինի անդամ պետությունների միաձայնության սկզբունքի վրա:*

*Պետությունների երրորդ խումբը պնդում է, որ մարդասիրական միջամտության գաղափարը կարող է նվազեցնել Կանոնադրության դերը՝ վտանգելով պետությունների անկախությունը և միջազգային համակարգի կայունությունը: Նրանք մտավախում են, որ մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված բոլոր միջոցները պետք է ձեռնարկվեն միայն բոլոր պետությունների անկախության, սուվերենության և տարածքային ամբողջականության հարգման պայմաններում և շահագրգիռ պետության կառավարության ու ժողովրդի կամքի հիման վրա:*

*Այս բարդ հարցի բարոյական ճիշտ և սխալ կողմերը շարունակում են մնալ բանավեճի առարկա, և հավանական է, որ նշված սկզբունքները կրկին դրվեն կասկածի տակ, երբ միջազգային հանրությունը կանգնի խոշոր մարդասիրական ճգնաժամի առջև:*

---

# Խաղաղարարություն

Խաղաղարարությունը ենթադրում է դիվանագիտական միջոցների կիրառում՝ համոզելու համար կողմերին դադարեցնել թշնամական գործողությունները և գտնել բանավեճի բանակցային կարգավորումը: ՄԱԿ-ը հակամարտությունների զսպման ու կարգավորման և նրանց արմատական պատճառների կարգավորման զանազան միջոցներ է տրամադրում: Անվտանգության խորհուրդը կարող է հակամարտության կարգավորման ուղիներ առաջարկել կամ խնդրել Գլխավոր քարտուղարի միջնորդությունը: **Գլխավոր քարտուղարը** կարող է բանակցությունների միջոցը խրախուսելու և պահպանելու դիվանագիտական նախաձեռնություններ առաջարկել:

Խաղաղարարության գործում Գլխավոր քարտուղարը կենտրոնական դեր է կատարում թե՛ անձամբ, թե՛ հատուկ պատվիրակների կամ հատուկ հանձնարարություններով առաքելությունների միջոցով, ինչպիսիք են փաստահավաք կամ բանակցային առաքելությունները: Ըստ Կանոնադրության՝ Գլխավոր քարտուղարը կարող է Անվտանգության խորհրդի ուշադրությանը ներկայացնել ցանկացած հարց, որը կարող է վտանգ ներկայացնել միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման համար:

Բանավեճերը կարգավորելու հարցում օգնելու համար Գլխավոր քարտուղարը կարող է միջնորդության նպատակով օգտագործել իր «բարի ծառայությունները» կամ կիրառել կանխարգելիչ դիվանագիտություն: Գլխավոր քարտուղարի անկողմնակալությունը ՄԱԿ-ի կարևորագույն միջոցներից մեկն է: Հաճախ Գլխավոր քարտուղարն օգնել է չեզոքացնել խաղաղությանը սպառնացող վտանգը կամ ապահովել խաղաղության համաձայնությունը:

Օրինակ՝ 1988թ. Գլխավոր քարտուղարի գործունեությունը օգնել է վերջ դնել Իրաքի և Իրանի միջև 1980 թվականից ընթացող պատերազմին: Աֆղանստանում Գլխավոր քարտուղարի և նրա պատվիրակի միջնորդությունը հանգեցրեց 1988թ. համաձայնագրի կնքմանը, որով երկրից դուրս բերվեցին խորհրդային զորքերը: Կամբոջան, Կենտրոնական Ամերիկան, Կիպրոսը, Մերձավոր Արևելքը, Մոզամբիկը և Նամիբիան վկայում են, թե ինչ տարբեր ձևերով կարող է Գլխավոր քարտուղարը հանդես գալ որպես խաղաղարար:

## Ո՞վ է խաղաղապահ գործողությունների հրամանատարը

*Խաղաղապահ գործողությունները հաստատվում են Անվտանգության խորհրդի, իսկ ղեկավարումը՝ Գլխավոր քարտուղարի կողմից, հաճախ հատուկ ներկայացուցչի միջոցով: Կախված առաքելությունից ռազմական մասի համար պատասխանատու է ուժերի հրամանատարը կամ Գլխավոր ռազմական դիտորդը:*

*ՄԱԿ-ն իր սեփական զինված ուժերը չունի, և անդամ պետությունները գործողության համար կամավորության սկզբունքով տրամադրում են անհրաժեշտ զինծառայողներ, սպառազինություն և այլ նյութական միջոցներ: Անդամ պետությունները հանգամանորեն բանակցում են իրենց մասնակցության պայմանների վերաբերյալ, այդ թվում և հրամանատարության հարցի, և պահպանում են վերջնական իշխանությունը իրենց զինված ուժերի նկատմամբ: Խաղաղապահ զինվորները կրում են իրենց պետության համազգեստը. որպես խաղաղապահ զինծառայող՝ նրանք տարբերակվում են միայն ՄԱԿ-ի կապույտ սաղավարտով կամ գլխարկով և կրծքանշանով:*

# Խաղաղապահություն

ՄԱԿ-ի խաղաղապահ գործողությունները կարևոր գործիք են միջազգային հանրության ձեռքին՝ աշխարհում խաղաղության և անվտանգության պահպանման համար: Խաղաղապահական գործողությունների դերը միջազգայնորեն ճանաչվեց 1988թ., երբ ՄԱԿ-ի խաղաղապահ ուժերը Նոբելյան մրցանակ ստացան:

Թեև դա կանոնադրությամբ հատուկ նախատեսված չէ, 1948թ. ՄԱԿ-ը խաղաղապահ նախաձեռնություն հանդես բերեց՝ Միջին Արևելքում հիմնելով ՄԱԿ-ի Հրադադարի վերահսկման կազմակերպությունը[2]:

Խաղաղապահ գործողությունները և դրանց ծավալումը արտոնվում են Անվտանգության խորհրդի կողմից՝ ընդունող երկրի կառավարության և, սովորաբար, նաև ներգրավված կողմերի համաձայնությամբ: Դրանք կարող են ներառել զինվորական ու ոստիկանական ուժեր, ինչպես նաև քաղաքացիական անձնակազմ: Գործողություններում կարող են ներգրավված լինել ռազմական դիտորդական առաքելություններ, խաղաղապահ ուժեր կամ էլ՝ երկուսը միասին: Ռազմական դիտորդական առաքելությունները կազմավորվում են անզեն սպաներից՝ այս կամ այն համաձայնագիրը կամ հրադադարը հսկելու համար: Խաղաղապահական ուժերի զինվորները զենք ունեն, սակայն մեծ մասամբ դրանք կարող են օգտագործել միայն ինքնապաշտպանության նպատակով:

Խաղաղապահ գործողությունների զինվորական անձնակազմը կամովին տրամադրվում է անդամ պետությունների կողմից և ֆինանսավորվում միջազգային հանրության կողմից: Մասնակից պետությունները հատուկ խաղաղապահության բյուջեից միանման դրույքաչափով փոխհատուցում են ստանում :

Ակնկալվում էր, որ 2000թ. խաղաղապահ գործողությունները կարժենան շուրջ 2 մլրդ դոլար, այսինքն՝ համաշխարհային ռազմական ծախսերի մոտ 0,15%-ը: Գործողությունները ֆինանսավորվում են խաղաղապահության բյուջեից և ներառում են բազմաթիվ երկրների զորքեր. «ծանրության» այսպիսի բա-

[2] 1950թ. Կորեայի ճգնաժամը ՄԱԿ-ի խաղաղապահ գործողություն չէր համարվում: 1950թ. հունիսին Միացյալ Նահանգները և ՄԱԿ-ի Կորեայի հանձնաժողովը Միավորված ազգերի կազմակերպությանն իրազեկեցին, որ Կորեայի Հանրապետությունը հարձակման է ենթարկվել Հյուսիսային Կորեայի ուժերի կողմից: Անվտանգության խորհուրդը հանձնարարեց, որ անդամ պետությունները անհրաժեշտ օգնություն ցուցաբերեն Կորեայի Հանրապետությանը՝ հարձակմանը դիմագրավելու և խաղաղությունն ու անվտանգությունը վերահաստատելու համար: Խորհուրդը հանձնարարեց, որ անդամ պետությունների կողմից տրամադրված զինված ուժերը դրվեն ՄԱԿ-ի միացյալ հրամանատարության ներքո. 16 երկիր տրամադրեցին իրենց զինված ուժերը, որոնք հայտնի էին որպես ՄԱԿ-ի հրամանատարություն և ստացել էին խորհրդի թույլտվությունը՝ հանդես գալու ՄԱԿ-ի դրոշի ներքո: Սա ՄԱԿ-ի խաղաղապահ գործողություն չէր, այլ իրենից ներկայացնում էր միացյալ հրամանատարության ներքո գործող միջազգային ուժ: Խորհրդային Միությունը, որն ի նշան բողոքի ՄԱԿ-ում Չինաստանի ազգայնական կառավարության կողմից Չինաստանի ներկայացման՝ չէր մասնակցում Անվտանգության խորհրդի աշխատանքներին, խորհրդի որոշումները համարեց անօրինական՝ պատճառաբանելով, որ երկու մշտական անդամ (Խորհրդային Միությունն ու Չինաստանը) չէին մասնակցել դրանց ընդունմանը: Հակամարտությունը շարունակվեց մինչև 1953թ. հուլիս ամիսը, երբ կնքվեց զինադադարի մասին համաձայնագիրը:

ժամանումը կարող է չափազանց արդյունավետ լինել մարդկային, ֆինանսական ու քաղաքական առումներով:

1948թ. ի վեր՝ 110 երկրների ավելի քան 750 հազար զինվորականներ, ոստիկաններ և քաղաքացիական անձինք են մասնակցել այդ գործողություններին, նրանցից ավելի քան 1650-ը զոհվել է:

Հակամարտությունները այսօր բազում բնույթ ունեն, դրանց արմատները հիմնականում ներքին են, սակայն դրանք բարդանում են պետությունների կամ տնտեսական շահերի և այլ ոչ պետական դերակատարների անդրսահմանային միջամտությամբ:

Վերջին հակամարտությունները Աֆրիկայում ցույց տվեցին, որ քաղաքացիական պայքարի և բնական պաշարների՝ նախ և առաջ ադամանդի ապօրինի արտահանման փոխանցավոր կազմակերպությունը նպաստում է զենքի գնմանը: Ավելին, հակամարտությունների հետևանքները զենքի անօրինական շրջանառության, անապահովության, թմրանյութերի առևտրի, փախստականների հոսքի և շրջակա միջավայրի վատթարացման պատճառով կարող են արագորեն միջազգային բնույթ ստանալ:

ՄԱԿ-ի գործողությունները իրենց համընդհանուր ընդգրկման շնորհիվ եզակի հնարավորություն են ընձեռում հակամարտությունների կարգավորման համար: Այդ համընդհանուր բնույթն ավելացնում է դրանց օրինականությունը և սահմանափակում ընդունող երկրի ինքնիշխանության համար բացասական հետևանքների հնարավորությունը: Չեզոք դիրքորոշում ունեցող խաղաղապահները կարող են նպաստել ընդդիմադիր կողմերի միջև բանակցություններին՝ համամարդկային ուշադրության առանց դիմելու տեղական խնդիրները, բացելով այնպիսի դռներ, որոնք այլ դեպքերում հավաքական խաղաղարար ջանքերի համար կարող էին փակ մնալ:

Ավելի ու ավելի որոշակի են դառնում այն նախապայմանները, որոնք անհրաժեշտ են խաղաղապահ գործողությունների հաջողության համար, այդ թվում ընդդիմադիր կողմերի՝ իրենց հակասությունները խաղաղ կերպով լուծելու անկեղծ ցանկությունը, հստակ ձևակերպված մանդատի առկայությունը, միջազգային հանրության ուժեղ քաղաքական աջակցությունը, ինչպես նաև գործողության նպատակների իրագործման համար անհրաժեշտ միջոցների հատկացումը:

Այդ աջակցությունը կարող է պահանջել ոչ պետական դերակատարների դրական մասնակցությունը: Վերջին հակամարտություններն Աֆրիկայում ցույց տվեցին, որ քաղաքացիական վեճերը կարող են օգտագործվել մասնավոր շահերի համար, ֆինանսական օգուտ քաղելու նպատակով: Միևնույն ժամանակ միջազգային ջանքերով համադրված և խաղաղությանն ուղղված մասնավոր կապիտալի ներհոսքը կարող է էականորեն նպաստել հակամարտություններից հետո տնտեսական վերականգնմանը:

Միջազգային հանրությունը դասեր է քաղել նախորդ գործողություններից և ձգտում է մի շարք ոլորտներում ամրապնդել Միավորված ազգերի կազմակերպության խաղաղապահ կառույցները: Բարեփոխումների համար նախատիպ հանդիսացավ Գլխավոր քարտուղարին առընթեր խաղաղապահ գործողու-

քյունների հանձնախումբը՝ դեսպան Լախդար Բրահիմիի նախագահությամբ, որի զեկույցը ներկայացվեց 2000թ.:

## Ընթացիկ խաղաղապահ գործողություններ

- *ՄԱԿ-ի Հրադադարի վերահսկման կազմակերպությունը Մերձավոր Արևելքում (ՄԱՀՎԿ, հիմնված 1948թ., անձնակազմը՝ 150 զինվորական և 215 քաղաքացիական անձինք),*
- *ՄԱԿ-ի Ռազմական դիտորդների խումբը Հնդկաստանում և Պակիստանում (ՄԱՌԴԽՀՊ, 1949թ., 46 զինվորական և 62 քաղաքացիական անձինք),*
- *ՄԱԿ-ի Խաղաղապահ ուժը Կիպրոսում (ՄԱԽՈՒԿ, 1964թ., 1213 զինվորական, 33 քաղաքացիական ոստիկան և 187 քաղաքացիական անձինք),*
- *ՄԱԿ-ի Բաժանարար դիտորդական ուժերը սիրիական Գոլանի բարձունքներում (ՄԱԲԴՈՒ, 1974թ., 1034 զինվորական և 124 քաղաքացիական անձինք),*
- *ՄԱԿ-ի Միջանկյալ ուժերը Լիբանանում (ՄԱՄՈՒԼ, 1978թ., 5802 զինվորական և 483 քաղաքացիական անձինք),*
- *ՄԱԿ-ի Իրաք-Քուվեյթ դիտորդական առաքելություն (ՄԱԻՔԴԱ, 1991թ., 1096 զինվորական և 208 քաղաքացիական անձինք),*
- *Արևմտյան Սահարայում հանրաքվեի հարցերով ՄԱԿ-ի առաքելությունը (ՄԱՀԱՍԱ), 1991թ., 230 զինվորական, 31 քաղաքացիական ոստիկան և 398 քաղաքացիական անձինք),*
- *ՄԱԿ-ի Դիտորդական առաքելությունը Վրաստանում (ՄԱԴԱՎ, 1993թ., 103 զինվորական և 240 քաղաքացիական անձինք),*
- *ՄԱԿ-ի առաքելությունը Բոսնիա-Հերցեգովինայում (ՄԱԱԲՀ, 1995թ., 5 զինվորական, 1808 քաղաքացիական ոստիկան և 1772 քաղաքացիական անձինք),*
- *ՄԱԿ-ի Դիտորդների առաքելությունը Պրևլակայում խորվաթիայում (ՄԱԴԱՊ, 1996թ., 27 զինվորական և 9 քաղաքացիական անձինք),*
- *ՄԱԿ-ի Միջանկյալ կառավարման առաքելությունը Կոսովոյում (ՄԱԿԿԱԿ 1999թ., 39 զինվորական, 4411 քաղաքացիական ոստիկան և 3920 քաղաքացիական անձինք),*
- *ՄԱԿ-ի առաքելությունը Սիեռա Լեոնեում (ՄԱԱՍԼ, 1999թ., 10386 զինվորական, 34 քաղաքացիական ոստիկան և 399 քաղաքացիական անձինք),*
- *ՄԱԿ-ի Անցումային վարչակազմը Արևելյան Թիմորում (ՄԱԱՎԱԹ, 1999թ., 7889 զինվորական, 1398 քաղաքացիական ոստիկան և 2655 քաղաքացիական անձինք),*
- *ՄԱԿ-ի Դիտորդական առաքելությունը Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում (ՄԱԴԱԿ, 1999թ., 207 զինվորական, 358 քաղաքացիական անձինք, համապատասխան պայմանների առկայության դեպքում 5537 զինվորականի ներգրավում),*
- *ՄԱԿ-ի Առաքելությունը Եթովպիայում և Էրիթրեայում (ՄԱԱԵԷ, 2000թ., 1777 զինվորական, 183 քաղաքացիական անձինք, 4400-անոց թույլատրված զինուժ):*

Անվտանգության խորհուրդը և մյուս մարմինները ներկայումս զբաղված են կարևորագույն հիմնախնդիրների լուծմամբ, Դրանք են՝

- բարձրացնել պատրաստականությունը,
- արագացնել խաղաղապահ ուժերի ծավալումը,
- խաղաղապահների զսպման ունակությունների ամրապնդումը,
- անդամ պետությունների քաղաքական և ֆինանսական աջակցության ապահովումը:

Գործողությունները կարող են բազմաթիվ ձևեր ստանալ և անընդհատ զարգանում են՝ կախված հանգամանքների փոփոխությունից: Տարիների ընթացքում խաղաղապահ գործողությունների առջև դրվել են հետևյալ խնդիրները.

## ՄԱԿ-ի խաղաղապահ գործողությունները 2000 թ.



Վարչություն No. 4000.1 ՄՏԿ
2000 թ., նոյեմբեր

Հանրային տեղեկատվության վարչության
Քարտեզագրության բաժին

- *Հրադադարի պահպանում և ուժերի տարանջատում:* Այսպես կոչված «չնչելու» տարածության ապահովում, կողմերի միջև սահմանափակ համաձայնության վրա հիմնված գործողությունը կարող է խթանել բանակցային մթնոլորտ:
- *Կանխարգելիչ տեղակայում:* Նախքան հակամարտության բռնկվելը ծավալված գործողությունը կարող է վստահության և թափանցիկության ալիքյալ դառնալ՝ նպաստելով քաղաքական առաջընթացին:
- *Մարդասիրական գործողությունների պաշտպանություն:* Շատ հակամարտություններում քաղաքացիական բնակչությանը դիտավորյալ կերպով դարձնում են քաղաքական նպատակներին հասնելու միջոց: Նման իրավիճակներում խաղաղապահներից պահանջվում է պաշտպանել և աջակցություն ցուցաբերել մարդասիրական գործողություններին: Այդուհանդերձ նշված առաջադրանքների կատարումը կարող է խաղաղապահներին քաղաքական դժվարին կացության մեջ դնել և սպառնալիք ստեղծել նրանց անվտանգության համար:
- *Համապարփակ խաղաղ կարգավորման իրականացում:* Համապարփակ խաղաղության համաձայնագրերի հիման վրա ծավալված համալիր բնույթ կրող բազմակողմանի գործողությունները կարող են օգտակար լինել այնպիսի տարաբնույթ խնդիրների իրականացման համար, ինչպիսիք են մարդասիրական օգնության տրամադրումը, մարդու իրավունքների հսկողությունը, ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրականացումը և տնտեսական վերակառուցման աջակցության համադասումը:

Այս կարգի գործառույթների թվարկումը կարելի է անվերջ շարունակել: Ապագա հակամարտությունները կարող են չափազանց բարդ խնդիրներ առաջադրել միջազգային հանրությանը: Արդյունավետ ներազդեցության համար հարկ կլինի համարձակ և ստեղծագործական մոտեցումներ ցուցաբերել խաղաղության գործիքների կիրառման խնդրում:

### Տարածաշրջանային կազմակերպությունների հետ համագործակցությունը

Խաղաղության ոլորտներում Միավորված ազգերի կազմակերպությունն ավելի ու ավելի շատ է համագործակցում տարածաշրջանային կազմակերպությունների և կանոնադրության 8-րդ գլխում նշված այլ սուբյեկտների ու մեխանիզմների հետ: Նա սերտորեն համագործակցել է Ամերիկյան պետությունների կազմակերպության հետ Հայիթիում, Եվրամիության հետ՝ նախկին Հարավսլավիայում, Արևմտաաֆրիկյան պետությունների տնտեսական համագործակցության հետ՝ Լիբերիայում և Սիեռա Լեոնեում և Աֆրիկյան միասնության կազմակերպության հետ՝ Արևմտյան Սահարայում, Մեծ լճերի շրջանում, Սիեռա Լեոնեում, Եթովպիայում և Էրիթրեայում:

ՄԱԿ-ի ռազմական դիտորդները համագործակցել են տարածաշրջանային կազմակերպությունների խաղաղապահ ուժերի հետ Լիբերիայում, Սիեռա Լեոնեում, Վրաստանում և Տաջիկստանում:

Նախկին Հարավսլավիայում Միավորված ազգերի կազմակերպությունը համագործակցել է Եվրախորհրդի և ԵԱՀԿ-ի հետ մարդու իրավունքների, ընտրական օգնության, խաղաղապահության և տնտեսական զարգացման բնագավառներում: Կոսովոյի բարդ առաքելությունն ի մի բերեց Միավորված ազգերի կազմակերպությանը, Եվրամիությանն ու ԵԱՀԿ-ին:

## Հարկադրական միջոցներ

Կանոնադրության VII գլխի համաձայն՝ Անվտանգության խորհուրդը կարող է հարկադրական միջոցներ ձեռնարկել միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը պահպանելու կամ վերականգնելու համար, այդ թվում՝ տնտեսական պատժամիջոցներ և միջազգային ռազմական գործողություններ:

### Պատժամիջոցներ

Քանիցս, երբ վտանգված է եղել խաղաղությունը, և դիվանագիտական ջանքերն արդյունք չեն տվել, խորհուրդը դիմել է հարկադրական պատժամիջոցների որպես իրավապահպանության գործիքի: Նախորդ տասնամյակում պատժամիջոցներ են կիրառվել Իրաքի, նախկին Հարավսլավիայի, Լիբիայի, Հայիթիի, Լիբերիայի, Ռուանդայի, Սոմալիի, Անգոլայում ՈՒՆԻՏԱ-ի ուժերի, Սուդանի, Սիեռա Լեոնեի, Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության (ներառյալ Կոսովոն), Աֆղանստանի և Եթովպիայի ու Էրիթրեայի նկատմամբ: Ձեռնարկ-

կած միջոցները ներառում էին համապարփակ տնտեսական և առևտրական պատժամիջոցներ կամ ավելի որոշակի միջոցներ. ինչպես, ասենք, զենքի էմբարգոն, ուղևորության վրա դրված արգելքը և ֆինանսական ու դիվանագիտական սահմանափակումները:

Պատժամիջոցները նպատակ են հետապնդում ճնշում գործադրել այս կամ այն պետության կամ մարմնի վրա, որպեսզի վերջիններս կատարեն Անվտանգության խորհրդի սահմանած պահանջները՝ առանց ուժի գործադրման: Այսպիսով պատժամիջոցները կարևոր գործիք են խորհրդի համար ապահովելու իր ընդունած որոշումների կատարումը: Միավորված ազգերի կազմակերպության համընդհանուր բնույթը նրան պատժամիջոցներ սահմանելու և հսկելու առանցքային մարմին է դարձնում:

Միևնույն ժամանակ շատ պետություններ ու մարդասիրական կազմակերպություններ մտահոգություն են հայտնում ազգաբնակչության ամենաանպաշտպան խավերի, ասենք, կանանց ու երեխաների վրա պատժամիջոցների հնարավոր բացասական ազդեցության կապակցությամբ: Մտահոգություններ են նաև հայտնվել այն երրորդ երկրների տնտեսության վրա պատժամիջոցների անցանկալի ազդեցության առնչությամբ, որոնք ստիպված են լինում խզել առևտրական ու տնտեսական կապերը պատժված երկրի հետ:

Ավելի ու ավելի լայն տարածում է գտնում այն տեսակետը, թե պատժամիջոցների մշակումն ու կիրառումը պետք է բարելավել: Պատժամիջոցների բացասական հետևանքները կարելի է նվազեցնել՝ Անվտանգության խորհրդի բանաձևերում ուղղակիորեն մարդասիրական բացառություններ կատարելով կամ բարելավված մոտեցումներ ցուցաբերելով դրանց նկատմամբ: Լայն ճանաչում են ստացել այսպես կոչված «խոհեմ պատժամիջոցները», որոնց նպատակը մարդասիրական հետևանքների բարելավումն է՝ ճնշում գործադրելով ոչ թե լայն հասարակության, այլ իշխանությունների նկատմամբ: «Խոհեմ պատժամիջոցները», օրինակ, կարող են ներառել իշխանական վերնախավի կամ այլ մարմինների ֆինանսական ակտիվների ու ֆինանսական գործարքների սառեցումը, որոնց գործողությունները պատժամիջոցների գործադրման տեղիք են տալիս:

## Ռազմական գործողությունների թույլատրումը

Երբ խաղաղարար ջանքերը ձախողվում են, անդամ պետությունները կարող են արտոնել կանոնադրության VII գլխում նախատեսված առավել կոշտ միջոցների կիրառումը: Անվտանգության խորհուրդն անդամ պետությունների կոալիցիաներին թույլատրել է կիրառել «անհրաժեշտ բոլոր միջոցները», ներառյալ ռազմական գործողությունները հակամարտությունների կարգավորման համար, ինչպես օրինակ՝ Իրաքի ներխուժումից հետո Քուվեյթի ինքնիշխանությունը վերականգնելիս (1991թ.), Սոմալիում մարդասիրական օգնության գործողությունների անվտանգությունն ապահովելիս (1992թ.), Ռուանդայում քաղաքացիական բնակչության կյանքին սպառնացող վտանգը չեզոքացնելիս (1994թ.),

Հայիթիի ժողովրդավարորեն ընտրված կառավարությունը վերականգնելիս (1994թ.), Ալբանիայում մարդասիրական գործողությունների անվտանգությունն ապահովելիս (1997թ.) և Արևելյան Թիմորում խաղաղությունն ու անվտանգությունը վերահաստատելիս (1999թ.):

Թեև այդ գործողություններն արտոնված էին Անվտանգության խորհրդի կողմից, կիվին մասնակից պետությունների վերահսկողության տակ էին: Դրանք ՄԱԿ-ի խաղաղապահ գործողություններ չէին, որոնք սահմանվում են Անվտանգության խորհրդի և ղեկավարվում Գլխավոր քարտուղարի կողմից:

## Խաղաղաշինություն

Խաղաղաշինությունը ենթադրում է հակամարտությունների վերահսկման կանխարգելում և այն կառույցների ու միջոցների աջակցում, որոնք ուժեղացնում և ամրապնդում են խաղաղությունը:

---

### Միջանկյալ կառավարում

*Միավորված ազգերի կազմակերպությունը ավելի ու ավելի հաճախ է դերակատարություն ունենում անցումային երկրների կառավարման գործում: Հակամարտություններից հետո աջակցության խնդրանք ստանալով կազմակերպությունը զանազան բնույթի խնդիրներ է իրականացրել խաղաղության կառուցման այս ձևի մեջ՝ երբեմն ստանձնելով կառավարման լիազորությունների ողջ փաթեթը, միաժամանակ ինքնաբավ կառավարություն ձևավորելու նպատակով համագործակցելով տեղական քաղաքական և քաղաքացիական առաջնորդների հետ:*

*Վարչարարական դերի այդպիսի մի օրինակ է կազմակերպության միջամտությունը Կամբոջայում 1992-93թթ. քաղաքացիական պատերազմի ավարտից հետո: Ինչպես նշված էր 1992թ. խաղաղության համաձայնագրում, Անվտանգության խորհուրդը հաստատեց Միավորված ազգերի կազմակերպության անցումային կառավարություն, որը ղեկավարում էր երկրի տնտեսության առանցքային ոլորտները: 1993թ. ընտրություններից հետո առաքելությունն իր լիազորությունները հանձնեց նոր կառավարությանը:*

*Վարչարարական պատասխանատվությամբ մեկ այլ խաղաղապահ գործողության օրինակ է Միավորված ազգերի կազմակերպության անցումային կառավարությունը Արևելյան Սլավոնիայում, Բարանյայում և Արևմտյան Սիրմիումում, որը ծավալվեց 1996թ. մինչև 1998թ.՝ Խորվաթիայի հետ այդ տարածքի խաղաղ ինտեգրացման նպատակով:*

*1999թ. Անվտանգության խորհուրդը հաստատեց Միավորված ազգերի կազմակերպության Միջանկյալ կառավարման առաքելությունը Կոսովոյում օրենսդիր, գործադիր և դատական լիազորություններով հանդերձ: Առաքելությունը մարզի վարչակազմը ղեկավարեց մինչև վերջնական կարգավիճակ ստանալը:*

*Նույն 1999թ. Անվտանգության խորհուրդը Միավորված ազգերի կազմակերպության անցումային կառավարումը հաստատեց Արևելյան Թիմորում օրենսդիր և գործադիր իշխանությամբ: Առաքելությունն օգնում է զարգացնել սոցիալական ծառայությունները, օժանդակում է տնտեսական վերակառուցման և Արևելյան Թիմորի պետականության ամրապնդման գործում:*

---

*Կանխարգելիչ խաղաղաշինությունը* ենթադրում է հակամարտության բուն պատճառների վերացումն ի խնդիր ծավալված երկարաժամկետ քաղաքական, վարչաիրավական և զարգացումը խթանող գործունեություն: *Հետկոնֆլիկտային խաղաղաշինությունն* ընդգրկում է հակամարտության վերսկս-

ման բացառմանն ու խաղաղության գործընթացի խթանմանն ուղղված ջանքերի ամբողջությունը՝ այդպիսով դնելով կայուն խաղաղության հիմքերը:

ՄԱԿ-ի խաղաղաշինության գործունեությունն ընթանում է հինգ հիմնական ուղղություններով: Առաջինը՝ *ռազմական և անվտանգության* ոլորտներում, ներառում է զինաթափումը, զորացրումը, պատերազմի մասնակիցների վերադարձը քաղաքացիական կյանքին և զենքերի ոչնչացումը: Երկրորդը ներառում է *մարդասիրական գործունեությունը*, ինչպես, օրինակ, փախստականների վերադարձն ու հակամարտությունից տուժած երեխաների խնամքը: Քաղաքական միջոցառումները մի այլ ոլորտ են ներկայացնում, որը ներառում է վարչախմբական կառույցների ստեղծումն ու ամրապնդումը, կառավարման լավագույն եղանակների խթանումը, սահմանադրական բարեփոխումներն ու ընտրությունները: Մի այլ ուղղություն է մարդու իրավունքների պաշտպանությունը, որն ընդգրկում է իրավունքների վերահսկողությունը, դատական համակարգի և ոստիկանության բարեփոխումը և խախտումների ու չարաշահումների հետաքննությունը: Վերջապես *տնտեսական և սոցիալական միջոցառումները* ենթադրում են հակամարտության հետևանքով վնասված ենթակառուցվածքների վերականգնումը, տնտեսական ու սոցիալական անարդարության մեղմումը, ճիշտ կառավարման և տնտեսական զարգացման համար նպաստավոր պայմանների ստեղծումը:

Հակամարտությունների բուն պատճառները վերացնելով՝ խաղաղաշինությունը դառնում է ճգնաժամերի խաղաղ հանգուցալուծման ջանքերի կարևորագույն տարրերից մեկը: Որոշ դեպքերում, այդ թվում Հայիթին, Գվինեա Բիսաուն, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությունը, երբ քաղաքացիական պատերազմը դեռևս սաղմնային փուլում է, խաղաղաշինությամբ կարելի է նպաստել կայունացմանն ու հակամարտության կանխարգելմանը:

Խաղաղաշինությունն ներառում է համակցված գործողություններ Միավորված ազգերի կազմակերպության համակարգի մի ամբողջ շարք կազմակերպությունների, այդ թվում և Համաշխարհային բանկի, տարածաշրջանային տնտեսական և այլ կազմակերպությունների, ոչ կառավարական կազմակերպությունների (ՈԿԿ) և տեղի քաղաքացիական խմբերի կողմից: Խաղաղաշինությունը կարևոր դեր խաղաց Միավորված ազգերի կազմակերպության գործողություններում Կամբոջայում, Էլ Սալվադորում, Գվատեմալայում, Մոզամբիկում, Լիբերիայում, Բոսնիա-Հերցեգովինայում և Սիերա Լեոնեում, ինչպես նաև վերջերս Կոսովոյում ու Արևելյան Թիմորում:

Միավորված ազգերի կազմակերպության օժանդակությունը հաճախ առանցքային է եղել ժողովրդավարության կառուցման և ամրապնդման խնդրում: Ժամանակ առ ժամանակ դա ենթադրել է զինված ընդդիմադիր շարժումներին ցուցաբերվող օժանդակություն քաղաքական կուսակցության վերածելու, քաղաքական կյանքին լիովին վերադառնալու ճանապարհին, ինչպես որ եղավ Էլ Սալվադորում, Գվատեմալայում, Մոզամբիկում:

## Ընտրությունների վերահսկումը

1989թ. Միավորված ազգերի կազմակերպությունը նոր ուղի հարթեց՝ վերահսկելով Նամիբիայի անկախության հանգեցրած ընտրությունների ողջ ընթացքը: Այդ ժամանակից ի վեր կառավարությունների խնդրանքով ՄԱԿ-ը վերահսկողություն է իրականացրել Նիկարագուայում, Հայիթիում (1990թ.), Անգոլայում (1992թ.), Կամբոջայում (1993թ.), Էլ Սալվադորում, Հարավային Աֆրիկայում և Մոզամբիկում (1994թ.), Արևելյան Սլավոնիայում (Խորվաթիա) և Լիբերիայում (1997թ.), Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությունում (1998-99թթ.) կայացած ընտրություններում: Նա նաև դիտորդական առաքելություն իրականացրեց Էրիթրեայում 1993թ. հանրաքվեի ժամանակ և Արևելյան Թիմորի 1999թ. ժողովրդական խորհրդակցության ժամանակ:

Միավորված ազգերի կազմակերպության ներգրավման աստիճանը պայմանավորված է զանազան գործոններով, օրինակ՝ տվյալ կառավարության պաշտոնական խնդրանքի առկայությամբ, խաղաղության համաձայնագրերի պարունակած դրույթներով կամ Անվտանգության խորհրդից ստացած լիազորություններով: ՄԱԿ-ը տարաբնույթ դերակատարություններ է ունեցել՝ սկսած տեխնիկական օգնությունից մինչև ընտրական գործընթացի փաստացի իրականացումը:

ՄԱԿ-ի դիտորդները հիմնականում հետևում են ընտրարշավին, ընտրողների գրանցմանը և քվեարկության կազմակերպմանը: Ընտրությունների օրը նրանք գնում են տեղամասեր, դիտում քվեարկությունն ու ձայների հաշվարկը և վերջնական հայտարարություն հրապարակում ընտրությունների վավերականության մասին:

Զանազան մարմիններ են օգնում ընտրությունների կազմակերպմանն ու անցկացմանը: Քաղաքական գործերի վարչության **Ընտրական օժանդակության բաժինը** պետություններին օգնում է ազատ և արդար ընտրություններ անցկացնել: Նա ընտրական օգնության տարբեր ձևեր է կիրառել ավելի քան 80 երկրներում, ներառյալ համադրումն ու աջակցությունը, խորհրդատվական ծառայությունները, նյութատեխնիկական ապահովումն ու ուսուցումը, համակարգչային ծրագրերն ու կարճաժամկետ դիտորդական գործունեությունը: Միավորված ազգերի կազմակերպության Զարգացման ծրագիրը (ՄԱԶԾ) տեխնիկական օժանդակություն է ցուցաբերում ընտրական գործընթացին, օգնում է երկրներին ընտրական կառույցներ հիմնել և համադրում է ՄԱԿ-ի ընտրական օգնությունը տվյալ բնագավառում: Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը օգնում է ընտրություններն ապահովող անձնակազմի ուսուցմանը, սահմանում է ուղենիշներ ընտրական օրենքների և ընթացակարգերի մշակման համար, տեղեկատվություն է տրամադրում մարդու իրավունքների և ընտրությունների վերաբերյալ:

## Խաղաղաշինությունը զարգացման միջոցով

Խաղաղության ամրապնդման գործում Միավորված ազգերի կազմակերպության առանցքային գործիքներից է զարգացման օգնությունը: Շատ կազմակեր-

պություններ, ներառյալ ՄԱԶԾ-ն, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը (ՄԱՄՀ) Պարենի համաշխարհային ծրագիրը (ՊՀԾ) և Փախստականների գծով Գերագույն հանձնակատարի գրասենյակը (ՓԳՀ) դեր ունեն վերականգնման փուլում, ինչն անչափ կարևոր է տեղահանվածներին պատեհություններ ընձեռելու և ազգային ու տեղական հաստատությունների նկատմամբ վստահություն սերմանելու առումով:

Միավորված ազգերի կազմակերպությունը կարող է օգնել փախստականների վերադարձման, ականազերծման, ենթակառուցվածքների վերականգնման, ռեսուրսների համախմբման և տնտեսական վերակառուցման հարցերում: Պատերազմը զարգացման ոխերիմ թշնամին է, իսկ առողջ և հավասարակշռված զարգացումը՝ հակամարտությունների կանխարգելման լավագույն ձևը:

# Միավորված ազգերի կազմակերպության գործողությունները հանուն խաղաղության

## Աֆրիկա

### Հարավային Աֆրիկա

1980-ականների վերջերին սառը պատերազմի թուլացման հետ Միավորված ազգերի կազմակերպությունը կարողացավ քաղել Հարավային Աֆրիկայում մոլեգնող պատերազմներին վերջ դնելու իր բազմամյա ջանքերի պտուղները: Հարավային Աֆրիկայում ապարտեիդի ռեժիմի անկումը, որի ազդեցությունը տարածվում էր սահմանակից «ճակատային» պետությունների վրա, և որը պաշտպանել էր ընդդիմության ուժերին Անգոլայում և Մոզամբիկում, կարևոր գործոն էր հիշյալ ջանքերում:

---

**Աֆրիկա. Միավորված ազգերի կազմակերպության առաջնահերթությունը**

*Աֆրիկան վերջին տասնամյակի ընթացքում եղել է Միավորված ազգերի կազմակերպության ուշադրության կենտրոնում: Կազմակերպությունը նորովի և ամենաբարձր մակարդակով մոտեցավ մայրցամաքում ծագող հակամարտություններով և վաղեմի վեճերով պայմանավորված հիմնախնդիրներին: 2000թ. սեպտեմբերի Հազարամյակի գագաթնաժողովի հայտարարությամբ աշխարհի ղեկավարները Աֆրիկային լիակատար աջակցության պարտավորություն ստանձնեցին, ներառյալ հատուկ միջոցների ձեռնարկումը խաղաղության և զարգացում ապահովելու հարցում:*

*Անվտանգության խորհուրդը նախարարական մակարդակով բազմաթիվ հատուկ նիստեր գումարեց Աֆրիկայի վերաբերյալ: 1997թ. խորհուրդը «լուրջ մտահոգություն» հայտնեց մայրցամաքում հակամարտությունների թվի և սաստկանալու աճին կոչ անելով միջազգային ջանքեր գործադրել խաղաղության և անվտանգության նպատակով: 1998թ. արտաքին գործերի նախարարների մակարդակով կայացած նիստում խորհուրդն իր վճռականությունը հայտնեց առավել արդյունավետությամբ արձագանքելու առճակատմանը և երեք բանաձև ընդունեց զենքի ապօրինի շրջանառության անկայունացնող հետևանքների, զենքի էմբարգոյի և Աֆրիկայում հակամարտությունների նա-*

*խաղաղության վերաբերյալ:*

*2000թ. հունվարին Անվտանգության խորհուրդը մեկ ամիս շարունակ նիստեր գումարեց Աֆրիկային սպառնացող մարտահրավերների առնչությամբ: Միացյալ Նահանգների նախագահությամբ, որը նախագահում էր այդ ամիս, խորհուրդը քննարկեց խաղաղության և անվտանգության հետ կապված այնպիսի կարևորագույն հարցեր, ինչպիսիք են հակամարտությունների կարգավորումը, փախստականներն ու տեղահանվածները, ՁԻԱՀ-ի համաճարակը: Աֆրիկայի նկատմամբ նման մոտեցումը հնարավոր դարձրեց ողջ աշխարհի ուշադրության հրավիրումը մայրցամաքի հիմնախնդիրների վրա:*

*Խորհուրդը նաև Միավորված ազգերի կազմակերպությանը կոչ արեց հակամարտությունների կարգավորման խնդրում համագործակցել այլ կազմակերպությունների հետ: ՄԱԿ-ի խաղաղապահ ջանքերը ներառում են համագործակցությունը Աֆրիկյան միասնության կազմակերպության (ԱՄԿ) և ենթատարածաշրջանային այնպիսի կազմակերպությունների հետ, ինչպիսիք են Արևմտաաֆրիկյան պետությունների տնտեսական համագործակցությունը (ԱՊՏՀ), Հարավային Աֆրիկայի զարգացման համագործակցությունը (ՀԱԶՀ):*

*Աֆրիկան դարձավ Գլխավոր քարտուղարի առաջնահերթություններից մեկը: Նա անձամբ կամ մայրցամաքում իր 15 հատուկ պատվիրակների միջոցով քայլեր ձեռնարկեց հակամարտությունների նախականխման կամ զսպման համար: Աֆրիկյան հակամարտությունների արմատների և տևական խաղաղության միջոցառումների վերաբերյալ խորհրդին ներկայացված իր 1998թ. հաշվետվության (զեկույցի) մեջ նա աֆրիկյան պետություններին կոչ արեց կամք դրսևորել և ապավինել միմիայն քաղաքական և ոչ երբեք ռազմական միջոցներին, որպեսզի Աֆրիկան որդեգրի ճիշտ կառավարման քաղաքականություն, հարգվեն մարդու իրավունքները, մայրցամաքն ընթանա ժողովրդավարության և պետական կառավարման համակարգը հաշվետու դարձնելու ուղիով, և ընդունվեն տնտեսական աճը խթանող որոշումներ: Իր հերթին միջազգային հանրությունը պետք է ավելի ուժեղ քաղաքական աջակցություն ցուցաբերեր, թեթևացներ վարկային բեռը և ապահովեր աֆրիկյան երկրների մուտքը համաշխարհային շուկա:*

*Տարիների ընթացքում Միավորված ազգերի կազմակերպության ջանքերը զանազան ձևեր են ընդունել, ներառյալ արշավն ապարտեիդի դեմ Հարավային Աֆրիկայում, անտիպ աջակցությունը Նամիբիայի անկախությանը և 20 այլ խաղաղապահ գործողություններ: Ի լրումն նախորդ էջերում նկարագրված գործողությունների, 1992-1995թթ. Սոմալիում ծավալված երեք խաղաղապահ գործողություններ նպատակ էին հետապնդում վերականգնել խաղաղությունն ու մարդասիրական օգնություն տրամադրել: 1993-1997թթ. ծավալված մեկ այլ գործողություն օգնեց վերջ դնել 7 տարի շարունակ Լիբերիայում ընթացող քաղաքացիական պատերազմին:*

*Սակայն խաղաղությունն ու անվտանգությունն Աֆրիկայում վտանգվում են լայնամասշտաբ տնտեսական, սոցիալական և մարդասիրական խնդիրների առկայությամբ: Շատ հակամարտություններ երևան հանեցին պատերազմների և աղքատության միջև եղած կապը: Որևէ ոլորտում այդ կապն այնքան ցայտուն չէ, որքան փախստականներին ու տեղահանվածներին, ՁԻԱՀ-ին, արտաքին պարտքին, բնապահպանությանը և տևական տնտեսական ճգնաժամերին վերաբերող հարցերում: Աֆրիկան առաջնահերթ մտահոգության առարկա է Միավորված ազգերի կազմակերպության համար նաև տնտեսական և սոցիալական ոլորտներում:*

---

1988թ. Հարավային Աֆրիկան **Նամիբիայի** անկախությունն ապահովելու նպատակով համաձայնեց համագործակցել Գլխավոր քարտուղարի հետ: 1992թ. **Մոզամբիկի** կառավարությունն ու Մոզամբիկի Ազգային դիմադրության շարժումը (ՄԱԴՇ) խաղաղության համաձայնագիր ստորագրեցին՝ վերջ դնելով երկարատև և հյուծիչ քաղաքացիական պատերազմին: Որպես համաձայնագրի մաս՝ 1993թ. ծավալված ՄԱԿ-ի գործողությունը հաջողությամբ վերահսկեց հրադադարը, զինուժի զորացրումը և 1994թ. երկրում կայացած առաջին բազմակուսակցական ընտրությունները:

**Անգոլա:** Արտաքին քաղաքական ու տնտեսական շահերով պայմանավորված քաղաքացիական պատերազմն Անգոլայում ավելի դժվարին խնդիր էր: Այնտեղ կառավարությունն ու ընդդիմադիր ուժերը՝ Անգոլայի լիակատար անկախության ազգային միությունը (ԱԼԱԱՄ), 1975թ. անկախությունից ի վեր ներքաշվել էին ընդմիջվող, սակայն ավերիչ պատերազմի մեջ:

Միավորված ազգերի կազմակերպությունը վաղուց էր միացել խաղաղության և հաշտեցման ջանքերին: Այդ ջանքերը ներառում էին Գլխավոր քարտուղարի և նրա պատվիրակների միջնորդությունը, խաղաղության բանակցությունների կազմակերպումը, Անվտանգության խորհրդի հայտարարած զենքի և նավթի էմբարգոն ընդդեմ ԱԼԱԱՄ-ի, ազգային ընտրությունների հսկողությունը:

Անվտանգության խորհուրդը ստեղծեց չորս հաջորդական խաղաղապահ առաքելություններ: Առաջինը 1989թ. վերահսկում էր կուբայական ուժերի դուրսբերումը Անգոլայից: Երկրորդը 1991 թվականից ի վեր նպատակ ուներ վերահսկելու հրադադարը, ստուգելու մարտիկների զորացրումը և հետևելու 1992թ. ընտրություններին, որոնց արդյունքները ԱԼԱԱՄ-ը չէր ընդունել, ինչի հետևանքով երկիրը վերստին ներքաշվել էր պատերազմի մեջ:

Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ պրն Ալիուն Բլոնդին Բեյի միջնորդությունը, որը 1998թ. հունիսին խաղաղարար առաքելություն իրականացնելիս զոհվեց օդանավի վթարից, հանգեցրեց 1994թ. Լուսակայի խաղաղության համաձայնագրին, որի արդյունքը եղավ հաստատված փխրուն խաղաղությունը: Համաձայնագիրը նախատեսում էր հրադադարի հաստատում և ԱԼԱԱՄ-ի ինտեգրացիան կառավարության ու զինված ուժերի հետ: Համաձայնագրին աջակցելու և խաղաղության ու ազգային համերաշխության ճանապարհին կողմերին օգնություն ցուցաբերելու նպատակով 1995թ. ստեղծվեց երրորդ առաքելությունը: Գլխավոր քարտուղարը 1997թ. այցելեց Անգոլա՝ հաշտեցման ու ազգային միասնության կառավարության ձևավորմանն իր նպաստը բերելու համար, որն ստեղծվեց 1997թ. ապրիլին: 1997թ. Անգոլայում խաղաղությունը վերականգնելու և անցմանն օժանդակելու նպատակով հիմնվեց Միավորված ազգերի կազմակերպության դիտորդական առաքելությունը (ԱԴԱ):

Սակայն հարաբերական խաղաղության 4 տարիներից հետո 1998թ. դեկտեմբերին առճակատումը վերսկսվեց՝ խլելով բազմաթիվ քաղաքացիական կյանքեր, ըստ որում 750 հազար մարդ դարձավ անօթևան: Անվտանգության խորհուրդը սաստկացրեց պատժամիջոցներն ընդդեմ ԱԼԱԱՄ-ի, քանի որ վերջինս հրաժարվում էր կատարել Լուսակայի խաղաղության համաձայնագրով իր ստանձնած պարտավորությունները:

1998թ. Միավորված ազգերի կազմակերպության չարտերային թռիչք իրականացնող օդանավը վթարի ենթարկվեց ռազմական գործողությունների շրջանում՝ խլելով բոլոր 14 ուղևորների կյանքը: 1999թ. հունվարին Միավորված ազգերի կազմակերպության չարտերային թռիչք իրականացնող մեկ այլ օդանավ գնդակոծվեց այդ նույն շրջանում և վայր ընկավ՝ դառնալով բոլոր 9 ուղևորների մահվան պատճառ:

1998թ. խորհուրդը վերահաստատեց, որ խաղաղության գործընթացի վիժեց-

ման հիմնական պատասխանատվությունն ընկնում է ԱԻ.ԱԱՄ-ի վրա և 1999թ. փետրվարին սպառված համարեց ԱԽԱ-ի մանդատը: Այդուհանդերձ խորհուրդը չեշտեց ՄԱԿ-ի ներկայությունը շարունակելու անհրաժեշտությունը և 1999թ. հոկտեմբերին Անգոլայում խաղաղության վերականգնման միջոցառումներն ուսումնասիրելու, վարչաիրավական կառույցների ամրապնդմանն օժանդակելու, մարդասիրական օգնություն հասցնելու և մարդու իրավունքները պաշտպանելու նպատակով հիմնեց Միավորված ազգերի կազմակերպության գրասենյակը (ՄԱԳ): Հետագայում ևս Միավորված ազգերի կազմակերպության գործակալությունները շարունակեցին մարդասիրական և զարգացման ճգնաժամից դուրս գալու ելքերի որոնումը:

## Կենտրոնական Աֆրիկա

Վաղուց ի վեր Կենտրոնական Աֆրիկայի Մեծ լճերի շրջանը Միավորված ազգերի կազմակերպության հատուկ ուշադրության առարկան է դարձել: Ազգամիջյան լարումների տասնամյակները, որոնց գագաթնակետը Ռուանդայի ցեղասպանությունը եղավ, անկայունության մթնոլորտ ստեղծեցին, որն իր մեջ առավ հարակից բոլոր պետությունները: 2000թ. Գլխավոր քարտուղարը տարածաշրջանում հատուկ ներկայացուցիչ նշանակեց պրն Բերհանու Դինկային, որը նախկինում ևս ակտիվ մասնակցություն էր ունեցել միջազգային խաղաղարար ջանքերին, մասնավորապես Բուրունդիում և Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում: Այս վերջինում Միավորված ազգերի կազմակերպությունը հրադադարի համաձայնագրի կատարմանն օժանդակելու համար հիմնեց խաղաղապահ առաքելություն: Միավորված ազգերի կազմակերպությունը մարդասիրական ճակատում շարունակեց զբաղվել փախստականների և տեղահանվածների զանգվածային տեղաշարժով պայմանավորված արտակարգ իրավիճակների լուծմամբ:

**Ռուանդա:** Ռուանդայում Միավորված ազգերի կազմակերպության միջամտությունն սկսվեց 1993թ., երբ Ռուանդան և Ուգանդան խնդրեցին ռազմական դիտորդներ տեղակայել ընդհանուր սահմանի երկայնքով, որպեսզի կանխվի ռազմական նպատակով տարածքի օգտագործումը Ռուանդայի հայրենասիրական ճակատի (ՌՀՃ) կողմից: Ի պատասխան, Անվտանգության խորհուրդը հիմնեց Ուգանդա-Ռուանդա դիտորդական առաքելությունը (ՈՒՌԴԱ):

Ռուանդայում մարտերն սկսվեցին 1990թ., հիմնականում հուտուներից կազմված կառավարության և տուտսիների գլխավորած ՌՀՃ-ի միջև, որի հենակայանը Ուգանդայում էր: 1993թ. խաղաղության մասին համաձայնագիր կնքվեց, որը նախատեսում էր անցումային կառավարության ստեղծում և ընտրությունների անցկացում: Ռուանդայի և ՌՀՃ-ի խնդրանքով 1993թ. Անվտանգության խորհուրդը հիմնեց Միավորված ազգերի կազմակերպության օգնության առաքելությունը Ռուանդայի համար (ՕԱՌ), որի նպատակն էր օգնել կողմերին կյանքի կոչելու համաձայնագիրը: Սակայն անցումային կառավարության

այդպես էլ չստեղծվեց:

1994թ. ապրիլին Ռուանդայի և Բուրունդիի նախագահներն սպանվեցին Տանզանիայի խաղաղության բանակցություններից վերադառնալիս, նրանց օդանավը գնդակոծվեց Ռուանդայի մայրաքաղաք Կիգալիի օդակայանում վայրէջք կատարելու պահին: Դրան հետևեց սպանությունների աննախադեպ չափերը, որոնց առաջին զոհերի թվում էին վարչապետը, տարբեր նախարարներ և ՕԱՌ-ի խաղաղապահները: Տուտսիների ու չափավոր հուտուների դեմ ուղղված սպանություններն հիմնականում կատարվում էին հուտուների գերիշխանության ներքո գտնվող բանակի և միլիցիայի կողմից:

ՕԱՌ-ն ապարդյուն փորձում էր հրադադար հաստատել՝ հսկայական թիրախ դարձնելով իր անձնակազմը: Այն բանից հետո, երբ որոշ երկրներ միակողմանիորեն հանեցին իրենց զորախմբերը, Անվտանգության խորհուրդը ապրիլին ՕԱՌ-ի թվաքանակը 2548-ից կրճատեց 270-ի: Չնայած դրան՝ ՕԱՌ-ին հաջողվեց ապաստան տալ հազարավոր ռուանդացիների:

Մայիսին Անվտանգության խորհուրդը զենքի էմբարգո սահմանեց Ռուանդայի հանդեպ և ՕԱՌ-ի անձնակազմը հասցրեց 5500-ի: Սակայն 6 ամիս պահանջվեց անդամ պետություններից այդ թիվը լրացնելու համար:

Հուլիսին ՌՀՃ-ի ուժերը վերահսկողության տակ առան Ռուանդան՝ վերջ տալով պատերազմին և ձևավորելով բազմակողմ կառավարություն: 7.9 միլիոնանոց ազգաբնակչությունից 800 հազարը սպանվել էր, 2 միլիոնը փախել էր այլ երկրներ, իսկ ավելի քան 2 միլիոնը՝ մնացել անօթևան: ՄԱԿ-ի մարդասիրական կոչի արդյունքում հավաքվեց 762 մլն ԱՄՆ դոլար, ինչը թույլ տվեց հաղթահարել մարդասիրական այդ փիթխարի մարտահրավերը:

Անվտանգության խորհրդի կողմից հաստատված փորձագետների հանձնաժողովը սեպտեմբերին զեկուցեց, որ «բազմաթիվ փաստեր» կան, որոնք վկայում են, որ հուտու ծագում ունեցող տարրերը ցեղասպանություն են իրականացրել տուտսի ցեղախմբի նկատմամբ: Նոյեմբերին Անվտանգության խորհուրդը ստեղծեց Ռուանդայի հարցերով միջազգային տրիբունալ՝ ցեղասպանության և պատերազմական ոճիրների մեղավորներին պատասխանատվության կանչելու համար:

Մինչ այդ ռուանդական փախստականները վերադարձան երկիր, ընդ որում, հուտուներից շատերն ապաստան գտան Արևելյան Զաիրում, ներառյալ ցեղասպանության համար մեղավոր տարրերը: Այնտեղից նրանք շարունակեցին ապակայունացնել Արևմտյան Ռուանդան:

Ռուանդայի խնդրանքով, Անվտանգության խորհուրդը 1996թ. դադարեցրեց ՕԱՌ-ի մանդատը: Միավորված ազգերի կազմակերպության գործակալությունները շարունակեցին մարդասիրական օգնության մատակարարումն ու փախստականների վերադարձի կազմակերպումը:

1999թ. Գլխավոր քարտուղարն ընդունեց Շվեդիայի նախկին վարչապետ Ինգվար Կառլսոնի ղեկավարությամբ կատարված անկախ հետաքննության արդյունքները, որը նախաձեռնվել էր քննելու համար ցեղասպանության ընթացքում ՄԱԿ-ի գործողությունները: Կոմիսիան գտավ, որ ցեղասպանության չկանխման մեղքն ընկնում է նաև Միավորված ազգերի Կազմակերպության

քարտուղարության, Անվտանգության խորհրդի և անդամ պետությունների վրա: Գլխավոր քարտուղարը խոր ափսոսանք հայտնեց ՍԱԿ-ի տվյալ ձախողման համար և վերահաստատեց իր համոզմունքը՝ անել ամեն ինչ զանգվածային նախճիրներն այլևս թույլ չտալու համար:

**Բուրունդի:** Բուրունդիում Միավորված ազգերի կազմակերպության գրասենյակը երկրում ծագած ճգնաժամի կարգավորման միջազգային ջանքերի մասնակիցը դարձավ: Այնտեղ հին պատմություն ունեցող ներքին առճակատումը 1993թ. հանգեցրեց հեղաշրջման փորձի, որի ժամանակ սպանվեցին ժողովրդավարորեն ընտրված, ազգությամբ հութու առաջին նախագահը և 6 նախարարներ: Դրան հետևած պատերազմը հաջորդ 3 տարիների ընթացքում ավելի քան 150 հազար մարդու կյանք խլեց:

1996թ. կառավարությունն ու նախագահը, որոնք նշանակվել էին 1994թ. հութու մեծամասնության և տուտսի փոքրամասնության միջև համաձայնությամբ, գահընկեց արվեցին տուտսիների առաջնորդած մի զինված խմբի կողմից: Անվտանգության խորհուրդը դատապարտեց հեղաշրջումը և զինվորական ղեկավարներին կոչ արեց վերականգնել սահմանադրական կարգը: Նոր կառավարության և ապստամբների միջև բանակցությունները խրախուսելու և սահմանադրական կարգը վերականգնելու նպատակով հարևան երկրները տնտեսական էմբարգո սահմանեցին Բուրունդիի նկատմամբ: Սակայն մարտերը գլխավորապես տուտսիներից կազմված բանակի և հութու ապստամբների միջև շարունակվեցին՝ հանգեցնելով մարդկանց զանգվածային տեղահանման: 1996-1997թթ. շուրջ 500 հազար մարդ, որպես անվտանգության միջոցառում, բռնի փոխադրվեց «վերախմբավորման ճամբարներ», իսկ ևս 300 հազար մարդ փախավ Տանզանիա՝ խուսափելով շարունակվող բռնություններից:

1996թ. Տանզանիայի նախկին նախագահ Ջուլիուս Նիերերեն միջազգային հանրության գործուն աջակցությամբ սկսեց միջնորդության ջանքեր գործադրել: 1998թ. տուտսիների և հութուների միջև քաղաքական գործընկերություն նախատեսող նոր անցումային սահմանադրություն ընդունվեց և անցման Ազգային ժողով ձևավորվեց: Հակամարտության կողմերը պայմանավորվեցին հրադադարի մասին: 1999թ. հարևան երկրները առկախեցին տնտեսական պատժամիջոցները:

Պրն Նիերերեի մահվանից հետո՝ 2000թ., Հարավային Աֆրիկայի նախկին նախագահ Նելսոն Մանդելան փոխարինեց նրան՝ որպես Բուրունդիում խաղաղության միջնորդի: Անվտանգության խորհրդի ուժեղ աջակցությունը վայելող նրա դիվանագիտական ջանքերը հանգեցրին 2000թ. օգոստոսին Տանզանիայում՝ Արուշայում կնքված խաղաղության և հաշտության մասին համաձայնագրին: Ողջունելով համաձայնագիրը՝ Անվտանգության խորհուրդը խաղաղության գործընթացից դուրս մնացած կողմերին կոչ արեց լիարժեք մասնակցություն բերել գործընթացին:

**Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն:** Ռուանդայի 1994թ. նախճիրից և այնտեղ նոր կառավարության հաստատումից հետո շուրջ 1,2 մլն ռուան-

դական հատումներ, ներառյալ ցեղասպանությանը մասնակցած տարրերը, փախան Արևելյան Զաիրի Կիվու գավառ, որը, ի թիվս այլոց, բնակեցված էր նաև տուտսիներով: 1996թ. այնտեղ նախագահ Մոբուտու Սեսե Սեկոյի կառավարական բանակի դեմ ապստամբություն սկսվեց, որը գլխավորում էր Լորան Դեզիրե Կաբիլան: Զաիրի/Կոնգոյի ազատագրման ժողովրդավարական ուժերի Կաբիլայի դաշինքը (ԱԺՈՒԴ) Ռուանդայի և Ուգանդայի օգնությամբ 1997թ. գրավեց մայրաքաղաք Կինշասան՝ հռչակելով Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն: Քաղաքացիական պատերազմի հետևանքով ավելի քան 450 հազար մարդ փախստական դարձավ կամ մնաց անօթևան:

1998թ. Կիվուում ապստամբություն սկսվեց Կաբիլայի կառավարության դեմ, և մի քանի շաբաթվա ընթացքում ապստամբները գրավեցին երկրի մեծ մասը: Անգոլան, Չադը, Քենիան, Նամիբիան և Զիմբաբվեն նախագահ Կաբիլային ռազմական օգնություն խոստացան: Անգոլական բանակը բազմաթիվ քաղաքներ հետ գրավեց երկրի հարավ-արևմուտքում, իսկ ապստամբների առաջխաղացումը դեպի Կինշասա կասեցվեց Անգոլայի, Նամիբիայի ու Զիմբաբվեի զորքերի կողմից: Սակայն ապստամբները պահեցին իրենց դիրքերն արևելյան շրջաններում: Ապստամբական շարժումը՝ Կոնգոյի ժողովրդավարական միությունը (ԿԺՄ), վայելում էր Ռուանդայի և Ուգանդայի աջակցությունը: Անվտանգության խորհուրդը հրադադարի և օտարերկրյա ուժերի դուրսբերման կոչ արեց՝ հորդորելով չմիջամտել երկրի ներքին գործերին: Ուգանդան 1999թ. ապրիլին Կաբիլայի կառավարության հետ խաղաղության համաձայնագիր ստորագրեց, իսկ մայիսին ԿԺՄ-ն պառակտվեց երկու մասի:

Գլխավոր քարտուղարի, Աֆրիկյան միասնության կազմակերպության և Հարավաֆրիկյան զարգացման համագործակցության ջանքերը 1999թ. հուլիսին հանգեցրին Լուսակայի հրադադարի մասին համաձայնագրին: Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության կողմից Անգոլայի, Նամիբիայի, Ռուանդայի, Ուգանդայի և Զիմբաբվեի հետ համատեղ ստորագրվելով՝ այդ համաձայնագիրը նախատեսում էր ռազմական գործողությունների դադարեցում ու համակողմանի երկխոսության սկիզբ: Երկու ապստամբ խմբերն այն ստորագրեցին օգոստոսին: Համաձայնագրի կենսագործմանն օժանդակելու նպատակով խորհուրդն օգոստոսին թույլատրեց Միավորված ազգերի կազմակերպության՝ թվով 90 փոխգործողության կապ հաստատող ռազմական սպաների մուտքը երկրի ռազմավարական շրջաններ ու ստորագրած երկրների մայրաքաղաքներ:

Կողմերի հետ կապ պահպանելու, համաձայնագրի իրագործմանը նպաստելու և անվտանգության պայմանները վերահսկելու նպատակով Անվտանգության խորհուրդը նոյեմբերին հիմնեց **Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում Միավորված ազգերի կազմակերպության առաքելությունը (ՄԱԴԱԿ)**՝ ներգրավելով նախկինում թույլատրված անձնակազմը: 2000թ. փետրվարին խորհուրդն ընդարձակեց առաքելության չափերն ու լիազորությունները, որն այլևս վերահսկողություն պետք է սահմաներ հրադադարի նկատմամբ, նպաստեր զինաթափմանն ու զորացրմանը, աջակցեր Աֆրիկյան միասնության կազմակերպության նշանակած Ազգային երկխոսության միջնորդին: Խորհուրդը ՄԱԴԱԿ-ին թույլատրեց բռնության վերահաս սպառնալիքի դեպքում ուժ կի-

բանել առաքելության անձնակազմին ու քաղաքացիական բնակչությանը պաշտպանելու նպատակով և խաղաղապահության պայմաններ ստեղծեց առաքելության անձնակազմի թվաքանակը նախատեսված 5500-ին հասցնելու համար: Մարտերի շարունակումն առայժմ խոչընդոտում է լիակատար ծավալումն ու սահմանափակում տեղում ռազմական դիտորդների գործունեությունը:

**Կոնգոյի Հանրապետություն:** 1997թ. հուլիսին նշանակված նախագահական ընտրություններից առաջ նախկին նախագահ Դենիս Սասու-Նգեսոյի զինված կողմնակիցներին զինաթափելու կառավարության փորձերից էլ ավելի սաստկացած պառակտիչ լարումը վերաճեց Սասու-Նգեսոյի կողմնակիցների և կառավարական ուժերի ու գործող նախագահ Պասկալ Լիսուբային հավատարիմ ջոկատների միջև բացահայտ մարտերի: Անվտանգության խորհուրդը կոչ արեց վերջ տալ բռնություններին և բանակցություններ սկսեց ճգնաժամի լուծման ուղիների շուրջ:

ԱՄԿ/ՄԱԿ-ի միացյալ հատուկ ներկայացուցչի օժանդակությամբ Գաբոնի նախագահ Օմար Բոնգոյի նախաձեռնած միջնորդական ջանքերի արդյունքում խնդրանք ներկայացվեց երկրում խաղաղապահ գործողություն իրականացնելու վերաբերյալ: Գլխավոր քարտուղարը առաքելություն ուղարկեց այդ գործողության եղանակները գնահատելու համար: Քառամսյա մարտերից հետո պրն Սասու-Նգեսուն վերցրեց իշխանությունը:

Այդ ընթացքում Միավորված ազգերի կազմակերպությունը 17,7 մլն դոլարի դրամահավաքի կոչ արեց քաղաքացիական պատերազմի հետևանքով տեղահանված 650 հազար քաղաքացիների կարիքները հոգալու համար: 1999թ. խաղաղության համաձայնագրի ստորագրումն ու անվտանգության բարվոք պայմանների առկայությունը հարյուր հազարավոր մարդկանց հնարավորություն տվեցին վերադառնալու հարազատ օջախներ:

**Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն:** Երկրի զինված ուժերում սկիզբ առած խռովությունից հետո բազմաթիվ աֆրիկյան պետություններ ձևավորեցին Միջազգային միջնորդական կոմիտե, որի շնորհիվ կնքվեցին 1997թ. Բանգիի համաձայնագրերը խռովարարների ու կառավարության միջև: Խաղաղության համաձայնագրերն ամրագրեցին ազգային հաշտեցման սկզբունքները՝ նախատեսելով համաներման մասին օրենք և զինաթափում: Այդ համաձայնագրերի իրականացումը դյուրացնելու և անվտանգությունն ապահովելու նպատակով աֆրիկյան երկրներն ուղարկեցին միջաֆրիկյան ուժեր:

Անվտանգության խորհուրդը 1998թ. ստեղծեց Միավորված ազգերի կազմակերպության առաքելությունը Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությունում (ՄԱԱԿԱՀ), որը փոխարինեց միջաֆրիկյան ուժերին և նպաստեց խաղաղության և անվտանգության պահպանմանը, երկխոսության հաստատմանն ու ազատ և արդար ընտրությունների համար բարենպաստ մթնոլորտի ստեղծմանը:

ՄԱԱԿԱՀ-ի ընտրական կոմիտեն իր ներկայությունը հաստատեց ողջ երկրում և վերահսկողություն իրականացրեց օրենսդիր մարմնի ընտրությունների (1998թ.) և նախագահական ընտրությունների (1999թ.) նկատմամբ, որոնք կա-

յացած առանց լուրջ միջադեպերի: ՄԱԱԿԱՀ-ն նաև դեր խաղաց օրինականության հաստատման և ընտրական նյութերի տրամադրման գործում: Ընտրությունները, որոնց արդյունքում նախագահ վերընտրվեց Անժ-Ֆելիքս Պատասեն, կարևորագույն քայլ էին դեպի ազգային հաշտեցումը Բանգիի համաձայնագրերի շրջանակներում: ՄԱԱԿԱՀ-ն օժանդակեց անցմանը մինչև 2000թ. իր մանդատի ավարտը: Խաղաղությունն ու հաշտեցումն ամրապնդելու, ժողովրդավարական կառույցներին սատարելու և վերականգնման համար միջոցների հավաքման ջանքերին աջակցելու նպատակով Միավորված ազգերի կազմակերպությունը հիմնեց Խաղաղության աջակցության գրասենյակ (ԽԱԳ):

## Արևմտյան Աֆրիկա

**Սիեռա Լեոնե:** Միավորված ազգերի կազմակերպությունը Սիեռա Լեոնեում ներգրավվեց 1995թ., երբ Գլխավոր քարտուղարը պրն Բերհանու Դինկային հատուկ պատվիրակ նշանակեց քաղաքացիական պատերազմում միջնորդություն իրականացնելու համար: 1991թ. Միացյալ հեղափոխական ճակատի (ՄՀՃ) մարտիկները կառավարությունը տապալելու նպատակով երկրի արևելքից պատերազմ սկսեցին: Նիգերիական ու գվինեական ուժերի աջակցությամբ Սիեռա Լեոնեի բանակը նախ փորձեց պաշտպանել կառավարությանը, բայց 1992թ. բանակն ինքը տապալեց կառավարությանը: Չնայած իշխանության փոփոխությանը՝ ՄՀՃ-ն շարունակեց հարձակումները:

Հատուկ պատվիրակը ԱԿՄ-ի և Արևմտաաֆրիկյան պետությունների տնտեսական համագործակցության (ԱՊՏՀ) հետ համատեղ բանակցություններ վարեց կարգավորման և քաղաքացիական կառավարում հաստատելու նպատակով: 1996թ. ընտրություններ կայացան, և բանակը իշխանությունը հանձնեց հաղթողին՝ Ահմեդ Թեջան Քաբբահին: Սակայն ՄՀՃ-ն չմասնակցեց ընտրություններին և շարունակեց ռազմական գործողությունները:

Հատուկ պատվիրակը օժանդակեց կառավարության և ՄՀՃ-ի միջև 1996թ. Աբիջանի խաղաղության բանակցություններին: Սակայն դրանք վիժեցվեցին 1997թ. զինվորական հեղաշրջմամբ, երբ բանակը միացավ ՄՀՃ-ին՝ կազմելով իշխանական խունտա: Նախագահ Քաբբահն ու իր կառավարությունն աքսորվեցին Գվինեա: Անվտանգության խորհուրդը զենքի և նավթի էմբարգո սահմանեց և արտոնեց ԱՊՏՀ-ին իրականացնելու այն՝ օգտագործելով ԱՊՏՀ-ի վերահսկողական խմբի զորքերը (ՏՀՎԽԶ):

1998թ., ի պատասխան խունտայի կողմնակիցների հարձակմանը, ՏՀՎԽԶ-ն գրոհ ձեռնարկեց՝ հանգեցնելով խունտայի տապալմանը: Նախագահ Քաբբահը վերադարձավ իր պաշտոնին, իսկ Անվտանգության խորհուրդը դադարեցրեց էմբարգոն: Հունիսին խորհուրդը հիմնեց ՍԱԿ-ի դիտորդական առաքելությունը Սիեռա Լեոնեում (ԴԱՍԼ): Այն գլխավորում էր Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Ֆրենսիս Օքելոն, որը վերահսկողություն էր իրականացնում և ջանքեր գործադրում մարտիկների զինաթափման ու անվտանգության ուժերի վերակառուցման համար: ԴԱՍԼ-ի անզեն ուժերը ՏՀՎԽԶ-ի պաշտպանու-

թյամբ վավերացրին քաղաքացիական բնակչության դեմ կատարված դաժանությունների ու մարդու իրավունքների խախտումները:

Մարտերը շարունակվեցին, որոնց արդյունքում ապստամբների դաշինքը կարողացավ վերահսկողության տակ առնել երկրի կեսից ավելին: Ֆրիթաունի՝ մայրաքաղաքի վերագրավման գրոհի ժամանակ 1999թ. հունվարին դաշինքը հետ վերցրեց քաղաքի մեծ մասը: ԴԱՍԼ-ի ողջ անձնակազմը տարհանվեց, սակայն հատուկ ներկայացուցիչն ու գլխավոր ռազմական դիտորդը շարունակեցին կատարել իրենց պարտականությունները՝ կապ պահպանելով բոլոր կողմերի հետ և վերահսկելով իրավիճակը: Ավելի ուշ այդ ամսին ՏՀՎԽԶ-ի զորքերը վերագրավեցին Ֆրիթաունը և վերահաստատեցին քաղաքացիական կառավարությունը: Պատերազմը պատճառ դարձավ շուրջ 700 հազար անձանց տեղահանման և 450 հազար փախստականների տեղափոխմանը հարևան երկրներ:

Հատուկ ներկայացուցիչը, խորհրդակցելով արևմտաաֆրիկյան պետությունների հետ, ապստամբների հետ երկխոսություն սկսելու դիվանագիտական ջանքեր ձեռնարկեց: Կառավարության և ապստամբների միջև բանակցությունները հուլիսին հանգեցրին Լոմեի խաղաղության համաձայնագրի ստորագրմանը, որով վերջ էր տրվում պատերազմին և ձևավորվում էր ազգային միասնության կառավարություն:

Հոկտեմբերին Անվտանգության Խորհուրդը որոշեց ԴԱՍԼ-ն փոխարինել ավելի մեծ առաքելությամբ՝ **Սիերա Լեոնեում Միավորված ազգերի կազմակերպության առաքելությամբ (ՄԱԱՍԼ)**՝ որի նպատակն էր օգնել կողմերին կյանքի կոչելու համաձայնագիրը և նպաստելու զինաթափմանն ու ենթադրյալ 45 հազար մարտիկների զորացրմանն ու քաղաքացիականացմանը: 2000թ. փետրվարին՝ ՏՀՎԽԶ-ի զորքերի դուրսբերման մասին հայտարարությունից հետո, Անվտանգության Խորհուրդն ավելացրեց ՄԱԱՍԼ-ի թվաքանակը՝ հասցնելով 11 հազարի:

Բայց ապրիլին ՄՀՃ-ի անդամները գրոհ ձեռնարկեցին ՄԱԿ-ի ուժերի վրա: 4 խաղաղապահ սպանվեց, և ՄԱԿ-ի անձնակազմից մոտ 500 հոգի պատանդ վերցվեց վերսկսված մարտերի ժամանակ: Մայիսին ՄՀՃ-ի առաջնորդ Ֆոդեյ Սանկոհը ձերբակալվեց կառավարության կողմից, և մինչև ամսի վերջը պատանդների մոտ կեսն ազատ արձակվեց: Անվտանգության խորհուրդը ՄԱԱՍԼ-ի թվաքանակը հասցրեց 13 հազարի, որպեսզի կարողանա օգնել խաղաղության վերականգնմանը: Հուլիսին ՄԱԱՍԼ-ն ձեռնարկեց փրկարարական գործողություն՝ անվնաս կերպով ազատելով մնացած պատանդներին:

Օգոստոսին Անվտանգության խորհուրդն սկսեց հատուկ դատարանի կազմակերպման գործընթացը պատերազմի հանցագործներին պատասխանատվության ենթարկելու համար: Հոկտեմբերին Անվտանգության խորհրդի պատվիրակության Սիերա Լեոնե այցից հետո խորհուրդը երկրի համար ընդհանուր ռազմավարության համադրման նպատակով հանձնարարեց մեխանիզմներ մշակել, ներառյալ Միավորված ազգերի կազմակերպությունը, մայրաքաղաքի կառավարությունը, անդամ պետություններն ու ԱՊՏՀ-ն:

**Գվինեա Բիսաու:** 1998թ. հունիսին Գվինեա Բիսաուում մարտեր սկսվեցին կառավարության ուժերի և ապստամբների միջև այն բանից հետո, երբ բանակի

շտաբի հրամանատարը Սենեգալի անջատողական շարժմանը մաքսանենգ ճանապարհով զենք մատակարարելու մեղադրանքով ազատվեց պաշտոնից: Կառավարության խնդրանքով Գվինեան և Սենեգալը զորքեր ուղարկեցին Նախագահ Խոաո Բեռնարդո Վիեյրային հավատարիմ կառավարական ուժերին օգնելու համար: Գլխավոր քարտուղարը դատապարտեց ռազմական առճակատումը, իսկ Անվտանգության խորհուրդը խռովարարներին կոչ արեց վայր դնել զենքերը և վերականգնել սահմանադրական կարգը: ԱՊՏՀ-ն և Պորտուգալախոս երկրների համագործակցությունը (ՊԵՀ) միջոցներ ձեռնարկեցին ճգնաժամը վերացնելու համար:

Հուլիսին ՊԵՀ-ի հովանու ներքո ընթացած բանակցությունները հանգեցրին փոխըմբռնման հուշագրի ստորագրմանը: Գլխավոր քարտուղարը վերստին կոչ արեց վերադառնալ սահմանադրական կարգին, իսկ Միավորված ազգերի կազմակերպությունը 28 մլն դոլարի դրամահավաքի նախաձեռնություն հանդես բերեց շուրջ 350 հազար տեղահանվածներին օժանդակելու համար:

Նոյեմբերին կառավարությունն ու ռազմական խունտան համաձայնության եկան Աբուջայում՝ Նիգերիայում, նախատեսելով ազգային միասնության կառավարության ստեղծումն ու ընտրությունների անցկացումը, ինչպես նաև օտար ուժերի դուրսբերումն ու ՏՀՎԽԶ-ի բաժանարար ուժերի տեղակայումը: Անվտանգության խորհուրդը ողջունեց այդ համաձայնագիրը՝ համարելով այն դեպի ազգային համաձայնություն տանող քայլ:

1999թ. փետրվարին ազգային միասնության կառավարություն ձևավորվեց, իսկ մարտին, խաղաղության համաձայնագրին համապատասխան, դուրս բերվեցին Գվինեայի և Սենեգալի զորքերը: Ապրիլին Միավորված ազգերի կազմակերպությունը հիմնեց Խաղաղության աջակցության գրասենյակը՝ նպաստելու հաշտեցմանն ու ժողովրդավարական կառույցների ամրապնդմանը: Գրասենյակն օժանդակեց դատական համակարգի կայացմանը, դատավարությունների արագացմանն ու կանանց իրավունքների պաշտպանությանը: Սակայն ընտրություններ տեղի չունեցան, իսկ խաղաղության համաձայնագիրը խափանվեց մայիսին: Մարտերը վերսկսվեցին և ապստամբները գահընկեց արեցին նախագահ Վիեյրային:

1999թ. նոյեմբերի և 2000թ. հունվարի ընտրություններից հետո փետրվարին նոր կառավարություն ձևավորվեց և ստեղծվեց նոր Ազգային ժողով: Նոր նախագահը՝ պրն Կումբա Յալան, 5 նախարարական տեղ առաջարկեց նախկին ռազմական խունտայի անդամներին: Միավորված ազգերի կազմակերպության աջակցության գրասենյակը շարունակեց օգնել նոր կառավարությանը անցումային շրջանում:

## Եթովպիա-Էրիթրեա

1991թ. Եթովպիայում զինվորական կառավարության տապալումից հետո Էրիթրեայի ժողովրդի ազատագրության ճակատը (ԷԺԱՃ) հայտարարեց ժամանակավոր կառավարություն ձևավորելու և Եթովպիայի նկատմամբ Էրիթրեայի կարգավիճակի վերաբերյալ հանրաքվե անցկացնելու մասին: Հանրաքվեի

հանձնաժողովի ղեկավարը 1992թ. Միավորված ազգերի կազմակերպության դիտորդական առաքելությանը հրավիրեց ստուգելու Էրիթրեայի հանրաքվեն, և առաքելությունը հետևեց 1993թ. հանրաքվեի կազմակերպմանն ու անցկացմանը:

Ընտրողների 99%-ն արտահայտվեց անկախության օգտին, շատ չանցած Էրիթրեան անկախություն հռչակեց՝ անդամակցելով Միավորված ազգերի կազմակերպությանը:

1998թ. մարտեր սկսվեցին Էրիթրեայի և Եթովպիայի միջև վիճահարույց սահմանային տարածքների համար: Անվտանգության Խորհուրդը պահանջեց դադարեցնել ռազմական գործողությունները՝ տեխնիկական օգնություն առաջարկելով սահմանազատման և սահմանագծման հարցերում: Գլխավոր քարտուղարը կոչ արեց վերջ տալ ռազմական գործողություններին, որպեսզի Միացյալ Նահանգներին ու Ռուանդային միջնորդական ջանքեր գործադրելու հնարավորություն տրվի: ՄԱԿ-ը հետագայում միջնորդական ջանքերում առաջատարի դեր ստանձնեց:

2000թ. մայիսին Անվտանգության խորհուրդը զենքի էմբարգո սահմանեց երկու երկրների նկատմամբ: Հունիսին Ալժիրում մարտական գործողությունների դադարեցման մասին համաձայնագիր ստորագրվեց: Համաձայնագրի իրականացմանն օժանդակելու նպատակով Անվտանգության խորհուրդը հուլիսին ստեղծեց **ՄԱԿ-ի առաքելությունը Եթովպիայում և Էրիթրեայում (ՄԱԵԷ)**՝ նախատեսելով ռազմական դիտորդների և հետևակային մարտկոցների ծավալումը սահմանի երկայնքով: Սեպտեմբերին Անվտանգության խորհուրդը մարտական գործողությունների դադարեցումը վերահսկելու և անվտանգության առումով երկու երկրների ստանձնած հանձնառությունների կատարումն ստուգելու նպատակով թույլատրեց մինչև 4420 մարդուց բաղկացած ուժերի տեղակայումը :

## Լատինամերիկյան և Կարիբյան ավազանի երկրներ

1998թ. Գլխավոր քարտուղարը զեկուցեց, որ վերջին տասնամյակների ընթացքում առաջին անգամ Կենտրոնական Ամերիկայի երկրներից և ոչ մեկը ներքին բախումների զոհ չի դարձել: Միավորված ազգերի կազմակերպությունն իր բազմազան և հաջողված գործողությունների շնորհիվ էական դեր է խաղացել տարածաշրջանում խաղաղություն հաստատելու գործում:

Միավորված ազգերի կազմակերպությունը Կենտրոնական Ամերիկայում ներգրավվեց 1989թ., երբ Կոստա Ռիկան, Էլ Սալվադորը, Գվատեմալան, Հոնդուրասը և Նիկարագուան օգնություն խնդրեցին տարածաշրջանում մոլեգնող հակամարտություններին վերջ տալուն միտված հավաքական համաձայնագրի մշակման, ժողովրդավարական ընտրությունների անցկացման և ժողովրդավարության ու երկխոսության հետամուտ լինելու հարցերում:

Անվտանգության խորհուրդը Կենտրոնական Ամերիկայում հիմնեց ՄԱԿ-ի դիտորդական խումբը (ԿԱԴԽ), որը ծավալվեց բոլոր 5 երկրներում՝ հետևելու,

որպեսզի նրանք օգնություն չցուցաբերեն չվերահսկվող ապստամբ ուժերին և թույլ չտան, որ իրենց երկրների տարածքն օգտագործվի այլ երկրների վրա հարձակումների համար:

**Նիկարագուա:** 5 երկրները նաև համաձայնվեցին կազմել Նիկարագուայի դիմադրության մարտիկների՝ այսպես կոչված «կոնտրաների» զորացրման պլանը: Նիկարագուան հայտարարեց, որ ընտրություններն անցկացնելու է միջազգային և Միավորված ազգերի կազմակերպության վերահսկողության ներքո: Նիկարագուայի խնդրանքով, Նիկարագուայում ընտրությունների վերահսկողության ՄԱԿ-ի առաքելությունը (ՆԸՎԱ) հետևեց 1990թ. ընտրությունների կազմակերպմանն ու անցկացմանը, որոնք որևէ անկախ երկրում երբևիցե ՄԱԿ-ի վերահսկողությամբ անցկացվող առաջին ընտրություններն էին:

ՆԸՎԱ-ի հաջողությունը օգնեց «կոնտրաների» կամավոր զորացրման համար պայմաններ ստեղծելուն: ԿԱԴԽ-ն Անվտանգության խորհրդի որոշմամբ 1990թ. վերահսկեց զորացրումը Հոնդուրասում և Նիկարագուայում, որտեղ շուրջ 22 հազար «կոնտրաներ» իրենց զենքերը հանձնեցին ՄԱԿ-ի դիտորդներին: ԿԱԴԽ-ն Կենտրոնական Ամերիկայում մնաց մինչև 1992թ.:

**Էլ Սալվադոր:** Այդ ընթացքում կառավարության և Ֆարաբունդո Մարտիի ազգային ազատագրության ճակատի խնդրանքով Գլխավոր քարտուղարը նպաստեց Էլ Սալվադորում քաղաքացիական պատերազմի դադարեցման բանակցությունների ընթացքին: 1990թ. ձեռք բերված առաջին մեծ համաձայնությունը վերահսկելու նպատակով Անվտանգության խորհուրդը հիմնեց ՄԱԿ-ի դիտորդական առաքելությունը Էլ Սալվադորում (ԴԱԷՍ):

Գլխավոր քարտուղարի և նրա անձնական պատվիրակի միջնորդությամբ կայացած բանակցությունները հանգեցրին 1992թ. խաղաղության մասին համաձայնագրին, որով վերջ տրվեց շուրջ 75 հազար կյանք խլած 12-ամյա հակամարտությանը: ՄԱԿ-ի պատմության մեջ ամենահամապարփակներից մեկը հանդիսացած այդ գործողության ընթացքում ԴԱԷՍ-ը վերահսկողություն էր իրականացնում համաձայնագրերի կատարման նկատմամբ, ստուգում էր մարտիկների զորացրումը և մարդու իրավունքների պաշտպանության առումով կողմերի ստանձնած հանձնառությունների կատարումը:

ԴԱԷՍ-ը նաև օգնում էր կյանքի կոչել այնպիսի բարեփոխումներ, որոնք անհրաժեշտ էին քաղաքացիական պատերազմի խորքային պատճառները վերացնելու համար, այն է՝ դատական բարեփոխումներ, նոր քաղաքացիական ոստիկանության ձևավորում և հողի փոխանցում նախկին մարտիկներին ու հողատերերին: Կառավարության խնդրանքով ԴԱԷՍ-ը հետևեց նաև 1994թ. ընտրություններին: Նրա լիազորությունները սպառվեցին 1995թ.:

**Գվատեմալա:** Գվատեմալայի կառավարության և Գվատեմալայի ազգային հեղափոխական միության (ԳԱՀՄ) խնդրանքով 1991 թվականից ՄԱԿ-ը հետևում էր այն քաղաքացիական պատերազմի դադարեցմանը միտված բանակցություններին, որը տևեց ավելի քան 3 տասնամյակ և հանգեցրեց մոտ 200

հազար մարդու մահվանն ու անհետ կորստյանը:

1994թ. կողմերը պայմանավորվածության եկան, ըստ որի Միավորված ազգերի կազմակերպությունը պետք է ստուգեր կնքված բոլոր համաձայնագրերի կատարումը, ինչպես նաև մարդու իրավունքների առաքելություն հիմներ: Գլխավոր ասամբլեան հիմնեց **ՄԱԿ-ի մարդու իրավունքների վերստուգիչ առաքելությունը Գվատեմալայում (ՄԻՎԱԳ):**

Միավորված ազգերի կազմակերպության միջնորդությամբ ընթացած բանակցությունները հանգեցրին բազմաթիվ այլ համաձայնագրերի քաղաքական, սոցիալական և մարդու իրավունքների հարցերի վերաբերյալ: 1996թ. ձեռք բերվեց հրադադար, և ի վերջո կողմերն ստորագրեցին խաղաղության համաձայնագիր, որով վերջ տրվեց Կենտրոնական Ամերիկայի պատմության մեջ ամենատևական հակամարտությանը: Վերջին 36 տարիների ընթացքում առաջին անգամ տարածաշրջանը խաղաղություն ապրեց:

1997թ. ՄԻՎԱԳ-ին կից ռազմական դիտորդների խումբը վերահսկողություն իրականացրեց ԳԱՀՄ-ի ուժերի զորացրման նկատմամբ: ՄԻՎԱԳ-ը մնաց երկրում հետևելու համար համաձայնության կենսագործման ընթացքին, մինչդեռ Միավորված ազգերի կազմակերպության գործակալությունները շարունակում էին վերացնել տարածաշրջանում մոլեգնող հակամարտությունների տնտեսական և սոցիալական արմատները:

**Հայիթի:** 1990թ. «ցմահ նախագահ» Ժան-Կլոդ Դյուվալյեի պաշտոնաթողությունից և կարճատև կյանք ունեցած մի շարք կառավարությունների հրաժարականից հետո Հայիթիի ժամանակավոր կառավարությունը Միավորված ազգերի կազմակերպությանը խնդրեց դիտորդներ ուղարկել այդ տարվա ընտրությունների համար: Հայիթիում ընտրությունների վերահսկողության ՄԱԿ-ի դիտորդական խումբը (ՀԸՎԴԽ) հետևեց ընտրությունների կազմակերպմանն ու անցկացմանը, որոնց արդյունքում նախագահ ընտրվեց պրն Ժան-Բեռտրան Արիստիդը:

Սակայն 1991թ. զինվորական հեղաշրջումը ընդհատեց ժողովրդավարական կառավարումը, իսկ նախագահը աքսորվեց: Ամերիկյան պետությունների կազմակերպությունը (ԱՊԿ) և ՄԱԿ-ը դատապարտեցին հեղաշրջումը և դիվանագիտական ջանքեր գործադրեցին ժողովրդավարական կառավարման վերականգնման նպատակով: Գլխավոր ասամբլեայի խնդրանքով Գլխավոր քարտուղարը Հայիթիում հատուկ պատվիրակ նշանակեց, որը միաժամանակ հանդիսանում էր նաև ԱՊԿ-ի հատուկ ներկայացուցիչ:

Ի պատասխան իրավիճակի վատթարացմանը՝ ՄԱԿ/ԱՊԿ միացյալ առաքելությունը՝ Հայիթիում միջազգային քաղաքացիական առաքելությունը (ՀՄՔԱ), 1993թ. տեղակայվեց երկրում մարդու իրավունքների վիճակը հսկելու և բռնությունները հետաքննելու համար:

Մինչ հատուկ պատվիրակը բանակցություններ էր վարում զինվորական կառավարության հետ, Անվտանգության խորհուրդը սահմանադրական կարգը վերականգնելու մտահոգությամբ 1993թ. սահմանեց զենքի և նավթի, իսկ 1994թ.՝ նաև առևտրական էմբարգո: Վերջապես 1994թ. Խորհուրդը անդամ պետու-

թյուններին թույլատրեց ձևավորել բազմազգ ուժեր և «բոլոր անհրաժեշտ միջոցները» ձեռնարկել ժողովրդավարական կառավարման վերադարձը դյուրացնելու նպատակով: Այն պահին, երբ նշված ուժերը պատրաստվում էին միջամտել, Միացյալ Նահանգները ու զինվորական կառավարությունը պայմանավորվածություն ձեռք բերեցին հետագա բռնություններից խուսափելու մասին: Միացյալ Նահանգների գլխավորած բազմազգ ուժերը խաղաղ կերպով տեղակայվեցին երկրում, նախագահ Արիստիդը վերադարձավ, իսկ էմբարգոն հանվեց:

Անվտանգության խորհրդի որոշման համաձայն, ՄԱԿ-ի խաղաղապահ առաքելությունը 1995թ. բազմազգ ուժերից ընդունեց նրանց լիազորությունները՝ օգնելով կառավարությանը կարգուկանոնի պահպանման և երկրի առաջին քաղաքացիական ոստիկանության ստեղծման գործում: Այդ ժամանակ ՀՄՔԱ-ն շարունակում էր պայքարել մարդու իրավունքների համար՝ հիմնելով մարդու իրավունքների պաշտպանության ազգային կառույցներ:

Շարունակվող քաղաքական ճգնաժամի պայմաններում Գլխավոր ասամբլեան 2000թ. ստեղծեց նոր խաղաղարար առաքելություն՝ **Հայիթիում քաղաքացիական աջակցության միջազգային առաքելությունը (ՀՔԱՄԱ)**, որին փոխանցվեցին նախորդ խաղաղապահ առաքելությունների և ՀՄՔԱ-ի լիազորությունները: Նրա խնդիրն էր օգնել կառավարությանը ժողովրդավարական հաստատությունների զարգացման հարցում, մասնավորապես մարդու իրավունքների, արդարության և հասարակական անվտանգության ոլորտներում:

# Ասիա

## Մերձավոր Արևելք

Միավորված ազգերի կազմակերպությանը Մերձավոր Արևելքի հարցը մտահոգել է իր գոյության առաջին իսկ օրերից: Նրա կողմից ձևակերպվել են խաղաղ կարգավորման սկզբունքները, կազմակերպվել են զանազան խաղաղապահ գործողություններ, և ջանքեր են գործադրվել առկա քաղաքական խնդիրների արդարացի, տևական ու համապարփակ լուծման նպատակով:

Հարցը ծագել է Պաղեստինի կարգավիճակի առնչությամբ: 1947թ. Պաղեստինը Ազգերի լիգայի մանդատի հիման վրա Միացյալ Թագավորության կողմից կառավարվող տարածք էր: Պաղեստինի բնակչությունը մոտ 2 միլիոն էր, որի երկու երրորդը կազմում էին արաբները, մեկ երրորդը՝ հրեաները: 1947թ. Գլխավոր ասամբլեան հաստատեց Միավորված ազգերի կազմակերպության Պաղեստինի հարցերով հատուկ հանձնաժողովի պատրաստած պլանը տարածքի բաժանման վերաբերյալ. պլանով նախատեսվում էր ստեղծել արաբական և հրեական պետություններ, ընդ որում Երուսաղեմը պետք է ունենար միջազգային կարգավիճակ: Պլանը մերժվեց Պաղեստինի արաբների, արաբական և մի շարք այլ պետությունների կողմից:

1948թ. մայիսի 14-ին Միացյալ Թագավորությունը հանձնեց իր մանդատը,

իրեական գործակալությունը հռչակեց Իսրայելի պետությունը: Հաջորդ օրը Պաղեստինի արաբներն արաբական պետությունների աջակցությամբ մարտական գործողություններ սկսեցին նորաստեղծ պետության դեմ: Մարտական գործողությունները ընդհատվեցին զինադադարի շնորհիվ, որը հաստատվեց Անվտանգության խորհրդի պահանջով և վերահսկվում էր Գլխավոր ասամբլեայի նշանակած միջնորդի կողմից, ընդ որում վերջինիս օգնում էին մի խումբ ռազմական դիտորդներ, որոնք հայտնի էին որպես **ՄԱԿ-ի հրադադարի վերահսկման կազմակերպություն (ՄԱՀՎԿ)**: Դա ՄԱԿ-ի առաջին դիտորդական առաքելությունն էր:

Բախումների հետևանքով շուրջ 750 հազար պաղեստինցի արաբներ կորցրեցին իրենց տներն ու ապրուստը և փախստական դարձան: Նրանց օգնելու նպատակով Գլխավոր ասամբլեան 1949թ. հիմնեց **ՄԱԿ-ի Մերձավոր Արևելքում պաղեստինցի փախստականների օգնության և աշխատանքների գործակալությունը (ՄԱՕԱԳ)**, որն այդ պահից ի վեր հանդիսանում է տարածաշրջանում օգնության հիմնական տրամադրողն ու կայունության գրավականը:

Վերջնական լուծում չստանալով՝ արաբ-իսրայելական բախումները 1956, 1967 և 1973թթ. կրկին հանգեցրեց պատերազմական գործողությունների, որոնցից յուրաքանչյուրն անդամ պետություններին ստիպեց պահանջել Միավորված ազգերի կազմակերպության միջնորդությունն ու խաղաղապահ առաքելությունները: 1956թ. հակամարտությանը հետևեց ՄԱԿ-ի արտակարգ ուժերի (ՄԱԿԱՈՒ) տեղակայումը, որը խաղաղապահ ուժերի առաջին լիարժեք տեղակայումն էր: Նա վերահսկողություն իրականացրեց զորքերի դուրսբերման նկատմամբ և նպաստեց խաղաղությանն ու կայունությանը:

1967թ. պատերազմի ժամանակ մարտերն ընթանում էին մի կողմից Իսրայելի և մյուս կողմից՝ Եգիպտոսի, Հորդանանի ու Սիրիայի միջև: Մարտերի արդյունքում Իսրայելը գրավեց Սինայի թերակղզին, Գազայի հատվածը և Հորդանան գետի արևմտյան ափը, ներառյալ Արևելյան Երուսաղեմն ու սիրիական Գոլանի բարձունքները: Անվտանգության խորհուրդը հրադադարի կոչ արեց, ապա դիտորդներ ուղարկեց՝ վերահսկելու հրադադարը Եգիպտոս-Իսրայել հատվածում:

Խորհուրդը **242 (1967թ.) բանաձևով** սահմանեց արդարացի և տևական խաղաղության սկզբունքները: Դրանք են.

- «վերջին բախումների ընթացքում գրավված տարածքներից իսրայելական զորքերի դուրսբերումը» և
- «ռազմական բնույթի բոլոր պահանջների և իրավիճակների վերացումը և տարածաշրջանի յուրաքանչյուր պետության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության, քաղաքական անկախության, ինչպես նաև ապահով ու հանրորեն ընդունված սահմաններում խաղաղությամբ՝ սպառնալիքներից և բռնությունից զերծ պայմաններում ապրելու նրանց իրավունքի հարգումն ու ճանաչումը»: Բանաձևը նաև հաստատում էր «փախստականների խնդրի արդարացի կարգավորման անհրաժեշտությունը»:

Իսրայելի և Եգիպտոսի ու Սիրիայի միջև 1973թ. պատերազմից հետո Անվտանգության խորհուրդն ընդունեց **338 (1973թ.) բանաձևը,** որը վերահաստա-

տում էր թիվ 242 բանաձևի սկզբունքները և կոչ անում «բանակցություններ սկսել արդարացի ու տևական կարգավորման նպատակով»: Այս բանաձևերը շարունակում են հիմք ծառայել մերձավորարևելյան հակամարտության համապարփակ կարգավորման համար:

1973թ. հրադադարը վերահսկելու նպատակով Անվտանգության խորհուրդը հիմնեց երկու խաղաղապահ ուժեր: Դրանցից մեկը **ՄԱԿ-ի բաժանարար դիտորդական ուժն էր (ՄԱԲԴՈՒ)**, որի նպատակը Իսրայելի ու Սիրիայի միջև ուժերի տարանջատման մասին համաձայնագրի կատարման վերահսկումն էր, այն առայսօր տեղակայված է Գոլանի բարձունքներում: Մյուսը ՄԱԿԱԶ-2-ն էր Սինայի թերակղզում:

Հետագա տարիներին Գլխավոր ասամբլեան ՄԱԿ-ի հովանու ներքո Մերձավոր Արևելքին նվիրված խաղաղության միջազգային կոնֆերանս նախաձեռնեց: 1974թ. Ասամբլեան Պաղեստինի ազատագրության կազմակերպությանը հրավիրեց որպես դիտորդ մասնակցելու կոնֆերանսի աշխատանքներին: 1975թ. նա հիմնեց **Պաղեստինի ժողովրդի անկապտելի իրավունքների կիրառման կոմիտեն:**

Միացյալ Նահանգների միջնորդությամբ Եգիպտոսի և Իսրայելի միջև ընթացած երկկողմ բանակցությունները հանգեցրին Քեմփ Դեյվիդի համաձայնագրին (1978թ.) և Եգիպտոս-Իսրայել խաղաղության դաշնագրին (1979թ.) Իսրայելը դուրս եկավ Սինայից, որը վերադարձվեց Եգիպտոսին: Իսրայելն ու Հորդանանը խաղաղության դաշնագիր ստորագրեցին 1994թ.:

**Լիբանան:** Այդ ընթացքում հարավային Լիբանանը դարձել էր մարտական գործողությունների թատերաբեմ մի կողմից պաղեստինյան ջոկատների, մյուս կողմից՝ իսրայելական ուժերի և լիբանանյան տեղական օժանդակ ուժերի միջև: 1978 թվականին, երբ Իսրայելում պաղեստինյան գրոհայինների ասպատակությունից հետո իսրայելական ուժերը գրավեցին Հարավային Լիբանանը, Անվտանգության խորհուրդը Իսրայելին կոչ արեց ետ քաշվել և հիմնեց **ՄԱԿ-ի միջանկյալ ուժերը Լիբանանում (ՄԱՄՈՒԼ)**՝ իսրայելական ուժերի դուրսբերումը ստուգելու, միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը վերականգնելու և իր իշխանությունը տարածքում վերահաստատելու գործում Լիբանանին օգնելու համար:

Հարավային Լիբանանում և լիբանանաիսրայելական սահմանում լարված փոխհարաբերություններից հետո Իսրայելի զորքերը 1982թ. մտան Լիբանան՝ մոտենալով և շրջապատելով Բեյրութը: 1985թ. Իսրայելը դուրս եկավ երկրի մեծ մասից, սակայն պահպանեց վերահսկողությունը մի փոքրիկ հատվածի վրա Հարավային Լիբանանում, որտեղ իսրայելական ուժերը և տեղում գործող իր օժանդակ զինուժը մնացին՝ մասամբ ծավալվելով ՄԱՄՈՒԼ-ի տեղակայման տարածքներում: Լիբանանյան խմբերի և իսրայելական ու օժանդակ ուժերի միջև բախումները շարունակվեցին:

Տարիների ընթացքում Անվտանգության խորհուրդը պահպանեց իր հանձնառությունը Լիբանանի տարածքային ամբողջականության, ինքնիշխանության և անկախության նկատմամբ, իսկ Գլխավոր քարտուղարը փորձում էր համոզե

Իսրայելին՝ լքելու անվտանգության գոտին: Իսրայելը հայտարարեց, որ անվտանգության նկատառումներից ելնելով՝ գոտին ժամանակավորապես էր վերահսկվելու իր կողմից: ՄԱԱՄԻԼ-ը փորձում էր զսպել առճակատումը և պաշտպանել ազգաբնակչությանը:

2000թ. մայիսին Իսրայելը, Անվտանգության խորհրդի 1978թ. բանաձևերի համաձայն և Միավորված ազգերի կազմակերպության հետ համագործակցության հիման վրա հետ քաշեց իր զորքերը, ըստ որում Գլխավոր քարտուղարը հունիսին ստուգեց զորքերի դուրսբերման ավարտը: Հըքացս իսրայելական զորքերի դուրսբերման Անվտանգության խորհուրդը հաստատեց Գլխավոր քարտուղարի՝ իշխանության վերահաստատման խնդրում Լիբանանին օժանդակելու օպերատիվ պլանը: Խորհուրդը բոլոր կողմերին կոչ արեց իրավիճակի կայունացման խնդրում համագործակցել Միավորված ազգերի կազմակերպության հետ:

**Մերձավորարևելյան խաղաղության գործընթացը:** 1987թ. Արևմտյան ափի և Գազայի հատվածի գրավյալ տարածքներում սկսվեց պաղեստինյան ապստամբությունը (*ինտիֆադա*)՝ Պաղեստինի անկախության և պետականության պահանջով: Պաղեստինի Ազգային խորհուրդը 1988թ. հռչակեց Պաղեստինի պետությունը: Գլխավոր ասամբլեան ճանաչեց այդ հռչակագիրը և որոշեց Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը կոչել «Պաղեստին»՝ առանց հակասելու դիտորդի իր կարգավիճակին:

Մադրիդի բանակցություններից, իսկ հետագայում նաև Նորվեգիայի միջնորդությամբ կայացած բանակցություններից հետո Իսրայելն ու Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը 1993թ. սեպտեմբերի 10-ին փոխադարձաբար ճանաչեցին միմյանց: 3 օր անց Իսրայելն ու Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը Վաշինգտոնում ստորագրեցին Միջանկյալ ինքնակառավարման սկզբունքների մասին հայտարարագիրը: Այդ համաձայնագիրը ճանապարհ հարթեց Պաղեստինի անցումային ինքնակառավարման և գրավյալ պաղեստինյան տարածքներից Իսրայելի զորքերի հաջորդական դուրսբերման համար:

Ողջունելով համաձայնագիրը՝ Գլխավոր քարտուղարը հավաստեց Միավորված ազգերի կազմակերպության գործակալությունների և ծրագրերի աջակցությունը: ՄԱԿ-ը ստեղծեց հատուկ խումբ Գազայի և Երիքովի սոցիալ-տնտեսական զարգացման հարցերով՝ նշանակելով ՄԱԿ-ի օգնության հատուկ կոորդինատոր, որը հսկում էր համապատասխան ծրագրերի և գործակալությունների աշխատանքը:

Գազայի հատվածում և Երիքովում Իսրայելից վարչական իրավասությունների փոխանցումը Պաղեստինյան իշխանություններին սկսվեց 1994թ.: 1995թ. Իսրայելը և Պաղեստինի ազատագրության կազմակերպությունը համաձայնագիր ստորագրեցին Արևմտյան ափին պաղեստինյան ինքնակառավարման մասին, որը նախատեսում էր Իսրայելի զորքերի դուրսբերումը և քաղաքացիական իշխանության հանձնումը ընտրված Պաղեստինյան խորհրդին:

Պաղեստինյան իշխանության խորհրդի և նախագահի ընտրությունները կա-

յացան 1996թ.: Պաղեստինի ազատագրության կազմակերպության նախագահ Յասեր Արաֆաթն ընտրվեց իշխանության նախագահ:

Խաղաղության գործընթացը կրկին աշխուժացավ 1999թ. միջանկյալ համաձայնագրի ստորագրմամբ, որը նախատեսում էր Իսրայելի զորքերի հետագա դուրսբերումը Արևմտյան ափից, գերիների մասին պայմանավորվածությունների ձեռքբերումը, Արևմտյան ափի և Գազայի միջև անվտանգության միջանցքի բացումն ու մշտական կարգավիճակի շուրջ բանակցությունների վերսկսումը:

Իսրայելի և պաղեստինցիների միջև առկա հիմնախնդիրները մնացին չլուծված: 2000թ. սեպտեմբերի վերջին բողոքի և բռնությունների նոր ալիք սկսվեց Պաղեստինի գրավյալ տարածքներում: Միջազգային ջանքերն ուղղվեցին տեղում իրավիճակի հանդարտեցմանն ու խաղաղության գործընթացի վերսկսման նպատակով բանակցությունների սեղանի շուրջ կողմերին վերադարձնելուն: Այս երկրորդ *ինտիֆադայի* սանձազերծումից մի քանի ամիս առաջ Միացյալ Նահանգների միջնորդությամբ բարձր մակարդակի բանակցություններ էին տեղի ունեցել Քեմփ Դեյվիդում: Այս բանակցությունները ակնկալվող արդյունք չունեցան: Չլուծված հարցերի թվում էին Երուսաղեմի կարգավիճակի, պաղեստինյան փախստականների, անվտանգության, սահմանների և իսրայելական բնակավայրերի հարցերը: Նախորդ տարիների պես Գլխավոր ասամբլեան 2000թ. վերահաստատեց պաղեստինյան ժողովրդի ինքնորոշման իրավունքը, ներառյալ պետության ընտրությունը:

## Հնդկաստան-Պակիստան

Միավորված ազգերի կազմակերպությունը շարունակում է մտահոգվել Քաշմիրի շուրջ Հնդկաստանի և Պակիստանի միջև տասնամյակներ տևած վեճով: Խնդիրը ծագեց 1940-ականներին, երբ համաձայն մասնատման պլանի և 1947թ. Հնդկաստանի Անկախության ակտի, Ջամմու և Քաշմիր նահանգն, ի թիվս այլ իշխանանիստ նահանգների, ընտրության իրավունք ստացավ՝ միանալու Հնդկաստանին կամ Պակիստանին: Գերազանցապես մուսուլմաններով բնակեցված Քաշմիրի ազգությամբ հինդու Մահարաջան 1947թ. ստորագրեց Հնդկաստանին միանալու փաստաթուղթը:

Անվտանգության խորհուրդը հարցը նախ քննարկեց 1948թ., երբ Հնդկաստանը բողոքեց, որ առանձին ցեղեր և այլ տարրեր Պակիստանի աջակցությամբ և մասնակցությամբ ներխուժում են Քաշմիր, և մարտեր են տեղի ունենում: Պակիստանը մերժում էր մեղադրանքները և պնդում, որ Քաշմիրի միացումը Հնդկաստանին անօրինական է:

Խորհուրդը միջոցներ ձեռնարկեց բախումները դադարեցնելու համար, ներառյալ դիտորդների տեղակայումն ու հանրաքվեի համար պայմանների ստեղծումը: Նա հիմնեց Հնդկաստանի և Պակիստանի հարցերով Միավորված ազգերի կազմակերպության հանձնաժողովը, որն առաջարկներ ներկայացրեց հրադադարի և զորքերի դուրսբերման վերաբերյալ, որպեսզի հարցը լուծվի հանրաքվեի միջոցով: Երկու կողմն էլ համաձայնվեցին, սակայն ընդհանուր հայ-

տարբերի չեկած հանրաքվեի եղանակների շուրջ: 1949թ. ի վեր **Միավորված ազգերի Կազմակերպության ռազմական դիտորդների խումբը Հնդկաստանում և Պակիստանում (ՄԱԿ-ԴԽՀՊ)** հսկում էր Քաշմիրում հրադադարին:

Քաշմիրում վերահսկողության գծի վերաբերյալ Հնդկաստանի և Պակիստանի միջև 1972թ. կնքված համաձայնագրից հետո կողմերը պարտավորվեցին տարաձայնությունները լուծել խաղաղ ճանապարհով և խուսափել վերջնական կարգավորումից: Համաձայնագրից հետո Հնդկաստանը պնդեց, թե ՄԱԿ-ԴԽՀՊ-ի մանդատն սպառվել է: Պակիստանը համաձայն չէր այս կարծիքին: Գլխավոր քարտուղարը հայտարարեց, որ միայն Անվտանգության խորհուրդը կարող է դադարեցնել առաքելությունը՝ հետևողականորեն արտահայտելով համակողմանի լուծում փնտրելու իր պատրաստակամությունը:

## Իրաք

Միավորված ազգերի կազմակերպության պատասխանը 1990թ. Իրաքի Քուվեյթ ներխուժմանը վկայում է աշխարհում խաղաղության և անվտանգության պահպանելու համար նրա տրամադրության տակ եղած միջոցների ընդգրկության լայն հնարավորության մասին: Անվտանգության խորհուրդն անմիջապես դատապարտեց ներխուժումը, պահանջեց Իրաքի զորքերի դուրսբերումը և համակողմանի պատժամիջոցներ սահմանեց Իրաքի դեմ: Գլխավոր ասամբլեայի 1990թ. նստաշրջանում բոլոր անդամ պետությունները դատապարտեցին ներխուժումը:

Միաժամանակ ՄԱԿ-ը պատերազմը կասեցնելու նպատակով բազմաթիվ նախաձեռնություններ հանդես բերեց: Գլխավոր քարտուղարը հանդիպեց Իրաքի նախագահին և արտաքին գործերի նախարարին՝ շարունակելով մշտական կապի մեջ լինել ճգնաժամի մեջ ներգրավված քաղաքական ղեկավարների հետ:

Անվտանգության խորհուրդը 1991թ. հունվարի 15-ը սահմանեց Իրաքի կողմից խորհրդի բանաձևերի կատարման վերջնաժամկետ և այդ բանաձևերի կենսագործման և միջազգային խաղաղության ու անվտանգության հաստատման հարցում «բոլոր անհրաժեշտ միջոցների» օգտագործման նպատակով անդամ պետություններին թույլատրեց համագործակցել Քուվեյթի հետ: Բախվելով Իրաքի անհնազանդությանը՝ Քուվեյթի ինքնիշխանության վերականգնմանն ի նպաստ միավորված կոալիցիոն ուժերը հունվարի 16-ին սկսեցին հարձակումն Իրաքի դեմ: Այդ ուժերը գործում էին Խորհրդի թույլտվությամբ, բայց ոչ ղեկավարության կամ վերահսկողության ներքո: Ռազմական գործողությունները ավարտվեցին փետրվարին՝ այն բանից հետո, երբ իրաքյան ուժերը լքեցին Քուվեյթը:

*687 բանաձևով* (1991թ.) Անվտանգության խորհուրդը սահմանեց հրադադարի պայմանները, Իրաքին և Քուվեյթին կոչ արեց հարգել սահմանների անձեռնմխելիությունը, պահանջեց ՄԱԿ-ի դիտորդների տեղակայումը, միջոցներ ձեռնարկեց պատերազմի վնասների փոխհատուցման համար և որոշեց, որ Իրաքի զանգվածային ոչնչացման զենքերը պետք է վերացվեն:

Խորհուրդը ապառազմականացված գոտի հաստատեց սահմանի երկայնքով: Գոտու վերահսկման նպատակով հիմնեց դիտորդական առաքելություն, այն է՝ **ՄԱԿ-ի Իրաք-Քուվեյթ դիտորդական առաքելությունը (ՄԻՔԴԱ)**:

687 բանաձևով նախատեսվեց Իրաք-Քուվեյթ սահմանազատման հանձնաժողովը, որի կազմում մեկ ներկայացուցիչը Իրաքից էր, մեկը՝ Քուվեյթից, և Գլխավոր քարտուղարի նշանակած երեք փորձագետներ էին: 1992թ. Իրաքը դադարեցրեց իր մասնակցությունը հանձնաժողովի աշխատանքներին: Հանձնաժողովը սահմանազատումն իրականացրեց ըստ 1932թ. և 1963թ. Իրաքի և Քուվեյթի միջև ձեռք բերված համաձայնությունների: 1994թ. Իրաքը Գլխավոր քարտուղարին տեղեկացրեց, որ ճանաչում է Քուվեյթի ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը և միջազգայնորեն հաստատված սահմանները:

687 բանաձևը նաև վերաբերում էր Իրաքի զանգվածային զենքերի ոչնչացմանը: Այս որոշման կատարումն ստուգելու նպատակով Անվտանգության խորհուրդը հիմնեց ՄԱԿ-ի հատուկ հանձնաժողովը (ՄԱՀՀ)՝ օժտելով նրան առանց նախազգուշացման ստուգումներ կատարելու լիազորությամբ: Ատոմային էներգիայի միջազգային գործակալությանը (ԱԷՄԳ) խնդրանք ներկայացվեց ՄԱՀՀ-ի օգնությամբ նմանօրինակ առաքելություն իրականացնելու միջուկային ոլորտում:

ՄԱՀՀ-ն և ԱԷՄԳ-ն բացահայտեցին ու ոչնչացրեցին արգելված զինատեսակներին վերաբերող Իրաքի ծրագրերի ու կարողությունների մեծ մասը, ներառյալ միջուկային, քիմիական և կենսաբանական զենքի հետ կապված ծրագրերը: Սակայն չնայած ձեռքբերումներին՝ ՄԱՀՀ-ն և ԱԷՄԳ-ն անկարող եղան պարզելու, թե արդյոք Իրաքը կատարել է իր բոլոր պարտավորությունները:

Իրաքը հաճախ խոչընդոտում էր ՄԱՀՀ-ին, և միայն Գլխավոր քարտուղարի միջնորդությամբ 1998թ. փետրվարին ՄԱԿ-ի տեսուչներին անսահմանափակ մուտքի իրավունք տալու մասին Իրաքի հետ համաձայնագրի կնքմամբ հնարավոր եղավ խուսափել վերահաս առճակատումից:

Սակայն նոյեմբերին Իրաքը դադարեցրեց համագործակցությունը ՄԱՀՀ-ի հետ՝ կասեցնելով նավթի էմբարգոյի վերացման կապակցությամբ Անվտանգության խորհրդի համաձայնությունը: Իրաքը հայտարարեց, որ երկրում այլևս արգելված զինատեսակներ չեն մնացել, այնինչ ՄԱՀՀ-ն պնդում էր, որ ինքը բավարար ապացույցներ չունի, թե Իրաքը լիովին կատարել է 687 բանաձևի պահանջները: Ի պատասխան՝ Միացյալ Թագավորությունն ու Միացյալ Նահանգները դեկտեմբերին հարվածներ հասցրին Իրաքին:

Անվտանգության խորհուրդը 1999թ. ՄԱՀՀ-ի փոխարեն ստեղծեց զենքի վերահսկման նոր համակարգ՝ **ՄԱԿ-ի վերահսկիչ, վերստուգիչ և տեսչական հանձնաժողովը (ՄՎՎՏՀ)**: Իրաքը պետք է լիակատար համագործակցություն աներ՝ մուտքի անսահմանափակ հնարավորություն ընձեռելով ու ամբողջական տեղեկատվություն մատուցելով ՄԱԿ-ի տեսուչներին: Խորհուրդը հայտնեց տնտեսական պատժամիջոցները վերացնելու իր մտադրության մասին՝ կախված ՄՎՎՏՀ-ի և ԱԷՄԳ-ի հետ համագործակցության Իրաքի պատրաստակամությունից, որը պետք է քննվեր 120 օրը մեկ:

Գլխավոր քարտուղարը 2000թ. կոորդինատոր նշանակեց Իրաքի և Քուվեյթի

կորած քաղաքացիների և գույքի վերադարձման նպատակով: Մոտ 600 քուվեյթցիներ և այլ անձինք Պարսից ծոցի պատերազմից ի վեր դեռևս համարվում էին անհետ կորած:

**Նավթ պարենի դիմաց ծրագիրը:** 1991թ. Անվտանգության խորհրդի որոշմամբ Իրաքին հնարավորություն տրվեց որոշակի պայմաններով սահմանափակ քանակով նավթ արտահանել մարդասիրական ապրանքների գնման համար: Սակայն այդ բանաձևն այդպես էլ ի կատար չածվեց:

1995թ. խորհուրդը սկսությունների բույլատրեց 180 օրվա ընթացքում 90 օրը մեկ մինչև 1 մլրդ դոլարի նավթ և նավթամթերքներ ներկրել Իրաքից՝ այդ երկրի ժողովրդի մարդասիրական կարիքները հոգալու համար: Թեև պատժամիջոցները շարունակում էին ուժի մեջ մնալ, 1996թ. ՄԱԿ-ի և Իրաքի միջև սկսեց գործել Նավթ-պարենի դիմաց ծրագիրը: Անվտանգության խորհրդի պատժամիջոցների հանձնաժողովը այդ ժամանակվանից ի վեր վերահսկում է ծրագրի իրականացումը՝ թույլատրելով պարենի, դեղորայքի և այլ մարդասիրական ապրանքների մատակարարումը:

1998թ. Անվտանգության խորհուրդն ընդարձակեց Նավթ-պարենի դիմաց ծրագիրը՝ Իրաքին թույլատրելով 6 ամսվա ընթացքում վաճառել 5,2 մլրդ դոլարի նավթ: Թույլտվությունն անընդհատ կրկնվում էր: 1999թ. խորհուրդը վերացրեց վաճառվող նավթի չափաքանակի վրա դրված սահմանափակումը՝ վերադառնալով 1986թ. սխեմային:

2000թ. խորհուրդն ընդարձակեց ծրագիրը ևս 180 օրով՝ սկսած հունիսի 9-ից և Գլխավոր քարտուղարին առաջարկեց Իրաքում մարդասիրական իրավիճակի համակողմանի վերլուծություն կատարելու նպատակով անկախ փորձագետներ նշանակել:

**Մարդասիրական ծրագիր:** 1991թ. Գլխավոր քարտուղարը նախաձեռնեց **ՄԱԿ-ի մարդասիրական ծրագիրը Իրաքում**, որը միտված էր տեղահանվածների վերադարձմանն ու ազգաբնակչությանը մարդասիրական օգնություն ցուցաբերելուն: Նա նաև կոորդինատոր նշանակեց՝ Միավորված ազգերի կազմակերպության համակարգի և օգնություն ցուցաբերող այլ կազմակերպությունների աշխատանքը համադրելու համար:

Մարդասիրական իրավիճակը մնում էր լարված: Տնտեսական պատժամիջոցները դաժան հետևանքներ ունեցան ազգաբնակչության ամենաանպաշտպան խավերի, հատկապես երեխաների վրա: 1999թ. ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի կատարած հետազոտությունը պարզեց, որ 5 տարեկանից ցածր երեխաների մահացության մակարդակն ավելի քան կրկնապատկվել է նախորդ 10 տարիների ընթացքում:

2000թ. դիմելով Անվտանգության խորհրդին՝ Գլխավոր քարտուղարն ասաց, որ մարդասիրական իրավիճակն Իրաքում բարոյական երկընտրանքի առաջ է կանգնեցրել Միավորված ազգերի կազմակերպությանը: Կազմակերպությունը միշտ եղել է անպաշտպանների և թույլերի կողքին և անընդհատ ձգտել է նվազեցնել մարդկային տառապանքը, մինչդեռ Իրաքի դեպքում նրան մեղադրում էին մի

ամբողջ ժողովրդի տառապանքներ պատճառելու մեջ: Նման իրավիճակում լավագույն լուծումը պատժամիջոցների ենթարկված պետության կողմից խորհրդի որոշումների անվերապահ կատարումն է, որպեսզի պատժամիջոցները հնարավորինս արագ վերացվեն:

## Տաջիկստան

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո 1991թ. Տաջիկստանը դարձավ անկախ: Երկիրը խրվեց սոցիալ-տնտեսական ճգնաժամի մեջ, սրվեցին տարածաշրջանային ու քաղաքական լարումները, ինչպես նաև տարաձայնությունները աշխարհիկ և իսլամական պետության ջատագովների միջև: 1992թ. քաղաքացիական պատերազմ պայթեց, և տաջիկական ընդդիմությունը՝ ի դեմս իսլամական և այլ խմբավորումների կոալիցիայի, զավթեց իշխանությունը: Պարտություն կրելով՝ ընդդիմության ուժերի մեծ մասը 1992թ. տեղափոխվեց Աֆղանստան, որտեղից հարձակումներ էր գործում Տաջիկստանի վրա: Ըստ գնահատումների, պատերազմը խլեց մոտ 50 հազար մարդու կյանք, շուրջ 400 հազարը դարձավ փախստական, իսկ 600 հազար մարդ տեղահանվեց:

1993թ. Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչը միջնորդությամբ հանդես եկավ կառավարության և ընդդիմության միջև: Նրա հովանու ներքո ընթացած բանակցությունների արդյունքում 1994թ. Թեհրանում կնքվեց հրադադարի մասին համաձայնագիր: Անվտանգության խորհուրդը կառավարության և ընդդիմության ներկայացուցիչներից կազմված միացյալ հանձնաժողովին համաձայնագրի կատարման վերահսկողության հարցում օժանդակելու նպատակով 1994թ. հիմնեց Միավորված ազգերի կազմակերպության դիտորդական առաքելությունը Տաջիկստանում (ՄԱԴԱՏ):

Միավորված ազգերի կազմակերպության հովանու ներքո ընթացած բանակցությունները հանգեցրին 1997թ. Մոսկվայի համաձայնագրի ստորագրմանը: Վերջինս նախատեսում էր անցումային շրջան, որի ժամանակ պետք է իրականացվեր համաձայնագիրը՝ ստեղծելով քաղաքական, օրենսդրական և անվտանգության այնպիսի միջավայր, որը հնարավորություն կտար նոր խորհրդարանական ընտրություններ անցկացնել: Անվտանգության խորհուրդը ՄԱԴԱՏ-ին լիազորեց օժանդակել խաղաղության մասին համաձայնագրի իրականացմանն ու նպաստել կողմերի հաշտեցմանը: ՄԱԴԱՏ-ը սերտորեն համագործակցում էր Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) խաղաղապահ ուժերի և Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) առաքելության հետ:

Հաստատելով խաղաղության մասին համաձայնագրի իրականացման գործում արձանագրված առաջընթացը՝ Անվտանգության խորհուրդը 1999թ. ողջունեց ընդդիմության հայտարարությունն իր զինված ջոկատների լուծարման մասին, ինչպես նաև՝ Գերագույն դատարանի որոշումը՝ ընդդիմադիր կուսակցությունների գործունեության վրա դրված արգելքի վերացման մասին: 2000թ. փետրվարին երկրում առաջին անգամ բազմակուսակցական խորհրդարանա-

կան ընտրությունններ կայացան՝ նշանավորելով 1997թ. համաձայնագրով նախատեսված անցումային շրջանի ավարտը: Մայիսին ՍԱԴԱՏ-ը վայր դրեց իր լիազորությունները, և Միավորված ազգերի կազմակերպությունը խաղաղության ամրապնդման և ժողովրդավարության սատարման նպատակով հիմնեց իր խաղաղարար գրասենյակը:

## Եվրոպա

### Կիպրոս

**ՄԱԿ-ի խաղաղապահ ուժը Կիպրոսում (ՄԱԽՈՒԿ)** 1974թ. ի վեր վերահսկում էր հրադադարը և պահպանում բուֆերային գոտին Կիպրոսի հունական ազգային գվարդիայի և թուրքական ուժերի միջև, երբ Հունաստանի հետ երկրի միացումը պաշտպանող կիպրացի հույների և հունական սպաների ձեռնարկած պետական հեղաշրջմանը հետևեց թուրքական ռազմական ներխուժումն ու կղզու փաստացի երկմասնատումը: 1974թ. ի վեր Գլխավոր քարտուղարն ու նրա պատվիրակը ջանքեր էին գործադրում լուծելու տասնամյակներ տևած վեճը կիպրացի հույների և կիպրացի թուրքերի միջև: Գլխավոր քարտուղարը միջնորդություն հանդես բերեց համակողմանի կարգավորման նպատակով երկու կողմերի միջև հանդիպում կազմակերպելու համար: 1999թ. Գլխավոր քարտուղարն ու Կիպրոսի հարցերով իր նոր հատուկ խորհրդականն կողմերի միջև անմիջական բանակցությունների նոր գործընթաց նախաձեռնեցին Անվտանգության խորհրդի ակտիվ աջակցությամբ:

### Վրաստան

Աբխազների ու վրացիների միջև հարաբերությունները տասնամյակներ շարունակ լարված են եղել: 1990թ. աբխազական (Վրաստանի հյուսիս-արևմտյան շրջան) իշխանությունների նորոգված փորձերը՝ անջատվելու 1991թ. անկախացած Վրաստանի Հանրապետությունից, 1992թ. հանգեցրին մի շարք զինված բախումների: Հարյուրավոր մարդիկ զոհվեցին, շուրջ 30 հազարը հեռացավ Ռուսաստանի Դաշնություն: 1993թ. նշանակված Գլխավոր քարտուղարի պատվիրակը միջնորդություն սկսեց կողմերի միջև: Ավելի ուշ այդ նույն տարում հրադադարի մասին համաձայնագիր կնքվեց, և դրա կատարումը վերահսկելու համար Անվտանգության խորհուրդը հիմնեց **ՄԱԿ-ի դիտորդական առաքելությունը Վրաստանում (ՄԱԴԱՎ)**:

Սակայն մարտերը վերսկսվեցին՝ 1993թ. սեպտեմբերին վերաճվելով քաղաքացիական պատերազմի, որի արդյունքում ավելի քան 250 հազար մարդ տեղահան արվեց: Մի այլ հրադադար կնքվեց Մոսկվայում 1994թ.: Կողմերը համաձայնեցին ԱՊՀ խաղաղապահ ուժերի տեղակայմանը, որոնք պետք է ապահովեին համաձայնագրի կատարումը, ըստ որում ՄԱԴԱՎ-ը պետք է վերահսկեր

համաձայնագրի իրականացումն ու ԱՊՀ ուժերի գործունեությունը:

Տարիների ընթացքում Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչները բանակցություններ են վարել տևական կարգավորման հասնելու նպատակով: Անվտանգության խորհուրդը շեշտել է այնպիսի համակողմանի կարգավորման անհրաժեշտությունը, որը կներառեր Աբխազիայի քաղաքական կարգավիճակի որոշումը՝ ելնելով Վրաստանի ինքնիշխանության և տարածքային ամբողջականության լիակատար պահպանման և արխազական փախստականների ու տեղահանվածների վերադարձման սկզբունքից: 1997թ. Միավորված ազգերի կազմակերպության հովանու ներքո կազմակերպված հանդիպման ժամանակ երկու կողմերը համաձայնեցին հիմնել Համակարգող խորհուրդ, որի շրջանակներում գործող երեք աշխատանքային խմբեր պետք է զբաղվեին խաղաղության գործընթացի ռազմական, քաղաքական ու տնտեսական խնդիրներով: 1996թ. հիմնվեց Աբխազիայում մարդու իրավունքների պաշտպանության ՄԱԿ-ի գրասենյակը:

## Բալկաններ

**Նախկին Հարավսլավիա:** Հարավսլավիայի Դաշնային Սոցիալիստական Հանրապետությունը ՄԱԿ-ի հիմնադիր անդամներից էր: 1991թ. դաշնության երկու հանրապետություններ՝ Սլովենիան ու Խորվաթիան անկախություն հռչակեցին: Խորվաթական սերբերը, որոնք վայելում էին ազգային բանակի աջակցությունը, ընդդիմացան այդ շարժմանը, և Սերբիայի ու Խորվաթիայի միջև պատերազմ սկսվեց:

Եվրոպական հանրակցությունն ապարդյուն փորձեր ձեռնարկեց՝ կարգավորելու հակամարտությունը: 1991թ. Անվտանգության խորհուրդը զենքի էմբարգո սահմանեց Հարավսլավիայի նկատմամբ, իսկ Գլխավոր քարտուղարը անձնական պատվիրակ նշանակեց Եվրահանրակցության՝ խաղաղությանն ուղղված ջանքերին սատարելու համար:

Կարգավորման համար նպաստավոր պայմաններ ստեղծելու նպատակով 1992թ. Անվտանգության խորհուրդը հիմնեց ՄԱԿ-ի Պաշտպանիչ ուժերը (ՄԱՊՈՒ), որոնք սկզբում տեղակայվեցին Խորվաթիայում: Այդ ընթացքում պատերազմն արդեն հասել էր Բոսնիա-Հերցեգովինա, որը նույնպես անկախություն էր հռչակել, ընդ որում այդ քայլը պաշտպանում էին բոսնիական խորվաթներն ու մուսուլմանները, սակայն դրան դեմ էին բոսնիական սերբերը: Բոսնիա-Հերցեգովինայի անկախություն հռչակելուց անմիջապես հետո այնտեղ ներխուժեցին սերբական ու խորվաթական բանակները: Բոսնիայում արյունահեղությանը վերջ տալու համար Անվտանգության խորհուրդը մայիսին տնտեսական պատժամիջոցներ սահմանեց Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության դեմ, որի կազմում այդ ժամանակ մնացել էին Սերբիան ու Չեռնոգորիան:

Պատերազմն ավելի ու ավելի էր սաստկանում, և նորանոր տեղեկություններ էին ստացվում ազգամիջյան զտումների վերաբերյալ, որոնց հետևանքով Եվրո

պան ականատես եղավ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո փախստականների հետ կապված ամենախոշոր ճգնաժամին: 1993թ. Անվտանգության խորհուրդը պատերազմի հանցագործությունները դատելու համար առաջին անգամ միջազգային դատարան հիմնեց:

Բոսնիայում ՄԱՊՈՒ-ն գործում էր ի նպաստ մարդասիրական օգնության տրամադրման և ի պաշտպանություն մայրաքաղաք Սարաևոյի և ուրիշ այլ քաղաքների, որոնք 1993թ. Անվտանգության խորհրդի կողմից հայտարարվել էին «անվտանգության գոտիներ»: Բայց թեև խաղաղապահ հրամանատարները պահանջում էին 35 հազարանոց զորախումբ, Անվտանգության խորհուրդը թույլատրեց ընդամենը 7,600-ը:

Սարաևոյի վրա հարձակումները զսպելու նպատակով և Գլխավոր քարտուղարի խնդրանքով Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպությունը (ՆԱՏՕ) 1994թ. սկսեց օդային հարվածներ հասցնել: Ի պատասխան օդային հարվածների, բոսնիական սերբերը 1995թ. ձերբակալեցին ՄԱՊՈՒ-ի շուրջ 400 դիտորդների՝ նրանց օգտագործելով որպես «կենդանի վահան»:

Մարտերը սաստկացան 1995թ.: Խորվաթիան լայնածավալ հարձակումներ սկսեց սերբերով բնակեցված տարածքների դեմ: Բոսնիական սերբերի կողմից Սարաևոյի չդադարող գնդակոծումներին ՆԱՏՕ-ն պատասխանեց զանգվածային օդային հարվածներով: Բոսնիական սերբերը գրավեցին Սրեբրենիցայի և Ժեպայի «անվտանգության գոտիները»՝ Սրեբրենիցայում սպանելով մոտ 7 հազար անզեն տղամարդկանց և պատանիների, որը Երկրորդ համաշխարհայինից ի վեր Եվրոպայում տեղի ունեցած ամենախոշոր նախճիրն էր: Գլխավոր քարտուղարն իր 1995թ. զեկույցում խոստովանեց Սրեբրենիցայում գագաթնակետին հասած ազգամիջյան զտումների նկատմամբ Միավորված ազգերի կազմակերպության և անդամ պետությունների կողմից որդեգրված քաղաքականության մեջ թույլ տրված սխալները՝ նշելով, որ «այդ ողբերգության սարսափը հավերժ կհալածի մեր պատմությունը»:

Կոնտակտային խմբի (Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Ռուսաստան, Միացյալ Թագավորություն և Միացյալ Նահանգներ) հովանու ներքո կայացած բանակցությունները հանգեցրին Բոսնիայում պատերազմի դադարեցման մասին համաձայնագրի ստորագրմանը Բոսնիայի, Խորվաթիայի և Հարավսլավիայի միջև: Ըստ համաձայնագրի՝ Բոսնիան բաղկացած էր լինելու երկու միավորից՝ Բոսնիա-Խորվաթական Դաշնությունից և Սերբական Հանրապետությունից: Միացյալ Նահանգների մեկ ուրիշ խաղաղարար նախաձեռնություն հանգեցրեց մի շարք այլ համաձայնագրերի: Վերջապես Դեյթոնյան (ԱՄՆ) բանակցությունները 1995թ. պսակվեցին Բոսնիա-Հերցեգովինայի, Խորվաթիայի և Հարավսլավիայի միջև խաղաղության համաձայնագրի կնքմամբ, որով վերջ տրվեց 42-ամսյա պատերազմին: Հակամարտության ընթացքում զոհվեցին ՄԱԿ-ի ավելի քան 230 աշխատակիցներ: Համաձայնագրի կատարմանն օժանդակելու նպատակով Անվտանգության խորհուրդը թույլատրեց ՆԱՏՕ-ի գլխավորությամբ 60 հազարանոց բազմազգ Իրականացման զորախմբի տեղակայումը:

Բոսնիա-Հերցեգովինայում Անվտանգության խորհուրդը հիմնեց ՄԱԿ-ի միջազգային ոստիկանական հատուկ զորախումբը, որը 1996թ. միաձուլվեց ավելի

խոշոր **Բոսնիա–Հերցեգովինայում ՄԱԿ-ի առաքելության (ՄԱԱԲՀ)** հետ: Առաքելությունը դյուրացրեց փախստականների և տեղահանվածների վերադարձը, խթանեց խաղաղության գործընթացն ու անվտանգությունը և օգնեց կառուցել ընդհանուր պետության հաստատությունները:

Խորհուրդը 1996թ. հիմնեց **ՄԱԿ-ի դիտորդական առաքելությունը Պրևլակայում (ՄԱԴԱՊ)**, որը պետք է վերահսկեր Հարավսլավիայի կողմից վիճարկվող խորվաթական Պրևլակա թերակղզու ապառազմականացումը:

**Կոսովո:** 1989թ. Հարավսլավիայի Դաշնային Հանրապետությունը վերացրեց տեղական ինքնավարությունը Կոսովոյում՝ Հարավսլավիայի հարավում գտնվող և սերբերի համար պատմականորեն կարևոր նշանակություն ունեցող այդ մարզում, որի բնակչության 90%-ից ավելին ալբանացիներ են: Կոսովոյի ալբանացիները ընդդիմացան՝ հանուն ինքնավարման բոյկոտելով սերբական պետական հաստատություններն ու իշխանություններին:

Լարվածությունը վերաճեց Կոսովոյի ազատագրության բանակի (ԿԱԲ), որ ի հայտ եկավ 1996թ. անկախության համար զինված ապստամբության պահանջով, հարձակումներ սկսեց սերբական և ալբանական այն պաշտոնյաների դեմ, որոնք համագործակցում էին սերբական վարչակազմի հետ: Սերբական իշխանությունները պատասխանեցին զանգվածային ձերբակալություններով իրավիճակը դարձնելով առավել պայթյունավտանգ: 1997թ. Կոնտակտային խումբը հորդորեց Բելգրադին և Կոսովոյի իշխանություններին ձեռնամուխ լինել խաղաղ բանակցությունների և պայմաններ ստեղծել փախստականների վերադարձի համար: Նա նաև կոչ արեց Բելգրադին բարձրացնել Կոսովոյի կարգավիճակը Հարավսլավիայի սահմաններում և պաշտպանել ալբանացի ազգաբնակչության իրավունքները:

1998թ. մարտին, երբ սերբական ոստիկանությունը մաքրումներ իրականացրեց Դրենիցա շրջանում՝ ցուցադրաբար որոնելով ԿԱԲ-ի անդամներին, մարտեր սկսվեցին: Կոնտակտային խումբը, Եվրամիությունը, ԵԱՀԿ-ն և ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը դատապարտեցին ուժի կիրառումը սերբական ոստիկանության կողմից և միաժամանակ մերժեցին ԿԱԲ-ի ահաբեկչական գործողությունները: Միջազգային հանրությունը հայտարարեց, որ ո՛չ անկախությունը և ո՛չ էլ ներկայիս կացությունը ընդունելի չեն, և ավելի բարձր կարգավիճակ պահանջեց Կոսովոյի համար Հարավսլավիայի կազմում:

Կոսովոյում խաղաղություն և կայունություն հաստատելու նպատակով Անվտանգության խորհուրդը զենքի էմբարգո սահմանեց Հարավսլավիայի նկատմ ներառյալ Կոսովոն: Չնայած միջազգային ջանքերին, իրավիճակը վատթարանում էր՝ վերաճելով բացահայտ պատերազմի ԿԱԲ-ի և սերբական անվտանգության ուժերի միջև:

Անվտանգության խորհուրդը պահանջեց հրադադար հաստատել և դուրս բերել սերբական ուժերը: Միավորված ազգերի կազմակերպության առաքելությունը իրավիճակը գնահատելու համար հոկտեմբերին այցելեց Կոսովո: Միացյալ Նահանգների դեսպան Ռիչարդ Հոլբրուքի և Հարավսլավիայի նախագահ Սլոբոդան Միլոշևիչի միջև բանակցությունները հոկտեմբերին հանգեցրին երաշ

դարի մասին համաձայնագրի ստորագրմանը. վերջինս սահմանափակում էր Կոսովոյում Հարավսլավիայի ռազմական ու ոստիկանական ներկայությունը, ինչը վերահսկվելու էր ԵԱՀԿ Կոսովոյի վերահսկիչ առաքելության կողմից: Սակայն այդ համաձայնությունը խաղաղություն և անվտանգություն չբերեց մարզին: Բռնությունների և հրադադարի խախտումների թվի ավելացմանը զուգահեռ Գլխավոր քարտուղարն Անվտանգության խորհրդին նախազգուշացրեց մարտական գործողությունների վերսկսման կապակցությամբ:

Ֆրանսիայի և Միացյալ Նահանգների հրավերով 1999թ. երկու կողմերը մասնակցեցին Ռամբույեի բանակցություններին: Կոսովոյի ալբանական պատվիրակությունը համաձայնագիր ստորագրեց, որը Կոսովոյին ինքնավարություն էր տալիս՝ նախատեսելով ողջ Հարավսլավիայում ազատ ելք ու մուտքի իրավունքով օժտված ՆԱՏՕ-ի խաղաղապահ զորախմբի տեղակայումը: Հայտարարելով, որ այդ դրույթով խախտվում էր իր ինքնիշխանությունը՝ Հարավսլավիան հրաժարվեց ստորագրել այն, և խաղաղության բանակցությունները ընդհատվեցին:

Հարավսլավիային ուղղված մի շարք նախազգուշացումներից հետո և Կոսովոյում հարավսլավական հարձակման պարագայում 1999թ. մարտին ՆԱՏՕ-ն օդային հարվածներ հասցրեց Հարավսլավիային: Անվտանգության խորհուրդը լուրջ պառակտում ապրեց, քանի որ մի շարք պետություններ համարում էին, որ այդ հարվածները ուժի միակողմանի գործադրում են՝ ի խախտումն Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության, իսկ մյուսներն էլ պնդում էին, որ այդ միջոցառումները միտված էին Կոսովոյի ալբանացիների վրա սերբական հարձակումների հետևանքով վերահաս մարդասիրական աղետի կանխմանը: Գլխավոր քարտուղարն ասաց, որ իսկական ողբերգություն է դիվանագիտական ջանքերի ձախողումը, սակայն որոշ դեպքերում «ուժի կիրառումը օրինական է, եթե միտված է խաղաղության պահպանմանը»: Միևնույն ժամանակ նա նշեց, որ Անվտանգության խորհուրդը, որն առաջնային պատասխանատվություն է կրում խաղաղության և անվտանգության պահպանման համար, անպայման պետք է մասնակցի ուժի կիրառմանը վերաբերող ցանկացած որոշման ընդունմանը:

Հարավսլավական ուժերը խոշոր հարձակում ձեռնարկեցին ԿԱԲ-ի դեմ այն ժամանակ, երբ Հարավսլավիան սկսեց ալբանացիների զանգվածային արտաքսումը Կոսովոյից, ինչը հանգեցրեց ավելի քան 850 հազար փախստականների աննախադեպ արտահոսքին: ՄԱԿ-ի Փախստականների գծով Գերագույն հանձնակատարի գրասենյակը և այլ մարդասիրական գործակալություններ շտապեցին օգնելու փախստականներին Ալբանիայում և նախկին Հարավսլավիայի Մակեդոնիա Հանրապետությունում:

Հունիսին Հարավսլավիան ընդունեց Մեծ ութնյակի (G-8, որի կազմում են զարգացած արևմտյան յոթ պետություններն ու Ռուսաստանը) առաջարկած խաղաղության պլանը: Անվտանգության խորհուրդը պաշտպանեց այդ պլանը և որոշեց ինչպես քաղաքացիական, այնպես էլ անվտանգության ուժեր տեղակայել Կոսովոյում: Նա անդամ պետություններին թույլատրեց անվտանգության միջազգային ներկայություն հաստատել զինված բախումները կանխելու,

ԿԱԲ-ը զինաթափելու և փախստականների վերադարձն ապահովելու նպատակով և խնդրեց Գլխավոր քարտուղարին միջանկյալ միջազգային քաղաքացիական վարչակազմ հիմնել, որի օգնությամբ ազգաբնակչությունը կարող էր օգտվել լայն ինքնավարությունից և ինքնակառավարում իրականացնել:

Կոսովոյից հարավսլավական ուժերի դուրսբերումից հետո ՆԱՏՕ-ն դադարեցրեց օդային հարվածները, և 50 հազարանոց բազմազգ զորախումբը (KFOR) անվտանգության ապահովման նպատակով մտավ Կոսովո: **ՄԱԿ-ի միջանկյալ կառավարման առաքելությունը Կոսովոյում (ՄԱՄԿԱԿ)** իսկույն տեղում հաստատեց իր ներկայությունը:

Այդ առաքելությունն աննախադեպ երևույթ էր իր բարդությամբ և ծավալներով: Անվտանգության խորհուրդը ՄԱՄԿԱԿ-ին օժտեց իշխանությամբ Կոսովոյի տարածքի և ժողովրդի նկատմամբ, ներառյալ գործադիր և օրենսդիր լիազորությունների ողջ փաթեթն ու դատական իշխանությունը: Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ պրն Բեռնար Կուշների գլխավորած այդ առաքելությունը հենվում էր հետևյալ չորս սյուների վրա. քաղաքացիական կառավարում ՄԱԿ-ի հովանու ներքո, մարդասիրական օգնություն ՄԱԿ-ի Փախստականների գծով Գերագույն հանձնակատարի գրասենյակի գլխավորությամբ, ժողովրդավարացում և վարչաիրավական կառույցների ստեղծում ԵԱՀԿ-ի ղեկավարությամբ և տնտեսական վերակառուցում Եվրամիության առաջնորդությամբ: Դա եզակի խմբային միջոցառում էր, որը չորս միջազգային կազմակերպությունների ի մի բերեց ՄԱԿ-ի հովանու ներքո:

Պատերազմի ընթացքում երկիրը լքած 850 հազար փախստականներից առնվազն 841.000-ը վերադարձավ, և ամենալուրջ մտահոգությունը առաջիկա ձմռանը նրանց նախապատրաստելը դարձավ:

Դրանից հետո ՄԱՄԿԱԿ-ը նշանակալից առաջընթաց կատարեց բնականոն կյանքի վերականգնման և երկարաժամկետ տնտեսական վերակառուցման ուղղությամբ: ՄԱՄԿԱԿ-ի կառավարումը հաստատվեց բոլոր 5 շրջաններում և 29 համայնքներում: Հրապարակվեցին ավելի քան 30 օրենսդրական ակտեր, որոնք ընդգրկում էին այնպիսի հարցեր, ինչպիսիք էին դատավորների նշանակումն ու ազատումը, բանկային ոլորտը, արտոնագրումը, կենտրոնական հարկային մարմնի ձևավորումն ու Կոսովոյի բյուջեն: ՄԱՄԿԱԿ-ը նաև երկխոսություն հաստատեց ազգային համայնքների առաջնորդների հետ, վերականգնեց հանրային ենթակառուցվածքները, բացեց դպրոցներ և ավելի քան 70 հազար պետական ծառայության աշխատակիցների սկսեց նպաստներ վճարել:

Միացյալ անցումային վարչական կառույց (ՄԱՎԿ) հիմնվեց, որը ներառում էր բոլոր ազգային խմբերի ներկայացուցիչներին և ազգաբնակչության մասնակցությունն ապահովելու նպատակով ղեկավարվում էր Վարչական խորհրդի կողմից: Այդ մարմինը հնարավորություն տվեց որոշումների կայացման մեջ ներգրավել Կոսովոյի բնակչությանը և վերացնել զուգահեռ հաստատությունները: Աշխատանքներ սկսվեցին ՄԱՎԿ-ի շրջանակներում 20 վարչությունների միավորման ուղղությամբ: Կոսովոյի անցումային խորհուրդը, որի կազմում էին բոլոր քաղաքական կուսակցությունների ու քաղաքացիական հասարակության, կրոնական և այլ խմբերի ներկայացուցիչները, գործում էր որպես խորհր-

դատական մարմին:

ՄԱՄԿԱԿ-ի շուրջ 3 հազար ոստիկանական սպաներ տեղակայվեցին խնդրո առարկա ողջ տարածքում, և կազմավորվեց Կոսովոյի ոստիկանական ծառայություն, որում ընդգրկված էին փոքրամասնությունների ներկայացուցիչները: ԿԱԲ-ի ապառազմականացումն ավարտվեց 1999թ. սեպտեմբերին: Նրա անդամների ներգրավումը քաղաքացիական կյանքում շարունակվում է:

Հրադադարին հետևած ամիսների ընթացքում մոտ 210 հազար ոչ ալբանացի կոսովցիներ մեկնեցին Սերբիա և Չեռնոգորիա: Նրանց անվտանգ վերադարձն ապահովելու նպատակով 2000թ. մայիսին հիմնվեց Վերադարձման հարցերի միացյալ կոմիտեն:

Հրատապ անվտանգության խնդիր էր ոչ ալբանացի փոքրամասնություններին՝ սերբերի և գնչուների պաշտպանությունը: Չնայած զգալի առաջընթացին՝ իրավիճակն ընդհանուր առմամբ մնում էր լարված: Հարձակումները, սպանությունները ու բռնությունը ոչ ալբանացի բնակչության նկատմամբ շարունակվում էին: Մնացած ազգային փոքրամասնությունները ապրում էին մեծ թվով մեկուսացված տարածքներում, որոնք պահպանվում էին KFOR-ի կողմից: Դատական համակարգի անարդյունավետությամբ ավելի խորացած անպատժելիության ա-բառավոր կացությունից դուրս գալու համար ՄԱՄԿԱԿ-ն սկսեց դատավորներ և դատախազներ նշանակել:

1999թ. Անվտանգության խորհրդի կողմից ուրվագծված պլանի համաձայն, ՄԱՄԿԱԿ-ը պետք է ընտրություններ կազմակերպեր ու անցկացներ: ՄԺԿԼՄԿ-ն ամբողջովին ներգրավվեց տեղական ընտրություններում, որոնք տեղի ունեցան 2000թ. հոկտեմբերին: Սակայն սերբերից շատերը չմասնակցեցին այդ ընտրություններին՝ պատճառաբանելով անվտանգության բացակայությամբ և Կոսովոյից տեղահանված սերբերի վերադառնալու անկարողությամբ:

## Զինաթափում

Միավորված ազգերի կազմակերպության հիմնադրման օրվանից ի վեր բազմակողմ զինաթափման և զենքի սահմանափակման խնդիրները կենտրոնական են եղել նրա՝ միջազգային խաղաղության և անվտանգության ապահովման ջանքերում: Կազմակերպությունը մեծապես կարևորել է միջուկային զենքի կրճատումն ու վերացումը, քիմիական զենքի ոչնչացումը և կենսաբանական զենքի դեմ ուղղված արգելքների խստացումը, քանի որ այդ ամենը մարդկության դեմ ուղղված մեծագույն սպառնալիք է: Երբ այս ուղղությունը կայուն էր տարիների ընթացքում, ապա քաղաքական կացությունների և միջազգային իրավիճակի զարգացմանը զուգահեռ քննարկումների ու բանակցությունների շրջանակներն անընդհատ փոփոխվում էին:

Ներկայումս միջազգային հանրությունն ավելի մեծ ուշադրություն է դարձնում փոքր տրամաչափի և թեթև զինատեսակների չափից դուրս տարածմանն ու զանգվածային կուտակմանը, երևույթներ, որոնք խաթարում են համայնքների սոցիալ-տնտեսական առաջընթացը, սպանում և հաշմում մարդկանց,

հիմնականում՝ կանանց ու երեխաների: Նա արդեն սկսում է քննարկել նաև ռազմական նպատակներով բալիստիկ հրթիռների տեխնոլոգիաների տարածման դեմ միջազգային նորմերի սահմանման և միջազգային անվտանգության վրա տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների զարգացման ազդեցության ուսումնասիրման անհրաժեշտությունը:

Նշված ոլորտներում Միավորված ազգերի կազմակերպության էական դերը օժանդակությունն է անդամ պետություններին նոր նորմերի սահմանման ու գոյություն ունեցող համաձայնագրերի ամրապնդման հարցում: Անհատների, կազմակերպությունների և պետությունների միջև առկա կապերի հարաճուն բարդությունն անհրաժեշտ է դարձնում բազմակողմանի և համապարփակ մոտեցումների կիրառումը, ինչից կշահեն բոլորը:

## Զինաթափման մեխանիզմները

Զինաթափման մեխանիզմները ՄԱԿ-ի համար սահմանված են նրա կանոնադրության և Գլխավոր ասամբլեայի հետագա որոշումների մեջ:

---

## Բազմակողմ զինաթափումը և սպառազինումը կարգավորող համաձայնագրերը

*Բազմակողմ հանդիպումների և տարածաշրջանային համաժողովներում ընթացած բանակցությունների արդյունքում ձեռնարկված զինաթափման ու սպառազինությունների կարգավորմանը վերաբերող կարևորագույն միջազգային միջոցառումների ժամանակագրությունը ներառում է.*

- ***1959թ. Անտարկտիկայի դաշնագրով*** *ապառազմականացվում է մայրցամաքը և արգելվում են այնտեղ ամեն տեսակ զենքի փորձարկումները:*
- ***Մթնոլորտում, տիեզերքում և ջրի տակ միջուկային զենքի փորձարկումների արգելման վերաբերյալ 1963թ. դաշնագիրը (Փորձարկումների մասնակի արգելման պայմանագիր)*** *սահմանափակում է միջուկային փորձարկումները ստորգետնյա տեղամասերում:*
- ***Լատինական Ամերիկայում և Կարիբյան ավազանում միջուկային զենքի արգելման վերաբերյալ 1967թ. պայմանագիրը (Տլատելոլկոյի պայմանագիր)*** *արգելում է տարածաշրջանի երկրների կողմից միջուկային զենքի փորձարկումները, օգտագործումը, արտադրությունը, պահեստավորումն ու ձեռքբերումը:*
- ***Մերձակա տիեզերքի, ներառյալ Լուսնի ու երկնային մյուս մարմինների հետազոտման և օգտագործման սկզբունքների վերաբերյալ 1967թ. պայմանագիրը (Մերձակա տիեզերքի մասին պայմանագիրը)*** *սահմանում է, որ մերձակա տիեզերքը կարող է օգտագործվել միմիայն խաղաղ նպատակներով, և միջուկային զենքը չի կարող այնտեղ տեղակայվել կամ փորձարկվել:*
- ***Միջուկային զենքի չտարածման մասին 1968թ. դաշնագրով (ՉՏԴ)*** *ոչ միջուկային պետությունները համաձայնվում են ձեռք չբերել միջուկային զենք, իսկ դրա փոխարեն նրանց խոստում է տրվում, որ խաղաղ նպատակներով միջուկային էներգիայի օգտագործման եղանակները նրանց մատչելի կդառնան և օժանդակություն կստանան դրանց յուրացման գործում, միջուկային տերությունները խոստանում են միջուկային սպառազինությունների մրցավազքի դադարեցման և զինաթափման վերաբերյալ բանակցություններ սկսել և որևիցե կերպ չնպաստել այդ զենքի փոխանցմանը ոչ միջուկային պետություններին:*
- ***Ծովի և օվկիանոսի հատակին, ինչպես նաև ջրային տարածքների ենթահողի մեջ միջուկային զենքի տեղակայման արգելման մասին 1971թ. պայմանագիրը***

*(ծովի հատակի վերաբերյալ պայմանագիր)* արգելում է միջուկային զենքի կամ զանգվածային ոչնչացման այլ զինատեսակների տեղակայումը ծովի կամ օվկիանոսի հատակին:

- ***Բակտերիոլոգիական (կենսաբանական) զենքի արգելման մասին 1972թ. կոնվենցիան (ԲԶԿ)*** *արգելում է կենսաբանական և թունավոր նյութերի ստեղծումը, արտադրությունն ու կուտակումը և նախատեսում նման զինատեսակների ոչնչացումն ու դրանց փոխադրման միջոցների վերացումը:*
- ***Որոշ սովորական զինատեսակների մասին 1980թ. կոնվենցիան (ՍԶԿ)*** *արգելում է որոշ սովորական զինատեսակներ, որոնք համարվում են չափազանց վտանգավոր և անխտիր հետևանք են թողնում: Սա դասվում է հովանոցային տիպի համաձայնագրերի շարքին, որին կարելի է հավելել այլ համաձայնագրեր: 2000թ. դրությամբ այն արդեն 4 կամընտիր արձանագրություն ունի: Առաջին արձանագրությունն արգելում է այն զինատեսակները, որոնց պայթյունից առաջացած բեկորները ռենտգենյան ճառագայթներով մարմնի մեջ չեն երևում: Լրացված երկրորդ արձանագրությունը (1995թ.) սահմանափակում է ականների որոշ տեսակների, կախածուղակների և այլ սարքերի օգտագործումը: Երրորդ արձանագրությունն արգելում է թիրախների հրկիզմանը միտված հրդեհածին զենքի օգտագործումը: Չորրորդ արձանագրությունն արգելում է կուրացնող լազերային զենքի օգտագործումը:*
- ***Հարավխաղաղօվկիանոսյան միջուկազերծ գոտու մասին 1985թ. պայմանագիրը (Ռարոտոնգայի պայմանագիր)*** *արգելում է միջուկային պայթուցիկ սարքերի տեղակայումը, ձեռքբերումն ու փորձարկումները և այդ գոտում միջուկային թափոնների թաղումը:*
- ***Եվրոպայում սովորական զինված ուժերի մասին պայմանագիրը 1990թ. (ԵՍԶՈՒ պայմանագիր)*** *սահմանափակում է Ատլանտյան օվկիանոսից մինչև Ուրալ ձգվող տարածքում սովորական սպառազինությունների բնաքանակը:*
- ***Քիմիական զենքի մասին 1993թ. կոնվենցիան (ՔԶԿ)*** *արգելում է քիմիական զենքի ստեղծումը, արտադրությունն ու կուտակումը և պահանջում է դրանց ոչնչացումը:*
- ***Հարավարևելյան Ասիան միջուկազերծ գոտի հայտարարելու մասին 1995թ. պայմանագիրը (Բանգկոկի պայմանագիր)*** *արգելում է միջուկային զենքի ստեղծումն ու տեղակայումը պայմանագիրն ստորագրած պետությունների տարածքում:*
- ***Աֆրիկյան միջուկազերծ գոտու մասին 1996թ. պայմանագիրը (Պելինդաբայի դաշնագիր)*** *արգելում է միջուկային զենքի ստեղծումն ու տեղակայումը աֆրիկյան մայրցամաքում:*
- ***Միջուկային փորձարկումների համապարփակ արգելման մասին 1996թ. պայմանագիրը (ԴՓԱՊ)*** *համաշխարհային մակարդակով արգելք է սահմանում ցանկացած միջավայրում միջուկային պայթյունների վրա:*
- ***Ականների արգելման մասին 1997թ. կոնվենցիան*** *արգելում է հակահետևակային ականների օգտագործումը, կուտակումը, արտադրությունն ու փոխանցումը, և նախատեսում դրանց ոչնչացումը:*

---

Կանոնադրությունը **Գլխավոր ասամբլեային** է վերապահում «միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման ոլորտում համագործակցության հիմնական սկզբունքների սահմանման գլխավոր պատասխանատվությունը, ներառյալ զինաթափման և սպառազինությունների կարգավորման սկզբունքները» (հոդված 11): Գլխավոր ասամբլեան երկու ենթակա մարմիններ ունի, որոնք զբաղվում են սպառազինություններին առնչվող հարցերով. Զինաթափման և միջազգային անվտանգության հանձնաժողովը (Առաջին կոմիտե), որի նիստերը տեղի են ունենում հերթական նստաշրջանի ընթացքում՝ դիտարկելով Գլխավոր ասամբլեայի օրակարգում դրված բոլոր զինաթափման հարցերը, և ՄԱԿ-ի զինաթափման հանձնաժողովը, որը որոշակի հարցերում մասնագիտացված խորհրդակցական մարմին է:

## Երկկողմ համաձայնագրեր

*Հակաբալիստիկ հրթիռային համակարգերի մասին 1972թ. պայմանագիրը (ՀՀՀ)* սահմանափակում է Միացյալ Նահանգների և ԽՍՀՄ-ի հակաբալիստիկ հրթիռային համակարգերի թվաքանակը՝ յուրաքանչյուր կողմից թողնելով մեկական համակարգ: Միացյալ Նահանգների և Ռուսաստանի Դաշնության միջև 1997թ. «սահմանազատման» համաձայնագիրը տարբերակում է «ռազմավարական» կամ հեռահար ՀՀՀ-ները, որոնք արգելված են, և «ոչ ռազմավարական» կամ մոտ հեռավորության ՀՀՀ-ները, որոնք արգելված չեն:

*Միացյալ Նահանգներ-ԽՍՀՄ* ***միջին և մոտ հեռավորության միջուկային ուժերի մասին 1987թ. պայմանագիրը (ՄԵՌՒ պայմանագիր)*** *վերացրեց միջուկային զինատեսակների մի ամբողջ դաս, ներառյալ 500-5.500 կմ հեռավորության բոլոր ցամաքային բալիստիկ և ոչ բալիստիկ հրթիռները: Մինչև 1996թ. վերջը, ըստ պայմանագրի, ոչնչացման ենթակա բոլոր հրթիռները վերացվեցին:*

*Միացյալ Նահանգներ-ԽՍՀՄ* ***ռազմավարական սպառազինությունների սահմանափակման և կրճատման մասին 1991թ. պայմանագիրը (ՌՍԿԴ I)*** *երկու կողմից տեղակայված 1.600 հեռահար միջուկային հրթիռների մարտագլխիկների առավելագույն քանակը մինչև 2001թ. սահմանում է 6 հազար՝ այդպիսով 1991թ. պաշարները կրճատելով մոտ 30%-ով:*

***ՌՍԿԴ I-ին կից 1992թ. Լիսաբոնյան արձանագրությունը*** *Ռուսաստանի Դաշնությանը, Բելառուսին, Ղազախստանին և Ուկրաինային որպես ԽՍՀՄ-ի իրավահաջորդների, պարտավորեցնում էր հավատարիմ մնալ ՌՍԿԴ I-ին, Բելառուսը, Ղազախստանը և Ուկրաինան որպես ոչ միջուկային պետություններ, պետք է միանային ՉՏԳ-ին: Մինչև 1996թ. այս երեք երկրները հանեցին իրենց տարածքում եղած միջուկային բոլոր զենքերը:*

***Ռազմավարական սպառազինությունների սահմանափակման և կրճատման մասին 1993թ. պայմանագիրը (ՌՍԿԴ II)*** *երկու կողմերին պարտավորեցնում էր մինչև 2003թ. տեղակայված հեռահար միջուկային հրթիռների մարտագլխիկների քանակը հասցնել 3,500-ի և վերացնել բազմակի անկախ նշանառության մարտագլխիկներով կահավորված միջմայրցամաքային բալիստիկ հրթիռները: 1997թ. կնքված համաձայնագրով հետաձգման համակարգերի՝ հրթիռակիրների, ռմբակոծիչների և սուզանավերի ոչնչացման վերջնաժամկետը սահմանվում էր մինչև 2007թ. վերջը:*

*1997թ. համաձայնություն ձեռք բերվեց ՌՍԿԴ II-ի ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո միջուկային զենքի առկա պաշարների հետագա կրճատման նպատակով ՌՍԿԴ III-ի շուրջ բանակցություններ սկսելու վերաբերյալ: Ոչ պաշտոնական բանակցությունները ընթացքի մեջ են, սակայն պաշտոնական բանակցություններ դեռևս չեն սկսվել:*

**Զինաթափմանը նվիրված կոնֆերանսը** միակ բազմակողմ բանակցային ատյանն է զինաթափման մասին համաձայնագրերի համար: Այս մարմինը, որը պետությունների ազգային անվտանգությունը շոշափող հարցերում գործում է միմիայն կոնսենսուսի հիման վրա, սահմանափակ թվով՝ 66 անդամ ունի և յուրահատուկ հարաբերությունների մեջ է Գլխավոր ասամբլեայի հետ: Նա սահմանում է իր սեփական կանոնները ու մշակում սեփական օրակարգը, սակայն հաշվի է առնում Գլխավոր ասամբլեայի առաջարկությունները ու ամենամյա հաշվետվություն ներկայացնում վերջինիս: Կոնֆերանսը հաջողությամբ բանակցություններ վարեց Քիմիական զենքի մասին կոնվենցիայի և Միջուկային փորձարկումների արգելման մասին 1996թ. համապարփակ պայմանագրի շուրջ: 1997թ. ի վեր կոնֆերանսը իր անդամների շրջանում զինաթափման գծով համաձայնությունների վերաբերյալ կոնսենսուսի բացակայության պատճառու

որևէ բանակցության մեջ չի ներգրավվել:

Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարությունում **Զինաթափման հարցերի վարչությունը** իրագործում է Գլխավոր ասամբլեայի որոշումները զինաթափման վերաբերյալ:

**ՄԱԿ-ի զինաթափման հարցերի հետազոտական ինստիտուտը (ՄԱԶՀԻ)** հետազոտություններ է կատարում զինաթափման և միջազգային անվտանգության հարցերի, մասնավորապես զինաթափման հետ կապված նորահայտ խնդիրների ու կանխատեսելի հետևանքների վերաբերյալ:

**Զինաթափման հարցերի խորհրդատվական կոլեգիան** խորհրդատվություն է մատուցում Գլխավոր քարտուղարին սպառազինությունների սահմանափակման և զինաթափման, ինչպես նաև ՄԱԿ-ի զինաթափման տեղեկատվության ծրագրի հարցերով և կատարում է ՄԱԶՀԻ-ի հոգաբարձուների հանձնախմբի դերը:

# Զանգվածային ոչնչացման զենքեր

## Միջուկային զենք

Հետևողական ջանքերի շնորհիվ միջազգային հանրությունը հասավ միջուկային զինանոցի կրճատմանը վերաբերող բազմաթիվ համաձայնագրերի կայացմանը՝ բացառելով դրա տեղակայումը որոշակի տարածքներում (օր. երկրամերձ տիեզերական տարածքներում, օվկիանոսի հատակին) և սահմանափակելով դրա տարածումն ու վերջ դնելով փորձարկումներին: Չնայած դրան, միջուկային զենքն ու դրա տարածումը շարունակում է մնալ որպես խաղաղության հիմնական սպառնալիքն ու միջազգային հանրության ձեռնված գլխավոր մարտահրավերը:

1996թ. Արդարադատության միջազգային դատարանն ուսումնասիրեց միջուկային զենքի սպառնալիքի կամ գործածության իրավական կողմերը և խորհրդատվական կարգով հաստատեց, որ պետությունները պարտավոր են «բարեխղճորեն ներգրավված լինել և *ավարտին հասցնել* միջուկային զինաթափման շուրջ բանակցությունները՝ բոլոր առումներով»: Այս օրերում կենսական նշանակություն ունեն բալիստիկ հրթիռների և հակահրթիռային պաշտպանության համակարգերի մշակման խնդիրները, միջուկային զենքի գաղտնի ծրագրերի հնարավորությունը, միջուկային զենքի տարածման վտանգը, միջուկային զենքի փորձարկումները Հարավային Ասիայում և առաջատար պետությունների կողմից Միջուկային փորձարկումների արգելման մասին համապարփակ համաձայնագրի վավերացման անհրաժեշտությունը:

### Միջուկային զենքի վերաբերյալ երկկողմ համաձայնագրեր

Թեև տարբեր ատյաններում շարունակվում են միջազգային ջանքեր գործադրվել միջուկային զենքի սանձահարման ուղղությամբ, հանրորեն ընդունված է, որ միջուկային տերությունները առանձնահատուկ պատասխանատվու-

թյուն են կրում միջազգայնորեն կայուն անվտանգության միջավայրի պահպանման համար: Սառը պատերազմի ընթացքում և դրանից հետո երկու խոշորագույն տերությունների միջև համաձայնություններ կայացան, որոնք զգալիորեն նվազեցրին միջուկային պատերազմի սպառնալիքը:

**Բազմակողմ համաձայնագրեր միջուկային զենքի և դրա չտարածման մասին**

Միջուկային զենքի չտարածման մասին 1968թ. պայմանագիրը (ՉՏՊ), որն անորոշ ժամանակով երկարաձգվեց 1995թ., համարվում է միջուկային զենքի չտարածման համաշխարհային փորձելակերպի անկյունաքարը: 2000թ. ՉՏՊ-ն ստորագրած կողմերի գումարած ստուգիչ կոնֆերանսը վերջնական փաստաթուղթ ընդունեց, որում միջուկային զենք ունեցող պետությունները անվերապահորեն համաձայնություն եղան «...իրագործել իրենց միջուկային զինանոցների համընդհանուր ոչնչացումը»: Կոնֆերանսի մասնակիցները համաձայնեցին, որ հարկավոր է ավելացնել միջուկային զենքի պաշարների վերաբերյալ տեղեկատվության թափանցիկությունը, ինչպես նաև նվազեցնել միջուկային զենքի դերը անվտանգության քաղաքականության մեջ:

ՉՏՊ-ով ստանձնած պարտավորությունների կատարումն ստուգելու նպատակով այն ստորագրած պետություններից պահանջվում է ընդունել ԱԷՄԳ–ի հանձնարարականները: Մինչև 1999թ. վերջն այդ հանձնարարականներին առնչվող 224 համաձայնագրեր են կնքվել 140 պետությունների հետ (այդ թվում Թայվանի ու Չինաստանի), ներառյալ 127 համապարփակ համաձայնագիր կազմված ՉՏՊ-ի հիման վրա: Այնուհանդերձ ՉՏՊ-ն ստորագրած 55 պետություններ դեռևս չեն կատարել ԱԷՄԳ-ի հետ նման համաձայնագիր կնքելու վերաբերյալ իրենց հանձնառությունը:

Ի լրումն ՉՏՊ-ի, Տլատելոլկոյի, Ռարոտոնգայի, Բանգկոկի և Պելինդաբայի դաշնագրերը ոչ միջուկային պետություններից ևս պահանջում են կիրառել ԱԷՄԳ–ի հանձնարարականները:

1996թ. Գլխավոր ասամբլեայի անդամների գերակշիռ մեծամասնությունն ընդունեց *Միջուկային փորձարկումների համապարփակ արգելման մասին պայմանագիրը (ՓՀԱՊ)*, որով ամենուրեք արգելվում են ամեն տեսակ միջուկային պայթյունները, ըստ որում նման առաջարկություն եղել է դեռևս 1954թ. և չորս տասնամյակ շարունակ մնացել անկատար: Այդ պայմանագիրը փաստորեն ընդարձակում էր բոլոր միջավայրերում միջուկային պայթյունների 1963թ ընդունված մասնակի արգելքը: Նախքան պայմանագրի ուժի մեջ մտնելը միջազգային վերահսկողության համակարգի գործողությունն ապահովելու նպատակով **Միջուկային փորձարկումների համապարփակ արգելման պայմանագրի կազմակերպության (ՓՀԱՊԿ)** նախապատրաստական հանձնաժողովին (նստավայրը Վիեննայում է) մասնակցող շուրջ 150 պետությունների հետ համատեղ աշխատանքներ են տարվում 1997թ. նշանակված ժամանակավոր տեխնիկական քարտուղարության կողմից:

Միավորված ազգերի կազմակերպության և ՓՀԱՊԿ-ի նախապատրաստական հանձնաժողովի միջև հարաբերությունների կանոնակարգման մասին համաձայնագիր կնքվեց 2000թ. :

### Միջուկային զենքից ազատ գոտիներ

*1967թ. Լատինական Ամերիկայում և Կարիբյան ավազանում միջուկային զենքի արգելման վերաբերյալ պայմանագրի (Տլատելոլկոյի պայմանագիր)* ստորագրմամբ առաջին անգամ միջուկային զենքից ազատ գոտի հիմնվեց աշխարհի բնակեցված շրջաններից մեկում:

Այդ ժամանակվանից ի վեր երեք նման գոտիներ են հիմնվել. Հարավխաղաղօվկիանոսյան շրջանում *(Ռարոտոնգայի պայմանագիր, 1985թ.)*, Հարավարևելյան Ասիայում *(Բանգկոկի պայմանագիր, 1995թ.)* և Աֆրիկայում *(Պելինդաբայի պայմանագիր, 1996թ.)*: Այդ պայմանագրերի շնորհիվ բնակեցված Հարավային կիսագունդն ամբողջությամբ միջուկային զենքից ազատ գոտու կարգավիճակ ունի, ինչը մեծապես նվազեցնում է միջուկային զենքի տարածման վտանգը: Առաջարկություններ են եղել Կենտրոնական Ասիայում, Կենտրոնական Եվրոպայում և Հարավային Ասիայում միջուկային զենքից ազատ գոտիներ հիմնելու, ինչպես նաև Մերձավոր Արևելքում զանգվածային ոչնչացման զենքերից ազատ գոտու ստեղծման վերաբերյալ: Միջուկային զենքից ազատ առանձին պետության գաղափարը միջազգային հանրության կողմից ընդունվեց 1998թ., երբ Գլխավոր ասամբլեան պաշտպանեց Մոնղոլիայի հայտարարությունն իր տարածքը միջուկային զենքից ազատ հռչակելու մասին:

### Միջուկային զենքի տարածման կանխարգելումը

**Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունը (ԱԷՄԳ)** կարևոր դեր է խաղում միջուկային զենքի տարածման կանխարգելմանն ուղղված միջազգային ջանքերում: ԱԷՄԳ-ն աշխարհում տեսչական գործունեություն է իրականացնում միջուկային ապահովությանն առնչվող հանձնարարականների կատարման և քաղաքացիական միջուկային ծրագրերի ստուգման միջոցառումների իրականացման համար:

Տարբեր պետությունների հետ կնքված համաձայնագրերի հիման վրա ԱԷՄԳ-ի տեսուչները միջուկային նյութերի գտնվելու վայրի մասին տեղեկատվության, ԱԷՄԳ-ի կողմից տեղադրված գործիքների և վերահսկիչ սարքավորումների ստուգման, միջուկային նյութերի պաշարների հաշվառման և մանրակրկիտ զեկույցների պատրաստման նպատակով պարբերաբար այցելում են միջուկային օբյեկտներ: Հանրագումարում այս և մյուս անվտանգության միջոցառումները անկախ միջազգային ստուգումներ իրականացնելու հնարավորություն են տալիս համոզվելու համար, որ կառավարությունները կատարում են միջուկային էներգիայի խաղաղ օգտագործման վերաբերյալ իրենց ստանձնած պարտավորությունները:

Ներկայումս 140 երկրներում (նաև՝ Թայվանում և Չինաստանում) գործող միջուկային ապահովության մասին 224 համաձայնագրերի կենսագործման ստուգման նպատակով ԱԷՄԳ-ի 200 փորձագետներ տեղերում ամենօրյա ստուգումներ են կատարում, որոնց թիվը ամեն տարի հասնում է շուրջ 2,500-ի: Դրանց նպատակը այն համոզվածության ապահովումն է, որ աշխարհի շուրջ 70 երկրում տեղակայված 900 միջուկային կայաններում պահվող միջուկային նյութերը ոչ խաղաղ նպատակներով չեն օգտագործվում: Այդպիսով ԱԷՄԳ-ն

նպաստում է միջազգային անվտանգությանը և ատոմային սպառազինությունների տարածման կանխարգելմանը:

ԱԷՄԳ-ի հետ կարևոր է կնքել միջուկային անվտանգության մասին տարբեր տեսակի համաձայնագրերի: ՉՏՊ-ին առնչվողներն, այն է՝ *Միջուկային անվտանգության մասին պայմանագրություն ունեցող համաձայնագրերին կից տիպային արձանագրությունը, Տլատելոլկոյի պայմանագիրը, Պելինդաբայի պայմանագիրը և Ռարոտոնգայի պայմանագիրը (տես վերևում)* ոչ միջուկային պետություններից պահանջում են իրենց միջուկավառելիքային ցիկլի ամբողջ գործունեությունը ենթարկել ԱԷՄԳ-ի անվտանգության պահանջներին: Համաձայնագրի մյուս տեսակները վերաբերում են առանձին տեղակայանքների անվտանգության պահանջներին: ՉՏՊ-ի շրջանակներում ԱԷՄԳ-ի ներկայացրած պահանջները չտարածման գործելակերպի բաղկացուցիչ մասն են կազմում և անփոխարինելի դեր են կատարում պայմանագրի իրականացման գործում:

## Քիմիական և կենսաբանական զենքի սպառնալիքի չեզոքացումը

**1997թ. Քիմիական զենքի մասին կոնվենցիայի (ՔԶԿ)** ուժի մեջ մտնելով ավարտվեց դեռևս 1925թ. սկսված գործընթացը, երբ Ժնևի արձանագրությամբ արգելվեց թունավոր գազ պարունակող զենքերի օգտագործումը: Կոնվենցիան անդամ պետությունների կողմից դաշնագրային պարտավորությունների կատարումը վերահսկելու նպատակով զենքի միջազգային վերահսկողության պատմության մեջ առաջին անգամ ստեղծեց միջազգային ստուգումների խիստ գործելակերպ (ներառյալ քիմիական կայանքների մասին տեղեկատվության կառավարումն ու աշխարհով մեկ կանոնավոր ստուգումների անցկացումը): Այդ նպատակով Հաագայում հիմնված **Քիմիական զենքի արգելման կազմակերպությունը (ՔԶԱԿ)** մինչև 2000թ. հոկտեմբերը 44 անդամ պետություններում կատարել է ավելի քան 850 տեսչական ստուգումներ: Տեսչությունների արդյունքում նա հաստատել է, որ կոնվենցիայում նշված քիմիական զենք արտադրող բոլոր 60 գործարանները փակվել են: Միավորված ազգերի կազմակերպության և ՔԶԱԿ-ի միջև 2000թ. հարաբերությունների մասին համաձայնագիր է ստորագրվել:

Ի տարբերություն ՔԶԿ-ի, 1972թ. **Կենսաբանական զենքի մասին կոնվենցիան (ԿԶԿ)**, որն ուժի մեջ մտավ 1975թ., ստուգման մեխանիզմներ չի նախատեսում: 1995թ. ի վեր բանակցություններ էին ընթանում՝ մշակելու համար մի արձանագրություն, որը կուժեղացներ ԿԶԿ-ն՝ ստեղծելով կոնվենցիայի կատարմանը նպաստող միջոցառումների համակարգ և ապահովելով տեխնիկական համագործակցության և օգնության մասին դրույթների իրագործումը: Շատ պետություններ պահանջում էին նրա ստորագրումը նախքան 2001թ. ծրագրված ԿԶԿ-ի վերանայման կոնֆերանսի սկսվելը: Մինչ այդ անդամ պետությունները, որպես վստահության ամրապնդող միջոցառում, ամեն տարի տեղեկատվություն են փոխանակում իրենց ռիսկային կենսաբանական հետազոտական հաստատությունների վերաբերյալ: ԿԶԿ-ն ու ՔԶԱԿ-ը համընդհանուր դարձ-

նեցը և իրագործելը, ինչպես նաև ոչ անդամ պետություններին այդ զինատեսակների փոխանցումը կանխելը միջազգային հանրության կարևորագույն խնդիրներից են:

---

## Ականների դեմ պայքարը

*1980-ականներից ի վեր Միավորված ազգերի կազմակերպությունը զբաղվում էր ավելի քան 60 երկրներում սփռված միլիոնավոր մահաբեր ականների խնդրով: Ամեն տարի հազարավոր մարդիկ՝ հիմնականում երեխաներ, կանայք և մեծահասակներ, հաշմվում կամ սպանվում են այդ «համր մարդասպանների» կողմից: Ընդ որում, աշխարհի տարբեր երկրներում շարունակում են նոր ականներ տեղակայվել:*

*1994թ. ի վեր Գլխավոր ասամբլեան «Հակաականային միջոցառումների աջակցության» հարցն ընդգրկել է իր օրակարգում: Դիվանագիտական լուծման նպատակով մշակվել են միջազգային կոնվենցիաներ, ներառյալ ՄԱԿ-ի հովանու ներքո կազմված Անմարդկային զենքերի մասին կոնվենցիան (1980թ.), որը լրացվեց 1996թ.՝ ընդգրկելով ներքին հակամարտություններում ականների գործածության հարցը և սահմանելով, որ բոլոր ականները պետք է բացահայտելի լինեն: 1997թ. մի խումբ անդամ պետությունների, այդ թվում Կանադայի ու Նորվեգիայի միացյալ ջանքերն ու ոչ կառավարական կազմակերպությունների հետ համագործակցությունը հանգեցրին հակահետևակային ականների արտադրության, օգտագործման և պահեստավորման արգելմանը:*

***ՄԱԿ-ի Ականների դեմ պայքարի ծառայությունը** հանդիսանում է ականների դեմ պայքարի կիզակետը և համադրում է ՄԱԿ-ի գործակալությունների, հիմնադրամների և ծրագրերի ականներին առնչվող ողջ գործունեությունը: Կառավարությունները ավելի ու ավելի հաճախ են դիմում Միավորված ազգերի կազմակերպությանը՝ որպես խաղաղապահ առաքելության, արտակարգ իրավիճակներում, ինչպես նաև ականների ու չպայթած արկերի հետ կապված երկարաժամկետ խնդիրները լուծելու նպատակով ականազերծման ծրագրեր սկսելու և դրանց իրականացումը վերահսկելու խնդրանքով: Այսօր հազարավոր միջազգային և տեղական նշանակության զինվորականներ ներգրավված են շուրջ 30 երկրներում ընթացող ՄԱԿ-ի ծրագրերում: Նրանք զբաղված են ականների վերաբերյալ գիտելիքներ տարածելով, զոհերին օգնելով, ականապատված դաշտերը նշագծելով, քարտեզագրելով, ականազերծելով և դրանց հետևանքները ուսումնասիրելով:*

*Նման գործողություններ են իրականացվում Հարավարևելյան Ասիայի, Աֆրիկայի, Կենտրոնական և Հարավային Ամերիկաների և Բալկանների ամենաշատ տուժած երկրներում: Դրանք ապացուցում են, որ ականների դեմ կարելի է մղել արդյունավետ և անդադար պայքար. անհրաժեշտ հնարավորությունների, նվիրվածության և միջոցների առկայության դեպքում խնդիրները աստիճանաբար լուծվում են և կյանքը վերադառնում է բնականոն հուն:*

---

## Սովորական զինատեսակներ, վստահության ամրապնդում և թափանցիկություն

**Փոքր տրամաչափի զինատեսակներ, թեթև զենքեր և գործնական զինաթափում:** Ըստ գնահատումների, փոքր տրամաչափի զինատեսակների համաշխարհային առևտրի 40-60%-ն ապօրինի է: Ապօրինի զենքերի տարածման նկատմամբ վերահսկողությունն առաջին անհրաժեշտ քայլն է դեպի փոքր տրամաչափի զինատեսակների տարածման կանխարգելումը: Փոքր զենքերի առևտրի և շրջանառության բոլոր կողմերին նվիրված ՄԱԿ-ի կոնֆերանսը տե-

դի ունեցավ 2001թ.: Միավորված ազգերի կազմակերպության համակարգում «Փոքր տրամաչափի զինատեսակների դեմ պայքարի համադասում» կոչվող մի մեխանիզմ մշակվեց 1998թ., որով պետք է համակարգվեր փոքր տրամաչափի զինատեսակների ընդհանուր վերահսկողությունը:

Գլխավոր ասամբլեան 1996թ. շահագրգիռ պետություններին առաջարկեց հետպատերազմական իրավիճակներում ծագող խնդիրների լուծման հարցում պետություններին օժանդակելու համար աշխատանքային խումբ ստեղծել: Հետագայում հատկապես տուժած երկրների նախաձեռնած գործնական զինաթափման կոնկրետ նախագծերը քննելու և աջակցություն ցուցաբերելու նպատակով «զինաթափման գործնական միջոցառումներում շահագրգռված պետությունների» մի խումբ հիմնվեց: Խմբի առաջարկությամբ Գլխավոր քարտուղարը 1998թ. ստեղծեց հոգաբարձուների հիմնադրամ, որն իր նպաստը բերեց մի շարք նախագծերի, ներառյալ ալբանական նախագծին, որը քաղաքացիական բնակչությանը հորդորում էր կամավոր կերպով հանձնել զենքերը՝ փոխարենը նյութապես խթանելով համայնքների զարգացումը:

**Հակահետևակային ականներ:** Ողջ աշխարհում հակահետևակային ականների հարաճուն տարածումն ու անխտիր գործածությունը հատուկ ուշադրության առարկա է դարձել: 1995թ. *Որոշ սովորական զինատեսակների մասին կոնվենցիայի* (այսպես կոչված *Անմարդկային զենքերի մասին կոնվենցիայի կամ ԱԶԿ-ի*) քննության արդյունքում ծնվեց փոփոխված II արձանագրությունը, որը խստացնում էր ականների որոշ տեսակների (ինքնաոչնչացվող և բացահայտելի) օգտագործումը և փոխանցումը:

Չբավարարվելով, սակայն, ըստ իրենց, լուրջ մարդասիրական ճգնաժամի դիմագրավմանն ի խնդիր ձեռնարկված քայլերով՝ համակարծիք պետությունների մի խումբ բանակցություններ սկսեց բոլոր հակահետևակային ականների լիակատար արգելման մասին համաձայնագիր կնքելու նպատակով, այն է՝ Հակահետևակային ականների օգտագործման, կուտակման, արտադրության, փոխանցման և ոչնչացման մասին կոնվենցիա (Ականամերժ կոնվենցիա), որը ստորագրման ներկայացվեց 1997թ. Օտտավայում (Կանադա): 2000թ. վերջին այն արդեն վավերացրել էին 109 պետություններ:

Այս կոնվենցիան խթանեց անմեղ մարդկային տառապանքների նվազեցմանն ուղղված քարոզարշավը՝ ավելացնելով ականազերծման, ականների վերաբերյալ գիտելիքների տարածման և համապատասխան օգնության տրամադրման միջոցները: Առաջարկվեց, որ Զինաթափման կոնֆերանսը բանակցություններ սկսի ականների փոխանցման վրա արգելքի սահմանման շուրջ, մի քայլ, որն ընդունելի կհամարվեր կոնվենցիային չմիացած մի շարք պետությունների կողմից:

**Սովորական զինատեսակների հաշվառումը:** Զենքի փոխանցման հարցում թափանցիկության ավելացման նպատակով, ինչը կնպաստի պետությունների միջև փոխադարձ վստահության ամրապնդմանն ու անվտանգության մթնոլորտի ստեղծմանը, Գլխավոր ասամբլեան 1992թ. նախաձեռնեց *սովորական զի-*

*նատեսակների Միավորված ազգերի կազմակերպության հաշվառումը*: Դա կառավարություններին հնարավորություն է տալիս կամավոր հիմունքներով տեղեկատվություն տրամադրել այլ պետություններին իրենց կողմից փոխանցված այնպիսի խոշոր զինահամակարգերի վերաբերյալ, ինչպիսիք են օդանավերը, տանկերը, ռազմական նավերը, հրետանին ու հրթիռային համակարգերը: Այդ տվյալները կուտակվում և ամեն տարի որպես պաշտոնական փաստաթղթեր հրապարակվում են ՄԱԿ-ի կողմից, որոնք մատուցվում են լայն հասարակությանը նաև Միավորված ազգերի կազմակերպության վեբկայքի միջոցով: Ռազմական հարցերում թափանցիկության նպաստող մեխանիզմներից է նաև 1980թ. ներդրված ռազմական ծախսերի միասնական հաշվետվության ՄԱԿ-ի համակարգը:

**Սպառազինությունների մրցավազքի կանխարգելումը տիեզերքում:** Տիեզերքին առնչվող հարցերը միջազգային ամբիոններում արծարծվում են երկու առանձին տեսանկյուններից. տիեզերական տեխնոլոգիաների խաղաղ նպատակներով օգտագործում ու տվյալ միջավայրում սպառազինությունների մրցավազքի կանխարգելում: Այդ հարցերը քննարկման առարկա են դարձել Գլխավոր ասամբլեայում, Խաղաղ նպատակներով տիեզերքի օգտագործման կոմիտեում և վերջինիս առընթեր մարմիններում:

Որպես երկրամերձ տիեզերական տարածության ռազմականացման կանխարգելման կարևորության ճանաչում՝ Գլխավոր ասամբլեայի զինաթափմանը նվիրված առաջին նստաշրջանը (1978թ.) պահանջեց միջազգային բանակցություններ սկսել տվյալ հարցի վերաբերյալ: 1982թ. ի վեր Զինաթափման կոնֆերանսի օրակարգում դրված է տիեզերքում սպառազինությունների մրցավազքի կանխարգելման հարցը, սակայն առայսօր բազմակողմ համաձայնագրի ուղղությամբ առաջընթացը մեծ չէ, քանի որ նրա անդամների միջև դեռևս որոշ տարաձայնություններ կան:

**Զինաթափման և զարգացման փոխհարաբերությունները:** Արդյունավետ միջազգային վերահսկողության ներքո իրականացվելիք զինաթափման շնորհիվ ազատված միջոցների՝ զարգացման նպատակներով օգտագործման հարցը երկար ժամանակ քննարկվում է անդամ պետությունների կողմից: Զինաթափման և զարգացման աղերսներին նվիրված միջազգային կոնֆերանս անցկացվեց 1987թ., որի ժամանակ գործողությունների ծրագիր ընդունվեց: Սակայն, չնայած սառը պատերազմն արդեն ավարտվել էր, անդամ պետությունները առանձնապես մեծ հետաքրքրություն չէին ցուցաբերում, քանի որ «խաղաղության շահաբաժինը» չէր նյութականանում: 1999թ. ՄԱԿ-ի քարտուղարության կողմից ստեղծված Զինաթափման և զարգացման հարցերով բարձր մակարդակի ղեկավար մի հանձնախումբ ընդգծեց 1987թ. կոնֆերանսից հետո միջազգային իրադրության մեջ կատարված փոփոխությունների լույսի ներքո զինաթափման և զարգացման փոխհարաբերությունների հարցին կրկին անդրադառնալու անհրաժեշտությունը:

**Տարածաշրջանային մոտեցումները զինաթափման ոլորտում:** Միավորված ազգերի կազմակերպությունն աջակցում է տարածաշրջանային և ենթատարածաշրջանային մակարդակներով ձեռնարկված զինաթափման միջոցառումներին և նպաստում է այս կամ այն տարածաշրջանում անվտանգության և փոխվստահության ամրապնդմանը: Աֆրիկայում (Լոմե, Տոգո), Ասիայում և Խաղաղօվկիանոսյան շրջանում (Կատմանդու, Նեպալ), ինչպես նաև Լատինական Ամերիկայում ու Կարիբյան ավազանում խաղաղության և զինաթափման ՄԱԿ-ի տարածաշրջանային կենտրոնների գործունեությունը ենթադրում է նաև համամոլորակային անվտանգության ենթատեքստում զինաթափման տարածաշրջանային մոտեցումների մշակման համար 1993թ. Զինաթափման հանձնաժողովի կողմից ընդունված ուղենիշների ու հանձնարարականների կատարման նպատակով օժանդակության ցուցաբերում անդամ պետություններին: Տարածաշրջանային զինաթափման աջակցության խնդրում Միավորված ազգերի կազմակերպությունը համագործակցում է տարածաշրջանային կառավարական և ոչ կառավարական այնպիսի կազմակերպությունների հետ, ինչպիսիք են Աֆրիկյան միասնության կազմակերպությունը (ԱՄԿ), Արաբական երկրների լիգան և Ամերիկյան պետությունների կազմակերպությունը (ԱՊԿ):

**Զինաթափմանն առնչվող տեղեկատվությունը և իրազեկման քաղաքականությունը:** *Զինաթափման տեղեկատվության ծրագրի* շրջանակներում ՄԱԿ-ն զբաղվում է նաև տեղեկատվական և քարոզչական գործունեությամբ, որի նպատակը սպառազինությունների վերահսկման և զինաթափման ոլորտում Միավորված ազգերի կազմակերպության խնդիրների պարզաբանումն ու ներկայացումն է միջազգային հանրությանը, ինչպես նաև հասարակական աջակցության ապահովումը: Ծրագիրը ներառում է գործունեության լայն շրջանակ. հրապարակումներ, հատուկ միջոցառումներ, հանդիպումներ, սեմինարներ, համատեղ քննարկումներ, ցուցահանդեսներ և ինտերնետային էջ (www.un.org/Depts/dda/index.html):

1978թ. Գլխավոր ասամբլեայի նախաձեռնած *Միավորված ազգերի կազմակերպության զինաթափմանը նվիրված գիտակրթական ծրագրի դասընթացներին* մասնակցել են շուրջ 150 երկրների ավելի քան 500 պաշտոնատարներ, որոնցից շատերը ներկայումս իրենց կառավարությունների ներսում զինաթափման գծով առանցքային պաշտոններ են զբաղեցնում:

## Երկրամերձ տիեզերական տարածության օգտագործումը խաղաղ նպատակներով

Միավորված ազգերի կազմակերպությունը գործում է ի նպաստ խաղաղ նպատակներով տիեզերական տարածության օգտագործման՝ ձգտելով, որ տիեզերական ծրագրերը հավասարապես շահեկան լինեն բոլոր ազգերի համար: Խաղաղ նպատակներով տիեզերքի օգտագործման նկատմամբ հետաքրքրությունն առաջացավ 1957թ. ԽՍՀՄ-ում առաջին արհեստական արբանյակի՝

«Սպուտնիկի» արձակմամբ և տիեզերական տեխնոլոգիաների զարգացմամբ համընթաց էլ ավելի խորացավ: ՄԱԿ-ը կարևոր դեր խաղաց՝ մշակելով տիեզերական գործունեությանը վերաբերող միջազգային օրենքներ և սատարելով տիեզերական գիտությունների և տեխնոլոգիաների ոլորտում միջազգային համագործակցությանը:

Այս ոլորտում գլխավոր միջկառավարական մարմինը **Խաղաղ նպատակներով տիեզերական տարածության օգտագործման ՄԱԿ-ի կոմիտեն** է: Վերջինս քննում է խաղաղ նպատակներով տիեզերական տարածության օգտագործման ոլորտում միջազգային համագործակցության շրջանակները, մշակում ծրագրեր. ուղղորդում ՄԱԿ-ի տեխնիկական համագործակցությունը, խրախուսում գիտահետազոտական աշխատանքները ու տեղեկատվության տարածումը և նպաստում միջազգային տիեզերական օրենսդրության մշակմանը: Կոմիտեն հիմնվել է 1959թ. Գլխավոր ասամբլեայի կողմից և 61 անդամ պետություն ունի:

Կոմիտեն ունի երկու ենթահանձնախումբ.

- **Գիտատեխնիկական ենթակոմիտեն** տիեզերական տեխնոլոգիաների և հետազոտությունների ոլորտում միջազգային համագործակցության կիզակետն է,
- **Իրավական ենթակոմիտեի** գործունեությունն ուղղված է տիեզերական գործունեության արագ տեխնոլոգիական զարգացման համար նպաստավոր իրավական դաշտի ձևավորմանը:

Կոմիտեն ու նրա ենթակոմիտեները ամենամյա նիստեր են գումարում Գլխավոր Ասամբլեայի կողմից առաջադրված խնդիրների, ներկայացված զեկույցների և անդամ պետությունների բարձրացրած հարցերի քննարկման նպատակով:

## Իրավական փաստաթղթեր

Կոմիտեի և նրա իրավական ենթակոմիտեի գործունեության արդյունքում Գլխավոր ասամբլեան ընդունեց 5 իրավական փաստաթուղթ, բոլորն էլ ուժի մեջ են.

- *Պետությունների կողմից երկրամերձ տիեզերական տարածության, այդ թվում՝ Լուսնի ու երկնային այլ մարմինների հետազոտման և օգտագործման սկզբունքների մասին 1966թ. պայմանագիրը (Երկրամերձ տիեզերական տարածության մասին պայմանագիր)* սահմանում է, որ տիեզերական հետազոտությունները պետք է կատարվեն ի շահ բոլոր երկրների՝ անկախ նրանց զարգացման մակարդակից: Նրա նպատակն է տիեզերական տարածությունը պահպանել որպես ողջ մարդկության և բոլոր պետությունների կողմից միայն խաղաղ նպատակներով հետազոտության և օգտագործման համար ազատ տարածք, որը ենթակա չէ ազգային յուրացման:
- *Տիեզերագնացների համար փրկարարական աշխատանքների իրականացման, տիեզերագնացների վերադարձման և տիեզերք ուղարկված առարկաների վերադարձման մասին 1967թ. համաձայնագիրը (Փրկարարության մասին համաձայնագիր)* օգնություն է նախատեսում վթարային իրավիճակում հայ-

տնված կամ չնախատեսված վայրէջք կատարող տիեզերանավերի անձնակազմերի համար և ընթացակարգ է սահմանում տիեզերական սարքն արձակած երկրի սահմաններից դուրս հայտնվելու դեպքում այն տվյալ երկրին վերադարձնելու համար:

- *Տիեզերական սարքերի պատճառած վնասի համար միջազգային պատասխանատվության մասին 1971թ. կոնվենցիան (Պատասխանատվության մասին կոնվենցիա)* սահմանում է, որ պետությունները պատասխանատու են Երկրագնդի մակերևույթին, այլ պետություններին պատկանող թռչող իրերին և տիեզերական սարքերին կամ նրանցում գտնվող անձանց կամ գույքին իրենց արձակած սարքերի պատճառած վնասի համար:
- *Տիեզերք արձակված սարքերի գրանցման մասին 1974թ. կոնվենցիան (Գրանցման մասին կոնվենցիա)* պահանջում է, որ պետությունները գրանցեն իրենց կողմից արձակված սարքերը և տեղեկատվություն հաղորդեն Միավորված ազգերի կազմակերպությանը: Ըստ այդ կոնվենցիայի, ՄԱԿ-ի Տիեզերական հարցերի գրասենյակը այժմ է հաշվառման առնում տիեզերք ուղարկված բոլոր սարքերը: Ներկայումս կանոնավոր կերպով տեղեկատվություն է ստացվում բոլոր պետությունների և Եվրոպական տիեզերական գործակալության (ԵՏԳ) կողմից:
- *Լուսնի և այլ երկնային մարմինների վրա պետությունների գործունեության կանոնակարգման մասին 1979թ. համաձայնագիրը (Լուսնի մասին համաձայնագիր)* լրամշակում է Լուսնի և այլ երկնային մարմինների վերաբերյալ 1966 թ. դաշնագրի սկզբունքները և հիմք է ստեղծում ապագայում այդ մարմինների բնական պաշարների հետազոտումը և շահագործումը կանոնակարգելու համար:

Ելնելով հանձնաժողովի և նրա իրավական ենթահանձնաժողովի գործունեությունից Գլխավոր ասամբլեան ընդունել է մի ամբողջ շարք սկզբունքներ, ներառյալ տիեզերական գործունեության վերաբերյալ հետևյալ սկզբունքները.

- *Ուղղակի միջազգային հեռուստահաղորդման նպատակով պետությունների կողմից Երկրի արհեստական արբանյակների օգտագործման սկզբունքները* (1982թ.) հաստատում են, որ նման օգտագործումը միջազգային քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային հետևանքներ ունի: Այդ գործունեությունը պետք է նպատակաուղղված լինի տեղեկատվության փոխանակմանն ու գիտելիքների տարածմանը, նպաստի զարգացմանը և հարգի պետությունների ինքնիշխանության իրավունքները, ներառյալ ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը:
- *Տիեզերքից Երկրի հեռահարզննման սկզբունքները* (1986թ.) սահմանում են, որ այդ գործունեությունը պետք է ծառայի ողջ մարդկության շահերին և կատարվի սեփական բնական պաշարների նկատմամբ բոլոր պետությունների ու ժողովուրդների ինքնիշխանության հարգմամբ և մյուս պետությունների իրավունքների ու շահերի հաշվառմամբ: Տիեզերքից հեռահարզննումը պետք է օգտագործվի բնապահպանական նպատակներով, ինչպես նաև բնական աղետների հետևանքները մեղմելու նպատակով:
- *Տիեզերքում միջուկային էներգիայի աղբյուրների օգտագործման սկզբունք-*

*նները* (1992թ.) հաստատում են, որ այդ աղբյուրներն էական նշանակություն ունեն որոշ տիեզերական առաքելությունների համար, սակայն դրանց օգտագործումը պետք է հիմնված լինի անվտանգության մանրակրկիտ գնահատումների վրա: Այդ սկզբունքներն ուղենիշ են հանդիսանում միջուկային էներգիայի աղբյուրների անվտանգ օգտագործման և տիեզերական սարքերի խափանման մասին ծանուցման համար այն դեպքում, երբ դեպի Երկիր ռադիոակտիվ նյութերի հետդարձի վտանգ կա:

- *Ի շահ բոլոր պետությունների, մասնավորապես զարգացող երկրների, տիեզերքի հետազոտման և օգտագործման հարցում միջազգային համագործակցության մասին հռչակագիրը* (1996թ.) սահմանում է, որ արդարացի և փոխադարձաբար ընդունելի հիմունքներով միջազգային տիեզերական համագործակցությանը մասնակցելու հարցում պետություններն ազատ ընտրության իրավունք ունեն. և այդ համագործակցությունը պետք է կատարվի շահագրգիռ պետությունների համար ամենաարդյունավետ և նպատակահարմար եղանակներով:

## Տիեզերական հարցերի գրասենյակը

Վիեննայում իր նստավայրն ունեցող **ՄԱԿ-ի տիեզերական հարցերի գրասենյակը** խաղաղ նպատակներով տիեզերքի օգտագործման կոմիտեի քարտուղարության դեր է կատարում և օգնում է զարգացող երկրներին՝ տիեզերական տեխնոլոգիաներն օգտագործելու զարգացման նպատակով:

Գրասենյակն իր Միջազգային տիեզերական տեղեկատվական համակարգի միջոցով անդամ պետություններին տիեզերքի վերաբերյալ տեղեկատվություն է մատուցում: *ՄԱԿ-ի Կիրառական նպատակներով տիեզերքի օգտագործման ծրագրի* շնորհիվ նա փորձագիտական նախագծեր իրականացնելիս անդամ պետություններին տրամադրում է տեխնիկական բնույթի խորհրդատվական ծառայություններ, նախաձեռնում է ուսումնավարժական և գիտակրթական ծրագրեր այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են տիեզերական երկրախուզությունը, արբանյակային կապը, արբանյակային օդերևութաբանությունը և հիմնարար տիեզերագիտությունը:

---

## UNISPACE կոնֆերանսները

*Միավորված ազգերի կազմակերպությունը երեք խոշոր կոնֆերանսներ է կազմակերպել նվիրված խաղաղ նպատակներով տիեզերքի հետազոտման և օգտագործման հարցերին, ընդ որում, երեքն էլ Վիեննայում: Առաջին կոնֆերանսը (1968թ.) քննության առավ տիեզերքի ուսումնասիրման և հետազոտման գործնական նշանակությունը և ոչ տիեզերական երկրների, հատկապես զարգացող երկրների համար դրանց օգտակարության սահմանը: Երկրորդ կոնֆերանսը (UNISPACE 82) արտացոլում էր տիեզերական գործունեության մեջ բոլոր պետությունների հարաճուն մասնակցությունը. այն գնահատեց տիեզերական գիտությունների և տեխնոլոգիաների զարգացման մակարդակը, քննության առավ զարգացման համար տիեզերական տեխնոլոգիաների օգտագործման հնարավորությունները և քննարկեց միջազգային տիեզերական համագործակցության հարցերը:*

*Երրորդ կոնֆերանսը (UNISPACE III, 1999) Տիեզերքի և մարդկային զարգացման*

*մարին Վիեննայի հայտարարության մեջ ուրվագծեց շրջակա միջավայրի պահպանման ու բնական պաշարների օգտագործմանը, մարդկության անվտանգության, զարգացման և բարեկեցության ապահովման նպատակով տիեզերական տեխնոլոգիաների օգտագործման հնարավորությունների ավելացմանը, տիեզերական միջավայրի պաշտպանությանը, զարգացող երկրների համար տիեզերական գիտությունն ու դրա բարիքները առավել մատչելի դարձնելուն, ինչպես նաև, հատկապես երիտասարդների համար, ուսումնական և կրթական կարելիությունների մեծացմանն ուղղված միջոցառումների լայն շրջանակ:*

*Կոնֆերանսը նաև կոչ արեց ստեղծել համաշխարհային համակարգ՝ բնական աղետների կառավարման, դրանց հետևանքների վերացման և կանխարգելման, գրագիտության տարածման նպատակով կրթական ծրագրերի և արբանյակային ենթակառուցվածքների բարելավման և երկրամերձ աստղակների հետ կապված գործունեության համադասման համար: Երիտասարդ մասնագետների ու համալսարանական ուսանողների համար և նրանց իսկ կողմից կազմակերպված Տիեզերական սերնդի համաժողով նպաստեց կոնֆերանսի հաջողությանը: Այդ միջոցառումն ի մի էր բերել կառավարություններին, միջկառավարական մարմիններին, քաղաքացիական հասարակությանը, նաև առաջին անգամ լինելով, մասնավոր հատվածին:*

*Ի պաշտպանություն Վիեննայի հայտարարության՝ Գլխավոր ասամբլեան 1999 թվականին հայտարարեց, որ հետայսու հոկտեմբերի 4-10-ը նշվելու է որպես Համաշխարհային տիեզերական յոթնօրյակ՝ ի հավաստումն մարդկության կյանքի բարելավման գործում տիեզերական գիտության և տեխնոլոգիաների ավանդի:*

---

Կենտրոնական և Հարավարևելյան Եվրոպայում գրասենյակը տեխնիկական օգնություն է ցուցաբերում տիեզերական գիտության և տեխնոլոգիաների տարածաշրջանային կենտրոններին, տիեզերական գիտության և տեխնոլոգիաների կրթական ցանցին ու ՄԱԿ-ին առընթեր գիտահետազոտական հաստատություններին: Այդ մարմինները օգնում են զարգացնել գիտնականների և հետազոտողների հմտությունները ու գիտելիքները տիեզերական գիտության և տեխնոլոգիաների այն ոլորտներում, որոնք կարող են օգտակար լինել մարդկային զարգացման համար: Ասիայի և Հարավխաղաղօվկիանոսյան շրջանի կենտրոնն իր գործունեությունն սկսեց Հնդկաստանում 1996թ., Մարոկկոյի և Նիգերիայի կենտրոններում՝ 1999թ., իսկ Արևմտյան Ասիայի ու Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի կենտրոնները դեռևս պլանավորման փուլում են:

Գրասենյակը սերտորեն համագործակցում է ԵՏԳ-ի, Աստղանավտիկայի միջազգային ֆեդերացիայի (ԱՄՖ) և Տիեզերական հետազոտությունների կոմիտեի (ՏՀԿ) հետ:

Բացի դրանից, Միավորված ազգերի կազմակերպության այլ կազմակերպություններ ևս ակտիվորեն գործում են հետևյալ ոլորտներում. արբանյակային օդերևութաբանություն, տիեզերական գիտություն և տիեզերական երկրախուզություն: ՄԱԿ-ի համակարգի տիեզերական գործունեության համադասման նպատակով ամեն տարի *Տիեզերական գործունեության հարցերով միջգործակալական հավաք* է գումարվում:

# ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

## Գլուխ 3

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ



# ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Թեև շատ մարդիկ Միավորված ազգերի կազմակերպությունը նույնացնում են խաղաղության և անվտանգության խնդիրների հետ, կազմակերպության միջոցների հիմնական մասը, փաստորեն, նպատակաուղղված է կանոնադրության մեջ ամրագրված «բարձր կենսամակարդակի, լիակատար զբաղվածության ապահովման, տնտեսական ու սոցիալական առաջընթացի և զարգացման համար նպաստավոր պայմանների» խթանմանը: ՄԱԿ-ի գործադրած ջանքերը զարգացման ասպարեզում լայն ազդեցություն են թողել ողջ աշխարհում միլիոնավոր մարդկանց կյանքի և բարեկեցության վրա: ՄԱԿ-ին առաջնորդող ուժն այն համոզմունքն է, որ տևական միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը հնարավոր են միայն մարդկանց տնտեսական և սոցիալական բարեկեցության ապահովման դեպքում:

Վերջին հինգ տասնամյակների ընթացքում աշխարհում տեղի ունեցած տնտեսական և սոցիալական փոխակերպումներից շատերի ուղղություններն ու ձևերը կրել են ՄԱԿ-ի գործունեության զգալի ազդեցությունը: Որպես փոխհամաձայնության համաշխարհային կենտրոն՝ Միավորված ազգերի կազմակերպությունը սահմանում է զարգացման և նպաստավոր տնտեսական միջավայրի ստեղծման ջանքերում առանձին երկրներին օգնելու նպատակով ծավալվող միջազգային համագործակցության առաջնահերթություններն ու նպատակները:

Փոխհամաձայնությունը դրսևորվեց 1961 թ. սկսված մի ամբողջ շարք *Միջազգային զարգացման տասնամյակների կազմակերպմամբ*: Քաղաքականության և նպատակների այս լայնամասշտաբ հայտարարություններում, որոնք յուրաքանչյուր տասնամյակի համար ընդգծում էին հատուկ ուշադրության արժանացող հարցերի շրջանակը, մշտապես շեշտվում էին զարգացման բոլոր՝ թե՛ տնտեսական և թե՛ սոցիալական ուղղություններով առաջընթացի անհրաժեշտությունն ու զարգացած և զարգացող երկրների միջև անհավասարությունների կրճատման կարևորությունը:

Որպես նոր մտածողության խոսափող՝ Միավորված ազգերի կազմակերպությունը պատասխանատու է եղել միջազգային օրակարգում զարգացման նոր հեռանկարների ձևակերպման և առաջադրման համար, ինչպես, ասենք, կայուն զարգացումը: Նա է ձևակերպել զարգացման ծրագրի մեջ այնպիսի հարցերի ընդգրկման անհրաժեշտությունը, ինչպիսիք են կանանց առաջխաղացումը, մարդու իրավունքների պաշտպանությունը, շրջակա միջավայրի պահպանությունն ու ճիշտ կառավարումը:

Տնտեսական և սոցիալական հարցերի վերաբերյալ միջազգային քննարկումներում ավելի ու ավելի շատ է արտացոլվում հարուստ և աղքատ երկրների շահերի ընդհանրությունն անդրսահմանային հիմնախնդիրների լուծման գործում: Այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են փախստականների տեղավորումը, կազմակերպված հանցագործությունը, թմրանյութերի առևտուրը և ՁԻԱՀ-ը, այսօր դիտվում են որպես համատեղ գործողություններ պահանջող գլոբալ հիմնախնդիրներ: Այս կամ այն տարածաշրջանում հարատևող չքավորության և գործազրկության հեռահար ազդեցությունն իսկույն զգացվում է այլ

## Աշխատել, որ գլոբալացումը ծառայի բոլորին

*Հազարամյակի հռչակագրում աշխարհի ղեկավարներն ընդգծեցին, որ գլոբալացումը բոլորի շահերին ծառայեցնելը միջազգային հանրությանը նետված գլխավոր մարտահրավերն է: Հազարամյակի գագաթաժողովում* ***«Մենք՝ ժողովուրդներս. ՄԱԿ-ի դերը 21-րդ դարում»*** *վերտառությամբ իր ելույթում Գլխավոր քարտուղար Քոֆի Անանը նշեց, որ գլոբալացման հաջողության համար կարևոր է՝ մարդիկ զգան, որ իրենք ևս ներգրավված են այդ գործընթացում:*

*Գլոբալացման առավելություններն ակներև են, ասաց Գլխավոր քարտուղարը, դրանք են. տնտեսական աճի արագացում, ավելի բարձր կենսամակարդակ, նոր հնարավորություններ առանձին երկրների ու անհատների համար: Եվ չնայած դրան, արդեն վերապահություններ կան, քանի որ գլոբալացման պտուղները բավական անհավասար են բաշխվում, և համաշխարհային շուկան դեռևս չի հենվում ընդհանուր սոցիալական նպատակներից ելնող կանոնների վրա:*

*Գլոբալ ընկերությունները պետք է առաջնորդվեն գլոբալ «միասնական քաղաքացիության» գաղափարով և ճիշտ գործելակերպ որդեգրեն ամենուրեք՝ խրախուսելով արդարացի աշխատանքային չափանիշների կիրառումը, մարդու իրավունքների հարգումը և շրջակա միջավայրի պահպանությունը:*

*Միավորված ազգերի կազմակերպությունն իր հերթին պետք է ապահովի, որ «գլոբալացման բարիքները չլինեն ոմանց մենաշնորհը, այլ պատկանեն բոլորին, որ պատեհությունները լինեն ոչ միայն ընտրյալներին, այլ յուրաքանչյուր մարդու, որտեղ էլ որ նա լինի»: Կազմակերպությունը պետք է «հարթի պետությունների միջև առկա տարբերությունները» և ձևավորի «կոալիցիաներ հանուն փոփոխությունների»՝ էլ ավելի լայնացնելով գլոբալացման գործընթացներում ներգրավվածների շրջանակը. քաղաքացիական հասարակություն, մասնավոր հատված, խորհրդարանականներ, տեղական իշխանություններ, գիտական միություններ, կրթական հաստատություններ:*

*«Նախ և առաջ մարդկանց պետք է դնենք մեր ջանքերի կենտրոնում», -ասաց պրն Անանը:- Երբ դա արվի, այդ դեպքում միայն կհամոզվենք, որ գլոբալացումը դառնում է ավելի ու ավելի ընդգրկուն՝ հնարավորություն տալով, որ ամեն ոք օգտվի ստեղծված պատեհություններից»:*

---

շրջանակներում, հատկապես Եվրոպայի, սոցիալական պլանավորման և կառավարման միջոցով: Նույն կերպ և համընդհանուր տնտեսության դարաշրջանում որևէ երկրում ծագող ֆինանսական անկայունությունն անմիջապես իրեն զգացնել է տալիս այլ շուկաներում ևս:

Ավելի ու ավելի լայն տարածում է գտնում այն կարծիքը, որ սոցիալ-տնտեսական զարգացման գործում ժողովրդավարությունը, մարդու իրավունքները, հասարակական մասնակցությունը, ճիշտ կառավարումն ու կանանց իրավազորումը կարևորագույն դեր են խաղում:

## Զարգացման բնագավառի գործունեության համակարգում

Չնայած բազմաթիվ ոլորտներում կատարված առաջընթացին, աշխարհը հարստության և բարեկեցության իմաստով դեռևս պառակտված է գոյություն ունեցող մեծ տարբերություններով: Չքավորության կրճատումն ու անհավասարության վերացումը, ինչպես երկրների ներսում, այնպես էլ նրանց միջև, մնում են ՄԱԿ-ի հիմնական առաջնահերթությունների թվում:

Իր տնտեսական ու սոցիալական նպատակները ՄԱԿ-ի համակարգն իրա-

կանացնում է ամենատարբեր եղանակներով՝ քաղաքականություն մշակելով, կառավարություններին խորհրդատվություն մատուցելով նրանց զարգացման ծրագրերի առնչությամբ, միջազգային նորմեր ու չափանիշներ սահմանելով և զարգացման ծրագրերի համար տարեկան շուրջ 30 մլրդ դոլար հավաքելով: Միավորված ազգերի կազմակերպության զանազան հիմնադրամների, ծրագրերի ու մասնագիտացված գործակալությունների միջոցով է, որ միմյանցից տարբեր այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են կրթությունն ու օդային անվտանգությունը, բնապահպանությունն ու աշխատանքի պայմանները, նրա գործունեությունն ամենուրեք ազդում է մարդկանց կյանքի վրա:

---

## Միավորված ազգերի կազմակերպության համեմատական առավելությունները

*Միավորված ազգերի կազմակերպության համակարգը յուրահատուկ առավելություններ ունի աշխարհում զարգացմանը նպաստելու համար: Դրանք են.*

- ***համընդհանրությունը.*** *բոլոր երկրները ձայն ունեն քաղաքական որոշումներ կայացնելիս,*
- ***անկողմնակալությունը.*** *այն որևէ ազգային կամ առևտրային շահեր չի ներկայացնում, այդ իսկ պատճառով կարող է վստահության վրա հիմնված հատուկ հարաբերություններ ստեղծել երկրների և ժողովուրդների միջև,*
- ***գլոբալ ներկայությունը.*** *այն զարգացման օգնության տրամադրման համար գրասենյակների ամենամեծ ցանցն ունի աշխարհում,*
- ***համապարփակ լիազորությունները.*** *ներառյալ զարգացումը, անվտանգությունը, մարդասիրական օգնությունը, մարդու իրավունքները և շրջակա միջավայրը,*
- ***հանձնառությունը՝*** *ստանձնած Միավորված ազգերի կազմակերպության ժողովուրդների նկատմամբ:*

---

**Տնտեսական և սոցիալական խորհուրդը (Տնտսոցխորհ)** ՄԱԿ-ի սոցիալ-տնտեսական գործունեությունն ու նրա օպերատիվ թևերի աշխատանքը համադասող հիմնական մարմինն է: Նա նաև միջազգային տնտեսական և սոցիալական հարցերի քննարկման և սոցիալ-տնտեսական քաղաքականության ձևակերպման կենտրոնական ամբիոնն է:

Տնտսոցխորհին առընթեր **Զարգացման քաղաքականության կոմիտեն**՝ կազմված անհատապես ընտրված 24 փորձագետներից, հանդես է գալիս որպես ընթացիկ տնտեսական, սոցիալական և բնապահպանական խնդիրների վերաբերյալ խորհրդատվություն մատուցող մարմին: Նա նաև չափանիշներ է սահմանում «առավել քիչ զարգացած երկրների» (ԱՔԶԵ) համար:

**ՄԱԿ-ի զարգացման խումբը**՝ կազմված քարտուղարության մարմիններից, ինչպես նաև զարգացման հիմնադրամներից ու ծրագրերից, օժանդակություն է ցույց տալիս կազմակերպության ներսում զարգացման աշխատանքների կառավարմանն ու համադրմանը: Այս գործադիր մարմինը գործում է ի նպաստ որոշումներ կայացնող մարմինների, ինչպես նաև առանձին օպերատիվ ծրագրերի միջև համագործակցության խթանման:

Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարության ներսում **Տնտեսական և սոցիալական հարցերի վարչությունը (ՏՍՀՎ)** հավաքում և վերլուծության է ենթարկում տնտեսական և սոցիալական տվյալները, կատարում է քա-

ղաքականության վերլուծություն և համադասում, նյութական և տեխնիկական օգնություն է ցուցաբերում անդամ պետություններին սոցիալ-տնտեսական ոլորտում: Նրա կողմից միջկառավարական գործընթացներին ցուցաբերված նյութական օգնությունը դյուրացնում է անդամ պետությունների գործը նորմեր և չափանիշներ սահմանելիս և գլոբալ մարտահրավերների դիմագրավմանն ի խնդիր համատեղ միջոցառումներ մշակելիս: ՏՍՀՎ-ն այդպիսով միջազգային և ազգային մակարդակներում կարևոր միջնորդ կապող է հանդիսանում գլոբալ նշանակության քաղաքականության և ազգային ծրագրերի, ինչպես նաև հետազոտական, քաղաքական և օպերատիվ գործողությունների միջև:

**Հինգ տարածաշրջանային հանձնաժողովները** դյուրացնում են տնտեսական և սոցիալական տեղեկատվության փոխանակումն ու քաղաքականության վերլուծությունները Աֆրիկայում, Ասիայում և Խաղաղօվկիանոսյան շրջանում, Եվրոպայում, Լատինական Ամերիկայում և Կարիբյան ավազանում, Արևմտյան Ասիայում:

ՄԱԿ-ի զանազան **հիմնադրամներն ու ծրագրերը** նախատեսված երկրներում զարգացում ապահովելու նպատակով օպերատիվ գործունեություն են ծավալում: ՄԱԿ-ի **մասնագիտացված գործակալությունները** ևս զբաղված են տարբեր երկրների զարգացման ջանքերին աջակցություն և օժանդակություն ցուցաբերելով: Ավելի ու ավելի սակավացող մարդկային և ֆինանսական ներուժի պայմաններում և զարգացման առաջնահերթությունների լույսի ներքո համակարգի տարբեր թևերի միջև առավել սերտ համադասումն ու համագործակցությունն էական նշանակություն են ստանում:

## Տնտեսական զարգացում

Աշխարհը վիթխարի տնտեսական զարգացում է ապրել վերջին տասնամյակներում, սակայն նյութական ապահովության և բարեկեցության աճն այն աստիճան անհավասար է, որ սոցիալական խնդիրներն ու քաղաքական անկայունությունն ավելի են սրվել աշխարհի գրեթե բոլոր կողմերում: Սառը պատերազմի ավարտն ու համաշխարհային տնտեսական ինտեգրացիայի արագացումն այդպես էլ չլուծեցին ծայրահեղ աղքատության, արտաքին մեծ պարտքերի, թերզարգացածության և առևտրական անհավասարակշռության խնդիրները:

Միավորված ազգերի կազմակերպության հիմնարար սկզբունքներից է այն համոզմունքը, որ բոլոր երկրների համար տնտեսական զարգացումն ամենահաստատուն ուղին է դեպի քաղաքական, տնտեսական ու սոցիալական ապահովություն: Կազմակերպության գլխավոր մտահոգությունն այն է, որ աշխարհի բնակչության գրեթե կեսը՝ հիմնականում Աֆրիկայում, Ասիայում և Լատինական Ամերիկայում ու Կարիբյան ավազանում, դեռևս ապրում է օրական 2 դոլարից պակաս միջոցներով: Մոտավորապես 1 մլրդ մարդ դեռևս անգրագետ է, և 1 միլիարդի համար էլ անմատչելի է չաղտոտված ջուրը: 140 մլն մարդ ողջ աշխարհում ներկայումս անգործ է, իսկ 750 միլիոնն էլ՝ թերզբաղված:

Միավորված ազգերի կազմակերպությունը շարունակում է մնալ միակ կազմակերպությունը, որի գործունեությունը նվիրված է այն նպատակին, որ տնտեսական էքսպանսիան և գլոբալացումը հանգեցնեն մարդկանց բարեկեցության բարձրացմանը, կայուն զարգացմանը, չքավորության վերացմանը, արդար առևտրին և հարաճուն արտաքին պարտքի կրճատմանը:

Միավորված ազգերի կազմակերպությունը կոչ է անում ընդլայնել այնպիսի մակրոտնտեսական քաղաքականություն, որը շտկի ներկայիս անհամաչափությունները. մասնավորապես աճող անհավասարությունը Հարավի և Հյուսիսի միջև, լուծի առավել քիչ զարգացած երկրներին բնորոշ հիմնախնդիրները ու բավարարի կենտրոնացված տնտեսությունից շուկայականի անցման փուլում գտնվող երկրների աննախադեպ կարիքները: Ողջ աշխարհում Միավորված ազգերի կազմակերպության օգնության ծրագրերը նպաստում են չքավորության կրճատմանը, մանուկների կյանքի պահպանմանը, բնապահպանությանը, կանանց առաջխաղացմանն ու մարդու իրավունքների պաշտպանությանը: Միլիոնավոր մարդկանց համար աղքատ երկրներում այս ծրագրերը ներկայացնում է Միավորված ազգերի կազմակերպությունը:

## Զարգացման նպատակով պաշտոնական օգնություն

Իրենց քաղաքականության և վարկերի միջոցով ՄԱԿ-ի համակարգի վարկատու հաստատությունները հավաքականորեն հսկայական ազդեցություն են գործում զարգացող երկրների տնտեսության վրա: Դա հատկապես ճիշտ է առավել քիչ զարգացած երկրների համար, որոնք ներառում են 48 պետություն: Ծայրահեղ աղքատությունն ու արտաքին մեծ պարտքը դուրս են թողել նրանց համաշխարհային տնտեսական աճի և զարգացման ծիրից: Այս պետությունները, որոնց մեծամասնությունը գտնվում է Աֆրիկայում, հայտնվել են ՄԱԿ-ի օգնության ծրագրերի կիզակետում: Այդ երկրները նաև զարգացմանը միտված միջազգային համագործակցության գերակայություններից են հանդիսանում: Նվիրատու երկրները պարտավորություն են ստանձնել իրենց ազգային համախառն արդյունքի 0.15%-ը տրամադրել այդ պետությունների կարիքների համար:

Փոքր կղզիներում գտնվող զարգացող երկրները, ցամաքով շրջափակված զարգացող երկրներն ու անցումային տնտեսությամբ երկրները ևս տառապում են միջազգային հանրության հատուկ ուշադրությունը պահանջող սուր հիմնախնդիրներով և նույնպես ՄԱԿ-ի համակարգի օգնության ծրագրերի գերակայությունների շարքին են դասվում:

Բոլոր զարգացող երկրներին տրվող Պաշտոնական զարգացման օգնության (ՊԶՕ) 1990-ական թվականներին միջինը կազմել է տարեկան 55 մլրդ դոլար:

ՄԱԿ-ի ՊԶՕ-ն գոյանում է երկու աղբյուրից. դրամաշնորհային օգնություն ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալություններից, հիմնադրամներից ու ծրագրերից, որը միջին հաշվով տարեկան կազմում է 4.5 միլիարդ դոլար, և ՄԱԿ-ի համակարգի վարկատու հաստատությունների՝ Համաշխարհային բանկի և

Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի (ԳԶՄՀ) տրամադրած վարկեր:

ՄԱԿ-ի գործակալություններից, հիմնադրամներից ու ծրագրերից տրվող ՊԶՕ-ն լայնորեն բաշխվում է 130 երկրների միջև: 1998թ. մարդասիրական օգնության բաժինը, որի վերաբերյալ ամբողջական տվյալներ կան, ամենամեծն էր դրամաշնորհներով ֆինանսավորվող ՄԱԿ-ի զարգացման գործունեության մեջ՝ կազմելով 5,2 միլիարդ դոլար ընդհանուր գումարով ծախսերի 1/5 մասը: Հաջորդը առողջապահությունն էր:

Համաշխարհային բանկը տարեկան շուրջ 25 միլիարդ դոլարի վարկեր է տրամադրում, իսկ ԳԶՄՀ-ն վարկերի և դրամաշնորհների տեսքով տարեկան ավելի քան 400 մլն դոլար է տալիս: Բացի դրանից, Արժույթի միջազգային հիմնադրամը աջակցության զանազան ձևեր է առաջարկում ֆինանսական դժվարություններ ունեցող երկրներին:

---

## Զարգացման ֆինանսավորումը

*1980թ. զարգացած երկրները Գլխավոր ասամբլեայի խոստացան պաշտոնական զարգացման օգնության (ՊԶՕ) նպատակներով իրենց ազգային համախառն արդյունքի (ԱՀԱ) 0.7%-ը հատկացնել զարգացող երկրներին, սակայն այդ նպատակակետին հասան միայն մի քանի երկիր՝ Դանիան, Ֆինլանդիան, Նորվեգիան և Շվեդիան: Միջին հաշվով ՊԶՕ-ն չի գերազանցում նախատեսված մակարդակի կեսը կամ զարգացած երկրների ազգային համախառն արտադրանքի 0,3%-ը՝ անկում ապրելով սառը պատերազմի ավարտից հետո: 1999թ. 56 միլիարդ դոլար կազմող ՊԶՕ-ն 21 հիմնական նվիրատու երկրների ԱՀԱ-ի ընդամենը 0,24%-ն էր կազմում: Ամենախոշոր նվիրատուն շարունակում էր մնալ Ճապոնիան, ապա հետևում էին Միացյալ Նահանգները, Ֆրանսիան և Գերմանիան:*

*Անցյալում սկանդինավյան երկրների պաշտոնական զարգացման օգնությունը կազմում էր զարգացող երկրներին տրամադրվող միջոցների հիմնական մասը: Սակայն վերջին մի քանի տարիներին մասնավոր ներդրումները զարգացող երկրներում կտրուկ աճել են, և մասնավոր ներդրումներն ու վարկերը ներկայումս զգալիորեն գերազանցում են պաշտոնական հոսքերը: 1998թ. դեպի զարգացող երկրներ ուղղված 240 միլիարդ դոլարից 147 միլիարդը մասնավոր հոսքեր էին և միայն 88 միլիարդն էր պաշտոնական, ներառյալ ու ՊԶՕ միջոցները:*

*Թե Համաշխարհային բանկը և թե ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման կոնֆերանսը ուշադրությամբ հետևում են այդ հոսքերին՝ մատնացույց անելով շոկման ենթակա լուրջ խնդիրները: Օրինակ՝ 1999թ. զարգացող երկրներն ստացան ուղղակի արտաքին ներդրումների միայն 24%-ը: Աֆրիկայի բաժինն ընդամենը 1,2% էր:*

*Արտահայտելով իր մտահոգությունն այդ հարցերի առնչությամբ՝ Գլխավոր ասամբլեան որոշեց 2002թ. միջազգային խորհրդակցություն հրավիրել՝ նվիրված զարգացման ֆինանսավորմանը: Բարձր մակարդակի այդ հավաքն այլ հարցերի թվում պետք է անդրադառնա նաև արտաքին պարտքի ահագնացող չափերին և զարգացման նպատակով ներքին, մասնավոր և միջազգային միջոցների ներգրավման նորարարական եղանակներին, ինչպես նաև միջազգային դրամական, ֆինանսական ու առևտրական համակարգերի կառավարման հարցերին:*

*Սակայն ՄԱԿ-ի համակարգի գործունեության վրա իր ազդեցությունը թողեց միջոցների ընդհանուր հոսքի մեջ ՊԶՕ-ի համամասնության նվազումը: ՄԱԿ-ի համակարգի զարգացման դրամաշնորհների բաժինը ընդհանուր ՊԶՕ-ի մեջ միջինը կազմեց 8%:*

*ՄԱԿ-ի գործակալություններին և մարմիններին հատկացվող միջոցների նվազմանը զուգահեռ, համեմատաբար արագ աճ ապրեցին կոնկրետ ծրագրերին, նախագծերին և հիմնադրամներին տրվող միջոցները: Բացի դրանից, թեև բոլոր երկրներն իրենց*

*նպաստում են բերում զարգացման համագործակցությանը, այդուհանդերձ հիմնական միջոցների 90%-ից ավելին տրվում է միայն առավել զարգացած 15 պետությունների կողմից: Նվիրատուների ավանդական բազան նույնն է մնում չնայած համաշխարհային տնտեսության մեջ կատարվող փոփոխություններին:*

---

## Զարգացման աջակցության աշխարհում

**ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը (ՄԱԶԾ)** զարգացող երկրների զարգացման գործակալությունն է, որը բեկումնային հանձնառություն է ստանձնել, այն է՝ մինչև 2015թ. կիսով չափ կրճատել համաշխարհային չքավորությունը: ՄԱԶԾ-ն խորհրդատվություն է մատուցում ճիշտ քաղաքականության վերաբերյալ և օժանդակում է արդարացի տնտեսական աճ ապահովող վարչաիրավական կառույցների զարգացմանը:

134 տեղական գրասենյակներից բաղկացած ՄԱԶԾ-ի համաշխարհային ցանցը, որ ծրագրեր է իրականացնում 174 երկրներում և տարածքներում, նպաստում է, որպեսզի մարդիկ կարողանան իրենք իրենց օգնել: Ներկայիս առաջնահերթություններից է զարգացման նպատակով տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը, ՁԻԱՀ-ի տարածման դեմ պայքարը, կայուն առևտրի ստացումը, ինչպես նաև հակամարտությունների ու բնական աղետների հետևանքների վերացումը: ՄԱԶԾ-ին հաճախ են դիմում պատերազմներից և մարդածին աղետներից հետո հասարակությունների վերականգնման խնդրանքով: ՄԱԶԾ-ն օպերատիվ կազմակերպություն է, որի անձնակազմի 85%-ն աշխատում է այն երկրներում, որտեղ մարդիկ իր օգնության կարիքն ունեն:

ՄԱԶԾ-ի հիմնական ծրագրի միջոցների 90%-ը գնում է դեպի 66 երկրներ, որոնց բնակչությունը կազմում է աշխարհի ամենաաղքատների 90%-ը: ՄԱԶԾ-ն և իր հիմնադրամները տարեկան շուրջ 2 միլիարդ դոլարի զարգացման օգնություն են տրամադրում: ՄԱԶԾ-ի հանգանակությունները կատարվում են կամավոր հիմունքներով և գալիս են աշխարհի գրեթե բոլոր կառավարություններից: ՄԱԶԾ-ի օգնությունն ստացող երկրները նախագծի ծախսերը հոգում են անձնակազմի, շենքերի, սարքավորումների և անհրաժեշտ նյութերի մատակարարման ձևով:

Համաշխարհային զարգացման միջոցներն առավելագույնս նպատակային օգտագործելու նպատակով ՄԱԶԾ-ն սերտորեն համագործակցում է ՄԱԿ-ի այլ հիմնադրամների, ծրագրերի ու միջազգային ֆինանսական հաստատությունների հետ, ներառյալ Համաշխարհային բանկը և Արժույթի միջազգային հիմնադրամը: Բացի դրանից, ՄԱԶԾ-ի երկրային ու տարածաշրջանային ծրագրերն օգտվում են տեղական մասնագետների և ոչ կառավարական կազմակերպությունների ծառայություններից: ՄԱԶԾ-ի ֆինանսավորած նախագծերի 75%-ն իրականացվում է տեղական կազմակերպությունների կողմից:

Տեղական մակարդակում ՄԱԶԾ-ն նպաստում է Միավորված ազգերի կազմակերպության՝ զարգացման օգնության տրամադրման ջանքերում

ինտեգրված մոտեցումների ձևավորմանը: Բազմաթիվ զարգացող երկրներում նա ստեղծել է **ՄԱԿ-ի զարգացման օժանդակության հիմնակառույցներ (ՄԱԶՕՀ)՝** կազմված ՄԱԿ-ի ռեզիդենտ կոորդինատոր (երկրում համակարգողի) ղեկավարությամբ գործող անձնակազմերից, ընդ որում վերջինս նաև հանդիսանում է տեղում երկրում ՄԱԶԾ-ի ներկայացուցիչը: Հիմնակառույցները ձևակերպում են կառավարությունների կողմից ՄԱԿ-ի քննությանը ներկայացվող զարգացման հիմնական մարտահրավերներին արձագանքելու եղանակները:

Երկրում համակարգողները հանդիսանում են մարդասիրական օգնության համակարգողները արհեստական և բնական աղետների, առավել բարդ արտակարգ իրավիճակների ժամանակ:

ՄԱԶԾ-ն Համաշխարհային բանկի և ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի հետ միասին հանդիսանում է **Համաշխարհային բնապահպանական հիմնադրամի** կառավարող գործընկերներից մեկը և միաժամանակ հանդես է գալիս որպես **ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ միացյալ ծրագրի (ՄԱՁԻԱՀ)** հովանավոր:

---

## Աֆրիկա՝ Միավորված ազգերի կազմակերպության առաջնահերթություն

*Արտահայտելով միջազգային հանրության մտահոգությունը՝ ՄԱԿ-ը Աֆրիկայի սոցիալ-տնտեսական սուր հիմնախնդիրները առաջնահերթություն է դարձրել իր համար: Ի հաստատումն տարածաշրջանի զարգացմանը նպաստելու իր հանձնառությանը, նա հատուկ ծրագրեր է մշակել արտաքին պարտքի և դրա սպասարկման հիմնահարցի լուծման, ուղղակի արտասահմանյան ներդրումների ավելացման, ազգային վարչարարական կառույցների ամրապնդման, զարգացման համար ներքին ռեսուրսների հավաքման, միջազգային առևտրական կառույցներում աֆրիկյան պետությունների ինտեգրացման և ՁԻԱՀ-ի դեմ պայքարի նպատակով:*

*1991թ. Գլխավոր ասամբլեան ընդունեց Աֆրիկայի զարգացման նոր՝ 1990-ական թվականների օրակարգը: Այն կյանքի կոչելու և մինչև 2005թ. ընկած ժամանակում զարգացման տեմպերն արագացնելու նպատակով Գլխավոր ասամբլեան 1996թ. ՄԱԿ-ի ողջ համակարգով մեկ հատուկ նախաձեռնություն սկսեց՝ ի նպաստ Աֆրիկայի: Նախաձեռնությունը միտված է, կենտրոնակայանում և տեղերում առավել արդյունավետ համաձայնեցման շնորհիվ, տարածաշրջանում իրականացվող ՄԱԿ-ի աջակցության ծրագրերի նպատակայնության և օգտավետության բարձրացմանը, ներառյալ ՄԱԶԾ-ի, Մանկական հիմնադրամի և ֆինանսական հաստատությունների ծրագրերը: Դրա հիմքում ընկած է Աֆրիկյան երկրների կողմից արդեն իսկ ընտրված գերակայությունների լուծման նպատակով գործընկերություն ստեղծելու գաղափարը:*

*Նախաձեռնության բաղկացուցիչ մաս կազմող «Աշխատատեղեր Աֆրիկայի համար» ծրագիրը նպատակ ունի մասնակից 10 երկրներում ամրապնդել ազգային և տարածաշրջանային հաստատությունների և ցանցերի կարողությունները՝ աշխատատեղերի ստեղծման միջոցով աղքատության դեմ պայքարելու համար: ՄԱԶԾ-ի «Աֆրիկա 2000» նախաձեռնությունը, որն օգնում է գյուղական կանանց կայուն զարգացման գործունեության մեջ, հովանավորել է ավելի քան 700 նախագիծ: Հատուկ նախաձեռնության շրջանակներում ՅՈՒՆԵՍԿՕ-ի, Մանկական հիմնադրամի և Համաշխարհային բանկի ղեկավարությամբ 16 երկրներում տարրական ուսուցման բարելավման նպատակով կրթական միջոցառումներ են իրականացվում:*

*ՄԱԿ-ի ՄԻԱՎ/ՁԻԱՀ միացյալ ծրագիրը (ՄԱՁԻԱՀ) ուժեղացրել է ՁԻԱՀ-ի դեմ պայքարը Աֆրիկայում: Իր ծավալած արշավում հնարավորինս լայն շրջանակներ ընդգրկելու նպատակով ՄԱՁԻԱՀ-ը փորձում է «Միջազգային գործընկերություն Աֆրիկայում ընդ-*

*դեմ ՁԻԱՀ-ի» կոչվող խմբի հովանու ներքո ի մի բերել տարբեր երկրների կառավարությունների, տարածաշրջանային մարմինների, զարգացման գործակալությունների, ոչ կառավարական կազմակերպությունների, ինչպես նաև կորպորատիվ հատվածի, ներառյալ դեղագործական ընկերությունները:*

*Գլխավոր քարտուղարն ու ՄԱԿ-ի գործակալությունները զարգացած երկրներին կոչ արեցին մեղմել Աֆրիկայի տնտեսական հոգսերը՝ և ավելի կրճատելով արտաքին պարտքի բեռը, նվազեցնելով Աֆրիկայից արտահանումների վրա դրված սակագները և ավելացնելով պաշտոնական զարգացման օգնությունը:*

*Միավորված ազգերի կազմակերպությունն իր գործունեությունը զուգակցում է զարգացման այլ նախաձեռնությունների հետ, ինչպիսիք են Աֆրիկայի զարգացման Տոկիոյի միջազգային համաժողովը, Արտաքին մեծ պարտք ունեցող աղքատ երկրների աջակցության նախաձեռնությունը և Աֆրիկայի արդյունաբերականացման դաշինքը:*

---

## Վարկեր զարգացման համար

**Համաշխարհային բանկի** գործունեությունը միտված է տնտեսությունների կայացմանն ու շուկաների ընդարձակմանը՝ նպատակ ունենալով ամենուրեք բարձրացնել մարդկանց, հատկապես ամենաչքավորների կենսամակարդակը: Ի տարբերություն օգնության ծրագրերի, բանկը դրամաշնորհներ չի տալիս. նա վերադարձվող վարկեր է տրամադրում զարգացող երկրներին:

Զարգացող երկրները վարկեր են վերցնում, որովհետև կապիտալի, տեխնիկական օգնության և տնտեսական քաղաքականության վերաբերյալ խորհրդատվության կարիք ունեն: Բանկը տալիս է երկու տեսակի վարկեր: Առաջին տեսակն այն երկրների համար է, որոնք կարող են վճարել շուկայականին մոտ տոկոսադրույքներ: Այդ վարկերի գումարները գոյանում են ներդրողների միջոցներից՝ բանկի թողարկած պարտատոմսերի վաճառքի արդյունքում:

Վարկերի երկրորդ տեսակը տրվում է ամենաաղքատ երկրներին, որոնք սովորաբար անվճարունակ են միջազգային ֆինանսական շուկաներում և չեն կարող վճարել շուկայականին մոտ տոկոսադրույքներ: Ամենաաղքատ երկրներին վարկերը տրվում են Համաշխարհային բանկի մասնաճյուղի՝ **Միջազգային զարգացման ասոցիացիա (ՄԶԱ)** կողմից: ՄԶԳ-ի վարկերն առանց տոկոսի են, պահանջում են 0.75% տարեկան վարչական ծախսեր և տրվում են շատ երկար ժամկետով՝ 35-40 տարով, ներառյալ 10 տարվա արտոնյալ ժամանակաշրջանը: Այդ վարկերը տրամադրվում են մեկ շնչի հաշվով տարեկան 895 դոլարից պակաս եկամուտ ունեցող երկրներին, սակայն դրանց մեծ մասը հատկացվում է առավել աղքատ երկրներին: Այնուամենայնիվ այդ վարկերը վերադարձվում են: Իր միջոցների մեծամասնությունն ստանալով առավել հարուստ անդամ երկրներից՝ ՄԶԱ-ն ամեն տարի իրականացնում է միջին հաշվով 6 միլիարդ դոլարի փոխատվություն:

Իր կանոնադրության համաձայն՝ բանկը կարող է վարկեր տրամադրել միայն կառավարություններին, սակայն նա սերտորեն համագործակցում է նաև տեղական համայնքների, ոչ կառավարական կազմակերպությունների ու մասնավոր ձեռնարկությունների հետ: Նրա նախագծերը նախատեսված են ազգաբնակչության ամենաանապահով խավերին օգնելու համար: Հաջող զար-

ղացման համար անհրաժեշտ է, որ կառավարությունները ու համայնքները ունենան իրենց «սեփական» զարգացման նախագծերը: Բանկը խրախուսում է կառավարությունների և ոչ կառավարական կազմակերպությունների ու քաղաքացիական հասարակության համագործակցությունը՝ բանկի ֆինանսավորած նախագծերին առնչություն ունեցող մարդկանց մասնակցությանը նպաստելու նպատակով: Բանկի նախագծերի կեսից ավելին իրականացվում են վարկառու երկրներում գործող ոչ կառավարական կազմակերպությունների մասնակցությամբ:

Բանկը աջակցում է մասնավոր հատվածին՝ խրախուսելով կայուն տնտեսական քաղաքականությունը, առողջ հանրային ֆինանսները և բաց, ազնիվ ու հաշվետու կառավարումը: Նա աջակցություն է ցուցաբերում բազմաթիվ ոլորտներում, որոնցով առավել զարգանում է մասնավոր հատվածը. դրանք են՝ ֆինանսներ, էներգետիկա, հեռահաղորդակցություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, նավթի և գազի արդյունաբերություն: Բանկի կանոնադրությունն արգելում է վարկեր տրամադրել մասնավոր հատվածին: Բայց բանկի մասնաճյուղը՝ **Միջազգային ֆինանսական կորպորացիան (ՄՖԿ)** գոյություն ունի հատկապես մասնավոր հատվածի ձեռնարկությունների ֆինանսավորման համար: Մեկ այլ մասնաճյուղ՝ **Բազմակողմ ներդրումային երաշխիքների գործակալությունը (ԲՆԵԳ)**, ապահովագրում է զարգացող երկրներում կատարվող ներդրումները:

Բանկն ավելին է անում, քան սոսկ վարկեր տրամադրելը. նա նաև, որպես




Աղբյուր՝ Համաշխարհային բանկ

կանոն, իր չֆինանսավորված նախագծերում տեխնիկական օգնություն է ընդգրկում: Դա կարող է վերաբերել այնպիսի հարցերի, ինչպիսիք են երկրի բյուջեի ընդհանուր չափը և միջոցների հատկացման ուղղությունները, կամ թե ինչպես է պետք կառուցել գյուղական կլինիկաները, ու թե ինչ է անհրաժեշտ այս կամ այն ճանապարհի շինարարության համար: Ամեն տարի բանկը ֆինանսավորում է մի քանի նախագծեր բացառապես փորձագիտական խորհրդատվություն և ուսուցում մատուցելու նպատակով: Նա նաև զարգացման նախագծերի մշակման և իրականացման նպատակով ուսուցանում է վարկառու երկրների մասնագետներին:

Կայուն զարգացման ոլորտում բանկն աջակցություն է ցուցաբերում անտառապատման, շրջակա միջավայրի աղտոտման վերահսկման և հողերի կառավարման նախագծերին, ներդրումներ է կատարում ջրամատակարարման, աղքատության և գյուղատնտեսական նախագծերում, սատարում է տնտեսական քաղաքականությանն ու ազգային բնապահպանական միջոցառումներին և հանդիսանում է գլոբալ բնապահպանական վարկային մեխանիզմի հիմնական ֆինանսավորողը:

## Վարկեր կայունության համար

Շատ երկրներ են դիմում **Արժույթի միջազգային հիմնադրամին (ԱՄՀ)**՝ Միավորված ազգերի կազմակերպության այդ մասնագիտացված գործակալությանն այն դեպքերում, երբ ներքին ու արտաքին գործոնները լրջորեն վտանգում են վճարային հաշվեկշիռը, ֆինանսական կայունությունն ու վարկունակությունը: ԱՄՀ-ն տնտեսական բարեփոխումների ծրագրերի իրականացման նպատակով խորհրդատվություն է մատուցում և առաջարկություններ ներկայացնում այդ խնդիրների լուծման համար և հաճախ միջոցներ է տրամադրում անդամ երկրներին:

Վճարային հաշվեկշռի հետ կապված խնդիրներ ունեցող երկրները սովորաբար օգտվում են Արժույթի միջազգային հիմնադրամի ֆինանսներից՝ «գնելով» պահուստային միջոցներ՝ այլ անդամների տարադրամի և հատուկ վարկառության իրավունքների ձևով՝ հաշվարկված իրենց ազգային տարադրամին համարժեք գումարով: Արժույթի միջազգային հիմնադրամն այդ վարկերից գանձում է սպասարկման վարձ և պահանջում, որ անդամները վերադարձնեն վարկերը՝ Արժույթի միջազգային հիմնադրամից հետ գնելով իրենց ազգային արժույթը նախապես սահմանված ժամկետներում:

**Արժույթի միջազգային հիմնադրամի հիմնական վարկային մեխանիզմներն են.**

- *Պահուստային համաձայնագրեր*՝ վարկեր, որոնք նախատեսված են վճարային հաշվեկշռի՝ ժամանակավոր կամ ցիկլային բնույթի կարճաժամկետ պակասորդի կրճատման համար: Դրանք պետք է վերադարձվեն 5 տարվա ընթացքում:
- *Ընդարձակված վարկային միջոցներ*, որոնք նախատեսված են վճարային

հաշվեկշռի հետ կապված միջնաժամկետ խնդիրների կարգավորման համար: Դրանք բխում են մակրոտնտեսական և կառուցվածքային հիմնահարցերից և պետք է վերադարձվեն 10 տարվա ընթացքում:

- *Չքավորության կրճատման և տնտեսական աճի վարկային մեխանիզմ.* կոնցեսիոն վարկ է՝ նախատեսված ցածր եկամուտ ունեցող երկրների համար՝ աղքատության կրճատման հստակ նպատակով: Ֆինանսավորման ենթակա անդամները կարող են եռամյա պայմանագրով փոխառնել իրենց չափաբաժնի ընդհուպ 140%-ի չափով գումարներ (բացառիկ դեպքերում մինչև 185%): Վարկերը տրվում են տարեկան 0.5%-ով: Մարումն սկսվում է 5 և կես տարի հետո՝ մինչև 10 տարին լրանալը:
- *Փոխհատուցման վարկային մեխանիզմ,* որը տրվում է այն անդամներին, որոնք ունեն արտահանման հետ կապված ժամանակավոր դժվարություններ կամ հացահատիկի հավելյալ ներմուծման կարիք:
- *Արտակարգ վարկային ուղղություններ,* որոնց նպատակը ճգնաժամերի տարածման կանխարգելումն է՝ ճիշտ տնտեսական քաղաքականություն վարող երկրներին նախաճգնաժամային իրավիճակներում անհետաձգելի ֆինանսական օգնություն ցուցաբերելու համար:
- *Լրացուցիչ պահուստային մեխանիզմ,* որը նախատեսված է շուկայի վստահության անսպասելի և կտրուկ անկմամբ պայմանավորված և վճարային հաշվեկշռի հետ կապված բացառիկ բարդությունների դեպքում, որոնք առաջացնում են կարճաժամկետ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն: Այս վարկերը պետք է վերադարձվեն մեկուկես տարվա ընթացքում, թեև այդ ժամկետը կարող է երկարաձգվել մինչև երկուսուկես տարի:

Ճիշտ տնտեսական քաղաքականություն վարող և արտաքին մեծ պարտք ունեցող աղքատ երկրներին Արժույթի միջազգային հիմնադրամն ու Համաշխարհային բանկը, խոշոր արտաքին պարտքով աղքատ երկրների վարկային մեխանիզմի շրջանակներում, համատեղ ջանքերով տրամադրում են վարկեր՝ առանց նոր պարտքերի կուտակման անհրաժեշտության և նրանց արտաքին պարտքի մակարդակն իջեցնելու նպատակով: Դա համակողմանի մոտեցում է պարտքի կրճատման խնդրին, որը ենթադրում է բազմակողմ, կառավարական, երկկողմ և առևտրային վարկատուների մասնակցություն:

Վերահսկողությունը մի գործընթաց է, որով Արժույթի միջազգային հիմնադրամը յուրաքանչյուր անդամի ընդհանուր տնտեսական իրավիճակի և ընթացիկ քաղաքականության համակողմանի վերլուծության միջոցով գնահատում է իր անդամների փոխարժեքային քաղաքականությունը: Արժույթի միջազգային հիմնադրամը վերահսկողություն է իրականացնում՝ առանձին երկրների հետ ամենամյա խորհրդակցություններ անցկացնելով: Բազմակողմ վերահսկողությունն իրականացվում է երկու տարին մեկ անգամ, տարածաշրջանային վերահսկողությունն իրականացվում է տարածաշրջանային խմբերի հետ քննարկումների միջոցով: Բացի դրանից, անցկացվում են նախազգուշական միջոցառումներ, կատարվում է լրացուցիչ վերահսկողություն և ծրագրային մոնիտորինգ:

Արժույթի միջազգային հիմնադրամն իր անդամներին տեխնիկական օգնություն է տրամադրում ամենատարբեր՝ դրամահարկային քաղաքականության մշակման և իրականացման, վարչարարական կառույցների ամրապնդման, ներառյալ կենտրոնական բանկերի կամ գանձապետարանների զարգացումը, ինչպես նաև վերլուծական տվյալների հավաքման ու մշակման ոլորտներում: Նա նաև ուսումնական դասընթացներ է առաջարկում անդամ երկրների պաշտոնյաներին, որոնք տեղի են ունենում Վաշինգտոնում, Աբիջանում, Կոտ Դ'Իվուարում, Սինգապուրում և Վիեննայում գտնվող իր ուսումնական հիմնարկներում:

## Ներդրումներ և զարգացում

Արտաքին ուղղակի ներդրումների ծավալների աճին զուգահեռ զարգացող երկրներն ավելի ու ավելի են բացում իրենց տնտեսության դռներն այդպիսի ներդրումների առջև: Միավորված ազգերի կազմակերպության համակարգի զանազան թևեր վերահսկում և գնահատում են այդ զարգացումները, և այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը, ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը և ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպությունը, օգնում են զարգացող երկրների կառավարություններին՝ ներգրավելու լրացուցիչ ներդրումներ:

Համաշխարհային բանկի երկու մասնաճյուղերը՝ Միջազգային ֆինանսական կորպորացիան ու Բազմակողմ ներդրումային երաշխիքային գործակալությունը, նպաստում են զարգացող երկրներում ներդրումների հոսքին: Խորհրդատվության շնորհիվ **Միջազգային ֆինանսական կորպորացիան (ՄՖԿ)** օգնում է կառավարություններին՝ ստեղծելու բարենպաստ պայմաններ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին մասնավոր խնայողությունների և ներդրումների գոյացման համար: ՄՖԿ-ն մասնավոր ներդրումներ է խթանում և հավաքում զարգացող երկրներում՝ ցույց տալով, որ դրանք կարող են շահավետ լինել: 1956թ. իր հիմնադրումից ի վեր ՄՖԿ-ն իր սեփական միջոցներից ավելի քան 26,7 միլիարդ դոլար է տրամադրել և միջնորդել աշխարհի 132 երկրների 2.264 ընկերությունների՝ 17,9 միլիարդ դոլարի վարկային միջոցների հատկացման համար:

**Բազմակողմ ներդրումային երաշխիքային գործակալությունը (ԲՆԵԳ)** բանկի ապահովագրական մասնաճյուղն է: Ներդրողներին քաղաքական ռիսկի, այսինքն՝ սեփականազրկման, տարադրամի փոխանցման սահմանափակումների, պատերազմների ու քաղաքացիական անհանգստության հետ կապված երկարաժամկետ երաշխիքներ տրամադրելով ու խորհրդատվություն մատուցելով՝ այն դյուրացնում է մասնավոր ներդրումների հոսքը դեպի զարգացող անդամ երկրներ՝ արտադրական ոլորտի զարգացման նպատակով: ԲՆԵԳ-ն իրականացնում է նպաստավորման ծրագրեր, տեղեկատվություն է տարածում ներդրումային հնարավորությունների վերաբերյալ և տեխնիկական օժանդակություն ցույց տալիս: ԲՆԵԳ-ի տրամադրած երաշխիքների շնորհիվ շուրջ 33 մի-

միլիարդ դոլարի արտաքին ուղղակի ներդրումներ են կատարվել 69 զարգացող երկրներում:

**ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման համաժողովը (ՄԱԱԶՀ)** օգնում է զարգացող երկրներին խրախուսել ներդրումները և բարելավել ներդրումային միջավայրը: Այն նաև օգնում է կառավարական մարմիններին բարելավել ուղղակի արտաքին ներդրումային հոսքերի համաշխարհային միտումների և հարակից տնտեսական քաղաքականության ընդհանուր ըմբռնումը, ինչպես նաև ուղղակի արտաքին ներդրումների, առևտրի, տեխնոլոգիաների և զարգացման փոխհարաբերակցությունը: Նրա գործունեության արդյունքները ամեն տարի ներկայացվում են *Համաշխարհային ներդրումների մասին զեկույցում* և այլ ուսումնասիրություններում, որոնք **ՄԱԱԶՀ-ի ներդրումների, տեխնոլոգիաների և հարակից ֆինանսական հարցերի հանձնաժողովում** քաղաքականության վերաբերյալ քննարկումների հիմքն են:

ՄԱԱԶՀ-ն իր **Ներդրումների, տեխնոլոգիաների և ձեռնարկությունների զարգացման բաժանմունքի** միջոցով նպաստում է ներդրումների, ձեռնարկությունների զարգացման և տեխնոլոգիական կարողությունների ձևավորմանը և օգնում է կառավարություններին՝ մշակել և իրականացնել այս ոլորտի քաղաքականությունն ու աշխատանքները:

## Առևտուր և զարգացում

1980-ականների կեսերից սկսած՝ միջազգային առևտրի ծավալները աճում են տարեկան 10%-ով, ինչը բազմաթիվ զարգացող երկրների թույլ է տալիս զգալիորեն բարելավել ազգաբնակչության կենսամակարդակն ու տնտեսական աճը: Սակայն դեռևս կան մեծ տարբերություններ, և ամենաաղքատ երկրներից շատերը շարունակում են մնալ միջազգային առևտրի եզրին:

Համաշխարհային առևտրի համակարգում բոլոր երկրների ընդգրկումը **ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման հարցերի համաժողովի (ՄԱԱԶՀ)** գլխավոր խնդիրն է, որն առևտրի, ֆինանսների, տեխնոլոգիաների, ներդրումների և կայուն զարգացման ոլորտներում զարգացմանն առնչվող հարցերի կարգավորման կիզակետում է այսօր:

---

### Արտաքին ուղղակի ներդրումներն ու զարգացումը

*Արտաքին ուղղակի ներդրումները համաշխարհային տնտեսության շարժիչ ուժն են: Ներդրումային հոսքերի շարունակվող աճը զարգացած և զարգացող երկրներում մրցակցություն է ստեղծում անդրազգային կորպորացիաների համար: Համաձայն ՄԱԱԶՀ-ի՝ 2000թ.* ***Համաշխարհային ներդրումների մասին զեկույցի.***

- *Արտաքին ուղղակի ներդրումները անդրազգային կորպորացիաների կողմից 1999թ. կազմել են 865 միլրդ դոլար, իսկ 2000թ. դրանք գերազանցեցին 1 տրիլիոն դոլարը:*
- *Ողջ աշխարհում անդրազգային կորպորացիաների թիվը շարունակում էր աճել և 2000թ. կազմել է 63 հազար:*
- *Անդրազգային կորպորացիաների շուրջ 690 հազար արտասահմանյան մասնաճյուղերը 1999թ. վաճառել են մոտ 14 տրիլիոն դոլարի ապրանքներ և ծառայություններ, այսինքն համաշխարհային արտահանման ծավալների գրեթե կրկնակին. միջազգային արտադրությունը գերազանցել է արտաքին շուկաներ ապրանքների ու ծառայու-*

*թյունների մատակարարմանն ուղղված միջազգային առևտրի ծավալները:*

- *100 խոշորագույն ոչ ֆինանսական անդրազգային կորպորացիաներ գերիշխող դիրք են գրավում համաշխարհային արտադրական համակարգում. 1998թ. նրանց էին պատկանում 2 տրիլիոն դոլարի արտաքին ակտիվներ, արտաքին վաճառքի ծավալները հասել են 2 տրիլիոն դոլարի, ըստ որում նրանց օտարերկրյա մասնաճյուղերում աշխատում էր ավելի քան 6 մլն մարդ:*
- *1995թ. սկսած առաջին անգամ զարգացող երկրների 2 ընկերություններ՝ Դեու կորպորացիան (Կորեայի Հանրապետություն) և Պետրոլեոս դե Վենեսուելան տեղ գրավեցին աշխարհի 100 խոշորագույն ընկերությունների ցանկում:*

---

ՄԱԱԶՀ-ն ձգտում է մեծացնել զարգացող երկրների առևտրային, ներդրումային ու զարգացման հնարավորությունները, ինչպես նաև օգնել նրանց՝ դիմակայելու գլոբալացման մարտահրավերներին և հավասար պայմաններով ինտեգրվելու համաշխարհային տնտեսությանը:

ՄԱԱԶՀ-ն հետամուտ է այս նպատակներին ուսումնասիրությունների և տնտեսական քաղաքականության վերլուծության, միջկառավարական քննարկումների, տեխնիկական համագործակցության, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ու գործարար հատվածի հետ փոխգործակցության շնորհիվ:

**Մասնավորապես, ՄԱԱԶՀ-ն .**

- քննում է համաշխարհային տնտեսական միտումները և գնահատում դրանց ազդեցությունը զարգացման վրա,
- օգնում է զարգացող երկրներին, մասնավորապես ամենաթույլ զարգացածներին՝ լավագույնս օգտվելու գլոբալացման և ազատականացման առավելություններից, նպաստելով համաշխարհային առևտրի համակարգում նրանց ինտեգրմանը ու միջազգային առևտրային բանակցություններին նրանց ակտիվ մասնակցությանը,
- քննում է ուղղակի արտաքին ներդրումների հոսքերում առկա համաշխարհային միտումները, ինչպես նաև դրանց ազդեցությունը առևտրի, տեխնոլոգիաների ու զարգացման վրա,
- օգնում է զարգացող երկրներին՝ ներգրավելու ներդրումներ,
- օգնում է զարգացող երկրներին՝ զարգացնելու ձեռնարկություններն ու ձեռնարկատիրությունը,
- օգնում է զարգացող երկրներին և անցումային տնտեսությամբ երկրներին՝ բարելավելու իրենց առևտրամետ ծառայությունները,
- նպաստում է համաշխարհային էլեկտրոնային առևտրին՝ առավել մատչելի դարձնելով տեղեկատվական տեխնոլոգիաները, մասնավորապես իր Առևտրի դյուրացման ծրագրի միջոցով:

---

## Արդարացի առևտրի խթանումը

*ՄԱԱԶՀ-ի հովանու ներքո ընթացող միջկառավարական բանակցությունների արդյունքներն են.*

- *Նախապատվությունների ընդհանրացված համակարգերի մասին համաձայնագիրը (1971թ.), որն արտոնյալ վերաբերմունք է նախատեսում զարգացող երկրներից դեպի զարգացած երկրներ ընթացող շուրջ 70 մլրդ դոլարի տարեկան արտահանումների*

*համար,*

- *Առևտրի նախապատվությունների համաշխարհային համակարգի մասին համաձայնագիրը (1989թ.) զարգացող երկրների միջև,*
- *Միջազգային ապրանքային համաձայնագրերը, այդ թվում կակաոյի, շաքարի, բնական կաուչուկի, ջուտի և ջուտե իրերի, արևադարձային փայտանյութի, ձիթապտղի յուղի և հացահատիկի վերաբերյալ,*
- *Ընդհանուր ապրանքային հիմնադրամը, որը ֆինանսական աջակցություն է ցուցաբերում միջազգային ապրանքային պաշարների շահագործմանը, ինչպես նաև ապրանքային ոլորտի գիտահետազոտական նախագծերի իրականացմանը,*
- *Պարտքի թեթևացում. 50-ից ավելի զարգացող երկրներ են օգտվել 6.5 միլիարդ դոլարի արտաքին պարտքի թեթևացման միջոցառումներից 1978թ. ի վեր, երբ հաստատվեց ցածր եկամուտ ունեցող երկրների արտաքին պարտքի պայմանները հետադարձ կարգով վերանայելու մասին որոշումը,*
- *Պարտքի վերաձևակերպման միջազգային գործողությունների ուղենիշները (1980թ.),*
- *Ցամաքով շրջափակված և տարանցիկ զարգացող երկրների և դոնորների միջև տարանցիկ տրանսպորտային համագործակցության համամոլորակային սկզբունքների մասին համաձայնագիրը (1995թ.) և*
- *Ծովային տրանսպորտի բնագավառում ՄԱԿ-ի կոնվենցիաները. Փոխադրողների համաժողովների վարքականոնների մասին (1974թ.), Ծովով ապրանքների միջազգային փոխադրումների մասին (1978թ.), Ապրանքների միջազգային բազմատեսակ փոխադրումների մասին (1980թ.), Նավերի հաշվառման պայմանների մասին (1986թ.) և Ծովային արգելանքի ու գրավադրումների մասին (1993թ.):*

*ՄԱԱԶՀ-ն նաև նպաստեց 1980թ. մրցակցության կանոնների միակ համընդհանուր, կամավոր հիմունքներով կնքված համաձայնագրի կայացմանը, որով սահմանվում էին մի շարք բազմակողմ սկզբունքներ և կանոններ՝ գործարարության սահմանափակող գործելակերպի վերահսկման համար: Այս համաձայնագիրը վերանայվում է 5 տարին մեկ, ըստ որում վերջին անգամ այն վերանայվել է 2000թ. Համաշխարհային բանկի և Առևտրի համաշխարհային կազմակերպության հետ սերտ համագործակցությամբ:*

---

Կանոնավոր միջկառավարական քննարկումների և տեխնիկական համագործակցության միջոցով ՄԱԱԶՀ-ն նպաստում է ձեռներեցության, մասնավորապես՝ փոքր ու միջին ձեռնարկությունների զարգացմանը: Ձեռներեցության, գործարարության ընդլայնման և զարգացման հանձնաժողովը և նրա փորձագիտական խմբերը քննում են ձեռներեցության արդյունավետ զարգացման ռազմավարության մշակման և իրականացման ուղիները:

ՄԱԱԶՀ-ի տեխնիկական համագործակցության միջոցառումները ներառում են ավելի քան 300 նախագիծ աշխարհի 100 երկրներում, որոնց համար ամեն տարի նա հատկացնում է մոտ 24 միլիոն դոլար: Որոշ միջտարածաշրջանային նախագծեր ներառում են.

- *Մաքսային տվյալների ավտոմատացված համակարգը*, որում օգտագործվում են ժամանակակից տեխնոլոգիաներ, օգնում է կառավարություններին՝ արդիականացնելու մաքսային ընթացակարգերն ու դրանց կառավարումը: Այս համակարգը, որն օգտագործվում է ավելի քան 60 երկրների կողմից, արագորեն վերածվում է մաքսային համակարգի ավտոմատացման միջազգայնորեն ընդունված չափորոշիչի:
- *Բեռների մասին նախնական տեղեկատվության համակարգը* աֆրիկյան երկրներին օգնում է՝ ցամաքում և ծովում բեռների երթուղին վերահսկող համա-

կարգչային տեխնիկայի օգտագործմամբ զարգացնելու իրենց մասնավոր-տային հատվածը:

- *ԷՄՊՐԵՏԵԿ ծրագիրը* նպաստում է փոքր ու միջին ձեռնարկությունների զարգացմանը: Տեղեկատվական հատուկ ցանցը ձեռնարկատերերի համար մատչելի է դարձնում տվյալների շտեմարանները:
- *Առևտրի դյուրացման ծրագիրը* ներառում է առևտրի դյուրացման կենտրոնների ստեղծումը ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման շնորհիվ, գործառնական ծախսերի կրճատման, փոքր ու միջին ձեռնարկություններին առևտրային բնույթի տեղեկատվություն, ծառայություններ և համամոլորակային ցանցեր մատուցելու նպատակով: Այս ծրագրի շնորհիվ բոլոր միացած երկրներն ու ձեռնարկությունները փոխանակում են «Էլեկտրոնային առևտրի հնարավորություններ» և այլ կարգի տեղեկատվություն առևտրի կարգավորման, բանկային գործելակերպի և շուկայի հետախուզման վերաբերյալ:

**Առևտրի միջազգային կենտրոնը ՄԱԱԶՀ/ԱՀԿ (ԱՄԿ)** ՄԱԿ-ի համակարգում առևտրի խթանման նպատակով զարգացող երկրների հետ տեխնիկական համագործակցության կիզակետն է: Նա համագործակցում է զարգացող և անցումային երկրների հետ՝ առևտրի խթանման ծրագրեր մշակելու, արտահանմանը նպաստելու և ներմուծման հետ կապված գործառնությունները բարելավելու նպատակով:

ԱՄԿ-ն մասնագիտանում է վեց ուղղություններով.

- արտադրանքի և առևտրի զարգացում,
- առևտրային ծառայությունների զարգացում,
- առևտրի վերաբերյալ տեղեկատվություն,
- մարդկային ներուժի զարգացում,
- միջազգային գնումների և մատակարարման կառավարում,
- պահանջմունքի գնահատում և առևտրի խթանման ծրագրերի նախագծում:

Առևտրի խթանման ոլորտում տեխնիկական համագործակցության նախագծերն իրականացվում են ԱՄԿ-ի մասնագետների կողմից, որոնք սերտորեն համագործակցում են տեղական առևտրային պաշտոնյաների հետ: Ազգային ծրագրերը հաճախ երկրների արտահանումների խթանմանն ու ներմուծման գործառնությունների բարելավմանն ուղղված ծառայությունների ընդարձակ փաթեթի տեսք են ընդունում:

## Գյուղատնտեսության զարգացում

Մեր մոլորակի վրա մարդկանց մեծ մասը շարունակում է ապրել գյուղական տարածքներում և իր ապրուստի միջոցը հիմնականում ուղղակիորեն կամ անուղղակի ձևով հայթայթում է գյուղատնտեսությունից: Վերջին տասնամյակներում աղքատությունը գյուղական շրջաններում տարածվել և խորացել է, իսկ դեպի արդյունաբերականացում ուղղված սրընթաց գրոհի պայմաններում գյու-

ղատնտեսական սեկտորում բավականաչափ ներդրումներ չեն արվել:

**ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը**՝ ՊԳԿ-ն, գյուղատնտեսության, անտառային տնտեսության, ձկնորսության և գյուղատնտեսական զարգացման հարցերով զբաղվող առաջատար գործակալություն է: Այն գործնական օգնություն է ցույց տալիս զարգացող երկրներին տեխնիկական օժանդակության բազմաբնույթ ծրագրերի միջոցով: Հատուկ առաջնային խնդիր է գյուղական զարգացումը ու կայուն գյուղատնտեսությունը խրախուսելը, ինչը բնական պաշարների պահպանման և կառավարման պայմաններում երկարաժամկետ ռազմավարություն է պարենի արտադրության աճի և պարենի ապահովության ամրապնդման համար:

Կայուն գյուղատնտեսական զարգացում ապահովելու նպատակով ՊԳԿ-ն խրախուսում է ինտեգրված մոտեցումը, որը մշակված զարգացման նախագծերի մեջ ներառում է շրջակա միջավայրին, սոցիալական և տնտեսական ոլորտներին առնչվող նկատառումներ: Որոշ տարածքներում, օրինակ, գյուղատնտեսական կուլտուրաների որոշ համակցությունը կարող է բարելավել գյուղատնտեսական արտադրողականությունը, տեղացի գյուղացիներին ապահովել փայտի վառելիքի պաշարներով, բարելավել հողի բերքատվությունը և կրճատել էրոզիայի ազդեցությունը:

Միջին հաշվով ՊԳԿ-ն տեղերում իրականացնում է մոտ 1800 նախագծեր: Դրանք ընդգրկում են հողի օգտագործման ինտեգրված նախագծեր, քաղաքականության և պլանավորման հարցերում կառավարություններին տրամադրվող խորհրդատվություններ տարբեր ոլորտներում՝ անտառագիտությունից մինչև մարկետինգի ռազմավարություններ: Սովորաբար ՊԳԿ-ն կատարում է երեք հետևյալ դերերից մեկը. իր սեփական ծրագրի իրականացում, ծրագրի իրականացում այլ գործակալությունների և նվիրատուների անունից կամ խորհրդատվության տրամադրում ու կառավարմանն առնչվող օժանդակություն ազգային նախագծերի իրականացման համար:

ՊԳԿ-ի ներդրումների կենտրոնն օժանդակում է զարգացող երկրներին գյուղատնտեսական և գյուղական զարգացմանն առնչվող ներդրումային նախագծեր մշակելու գործում: Ամեն տարի այդ օժանդակության շնորհիվ ներդրումային նախագծերի համար հավաքվում է մոտ 3 միլիարդ ԱՄՆ դոլար, ներառյալ արտաքին ֆոնդերը, որոնք կազմում են ավելի քան 2 միլիարդ ԱՄՆ դոլար:

ՊԳԿ-ն ակտիվ դեր է կատարում հողի և ջրի զարգացման, բուսաբուծության և անասնաբուծության, անտառագիտության, ձկնորսության, տնտեսական, սոցիալական և պարենի անվտանգության քաղաքականության, ներդրումների, սննդի, պարենի ստանդարտների և պարենի անվտանգության, ապրանքների և առևտրի ոլորտներում: Կարելի է բերել հետևյալ օրինակները.

- Հարավ-աֆրիկյան ինը երկրների համար նախատեսված ծրագիրն օգնում է գյուղական բնակչությանը բարելավել իր ապրելու պայմանները ու սնունդ ձկներ աճեցնելու միջոցով: Ջրային փոքր կառույցները ներգրավվել են արտադրության մեջ՝ ակվակուլտուրան միավորելով հողագործության հետ: Այսպիսով մանր ֆերմերներն ընդարձակեցին պարենի արտադրանքը

սպառման և առևտրի նպատակով:

- Շրի Լանկայի աղքատ ֆերմերներին հորդորեցին ստեղծել ոչ պաշտոնական խմբեր եկամուտ ստեղծելու այնպիսի գործունեություն ծավալելու համար, ինչպիսիք են խոզի բարելավումը (ինկուբացիա) կամ փոքրածավալ վերամշակումը: Խմբերին սովորեցրին, թե ինչպես կարելի է տնտեսական շահ ստանալ, օրինակ. գնելով մեծ քանակությամբ պարարտանյութ և վաճառքի հանելով միանգամից ամբողջ բերքը: Մոտ 4000 ֆերմերներ շահույթ ստացան այդ նախագծից:
- Մալիի համար նախատեսված ծրագիրը շրջանառու ֆոնդեր ստեղծեց, որոնք հնարավորություն տվեցին կանանց խմբերին գնելու սերմեր, պարարտանյութ, ջրային պոմպեր և ջրաղացներ: Կանայք ստեղծեցին տնային և շուկայական պարտեզներ՝ վաճառելով ավելցուկ բանջարեղենը նորաստեղծ՝ շաբաթային հիմունքներով գործող շուկաներում: Այսպիսով գյուղացի կանայք զարգացրին իրենց գործունեությունը պարենի արտադրությունն ընդարձակելու, եկամուտները ավելացնելու, առողջությունը բարելավելու, ինչպես նաև ջրի մատչելիությունն ապահովելու նպատակով:
- Օգտագործելով ՊԳԿ-ի կողմից ներկայացված վնասատուների կառավարման ինտեգրացված տեխնիկան՝ բրնձի աճեցմամբ զբաղվող 200 հազար ինդոնեզիացի ֆերմերներ բարձրացրեցին արտադրողականությունը, կրճատեցին պեստիցիդների օգտագործումը՝ նպաստելով շրջակա միջավայրի պաշտպանությանը և ապահովեցին պարենի որակը, դրանով իսկ տնտեսելով տարեկան 120 միլիոն դոլար պեստիցիդների համար կառավարության կողմից նախատեսված նպաստների հոդվածով:

**Գյուղատնտեսական զարգացման միջազգային հիմնադրամը** (ԳԶՄՀ) ֆինանսավորում է գյուղատնտեսական զարգացման ծրագրերը, որոնք նվազեցնում են գյուղական աղքատությունը և բարելավում են բնակչության սնունդը զարգացող աշխարհում: Հիմնադրամի ակտիվ մասնակցությունն ու արմատական մոտեցումը համեմատական առավելություն է տալիս նրան այլ հաստատությունների նկատմամբ: Նրա փոքր, բայց արդյունավետ ինստիտուցիոնալ կառուցվածքը հնարավորություն է ընձեռում հիմնադրամին ճկուն կերպով և ժամանակին հայտնաբերել և արձագանքել գյուղատնտեսական անկարի նոր պահանջներին: Կատարելով իր առաքելությունը՝ ԳԶՄՀ-ն տրամադրում է ուղղակի ֆինանսավորում և մոբիլիզացնում է իր ռեսուրսները այն ծրագրերի համար, որոնք հատուկ նախագծված են աղքատ գյուղատնտեսական շրջանների տնտեսական զարգացումը խթանելու համար, հիմնականում բարձրացնելով ֆերմերային գործունեության արդյունավետությունը:

ԳԶՄՀ-ից նպաստ են ստանում աշխարհի ամենաաղքատ մարդիկ՝ մանր ֆերմերները, հողազուրկ գյուղացիները, քոչվոր հովիվները, արտիզանային ձկնորսությամբ զբաղվողները, տեղական բնակչությունը և բոլոր խմբերի աղքատ գյուղացի կանայք:

ԳԶՄՀ-ի ռեսուրսների մեծ մասը աղքատ երկրներին է տրամադրվում առավելագույն զիջողական պայմաններով՝ ավելի քան քառասուն տարով փոխա-

տուցմամբ, ներառյալ տասը տարի երկարաձգումն ու տարեկան 0,75% ծառայության վարձը:

1977թ. իր հիմնադրումից ի վեր ԳԶՄՀ-ն 114 երկրներում ֆինանսավորել է 548 փոխառության ծրագրեր, որոնց համար տրամադրել է ավելի քան 6, միլիարդ դոլար՝ փոխառությունների և դրամաշնորհների ձևով: Ընդունող երկրները ներդրել են 6,9 միլիարդ դոլար, իսկ ձեռնարկատերը տրամադրել են 5,8 միլիարդ դոլար՝ համատեղ ֆինանսավորման ձևով: Այս ծրագրերը օգնել են ավելի քան 250 միլիոն մարդկանց:

## Արդյունաբերության զարգացում

Արդյունաբերության զարգացումը ստեղծել է և՛ աննախադեպ արդյունաբերական խնդիրներ, և՛ հնարավորություններ զարգացող և անցումային շրջանում գտնվող երկրների համար: **Միավորված ազգերի Արդյունաբերական զարգացման կազմակերպությունը** (ՄԱԱԶԿ) մասնագիտացված կազմակերպություն է, որն օգնում է այս երկրներին հետամուտ լինել կայուն արդյունաբերական զարգացմանը նոր գլոբալ միջավայրում: ՄԱԱԶԿ-ն կայացնում է կոնկրետ որոշումներ այսօրվա արդյունաբերական խնդիրների համար՝ օժանդակելով կառավարություններին, գործարար ընկերություններին և մասնավոր արդյունաբերական սեկտորին միավորված ծառայությունների փաթեթի հետ համատեղ, որոնք չափվում են երեք առաջնային բնագավառներով.

- *մրցակցային տնտեսություն*, ներառյալ արդյունաբերական քաղաքականության ձևակերպումը և իրականացումը, շարունակական բարելավումները և որակյալ կառավարումը, ներդրումները և տեխնոլոգիայի խթանումը,
- *հուսալի միջավայր*, ներառյալ միջավայրի քաղաքականությունը, էներգիայի արդյունավետությունը և ավելի մաքուր արտադրանքը և
- *արդյունավետ զբաղվածություն*, ներառյալ փոքր և միջին ձեռնարկություններին օժանդակող քաղաքականությունը, ձեռնարկատիրության զարգացումը և կին ձեռնարկատերերը:

Գործելով որպես արդյունաբերության զարգացման գլոբալ ֆորում՝ ՄԱԱԶԿ-ն միավորում է զարգացած և զարգացող երկրներին, ինչպես նաև տնտեսության անցումային փուլում գտնվող երկրների կառավարությունների, արդյունաբերության, հասարակական և մասնավոր սեկտորների ներկայացուցիչներին: Իր տեխնիկական համագործակցության ծրագրերի միջոցով ՄԱԱԶԿ-ն լուծում է արդյունաբերության զարգացման տնտեսապես արդյունավետ, սոցիալապես ցանկալի և էկոլոգիապես հաստատուն եղանակի պահպանման խնդիրը:

Անդամ պետությունների հետ համատեղ ՄԱԱԶԿ-ն մշակել է ծառայության մոդուլների ամբողջական փաթեթներ, որոնք նախագծված են երկրների առանձնահատուկ պահանջներին համապատասխան՝ արդյունաբերական հնարավորությունները ամրացնելու և ավելի մաքուր ու կայուն արդյունաբերական զարգացման հասնելու համար:

ՄԱԱԶԿ-ի ներդրումների և տեխնոլոգիաների խթանման գրասենյակներն օ-

ժանդակում են արդյունաբերականացված, զարգացող և անցումային փուլում գտնվող երկրների միջև գործարար կապերին: Այս գրասենյակները ֆինանսավորվում են այն երկրների կողմից, որտեղ դրանք տեղակայված են. Բահրեյն, Չինաստան, Ֆրանսիա, Հունաստան, Իտալիա, Ճապոնիա, Լեհաստան, Կորեայի Հանրապետություն և Սլովակիա: Ռուսաստանի Ֆեդերացիան հանդիսանում է ՄԱԱԶԿ-ի Միջազգային արդյունաբերական համագործակցության կենտրոնի կենտրոնական գրասենյակը: Ի լրումն, ՄԱԱԶԿ-ն ունի 29 տարածքային գրասենյակներ ամբողջ աշխարհում:

## Աշխատանքային հարաբերություններ

Զարգացման տնտեսական, ինչպես նաև սոցիալական ասպեկտներով զբաղվում է **Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ԱՄԿ/ILO)**՝ այն մասնագիտացված գործակալություններից մեկը, որը հիմնադրվել է 1919թ.՝ ՄԱԿ–ից ավելի վաղ: Աշխատավայրերում աշխատանքային նորմերի սահմանման և մոնիտորինգի ոլորտում նրա տարած տևական և բազմաբնույթ աշխատանքն ապահովել է աշխատանքի միջազգային նորմերի շրջանակը և ուղենիշները, որոնք ընդունվել են փաստորեն բոլոր երկրների ազգային օրենսդրության մեջ:

ԱՄԿ-ի առաջնորդող սկզբունքն այն է, որ սոցիալական կայունությունը և ինտեգրումը կարելի է պահպանել այն դեպքում միայն, եթե դրանք հիմնվել են սոցիալական արդարության, մասնավորապես առողջ աշխատավայրում արդարացի վարձատրությամբ զբաղվածության իրավունքի սկզբունքի հիման վրա: Տասնամյակներ ի վեր ԱՄԿ-ն նպաստել է այնպիսի չափանիշների սահմանմանը, ինչպիսիք են ութժամյա աշխատանքային օրը, մայրության պաշտպանությունը, երեխայի աշխատանքի օրենքները և մեծ շառավիղով քաղաքականությունը, որն աշխատավայրերում անվտանգություն և խաղաղ արդյունաբերական հարաբերություններ է ապահովում:

ԱՄԿ-ն մասնավորապես զբաղվում է հետևյալ հարցերով.

- Միջազգային քաղաքականության և ծրագրերի մշակում, որոնք ուղղված են մարդու հիմնական իրավունքների ապահովմանը, աշխատանքային և բնակարանային պայմանների բարելավմանը և զբաղվածության հնարավորությունների ընդլայնմանը:
- միջազգային աշխատանքային նորմերի սահմանում՝ դրանց կիրառման վերահսկողության յուրօրինակ համակարգով, որոնք ազգային իշխանությունների համար առողջ աշխատանքային սկզբունքների գործնական իրականացման ուղենիշներ են:
- Տեխնիկական համագործակցության լայնածավալ ծրագիր, որը մշակվում և իրականացվում է օժանդակություն ստացողների հետ համատեղ, որպեսզի օգնություն տրամադրվի երկրներին այդ քաղաքականության արդյունավետ իրականացման գործում:
- Ուսուցում, կրթում, հետազոտական և տեղեկատվական գործունեություն այդ ձեռնարկումների հաջողության համար:

**Պատշաճ աշխատանք**: Բոլոր մարդկանց համար պատշաճ աշխատանքի հնարավորությունների ապահովումն ԱՄԿ-ի կենտրոնական նպատակն է: Աշխատանքի միջազգային խորհրդաժողովը առանձնացրել է չորս խնդիրներ, որոնք պետք է հանգեցնեն այդ առաջնային նպատակին: Դրանք են.

- Ապահովել և իրականացնել աշխատանքում հիմնական սկզբունքները ու իրավունքները,
- Ընձեռել ավելի մեծ հնարավորություններ կանանց և տղամարդկանց պատշաճ զբաղվածություն և եկամուտ ապահովելու համար,
- Ընդարձակել սոցիալական պաշտպանության ընդգրկվածությունը և արդյունավետությունը բոլորի համար,
- Ամրապնդել երկխոսությունը կառավարությունների, աշխատանքի և գործատուների միջև:

Այս խնդիրները իրականացնելու համար ԱՄԿ-ն իր ուշադրությունը սևեռում է այնպիսի բնագավառների վրա, ինչպիսիք են առողջապահությունը և անվտանգությունը աշխատանքում, փոքր և միջին ձեռնարկությունների օժանդակումը, խտրականության և գենդերային անհավասարության վերացումը, երեխայի աշխատանքի աստիճանական վերացումը և 1988թ. Աշխատանքի միջազգային խորհրդաժողովում ընդունված *Աշխատանքում հիմնական սկզբունքների և իրավունքների ԱՄԿ-ի հռչակագրի* խթանումը:

**Տեխնիկական համագործակցություն**: ԱՄԿ-ի տեխնիկական համագործակցությունը կենտրոնանում է ժողովրդավարության աջակցության, զբաղվածության ստեղծման միջոցով աղքատության վերացման և աշխատողների պաշտպանության խնդիրների վրա: Մասնավորապես ԱՄԿ-ն օգնում է երկրներին զարգացնել իրենց օրենսդրությունը և գործնական քայլեր ձեռնարկել ԱՄԿ-ի չափանիշները կյանքի կոչելու ուղղությամբ. օրինակ՝ ստեղծելով արտադրական առողջության և անվտանգության ապահովման բաժանմունքներ, սոցիալական ապահովության համակարգեր և աշխատողների կրթությանը վերաբերող ծրագրեր: Նախագծերն իրականացվում են ստացող երկրների, ֆինանսավորողների և ԱՄԿ-ի (որն ամբողջ աշխարհում պահպանում է տարածքային և ենթատարածաշրջանային գրասենյակների ցանցը) սերտ համագործակցությամբ: ԱՄԿ-ն իրականացնում է տեխնիկական համագործակցությանը վերաբերող ծրագրեր մոտ 140 երկրներում և տարածքներում: Վերջին տասնամյակի ընթացքում տեխնիկական համագործակցության ծրագրերի վրա տարեկան ծախսվում է մոտ 130 միլիոն ամերիկյան դոլար:

**ԱՄԿ-ի Մասնագիտական վերապատրաստման միջազգային կենտրոնը**, որը գտնվում է Տուրինում (Իտալիա), իրականացնում է վերապատրաստման դասընթացներ մասնավոր և հասարակական ձեռնարկությունների բարձրաստիճան և միջին աստիճանի կառավարիչների, աշխատանքային կազմակերպությունների ղեկավարների, կառավարական պաշտոնյաների և քաղաքական որոշում կայացնողների համար: 1965թ. սկսած վերապատրաստվել է 172 երկրների մոտ 70 հազար մարդ:

**ԱՄԿ-ի Աշխատանքային խնդիրների ուսումնասիրությունների միջազգային ինստիտուտը,** որը գտնվում է Ժնևում, նպաստում է ԱՄԿ-ի գործունեության առնչությամբ ծագող խնդիրների քաղաքականության ուսումնասիրության և հասարակական բանավեճերի անցկացմանը: Կազմակերպչական թեման աշխատանքի հաստատությունների, տնտեսության աճի և սոցիալական հավասարության միջև հարաբերությունն է: Ինստիտուտը գործում է որպես սոցիալական քաղաքականության գլոբալ ֆորում, պահպանում է միջազգային հետազոտական ցանցերը և կրթական ծրագրեր է իրականացնում:

## Միջազգային ավիացիա

Միայն 1999թ. մոտ 1.5 միլիոն ուղևորներ են ճանապարհորդել ավելի քան 20 միլիոն թռիչքների միջոցով, միաժամանակ գրեթե 30 միլիոն տոննա արտադրանք է փոխադրվել օդով: Միջազգային թռիչքների ապահով և շարունակական աճը վերահսկվում է Միավորված ազգերի մասնագիտացված գործակալության՝ **Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության** կողմից (ՔԱՄԿ):

ՔԱՄԿ-ն խրախուսում է քաղաքացիական օդանավերի նախագծումը և շահագործումը, աջակցում է օդային ուղիների, օդանավակայանների և օդագնացության սարքավորումների զարգացմանը, աշխատանք է տանում հասարակության՝ ապահով, կանոնավոր, արդյունավետ և խնայողական միջազգային օդային տրանսպորտ ունենալու կարիքը բավարարելու ուղղությամբ:

Այս նպատակների իրականացման համար ՔԱՄԿ-ն.

- Ընդունել է միջազգային նորմեր և առաջարկություններ, որոնք կիրառվում են օդանավերի և դրանց սարքավորումների մեծ մասի նախագծման և իրագործման մեջ, օդաչուների, օդանավերի անձնակազմերի, օդային ուղիների դիսպետչերների, ցամաքային և շահագործման անձնակազմերի գործունեության շրջանակներում, միջազգային օդանավակայանների անվտանգության պահանջներում և ընթացակարգերում:
- Մշակում է տեսողական և սարքավորված թռիչքների կանոնները, ինչպես նաև օդագնացության քարտեզներ, որոնք օգտագործվում են միջազգային օդագնացության մեջ: Նրա պատասխանատվությունների մեջ են մտնում նաև օդանավերի հեռահաղորդակցման համակարգերը, ռադիոհաճախականությունները և անվտանգության ընթացակարգերը:
- Օդանավերում արտանետման և աղմուկի սահմանների նվազեցման միջոցով աշխատում է շրջակա միջավայրի վրա ավիացիայի ազդեցության նվազեցման ուղղությամբ:
- Նպաստում է օդանավերի, ուղևորների, անձնակազմերի, ուղեբեռների, բեռների անցաշարժմանը սահմանների լայնքով՝ նորմեր սահմանելով մաքսային, արտագնացության, հանրային առողջապահության և այլ ընթացակարգերի համար:

ՔԱՄԿ-ն բավարարում է զարգացող երկրների կողմից ներկայացված օգնության խնդրանքը օդային տրանսպորտի համակարգերը և ավիացիայի անձնա-

կազմի ուսուցումը ապահովելու առնչությամբ: Մի քանի զարգացող երկրներում նրա օգնությամբ հիմնադրվել են տարածքային ուսուցողական կենտրոններ և հազարավոր ուսանողների համար, որոնք գրանցված են ՔԱՄԿ-ում, դպրոցներում սովորելու հնարավորություն է ընձեռվել: Գործակալությունն ավելի քան 100 երկրներ տեխնիկական համագործակցության փորձագետներ է ուղարկել և ամեն տարի ներգրավում է մոտ 120 ծրագրերում, որոնց միջին տարեկան ծախսը կազմում է 54 միլիոն դոլար:

Ներկայումս ՔԱՄԿ-ն արբանյակային համակարգ է զարգացնում, որպեսզի բավարարի քաղաքացիական ավիացիայի հաղորդակցման, օդագնացության, հսկողության և օդային ուղիների կառավարման ապագա կարիքները: Արբանյակներում և համակարգիչներում, տվյալների փոխանակման կայքերում և օդանավի էլեկտրոնային սարքերում համակարգը ամենաժամանակակից տեխնոլոգիաներ է կիրառում, որպեսզի համապատասխանի չափազանց ընդլայնվող պահանջներին: Այս ինտեգրված գլոբալ համակարգը կբարձրացնի անվտանգությունը և կբարելավի օդային ուղիների ապասարկման կազմակերպումն ու շահագործումը: Համակարգը, որն ընդունված է ՔԱՄԿ-ի անդամ երկրների կողմից, ներկայումս իրականացման փուլում է:

ՔԱՄԿ-ն համագործակցում է Օդային տրանսպորտի միջազգային ընկերակցության, Օդանավակայանների միջազգային խորհրդի, Ավիատորների ընկերակցությունների միջազգային ֆեդերացիայի և Օդանավերի սեփականատերերի և օդաչուների միջազգային խորհրդի հետ:

## Միջազգային ծովային փոխադրումներ

1958թ. նավերի միջև բախումները 56 հազար տոննա առևտրական ծովային փոխադրումների կորստյան պատճառ են դարձել, առավել ևս վթարները ծանծաղուտներում կամ նավերի խորտակումները պատճառ են դարձել 115 հազար տոննա կորստի: Այս պատահարների գրեթե կեսը տեղի է ունեցել նավագնացության սխալի կամ սարքավորումների թերության հետևանքով: Նույն տարում հիմնադրվել է **Ծովագնացության միջազգային կազմակերպությունը (ԾՄԿ/IMO)**, որը 1959թ. մշակել է անվտանգության առաջին միջոցները: Չորս տասնամյակ հետո կորուստները կտրուկ նվազել են: Ի դեպ, աշխարհի առևտրական նավատորմի 96%-ը հետևում է ԾՄԿ-ի կողմից մշակված անվտանգության երեք առանցքային կոնվենցիաների դրույթներին:

ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալության շնորհիվ աշխարհով մեկ միջոցառումներ են իրականացվում, որոնց նպատակն է բարելավել միջազգային ծովային փոխադրումների անվտանգությունը և կանխարգելել նավերից ծովի աղտոտումը (ԾՄԿ-ի գործունեությունն՝ ուղղված աղտոտման դեմ, տես ստորև): ԾՄԿ-ն ներգրավված է նաև իրավական խնդիրներում, ներառյալ պատասխանատվությանն ու փոխհատուցմանն առնչվող խնդիրները և միջազգային ծովային երթևեկության կարգավորումը:

Ծովային օրենսդրության ընդունումը ԾՄԿ-ի ամենահայտնի առաջնային նպատակներից է: ԾՄԿ-ն ընդունել է մոտ 40 կոնվենցիաներ և հուշակագրեր, ո-

յանց մեծ մասը համապատասխանեցվել է աշխարհում ծովային փոխադրումների ոլորտում տեղի ունեցած փոփոխություններին:

Երբ ԾՄԿ-ն սկսեց իր գործունեությունը, նրա առաջնային խնդիրը ծովի աղտոտման կանխարգելմանն առնչվող միջազգային համաձայնագրեր և օրենսդրություն մշակելն էր: Այդ գործընթացն ավարտվեց 1970-ականների վերջերին, իսկ գործակալությունը համապատասխանաբար կենտրոնացավ օրենսդրությունը ժամանակակից պահանջներին ներդաշնակեցնելու և հնարավորին չափ շատ երկրների կողմից դրա վավերացումն ապահովելու խնդրի վրա: Այդ գործընթացը հաջող էր այնքանով, որ որոշ կոնվենցիաներ կիրառվում են համաշխարհային ծովային փոխադրումների ընդհանուր տոննաժի 98%-ի դեպքում:

ԾՄԿ-ի ծովային անվտանգությանն առնչվող հիմնական պայմանագրերը հետևյալն են.

- *Միջազգային կարգավորում ծովում բախումների կանխարգելման մասին (COLREG), 1972թ,*
- *Միջազգային կոնվենցիա ապահով կոնտեյներների մասին (CSC), 1972թ.,*
- *Միջազգային կոնվենցիա ծովում մարդկային կյանքի անվտանգության մասին (SOLAS), 1974թ.,*
- *Միջազգային կոնվենցիա ուսուցման նորմերի, նավաստիների վկայագրության և հերթապահության մասին (STCW), 1978թ.,*
- *Միջազգային կոնվենցիա ծովային որոնման և փրկարարության մասին (SAR), 1979թ.:*

ԾՄԿ-ի կողմից ներկայացված այլ միջոցներ վերաբերում են կոնտեյներների, մեծածավալ բեռների, հեղուկ գազի նավթատարների, ձկնորսական և նավերի այլ տեսակների անվտանգությանը: Հատուկ ուշադրություն է դարձվում անձնակազմի նորմերին: 1970թ. վերջերից սկսած՝ անվտանգության նորմերը զգալիորեն բարձրացել են ամբողջ աշխարհում, երբ այս պայմանագրերը սկսել են ուժի մեջ մտնել, և վավերացումների քանակը հասել է ռեկորդային մակարդակի:

ԾՄԿ-ն ձգտում է հաղորդակցության համակարգեր հիմնադրել, որոնք ծովում ավելի մեծ անվտանգություն կերաշխավորեն: Հաղորդակցման տեխնոլոգիայում կատարված նշանակալի առաջընթացը հնարավորություն է ստեղծում ԾՄԿ-ի համար Լական բարելավումների հասնելու ծովային աղետի ազդարարման համակարգում: 1970թ. նախաձեռնվեց գլոբալ որոնման և փրկարարության համակարգը: 1979թ. հիմնված *Ծովային արբանյակային միջազգային կազմակերպությունը*. Նշանակալից կերպով բարելավեց ռադիո և այլ հաղորդակցությունների առաքումը նավերին: Հետագա առաջընթաց արձանագրվեց 1999թ., երբ *Ծովային աղետի ազդարարման և անվտանգության գլոբալ համակարգը* լիովին գործող դարձավ. աշխարհի ցանկացած կետում աղետի մեջ հայտնված նավը փաստորեն օգնություն ստանալու երաշխիք ունի, նույնիսկ եթե անձնակազմը ռադիոազդանշան տալու ժամանակ չունի, քանի որ հաղորդագրությունը ուղարկվում է ավտոմատ կերպով:

ԾՄԿ-ի տարբեր կոնվենցիաներ վերաբերում են պատասխանատվության և

փոխհատուցման խնդիրներին: Դրանց շարքում են *Միջուկային նյութերի ծովային տեղափոխումների բնագավառում քաղաքացիական պատասխանատվության վերաբերյալ կոնվենցիան, 1971թ., Ծովային հայցերի պատասխանատվության սահմանափակման մասին կոնվենցիան, 1976թ. և Վնասակար ու վտանգավոր նյութերի ծովային փոխադրումների հետ կապված վնասի պատասխանատվության և փոխհատուցման մասին կոնվենցիան, 1996թ.*:

ԾՄԿ-ի տեխնիկական համագործակցության նպատակն է աջակցել իր միջազգային չափանիշների և կանոնադրությունների իրականացմանը, մասնավորապես զարգացող երկրներում, և օժանդակել կառավարությունների հաջողությամբ իրականացնելու ծովային փոխադրումների ինդուստրիան:

Շեշտը դրվում է վերապատրաստման վրա և հավանաբար լավագույն օրինակ կարող է ծառայել ԾՄԿ-ի **Ծովային համաշխարհային համալսարանը** Մալմոյում (Շվեդիա), որը խորացված դասընթացներ է վարում ծովային ղեկավարման, կրթության և կառավարման հարցերում ներգրավված տղամարդկանց և կանանց համար:

## Հեռահաղորդակցություն

Հեռահաղորդակցությունը առանցքային ուղղություն է դարձել ծառայությունների համընդհանուր տրամադրման համատեքստում. բոլորը՝ բանկային համակարգը, զբոսաշրջիկությունը, տեղափոխումներն ու տեղեկատվական ինդուստրիան, կախված են արագ և հուսալի համընդհանուր հեռահաղորդակցությունից: Այս սեկտորը հեղափոխություն է ապրում այնպիսի հզոր միտումների շնորհիվ, ինչպիսիք են գլոբալացումը, պարտադիր կարգավորման վերացումը, վերակառուցողական գործընթացը, ավելացված արժեքի ծառայությունների ցանցը, տեղեկատվական ցանցերը և տարածաշրջանային համաձայնությունները: Այդպիսի զարգացումները վերափոխեցին հեռահաղորդակցության ոլորտի կարգավիճակը. այն նախկին հասարակական օգտագործման միջոցից վերափոխվեց առևտրի հետ սերտ կապ ունեցող երևույթի: Սպասվում է, որ առաջիկա տասը տարվա ընթացքում հեռահաղորդակցության համընդհանուր շուկան կաճի մոտ 1 միլիարդ ԱՄՆ դոլարով:

Այդ համատեքստում է գործում **Հեռահաղորդակցման միջազգային միությունը՝ (ՀՄՄ)**, որը հիմնադրվել է 1865թ. և աշխարհի ամենահին միջկառավարական կազմակերպությունն է: ՀՄՄ-ի շրջանակներում հասարակական և մասնավոր սեկտորները համակարգում են հեռահաղորդակցության համընդհանուր ցանցերն ու ծառայությունները:

Մասնավորապես ՀՄՄ-ն՝

- զարգացնում է այն նորմերը, որոնք նպաստում են ազգային հեռահաղորդակցական ենթակառույցների փոխկապակցվածությանը համընդհանուր ցանցերի հետ՝ տեղեկատվության ամբողջական փոխանակման հնարավորություն ընձեռելով, լինեն տվյալներ, հեռապատճեն թե հեռախոսային զանգեր ամբողջ աշխարհով մեկ.
- աշխատում է ինտեգրել նոր տեխնոլոգիաները հեռահաղորդակցական հա-

մընդհանուր ցանցերի մեջ՝ թույլ տալով զարգացման նպատակով այնպիսի նոր հնարավորություններ, ինչպիսիք են ինտերնետը, էլեկտրոնային փոստը, մուլտիմեդիան և էլեկտրոնային առևտուրը,

- ընդունում է միջազգային դրույթներ և դաշնագրեր, որոնք կառավարում են ռադիոհաճախականության սպեկտրի ու արբանյակային ուղեծրային դիրքերի բաժանումը՝ սահմանափակ քանակի ռեսուրսները, որոնք օգտագործվում են բազմաբնույթ սարքավորումների կողմից, ներառյալ հեռուստատեսությունն ու ռադիոհաղորդումները, բջջային հեռախոսները, արբանյակային հիմունքների վրա գործող հեռահաղորդակցական համակարգերը, օդային և ծովային նավարկությունն ու անվտանգության համակարգերը, ինչպես նաև անլար համակարգչային համակարգերը,
- ձգտում է ընդլայնել և բարելավել հեռահաղորդակցությունը զարգացող աշխարհում՝ տրամադրելով խորհրդատվություն այդ բնագավառի զարգացման քաղաքականության վերաբերյալ, տեխնիկական օժանդակություն, նախագծերի իրականացման հետ կապված կառավարում ու վերապատրաստում և նպաստելով գործընկերությանը հեռահաղորդակցական ոլորտի ղեկավարների, ֆինանսավորող գործակալությունների և մասնավոր կազմակերպությունների միջև:

Օրինակ՝ 2000թ. ՀՄՄ-ն հաստատեց չափանիշների մի փաթեթ տեղական տարածքների ռադիոցանցերի համար, ինչը նպաստում է համակարգչային սարքավորումների դյուրատարությանը: Գործակալությունը կարևոր դեր խաղաց երրորդ սերնդի բջջային հեռախոսահամակարգերի ներմուծման գործում՝ բաշխելով իր ռադիոհաճախականության սպեկտրը և համակարգերի տարրերի վերաբերյալ համընդհանուր համաձայնության հասնելու հնարավորություն տրամադրելով: ՀՄՄ-ի առաջարկությունների արդյունքում մշակվեցին չափանիշներ էլեկտրոնային առևտրում էլեկտրոնային ստորագրություններ դնելու համար: Ներկայումս գործակալությունը օժանդակում է զարգացող երկրներին էլեկտրոնային առևտրում մասնակցելու առումով՝ օգնելով անհրաժեշտ տեխնոլոգիայի ձեռքբերմանը և համակարգչային սարքավորումների ու ծրագրերի ենթակառույցների ստեղծմանը:

ՀՄՄ-ն, ի թիվս 189 անդամ երկրների, ունի 600 հատվածային անդամներ, որոնք ներկայացնում են գիտական և արդյունաբերական ընկերություններ, տարածաշրջանային և միջազգային կազմակերպություններ, ինչպես նաև հասարակական և մասնավոր հեռախոսավարներ և հաղորդավարներ:

## Միջազգային փոստային ծառայություն

Չնայած հեռահաղորդակցության ոլորտում տեղի ունեցած վիթխարի տեխնոլոգիական առաջընթացին՝ իրականում շարունակում են աճել փոստային ծավալները, իսկ փոստային ցանցը մնում է աշխարհի ամենամեծ և խիտ ցանցը: Աշխարհի ավելի քան 700 հազար փոստային գրասենյակներում աշխատում են մոտ 6,2 միլիոն ծառայողներ, որոնք տարեկան հաշվարկով ներքին ծառայու-

թյունների համատեքստում գործ ունեն 430 միլիարդ, իսկ միջազգային ծառայության ոլորտում՝ գրեթե 10 միլիարդ ծրարների և ծանրոցների հետ: Այդ ծառայությունը կանոնավորող ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալությունը **Փոստային համընդհանուր միությունն է (ՓՀՄ):**

ՓՀՄ-ն երկրների փոստային միասնական տարածք է ձևավորում նամակային-փոստային ապրանքների փոխադարձ փոխանակման համար: Յուրաքանչյուր անդամ երկիր համաձայնում է բոլոր այլ անդամ երկրների փոստը փոխանցել իր սեփական փոստի համար օգտագործվող լավագույն միջոցներով: ՓՀՄ-ն՝ իբրև ազգային փոստային ծառայությունների համագործակցության հիմնական գործիք, աշխատում է ապահովել միջազգային փոստային ծառայությունների բարելավումը, յուրաքանչյուր երկրում փոստային հաճախորդներին իրենց միջազգային փոստի համար տրամադրել ներդաշնակ և պարզեցված ընթացակարգ և ներկայացնել ժամանակակից ապրանքների և ծառայությունների համընդհանուր ցանց:

ՓՀՄ-ն սահմանում է ցուցանիշային դրույքներ, քաշի և չափի առավելագույն և նվազագույն սահմանները, ինչպես նաև նամակափոստային առարկաների ընդունման պայմանները՝ առաջնային և ոչ առաջնային առարկաներ, ծրարներ, ակրոգիրներ, տպագրական նյութեր և փոքր ծանրոցներ: Նա սահմանում է նաև տրանզիտային վճարումների հաշվարկման ու հավաքման մեթոդները (նամակածրարային առարկաներ, որոնք անցնում են մեկ կամ մի քանի երկրների տարածքով) և տերմինալային տուրքերի չափերը (փոստի անհամաչափության դեպքում): Նա կանոններ է սահմանում նաև գրանցված և օդային փոստի այն առարկաների համար, որոնք հատուկ զգուշություն են պահանջում, օրինակ, վարակիչ ու ճառագայթող նյութերի:

ՓՀՄ-ի շնորհիվ միջազգային փոստային ցանցի մեջ ինտեգրվել են նոր ապրանքներ ու ծառայություններ: Այդ ճանապարհով այնպիսի ծառայությունները, ինչպիսիք են գրանցված նամակները, փոստային դրամի պատվերները, միջազգային պատասխանների կտրոնները, փոքր ծանրոցներն ու արագացված փոստային ծառայությունները, հասանելի դարձան աշխարհի բնակիչների մեծ մասին:

Գործակալությունը որոշակի գործունեության շրջանակներում լիարժեք ղեկավարող դեր է ստանձնել, օրինակ՝ Էլեկտրոնային տվյալների փոխանակման՝ ԷՏՓ տեխնոլոգիայի (որն իրականացվում է անդամ երկրների փոստային վարչակազմի կողմից) և համաշխարհային մասշտաբով փոստային ծառայությունների որակի վերահսկողության:

ՓՀՄ-ն երկարաժամկետ նախագծերի միջոցով տեխնիկական օժանդակություն է տրամադրում, որոնց նպատակն է ավելի օպտիմալ դարձնել ազգային փոստային ծառայությունները: Նա իրականացնում է նաև կարճատև նախագծեր, որոնք կարող են ներառել ուսումնական դասընթացներ, վերապատրաստման կրթաթոշակներ, խորհրդատվություններ զարգացման հարցերով զբաղվող խորհրդատուների համար, որոնք տեղում վերապատրաստմանը, կառավարմանն ու փոստային գործողություններին առնչվող ուսումնասիրություններ են կատարում: ՓՀՄ-ն միջազգային ֆինանսական հաստատություններին հատա-

կերեն իրազեկ է պահել փոստային ոլորտում ներդրումներ կատարելու անհրաժեշտության մասին:

Ամբողջ աշխարհում փոստային ծառայությունները վճռական ջանքեր են գործադրում փոստային գործը վերակենդանացնելու համար: Որպես հեռահաղորդակցական շղթայի մի մաս, որը «պայթուցիկ» աճ է ապրում, նրանք պետք է հարմարեցվեն արագորեն փոփոխվող միջավայրին, դառնան ավելի անկախ, ինքնաֆինանսավորվող ձեռնարկություններ և ավելի բազմաբնույթ ծառայություններ առաջարկեն: ՓՀՄ-ն առաջատար դեր է կատարում այդ վերակենդանացմանը նպաստելու գործում:

## Մտավոր սեփականություն

Միջազգային առևտրական հարաբերություններում մտավոր սեփականության խնդիրը առանցքային է դարձել: Ամբողջ աշխարհում ներկայումս ուժի մեջ են ավելի քան 3,7 միլիոն արտոնագրեր, 11 միլիոն ապրանքանիշներին վերաբերող գրանցումներ և 1,3 միլիոն արդյունաբերական նախագծեր: Ամեն տարի արտադրվում են մոտ 1 միլիոն գրքեր, 5 հազար գեղարվեստական կինոնկարներ և վաճառվում են 3 միլիարդ երիզներ ու ժապավեններ: Այսօրվա գիտելիքների վրա հիմնված էկոնոմիկայի պայմաններում մտավոր սեփականությունը մի գործիք է, որը նպաստում է նորարարության ստեղծմանը, ինչպես նաև տնտեսական, սոցիալական ու մշակութային զարգացմանը:

**ՄԱԿ-ի մասնագիտացված գործակալությունը՝ Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպությունը (ՄՍՀԿ)**, պատասխանատու է պետությունների միջև իրականացվող համագործակցության միջոցով ամբողջ աշխարհի մտավոր սեփականության պաշտպանության, ինչպես նաև տարբեր միջազգային համաձայնագրերի իրականացման համար, որոնք առնչվում են մտավոր սեփականության իրավական և վարչական ասպեկտների հետ:

Մտավոր սեփականությունը բաղկացած է երկու հիմնական ճյուղերից.

ա. արդյունաբերական սեփականություն, որը հիմնականում իրենից ներկայացնում է գյուտարարություններ, ապրանքանիշեր, արդյունաբերական նախագծեր և ծագման հետ կապված անվանումներ,

բ. հեղինակային իրավունք, որի մեջ հիմնականում մտնում են գեղարվեստական, երաժշտական, արվեստի, լուսանկարչության և լսատեսողական աշխատանքները:

ՄՍՀԿ-ն իրականացնում է մտավոր սեփականության պաշտպանության առնչվող շատ խնդիրներ, օրինակ, միջազգային համաձայնագրերի իրականացման գործընթացի կառավարում, օժանդակություն կառավարություններին, կազմակերպություններին և մասնավոր սեկտորին, տեղում զարգացումների վերահսկողություն, ինչպես նաև կանոնների և օրենքների ներդաշնակեցում ու պարզեցում:

ՄՍՀԿ-ի **Արբիտրաժային և միջնորդության կենտրոնն** ամբողջ աշխարհում օգնում է անհատներին ու կազմակերպություններին լուծելու իրենց վեճերը: 1999թ. սկսած՝ կենտրոնը առաջարկում է նաև ծառայություններ՝ կապված ին-

ինտերնետին առնչվող վիճաբանությունների լուծման հետ:

ՄՍՀԿ-ն վերահսկում է 21 միջազգային համաձայնագրերի իրականացման գործընթացը, որոնք ընդգրկում են մտավոր սեփականությանն առնչվող առանցքային ոլորտներ (դրանցից մի քանիսի պատմությունը սկսվում է 1880-ականներից): Երկու առանցքային համաձայնագրերը հետևյալն են.

*Արդյունաբերական սեփականության պաշտպանության մասին Փարիզյան կոնվենցիա* (1883) և *Գրական ու գեղարվեստական աշխատանքների պաշտպանության մասին Բեռնի կոնվենցիա* (1886):

ՄՍՀԿ-ի գործունեության հիմնական ուղղություններից է առաջընթացային զարգացումն ու միջազգային նորմերի և չափանիշների կիրառումը: ՄՍՀԿ-ն մշտապես արձագանքում է նոր նորմերի ու չափանիշների մշակման կարիքներին՝ հետևելով տեխնոլոգիայում և բիզնեսում տեղի ունեցող առաջընթացին, արձագանքելով նաև այնպիսի երևույթների, ինչպիսիք են ավանդական գիտելիքները, ժողովրդական բանահյուսությունը, կենսաբանական բազմազանությունը և բիոտեխնոլոգիան:

Զարգացման համագործակցության գործունեության միջոցով ՄՍՀԿ-ն զարգացող երկրներին առաջարկում է փորձագիտական խորհրդատվություն՝ կապված միջազգային արտոնագրերի կիրառման, ապրանքանիշերի գրանցման և արդյունաբերական նախագծերի պահպանման հետ: Այն հորդորում է զարգացող երկրներին ամբողջությամբ օգտագործել մտավոր սեփականության համակարգը՝ ներքին ստեղծագործական գործունեությունը զարգացնելու, ներդրումներ իրականացնելու և տեխնոլոգիաների փոխանցումն ապահովելու նպատակով:

Իրավական և տեխնիկական օժանդակությունը ներառում է խորհրդատվություններ ազգային օրենսդրությունը մշակելու և վերանայելու ուղղությամբ: Վերապատրաստման ծրագրերը կազմակերպվում են բազմաթիվ բարձրաստիճան պաշտոնյաների, այդ թվում քաղաքական որոշում կայացնողների, սեփական պաշտոնյաների և ուսանողների համար: Երկրներին նաև մտավոր սեփականության ազգային գրասենյակները ժամանակակից սարքավորումներով ապահովելու օժանդակություն է առաջարկվում:

ՄՍՀԿ-ն ծառայություններ է մատուցում արդյունաբերական սեփականության իրավունքների միջազգային կիրառման նպատակով: ՄՍՀԿ-ի 4 համաձայնագրեր, որոնք ընդգրկում են գյուտարարությունը (արտոնագրեր), ապրանքանիշերն ու արդյունաբերական նախագծերը, ապահովում են, որ ուժի մեջ լինի միջազգայնորեն գրանցված մեկ փաթեթ համաձայնագրերը վավերացրած ցանկացած երկրում: Այդ համաձայնագրերի շրջանակներում ՄՍՀԿ-ի կողմից տրամադրված ծառայությունները պարզեցնում և կրճատում են բոլոր այն երկրներում արվող անհատական դիմումների կամ փաթեթների հետ կապված ծախսերը, որտեղ իրականացվում է մտավոր սեփականության իրավունքի պաշտպանությունը:

## Գլոբալ վիճակագրություն

Կառավարությունները, պետական հաստատությունները և մասնավոր սեկտորը հաճախ հենվում են ազգային և գլոբալ մակարդակների ճշգրիտ և համե-

մասնական վիճակագրության վրա: Իր հիմնադրումից ի վեր ՄԱԿ-ը հանդես է գալիս որպես վիճակագրության գլոբալ կիզակետային հանգույց: Ուղեցույց ընդունելով Վիճակագրական խորհուրդը՝ վիճակագրության հարցերով ՄԱԿ-ի միջկառավարական մարմինը, Քարտուղարության Վիճակագրության բաժինը աշխարհով մեկ մեծ շառավիղի վիճակագրական տվյալներ և ծառայություններ է տրամադրում արտադրողների և վիճակագրական տվյալներից օգտվողների համար:

Տվյալների հրատարակումը և ինտերնետային ծառայությունները ներառում են *«Վիճակագրական տարեգիրքը»*, *«Վիճակագրության ամսական տեղեկագիրը»*, *«Աշխարհի վիճակագրության գրպանի գրքույկը»* և մասնագիտացված հրապարակումներ ազգագրական վիճակագրության, ազգային հաշվետվությունների, միջազգային ապրանքային առևտրի, արդյունաբերական ապրանքների արտադրության և էներգիայի վերաբերյալ: Կանոնավոր կերպով ուսումնասիրություններ են հրատարակվում աշխարհի կանանց, հաշմանդամների և մարդկային բնակավայրերի մասին:

Բաժինը ձգտում է բարելավել ազգային հնարավորությունները զարգացող երկրներում և խորհրդատվական ծառայությունների՝ ուսուցման աջակցության և տարեկան սեմինարների կազմակերպման միջոցով ամբողջ աշխարհում օժանդակում է նրանց:

Բաժնի կողմից օժանդակվող **Վիճակագրական հանձնաժողովը** վիճակագրական մեթոդոլոգիա է մշակում ազգային հաշվետվությունների, ապրանքային առևտրի, շրջակա միջավայրի վիճակագրության, սոցիալական և գենդերային ցուցանիշների, ինչպես նաև ազգագրական վիճակագրության մասին, ներառյալ բնակչության մարդահամարը և բնակելի շինարարության հաշվառումները, նմուշային ուսումնասիրությունները, կյանքի վիճակագրությունը և քաղաքացիական գրանցումները: Տնտսոցխորհրդի 24 անդամ պետություններից կազմված այս ֆունկցիոնալ խորհուրդը ապահովում է նաև մեթոդոլոգիական նորմերի կոորդինացիան բոլոր միջազգային վիճակագրական ծառայությունների միջև:

## Պետական կառավարում

Երկրի պետական սեկտորն անկասկած ամենակարևոր մասն է ազգային զարգացման ծրագրերի հաջող իրականացման գործում: Գլոբալացման ընձեռած հնարավորությունները, տեղեկատվական հեղափոխությունը և ժողովրդավարացումը արմատական կերպով ազդել են պետության և նրա գործունեության վրա: Անընդհատ փոփոխությունների մթնոլորտում հանրային սեկտորի կառավարումը դարձել է առաջնային խնդիր ազգային մակարդակով որոշում կայացնողների, քաղաքականության մշակողների և հանրային կառավարողների համար:

ՄԱԿ-ն իր *Պետական կառավարման և ֆինանսավորման ծրագրի* միջոցով աջակցում է երկրներին կառավարման համակարգերը և հաստատությունները ամրապնդելու, բարելավելու և բարեփոխելու գործում: Ծրագիրը, որը կառավարվում է ՏՍՀՎ-ի՝ ***Պետական էկոնոմիկայի և պետական կառավարման բա-***

***ծնի*** կողմից, օժանդակություն է ցույց տալիս կառավարություններին, որպեսզի նրանց հանրային ոլորտական, կառավարման և ֆինանսական հաստատությունները գործեն արդյունավետ, պատասխանատու և ժողովրդավարական եղանակով: Այն խթանում է կայուն հանրային քաղաքականությունը, արդյունավետ և արձագանքող պետական կառավարումը, արդյունավետ ծառայությունների մատուցումը և փոփոխություններ իրականացնելու պատրաստակամությունը:

Գործունեությունը բազմաբնույթ է: Օգնություն է տրամադրվում աֆրիկյան երկրների կառավարություններին ազգային ծրագրերի մշակման, հանրային սեկտորի քաղաքականությունում էթիկայի բարելավման ուղղությամբ, Լատինական Ամերիկայում՝ հանրային ծառայությունների մատուցման վերափոխման և Ասիայում՝ քաղաքացիական ծառայության բարեփոխման նպատակով: Գործունեության շատ տեսակներ խթանում են «Հարավ-հարավ» համագործակցությունը՝ ընդգծելով դրա հաջողությունները լավագույն պրակտիկայի տարածման և հետագա համագործակցության խրախուսման մեջ, ներառյալ Պետական կառավարման և ֆինանսավորման ոլորտում նոր հնարավորությունների ստեղծման՝ ՄԱԿ-ի Տարածաշրջանային հաստատությունների ինտերնետային ցանցի օգնությամբ:

## Գիտությունը և տեխնոլոգիան զարգացման համար

1960թ. սկսած՝ ՄԱԿ-ը խրախուսում է գիտության և տեխնոլոգիայի կիրառումն իր անդամ պետությունների զարգացման համար: Տնտեսոցիալական խորհրդի ֆունկցիոնալ հանձնաժողովը հանդիսացող ***Զարգացման գիտատեխնոլոգիական հանձնաժողովը*** ուսումնասիրում է գիտության և տեխնոլոգիայի խնդիրները և դրանց ներգրավվածությունը զարգացման գործում, նպաստում է գիտության և տեխնոլոգիայի քաղաքականության ըմբռնմանը զարգացող երկրների առնչությամբ և ՄԱԿ-ի համակարգի շրջանակներում առաջարկություններ է մշակում գիտության և տեխնոլոգիայի խնդիրների վերաբերյալ: Հանձնաժողովը կազմված է 33 անդամ պետություններից և իր ժողովները գումարում է երկու տարին մեկ: Այն ընտրում է տարբեր թեմաներ իր նստաշրջանների միջև ընկած ժամանակահատվածում աշխատանքների և քննարկումների համար: 1999-2000թթ. թեման էր ազգային նոր հնարավորությունների ստեղծումը բիոտեխնոլոգիայի ոլորտում, հատուկ ուշադրության կենտրոնում էին գյուղատնտեսությանը, գյուղարդյունաբերությանը, առողջապահությանն ու շրջակա միջավայրին վերաբերող խնդիրները:

**ՄԱԱԶՀ-ն** էական և քարտուղարական աջակցություն է տրամադրում հանձնաժողովին: Իր հերթին՝ ՄԱԱԶՀ-ն խրախուսում է այն քաղաքականությունները, որոնք նպաստում են տեխնոլոգիական հնարավորությունների ստեղծմանը, նորարարական և տեխնոլոգիական հոսքերին դեպի զարգացող երկրներ: Այն տեխնիկական օժանդակություն է ցույց տալիս ինֆորմացիոն տեխնոլոգիաների ոլորտում և խրախուսում է տեխնոլոգիական հնարավորությունների ստեղծումը առանձին ձեռնարկությունների համար ֆիրմաների այնպիսի համագործակցության համաձայնությունների միջոցով, ինչպիսիք են գործընկերության

ու համակարգչային ցանցերի ստեղծումը:

ՊԳԿ-ն, ԱԵՄԳ-ն, ԱՄՆ-ն, ՄԱԶԾ-ն, ՄԱԱՋԿ-ն և ԾՄՆ-ն իրենց հատուկ լիազորությունների շրջանակում զբաղվում են գիտական և տեխնոլոգիական խնդիրներով: Գիտության զարգացման համար կարևոր տարր է նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի աշխատանքում:

## Սոցիալական զարգացում

Սոցիալական զարգացումն անքակտելիորեն կապված է տնտեսական զարգացման հետ և Միավորված ազգերի կազմակերպության ստեղծման օրվանից ի վեր հանդիսանում է նրա գործունեության հիմքը: Մի քանի տասնամյակների ընթացքում ՄԱԿ-ը շեշտադրումը դնում էր զարգացման սոցիալական ասպեկտների վրա այն նպատակով, որ բոլոր մարդկանց կյանքի բարելավման խնդիրը կենտրոնական լինի համընդհանուր զարգացման համար գործադրվող ջանքերի համատեքստում:

---

### Վերջին հիմնական համաշխարհային խորհրդաժողովները

- *Կրթություն բոլորի համար համաշխարհային համաժողով, 1990թ., Ջոմտիեն (Թաիլանդ)*
- *Երեխաների հարցերով համաշխարհային գագաթաժողով, 1990թ., Նյու Յորք*
- *Շրջակա միջավայրի և զարգացման հարցերով Միավորված ազգերի խորհրդաժողով, 1992թ., Ռիո դե Ժանեյրո*
- *Մարդու իրավունքների համաշխարհային խորհրդաժողով, 1993թ., Վիեննա*
- *Բնակչության և զարգացման հարցերով համաշխարհային խորհրդաժողով, 1994թ., Կաիրո*
- *Սոցիալական զարգացման հարցերով համաշխարհային գագաթաժողով, 1995թ., Կոպենհագեն*
- *Կանանց հարցերով չորրորդ համաշխարհային խորհրդաժողով. գործողություն հավասարության, զարգացման և խաղաղության համար, 1995, Պեկին*
- *Մարդկային բնակավայրերի հարցերով Միավորված ազգերի երկրորդ խորհրդաժողով, 1996թ., Ստամբուլ*
- *Պարենի համաշխարհային գագաթաժողով, 1996թ., Հռոմ*

*Գլխավոր ասամբլեայի հատուկ նստաշրջանները հինգ տարվա կտրվածքով վերանայում են յուրաքանչյուր հիմնական խորհրդաժողովներին առնչվող առաջընթացը: Այդպես անցած խորհրդաժողովների հետագա գործողությունները գնահատվեցին ՄԱԿ-ի հատուկ նստաշրջաններ Բնակչության և զարգացման (1999թ.), Կանանց (2000թ.), Սոցիալական զարգացման (2000թ.), Մարդկային բնակավայրերի (2001թ.), Երեխաների (2001թ.) և Կայուն զարգացման (2002) հարցերով: ՄԱԿ-ի Թերզարգացած երկրների հարցերին նվիրված III խորհրդաժողովը գումարվեց 2001թ.:*

---

Իր գոյության առաջին տարիներին ՄԱԿ-ը կազմակերպեց նախնական հետազոտություններ և տվյալների հավաքում ժողովրդագրական, առողջապահական և կրթական ոլորտներում, ինչն առաջին անգամ հնարավորություն տվեց համաշխարհային մասշտաբով հուսալի տեղեկություններ ստանալու սոցիալական ցուցանիշների վերաբերյալ: Նա նաև պարտավորություններ վերցրեց պաշտպանելու մշակութային ժառանգությունը՝ ճարտարապետական հուշար-

ձանձերից մինչև լեզուները, ինչն արտացոլում է կազմակերպության մտահոգությունն այն հատապահությունների հանդեպ, որոնք հատկապես խոցելի են փոփոխությունների արագ գործընթացների առումով:

Կազմակերպությունը միշտ առաջին շարքերում է գտնվում սոցիալական ծառայությունների ընդլայնման ուղղությամբ կառավարությունների ջանքերին աջակցելու գործում, դա վերաբերում է առողջապահությանը, կրթությանը, ընտանիքի պլանավորմանը, բնակարանային շինարարությանը ու բոլոր մակարդակներում սանիտարական պայմանների բարելավմանը: Ի լրումն սոցիալական ծրագրերին առնչվող մոտեցումների մշակմանը, ՄԱԿ-ը նպաստեց զարգացման տնտեսական և սոցիալական ասպեկտների ինտեգրմանը: Դրա զարգացող քաղաքականությունում ու ծրագրերում մշտապես ընդգծվել է, որ զարգացման սոցիալական, տնտեսական, շրջակա միջավայրի և մշակութային բաղադրամասերը փոխկապակցված են և չեն կարող զատ-զատ իրականացվել:

Գլոբալացումը և ազատականացումը նոր խնդիրներ են առաջացնում սոցիալական զարգացման համար: Հարաճուն մտահոգություն կա գլոբալացման հաղթած շահերի ավելի հավասար բաշխման հասնելու առնչությամբ: Շատ կառավարություններ, որոնք մեծ զոհաբերություններ են արել տնտեսական բարեփոխումների և ազատականացման ուղղություններում, կարծում են, թե դեռ ստանալու են գլոբալացման սպասվող շահույթները: Ավելին, այդ շահույթները հավասարապես չեն բաշխվել անգամ զարգացած երկրներում: Աշխարհի բնակչության կեսից շատի համար, որն օգուտ չի ունեցել դրանից, նոր գլոբալ տնտեսությունը հաճախ խորացնում է հուսահատության զգացումը, որ թույլը երբեք ի վիճակի չի լինի մրցել արդեն հզորի և ուժեղի հետ: Անհրաժեշտություն կա ավելի նպատակային դարձնել ազատականացված առևտրից և ներդրումներից ունեցած շահույթները աղքատության նվազեցման, զբաղվածության աճի և սոցիալական ինտեգրացիայի խրախուսման ուղղությամբ:

---

## Սոցիալական զարգացման հարցերով համաշխարհային գագաթաժողով

*Սոցիալական զարգացման հարցերով համաշխարհային գագաթաժողովը (Կոպենհագեն, 1995թ.) ՄԱԿ-ի կողմից գումարված գլոբալ համաժողովների շարքի մի օղակն է, որի նպատակն էր հաստատել միջազգային օրակարգը և անդամ երկրների համագործակցության և զարգացման հարցերով զբաղվող այլ դերակատարների մասնակցության միջոցով բարձրացնել հիմնական խնդիրների վերաբերող իրազեկությունը: Պետությունների և կառավարությունների 117 ղեկավարներ, ևս 69 երկրներ ներկայացնող նախարարներ ընդունեցին Սոցիալական զարգացման և գործողությունների ծրագրի Կոպենհագենի հռչակագիրը:*

*Կառավարությունները պարտավորվեցին պայքարել աշխարհի հրատապ սոցիալական խնդիրների դեմ բոլոր երկրների համար ընդհանուր երեք առանցքային ուղղություններով. չքավորության վերացում, լրիվ զբաղվածության խրախուսում և սոցիալական ինտեգրման խրախուսում մասնավորապես բնակչության խոցելի խմբերի համար: Գագաթաժողովն ազդարարեց սոցիալական զարգացումը իբրև ազգային և միջազգային քաղաքականության բարձրագույն առաջնայնություն դիտելու և մարդ անհատին սոցիալական զարգացման առանցք դարձնելու հավաքական վճռականության կարևորությունը:*

*Հինգ տարի անց՝ 2000թ., Ժնևում Գլխավոր ասամբլեայի հատուկ նստաշրջանը հաս-*

*յուսանց հասարակությունների ավելի հավասար, սոցիալապես արդարացի և մարդու խնդիրների լուծմանն ուղղված կարևորության գաղափարը: Այն համաձայնություն տվեց նոր նախաձեռնություններին, ներառյալ զբաղվածությանը, սոցիալական զարգացմանն ուղղված զարգացող նորարարական աղբյուրների և չքավորության վերացման ծրագրերին առնչվող համակարգված միջազգային ռազմավարությունը, և առաջին անգամ սահմանեց չքավորության վերացմանն ուղղված համընդհանուր նպատակը, այն է՝ մինչև 2015 թվականը կիսով չափ կրճատել ծայրահեղ չքավորության մեջ ապրող մարդկանց քանակը:*

*Գագաթաժողովից անմիջապես հետո երևան եկան ազգային քաղաքականությանը վերաբերող բազմաթիվ նոր ծրագրեր ու նախաձեռնություններ: Սոցիալական զարգացման խնդիրներին առաջնային կարևորություն տրվեց ազգային և միջազգային քաղաքականության ոլորտներում: Պետությունները ընդունեցին ազգային և միջազգային մակարդակներում սոցիալական կյանքի բարելավումը զարգացման ռազմավարության անբաժանելի մաս դարձնելու, ինչպես նաև մարդուն զարգացման կենտրոնում դնելու կարևորությունը:*

*Գագաթաժողովը ՄԱԿ-ի համակարգին առաջարկեց վերակողմնորոշել իր գործունեությունը:*

*Այնուհանդերձ ազգային և միջազգային քաղաքականության արձագանքները անհամաչափ էին: Չնայած այդ առաջխաղացումներին, որոշ առանցքային ոլորտներում շատ փոքր առաջընթաց արձանագրվեց, իսկ ուրիշ ոլորտներում հետընթաց: Պետությունների ներսում և միջև շարունակում է աճել անհավասարությունը:*

---

ՄԱԿ-ի աշխատանքը սոցիալական ոլորտում էլ ավելի է աղերսվում «մարդու վրա կենտրոնացած» մոտեցմանը, որն անհատներին, ընտանիքներին և համայնքներին դնում է ռազմավարական զարգացման կենտրոնում: Կազմակերպությունը նոր շեշտադրում է անում սոցիալական զարգացման վրա՝ առանձնացնելով այն մոտեցումը, որ միջազգային օրակարգում գերիշխում են տնտեսական և քաղաքական խնդիրները երբեմն, ասենք, սոցիալական խնդիրների՝ առողջապահության, կրթության ու բնակչության կամ էլ սոցիալական խմբերի՝ կանանց, երեխաների և ծերերի հաշվին:

Արտահայտելով այդ մտահոգությունը՝ ՄԱԿ-ի կողմից գումարված վերջին համընդհանուր համաժողովները այդ բացը փոխհատուցելու նպատակով կենտրոնացան սոցիալական զարգացման խնդիրների վրա: 1995թ. Սոցիալական զարգացման հարցերով համաշխարհային գագաթաժողովն իր հերթին ցանք գործարկեց սոցիալական ոլորտում սուղ ազգային ռեսուրսների բաշխումը խրախուսելու ուղղությամբ և խորհրդից, որպեսզի երկրները ընդունեն 20/20 բանաձևը՝ մի նախաձեռնություն, որը կոչ է անում զարգացող երկրների կառավարություններին իրենց բյուջեներից առնվազն 20% առանձնացնել հիմնական սոցիալական ծառայությունների համար և նմանապես կոչ է անում նվիրատու երկրներին զարգացմանն ուղղված նախատեսված պաշտոնական օժանդակությունից հատկացնել 20% այդպիսի ծառայությունների համար:

Միավորված ազգերի կարծիքով, սոցիալական զարգացման զանազան խնդիրները մարտահրավեր են և՛ զարգացող, և՛ զարգացած երկրների համար: Տարբեր աստիճանով բոլոր հասարակությունները պայքարում են գործազրկության, սոցիալական շերտավորման և շարունակական չքավորության դեմ: Պարտադրված սոցիալական խնդիրները՝ միգրացիայից մինչև թմրանյութերի օգտագործում, կազմակերպված հանցավորություն և հիվանդությունների տա-

րածում, կարող են իրենց բարեհաջող լուծումը ստանալ միայն միջազգային համաձայնեցված գործողությունների միջոցով:

ՄԱԿ-ը քննարկում է սոցիալական զարգացմանը վերաբերող խնդիրները **Գլխավոր ասամբլեայի և Տնտեսական ու սոցիալական խորհրդի (Տնտսոցխորհի)** միջոցով՝ համակարգված քաղաքականություն սահմանելով և ծրագրեր ընդունելով: Ասամբլեայի վեց գլխավոր կոմիտեներից մեկը՝ **Սոցիալական, մարդասիրական և մշակութային հարցերի կոմիտեն**, իր օրակարգում քննարկում է սոցիալական ոլորտին վերաբերող հարցեր:

**Տնտսոցխորհի** շրջանակներում հիմնական միջկառավարական մարմինը, որը զբաղվում է սոցիալական խնդիրներով, Սոցիալական զարգացման հանձնաժողովն է: Հանձնաժողովը կազմված է 46 անդամ երկրներից և խորհուրդներ է տրամադրում Տնտսոցխորհին և կառավարություններին սոցիալական քաղաքականության և զարգացման սոցիալական ասպեկտների վերաբերյալ:

Քարտուղարության շրջանակներում Տնտեսական և սոցիալական հարցերի վարչության **Սոցիալական քաղաքականության և զարգացման բաժինը** ծառայություններ է մատուցում այդ մարմիններին՝ ընձեռելով հետազոտությունների, վերլուծությունների հնարավորություն և փորձագիտական խորհրդատվություն: ՄԱԿ-ի ամբողջ համակարգում գործում են մեծ թվով մասնագիտացված գործակալություններ, հիմնադրամներ, ծրագրեր և գրասենյակներ, որոնք զբաղվում են սոցիալական զարգացման տարբեր ասպեկտներով:

## Աղքատության կրճատում

Կառավարությունները, գործելով ՄԱԿ-ի համակարգի հետ համատեղ, համաշխարհային մասշտաբով էական առաջընթաց են ապրել աղքատության կրճատման ոլորտում: 1960թ. սկսած՝ զարգացող երկրներում կյանքի միջին տևողությունը 46-ից հասել է 64 տարեկանի. երեխաների մահացության չափանիշը կիսով չափ կրճատվել է, տարրական դպրոցներում ներգրավված երեխաների թիվն աճել է ավելի քան 80%-ով, և անվտանգ խմելու ջրի ու հիմնական սանիտարական պայմանների մատչելիության հնարավորությունը կրկնապատկվել է:

Չնայած այդ նվաճումներին՝ մոտ 1.2 միլիարդ մարդ ներկայումս ապրում է օրական 1 ԱՄՆ դոլարով: Երկրների միջև ու ներսում աճող անհավասարության պայմաններում ավելի քան 100 միլիոն մարդ ապրում է չքավորության մեջ Հարավային Ամերիկայի, Ասիայի և Եվրոպայի ավելի հարուստ երկրներում, որտեղ 35 միլիոնից ավելին գործազուրկ է: Համընդհանուր պատկերով 113 միլիոն երեխաներ դպրոց չեն հաճախում, և մոտավորապես 1,3 միլիարդ մարդ մաքուր ջրից օգտվելու հնարավորություն չունի: Եկամուտները վերջին տասնամյակի ընթացքում մեկ անձի հաշվարկով նվազել են առնվազն 55 երկրներում՝ հիմնականում Աֆրիկայում, Արևելյան Եվրոպայում և նախկին Սովետական Միությունում: Ասիայում անսպասելի տնտեսական անկման հետևանքով մեծ թվով մարդիկ մնացել են գործազուրկ և առանց եկամուտների: Աղքատության վերացումը ամենակարևոր խնդիրներից է:

ՄԱԿ-ի համակարգը աղքատության վերացման խնդիրը դարձրել է առաջնային: Գլխավոր ասամբլեան 1997-2006թթ. հռչակեց **Աղքատության վերացման միջազգային տասնամյակ**, որի նպատակն է ազգային վճռական գործողությունների և միջազգային համագործակցության միջոցով վերացնել բացարձակ աղքատությունը և էականորեն վերացնել համատարած ընդհանուր աղքատությունը: Հազարամյակի հռչակագրում աշխարհի ղեկավարները վճռականություն արտահայտեցին մինչև 2015թ. կիսով չափ կրճատել 1 ԱՄՆ դոլարով ապրող մարդկանց քանակը, ինչպես նաև նշեցին մի շարք այլ նպատակներ աղքատության և հիվանդությունների պայքարի ոլորտում:

Առաջատար դերակատարը **ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրն է՝ ՄԱԶԾ-ն**, որը աղքատության վերացման խնդիրը դարձրել է իր գործունեության կենտրոնական ուղղությունը: ՄԱԶԾ-ն աղքատությունը դիտում է որպես համալիր երևույթ, որն ընդգրկում է մարդկանց բարձր լիազորություններ տալու, ինչպես նաև եկամուտների ու հիմնական ծառայություններ տրամադրելու բացակայությունը:

ՄԱԶԾ-ն աշխատում է ամրապնդել կառավարությունների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հնարավորությունները և վերլուծել այն բոլոր գործոնները, որոնք նպաստում են աղքատությանը: Օրինակ՝ բարձրացնել պարենի ապահովությունը, բարելավել հիմնական ծառայությունները, նախաձեռնել զբաղվածության ապահովմանն առնչվող հնարավորությունները, բարձրացնել հողից, վարկերից, տեխնոլոգիաներից, վերապատրաստման դասընթացներից և շուկաներից մարդկանց օգտվելու հնարավորությունները, հնարավորություն տալ մարդկանց մասնակցելու իրենց կյանքը ձևավորող քաղաքական գործընթացներին: ՄԱԶԾ-ի աղքատության դեմ ուղղված գործունեության առանցքը աղքատներին կառավարման գործում մասնակցելու հնարավորություն ընձեռելն է:

ՄԱԿ-ի համակարգի միջազգային ֆինանսական հաստատությունները կենտրոնական դեր են խաղում բազմաթիվ ծրագրերի ֆինանսավորման գործում, որոնք ուղղված են աղքատության վերացման սոցիալական ասպեկտներին: 1999թ. **Համաշխարհային բանկի** վարկերը տրամադրվեցին առողջապահության, սննդի և կրթության ծրագրերին: Բանկը փորձում է ավելացնել աղքատ մարդկանց զբաղվածության և դրամ վաստակելու հնարավորությունները՝ ներդրումներ կատարելով մարդկային ռեսուրսների զարգացման հետևյալ ոլորտներում. առողջապահություն, կրթություն և ընտանիքի պլանավորում:

---

## Հազարամյակի հռչակագիրը կենտրոնանում է աղքատության հիվանդությունների և շրջակա միջավայրի խնդիրների վրա

*2000թ. սեպտեմբերին Հազարամյակի գագաթաժողովի ընթացքում աշխարհի ղեկավարները պարտավորվեցին լուծել հետևյալ խնդիրները.*

- *Մինչև 2015թ. կիսով չափ կրճատել աշխարհի այն մարդկանց թիվը, որոնց օրական եկամուտը 1 դոլարից պակաս է, և այն մարդկանց թիվը, որոնք անվտանգ ջուր խմելու կամ օգտագործելու հնարավորություն չունեն:*
- *Նույնպես մինչև 2015թ. ապահովել, որպեսզի ամենուրեք տղա և աղջիկ երեխաները կարողանան ավարտել տարրական կրթության լրիվ դասընթացը և հավասար հնարավորություններ ունենան կրթության բոլոր մակարդակներում:*

- *3/4-ով կրճատել ծննդաբերող մայրերի մահացությունը և 2/3-ով մինչև 5 տարեկան երեխաների մահացությունը:*
- *Դադարեցնել և վերացնել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, մալարիայի և այլ հիվանդությունների տարածումը:*
- *Հատուկ օժանդակություն տրամադրել այն երեխաներին, որոնք ծնողներից զրկվել են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի պատճառով:*
- *Մինչև 2020թ. հասնել կյանքի պայմանների էական բարելավման հետնախորշերում բնակվող առնվազն 100 միլիոն մարդկանց համար:*
- *Խրախուսել գենդերային հավասարությունը և կանանց իրավազորմանը իբրև աղքատության, սովի և հիվանդությունների դեմ պայքարի ուղիներ, և նպաստել կայուն զարգացմանը:*
- *Զարգացնել և իրականացնել այնպիսի ռազմավարություն, որը երիտասարդներին ամենուրեք պատշաճ և արդյունավետ աշխատանք գտնելու հնարավորություն է տալիս:*
- *Խրախուսել դեղագործական արդյունաբերության զարգացումը, ինչը հնարավորություն կտա ավելի լայնորեն տարածելու անհրաժեշտ դեղամիջոցները և բոլորի համար մատչելի դարձնելու դրանք զարգացող երկրներում:*
- *Զարգացնել գործընկերության ծրագրեր մասնավոր սեկտորի և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ՝ զարգացումը և աղքատության վերացումն ապահովելու նպատակով:*
- *Ապահովել, որպեսզի նոր՝ հատկապես տեղեկատվական և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների նվաճումները մատչելի լինեն բոլորի համար:*

*Հազարամյակի հռչակագրում աշխարհի ղեկավարները պարտավորվեցին գործողություններ իրականացնել շրջակա միջավայրին վերաբերող հետևյալ խնդիրները լուծելու համար.*

- *Ապահովել, որպեսզի մինչև 2002թ. Կիոտոյի արձանագրությունը ուժի մեջ մտնի , և սկսել շրջակա միջավայրի համար վնասակար արտանետումների պահանջվող կրճատումը:*
- *Պահանջել, որպեսզի ամբողջովին իրականացվեն Կենսաբազմազանության մասին և Անապատացման դեմ պայքարի կոնվենցիաները, հատկապես Աֆրիկայում:*
- *Դադարեցնել ջրային ռեսուրսների անկայուն շահագործումը՝ տարածաշրջանային, ազգային և տեղական մակարդակներով զարգացնելով ջրային կառավարման ռազմավարությունը:*
- *Խորացնել համագործակցությունը բնական և մարդու գործունեության պատճառով առաջացած աղետների քանակն ու հետևանքները կրճատելու ուղղությամբ:*
- *Ապահովել մարդկային գենոմի վերաբերյալ տեղեկատվությունից օգտվելու ազատ հնարավորությունը :*

---

Լինելով մարդկային ռեսուրսների զարգացման համաշխարհային ամենամեծ ներդրողը՝ բանկը 1999 թվականին 8,6 միլիարդ ԱՄՆ դոլար արժողությամբ վարկեր տրամադրեց զբաղվածության, ջրային և սանիտարական պայմանների բարելավման, կրթության, բնակչության, առողջապահության և սննդի, ինչպես նաև սոցիալական ծրագրերի համար: Այն նաև ստացող երկրներին օգնում է սոցիալական ապահովության ցանցեր ստեղծել ամենաչքավոր և ամենախոցելի սոցիալական խմբերի համար:

Իբրև աղքատության վերացմանն ուղղված զարգացման հաստատության՝ բանկն օժանդակում է մարդկանց համար նախատեսված ներդրումները՝ չքավորներին տրամադրելով հիմնական սոցիալական ծառայություններ՝ ճանապարհների կառուցումից մինչև աղջիկներին ուսուցում տալը: Բանկի սոցիալական պաշտպանության բաժինը ուղիներ է փնտրում խոցելի անհատներին,

տնային տնտեսություններին և համայնքներին ավելի լավ օժանդակելու ուղղությամբ, որոնց համար կործանարար ցնցումը, օրինակ, տնտեսական կտրուկ անկումը կամ բնական աղետը կարող են էլ ավելի խորացնել չքավորությունը: Այդպիսի խոցելիությանը դիմակայելու նպատակով բանկը հրապարակայնորեն աջակցում է պարտադրված գործազրկությանը և տարեցների համար ապահովագրությանը և, վերջապես, աջակցում է այն խմբերին, որոնք սոցիալական պաշտպանության ամենամեծ կարիքն ունեն:

Բանկի **Զարգացման միջազգային ասոցիացիան՝ ԶՄԱ-ն** ամենաաղքատ երկրներում հիմնական սոցիալական ծառայությունների տրամադրման համար նվիրատվական ֆոնդերի ամենամեծ աղբյուրն է: ԶՄԱ-ի ֆոնդերի շնորհիվ, օրինակ, աֆրիկյան աշակերտները 5 միլիոնից ավելի դասագիրք ստացան, 6700 առողջապահական կենտրոններ կառուցվեցին Ասիայում, իսկ Լատինական Ամերիկայի 9,5 միլիոն չքավոր մարդիկ շահույթ ստացան սոցիալական ներդրումների նախագծերից: ԶՄԱ-ն տարեկան միջին հաշվով 5-ից 6 միլիարդ դոլար է տրամադրում զարգացման ծրագրերի համար: 1960թ. ի վեր ԶՄԱ-ն 100 երկրներում ներդրել է մոտ 115 միլիարդ դոլար՝ կատարելով հիմնական ներդրումները տարրական կրթության, առողջապահության, մաքուր ջրի և կոյուղու ու ջրամատակարարման ոլորտներում:

## Պայքար սովի դեմ

Վերջին 50 տարիների ընթացքում սննդի արտադրությունն աննախադեպ վերելք ապրեց՝ առաջ անցնելով աշխարհի բնակչության կրկնապատկման տեմպերից: Չնայած բնակչության արագ աճին՝ սննդի արտադրությունը 1990-1997թթ. մեկ շնչի հաշվով ավելացավ մոտ 25%-ով: Սակայն 830 միլիոն մարդ՝ ավելին, քան Եվրոպայի ողջ բնակչությունը, բավականաչափ սնունդ չունի: ՄԱԿ-ը հստակորեն նշեց, որ թերսնումը, հատկապես սովը ոչ այնքան սննդի սակավության, որքան տուժած բնակչության չքավորության հետևանք է, որը սնունդ հայթայթելու հնարավորություն չունի:

Սովի դեմ պայքարող Միավորված ազգերի կազմակերպության մարմինների մեծ մասը կարևոր սոցիալական ծրագրեր ունի, որոնց նպատակն է ավելի առաջնահերթ դարձնել սննդի ապահովումը բնակչության ամենաչքավոր շերտերի համար, մասնավորապես գյուղական տարածքներում: Հիմնադրվելուց ի վեր **ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը՝ ՊԳԿ-ն**, գործում է աղքատությունն ու սովը վերացնելու ուղղությամբ՝ խրախուսելով գյուղատնտեսական զարգացումը, բարելավված սնունդը և պարենի ապահովությունը, բոլոր մարդկանց համար պարենից օգտվելու հնարավորությունը, որն անհրաժեշտ է ակտիվ և առողջ կյանքի համար:

ՊԳԿ-ի **Պարենի համաշխարհային ապահովության կոմիտեն** պատասխանատու է պարենի միջազգային ապահովման իրավիճակի վերահսկողության և գնահատման, ինչպես նաև խորհրդատվություններ տրամադրելու համար: Այն վերլուծում է պարենին առնչվող կարիքները, գնահատում է առկա և պահուստային մակարդակները և վերահսկում է պարենի ապահովմանն ուղղված քա-

ղաքականությունը: ՊԳԿ-ն իր *համընդհանուր տեղեկատվության և վաղ զգուշացման համակարգի* միջոցով նաև վերահսկում է լայնածավալ մոնիտորինգ իրականացնող համակարգը՝ արբանյակային հսկողության օժանդակությամբ, որը պարենի արտադրության վրա ազդեցություն ունեցող պայմանների հսկողություն է իրականացնում, կառավարություններին և նվիրատուներին զգուշացնում է պարենի մատակարարմանն սպառնացող որևէ հնարավոր վտանգի մասին:

ՊԳԿ-ի *Պարենի անվտանգության հատուկ ծրագիրն* առնչվում է 83 երկրների, որտեղ բնակվում է աշխարհի քրոնիկորեն քաղցած մարդկանց վիթխարի զանգվածը: Ծրագրի նպատակն է բարձրացնել պարենի արտադրությունը և ստեղծել ավելի լավ պայմաններ հողագործությամբ զբաղվող ընտանիքների համար: Փորձնական փուլի ընթացքում գյուղացիները ընտրում և ցուցադրում են պարենի արտադրության աճին վերաբերող առանձին տեխնոլոգիաներ: Այնուհետև ավելի հաջող ռազմավարությունը լայնորեն տարածվում է ծրագրի իրականացման ծավալման փուլում:

Պարենի համաշխարհային գագաթաժողովի ընթացքում (Հռոմ, 1996թ.) 186 երկրներ ընդունեցին *Պարենի անվտանգության գործողությունների ծրագրին առնչվող հռչակագիրը*, որի նպատակն է մինչև 2015թ. կիսով չափ կրճատել սովի ծավալները և ուրվագծել այն ուղիները, որոնք կհանգեցնեն պարենի համընդհանուր անվտանգությանը:

**Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամը՝ ԳԶՄՀ-ն**, զարգացմանն ուղղված ֆոնդեր է տրամադրում՝ աշխարհի ամենաաղքատ տարածաշրջանների գյուղական վայրերում չքավորության և սովի դեմ պայքարելու նպատակով: Որպեսզի գործնականում զարգացման նպատակով այդ օգնությունը հասնի ամենակարիքավորներին, ԳԶՄՀ-ն երաշխավորում է գյուղական վայրերի չքավոր բնակիչների՝ կանանց և տղամարդկանց ներգրավումն իրենց իսկ զարգացման գործընթացում: Դա նշանակում է սեփական կարիքների ճշտում՝ հիմնվելով գիտելիքների և հմտությունների վրա և հաջողված ավանդական ապրելամիջոցների ու ռեսուրսների կառավարման խրախուսում:

ԳԶՄՀ-ի աշխատանքի սոցիալական հարթությունը ներառում է ֆերմերային և ձկնորսային ասոցիացիաների կազմակերպումն ու մոբիլիզացիան աղքատ համայնքներում: Օգտագործելով վարկեր այնպիսի հիմնական ծառայությունները ֆինանսավորելու նպատակով, ինչպիսիք են սերմերը, պարարտանյութերը, գործիքները և պարենի վերամշակման սարքավորումներ գնելու կամ միկրոձեռնարկություններ նախաձեռնելու ցանցերը, միլիոնավոր գյուղացի կանայք և տղամարդիկ հնարավորություն ունեցան իրենց ընտանիքներն ու համայնքները դուրս բերելու գոյատևման և աղքատության ճիրաններից: Վերջին երկու տասնամյակների ընթացքում ԳԶՄՀ-ն տրամադրել է 548 փոխառություններ 114 երկրների համար նախատեսված ծրագրերի համար: Չքավորների կարիքներին ուղղված իր սեփական ռեսուրսների յուրաքանչյուր մեկ դոլարի համար ԳԶՄՀ-ն հավաքեց երկու դոլար այլ նվիրատուներից և կառավարություններից՝ ընդամենը 19.3 միլիարդ դոլար ծրագրերի ծախսերի համար:

ԳԶՄՀ-ն օգնեց գյուղական վայրերի ավելի քան 250 միլիոն չքավորների

մասնակցելու իրենց ազգային տնտեսության զարգացման գործընթացին: Կազմակերպվելուց հետո չքավոր գյուղացիները դառնում են գերազանց պարտք վերադարձնողներ՝ վարկի վերադարձման 97% ցուցիչով: Այդ փաստը նպաստեց աշխարհով մեկ փոքրավարկ ծրագրերի մշակմանը:

Քաղցը տառապանք է պատճառում երկրագնդի բնակիչների յոթից մեկին: **Պարենի համաշխարհային ծրագիրը՝ ՊՀԾ-ն**, աշխարհի պարենի հարցերով զբաղվող ամենամեծ կազմակերպությունն է, որը 1999թ. ամբողջ աշխարհում պարենի օգնություն է տրամադրել 89 միլիոն մարդու համար: ՊՀԾ-ն, համեմատած ՄԱԿ-ի ցանկացած այլ գործակալության հետ, զարգացող երկրներից ավելի շատ ապրանքներ և ծառայություններ է ձեռք բերում՝ փորձելով զարգացնել նրանց էկոնոմիկան:

ՊՀԾ-ն կանոնավոր կերպով առաքում է աշխարհի արտակարգ իրավիճակների համար նախատեսված պարենի երկու երրորդը՝ փրկելով միլիոնավոր մարդկային կյանքեր: Վերջին երեք տասնամյակների ընթացքում ՊՀԾ-ն 24 միլիարդ արժողությամբ ներդրումներ է կատարել աշխարհով մեկ սովի դեմ պայքարելու, զարգացումը խրախուսելու և օգնություն տրամադրելու նպատակով:

Այնտեղ, որտեղ մարդիկ քաղցած են, ՊՀԾ-ն «սնունդ աշխատանքի դիմաց» ծրագրի միջոցով օժանդակություն է տրամադրում՝ օգնելով նրանց ավելի ինքնուրույն լինել: «Սնունդ աշխատանքի դիմաց» ծրագրերում ՊՀԾ-ն աշխատողներին վճարում է պարենով՝ Գանայում օժանդակելով ճանապարհների և նավահանգիստների կառուցմանը, Բանգլադեշում՝ ամբարտակների, Գվատեմալայում՝ դարավանդային սարալանջերի վերակառուցմանը, և Եթովպիայում՝ անտառների վերատնկմանը: Այդ ծրագրերը մարդկանց սովորեցնում են օգտվել իրենց ստեղծածից և կրճատում են կախվածությունը պարենի միջազգային օժանդակությունից:

«Սնունդ աճի համար» ծրագրերը նպատակաուղղված են կարիքավոր մարդկանց՝ երեխաներին, դեռահասներին, հղի կանանց և ծերերին նրանց կյանքի ամենաճակատագրական պահերին: Ամեն օր ՊՀԾ-ն ամբողջ աշխարհում կերակրում է հազարավոր դպրոցական տարիքի երեխաների: Հաիթիի, Պակիստանի և Մարոկկոյի պես երկրներում պարենային օգնությունն օգտագործվում է նաև խոցելի խմբերի ներկայացուցիչներին՝ մայրերին և երեխաներին առողջապահական կլինիկաներ տեղավորելու համար, պլազմիդության և վերարտադրողական առողջապահական դասընթացներին չքավոր կանանց հաճախելու խրախուսման, ինչպես նաև ծնողներին համոզելու նպատակով, որպեսզի իրենց դուստրերին դպրոց ուղարկեն:

Միավորված ազգերի ծրագրերը կրկին և կրկին ապացուցում են, որ սովն ու չքավորությունը կարող են հաղթահարվել սոցիալական պայմաններին համապատասխանող և հանգամանորեն պլանավորված ծրագրերի միջոցով, որոնք բավարարում են աղքատ բնակչության երկարաժամկետ կարիքները: Շատ երկրներ, օրինակ, Հարավային Կորեան, Մեքսիկան և Չինաստանը, որոնք ժամանակին պարենային օգնություն էին ստանում, ներկայումս պարեն արտահանող ամենամեծ շուկաների շարքում են: Իսկ պարենային օգնություն ստացող որոշ երկրներ, օրինակ, Խորվաթիան և Մարոկկոն, վերջերս դարձան ՊՀԾ-ի նվիրատուներ:

# Առողջապահություն

Աշխարհի տարածաշրջանների մեծ մասում մարդիկ ավելի երկար են ապրում, փոքր երեխաների մահացությունը նվազում է, իսկ հիվանդությունները հսկողության տակ են պահվում, որովհետև ավելի շատ մարդիկ հիմնական առողջապահական ծառայություններից, պատվաստում ստանալու հնարավորությունից, մաքուր ջրից, կոյուղուց և ջրամատակարարումից օգտվելու հնարավորություն ունեն: ՄԱԿ-ը խորապես ներգրավված է այդ կարգի շատ նախաձեռնություններում, մասնավորապես զարգացող երկրներում, աջակցելով առողջապահական ծառայություններին, պայքարելով վարակիչ հիվանդությունների դեմ, տեղ հասցնելով անհրաժեշտ դեղամիջոցները, քաղաքները դարձնելով ավելի առողջ և առողջապահական օժանդակություն տրամադրելով արտակարգ իրավիճակներում:

Այնուամենայնիվ վարակիչ հիվանդությունները մնում են հիմնական համընդհանուր վտանգը: 1998թ. Աֆրիկայում և Հարավարևելյան Ասիայում արձանագրված մահերի 45%-ի պատճառը վարակիչ հիվանդություններն են, իսկ աշխարհում անժամանակ մահվան դեպքերի 48%-ը նույնպես ինֆեկցիոն պատճառներ ունեն: Գործոնների շարքում են հարանում դիմադրողականությունը դեղամիջոցների, համընդհանուր վարակաշրջիկության ընդլայնումը և նոր հիվանդությունների երևան գալը: Այնուամենայնիվ, ամենավարակիչ հիվանդությունների պատճառներն ու լուծումները հայտնի են, իսկ հիվանդությունից ու մահից շատ դեպքերում կարելի է խուսափել մատչելի գնով:

Տասնամյակներ շարունակ Միավորված ազգերի համակարգը հիվանդությունների դեմ պայքարի առաջնային դերում է, քաղաքականություններ և համակարգեր ստեղծելու շնորհիվ, որոնք դիմակայում են առողջապահական խնդիրների սոցիալական ծավալներին: **ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը** կենտրոնանում է երեխայի և մայրական առողջության, իսկ **Միավորված ազգերի Բնակչության հիմնադրամը**՝ վերարտադրողական առողջության և ընտանիքի պլանավորման խնդիրների վրա: Մասնագիտացված գործակալությունը, որը համակարգում է հիվանդությունների դեմ համընդհանուր գործողությունները, **Առողջապահության համաշխարհային կազմակերպությունն է՝ ԱՀԿ-ն**: ԱՀԿ-ն հեռահար նպատակներ է սահմանել բոլորի համար առողջության հասնելու, վերարտադրողական առողջությունը ապահովելու, գործընկերության ծրագրեր մշակելու և առողջ ապրելակերպ ու շրջակա միջավայր իրականացնելու համար:

---

## Պոլիոմիելիտից ազատ աշխարհի ստեղծման ճանապարհին

*Երբ 1988թ. երևան եկավ Պոլիոմիելիտի համընդհանուր վերացման նախաձեռնությունը, աշխարհում գրանցվել էին այդ հիվանդությունից անդամալուծության մոտ 350 հազար դեպքեր: Երբ պատվաստման ազգային օրերի ընթացքում իրականացվեց մինչև 5 տարեկան միլիոնավոր երեխաների պատվաստման համաձայնեցված արշավը, պոլիոմիելիտի արձանագրված դեպքերի թիվը 1999թ. իջավ մինչև 7 հազարի (կրճատվելով 20 հազարը): Վիճակի առաջընթաց տեղի ունեցավ: Զարգացող աշխարհում 3 միլիոն մարդ, ովքեր կանդամալուծվեին, այժմ քայլում են, որովհետև պոլիոմիելիտի դեմ պատվաստում են ստացել: Նախապատրաստվեցին առողջապահական ոլորտի*

*տասնյակ հազարավոր աշխատողներ և միլիոնավոր կամավորներ: Մշակվեցին «սառը շղթաներ» և պատվաստման համար նախատեսված տրանսպորտային ու կոմունիկացիոն համակարգեր: Վերջին 5 տարիների ընթացքում պատվաստման ազգային օրերի ժամանակ ամբողջ աշխարհում մոտ 2 միլիարդ երեխաներ պատվաստումներ ստացան, ընդ որում մեկ օրվա ընթացքում Հնդկաստանում պատվաստում ստացավ մոտ 130 միլիոն երեխա: 1998թ. 470 միլիոն երեխաներ՝ աշխարհի երեխաների 2/3-ից ավելին, նույնպես պատվաստումներ ստացան: Հիմնադրվեց պոլիոմիելիտի հարցերով զբաղվող 140-ից ավելի լաբորատորիաների ցանց:*

*Այդ նվաճումները հնարավոր դարձան առողջապահական հարցերով իրականացվող աննախադեպ գործընկերության շնորհիվ, որը նախաձեռնվեց ԱՀԿ-ի, ՄԱԿՄՀ-ի, Միացյալ Նահանգների հիվանդությունների հսկողության և կանխարգելման կենտրոնների, ինչպես նաև Միջազգային Rotary կազմակերպության կողմից, որը մինչև 2005թ. կներդնի 500 միլիոն դոլար այդ արշավի իրականացման համար: Առողջապահության նախարարությունները, նվիրատու կառավարությունները, հիմնադրամները, կորպորացիաները, ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարը, Հարավային Աֆրիկայի նախկին նախագահ Նելսոն Մանդելան, բարեգործներն ու առողջապահական ոլորտի միլիոնավոր աշխատողներ և կամավորներ, յուրաքանչյուրն առանձին վերցրած, իրենց մասնակցությունն ունեցան այդ գործընթացում:*

*Այժմ պոլիոմիելիտի փոխանցման ընդհատման խնդիրը պետք է լուծվի ամեն մի երեխայի: 30 երկրներում հիմնականում Սահարայից հարավ Աֆրիկայում և Հարավ-արևելյան Ասիայում տեղային բնույթի՝ էնդեմիկ հիվանդություններ են տարածված: Պոլիոմիելիտի վերացման գործում շատ կարևոր է հիվանդությունների հսկողության բարելավումը, հակամարտող երկրներում երեխաների համար առողջապահական ծառայություններից օգտվելու հնարավորությունների ստեղծումը, քաղաքական պարտավորությունների իրականացումն ու ֆինանսական պահանջներին համապատասխանումը: Պոլիոմիելիտի վերացման հետ առնչվող առողջապահական հասարակական խնայողությունները, կապված պատվաստումների աշխատանքների ավարտման հետ, տարեկան մոտավորապես կկազմեն 1,5 միլիարդ դոլար:*

---

ԱՀԿ-ի և նրա անդամ պետությունների նպատակն է հասնել առողջության հնարավորինս ամենաբարձր մակարդակին: Դա այն նպատակն է, որն ԱՀԿ-ն համարում է «յուրաքանչյուրի հիմնական իրավունքներից մեկը»: ԱՀԿ-ի կառավարող մարմինը՝ Առողջապահության համաշխարհային համաժողովը, որի մեջ մտնում են բոլոր անդամ երկրները, նպաստել է այս նպատակի իրականացմանը «Առողջություն բոլորի համար» արշավի միջոցով, որի նպատակն է հասնել բարեկեցության բարձր մակարդակի և ապահովել, որպեսզի բոլոր մարդիկ կարողանան ապրել սոցիալապես և տնտեսապես արդյունավետ կյանքով:

---

## ՄԱԿ-ը պայքարում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ

*ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ը դարձել է մեծ ծավալներով տարածվող աղետ: 34 միլիոնից ավելի մարդիկ ապրում են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով, իսկ 18,8 միլիոն մարդիկ արդեն մահացել են այդ հիվանդությունից: Այդ վարակիչ հիվանդությունը ներկայումս տարածվում է տարեկան 5 միլիոն նոր վարակումների չափերով: Որոշ աֆրիկյան երկրներում ՁԻԱՀ-ի հետևանքով կրճատվել է կյանքի տևողությունը:*

*Այդ վտանգի դեմ պայքարելու նպատակով ՄԱԿ-ի յոթ գործակալություններ միավորեցին իրենց միջոցները ՄԱԿ-ի՝ ՄԻԱՎ/ՁԻԱՀ համատեղ ծրագրում (ՄԱՁԻԱՀ), որը հիվանդության փոխանցման կանխարգելմանը, խնամքին ու աջակցությանը, անհատների և համայնքների խոցելիության մեղմացմանը և համաճարակի ազդեցության վերացմանը նպատակաուղղված համաշխարհային հակազդեցության առաջատար քարոզողն է: ՄԱՁԻԱՀ-ը 2000-2001թթ. համար 140 միլիոնանոց բյուջե ուներ, 111 արհեստավարժ*

*աշխատողներ ամբողջ աշխարհում և ավելի շատ գործում է որպես ՁԻԱՀ-ի դեմ պայքարին ուղղված գործողությունները համակարգող, քան ուղղակի ֆինանսավորող կամ իրականացնող գործակալություն: Առաջնային ուղղություններն են.*

- *երեխաներ,*
- *բնակչության ծայրահեղ խոցելի խմբեր,*
- *մորից երեխային ՄԻԱՎ-ի փոխանցման կանխարգելում,*
- *ՁԻԱՀ-ի դեպքերում խնամքի համայնքային չափանիշներ,*
- *պատվաստումների զարգացում,*
- *հատուկ նախաձեռնություններ համամարակների տեսակետից խոցելի տարածքների համար, ներառյալ Աֆրիկան:*

*ՄԱՁԻԱՀ-ը համագործակցում է կառավարությունների, կորպորացիաների, լրատվական միջոցների, կրոնական կազմակերպությունների, համայնքային խմբերի, ինչպես նաև այն անձանց հետ, որոնք ապրում են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով: ՄԱՁԻԱՀ-ի աշխատակազմն ու համահովանավորող կազմակերպությունների ներկայացուցիչները տեղեկատվություն են փոխանակում, համաձայնեցված գործողություններ են ծրագրում և ՁԻԱՀ-ի դեմ ուղղված հիմնական գործունեություն իրականացնելու առնչությամբ որոշում են կայացնում համատեղ ֆինանսավորման մասին: Հիմնական նպատակն է աջակցել ընդունող երկրներին արդյունավետ արձագանք ձևավորելու համար:*

*ՄԱՁԻԱՀ-ը նույնպես փորձում է քաղաքական ղեկավարների շրջանում բարձրացնել ՁԻԱՀ-ի դեմ պայքարին առնչվող ստանձնած պարտավորությունների հարցը, խրախուսել ՁԻԱՀ-ին վերաբերող համաշխարհային հետազոտությունները և ստեղծել այն միջավայրը, որը կաջակցի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ով ապրող մարդկանց: Մասնակցող գործակալություններն են ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը, ՄԱԶԾ-ն, Բնակչության հիմնադրամը, ՅՈՒՆԵՍԿՕ-ն, ԱՀԿ-ն, Համաշխարհային բանկը, ՄԱԿ-ի Թմրամիջոցների վերահսկողության ծրագիրը (տես www.unaids.org):*

*Հազարամյակի հռչակագրում ամբողջ աշխարհի ղեկավարները վճռականություն հայտնեցին մինչև 2015թ. դադարեցնել ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի տարածումը և հատուկ օժանդակություն տրամադրել այն երեխաներին, որոնք որբացել են այդ հիվանդության հետևանքով: Գլխավոր ասամբլեան 2001թ. հունիսին հատուկ նստաշրջան գումարեց, որն օգնեց համախմբել քաղաքական կամքն ու այն ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համար:*

---

Բազմաթիվ պատմական նվաճումների խնդրում ԱՀԿ-ն առաջատար ուժ էր: Նախ՝ 1980թ. ծաղիկ հիվանդության համընդհանուր վերացումը, որին հնարավոր եղավ հասնել տասնամյա արշավի շնորհիվ: Հաջորդը 1994թ. պոլիոմիելիտի վերացումն էր ամերիկյան մայրցամաքներում, ինչը կարելի է համարել առաջին քայլ պոլիոմիելիտից ազատ աշխարհի ապահովելու նպատակով մինչև 2005թ. իրականացվելիք ձեռնարկումների շարքում: 1980-1995թթ. ժամանակահատվածում ՄԱՄՀ-ի ու ԱՀԿ-ի ջանքերով իրականացված համընդհանուր պատվաստումները 6 մահացու հիվանդությունների՝ պոլիոմիելիտի, կարկամախտի, կարմրախտի, կապույտ հազի, դիֆթերիայի և տուբերկուլյոզի դեմ 5%-ից հասան 80%-ի՝ տարեկան փրկելով մոտ 2,5 միլիոն երեխաների կյանք:

Համանման նախաձեռնություն է պատվաստումների և իմունիզացիայի համար համընդհանուր դաշնակցությունը, որն ընդլայնում է իմունիզացիոն ծառայությունները՝ ներառելով տարեկան մոտ 1 միլիոն մարդու մահվան պատճառ հանդիսացող հեպատիտ B հիվանդության և հեմոֆիլիայի ինֆլուենզայի B տիպի հիվանդության դեմ, որը ամեն տարի սպանում է 5 տարեկանից փոքր մոտ 900 հազար երեխա: Համընդհանուր դաշնակցությունը, որն իր գործունեությունը սկ-

սեց 1995թ.՝ նախնական ֆոնդեր ունենալով Բիլ և Մելինդա Գեյթս հիմնադրամից, միավորում է ԱՀԿ-ն, ՄԱՄՀ-ն, Համաշխարհային բանկը, ՄԱԿ-ի հիմնադրամը և մասնավոր սեկտորի գործընկերներին:

Գվինեական որդի պատճառով ծագող հիվանդությունը վերացման ճանապարհին է, և բուժման նոր ու ավելի տպավորիչ մեթոդների շնորհիվ վերացվում է նաև բորոտությունը: Գետային կուրությունն աստիճանաբար վերացվեց Արևմտյան Աֆրիկայի 11 երկրներում, նվաճում, որն օգուտ բերեց միլիոնավոր զանգվածների: ԱՀԿ-ն ներկայումս մի նոր նպատակ է հետապնդում՝ էլեֆանտիազիս հիվանդության վերացում՝ որպես հանրային առողջապահական խնդիր:

ԱՀԿ-ի տարափոխիկ հիվանդությունների ոլորտի առաջնայնությունները հետևյալն են, համընդհանուր համագործակցության միջոցով նվազեցնել մալարիայի և տուբերկուլյոզի ազդեցությունը, ուժեղացնել հսկողությունը, վերահսկողությունը և արձագանքը համընդհանուր տարափոխիկ հիվանդությունների հետ առնչվող խնդիրների նկատմամբ, ուժեղացված և ամենօրյա կանխարգելման և հսկողության միջոցով կրճատել հիվանդությունների հետևանքները, ստեղծել նոր գիտելիքներ, միջամտության մեթոդներ, իմպլեմենտացիոն ռազմավարություն և հետազոտական հնարավորություններ զարգացող երկրներում օգտագործելու նպատակով:

ԱՀԿ-ն, պայքարելով վարակիչ հիվանդությունների դեմ, միաժամանակ առանցքային դեր է խաղում հիմնական առողջապահական ծառայությունները կարգավորելու, անհրաժեշտ դեղամիջոցներ առաքելու, քաղաքները ավելի առողջ դարձնելու և առողջ ապրելակերպ ու միջավայր ապահովելու գործում:

**Հետազոտությունների շարժիչ առողջապահության ոլորտում**: Առողջապահության ոլորտում հետազոտություններ կատարելով իր գործընկերների հետ՝ ԱՀԿ-ն, մասնավորապես զարգացող երկրներում, տվյալներ է հավաքում ընթացիկ պայմանների և պահանջների վերաբերյալ: Այս գործունեությունն ընդգրկում է՝ հեռավոր արևադարձային անտառներում համաճարակային հետազոտություններից մինչև գենետիկ հետազոտությունների վերահսկողությունը: ԱՀԿ-ի Արևադարձային հիվանդությունների հետազոտման ծրագիրն ուսումնասիրում է մալարիայի մակաբույծի դիմադրողականությունն ամենատարածված դեղամիջոցների նկատմամբ և խթանում է արևադարձային վարակիչ հիվանդությունների դեմ նոր դեղամիջոցների և ախտորոշումների զարգացումը: Հետազոտությունները նպաստում են նաև համաճարակների ազգային և միջազգային վերահսկողության բարելավմանը և նոր ի հայտ եկող հիվանդությունների դեմ կանխարգելիչ ռազմավարության մշակմանը՝ լաբորատոր հայտնագործությունները համադրելով ամենավերջին, գործնական տեղեկատվությանը:

**Նորմերի հաստատում**: ԱՀԿ-ն միջազգային նորմեր է հաստատում կենսաբանական և դեղագործական նյութերի համար: Նա առաջ է քաշել «հիմնական դեղամիջոցների» հասկացությունը՝ որպես առաջնային բուժօգնության հիմնական մաս:

ԱՀԿ-ն աշխատում է երկրների հետ, որպեսզի ապահով և արդյունավետ դեղամիջոցները հավասարապես մատակարարվեն հնարավորինս ամենացածր

գներով և օգտագործվեն ամենաարդյունավետ կերպով: Այս նպատակով կազմակերպությունը մշակել է մոտ 306 այնպիսի դեղամիջոցների և պատվաստանյութերի «Նմուշային ցուցակ», որոնք հիմնական միջոց են համարվում առողջական խնդիրների ավելի քան 80%-ի կանխման կամ բուժման համար: Գրեթե 160 երկրներ ցուցակը համապատասխանեցրել են իրենց պահանջներին: ԱՀԿ-ն նաև աղքատ և միջին եկամուտ ունեցող երկրներում առաջնային առողջական խնդիրների համար նոր հիմնական դեղամիջոցներ մշակելու գործում և հաստատված հիմնական դեղամիջոցների արտադրությունը շարունակելու համար համագործակցում է անդամ պետությունների, քաղաքացիական հասարակության և դեղագործական արդյունաբերության հետ:

Միջազգային ասպարեզ դուրս գալու ՄԱԿ-ին տրված հնարավորության միջոցով ԱՀԿ-ն վերահսկում է վարակիչ հիվանդությունների վերաբերյալ տեղեկատվության գլոբալ կառավարումը, վարում է առողջության և հիվանդությունների համեմատական վիճակագրությունը և միջազգային նորմեր է հիմնում ապահով սննդի, ինչպես նաև կենսաբանական և դեղագործական արտադրանքի համար: Նա նաև քաղցկեղ առաջացնող աղտոտող նյութերի յուրօրինակ գնահատման մեթոդ է տրամադրել և ստեղծել է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի (HIV/AIDS) գլոբալ վերահսկողության համընդհանուր ընդունելություն գտած ուղեցույց:

## Մարդկային բնակավայրեր

1900թ. աշխարհի 10-ից միայն մեկ բնակիչն էր ապրում քաղաքում: Այսօր մոտ 3 միլիարդ մարդ՝ մարդկության գրեթե կեսը, ապրում է ավաններում և քաղաքներում: Արդեն 23 քաղաքներ, որոնցից 18-ը գտնվում են զարգացող աշխարհում, ունեն 10 միլիոնից ավելի բնակչություն:

Քաղաքային բնակչության արագ աճի հետևանքներից է այն փաստը, որ աշխարհի միլիոնավոր աղքատներ կենտրոնացած են հյուծախորշերում և լքված կառույցներում՝ բնակվելով առողջ ընտանիքի և համայնքի կյանքի համար անհրաժեշտ նվազագույն չափանիշներից էլ վատ պայմաններում:

Այդ հարցերով զբաղվում է **ՄԱԿ-ի Մարդկային բնակավայրերի կենտրոնը (ՀԱԲԻՏԱՏ)**՝ ՄԱԿ-ի համակարգի առաջատար գործակալությունը, որը համակարգում է մարդկային բնակավայրերի ոլորտին առնչվող գործունեությունը:

ՀԱԲԻՏԱՏ-ի գործունեությունը նպատակաուղղված է բոլորի համար բնակարանների ապահովման խրախուսման, քաղաքային կառավարման բարելավման, քաղաքներում չքավորության կրճատման, շրջակա միջավայրի բարելավման, աղետների հետևանքների մեղմացման և հետպատերազմյան վերակառուցման ոլորտներին: Կենտրոնը 86 երկրներում իրականացնում է 240 տեխնիկական ծրագրեր և 70 միլիոն դոլարի տարեկան բյուջե ունի: ՄԱԿ-ի Մարդկային բնակավայրերի երկրորդ համաժողովի ընթացքում (ՀԱԲԻՏԱՏ II, Ստամբուլ, Թուրքիա 1996թ.) համաձայնություն ձեռք բերվեց *ՀԱԲԻՏԱՏ-ի Օրակարգի* վերաբերյալ, ընդունվեց գործողությունների համընդհանուր ծրագիր, որի համաձայն, կառավարությունները պարտավորվեցին բոլոր մարդկանց համապա-

տասխան կացարան տրամադրել և ապահովել քաղաքների կայուն զարգացումը: ՀԱԲԻՏԱՏ-ը Օրակարգի իրականացման գլխավոր կենտրոնն է, որը գնահատական է տալիս դրա իրականացմանն առնչվող առաջընթացին միջազգային, տարածաշրջանային, ազգային և տեղական մակարդակներում և համընդհանուր միտումների ու պայմանների վերահսկողություն է իրականացնում:

2000-2001թթ. ՀԱԲԻՏԱՏ-ը նախաձեռնեց երկու հիմնական գլոբալ արշավներ.

- *Ապահով համայնքների զարգացում:* Համայնքների ապահովությունը քաղաքամ աղքատների աստիճանական ինտեգրման հիմնական պահանջն է: Դա նաև կացարան ունենալու իրավունքի ամենակարևոր բաղադրամասն է: Այդ իրավունքների վրա հիմնված արշավն աջակցություն է ստանում աշխատանքային ծրագրի կողմից, որն օժանդակություն է առաջարկում առանցքային քաղաքականության ոլորտներում, ներառյալ հողի շուկաները և համայնքների բարեփոխումները: Քաղաքային ծառայություններից և ենթակառուցվածքից, մասնավորապես ջրից, կոյուղուց և ջրամատակարարման համակարգից օգտվելու հնարավորությունը ռազմավարության կարևորագույն տարրերից է: ՀԱԲԻՏԱՏ-ը նաև քաղաքականությանն առնչվող խորհրդատվություն ու տեխնիկական աջակցություն է տրամադրում քաղաքային տրանսպորտի քաղաքականության և բնակարանային շինարարության ոլորտներում՝ շեշտը դնելով միկրովարկերի և միկրոձեռնարկությունների վրա:
- *Քաղաքային կառավարում:* Շատ քաղաքներում թույլ կառավարումը և ոչ պատշաճ քաղաքականությունը հանգեցրել շրջակա միջավայրի քայքայմանը, աղքատության ավելացմանը, ցածր տնտեսական աճին և սոցիալական օտարմանը: Քաղաքային կառավարումը կարող է դիտվել կենսական և արդյունավետ արձագանք առկա քաղաքային խնդիրներին ժողովրդավարական ճանապարհով ընտրված և հաշվետու տեղական իշխանությունների շնորհիվ, որոնք սերտորեն համագործակցում են հասարակայնության հետ: Այդ արշավը կենտրոնանում է հասարակայնությանը կառավարման մեջ լայնորեն ներգրավելու խնդիրների վրա: Եթե քաղաքային չքավորությունը պետք է կրճատվի, մարգինալացված խմբերը պետք է մասնակցեն որոշում կայացնելու գործընթացին: Արշավը նպաստում է տեղական կառավարությունների և քաղաքացիական հասարակության փոխգործմանը զարգացմանն առնչվող առաջնայնություններ մշակելու ուղղությամբ:

Երկու արշավների նպատակն է կրճատել քաղաքային աղքատությունն այն քաղաքականության միջոցով, որը շեշտը դնում է հավասարության, կայուն զարգացման ու սոցիալական արդարության սկզբունքների վրա: Հաջողության հասնելու համար շատ կարևոր է գործընկերությունը կառավարությունների, տեղական իշխանությունների, հասարակական կազմակերպությունների և մասնավոր սեկտորի հետ:

Այդ ծրագրերը ներառում են.

- *Լավագույն պրակտիկայի կիրառման և տեղական կառավարման հարցերով ծրագիր*՝ կառավարական փորձառությունների, տեղական իշխանություն-

ների և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համընդհանուր ցանց, որի նպատակն է վեր հանել և տարածել ապրելու միջավայրի բարելավմանն առնչվող լավագույն փորձը և քաղած դասերը՝ կիրառել քաղաքականության զարգացման և կադրային բազայի ամրապնդման ոլորտներում:

- *Քաղաքների դաշնակցություն՝* ՀԱԲԻՏԱՏ-Համաշխարհային բանկ համատեղ նախաձեռնություն, որի նպատակն է բարելավել քաղաքների չքավորների ապրելու պայմանները և քաղաքների սոցիալ-տնտեսական ու շրջակա միջավայրի կենսունակությունը: Ծրագրի երկու բաղադրամասերն են՝ քաղաքների զարգացման ռազմավարություն և ցածր եկամուտ ունեցող բնակավայրերի կատարելագործում:
- *Կայուն քաղաքների ծրագիր՝* ՀԱԲԻՏԱՏ-ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի համատեղ նախաձեռնություն, որը նպաստում է կադրային ապահովմանը քաղաքների շրջակա միջավայրի պլանավորման ու կառավարման գործում՝ օգտագործելով այդ գործընթացում մասնակցության մեթոդները: Ծրագիրն իրականացվում է 40 քաղաքների և 30 գործընկեր կազմակերպությունների հետ:
- *Քաղաքային կառավարման ծրագիր.* հիմնական տեխնիկական համագործակցության ծրագիրն է, որն իրականացվում է ՄԱԶԾ-ի հովանության ներքո և նպատակ ունի ուժեղացնել զարգացող երկրների մոտ 80 քաղաքների չքավորության կրճատման դեմ ուղղված ջանքերը, չքավորների մասնակցությունը կառավարման գործում և քաղաքների շրջակա միջավայրի բարելավումը:
- *Ավելի ապահով քաղաքների ծրագիրն* օգնում է հանցավորության կանխարգելման միջոցների, մեթոդների և ռազմավարության միջոցով հանցավորությունը կրճատելու և դրա հետևանքներին դիմակայելու համար համայնքային լայն շրջանակների խորհրդակցական գործընթաց ծավալել:
- *Ջուրը աֆրիկյան քաղաքներում՝* ՀԱԲԻՏԱՏ-ի -ՄԱՇՄԾ համատեղ նախաձեռնություն, որն օժանդակում է ջրի արդյունավետ կառավարմանը և պաշտպանում է ջրային պաշարները քաղաքային աղտոտումից:
- *Աղետների կառավարման ծրագիրն* օժանդակում է ազգային և տեղական կառավարություններին, ինչպես նաև համայնքներին հետաղետային վերակառուցման և վերականգնման ծրագրեր իրականացնելու գործում:
- *Օրակարգ 21-ի տեղայնացման ծրագիրն* Օրակարգ 21-ի մարդկային բնակավայրերի բաղադրամասերը գործողության է վերածում տեղական մակարդակով՝ նպաստելով համատեղ ձեռնարկությունների ստեղծմանն առնչվող նախաձեռնություններին միջին չափերի ընտրված քաղաքներում:
- *Քաղաքների գլոբալ դիտարանը* հսկում է ՀԱԲԻՏԱՏ-ի Օրակարգի իրականացումը՝ զարգացնելով և կիրառելով քաղաքականությանն ուղղված քաղաքային չափանիշները և փոխանակելով լավագույն փորձը:

## Կրթություն

Վերջին տասնամյակների ընթացքում կրթության ոլորտում մեծ առաջխաղացում է արձանագրվել. երեխաների թիվը դպրոցներում 1990թ. 599 միլիոնից

1998թ. հասել է 681 միլիոնի: Սակայն 113 միլիոնից ավելի երեխաներ՝ հիմնականում զարգացող երկրների աղջիկներ, տարրական կրթություն ստանալու հնարավորություն չունեն, և շատերը, որոնք սկսել են դպրոց հաճախել, ստիպված են թողնել այն չքավորության կամ ընտանիքի ու սոցիալական դժվարությունների պատճառով: Չնայած գրագիտությունն ապահովելուն ուղղված փիթլասրի ջանքերին՝ առնվազն 875 միլիոն չափահասներ մնում են անգրագետ. սա ճիշտ այն թիվն է, որ արձանագրվել է 10 տարի առաջ:

Հետազոտությունները ցույց են տվել կրթություն ստանալու հնարավորության և բարելավված սոցիալական ցուցանիշների սերտ կապը: Դպրոց հաճախելը հատուկ՝ գործուն ազդեցություն ունի կանանց համար: Օրինակ՝ այն կինը, որը կրթված է, բնականաբար ավելի առողջ կլինի, ավելի քիչ երեխաներ կունենա և ավելի շատ հնարավորություններ՝ ավելացնելու տնային տնտեսության եկամուտները: Իրենց հերթին այդ կնոջ երեխաները մահացության ավելի ցածր ցուցանիշներ կունենան, ավելի լավ սնունդ կստանան և ընդհանուր առմամբ ավելի առողջ կլինեն: Ուստի աղջիկներն ու կանայք Միավորված ազգերի շատ գործընկերությունների կրթական ծրագրերի ուշադրության կենտրոնում են:

Միավորված ազգերի համակարգի շատ ուղղություններ ներգրավված են բազմազան կրթական և վերապատրաստման ծրագրերի ֆինանսավորման և զարգացման գործընթացում: Խոսքը ավանդական դպրոցական և մարդկային պաշարների զարգացմանն ուղղված մասնագիտական կրթության մասին է, ինչպիսիք են պետական կառավարումը, գյուղատնտեսական և առողջապահական ծառայությունները, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, թմրանյութերի չարաշահման, մարդու իրավունքների, ընտանիքի պլանավորման և շատ այլ խնդիրների մասին հասարակական իրազեկության արշավները: **ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը**, օրինակ, իր տարեկան ծրագրերի ծախսերի 14%-ը տրամադրում է կրթությանը՝ հատուկ ուշադրություն դարձնելով տարրական կրթության և աղջիկներին կրթություն տալու հարցերին:

Կրթության ոլորտի առաջատար կազմակերպությունը **ՄԱԿ-ի Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությունն է՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ն**: Համագործակցելով այլ գործընկերների հետ՝ նա աշխատում է ապահովել, որպեսզի բոլոր երեխաները դպրոց հաճախեն, իսկ վերապատրաստում անցած ուսուցիչների բարձրորակ կրթության հնարավորություններ ընձեռվեն:

ՅՈՒՆԵՍԿՕ-ն առանձնել է Միավորված ազգերի կազմակերպության առանձնահատուկ միջգործակալական արշավի իրականացման քարտուղարության դերը, որի նպատակն է մինչև 2015թ. ապահովել համընդհանուր, բարձրորակ տարրական կրթություն ստանալու հնարավորություն՝ Համաշխարհային կրթության ֆորումի (2000թ. Դակար, Սենեգալ) ընթացքում 181 պետությունների կողմից ընդունված *Գործողությունների շրջանակի* հիման վրա:

Այդ նպատակը համաշխարհային ղեկավարների կողմից 2000թ. սեպտեմբերին վերահաստատվեց Հազարամյակի հռչակագրում:

Ֆորումի ընթացքում կառավարությունները պարտավորվեցին հասնել բոլորի համար որակյալ կրթության՝ հատուկ շեշտ դնելով աղջիկների, ինչպես նաև այլ

խմբերի, օրինակ, աշխատավոր և հակամարտություններից տուժած երեխաների վրա: Նվիրատու երկրները և հաստատությունները պարտավորվեցին, որպեսզի տարրական կրթություն ստանալու խնդրում որևէ ազգ միջոցների բացակայության հետևանքով արգելք չունենա: Ֆորումը հիմնվեց կրթության պատմության մեջ ամենամեծ, ամենաամբողջական և փաստագրական տեսանկյունից խստապահանջ ուսումնասիրությունների տվյալների վրա՝ ընդգրկելով «Կրթություն բոլորի համար» գործընթացի գնահատման և տարածաշրջանային բարձր մակարդակի վեց համաժողովները, որոնք տեղի ունեցան 1999 և 2000 թվականներին:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի նորարարական միջառարկայական նախագիծը՝ «Կրթություն կայուն ապագայի համար», օգնում է անդամ երկրներին բարելավելու և վերակողմնորոշելու իրենց ազգային կրթությունն ու վերապատրաստման գործունեությունը, որը վերաբերում է շրջակա միջավայրի, բնակչության և զարգացման խնդիրներին՝ ներառելով առողջապահական կրթությունն ու թմրանյութերի օգտագործման և ՁԻԱՀ-ի կանխարգելումը:

ՅՈՒՆԵՍԿՕ-ն իր ծրագրի շրջանակներում, որը խրախուսում է կրթությունը բոլորի համար, խթանում է ազգային ծրագրերը՝ ուղղված կրթական համակարգերը բարձրացնելուն, այլընտրանքային ռազմավարություններ զարգացնելուն, բոլորի համար ամբողջ կյանքի ընթացքում կրթությունը մատչելի դարձնելուն:

Ծրագիրը փորձում է նաև ընդլայնել տարրական կրթության մատչելիությունը, բարելավել դրա որակը, վերափոխել բարձրագույն կրթության համակարգն ամբողջ աշխարհում և խրախուսել չափահասների կրթությունն ու անընդհատ կրթությունը:

162 երկրների մոտ 5700 դպրոցներ ներգրավված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ասոցիացված դպրոցների նախագծում: Դա միջազգային ցանց է, որը համաշխարհային համայնքում միասին ապրելու նպատակով ուղիներ և միջոցներ է որոնում կրթության դերը բարձրացնելու համար: ՅՈՒՆԵՍԿՕ-ի մոտ 5 հազար ակումբներ ավելի քան 120 երկրներում, որոնք հիմնականում բաղկացած են ուսուցիչներից և աշակերտներից, բազմաբնույթ կրթական և մշակութային գործունեություն են ծավալում:

## Հետազոտություններ և վերապատրաստում

Ակադեմիական աշխատանքը՝ հետազոտությունների և վերապատրաստման ձևով, իրականացվում է ՄԱԿ-ի մի քանի մասնագիտացված գործակալությունների կողմից: Աշխատանքի նպատակը մեր առօրյա կյանքում հանդիպող համընդհանուր խնդիրների ըմբռնման մակարդակի բարձրացումն է, ինչպես նաև մարդկային ռեսուրսների զարգացումը, որոնք անհրաժեշտ են տնտեսական և սոցիալական զարգացման տեխնիկական կողմերի համար:

**Միավորված ազգերի կազմակերպության համալսարանի**՝ ՄԱՀ առաքելությունը հետևյալն է. հետազոտությունների և կադրերի պատրաստման միջոցով նպաստել այն ջանքերին, որոնք ուղղված են լուծելու ՄԱԿ-ի և նրա անդամ երկրների ու ժողովուրդների դեմ ծառացած գլոբալ հրատապ խնդիրները: ՄԱՀ-ը

միջազգային գիտնականների միություն է և կամուրջ ՄԱԿ-ի և միջազգային ակադեմիական հանրության միջև, ՄԱԿ-ի համակարգի մտքի շտեմարան, ինչպես նաև կարողային հիմք ստեղծող, մասնավորապես զարգացող երկրներում: ՄԱՀ-ը ամբողջ աշխարհում համագործակցում է ՄԱԿ-ի մոտ 30 կազմակերպությունների և 100 գիտահետազոտական ինստիտուտների հետ:

ՄԱՀ-ի ակադեմիական աշխատանքը ներառում է ՄԱԿ-ի մտահոգությունների առնչվող հատուկ խնդիրներ: Դրա ներկայիս թեմատիկ ոլորտներն հետևյալն են. խաղաղություն, կառավարում, զարգացում, շրջակա միջավայր, գիտություն, տեխնոլոգիա և հասարակություն: ՄԱՀ-ի ակադեմիական գործունեությունն իրականացվում է Տոկիոյում՝ **ՄԱՀ-ի կենտրոնում** և աշխարհի տարբեր մասերում գտնվող հետազոտական և վերապատրաստման կենտրոններում: Այդ համակարգի մեջ մտնում են հետևյալ կառույցները.

- **ՄԱՀ-ի Համաշխարհային ինստիտուտ զարգացման էկոնոմիկայի հետազոտման հարցերով** (UNU/WIDER), Հելսինկի (Ֆինլանդիա), որը հիմնադրվել է 1985թ. և հիմնականում հետազոտում է զարգացման տնտեսագիտությունը,
- **ՄԱՀ-ի Նոր տեխնոլոգիաների ինստիտուտ** (UNU/INTECH), Մաաստրիխտ (Նիդեռլանդներ, 1990թ.), որն ուսումնասիրում է նոր տեխնոլոգիաների տնտեսական և սոցիալական ազդեցության հարցերը,
- **ՄԱՀ-ի Ինստիտուտ Աֆրիկայում բնական ռեսուրսների հարցերով** (UNU/INRA), Աքրա (Գանա, 1990թ.), որը կենտրոնանում է բնական ռեսուրսների կառավարման հարցերի վրա,
- **ՄԱՀ-ի Միջազգային ինստիտուտ համակարգչային տեխնոլոգիաների հարցերով** (UNU/IIST), Մակաո (Չինաստան, 1992թ.), որը կենտրոնանում է համակարգչային ծրագրային տեխնոլոգիաների զարգացման հարցերի վրա,
- **ՄԱՀ-ի Ինստիտուտ առաջադեմ հետազոտությունների հարցերով** (UNU/IAS), Տոկիո (Ճապոնիա, 1995թ.), որն աշխատում է էկո-վերակառուցման ուղղությամբ կայուն զարգացման համատեքստում,
- **ՄԱՀ-ի Ծրագիր բիոտեխնոլոգիայի հարցերով Լատինական Ամերիկայի և Կարիբյան ավազանի երկրների համար** (UNU/BIOLAC), Կարակաս (Վենեսուելա, 1988թ.), որը կենտրոնանում է բիոտեխնոլոգիայի և հասարակության հարցերի վրա,
- **ՄԱՀ-ի Ղեկավարման *միջազգային* ակադեմիա** (UNU/ILA), Ամման (Հորդանան, 1995թ.), որն զբաղվում է ղեկավարման զարգացման հարցերով,
- **ՄԱՀ-ի *Միջազգային* ցանց ջրի, շրջակա միջավայրի և առողջապահության հարցերով** (UNU/INWEH), Համիլթոն, Օնթարիո, (Կանադա,1996թ.), որը զբաղվում է ջրի, շրջակա միջավայրի և առողջապահության հարցերով,
- **ՄԱՀ-ի Պարենի և սննդի ծրագիր մարդկային և սոցիալական զարգացման համար**, Իթակա, Նյու Յորք, (ԱՄՆ,1975թ.), որը կենտրոնանում է պարենի և սննդի մարդկային բաղադրիչի ամրապնդման հարցերի վրա,
- **ՄԱՀ-ի Գեոթերմալ հարցերով վերապատրաստման ծրագիր** (UNU/GTP), Ռեյկյավիկ (Իսլանդիա, 1975թ.), որն աշխատում է գեոթերմալ հետազոտությունների անցկացման, բացահայտման և զարգացման ուղղություններով,
- **ՄԱՀ-ի Ձկնորսության հետ կապված վերապատրաստման ծրագիր**

**(UNU/FTP)**, Ռեյկյավիկ (Իսլանդիա, 1998թ.), որը հետազոտություններ և մշակումներ է իրականացնում ձկնորսության ոլորտում,

- **Հակամարտությունների կարգավորման և էթնիկական հարցերի վերաբերյալ նախաձեռնություն (INCORE)**, Ալստր, Հյուսիսային Իռլանդիա, (Միացյալ Թագավորություն, 1993թ.), որն զբաղվում է էթնիկական, քաղաքական և կրոնական հակամարտությունների հարցերով.
- **ՄԱՀ-ի Կառավարման ծրագիր (UNU/GP)**, Բարսելոնա (Իսպանիա, 1992թ.), որը համագործակցում է հետազոտական կենտրոնների կոնսորցիումի հետ կառավարման ոլորտում:

**Միավորված ազգերի կազմակերպության ուսուցման և գիտահետազոտական ինստիտուտը** ( ՄԱՈւԳԻ) աշխատում է վերապատրաստման և հետազոտությունների միջոցով բարձրացնել Միավորված ազգերի արդյունավետությունը խաղաղության, անվտանգության և զարգացման ոլորտներում: Ամեն տարի ՄԱՈւԳԻ-ին մշակում և կազմակերպում է 120 վերապատրաստման դասընթացների ծրագրեր ՄԱԿ-ի անդամ երկրների մոտ 4 հազար մասնակիցների, անհատների և հաստատությունների համար, ինչպես նաև ՄԱԿ-ում աշխատող տարբեր երկրների դիվանագետների համար: Ընթացիկ ծրագրերն ընդգրկում են միջազգային գործերի կառավարումը, շրջակա միջավայրի կառավարմանն առնչվող դասընթացներ, ինչպես նաև տնտեսական և ֆինանսական կառավարմանն ու խաղաղապահ ղեկավարմանը վերաբերող հարցեր:

ՄԱԿ-ի համակարգի ղեկավարող անձանց և բարձրաստիճան պաշտոնյաների վերապատրաստման դասընթացները կազմակերպվում են **ՄԱԿ-ի Անձնակազմի քոլեջի (ՄԱԱՔ)** կողմից: Որպես համակարգի ներսում վերապատրաստում և ուսուցում կազմակերպող կառույց՝ Անձնակազմի քոլեջը վերապատրաստման բազմաբնույթ դասընթացներ է վարում համակարգի շրջանակներում, նպաստում է լավագույն փորձի և գործելակերպի փոխանակմանը և ամրապնդում է համագործակցությունը ՄԱԿ-ի այն պաշտոնյաների միջև, որոնք աշխատում են Գլխավոր քարտուղարի նախաձեռնած բարեփոխումների առանցքային ոլորտներում: Դրանք են խաղաղապահությունը, ՄԱԿ-ի գործունեության, համահարթեցման և կազմակերպչական զարգացումը: Ընդհանուր նպատակն է ամրապնդել շաղկապված ու արդյունավետ կառավարման մշակույթը ՄԱԿ-ի համակարգի շրջանակներում: Քոլեջը գտնվում է Թուրինում՝ Աշխատանքի միջազգային կազմակերպության Վերապատրաստման միջազգային կենտրոնի տարածքում: Այդ համագործակցությունը նպաստում է դասընթացների առնչվող պաշարների և փորձի փոխանակմանը:

**ՄԱԿ-ի սոցիալական զարգացման գիտահետազոտական ինստիտուտը** ներգրավված է ժամանակակից խնդիրների սոցիալական ծավալների հետազոտական աշխատանքում, որոնք ազդեցություն են ունենում զարգացման վրա: Ազգային հետազոտական կենտրոնների ընդլայնված ցանցի միջոցով ինստիտուտը զարգացման քաղաքականության ձևավորման առնչությամբ համագործակցում է կառավարությունների, զարգացման գործակալությունների, գիտնականների հետ: Հետազոտման ընթացիկ թեմաները ներառում են սոցիալական

քաղաքականությունն ու զարգացումը, ժողովրդավարությունը. կառավարումն ու մարդու իրավունքները, քաղաքացիական հասարակությունն ու սոցիալական շարժումները, տեխնոլոգիան և հասարակությունը:

## Բնակչություն և զարգացում

1960-ականներին աշխարհի բնակչության արագ աճը դարձավ ՄԱԿ-ի լուրջ անհանգստության առարկա: Աշխարհի բնակչությունը 1960-1999թթ. երկու անգամ ավելացավ՝ 1999թ. հոկտեմբերին անցնելով 6 միլիարդի սահմանը: Չնայած 1969-1999թթ. ժամանակահատվածում աճի տեմպերը 2 տոկոսից նվազեցին 1,3 տոկոսի, ամեն տարի բնակչության ընդհանուր քանակը շարունակում է ավելանալ 77 միլիոնով: Աճի 95%-ն ընկնում է զարգացող երկրներին: ՄԱԿ-ի մոտավոր հաշվարկներով, աշխարհի բնակչության թիվը 2050թ. կկազմի 7,9-ից 10,9 միլիարդ, ավելի ճշգրիտ հաշվարկներով՝ 9,3 միլիարդ, ինչը կախված կլինի ընտանիքի պլանավորման ծրագրերի արդյունավետությունից:

Տասնամյակներ շարունակ Միավորված ազգերի կազմակերպությունն ակտիվ գործունեություն է ծավալել զարգացող շատ երկրներում: Կազմակերպության տարբեր կառույցներ համատեղ աշխատել են վիճակագրական ազգային գրասենյակներ հիմնադրելու, մարդահամարներ անցկացնելու, նախագծեր մշակելու և հուսալի տվյալներ ու տեղեկություններ տարածելու ուղղությամբ: ՄԱԿ-ը քանակական և մեթոդոլոգիական աշխատանքի, մասնավորապես բնակչության աճի և փոփոխության վերաբերյալ ծանրակշիռ հաշվարկների ու կանխատեսումների առաջամարտիկներից է եղել: Դա հնարավորություն ստեղծեց զգալիորեն բարձրացնելու երկրների կարողությունը՝ իրագործելու նախնական պլանավորում, բնակչությանն առնչվող քաղաքականություն, ներառելու զարգացման ծրագրավորում և ընդունելու ճիշտ որոշումներ տնտեսական ու սոցիալական ոլորտներում:

Բնակչության արագ աճը ծանր անդրադարձավ երկրագնդի պաշարների ու շրջակա միջավայրի վրա՝ հաճախակի առաջ անցնելով զարգացմանն ուղղված գործադրված ջանքերից: ՄԱԿ-ը տարբեր եղանակներով հետազոտեց բնակչության և զարգացման հարաբերակցությունը՝ հատուկ շեշտադրելով կանանց իրավունքներին և վիճակին վերաբերող առաջխաղացումը, որը դիտվում է որպես սոցիալական և տնտեսական առաջընթացի առանցք:

**Բնակչության և զարգացման հանձնաժողովը** կազմված է 47 անդամ երկրներից և պատասխանատու է **Տնտսոցխորհի** ուշադրությանը ներկայացնելու բնակչության փոփոխությունների և տնտեսական ու սոցիալական պայմանների վրա դրանց ազդեցության ուսումնասիրությունը և դրա հիման վրա խորհրդատվությունը: Հանձնաժողովի հիմնական պատասխանատվությունը 1994թ. Բնակչության և զարգացման հարցերով միջազգային համաժողովի *Գործողությունների ծրագրի* իրականացմանն առնչվող գործընթացը վերահսկելն է:

**Միավորված ազգերի կազմակերպության Տնտեսական և սոցիալական հարցերի վարչության** Բնակչության բաժանմունքն իրենից հանձնաժողովի քարտուղարությունն է ներկայացնում: Այն նաև միջազգային հանրությանը բնակչու-

թյան և զարգացման վերաբերյալ ժամանակակից և գիտականորեն օբյեկտիվ տեղեկատվություն է տրամադրում, նախաձեռնում է հետազոտություններ բնակչության մակարդակների, միտումների, քանակի և կանխատեսումների, ինչպես նաև բնակչության քաղաքականության և բնակչության ու զարգացման կապի վերաբերյալ: Բաժինը պատրաստում է հիմնական տվյալների բանկը, ներառյալ համաշխարհային բնակչության կանխատեսումները 2150թ. համար, ինչպես նաև *Ազգաբնակչության քաղաքականության գրքույկ վերազննումն ու ցուցակագրումը (GRIPP): Այն նաև համակարգում է բնակչության տեղեկատվական ցանցը (POPIN)*, որը նպաստում է ինտերնետի օգտագործմանը և նպատակ ունի բնակչությանն առնչվող գլոբալ տեղեկատվության փոխանակման հնարավորություններ ստեղծել:

**ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամը (ՄԱԲՀ, UNFPA)**, որը ղեկավարում է կազմակերպության համակարգի ազգաբնակչության հարցերով օպերատիվ գործունեությունը, օգնում է զարգացող, ինչպես նաև անցումային տնտեսությամբ երկրներին լուծումներ գտնել բնակչության խնդիրների վերաբերյալ: Այն օգնում է պետություններին բարելավել վերարտադրողական առողջապահական և ընտանիքի պլանավորման ծառայությունները անհատական ընտրության սկզբունքի հիման վրա և ձևավորել ազգաբնակչությանը վերաբերող քաղաքականություն՝ ի նպաստ այն ջանքերի, որոնք գործադրվում են կայուն զարգացման նպատակով: Հիմնադրամը նպաստում է նաև ազգաբնակչության խնդիրների և դրանց լուծման եղանակին վերաբերող իրազեկությանը և յուրաքանչյուր երկրի կարիքներին համապատասխանող լավագույն եղանակի միջոցով օժանդակում է կառավարություններին ազգաբնակչության խնդիրները լուծելու գործում: ՄԱԲՀ-ն ազգաբնակչության օժանդակության միջազգայնորեն ֆինանսավորվող ամենամեծ աղբյուրն է և իրականացնում է ազգաբնակչության համընդհանուր օժանդակության 1/4 մասը:

Նա հիմնականում իր աջակցությունը վայելող շատ նախագծեր և ծրագրեր ֆինանսավորող կազմակերպություն է, որոնք իրականացվում են կառավարությունների, ՄԱԿ-ի գործակալությունների և հասարակական կազմակերպությունների կողմից:

Նրա առանցքային ծրագրային ոլորտները հետևյալն են.

- *Կանանց վերարտադրողական առողջությունը*, ներառյալ ընտանիքի պլանավորումը, սեռական առողջությունը և անվտանգ մայրությունը, օգնում է մարդկանց հասնելու ընտանիքի ցանկալի չափին, վայելելու ավելի մեծ ազատություն իրենց կյանքը պլանավորելու խնդրում, փրկում է կյանքեր, աջակցում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարին և նպաստում է ազգաբնակչության ավելի դանդաղ և ավելի հավասարակշռված աճին:
- *Բնակչությունը և զարգացման ռազմավարությունը*, որը օժանդակում է երկրներին բնակչության խնդիրների վերաբերյալ քաղաքականություն, մարդկանց կյանքի որակը բարելավելու ռազմավարություն մշակելու գործում, ինչպես նաև օգնում է նրանց զարգացնել սեփական կարողային հնարավորությունները բնակչության ծրագրերի ոլորտում:
- *Իրավական պաշտպանությունը*, որի նպատակն է նպաստել կանանց հավա-

սարությանը, կատարել քաղաքական պարտավորությունները և ավելացնել իրազեկություն ու ռեսուրսների մակարդակը ազգաբնակչության և զարգացման համար:

Այլ հատուկ ծրագրեր ընդգրկում են երիտասարդներին, ծերերին, ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հսկողությունն ու կանխարգելումը, բնակչությունն ու շրջակա միջավայրը: ՄԱԲՀ-ն որևէ աջակցություն ցույց չի տալիս արհեստական վիժեցմանն առնչվող ծառայություններին: Ավելին, փորձում է կանխել արհեստական վիժեցումները՝ նպաստելով ընտանիքի պլանավորման մատչելիության բարձրացմանը:

ՄԱԲՀ-ն 1994թ. Կահիրեում Բնակչության և զարգացման միջազգային համաժողովի ընթացքում ընդունված և 1999թ. Գլխավոր ասամբլեայի հատուկ նստաշրջանի կողմից վերանայված Գործողությունների ծրագրի առաջխաղացումն ապահովելու ոլորտում ՄԱԿ-ի առաջատար կազմակերպությունն է: Ծրագիրն ավելի շատ ուղղված է անհատ կանանց և տղամարդկանց կարիքների բավարարմանը, քան ժողովրդագրական նպատակներին: Այդ մոտեցման առանցքը կանանց ավելի շատ լիազորություններ տալն է՝ նրանց ընտրության ավելի շատ տարբերակներ տրամադրելով կրթության, առողջապահական ծառայությունների և զբաղվածության ընդլայնված հնարավորությունների միջոցով: Հիմնադրամն առաջնային է համարում նաև պատանիների և աղջիկների վերարտադրողական առողջության հարցը:

Ծրագիրը նպատակ ունի կանխել դեռահաս աղջիկների հղիությունը, կրճատել արհեստական վիժեցումների հավանականության դեպքերը, կանխել ՁԻԱՀ-ը և սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները, բարելավել վերարտադրողական առողջության ծառայությունների և տեղեկատվության ստացման մատչելիությունը: Երեխաների թիվը որոշելու ծնողների իրավասությունը վերարտադրողական առողջության անհրաժեշտ բաղադրամասն է: Չնայած վերջին տարիներին ընտանիք պլանավորող զույգերի քանակը կտրուկ աճել է, ընտանիքի պլանավորման շատ միջոցներ մատչելի չեն առնվազն 305 միլիոն ընտանիքների համար:

Հաշվարկները ցույց են տվել, որ ներկայումս ևս 120 միլիոն կանայք կօգտագործեին ընտանիքի ժամանակակից պլանավորման միջոցը, եթե լինեին մատչելի ծառայություններ և պատշաճ խորհրդատվություններ, եթե ամուսինները, գերդաստանները ու համայնքները ավելի աջակից լինեին այդ գործին: ՄԱԲՀ-ն մարդկանց՝ ընտանիքի պլանավորման կարիքները բավարարելու նպատակով աշխատում է կառավարությունների, մասնավոր սեկտորի և ոչ կառավարական կազմակերպությունների հետ:

## Կանանց առաջխաղացումը

Աղքատության վերացմանն ուղղված շարունակվող ջանքերը թերագնահատեցին այն կարևոր դերը, որը կանայք խաղում են սոցիալական և տնտեսական զարգացման ոլորտում: Զարգացող աշխարհում, օրինակ, կանայք իրականաց-

նում են պարենի արտադրանքի, վերամշակման և մարկետինգի 50-80%-ը, և ղեկավարում են փոքր ձեռնարկությունների 70%-ը: ՄԱԿ-ը աղքատության վերացմանն ու զարգացման օժանդակությանն ուղղված գործունեության շնորհիվ աջակցում է կանանց ավելի լայն լիազորություններ տալու գործընթացին և նրանց մարդու իրավունքների պաշտպանությանը: Գենդերային հավասարության և կանանց առաջխաղացման խնդիրները փոխկապակցված են և առկա են ՄԱԿ-ի գործունեության բոլոր ոլորտներում:

Տնտեսսոցխորհրդի շրջանակներում գործող **Կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողովը** վերլուծում է ամբողջ աշխարհում կանանց հավասարության հետ կապված առաջխաղացումը և առաջարկություններ է ներկայացնում քաղաքական, տնտեսական և սոցիալական ոլորտներում կանանց իրավունքները խթանելու համար: 45 անդամից բաղկացած հանձնաժողովը նախապատրաստել է կանանց հարցերին նվիրված 4 համաշխարհային համաժողով, ներառյալ կանանց հարցերով 4-րդ համաշխարհային համաժողովը (Պեկին, 1995թ.), և վերահսկում է *Գործողությունների ծրագրի* իրականացման գործընթացը:

**Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն**, որին աջակցում է Տնտեսական և սոցիալական հարցերով վարչության **կանանց առաջխաղացման հարցերով բաժանմունքը՝ ԿԱԲ-ը (DAW)**, վերահսկում է *ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի* դրույթների իրականացումը: 23 փորձագետներից բաղկացած կոմիտեն նպաստում է կանանց տնտեսական և սոցիալական, քաղաքական և քաղաքացիական իրավունքների ավելի լավ ընբռնմանն ու այդ իրավունքների պաշտպանմանն ուղղված միջոցառումներին:

Ի լրումն ԿԱԲ-ի կողմից արված աշխատանքին՝ ուղղված կանանց հարցերի գլոբալ օրակարգի առաջխաղացմանն ու գենդերային զարգացման խթանելուն ՄԱԿ-ի ամբողջ համակարգում, ՄԱԿ-ի ընտանիքի բոլոր կազմակերպությունները իրենց քաղաքականության մեջ և շատ ծրագրերում շոշափում են կանանց և գենդերային հարցերը: Կանանց հարցերը կենտրոնական տեղ են զբաղեցնում երեխաների պաշտպանությանն ուղղված ՄԱՄՀ-ի գործունեությունում: ՄԱԲՀ-ի լիազորությունների մեծ մասը կապված է կանանց առողջության և վերարտադրողական իրավունքների հետ: ՄԱԶԾ-ն, ՅՈՒՆԵՍԿՕ-ն, ՊՀԾ-ն, ԱՄԿ-ն և այլ կազմակերպություններ ակտիվորեն գենդերային ծրագրեր և նպատակներ են իրականացնում:

ԿԱԲ-ի շրջանակներում գործող **Գլխավոր քարտուղարի՝ գենդերային և կանանց առաջխաղացման հարցերով հատուկ խորհրդականն** առանցքային դեր է խաղում ՄԱԿ-ի համակարգում կանանց հարցերի վրա հատուկ ուշադրություն հրավիրելու և գենդերային հարցերին առնչվող քաղաքականությունը տանելու գործում: Հատուկ խորհրդականը նաև Համակարգող կոմիտեի կանանց և գենդերային հավասարության հարցերի միջգործակալական հանձնաժողովի նախագահն է: Հանձնաժողովը հավաքվում է տարեկան երկու անգամ:

Երկու այլ կառույցներ ևս հատուկ ձևով կենտրոնանում են կանանց խնդիրների վրա:

**Միավորված ազգերի Կանանց զարգացման Հիմնադրամը (ՄԱԿԶՀ),** որը կամավոր հիմնադրամ է, ֆինանսական աջակցություն և տեխնիկական օժանդակություն է ցույց տալիս կանանց իրավունքների, նրանց տնտեսական և քաղաքական լիազորությունների բարձրացման և գենդերային հավասարության ռազմավարական ծրագրերի խրախուսման նպատակով: Հիմնադրամը հիմնականում աշխատում է երեք ուղղություններով.

- Կանանց՝ որպես ձեռներեցների և արտադրողների, տնտեսական դերի ամրապնդում,
- Կանանց մասնակցության բարձրացում կառավարման, ղեկավարման և որոշումներ կայացնելու ոլորտներում, և
- Կանանց մարդու իրավունքների խախտում՝ զարգացումն ավելի հավասարաչափ դարձնելու նպատակով:

ՄԱԿԶՀ-ն ավելի քան հարյուր երկրներում նպաստում է կանանց և նրանց ընտանիքների կյանքի որակի բարելավմանը: Աջակցում է կանանց համար շահավետ նորարարական ծրագրերի իրականացմանը, կանանց նախաձեռնություններին. տեխնիկական և ֆինանսական տեղական աջակցություն է ցույց տալիս և տեղեկատվություն է տարածում կանանց խմբերի լավագույն փորձի, բազմաբնույթ ծրագրերի հաջողություններից կամ ձախողումներից քաղած դասերի մասին:

Օրինակ՝ ՄԱԿԶՀ-ի միկրովարկային համընդհանուր արշավը, որը նախնական գումար է տրամադրում փոքր բիզնես սկսելու համար, իր ներդրումը ունեցավ մասնավոր սեկտորի, ոչ կառավարական կազմակերպությունների և կառավարությունների հետ համագործակցության գործում: Այդ միկրովարկը աշխարհի ամենաչքավոր կանանց համար հասավ 10,3 միլիոն դոլարի:

**Կանանց առաջխաղացման միջազգային ուսումնական և գիտահետազոտական ինստիտուտը (ԿԱՄՈւԳԻ)** վերապատրաստման և գիտահետազոտական աշխատանքներ է իրականացնում՝ օգտագործելով նոր տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաներ հետևյալ նպատակով. նպաստել կանանց առաջխաղացմանը և ապահովել նրանց տեղեկատվության ստանալու հնարավորությունը 21-րդ դարում:

Ինստիտուտի լիազորությունը ընդլայնվեց 1999թ., և Գլխավոր ասամբլեան հաստատեց տեղեկատվական գենդերային իրազեկության և ինտերնետային ցանցի համակարգի հիմնադրումը (**GAINS**)՝ որպես ինստիտուտի նոր աշխատանքային մեթոդ: Այդ համակարգի միջոցով **ԿԱՄՈւԳԻ**-ն կօգտագործի նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաներ հետևյալ նպատակներով.

- Գենդերային հավասարության հասնելու մասնակցության առանցքային խնդիրները բարձրացնելու նպատակով էլեկտրոնային եղանակով իրականացնել համատեղ գիտահետազոտական աշխատանքներ.
- Բոլոր մակարդակներում կանանց կյանքը բարելավելու նպատակով քաղաքականություն մշակելու համար գենդերային հարցերին վերաբերող գիտելիքներ և տեղեկատվություն վերարտադրել, ղեկավարել և տարածել:
- Էլեկտրոնային տվյալների բանկի միջոցով միավորել, համակարգել և մատչելի դարձնել գենդերային հարցերին վերաբերող գիտելիքները, տեղեկատ-

վությունը, վերապատրաստման եղանակներն ու մեթոդները:

- Կանանց իրավազորումն ընդլայնելու համար էլեկտրոնային վերապատրաստման և կայքային բազայի ստեղծման միջոցներով գործնական մեխանիզմ տրամադրել՝ օգտագործելով կրթության և հեռակա ինտերնետային վերապատրաստման հնարավորությունները:

Գործելով որպես «Գենդերային հարցերով վիրտուալ պահեստարանոց»՝ ինստիտուտը ստեղծում է միջազգային խորհրդատվության, երկխոսության և ինտերնետային ցանցերի մեխանիզմ, մտքի շտեմարան ու հիմք փորձագիտական ու դասախոսների ցանցի համար, որոնք նպատակ ունեն համատեղ աշխատանքով հասնելու գենդերային իրավահավասարության, տարածաշրջանային կենտրոնների և տեղական ներկայացուցիչների միջազգային ցանց, որոնք ծառայում են որպես գլոբալից տեղականի արդյունավետ ապակենտրոնացման կարիքներին արձագանքող գործիքներ, ինչպես նաև միջազգային ցանց տեղեկատվական տեխնոլոգիաների փորձագետների համար՝ օժանդակելով կանանց մասնակցությունը տեղեկատվական հասարակությանը:

## Օգնություն երեխաներին

Քանի որ ՄԱԿ-ը ընտանիքը համարում է հասարակության առաջնային միավոր, մշտապես հատուկ շեշտ է դնում երեխաների ու կանանց վրա: Չնայած ընտանիքների վիճակը բարելավելու գործում ունեցած մեծ առաջընթացին՝ ամեն տարի զարգացող երկրներում 11 միլիոն երեխաներ մահանում են կանխելի կամ հեշտ բուժվող հիվանդություններից: Միլիոնավոր երեխաների առողջ զարգացումը խաթարվում է աղքատության, կրթության բացակայության, խտրականության, պատերազմի պատճառած վնասվածքների, շահագործման և դաժան վերաբերմունքի պատճառով:

1946թ. սկսած՝ **Միավորված ազգերի կազմակերպության Մանկական հիմնադրամը (ՄԱՄՀ)** երեխաների իրավունքները պաշտպանելու համար ավելի քան 160 երկրներում, տարածքներում և շրջաններում աշխատում է կառավարությունների, տեղական համայնքների և այլ գործընկերների հետ՝ ապահովելով նրանց բուժօգնությամբ, սննդով, կրթությամբ, մաքուր ջրով և բնակարանային սանիտարական պայմաններով: Շեշտը դրվում է ցածրարժեք, համայնքների վրա հիմնված ծրագրերի վրա՝ խրախուսելով մարդկանց ակտիվ մասնակցությունը:

Որպես ՄԱԿ-ի միակ կազմակերպություն, որը բացառապես զբաղվում է երեխաների խնդիրներով, ՄԱՄՀ-ն հանդես է գալիս նրանց անունից և աջակցում է *Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի* լիարժեք իրականացմանը: ՄԱՄՀ-ի համար որպես ուղեցույց է ծառայում նաև *Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան:*

ՄԱՄՀ-ն համագործակցում է կառավարությունների, ՄԱԿ-ի այլ գործակալությունների և միջազգային կազմակերպությունների հետ, որպեսզի երեխաները հնարավորինս լավագույն կերպով մտնեն կյանք, և ապահովվի նրանց իրավունքների լիարժեք իրականացումը: ՄԱՄՀ-ի ծրագրերը ընդգրկում

են առողջապահության, կրթության, սննդի և կրծքով սնուցման, ջրի և սանիտարական պայմանների ոլորտները: Այն նաև համագործակցում է իր ծրագրերի գործընկերների հետ օգնելու համար երիտասարդներին՝ ձեռք բերելու կենսափորձ և ազդելու իրենց կյանքին վերաբերող դեպքերի վրա:

Միլիոնավոր կանայք և երեխաներ պատերազմի, բռնության և շահագործման զոհեր են, և 250 միլիոն երեխաներ գոյատևելու համար աշխատում են վնասակար պայմաններում: ՄԱՄՀ-ն ֆինանսավորում է հատուկ ծրագրեր այդ կանանց և երեխաների տառապանքները նվազեցնելու համար, նպաստում կրթության, խորհրդատվության և խնամքի ապահովմանը:

Շատ երկրներում աղջիկները դեռևս ենթարկվում են խտրականության, որը հաճախ վտանգի է ենթարկում նրանց կյանքը և բարեկեցությունը: Նրանք հաճախ ավելի պակաս սնունդ, բժշկական օգնություն և շատ ավելի թերի կրթություն են ստանում, քան տղաները. վեցից տասնմեկ տարեկան 73 միլիոն աղջիկներ, ի համեմատություն 57 միլիոն տղաների, չեն հաճախում տարրական դպրոց: ՄԱՄՀ-ն, հատուկ ուշադրություն դարձնելով ուսուցմանը, աշխատում է բարելավել աղջիկների կյանքը և փոխել այն համոզմունքներն ու գործելակերպը, որոնք խոչընդոտում են նրանց հնարավորությունների բացահայտմանը:

---

## Երեխայի առողջության խրախուսում

*Նշանակալից առաջընթաց է կատարվել երեխաների բարեկեցության բարելավման գործում: Մինչև հինգ տարեկան մահացության չափը և երեխաների սնուցումը համատարած կերպով շարունակում են բարելավվել: Բազմաթիվ երկրներում աճել է այն երեխաների քանակը, որոնք սնուցվում են բացառապես կրծքով և ապահովված են մաքուր ջրով, նվազել է նաև գենդերային ճեղքվածքը: ՄԱՄՀ-ն մեծ դեր ունի այդ առաջընթացում:*

- *Պատվաստման ծրագրերը, որոնք օժանդակվում են ԱՀԿ-ի և ՄԱՄՀ-ի կողմից, ամեն տարի կանխում են ավելի քան 2,5 միլիոն երեխաների մահացության դեպքերը: Պոլիոմիելիտը հիմնովին ոչնչացման եզրին է: ՄԱՄՀ-ի վերջնական նպատակն է ապահովել, որպեսզի մոլորակի վրա յուրաքանչյուր երեխա պատվաստված լինի կանխելի հիվանդությունների դեմ, որ նոր և ոչ լիարժեք օգտագործվող պատվաստանյութերն այնպիսի հիվանդությունների դեմ, ինչպիսիք են հեպատիտ B-ն, մենինգիտը և ռոտավիրուսը, մատչելի լինեն աղքատ երկրների համար:*
- *Աշխարհում հաջողությամբ է պսակվել յոդացված աղի միջոցով յոդի պակասի հետևանքով երեխաների մտավոր դանդաղկոտության կանխումը: 1999թ. վերջերին աշխարհի բնակչության մոտ 70%-ը յոդացված աղ էր օգտագործում: ՄԱՄՀ-ն շարունակում է աշխատել իր ավանդական գործընկերների դոնորների և ախտահարված երկրներում աղի տեղական արտադրողների հետ (ինչպիսին է, օրինակ, Կիվանիս միջազգայինը)՝ տուժած երկրներում ամբողջ աղի յոդացումը ապահովելու համար:*
- *Այն երեխաները, որոնք վիտամին A-ի պակաս ունեն, մահացության մեծ ռիսկի են ենթարկվում հատկապես այնպիսի հիվանդություններից, ինչպիսիք են կարմրախտն ու թոքաբորբը: 3 միլիոն երեխաների մոտ տեսողության վատթարացում է նկատվում, ինչը վիտամին A-ի պակասի նշան է: Ընդհանուր առմամբ, մինչև 5 տարեկան 100 միլիոն երեխաներ հիվանդության և մահվան վտանգի առաջ են կանգնած: ՄԱՄՀ-ն օգնում է երկրներին լուծել հեշտությամբ կանխվող առողջական այդ խնդիրը՝ պատիճավոր վիտամին A բաշխելով ռիսկի ենթակա երեխաներին դրանով իսկ նպաստելով, որ սնունդն ավելի լիարժեք դառնա, և տեղեկացնելով մարդկանց սննդում վիտամիններով հարուստ մրգեր և բանջարեղեն օգտագործելու*

*անհրաժեշտության մասին:*

- *1999թ. 1 միլիարդից ավելի մարդու համար մաքուր խմելու ջուրը, կոյուղին և ջրամատակարարումը, իսկ մոտ 2,4 միլիարդ մարդ զրկված էր կամ էլ սահմանափակ հնարավորություն տարրական պայմաններ չունեն: Մոտ 3 միլիոն երեխաներ դեռևս մահանում են դիարեայից և ջրի հետ կապված այլ հիվանդություններից: ՄԱՄՀ-ի առջև, որն աշխատում է կառավարությունների և այլ գործընկերների հետ, դրված են խնդիրներ, որոնց նպատակն է հաղթահարել այդ դժվարությունները տրամադրելով ջրհորներ, պոմպեր, ինչպես նաև ջրամատակարարման այլ միջոցներ:*
- *Ամեն տարի մոտ 600 հազար կին, շատերը մինչև 20 տարեկան, մահանում են, իսկ միլիոնավոր կանայք տառապում են հաշմանդամությունից և ամբողջ կյանքում ուղեկցող վնասվածքներից, որոնց պատճառը կապված է հղիության կամ ծննդաբերության հետ: ՄԱՄՀ-ն օգնում է վերապատրաստել համայնքների առողջապահության աշխատողներին և մանկաբարձուհիներին՝ կանանց ծննդաբերությունից առաջ հիգիենիկ ծառայություններ ու լավագույն գործնական օգնություն տրամադրելու համար:*
- *ՄԱՄՀ-ն խորհուրդ է տալիս մինչև 6 ամսական երեխաներին կերակրել կրծքով որպես ամենաառողջարար սնուցում: Այնուհետև դա լրացուցիչ կերակուր տալու հետ զուգահեռ հարկ է շարունակել ևս 2 տարի կամ 2 տարուց ավելի: «Մանկան բարեկամ ծննդատան նախաձեռնությունը», որը խրախուսում է կրծքով կերակրելը առողջապահական համակարգում, համատարած կերպով ընդլայնվում է ՄԱՄՀ-ի, ԱՀԿ-ի և այլ գործընկերների աջակցությամբ:*

---

ՄԱՄՀ-ն պատասխանատվություն է ստանձնել նպաստելու խտրականության ու այն պրակտիկայի վերացմանը, որի դեպքում աղջիկները զրկվում են իրենց իրավունքներից: Հատուկ մտահոգության առարկա են դպրոց հաճախելու հնարավորության մերժումը, գենդերային անհավասարությունը, որի հետևանքով նվազում է աղջիկների նշանակությունը, և նրանք ենթարկվում են սեռական բռնության. ամեն տարի աշխարհի 28 երկրներում դրան ենթարկվում են մոտ 2 միլիոն աղջիկներ: ՄԱՄՀ-ի Աղջիկների կրթության համընդհանուր ծրագիրը, որն իրականացվում է ավելի քան 60 երկրներում, գենդերային հարցերով ավելի զգայուն լինելու, հավասարության հասնելու և աղջիկների ու տղաների համար որակյալ կրթություն ապահովելու նպատակով միավորում է ազգային և համընդհանուր ջանքերը և կրթական համակարգերի վերափոխման ուղենիշ է հանդիսանում երկրների համար:

Ամեն օր ավելի քան 1600 մինչև 15 տարեկան երեխաներ վարակվում են վիրուսով, որի հետևանքով առաջանում է ՁԻԱՀ-ը: Ամբողջ աշխարհում մինչև 2000թ. 13.2 միլիոն երեխաներ կորցրեցին իրենց ծնողներին այդ հիվանդության պատճառով: Համայնքները աջակցության կարիք ունեն, քանի որ խնամում են որբ երեխաներին: Այդ հիվանդության առաջն առնելու համար պետք է բարելավել կրթության մատչելիությունը, կյանքում անհրաժեշտ հմտությունների հաղորդումը, առողջապահական ծառայությունները, գաղտնի տեստավորում ու բժշկական քննություններ: ՄԱՄՀ-ն աջակցում է այն ծրագրերին, որոնք ՁԻԱՀ-ից տուժած որբերի համար են և աշխատում է կառավարությունների ու հասարակական կազմակերպությունների հետ՝ բարձրացնելով ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման, տուժածների խնամքի, հոգատարության և վարակվածների իրավունքներին առնչվող հարցեր:

## Սոցիալական ինտեգրացում

Գոյություն ունեն մի քանի սոցիալական խմբեր, որոնց ՄԱԿ-ը ճանաչում է որպես հատուկ ուշադրության պահանջողներ, խոսքը մասնավորապես երիտասարդների, մեծահասակների, հաշմանդամների, փոքրամասնությունների ու բնիկ ժողովուրդների մասին է: Այդ խմբերի խնդիրները բարձրացվում են Գլխավոր ասամբլեայի, Տնտսոցխորհրդի, Սոցիալական զարգացման հարցերով հանձնաժողովի կողմից: Այդ խմբերի համար նախատեսված հատուկ ծրագրերն իրականացվում են ՄԱԿ-ի Սոցիալական և տնտեսական հարցերի վարչության շրջանակներում:

ՄԱԿ-ը շատ կարևոր դեր է խաղում խոցելի խմբերի իրավունքների սահմանման և պաշտպանության գործում: Օգնում է ձևավորել միջազգային նորմեր, չափանիշներ ու առաջարկություններ այն գործողությունների համար, որոնք վերաբերում են այդ սոցիալական խմբերին, և ուսումնասիրությունների ու տվյալների հավաքման միջոցով փորձում է առանձնացնել նրանց մտահոգությունները, ինչպես նաև հատուկ տարիների ու տասնամյակների միջոցով, որոնց նպատակն է խրախուսել միջազգային գործողությունները:

### Ընտանիքների զարգացման աջակցություն

Կան ընտանիքներին վերաբերող կարևոր խնդիրներ, որոնք գլոբալ բնույթով առնչվում են քաղաքականության և որոշում կայացնողների. օրինակ՝ սեփական կարիքները բավարարելու ընտանիքի ունակությունների ամրապնդումը, հավասարակշռել աշխատանքը և ընտանեկան պատասխանատվությունը, ընտանիքում բռնության կանխումը և աղքատության վերացումը: 1994 թվականը հայտարարելով Ընտանիքի միջազգային տարի, որի կարգախոսն էր «Ընտանիք. ռեսուրսներ և պատասխանատվություն փոփոխվող աշխարհում», Գլխավոր ասամբլեան ընտանիքին վերաբերող թեման վերածեց զարգացման խնդրին վերաբերող միջազգային երկխոսության: 1994թ. Նյու Յորքում ասամբլեան ընտանիքների հարցերով միջազգային համաժողով գումարեց: Տարվա արդյունքների հիման վրա կառավարությունները մշակեցին ընտանիքի հարցերով գործողությունների ազգային ծրագրեր, ստեղծեցին ընտանիքի հարցերով զբաղվող նախարարություններ և ընտանիքի շահերին ուղղված օրենքներ ընդունեցին:

Կառավարությունների հետագա գործողությունները ընդգրկեցին ընտանիքին առնչվող քաղաքականության և ծրագրերի զարգացումը, իրականացումն ու գնահատումը՝ Տարվա շրջանակների համատեքստում: Այդ ոլորտի պատասխանատվությունը կրում է Սոցիալական և տնտեսական հարցերի վարչության Սոցիալական քաղաքականության և զարգացման բաժինը, որը նպաստում է միջազգային համագործակցությանը ընտանիքի հետազոտման ոլորտում, ամրապնդում է կապը ՄԱԿ-ի և քաղաքացիական հասարակության միջև, աշխատում է ոչ կառավարական կազմակերպությունների և հետազոտական ու ակադեմիական հաստատությունների հետ, տեխնիկական օժանդակություն է տրամադրում ՄԱԿ-ի Ընտանիքի գործունեության հարցերով հոգաբարձուների հիմնադրամի միջոցով:

ՄԱԿ-ը քաջալերում է մայիսի 15-ին Ընտանիքների միջազգային օրվա ամենամյա նշումը ամբողջ աշխարհում, որը հնարավորություն է տալիս բարձրացնելու հասարակության իրազեկությունը ընտանիքի՝ որպես հասարակության հիմնական միավորի շուրջ հարցերի վերաբերյալ, ինչպես նաև ձեռնարկելու համապատասխան գործողություններ:

**Երիտասարդություն**

Գլխավոր ասամբլեան ընդունել և հաստատել է երիտասարդությանը վերաբերող մի քանի բանաձևեր և արշավներ, իսկ Քարտուղարությունը վերահսկում է հարակից ծրագրերն ու տեղեկատվական արշավները:

- 1965թ. Գլխավոր ասամբլեան ընդունեց *Հռչակագիր երիտասարդների շրջանում խաղաղության, ժողովուրդների միջև փոխադարձ հարգանքի և ըմբռնման իդեալների խրախուսման վերաբերյալ*՝ շեշտելով այսօրվա աշխարհում երիտասարդների դերի կարևորությունը:
- Երկու տասնամյակ անց Գլխավոր ասամբլեան 1985թ. հայտարարեց Երիտասարդների միջազգային տարի: Մասնակցություն, զարգացում, խաղաղություն և հետագա պլանավորման համար ընդունված ուղենիշները ու երիտասարդների համար համապատասխան հետագա գործողություններ. այս ամենը համընդհանուր երկարատև ռազմավարություն է երիտասարդների հարցերով աշխատանքի համար: ՄԱԿ-ը խրախուսեց ուղենիշների կատարումը օգնել կառավարություններին երիտասարդության հարցերով քաղաքականություն և ծրագրեր մշակել:
- 1995թ., երբ լրացավ տարվա 10-ամյակը, Միավորված ազգերի կազմակերպությունը երիտասարդության համար *Գործողությունների համաշխարհային ծրագիր* ընդունեց *մինչև 2000թ. և հետագա ժամանակահատվածի համար*: Դա միջազգային ռազմավարություն է երիտասարդ մարդկանց խնդիրները լուծելու և հասարակական կյանքում մասնակցության նրանց հնարավորությունները բարձրացնելու համար: ՄԱԿ-ը նաև կոչ արեց երիտասարդության հարցերի համար պատասխանատու նախարարների մակարդակով համաշխարհային համաժողով գումարել, որն էլ հանդիպումներ պարբերաբար անցկացներ ՄԱԿ-ի հովանու ներքո: Այդ համաժողովի առաջին նստաշրջանը Պորտուգալիայի կառավարության և ՄԱԿ-ի համագործակցությամբ գումարվեց 1998թ. Լիսաբոնում և կենտրոնացավ Գործողությունների համաշխարհային ծրագրի իրականացման խնդիրների վրա: Այդ ընթացքում ընդունվեցին *Լիսաբոնի հռչակագիրը երիտասարդության հարցերով* և ազգային, տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներով նախաձեռնությունների առաջարկությունները:
- Գլխավոր ասամբլեան, խրախուսելով համատեղ նախաձեռնություններ, նաև ընդգծեց, որ Միավորված ազգերի համակարգի **Երիտասարդների համաշխարհային ֆորումը** կարող է նպաստել Գործողությունների համաշխարհային ծրագրի իրականացմանը: Այդ կապակցությամբ Սոցիալական և տնտեսական հարցերի բաժանմունքի Սոցիալական քաղաքականության զարգացման բաժինը գումարեց Երիտասարդների Համաշխարհային ֆոր

մի շարք նախաձեռնություններ, որոնք նպատակ ունեին բարձրացնել հեռահաղորդակցության միջոցների հնարավորությունները երիտասարդական հասարակական կազմակերպությունների և ՄԱԿ-ի համակարգի երիտասարդների հարցերին առնչվող մարմինների միջև, ոչ կառավարական կազմակերպությունների (ՈԿԿ) և ՄԱԿ-ի համակարգի համատեղ երիտասարդական նախաձեռնությունների միջոցով նպաստել Գործողությունների համաշխարհային ծրագրի իրականացմանը, ներդաշնակեցնել այդ միջոցները ՄԱԿ-ի համակարգի երիտասարդներին առնչվող ծրագրերի ու նախաձեռնությունների հետ: Ֆորումի չորրորդ նստաշրջանը, որը կայացավ 2001թ. և նվիրված էր «Լիազորություն տալ երիտասարդությանը գործողությունների համար» թեմային, գումարվեց Սենեգալի երիտասարդության ազգային խորհրդի հետ համատեղ:

- ՄԱԿ-ի Երիտասարդների հիմնադրամը աջակցում է այն նախագծերին, որոնք օպերատիվ գործողությունների միջոցով ընդգրկում են երիտասարդներին: Հիմնադրամը կառավարություններին ու ՈԿԿ-ներին նախնական ներդրումների դրամաշնորհներ է տրամադրում՝ երիտասարդության ոլորտում աջակցելով խթանիչ ու նորարարական գործողություններին:

**Տարեցներ**

Վերջին 50 տարիների ընթացքում կյանքի միջին տևողությունը համընդհանուր մասշտաբով բարձրացել է մոտ 20 տարով և հասել իր ներկայիս մակարդակին՝ 66 տարվա: Միաժամանակ իջնում է ծնելիության մակարդակը: Այս երկու նանգամանքները հանգեցրին համաշխարհային մասշտաբով տարեցների քանակի և համամասնության ավելացմանը:

Տարբեր երկրների բնակչությունը ծերանում է տարբեր չափերով: Զարգացող երկրների բնակչությունն ավելի ուշ է ծերանում զարգացած երկրների համեմատությամբ, բայց ավելի արագ տեմպերով: Մինչև 2030 թվականը աշխարհի տարեց բնակչության 70%-ը կապրի զարգացող երկրներում:

Բնակչության ծերացումը անհատական կյանքի ու սոցիալ-տնտեսական և մշակութային միջավայրի կազմակերպման ոլորտում նոր, աննախադեպ խնդիրների ու հնարավորությունների է հանգեցնում:

Ավելի մեծ տարիքում բարգավաճելու համար հարկ է, որ ավելի երիտասարդ տարիներին օգտագործվեն անընդհատ կրթության, հմտությունների զարգացման, առողջ ապրելակերպի ու խնայողությունների կուտակման հնարավորությունների համար:

Ծերացող հասարակությունների բարգավաճման համար հարկ է, որ համակարգերն ու պայմանները հարմարեցվեն տարիքին համապատասխան օգտագործման ու մատչելիության համար, ինչպես նաև ընդլայնվեն մեծերի համար նախատեսված կրթության, թոշակին աստիճանաբար անցնելու, աշխատանքային ոչ լրիվ օր աշխատելու հնարավորությունները, ստեղծվեն սերունդների միջև շփումների համակարգեր, որոնք տարեց հասակում կայուն եկամուտ և բժշկական ծառայություններ ստանալու հնարավորություն կերաշխավորեն:

Ի պատասխան ծերացման գլոբալ գործընթացին՝ ՄԱԿ-ը մի քանի միջոցա-

ռումներ նախաձեռնեց.

- Ծերացման հարցերով համաշխարհային համագումարը (Վիեննա, 1982թ.) ընդունեց *Ծերացման հարցերով Գործողությունների միջազգային ծրագիր*: Այն գործողություններ է նախատեսում այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են զբաղվածությունն ու եկամուտների ապահովությունը, առողջապահությունն ու սնունդը, բնակարանային ապահովումն ու բարեկեցությունը: Ծրագիրը տարեցներին դիտում է որպես բնակչության տարասեռ և ակտիվ խումբ՝ իր բազմաբնույթ հնարավորություններով ու երբեմն որոշակի առողջապահական կարիքներով:
- 1991թ. Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված *ՄԱԿ-ի սկզբունքները տարեց անձանց համար* սահմանեցին տարեցների կարգավիճակին վերաբերող համընդհանուր չափանիշներ հետևյալ հինգ ոլորտներում. անկախություն, մասնակցություն, հոգատարություն, ինքնուրույն գոյատևում և արժանապատվություն:
- 1992թ., երբ լրացավ Գործողությունների ծրագրի տասնամյակը, Ասամբլեան գումարեց Ծերացման հարցերով միջազգային համաժողով և *Ծերացման վերաբերյալ հայտարարություն հռչակեց*՝ շեշտադրելով Գործողությունների ծրագրի հետագա իրականացման հիմնական ուղղություններն ու 1999թ. հայտարարեց Տարեցների միջազգային տարի:
- Տարվա անցկացման առնչվող հայեցակարգային շրջանակները ընդգրկում էին չորս հարթությունների ուսումնասիրություններ. տարեցների վիճակը, անհատական զարգացումն ամբողջ կյանքի ընթացքում, հարաբերություններ սերունդների միջև և հարաբերություններ բնակչության զարգացման ու ծերացման միջև: Տարվա միավորող թեման՝ «Հասարակություն բոլոր տարիքների համար», կշարունակի լրացվել նաև հաջորդ տասնամյակների ընթացքում:
- Գլխավոր ասամբլեան 1999թ. նիստ գումարեց միջազգային տարվան վերաբերող հետագա գործողությունների նպատակով: Նիստին հանդես եկան 64 երկրների ներկայացուցիչներ, որոնք առաջարկեցին իրենց աջակցությունը տարվա նպատակներին: Ներկայիս գործընթացը, որը վերաբերում է «Հասարակություն բոլոր տարիքների համար» շարժման խրախուսմանը, ներկայացված է *«Քաղաքականության շրջանակներ. հասարակություն բոլոր տարիքների համար»* և *«Ծերացմանը վերաբերող հետազոտությունների օրակարգը 21-րդ դարի համար»* փաստաթղթերում:
- ՄԱԿ-ի՝ ծերացմանը վերաբերող ծրագիրը կենտրոնանում է ծերացման համար նոր «ճարտարապետության» ստեղծման և այն համաշխարհային քաղաքականության վերածելու խնդրի վրա: 1982թ. Գործողությունների միջազգային ծրագրի թարմացման, ինչպես նաև Ծերացման հարցերով երկարաժամկետ ռազմավարություն մշակելու գործընթացը շարունակվում է և կներկայացվի Ծերացման հարցերով երկրորդ համաշխարհային համագումարի ուշադրությանը, որը կկայանա 2002թ. Իսպանիայում:

## Հակասոցիալական հանցավորություն, հանցագործություն, ապօրինի թմրամիջոցներ և ահաբեկչություն

Անդրազգային կազմակերպված հանցագործությունը, թմրանյութերի ապօրինի վաճառքն ու ահաբեկչությունը դարձել են սոցիալական, քաղաքական և տնտեսական ուժ, որը կարող է փոխել երկրների ու տարածաշրջանների ճակատագիրը: Վերջին միտումները ներառում են հասարակական պաշտոնյաների լայնածավալ կաշառակերությունը, միջազգային հանցագործների աճը և մարդկանց ապօրինի փոխադրումները: Ահաբեկչության կիրառումը, որի նպատակն է ահաբեկել մեծ և փոքր համայնքներին և սպառնալիքի ենթարկել տնտեսական զարգացումը, ևս մեկ վտանգ է և միջազգային արդյունավետ համագործակցություն է պահանջում: ՄԱԿ-ը այս երևույթները լավ կառավարման, սոցիալական հավասարության, բոլոր քաղաքացիների համընդհանուր արդարության սպառնացող վտանգ է համարում և ավելի է ակտիվացնում իր դերը այդ վտանգներին հակահարված տալու համար:

***Թմրամիջոցների վերահսկման և հանցագործությունների կանխարգելման գրասենյակը***, որը գտնվում է Վիեննայում, ղեկավարում է թմրանյութերի ապօրինի վաճառքի, կազմակերպված հանցագործության ու միջազգային ահաբեկչության դեմ ուղղված միջազգային ջանքերն ու պայքարը: Այդ երևույթները ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարն անվանել է հասարակության «հակաքաղաքացիական տարրեր»: Գրասենյակի մեջ մտնում են ՄԱԿ-ի ***Թմրամիջոցների վերահսկման միջազգային ծրագիրը (ՄԱԹՎԾ) ու Հանցագործությունների կանխարգելման միջազգային կենտրոնը:***

## Թմրադեղերի վերահսկողություն

Աշխարհում 200 միլիոնից ավելի մարդ թմրանյութեր է օգտագործում: Թմրադեղերի չարաշահման պատճառով մարդիկ կորցնում են աշխատավարձը, տառապում են առողջական խնդիրներով, կորցնում են ընտանիքը, ինչպես նաև վտանգավորում է համայնքների վիճակը: Մասնավորապես թմրանյութերի ներարկումը նպաստում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և հեպատիտի արագ տարածմանը աշխարհի տարբեր մասերում:

Ուղղակի կապ կա թմրանյութերի օգտագործման և հանցավորության ու բռնության աճի միջև: Թմրադեղերի ցանցերը քայքայում են կառավարություններն ու կոռումպացնում են օրինական բիզնեսը: Ապօրինի թմրանյութերից ստացված եկամուտներով ֆինանսավորվում են ամենաարյունալի զինված հակամարտությունները:

Ֆինանսական գանձումները հսկայական են: Վիթխարի գումարներ են ծախսվում ոստիկանական ուժերի, արդարադատության համակարգերի ամրապնդման, բուժման ու վերականգնողական ծրագրերի համար: Սոցիալական կյանքը համապատասխանաբար ցնցվում է. փողոցային բռնություն, ավազակախմբերի պատերազմական գործողություններ, վախ, քաղաքային անկում և

կործանված կյանքեր:

ՄԱԿ-ը թմրադեղերի համընդհանուր խնդիրը բարձրացնում է տարբեր մակարդակներում: **Թմրադեղերի հարցերով** Տնտսոցխորհի ֆունկցիոնալ **հանձնաժողովը** թմրադեղերի միջազգային վերահսկողության միջկառավարական, քաղաքականություն մշակող ու համակարգող հիմնական մարմինն է: Այն բաղկացած է 53 անդամ երկրներից և վերլուծության է ենթարկում թմրադեղերի չարաշահման ու մարդկանց անօրինական փոխադրումների խնդիրները, մշակում առաջարկություններ թմրադեղերի միջազգային վերահսկողությունը ամրապնդելու նպատակով: Հանձնաժողովը հսկում է Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված թմրադեղերի վերահսկողությանը վերաբերող միջազգային համաձայնագրերի, ուղենիշ սկզբունքների ու միջոցառումների իրականացումը: Նաև ղեկավարում է ՄԱԹՎԾ-ի գործունեությունը:

Հանձնաժողովն ունի հինգ մասնաճյուղային մարմիններ, որոնց նպատակն է տարածաշրջանային մակարդակով նպաստել համագործակցությանն ու համակարգմանը Աֆրիկայում, Ասիայում և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում, Լատինական Ամերիկայում ու Կարիբյան ավազանում, Մերձավոր ու Միջին Արևելքում:

**Թմրադեղերի վերահսկման միջազգային խորհուրդը** 13 անդամից բաղկացած, կիսադատական լիազորություններով օժտված մարմին է, որը վերահսկում է կառավարությունների ստանձնած պարտավորությունների համապատասխանությունը թմրադեղերի վերահսկողությանը վերաբերող միջազգային համաձայնագրերին և օգնում է նրանց այդ ուղղությամբ: Խորհուրդն աշխատում է ապահովել, որպեսզի թմրադեղերն օգտագործվեն բժշկական և գիտական նպատակներով և ձգտում է կանխել դրանց ներթափանցման ապօրինի ուղիները: Նա սահմանում է երկրներում բժշկական ու գիտական նպատակների համար օգտագործվող անհրաժեշտ թմրադեղերի քանակը: Նաև հետաքննչական առաքելություններ և տեխնիկական բնույթի պատվիրակություններ է ուղարկում թմրադեղերից տուժած երկրներ:

Մի քանի համաձայնագրեր, որոնք ընդունվել են ՄԱԿ-ի համակարգի ներքո, պահանջ են դնում, որպեսզի կառավարությունները վերահսկողություն սահմանեն թմրադեղերի և հոգեներգործուն նյութերի արտադրության ու տարածման գործում, պայքարեն թմրամոլության չարաշահման և ապօրինի վաճառքի դեմ և միջազգային մարմնին զեկուցեն իրականացված գործողությունների մասին:

Պայմանագրերը հետևյալն են.

- *Նարկոտիկ թմրադեղերի հարցերով միասնական կոնվենցիա* (1961թ.), որի նպատակն է սահմանափակել թմրադեղերի արտադրությունը, տարածումը, տիրապետումը, օգտագործումն ու վաճառքը բացառապես գիտական և բժշկական նպատակների համար և պարտավորեցնում է անդամ երկրներին միջոցառումներ ձեռնարկել հատուկ թմրամիջոցների, օրինակ, հերոինի նկատմամբ: 1972թ. կոնվենցիային կից արձանագրությունը շեշտեց թմրամոլներ բուժման և վերականգնման անհրաժեշտությունը:
- *Հոգեներգործուն նյութերի մասին կոնվենցիան (1971թ.)* վերահսկողության միջազգային համակարգ է ստեղծում հոգեներգործուն նյութերի նկատմամբ

Այն արձագանքում է թմրադեղերի սպեկտրի բազմազանությանն ու տարածմանը և վերահսկողություն է սահմանում տարբեր սինթետիկ թմրադեղերի նկատմամբ:

- *ՄԱԿ-ի Նարկոտիկ թմրադեղերի և հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի մասին կոնվենցիան (1988թ.)* նախատեսում է համալիր միջոցառումներ թմրադեղերի ապօրինի շրջանառության դեմ՝ ներառելով նաև դրույթներ դրամի լվացման և նախնական քիմիական նյութերի տարածման առնչությամբ: Լինելով թմրադեղերի ապօրինի շրջանառության դեմ պայքարի միջազգային համագործակցության հիմնական գործիքը, այն նախատեսում է հետազոտում, սառեցում, բռնագրավում թմրադեղերի ապօրինի շրջանառության հետևանքով ստացված շահույթների ու սեփականության առնչությամբ, թմրադեղերի ապօրինի շրջանառությամբ զբաղվող անձանց հանձնում և դատավարության փոխանցում՝ քրեական գործ հարուցելու նպատակով: Անդամ պետությունները պարտավորվում են վերացնել և կրճատել թմրադեղերի պահանջարկը:

**Թմրադեղերի վերահսկողության ՄԱԿ-ի միջազգային ծրագիրը (ՄԱԹՎԾ)** ղեկավարում է թմրադեղերի վերահսկողությանն առնչվող ՄԱԿ-ի բոլոր գործողությունները: Օգնում է կանխել և կարող է փոքրացնել թմրադեղերի արտադրանքը, ապօրինի շրջանառությունն ու չարաշահումը, օգնում է կառավարություններին ստեղծել թմրադեղերի վերահսկողությանն առնչվող կառույցներ ու մշակել ռազմավարություն, տրամադրում է տեխնիկական օժանդակություն թմրադեղերի վերահսկողության ոլորտում, նպաստում է թմրադեղերի վերահսկողությանը վերաբերող համաձայնագրերի իրականացմանը և գործում է որպես փորձաքննության և տեղեկատվության համաշխարհային կենտրոն:

ՄԱԹՎԾ-ի մոտեցումը թմրադեղերի գլոբալ խնդրին բազմակողմանի է. համայնքների վրա հիմնված ծրագրեր թմրադեղերի չարաշահման կանխման համար. բուժման և վերականգնման ոլորտում ոչ կառավարական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության ընդգրկում, այլընտրանքային զարգացման օժանդակություն, որը նոր տնտեսական հնարավորություն է ստեղծում անօրինական կուլտուրաների մշակումից (որոնք պետք է վերացվեն) տնտեսապես կախվածության մեջ գտնվող բնակչության համար, թմրադեղերի ապօրինի շրջանառության կանխման հարցերով անցկացվող ավելի լավ ուսուցում և տեխնոլոգիաներ. որոնք իրավապահ մարմինների աշխատանքը դարձնում են ավելի արդյունավետ, իսկ օժանդակությունը գործարար համայնքին և ոչ կառավարական կազմակերպություններին օգնում է վերջիններիս ծրագրեր ստեղծել, որոնք կնվազեցնեն թմրադեղերի պահանջարկը: Օրինակ.

- *Անօրինական գյուղատնտեսական կուլտուրաների մոնիտորինգի գլոբալ ծրագիրը*, որն իրականացվում է Աֆղանստանում, Լաոսում, Մյանմարում, Բոլիվիայում, Կոլումբիայում և Պերուում, ինտեգրում է արբանյակային դիտարկումը, օդային վերահսկողությունը և ցամաքային գնահատումը. որպեսզի երկրներին անօրինական կուլտուրաների աճեցման տարածքների և միտումների լայնածավալ պատկերը ստանալու հնարավորություն ընձեռվի:
- *Գնահատման գլոբալ ծրագիրը* ամբողջ աշխարհում անօրինական

թմրադեղերի ապօրինի ճշգրիտ և ընթացիկ վիճակագրություն է տրամադրում: Թմրադեղերի չարաշահման միտումների ճշգրիտ պատկերն ունենալը հույժ կարևոր է կանխման, բուժման և վերականգնման լավագույն ռազմավարություն մշակելու համար:

- *Իրավաբանական օժանդակության ծրագիրն* աշխատում է պետությունների հետ թմրադեղերի վերահսկողության պայմանագրերի իրականացման համար՝ օգնելով օրենսդրություն նախագծել և վերապատրաստել արդարադատության ոլորտի պաշտոնյաներին: Ավելի քան 1,700 հիմնական աշխատակազմի անդամներ իրավաբանական վերապատրաստում են անցել և ավելի քան 140 երկրներ իրավաբանական օժանդակություն են ստացել:

Գլխավոր ասամբլեայի 1988թ. հատուկ նստաշրջանում, որը նվիրված էր թմրադեղերի համաշխարհային խնդրին, աշխարհի կառավարությունները մշակեցին թմրադեղերի վերահսկողության նկատմամբ գլոբալ ռազմավարություն: Նրանք պարտավորվեցին միասին աշխատել ռազմավարությունները համաձայնեցնելու և գործնական միջոցառումները ամրապնդելու համար, որոնք ուղղված են անօրինական թմրադեղերի արտադրության և պահանջարկի վերացմանը: Այս միջոցառումները ներառում են թմրադեղերի պահանջարկի նվազեցմանն ուղղված արշավներ, դեղերի արտադրության մեջ օգտագործվող քիմիկատների առկայությունը սահմանափակող ծրագրեր, թմրադեղերի չարաշահման ավելի լավ վերահսկողության նպատակով երկրների միջև իրավական համագործակցության խթանում և անօրինական թմրադեղերի կուլտուրաների վերացման ուղղությամբ քայլերի ձեռնարկում:

## Հանցագործության կանխարգելում

Հանցագործությունն աճում է թե՛ չափերով, թե՛ ինտենսիվությամբ և թե՛ բարդությամբ, սպառնում է քաղաքացիների անվտանգությանն ամբողջ աշխարհում և խոչընդոտում է երկրների սոցիալական ու տնտեսական զարգացումը: Գլոբալիզացիան անդրազգային հանցագործության նոր ձևեր բացահայտեց: Բազմազգ հանցագործ սինդիկատները ընդլայնել են իրենց գործողությունների շրջանակը՝ թմրադեղերի և զենքի անօրինական վաճառքից մինչև դրամի լվացումը: Ապօրինի փոխադրմամբ զբաղվող հանցագործները ամեն տարի մինչև 4 միլիոն անօրինական միգրանտներ են տեղափոխում՝ ստանալով մինչև 7 միլիարդ դոլարի բրուտտո շահ: Այն երկրում, որտեղ տարածված է կաշառակերությունը, ներդրումների մակարդակը 5%-ով ավելի ցածր է, քան կաշառակերության համեմատաբար քիչ տարածում ունեցող երկրներում, և ամեն տարի նման երկիրը կորցնում է տնտեսական աճի մինչև 1%-ը:

***Հանցագործությունների կանխարգելման և քրեական արդարադատության հանձնաժողովը***, որը բաղկացած է 40 անդամ պետություններից, հանդիսանում է Տնտսոցխորհի ֆունկցիոնալ մարմինը: Հանձնաժողովը հանցագործության կանխարգելման և քրեական արդարադատության ոլորտում մշակում է միջազգային քաղաքականությունը և կոորդինացնում է հանցավորության կանխման

ու քրեական արդարադատության ոլորտներին վերաբերող գործունեություն:

**Հանցագործությունների կանխարգելման միջազգային կենտրոնն** իրականացնում է հանձնաժողովի կողմից սահմանված լիազորությունները և հանդիսանում է ՄԱԿ-ի գրասենյակ, որը պատասխանատու է հանցագործության կանխարգելման, քրեական արդարադատության և քրեական օրենսդրական բարեփոխման համար: Կենտրոնը հատուկ ուշադրություն է դարձնում անդրազգային կազմակերպված հանցագործության, կաշառակերության, ահաբեկչության և մարդկանց անօրինական փոխադրումների պայքարի հարցերին:

Կենտրոնի ռազմավարությունը հիմնված է միջազգային համագործակցության երկու սյուների, ինչպես նաև միջազգային համայնքի ջանքերի օժանդակության առնչվող դրույթի վրա: Այն հիմնում է օրենքի ամբողջականության և հարգանքի վրա հիմնված մշակույթը և նպաստում է մասնակցությանը քաղաքացիական հասարակությամբ հանցագործության և կաշառակերության կանխարգելման և վերացման ուղղությամբ:

Կենտրոնն աջակցում է հանցավորության համընդհանուր խնդիրներին վերաբերող միջազգային իրավական նոր փաստաթղթերի ստեղծման գործընթացին: Աջակցել է նաև անդամ երկրների կողմից մշակված ՄԱԿ-ի *Անդրազգային կազմակերպված հանցագործության դեմ կոնվենցիայի* և դրա երեք արձանագրությունների վրա կատարված աշխատանքների ամփոփմանը, որոնք 2000թ. ընդունվեցին Գլխավոր ասամբլեայի կողմից: Կենտրոնը ներկայումս խրախուսում է պետությունների կողմից կոնվենցիայի վավերացման գործընթացը և տեխնիկական համագործակցության միջոցով օգնում է, որպեսզի կոնվենցիան մտնի ուժի մեջ:

Կենտրոնը կառավարությունների հնարավորություններն ամրապնդելու նպատակով տեխնիկական համագործակցություն է նախատեսում օրենսդրությունը բարեփոխելու և քրեական արդարադատության համակարգն ավելի ժամանակակից դարձնելու ուղղությամբ: Համագործակցելով ՄԱՄՔԱԳԻ-ի հետ՝ կենտրոնը 1999թ. նախաձեռնել է երեք ծրագրեր, որոնք առնչվում են միջազգային հանրության համար առաջնային մտահոգություն ներկայացնող երեք հիմնական խնդիրներին. *Համընդհանուր ծրագիր կոռուպցիայի դեմ, Համընդհանուր ծրագիր մարդկանց ապօրինի փոխադրումների առնչությամբ և Համընդհանուր հետազոտություններ կազմակերպված հանցագործության վերաբերյալ:*

Կենտրոնը խրախուսում և դյուրացնում է ՄԱԿ-ի չափանիշների և նորմերի կիրառումը հանցագործության կանխարգելման և քրեական արդարադատության ոլորտներում, որոնք մարդկային և արդյունավետ քրեական արդարադատության համակարգերի անկյունաքարն են և հիմնական բաղադրամասերը ազգային ու միջազգային հանցագործության պայքարի ոլորտում: Ավելի քան 100 երկրներ ազգային օրենսդրության ու քաղաքականության մշակելիս հիմնվեցին այդ չափանիշների վրա, որի շնորհիվ ընդհանուր հիմք ստեղծվեց միջազգային հանցագործության պայքարի համար և պաշտպանվեցին մարդու իրավունքներն ու անհատների կարիքները:

Վերլուծվել են հանցավորության և արդարադատության ոլորտներում ծա-

պած միտումները, ստեղծվել են տվյալների բազաներ, հրատարակվել են համընդհանուր հարցումների արդյունքներ, հավաքվել և տարածվել է տեղեկատվություն: Նախաձեռնվել են երկրների հատուկ կարիքներին վերաբերող գնահատման առաքելություններ և վաղ զգուշացման՝ օրինակ, ախտաբեկչության տարածմանն առնչվող միջոցառումներ:

*Դրամի լվացման դեմ ուղղված համընդհանուր ծրագիրը* կենտրոնի ու ՄԱԿԹՎԾ-ի համատեղ նախաձեռնությունն է, որն օգնում է կառավարություններին պայքարել այն հանցագործների դեմ, որոնք միջազգային ֆինանսական համակարգի միջոցով լվանում են հանցագործությունից առացված եկամուտները: Դրամի լվացմանը վերաբերող տարեկան գումարները մոտավոր հաշվարկներով կազմում են մոտ 500 միլիարդ դոլար: Ծրագիրը, սերտ համագործակցելով միջազգային կազմակերպությունների հետ, որոնք պայքարում են դրամի լվացման դեմ, կառավարություններին, իրավապահ մարմիններին և ֆինանսական միավորներին տրամադրում է դրամի հակալվացմանն առնչվող սխեմաներ, խորհրդատվություն է ներկայացնում բարելավված բանկային և ֆինանսական քաղաքականության առնչությամբ և օժանդակում է ազգային ֆինանսական հետաքննչական ծառայություններին:

***ՄԱԿ-ի Քրեական և արդարադատության գիտահետազոտական միջտարածաշրջանային ինստիտուտը (ՄԱՔԱԳԻ)*** գործում է որպես կենտրոնի միջտարածաշրջանային հետազոտությունների մարմին: Այն նախաձեռնում և նպաստում է գործողություններին ուղղված հետազոտությունների անցկացմանը, որի նպատակն է հանցագործության կանխարգելումը և իրավազանցների հանդեպ վերաբերմունքը: Ինստիտուտը հետազոտությունների և տեղեկատվության տարածման միջոցով նպաստում է հանցագործության կանխարգելմանն ու վերահսկողությանը վերաբերող ավելի կատարյալ քաղաքականության մշակմանը:

Գլխավոր ասամբլեայի որոշման համաձայն, հինգ տարին մեկ անց է կացվում ***Միավորված ազգերի համագումար՝ նվիրված հանցագործության կանխարգելման և իրավազանցների հանդեպ վերաբերմունքի հարցերին***: Դա փորձի փոխանակման հնարավորություն է տալիս և նպաստում է հանցագործության դեմ պայքարի առաջընթացին: Համագումարի աշխատանքներին մասնակցում են քրեագետներ, պենոլոգներ, ոստիկանության բարձրաստիճան պաշտոնյաներ, ինչպես նաև քրեական օրենքի, մարդու իրավունքների և վերականգնողական հարցերով փորձագետներ:

## Գիտություն, մշակույթ և հաղորդակցություն

ՄԱԿ-ը մշակութային ու գիտական փոխանակությունները, ինչպես նաև հեռահաղորդակցությունը կարևոր գործիք է համարում միջազգային խաղաղության ու զարգացման գործում: **Միավորված ազգերի կրթության, գիտության և մշակույթի հարցերով կազմակերպությունը (ՅՈՒՆԵՍԿՕ)** իր գործունեությունը կենտրոնացնում է երեք այլ ուղղությունների վրա. գիտությունը զարգացման համար, մշակութային զարգացում՝ ժառանգություն և ստեղծագործություն, և հե-

հաղորդակցություն, տեղեկատվություն ու ինֆորմատիկա:

**Գիտություն**

*«Գիտությունները զարգացման համար»* հիմնական ծրագիրը նպաստում է առաջխաղացմանը, գիտելիքների փոխանցմանն ու փոխանակմանը բնական, ֆիզիկական, սոցիալական և մարդկային գիտությունների բնագավառում: ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջկառավարական ծրագրերը ներառում են *«Մարդն ու կենսոլորտը» ծրագիրը, Միջկառավարական օվկիանոսագիտության հանձնաժողովի ծրագիրը, Ծովափնյա տարածքներում շրջակա միջավայրի և զարգացման հարցերով ծրագիրը, Սոցիալական վերափոխման ծրագրի կառավարումը, Միջազգային հիդրոլոգիական ծրագիրը* և Միջազգային երկրաբանական փոխկապակցվածության ծրագիրը: Ի լրումն՝ կրթական և դասընթացների նախաձեռնությունների միջոցով ՅՈՒՆԵՍԿՕ-ն օգնում է վերացնել գիտական և տեխնոլոգիական բնագավառների կադրային ռեսուրսների անհավասարակշռությունը, որոնց 90%-ը կենտրոնացած է արդյունաբերական երկրներում:

Կենդանի արարածների կլոնավորման ոլորտում արձանագրված հաջողությունների սկզբում ՅՈՒՆԵՍԿՕ-ի անդամ պետությունները 1997թ. ընդունեցին *Մարդկային գեների և մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը*, որը գենետիկ հետազոտությունների էթիկայի մասին առաջին միջազգային փաստաթուղթն է: Հռչակագիրը սահմանում է էթիկայի համընդհանուր նորմեր մարդու գենետիկ հետազոտման և պրակտիկայի համար, որոնք հավասարակշռում են գիտնականների ազատությունն այնպես, որ նրանք իրենց աշխատանքն իրականացնեն մարդու իրավունքների պաշտպանության և հնարավոր չարաշահումներից մարդկությանը պաշտպանելու անհրաժեշտության նկատառումներով:

Սոցիալական և հումանիտար գիտություններում ՅՈՒՆԵՍԿՕ-ն իր ուշադրությունը սևեռում է մարդու իրավունքների և ժողովրդավարության ուսուցման, խտրականության բոլոր ձևերի դեմ պայքարի, կանանց կարգավիճակի բարելավման և երիտասարդության առջև ծառացած խնդիրների (ինչպիսին է ՁԻԱՀ-ի կանխմանը վերաբերող ուսուցումը) լուծմանն ուղղված գործունեությունների անցկացման վրա:

**Մշակութային զարգացում**

ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային գործունեությունը կենտրոնացած է մշակութային ժառանգության պահպանության խնդրի վրա: Համաձայն 1972թ. ընդունված *Աշխարհի մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին կոնվենցիայի*, 161 երկրներ միջազգային համագործակցության պարտավորություն են ստանձնել 118 երկրներում 630 նշանակալից տեսարժան վայրեր պահպանելու առնչությամբ. պահպանվող քաղաքները, հուշարձանները և բնական վայրերը ընդգրկված են *Համաշխարհային ժառանգության ցուցակում*: Այն տեսարժան վայրերը, որոնք անուշադրության հետևանքով վտանգված են, ընդգրկված են *Վտանգի մեջ գտնվող համաշխարհային ժառանգության ցուցակում*:

1970թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիան արգելում է մշակութային սեփականության անօրինական ապօրինաբար ներմուծումը, արտահանումը և փոխանցումը, իսկ 1995թ. կոնվենցիան թույլատրում է գողացված կամ անօրինական արտահանված մշակութային առարկաների վերադարձը իրենց ծագման երկիր:

Մշակութային գործունեությունը կենտրոնացած է նաև զարգացման մշակութային ասպեկտի խթանման, ստեղծագործության և ստեղծարարության, մշակութային ինքնության ու բազմազանության պահպանման և գրքերի ու ընթերցանության խրախուսման խնդիրների վրա:

**Հաղորդակցություն, տեղեկատվություն և ինֆորմատիկա**

ՅՈՒՆԵՍԿՕ-ն իրեն հատկացրել է որպես համաշխարհային մամուլի ազատության և բազմակարծիք ու անկախ լրատվական միջոցների խրախուսման առաջնորդ: Այդ ոլորտի հիմնական ծրագրով նա փորձում է խրախուսել տեղեկատվության ազատ հոսքը և ամրապնդել հեռահաղորդակցական հնարավորությունները զարգացող երկրներում:

ՅՈՒՆԵՍԿՕ-ն պաշտպանում է մամուլի ազատությանն ու անկախությանը և փորձում է ամրապնդել լրատվական միջոցների բազմակարծությունը: Օգնում է անդամ երկրներին լրատվամիջոցներին վերաբերող օրենքների ժողովրդավարական չափանիշներին ներդաշնակեցնելու և պետական ու մասնավոր լրատվամիջոցների հրատարակչական անկախություն ապահովելու գործում:

Երբ մամուլի ազատության խախտման դեպք է տեղի ունենում, ՅՈՒՆԵՍԿՕ-ի Գլխավոր տնօրենը միջամտում է դիվանագիտական խողովակների կամ հրապարակային հայտարարությունների միջոցով:

ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախաձեռնությամբ մայիսի 3-ը հայտարարվել է **Մամուլի ազատության համաշխարհային օր:** ՅՈՒՆԵՍԿՕ-ն հեռահաղորդակցական կենտրոնների ու ճարտարապետական ու մեդիայի ոլորտներին աջակցելու նպատակով վերապատրաստման դասընթացներ ու տեխնիկական խորհրդատվություն է կազմակերպում և համակարգում իր *Հաղորդակցության զարգացման միջազգային ծրագրի միջոցով* օգնում է մշակել լրատվամիջոցներին առնչվող ազգային ու տարածաշրջանային նախագծեր:

ՅՈՒՆԵՍԿՕ-ն օգնում է զարգացող երկրներին ներմուծել ինֆորմատիկայի սեփական համակարգեր և տեղեկատվական խողովակների միջոցով ապահովել համընդհանուր տեղեկատվական հոսքերի մատչելիությունը: Ծրագրում շեշտը դրվում է վերապատրաստման, գիտական ու մշակութային հաստատությունները կապող համակարգչային ցանցերի ստեղծման, ինչպես նաև դրանց ինտերնետային համակարգում ընդգրկելուն առնչվող հարցերի վրա:

Նոր հեռահաղորդակցական տեխնոլոգիաները, բազմապատկելով տեղեկատվության արտադրման, տարածման ու ստանալու անսահմանափակ հնարավորությունները, հանգեցնում են «գաղափարների ազատ հոսքի» ընդլայնմանը: ՅՈՒՆԵՍԿՕ-ն ջանում է ապահովել, որպեսզի հնարավորին չափ շատ մարդիկ օգուտ քաղեն այդ տեխնոլոգիաների ընձեռած հնարավորություններից: Այդպի

սի տեխնոլոգիաների սոցիալական ու մշակութային ազդեցությունը, իրավական և էթիկայի խնդիրներին առնչվող քաղաքականության մոտեցումները, որոնք վերաբերում են կիբերտարածքին, նույնպես ՅՈՒՆԵՍԿՕ-ի մտահոգության առարկա են:

## Կայուն զարգացում

Միավորված ազգերի կազմակերպության գոյության առաջին տասնամյակների ընթացքում շրջակա միջավայրին վերաբերող մտահոգությունները հազվադեպ էին հայտնվում միջազգային օրակարգում: Կազմակերպությունը շեշտը ավելի շատ դնում էր բնական ռեսուրսների շահագործման և օգտագործման վրա՝ փորձելով ապահովել, որպեսզի զարգացող երկրները ի վիճակի լինեն հսկողություն սահմանել իրենց իսկ սեփական բնական ռեսուրսների վրա: 1960-ականների ընթացքում կնքվեցին որոշ համաձայնագրեր ծովերի աղտոտման վերաբերյալ (հատկապես նավթի արտանետման հետևանքով): Բայց շրջակա միջավայրի՝ համաշխարհային մասշտաբով դիտվող վատթարացումը 1970-ականներից ի վեր ստիպեց միջազգային հանրությանը հարաճուն մտահոգություն ցուցաբերել մեր մոլորակի շրջակա միջավայրի և մարդկային բարեկեցության վրա զարգացման ազդեցության կապակցությամբ: ՄԱԿ-ը առաջատար կազմակերպություն է, որը մտահոգություն է արտահայտում շրջակա միջավայրի խնդիրների առնչությամբ և կողմնակից է «կայուն զարգացման» հայեցակարգին:

Տնտեսական զարգացման և շրջակա միջավայրի վատթարացման առնչվող հարաբերակցության հարցն առաջին անգամ միջազգային օրակարգում դրվեց 1972թ.՝ ՄԱԿ-ի *Մարդու շրջապատող միջավայրի հարցերով համաժողովի* ընթացքում, որը կայացավ Ստոկհոլմում: Համաժողովից հետո կառավարությունները հիմնադրեցին **ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիրը՝ (ՄԱՇՄԾ)**, որն այսօր շարունակում է գործել որպես շրջակա միջավայրի հարցերով առաջատար գլոբալ գործակալություն:

---

### Երկրագնդի գագաթաժողով

*Միավորված ազգերի Բնակչության և զարգացման համաժողովի ընթացքում (Ռիո դե Ժանեյրո, Բրազիլիա), որը հայտնի է նաև որպես Երկրագնդի գագաթաժողով, աշխարհի ազգերը համաձայնեցին զարգացմանն առնչվող այն մոտեցմանը, որն ապահովելով տնտեսական ու սոցիալական զարգացումը՝ պահպանում է շրջակա միջավայրը, ինչպես նաև ընդհանուր, բայց զանազանված կարիքների և պատասխանատվությունների հիման վրա Երկրագնդի համար առողջ ապագա ապահովելու նպատակով զարգացող և ինդուստրիալիզացված երկրների միջև համընդհանուր գործընկերության հիմք դրեցին:*

*Գագաթաժողովը շրջակա միջավայրին և զարգացմանն առնչվող խնդիրները բարձրացնելու համար ընդունեց Գործողությունների ծրագիր՝ Օրակարգ 21-ը, Ռիոյի հռչակագիրը շրջակա միջավայրի ու զարգացման վերաբերյալ, որը սահմանում է պետությունների իրավունքներն ու պարտավորությունները, և անտառային սկզբունքները վերաբերող հայտարարությունը, որն ուղենիշ է աշխարհի անտառների կայուն կառավարման համար: Աշխարհի ղեկավարները ստորագրեցին կոնվենցիաներ կլիմայի փո-*

*փոխության և կենսաբանական բազմազանության մասին:*

*Ռիոյի հռչակագիրն այլ խնդիրների շարքում ընդգծում է նաև, որ գիտական անորոշությունը չպետք է դանդաղեցնի շրջակա միջավայրի վիճակի վատթարացման կանխարգելմանն ուղղված միջոցառումների անցկացումը, երբ լուրջ և անշրջելի վտանգներ են սպառնում: Հռչակագիրը նշեց նաև, որ աղքատության վերացումն ու ապրելու գլոբալ չափանիշներին վերաբերող անհավասարության կրճատումը «պարտադիր են» կայուն զարգացման համար, և զարգացող երկրները վերահաստատում են իրենց պարտավորությունը, որը նրանք միջազգայնորեն կրում են կայուն զարգացման համար այն համատեքստում, որ իրենց հասարակությունները շարունակում են մնալ շրջակա միջավայրի հարցերի ճնշման տակ, և նրանք ղեկավարում են տեխնոլոգիաներ ու ֆինանսական ռեսուրսներ:*

*Գագաթաժողովը կայուն զարգացման այլ առանցքային ոլորտներում կարևոր ու տարբեր ձեռնարկումների կոչ արեց: Դրանք ներառեցին փոքր կղզիների վրա զարգացող երկրների վերաբերյալ գլոբալ համաժողովը, անապատացման վերաբերյալ կոնվենցիան և ձկների ցեղատեսակների անկանոն տեղաշարժի մասին համաձայնագիրը:*

*1997թ. Գլխավոր ասամբլեան Օրակարգ 21-ի իրականացման հարցերին նվիրված հատուկ նստաշրջան գումարեց (Երկրագնդի գագաթաժողով+5): Անդամ երկրները տարբեր մոտեցումներ ցուցաբերեցին, մասնավորապես այն հարցի առնչությամբ, թե ինչպես գլոբալ մասշտաբով ֆինանսավորել կայուն զարգացումը, բայց և ընդգծեցին, որ երբեք Օրակարգ 21-ի գործնական իրականացումն այսպես հրատապ չի եղել: Այդ կապակցությամբ նստաշրջանի վերջնական փաստաթղթով հետևյալ միջոցառումները իրականացնելու առաջարկություններ արվեցին. իրավական առումով պարտավորեցնող ծրագրերի ընդունում, որոնց նպատակն է կլիմայի փոփոխությանը հանգեցնող վնասակար գազերի մթնոլորտ արտանետման քանակի կրճատումը, ավելի արագ անցումը էներգիայի արտադրանքին, բաժանման և օգտագործման կայուն եղանակները և կենտրոնացումը աղքատության վերացման կայուն զարգացման նախապայմանի վրա:*

*Երկրագնդի գագաթաժողովի հետագա գործողությունների տասնամյակի հանդիպումը կկայանա 2002թ.:*

---

1973թ. Միավորված ազգերը հիմնադրեցին **Սուդանո-Սահելյան գրասենյակը (ՍՍԳ)**, որի նպատակն էր ակտիվացնել Արևմտյան Աֆրիկայում անապատացման տարածման կանխարգելմանն ուղղված ջանքերը: Գործընթացը դանդաղ էր ընթանում, այնուհանդերձ հաջողվեց շրջակա միջավայրին վերաբերող մտահոգության խնդիրները ինտեգրել ազգային տնտեսական պլանավորման ու որոշում կայացնելու գործընթացի հետ: Ընդհանուր առմամբ շրջակա միջավայրի վիճակը շարունակում էր վատթարանալ, և այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են գլոբալ տաքացումը և ջրի աղտոտումը, ավելի լուրջ բնույթ ստացան, միաժամանակ բնական ռեսուրսների ոչնչացումը հասավ տագնապալի մակարդակների:

1980-ական թվականները անդամ երկրների միջև ընթացող կարևոր բանակցությունների ականատես դարձան: Դրանք նվիրված էին շրջակա միջավայրի խնդիրներին, ներառյալ այն համաձայնագրերը, որոնք պաշտպանում են օզոնային շերտը և վերահսկում են թունավոր թափոնների շարժումը: Շրջակա միջավայրի և զարգացման հարցերով համաշխարհային հանձնաժողովը, որը ստեղծվել է Գլխավոր ասամբլեայի կողմից 1983թ., նոր ըմբռնում ու հրատապության զգայունություն ցուցաբերեց զարգացման նոր տեսակի անհրաժեշտության առնչությամբ, այն զարգացման, որը ներկա ու ապագա սերունդների բա-

մայ տնտեսական բարեկեցություն կապահովի՝ պաշտպանելով շրջակա միջավայրի այն ռեսուրսները, որոնցից է կախված զարգացման ամբողջ գործընթացը: Հանձնաժողովի՝ 1987թ. Գլխավոր քարտուղարին ներկայացված զեկույցում առաջ քաշվեց *կայուն զարգացման* գաղափարը՝ որպես այլընտրանքային մոտեցում այն հայեցակարգին, որը հիմնված է սկզբնապես առանց սահմանափակումների տնտեսական աճի վրա:

Զեկույցը քննարկելուց հետո Գլխավոր ասամբլեան շրջակա միջավայրի և զարգացման հարցերին նվիրված ՄԱԿ-ի համաժողով գումարեց:

Այսօր շրջակա միջավայրը պաշտպանելու և պահպանելու անհրաժեշտության իրազեկությունը վառորեն արտացոլված է Միավորված ազգերի կազմակերպության գործունեության բոլոր ոլորտներում: 1972թ. ի վեր կատարված փոփոխությունների աշխատանքի շնորհիվ ստեղծվեցին նոր մեխանիզմներ: Միավորված ազգերի կազմակերպության, ոչ կառավարական կազմակերպությունների, գիտական շրջանակների և մասնավոր սեկտորի միջև ընթացող դինամիկ գործընկերությունը շրջակա միջավայրի հրատապ խնդիրների լուծման համատեքստում նոր գիտելիքներ ու կոնկրետ գործողություններ է բերում բոլոր ազգերի համար: ՄԱԿ-ի կարծիքով, շրջակա միջավայրի պաշտպանության կարիքը պետք է տնտեսական և սոցիալական զարգացման ցանկացած գործունեության անբաժանելի մասը լինի: Հնարավոր չէ հասնել սոցիալական և տնտեսական զարգացման նպատակներին, եթե շրջակա միջավայրը պաշտպանված չէ, եթե դրան առնչվող ծառայությունները չեն պահպանվում:

## Օրակարգ 21

Կառավարությունները պատմական քայլ կատարեցին մոլորակի ապագան պաշտպանելու ուղղությամբ, երբ ընդունեցին Երկրագնդի գագաթաժողովի *Օրակարգ 21-ը*՝ գլոբալ գործողությունների համապարփակ ծրագիրը կայուն զարգացման բոլոր ոլորտների համար:

*Օրակարգ 21-ում* կառավարությունները գործողություններին անհրաժեշտ մանրամասն ծրագիր նախագծեցին, որը կարող է հեռացնել աշխարհը տնտեսական զարգացման ներկա անկայուն մոդելից և իրականացնել այն գործողությունները, որոնք կպաշտպանեն և կբարելավեն շրջակա միջավայրի այն ռեսուրսները, որոնցից են կախված աճն ու զարգացումը: Գործողությունների ոլորտները ներառում են միջավայրի պաշտպանության հետևյալ ուղղությունները. պայքար անտառահատման դեմ, հողի կորուստ և անապատացում, օդի և ջրի աղտոտման կանխում, ձկների ցեղատեսակների վերացում և ոչնչացում, թունավոր թափոնների անվտանգ կառավարում: *Օրակարգ 21-ն* արծարծում է նաև զարգացման ուղիները, որոնք լուրջ ազդեցություն են գործում միջավայրի վրա: Դրանք են՝ չքավորությունն ու ներքին պարտքը զարգացող երկրներում, արտադրության և սպառման անկայուն ձևերը, ժողովրդագրական սթրեսն ու միջազգային էկոնոմիկայի կառուցվածքը:

Գործողությունների ծրագիրն ուղիներ է առաջարկում կայուն զարգացման ապահովելու գործում այնպիսի հիմնական խմբերի ունեցած դերի ամրապնդ-

ման համատեքստում, ինչպիսիք են կանայք, արհմիությունները, գյուղացիները, երեխաները և երիտասարդները, բնիկ ժողովուրդները, գիտական շրջանակները, տեղական իշխանությունները, ձեռներեցները, արտադրության և ոչ կառավարական կազմակերպությունները:

ՄԱԿ-ին խնդրել են օժանդակել *Օրակարգ 21*-ն ուժի մեջ դնելու ազգային գործողություններին: ՄԱԿ-ը քայլեր է ձեռնարկել կայուն զարգացման հայեցակարգը համապատասխան քաղաքականություններին և ծրագրերին ինտեգրելու առնչությամբ: Եկամուտ բերող նախագծերն ավելի ու ավելի հաշվի են առնում շրջակա միջավայրի հետևանքները: Զարգացման օժանդակության ծրագրերն առավելապես ուղղված են կանանց հարցերին, հաշվի է առնվում նրանց կենտրոնական դերն ապրանքների, պարենի, ծառայությունների արտադրման գործում, ինչպես նաև նրանց հոգատարությունը շրջակա միջավայրի հանդեպ: Աղքատության վերացման քաղաքական և սոցիալական առաջնայնությանը հավելյալ կարևորություն է վերագրվում՝ ընդունելով այն փաստը, որ աղքատության վերացումն ու շրջակա միջավայրի որակը սերտորեն փոխկապակցված են:

Գլխավոր ասամբլեան *Օրակարգ 21*-ը համաշխարհային մակարդակով ուժի մեջ դնելուն առնչվող իր գործունեությունը երաշխավորելու նպատակով 1992թ. **Կայուն զարգացման հարցերով հանձնաժողով** հիմնադրեց: Տնտսոցխորհրդի՝ 53 անդամից բաղկացած այդ ֆունկցիոնալ հանձնաժողովը վերահսկում և վերլուծում է *Օրակարգ 21*-ի ու Երկրագնդի գագաթաժողովի այլ համաձայնությունների իրականացմանն առնչվող գործընթացի վերաբերյալ, ինչպես նաև աջակցում և խրախուսում է կառավարությունների, ձեռներեցների, արտադրողների և այլ ոչ կառավարական խմբերի այն գործունեությունը, որի նպատակը կայուն զարգացման համար անհրաժեշտ սոցիալական և տնտեսական փոփոխությունների իրականացումն է: Հանձնաժողովը ՄԱԿ-ի շրջանակներում օգնում է համակարգել շրջակա միջավայրին ու զարգացմանն առնչվող գործունեությունը:

ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական հարցերով վարչությունն իր **Կայուն զարգացման բաժնի** միջոցով տրամադրում է Հանձնաժողովի քարտուղարություն և կայուն զարգացման իրականացումը ապահովելու նպատակով արձագանքում է քաղաքականությանն առնչվող խնդիրներին: Այն նաև տրամադրում է վերլուծական, տեխնիկական և տեղեկատվական ծառայություններ, որոնցից առանցքայինը կառավարությունների, ոչ կառավարական ու միջազգային դերակատարների միջև գործընկերության ամրապնդումն է:

---

## Մարդու վարքագծի փոփոխություն

*Ամբողջ աշխարհում կայուն զարգացման կայացումը մեծապես կախված է արտադրության և սպառման եղանակների փոփոխությունից՝ ինչ ենք մենք արտադրում, ինչպես է այն արտադրվում, և որքան ենք մենք սպառում: Այդ եղանակների փոփոխության ուղիների որոնման հարցը, հատկապես ինդուստրիալիզացված երկրներում, առաջին անգամ միջազգային օրակարգում ընդգրկվեց Երկրագնդի գագաթաժողովի ժամանակ:*

*Դրանից հետո Կայուն զարգացման հարցերով հանձնաժողովը, համագործակցելով Միավորված ազգերի համակարգի շրջանակների և դրանցից դուրս կազմակերպու-*

*թյունների հետ, մշակեց աշխատանքային ծրագիր, որի նպատակն էր փոխել անհատ սպառողների, տնային տնտեսությունների, ինդուստրիալ կոնցեռնների, բիզնեսների և կառավարությունների վարքագիծը:*

*Խնդրի առանցքն այն փաստն է, որ ավելի քիչ ռեսուրսների օգտագործումը և սպառումը պարզապես ավելի լավ բիզնես է: Այն դրամ է տնտեսում և ավելի բարձր եկամուտներ բերում: Այն նաև պաշտպանում է շրջակա միջավայրը՝ պահպանելով բնական ռեսուրսները և ավելի քիչ աղտոտում առաջացնելով: Այդ կերպ մենք պահպանում ենք մոլորակը ապագա սերունդների օգտագործման և բարեկեցության համար:*

*Հանձնաժողովի աշխատանքային ծրագիրն այդ ոլորտում կենտրոնանում է սպառման և արտադրության հետևյալ նախագծված միտումների վրա. ազդեցությունը զարգացող երկրների վրա, ներառյալ առևտրի հնարավորությունները, քաղաքականության մշակող գործիքների արդյունավետության գնահատումը, երկրների առաջընթացը նրանց ժամանակային առումով սահմանափակող պարտականությունների միջոցով, սպառողների պաշտպանության հարցերով Միավորված ազգերի ուղենիշների տարածումը և վերանայումը: Այդ խնդիրների շուրջ տարվող քննարկումներին մասնակցեցին բիզնեսի և արտադրության, կառավարությունների, միջազգային կազմակերպությունների, ակադեմիական շրջանակների և ՈԿԿ-ների ներկայացուցիչներ:*

---

**Կայուն զարգացման ֆինանսավորում**

Երկրագնդի գագաթաժողովի ընթացքում համաձայնություն ձեռք բերվեց այն մասին, որ *Օրակարգ 21*-ի հիմնական ֆինանսավորումը կիրականացվի յուրաքանչյուր երկրի պետական և մասնավոր սեկտորներից: Այնուհանդերձ կայուն զարգացման պրակտիկան իրականացնելու և համընդհանուր շրջակա միջավայրը պաշտպանելու նպատակով անհրաժեշտ համարվեց զարգացող երկրների ջանքերին աջակցելու համար լրացուցիչ արտաքին ֆինանսավորում կատարել:

**Շրջակա միջավայրի գլոբալ հաստատությունը (ՇՄԳՀ)**, որը հիմնադրվեց 1991թ. և վերակառուցվեց 1994թ., երկու անգամ այդ ֆոնդերը անօրինելու լիազորություն ստացավ: 1994թ. 34 երկրներ պարտավորվեցին հաստատությանը փոխանցել 2 միլիարդ դոլար, իսկ 1998թ. 36 երկրներ պարտավորվեցին փոխանցել ևս 2.75 միլիարդ դոլար: ՇՄԳՀ-ի ֆոնդերը հիմնական միջոցներ են, որոնցով իրականացվում են Կենսաբազմազանության և Կլիմայի փոփոխության մասին կոնվենցիաների նպատակները:

ՇՄԳՀ-ի նախագծերը, որոնք սկզբունքորեն իրականացվում են ՄԱԶԾ-ի, ՄԱՇՄԾ-ի և Համաշխարհային բանկի կողմից, պահպանում և կայուն կերպով օգտագործում են կենսաբազմազանությունը, բարձրացնում են համընդհանուր կլիմայափոխության հարցերը, կանխում են միջազգային ջրային տարածքների աղտոտումը, արտադրությունից աստիճանաբար հանում են այն նյութերը, որոնք վնասում են օզոնային շերտը: Հողի քայքայման կասեցման լուրջ խնդիրը նույնպես ենթակա է ֆինանսավորման:

Ներկայումս ՇՄԳՀ-ն ֆինանսավորում է մոտ 700 նախագծեր 140 զարգացող և անցումային տնտեսություն ունեցող երկրներում: Նա նախագծերի համար արդեն տրամադրել է 3 միլիարդ դոլար և համաֆինանսավորման եղանակով հավաքել է ևս 8 միլիարդ օգնություն ստացող կառավարություններից, զարգացման միջազգային գործակալություններից, մասնավոր արդյունաբերությունից և ՈԿԿ-ներից:

## Գործողություն շրջակա միջավայրի պաշտպանության համար

Չնայած Միավորված ազգերի ամբողջ համակարգը տարբեր ճանապարհներով ներգրավված է շրջակա միջավայրի պաշտպանության գործընթացում, նրա առաջատար գործակալությունն այս ոլորտում **Շրջակա միջավայրի ծրագիրն է (ՄԱԿՇՄԾ)**: Ստեղծված լինելով որպես շրջակա միջավայրի պաշտպանության հարցերով զբաղվող Միավորված ազգերի համակարգի խիղճ՝ ՄԱԿՇՄԾ-ն գնահատում է աշխարհում շրջակա միջավայրի դրությունը և բացահայտում է այն խնդիրները, որոնք միջազգային համագործակցություն են պահանջում. օգնում է շրջակա միջավայրի մասին միջազգային օրենսդրության մշակմանը և Միավորված ազգերի համակարգի ծրագրերի մեջ, սոցիալական և տնտեսական քաղաքականությունում շրջակա միջավայրին վերաբերող խնդիրների ինտեգրմանը:

ՄԱԿՇՄԾ-ն օգնում է լուծել այն խնդիրները, որոնք չեն կարող ի կատար ածվել առանձին երկրների կողմից: Նա ֆորում է հավաքում կոնսենսուսի հասնելու և միջազգային համաձայնագրեր կազմելու համար, որոնց մեջ ձգտում է լայնացնել բիզնեսի և արդյունաբերության, գիտական և ակադեմիական համայնքի, ոչ կառավարական կազմակերպությունների, համայնքային խմբերի և այլոց մասնակցությունը՝ կայուն զարգացմանը հասնելու համար:

Շրջակա միջավայրի մասին գիտությանն առնչվող գիտելիքների և տեղեկատվության խրախուսումը ՄԱԿՇՄԾ-ի գործառույթներից մեկն է: Շրջակա միջավայրի մասին տեղեկատվության հետազոտությունները ու սինթեզը, տարածքային և գլոբալ մակարդակներով ՄԱԿՇՄԾ-ի կողմից օժանդակված և կոորդինացված, *«Շրջակա միջավայրի վիճակի»* վերաբերյալ բազմազան հաշվետվությունների արդյունքն է. հանրահայտել և ստեղծել է համաշխարհային տեղեկատվություն շրջակա միջավայրի վերաբերյալ ի հայտ եկող խնդիրների մասին, որոնցից մի քանիսը շրջակա միջավայրին նվիրված մի քանի կոնվենցիաների վերաբերող միջազգային բանակցությունների հիմք են դարձել:

ՄԱԿՇՄԾ-ն Կենտրոնների համաշխարհային ցանցի միջոցով, որոնք կազմում են **Պաշարների գլոբալ տեղեկատվական շտեմարան (ՊԳՏՇ)**, խրախուսում և համակարգում է հնարավորին չափ լավագույն տվյալների և տեղեկատվության հավաքումն ու տարածումը տարածաշրջանային մակարդակով: ՄԱԿՇՄԾ - INFOTERRA-ն համընդհանուր ցանց է շրջակա միջավայրին վերաբերող տեղեկատվության փոխանակման և գիտական ու տեխնիկական հարցումների պատասխանների ծառայությունների համար: Այն բաղկացած է ազգային կոնտակտային կենտրոններից և տրամադրում է շրջակա միջավայրին վերաբերող ինտեգրացված տեղեկատվական ծառայություններ ավելի քան 175 երկրներում:

ՄԱԿՇՄԾ-ն գործում է օվկիանոսների և ծովերի պաշտպանության ուղղությամբ և համաձայն *Ծովերի տարածաշրջանային ծրագրի*, որի մեջ մտնում են ավելի քան 140 երկրներ, խրախուսում է շրջակա միջավայրի համար անվնաս ծովային պաշարների օգտագործումը: Այդ ծրագրի նպատակն է ծովային և ջրային ընդհանուր պաշարների պաշտպանության ապահովումը 13 կոնվենցիաների կամ Գործողությունների ծրագրերի միջոցով: Դա ՄԱԿՇՄԾ-ի հիմնա-

կան հաջողված ծրագրերից է: Տարածաշրջանային համաձայնագրերն ու գործողությունների ծրագրերը, որոնց համար ՄԱԿՇՄԾ-ը քարտուղարություն ունի, ընդգրկում են Արևելյան Աֆրիկան, Արևմտյան ու Կենտրոնական Աֆրիկան, միջերկրական երկրները, Արևելյան Ասիայի ծովերն ու հյուսիսարևմտյան խաղաղօվկիանոսյան երկրները:

Մերձափնյա և ծովային տարածքները զբաղեցնում են Երկրագնդի մակերեսի մոտ 70 %-ը և կենսական նշանակություն ունեն մոլորակի կյանքի աջակցության համակարգի համար: Աղտոտման մեծ մասն առաջանում է արդյունաբերական թափոններից, հանքարդյունաբերությունից, գյուղատնտեսական գործունեությունից և շարժական փոխադրամիջոցների արտանետումներից, որոնցից մի մասը տարածվում է հազարավոր մղոններով: ՄԱԿՇՄԾ-ի հովանավորության ներքո անցկացվել են բանակցություններ, որոնց արդյունքում 1995թ. 110 կառավարություններ ընդունեցին *Գործողությունների գլոբալ ծրագիր ցամաքային տարածքներում գործունեության հետևանքներից ծովային միջավայրի պաշտպանության վերաբերյալ:* Դա գործարկված միջազգային ջանքերի հիմքն է օվկիանոսների, գետախառնուրդների և մերձափնյա ջրերի՝ ցամաքային տարածքներում մարդու գործունեության պատճառով առաջացած օդի աղտոտումից պաշտպանությունն ապահովելու համար: Ծրագիրը Հաագայում տեղակայված համակարգող գրասենյակի հետ համատեղ պլաններ է նախագծում ծովային միջավայրին սպառնացող թերևս ամենալուրջ վտանգների դեմ պայքարելու ուղղությամբ: Խոսքը քիմիկատների և աղտոտիչների հողի ու ծովերի մեջ կեղտաջրերի արտանետումների մասին է:

ՄԱԿՇՄԾ-ի Փարիզում գտնվող **Տեխնոլոգիայի, արդյունաբերության և էկոնոմիկայի բաժանմունքը** կարևոր նշանակություն ունի Միավորված ազգերի գործունեության համար՝ ուղղված կառավարություններում, արդյունաբերական ու բիզնեսի ոլորտներում որոշում կայացնողների խրախուսմանը, այն նկատառումով, որ նրանք այնպիսի քաղաքականություն, ռազմավարություն ու գործելակերպ որդեգրեն, որոնք ավելի մաքուր ու անվտանգ են, ավելի արդյունավետ են օգտագործում բնական ռեսուրսները և կրճատում են մթնոլորտի աղտոտման վտանգը մարդկանց և շրջակա միջավայրի համար: Բաժանմունքը նպաստում է կանաչ տեխնոլոգիաների փոխանցմանը, օգնում է երկրներին ստեղծել կադրային բազա քիմիկատների անվնաս կառավարման և աշխարհով մեկ քիմիական անվտանգությունն ապահովելու համար, աջակցում է օզոնային շերտը քայքայող նյութերի վերացման գործընթացին զարգացող և անցումային էկոնոմիկա ունեցող երկրներում և աշխատում է մասնավոր սեկտորի հետ շրջակա միջավայրին վերաբերող ծրագրերն ու վերլուծությունները ընկերության գործունեության, պրակտիկայի և արտադրանքի մեջ ինտեգրելու ուղղությամբ:

**ՄԱԿՇՄԾ-ի քիմիկատներին** առնչվող ծրագիրը տեղեկատվությունը ստանում է **Պոտենցիալ թունավոր քիմիկատների միջազգային ռեգիստրից (IRPTC)**, որը գործում է այն մարդկանց համար, որոնք այդ տեղեկությունների օգտագործման կարիք ունեն: Այսօր օգտագործվում են մոտ 70 000 քիմիկատներ, իսկ **IRPTC**-ը կենսական տեղեկատվություն է տրամադրում քիմիական անվտանգության վերաբերյալ: Ավելի քան 8 հազար քիմիկատներին առնչվող տեղեկությունները

անվճար տրամադրվում են 100 երկրների, իսկ հարց - պատասխանի ծառայության միջոցով տարեկան վարվում են հազարավոր խնդրանքների վերաբերյալ գործեր:

ՄԱԿԲԾ-ն, համագործակցելով ՊԳԿ-ի հետ, նպաստեց *Նախնական տեղեկացվածության հիմքի վրա համաձայնեցված ընթացակարգերին վերաբերող միջազգային առևտրում որոշ վտանգավոր քիմիկատների և պեստիցիդների Ռոտերդամի կոնվենցիայի (1998թ.)* բանակցությունների գործընթացին: Կոնվենցիան արտահանող երկրներին լիազորություն է տալիս որոշելու, թե ինչ քիմիկատներ են իրենք ցանկանում ստանալ և բացառելու այնպիսիները, որոնք չեն կարող անվտանգ կառավարել:

Տարիներ շարունակ ՄԱԿԲԾ-ն այլ միջազգային համաձայնությունների շուրջ վարվող բանակցությունների նախաձեռնողն է եղել, որոնք ձևավորում են ՄԱԿ-ի գործունեության առանցքը՝ մոլորակին հասցվող վնասի կասեցումն ու վերացումը: Մոնրեալի պայմանական արձանագրության (1987թ.) և դրա լրացուցիչ փոփոխությունների նպատակն է պահպանել օզոնային շերտը բարձր մթնոլորտում: *Վտանգավոր թափոնների և դրանց կառավարման հսկողության Բազելի կոնվենցիան* (1989թ.) նվազեցրեց թունավոր թափոններից առաջացող աղտոտման վտանգը: *Վտանգված տեսակների միջազգային առևտրին վերաբերող կոնվենցիան (1973թ.)* համընդհանուր ճանաչում է ձեռք բերել կենդանի բնության պաշարների առևտուրը վերահսկելու գործում ունեցած հաջողությունների շնորհիվ: ՄԱԿԲԾ-ն օգնեց աֆրիկյան կառավարություններին մշակելու *Լուսակայի համաձայնագիրը պայքարելու համատեղ գործողությունների մասին, որոնք ուղղված են կենդանական ու բուսական աշխարհում անօրինական առևտրի դեմ (1994թ.)*: Ժամանակավորապես նաև Քարտուղարություն է գործում: ՄԱԿԲԾ-ն օգնեց նաև բանակցելու ու իրականացնելու Կենսաբազմազանության, Անապատացման ու կլիմայի փոփոխության մասին կոնվենցիաները: Ներկայումս նա քարտուղարություն ունի, որը գործում է բոլոր երեք կոնվենցիաների համար:

ՄԱԿԲԾ-ն ներկայումս նպաստում է իրավաբանորեն պարտավորեցնող միջազգային համաձայնագրի ստեղծման բանակցությունների գործընթացին, որը կկրճատի ու կվերացնի որոշ օրգանական աղտոտիչների արտանետումը: Դրանք շատ թունավոր պեստիցիդներն ու արդյունաբերական քիմիկատներն են, որոնք շատ շարժունակ են և կուտակվում են պարենի մեջ:

## Կլիմայի փոփոխություն և գլոբալ ջերմացում

Ակնհայտ է, որ մարդու գործունեությունը նպաստում է մթնոլորտում «ջերմոցային գազերի» ստեղծմանը, որի հետևանքով ընդհանուր ջերմաստիճանն աստիճանաբար բարձրանում է: Մասնավորապես ածխածնի երկօքսիդն արտադրվում է այն ժամանակ, երբ բրածո վառելիքը վառվում և վերածվում է ընդհանուր էներգիայի, կամ երբ անտառները հատվում և վառվում են:

Կլիմայի փոփոխության հարցերով միջկառավարական փորձագետների խմբի համաձայն, կլիմայի մոդելները կանխատեսում են, որ գլոբալ ջերմաստիճա-

նը մինչև 2100թ. կբարձրանա 1-ից 3.5 աստիճանով: Սա վերջին 10 հազար տարվա ընթացքում արձանագրված ամենամեծ կլիմայական փոփոխությունն է՝ հնարավորինս էական ազդեցությամբ գլոբալ շրջակա միջավայրի վրա:

Գլոբալ տաքացմանը դիմակայելու նպատակով Ռիոյում մշակվեց և ստորագրվեց *ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության 1992թ. շրջանակային կոնվենցիան*, որի համաձայն զարգացած երկրները համաձայնվեցին մինչև 2000թ. կրճատել ածխածնի դիօքսիդի և այլ «ջերմոցային» գազերի արտանետման մակարդակը և հասցնել այն 1990թ. մակարդակին: Այդ երկրները, որոնց ածխածնի դիօքսիդի տարեկան համատեղ արտանետումը կազմում է 60%, համաձայնվեցին նաև զարգացող երկրներին տեխնոլոգիաներ ու տեղեկատվություն փոխանցել, որոնք կարող են օգնել նրանց հաղթահարել կլիմայի փոփոխության խնդիրները: 2000թ. դեկտեմբերի դրությամբ 186 երկրներ վավերացրել են կոնվենցիան:

ՄԱԿ-ի՝ կլիմայի փոփոխությանն առնչվող բանակցությունները հաջողությամբ պսակվեցին **Կլիմայի փոփոխության հարցերով միջկառավարական փորձագետների խմբի** աշխատանքի շնորհիվ, որը կազմակերպվեց 1988թ. ՄԱՇՄԾ-ի և ՀՕԿ-ի համատեղ ջանքերով: Փորձագետների խումբը 2500 առաջատար գիտնականների ու փորձագետների համաշխարհային ցանց է, որը վերլուծում է խնդրին վերաբերող գիտական հետազոտությունները: 1989թ. հայտնագործությունն այն մասին, որ մարդու գործունեությունը կարող է փոփոխություններ առաջացնել գլոբալ կլիմայի համակարգում, Կլիմայի փոփոխության կոնվենցիայի ստեղծման բանակցությունների սկիզբ դարձավ: Մինչև 1995թ. նոր և ավելի հզոր համակարգչային մոդելների հնարավորությունների առկայության պայմաններում խումբը եկավ այն եզրահանգման, որ «նկատվում է մարդու ազդեցությունը գլոբալ կլիմայի վրա»:

Կլիմայական փոփոխության հարցերով գիտնականների խմբի ներկայացված տվյալները հստակ են՝ 1992թ. համար նախատեսված նպատակը, եթե անգամ իրականացվի ժամանակին, չի կանխի գլոբալ տաքացման գործընթացն ու դրա հետ կապված խնդիրները: Անհրաժեշտ կլինեն ցուցանիշների լրացուցիչ կրճատումներ: 1997թ. Կոնվենցիան վավերացրած երկրները հավաքվեցին Կիոտոյում (Ճապոնիա) և համաձայնության եկան իրավաբանորեն պարտավորեցնող *Արձանագրության* անհրաժեշտության առնչությամբ, որի համաձայն զարգացած երկրները պետք է 2008-2012թթ. ժամանակահատվածում ջերմոցային էֆեկտ առաջացնող վեց գազերի համատեղ արտանետումների մակարդակը 1990թ. համեմատությամբ կրճատեն 5,2%-ով:

**Օզոնային շերտի քայքայում**

Օզոնային շերտը բարձր մթնոլորտի գազի բարակ շերտ է (12-ից 45 կիլոմետր հողի մակերեսից), որը պաշտպանում է Երկրագնդի մակերեսն արևի ուլտրամանուշակագույն ճառագայթներից: Հայտնի է, որ ուլտրամանուշակագույն ճառագայթման չափից ավելի ազդեցությունը մաշկի քաղցկեղ է առաջացնում և անկանխատեսելի վնաս է պատճառում բույսերին, մթերքին և գլոբալ էկոհամակարգին:

ՄԱՇՄԾ-ն օգնեց բանակցություններ վարել և ներկայումս իրականացնում է

պատմական նշանակություն ունեցող *Օզոնային շերտի պաշտպանության մասին Վիեննայի կոնվենցիան (1985թ.)* և *Մոնրեալի արձանագրությունն (1987թ.)* ու դրա փոփոխությունները: Այդ համաձայնագրերի համաձայն, զարգացած երկրները արգելեցին քլորածխածնային քիմիկատների արտադրությունն ու վաճառքը, որոնք քայքայում են օզոնային շերտը: Զարգացող երկրները պետք է կանգնեցնեն արտադրությունը մինչև 2010 թվականը: Կազմվել է ժամանակացույց օզոնային շերտը քայքայող նյութերի վերացման համար:

1998թ. աշխարհի ավելի քան 200 գիտնականների կողմից անցկացված ՄԱԾՄԾ-ԱՀԿ համատեղ գնահատում, վերահաստատեց Մոնրեալի արձանագրության արդյունավետությունը: Այդ գնահատման համաձայն, օզոնային շերտը քայքայող բաղադրամասերի ընդհանուր քանակը մթնոլորտի ամենացածր շերտերում 1994թ. ամենաբարձրն էր, իսկ ներկայումս աստիճանաբար նվազում է: Եթե չիրականացվեին Արձանագրությամբ պահանջվող համապատասխան միջոցները, օզոնային շերտի քայքայումը կհասներ շատ ավելի լուրջ սահմանների և կշարունակվեր տասնամյակների ընթացքում: Սակայն, չնայած այն փաստին, որ Արձանագրությունն արդյունավետ գործում է օզոնային շերտերը քայքայող նյութերի օգտագործման ու արտանետման կրճատման ուղղությամբ, առկա է մթնոլորտի մեջ արդեն իսկ արտանետված քիմիկատների ազդեցությունը և առաջիկա տարիներին քայքայումը կշարունակվի:

Գիտնականների կանխատեսմամբ Երկրագունդը պաշտպանող օզոնի շերտը մոտ ժամանակներս կսկսի վերականգնվել և լրիվ կվերականգնվի մինչև 2050թ., հաշվի է առնվել այն հանգամանքը, որ Արձանագրությունը շարունակում է խիստ պարտադիր դեր կատարել:

**Փոքր կղզիներ**

Մոտ 40 փոքր զարգացող երկրներ և տարածքներ ընդհանուր բնութագրեր ունեն, ներառյալ բնական ռեսուրսների սակավությունը, տնտեսական մեկուսացվածությունը, հողային և ծովային շրջակա միջավայրի վատթարացումը և կլիմայի փոփոխության հետևանքով ծովի մակարդակի հնարավոր բարձրացումը:

Երկրագնդի գագաթաժողովի խնդրանքով ՄԱԿ-ը փոքր կղզիներում գտնվող զարգացող երկրների կայուն զարգացման հարցերին նվիրված համաշխարհային համաժողով գումարեց (Բարբադոս, 1994թ.): Համաժողովը հատուկ ընդգծեց այդ պետությունների տնտեսական ու բնապահպանական խոցելիությունը և ընդունեց Գործողությունների ծրագիր՝ սահմանելով, թե ինչ քաղաքականություն, ծրագրեր ու միջոցառումներ պետք է իրականացվեն ազգային և միջազգային մակարդակներով այդ պետությունների կայուն զարգացմանն աջակցելու համար:

Գլխավոր ասամբլեան՝ որպես համաժողովի հետագա գործողությունների միջոցառում, 1999թ. հատուկ նստաշրջան ունեցավ: Այն քննարկեց Գործողությունների ծրագրի իրականացմանն առնչվող առաջընթացը և առաջարկություններ ներկայացրեց հրատապ գործողություններ պահանջող առաջնային ոլորտների համար, ինչպես նաև դրանց իրականացման եղանակները:

## Անտառներ

Արդեն մինչև 1995թ. համաշխարհային հանրությունը, որը Երկրագնդի գագաթաժողովի ընթացքում չպարտավորեցնող հայտարարություն ընդունեց «անտառային» սկզբունքների վերաբերյալ, պատրաստ էր քննարկելու, թե ինչ լրացուցիչ միջոցներ են անհրաժեշտ աշխարհի անտառների կայուն զարգացումն ապահովելու համար: Անտառների հարցերով միջկառավարական փորձագետների խումբը, որը ստեղծվել էր Կայուն զարգացման հարցերով հանձնաժողովի կողմից, իր աշխատանքներն ավարտեց 1997թ.՝ ընդունելով մոտ 100 գործողություններ պահանջող հստակ առաջարկություններ անտառների պահպանման, կառավարման ու կայուն զարգացման վերաբերյալ:

Արծարծելով անտառների համար կենտրոնական ֆորում ունենալու շարունակական պահանջին, Երկրագնդի գագաթաժողով + 5 հատուկ նստաշրջանին մասնակցող կառավարությունները հիմնեցին **Անտառների համար միջկառավարական փոքր Ֆորումը**, որի նպատակն էր խրախուսել և վերահսկել այդ առաջարկությունների իրականացումը և քննարկել, թե ինչ անհրաժեշտ միջոցներ, ընդհուպ իրավարարորեն պարտավորեցնող միջազգային համաձայնագրեր են անհրաժեշտ անտառների կայուն զարգացումն ապահովելու համար:

Ֆորումն առաջարկեց գործողությունների իրականացմանն ուղղված առաջարկությունները խրախուսելու նպատակով, որոնք հինգ տարի ընթացող միջկառավարական քննարկումների արդյունք էին, 2000թ. ստեղծել Միավորված ազգերի Ֆորում՝ անտառների հարցերով:

## Անապատացում

ՄԱԾՄԾ-ի հաշվարկներով, Երկրագնդի հողատարածության մեկ քառորդն անապատացման վտանգի տակ է: Այդ երևույթն անմիջականորեն ազդում է ավելի քան 250 միլիոն մարդու վրա, իսկ 100 երկրներում բնակվող ավելի քան 1 միլիարդ մարդկանց կյանքի միջոցները վտանգված են այն պատճառով, որ գյուղատնտեսական հողատարածությունները և արոտավայրերը նվազ արդյունավետ են դառնում: Երաշտը կարող է անապատացում առաջացնել, բայց սովորաբար անապատացման հիմնական պատճառը մարդու գործունեությունն է՝ գյուղկուլտուրաների չափազանց մեծ քանակի աճեցումը, արոտավայրերի համար չափազանց շատ տարածքների օգտագործումը, անտառահատումը, անբավարար ոռոգումը:

*Լուրջ երաշտից կամ անապատացումից տուժած երկրներում, հատկապես Աֆրիկայում ՄԱԿ-ի Անապատացման դեմ պայքարի մասին կոնվենցիան* փորձում է բարձրացնել այդ խնդիրը: Համաձայնագիրը, որի անդամ են 172 երկրներ, անապատացման դեմ պայքարի գործողությունների որոշակի շրջանակ է նախատեսում: Այն կենտրոնանում է հողի բերքատվության, հողի վերականգնման, հողային և ջրային պաշարների պահպանման ու կառավարման խնդիրների վրա: Համաձայնագիրը ընդգծում է բնակչության մասնակցության կարևորությունը և տեղացիների կողմից «բնականոն շրջակա միջավայրի ստեղծման

հնարավորություն», ինչը կօգնի նրանց կասեցնել հողի ոչնչացումը: Համաձայնագիրը տուժած երկրների համար գործողությունների ծրագրերի պատրաստման չափանիշներ է բովանդակում և ոչ կառավարական կազմակերպություններին անմիջական դեր է վերապահում գործողությունների ծրագրերը պատրաստելու և իրականացնելու համար:

ՄԱԿ-ի տարբեր գործակալություններ անապատացման դեմ պայքարի ուղղությամբ օժանդակություն են տրամադրում **Սուդանո-Սահելյան գրասենյակի** միջոցով, որն օգնում է մշակել քաղաքականություն, տրամադրում է տեխնիկական խորհրդատվություն և աջակցում է անապատացման հսկողության ու հողի կառավարմանը վերաբերող ծրագրերին:

Գյուղատնտեսական զարգացման միջազգային հիմնադրամի (Գ-ԶՄՀ) հատուկ ծրագրի համար հավաքվեց 400 միլիոն դոլար, համատեղ ֆինանսավորման միջոցով դրան գումարվեց 350 միլիոն անապատացումով վտանգված 25 աֆրիկյան երկրների համար: Համաշխարհային բանկը կազմակերպում ու ֆինանսավորում է ծրագրեր, որոնց նպատակն է փխրուն հողային տարածքների պաշտպանությունը և դրանց գյուղատնտեսական բերքատվության բարձրացումը կայուն հիմունքների վրա, իսկ ՊԳԿ-ն կառավարություններին բազմաբնույթ գործնական օգնություն տրամադրելու միջոցով խրախուսում է գյուղատնտեսական կայուն զարգացումը:

## Կենսաբազմազանություն, աղտոտում և ձկնորսության չափազանց մեծ ծավալներ

**Կենսաբազմազանությունը** բուսական ու կենդանական տեսակների բազմազանությունն է և անհրաժեշտ է մարդու գոյատևման համար: *ՄԱԿ-ի Կենսաբազմազանության մասին կոնվենցիայի* (որի անդամ են 180 պետություններ) նպատակն է կենդանական ու բուսական կյանքի բազմաբնույթ տեսակների և դրանց բնական միջավայրի պաշտպանությունն ու պահպանությունը: Կոնվենցիան պարտավորեցնում է պետություններին պահպանել կենսաբազմազանությունը, ապահովել դրա կայուն զարգացումը և բնական ռեսուրսներից ստացված եկամուտների արդարացի և հավասար բաշխում կատարել: Գենետիկորեն փոփոխված օրգանիզմների անվնաս օգտագործման ապահովմանը վերաբերող Արձանագրությունն ընդունվեց 2000թ.:

Վտանգված տեսակների պաշտպանությունը պարտադիր է 1973թ. *Վտանգված տեսակների միջազգային առևտրի մասին կոնվենցիայի* համաձայն, որն իրականացվում է ՄԱԾՄԾ-ի կողմից: 151 անդամ երկրներ պարբերաբար հանդիպում են, որպեսզի նորացնեն բուսական և կենդանական տեսակների ապրանքների ցանկը (օրինակ՝ փղոսկրը), որոնք պետք է պաշտպանվեն ըստ ցուցակների կամ դրանց օգտագործումը խստիվ պետք է արգելվի:

**Թթվային անձրևներ:** «Թթվային անձրևները», որոնք առաջանում են արդյունաբերական արտադրությունից արտանետված ծծմբային դիօքսիդից, Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի մեծ մասում էականորեն կրճատվեցին

*1979թ. Օդի անդրսահմանային լայնածավալ աղտոտման մասին կոնվենցիայի* շնորհիվ: Կոնվենցիան, որի անդամն են հանդիսանում 47 պետություններ, իրականացվում է ՍԱԿ-ի Եվրոպայի հարցերով տնտեսական հանձնաժողովի կողմից:

**Վտանգավոր թափոններ և քիմիկատներ:** Ամեն տարի ազգային սահմաններ հատող 3 միլիոն տոննա թունավոր թափոնների հոսքը կարգավորելու նպատակով անդամ պետությունները 1989թ. ընդունեցին *Վտանգավոր թափոնների անդրսահմանային շարժման հսկողության և նրանց ոչնչացման մասին Բազելի կոնվենցիան*, որն իրականացվում է ՄԱՇՄԾ-ի կողմից: Համաձայնագիրը, որին անդամակցում են 142 պետություններ, ամրապնդվեց 1995թ.: Դրա նպատակն էր արգելել թունավոր թափոնների արտահանումը զարգացող երկրներ, որոնք հաճախ տեխնոլոգիա չեն ունենում դրանց անվտանգ ոչնչացման համար:

**Ձկնորսությունը բաց ծովում:** Ձկնորսության չափազանց մեծ ծավալը և կոմերցիոն տեսանկյունից արժեքավոր ձկների տեսակների ոչնչացումը, ինչպես նաև բաց ծովերում ձկնորսության շուրջ հաճախակի դարձած բռնության դեպքերի ի հայտ գալը կառավարություններին ստիպեցին երկրագնդի գագաթաժողովի ընթացքում ձկները պահպանելու և դրանց օգտագործումը կայուն ձևով կառավարելու նպատակով միջոցառումներ իրականացնելու կոչ անել, որոնք տեղաշարժվում են օվկիանոսի լայն տարածքներով կամ հատում են մի քանի երկրների բացառիկ տնտեսական գոտիները: *ՍԱԿ-ի* 1995 թվականի *Անդրսահմանային ձկների պաշարների և հեռու տարածություններ տեղափոխվող ձկների պաշարների պահպանության մասին համաձայնագիրը*, որը ստորագրել են մոտ 60 երկրներ, նախատեսում է այդ տեսակների համար հատուկ քվոտաներ և նպատակ ունի ապահովելու ազգային ձկների շարունակական գոյատևումը, ինչպես նաև միջոցների իրականացում բաց ծովում վեճերի խաղաղ կարգավորման համար:

## Ծովային միջավայրի պաշտպանություն

Օվկիանոսները զբաղեցնում են երկրագնդի մակերեսի երկու երրորդ մասը, և դրանց պաշտպանությունը դարձել է ՍԱԿ-ը հիմնական խնդիրներից մեկը: ՄԱՇՄԾ-ի աշխատանքը, մասնավորապես նրա ծովային միջավայրի պաշտպանությանն ուղղված բազմաբնույթ ջանքերը աշխարհի ուշադրությունը սևեռեցին օվկիանոսների և ծովերի վրա:

**Ծովային միջազգային կազմակերպությունը (ԾՄԿ)** ՍԱԿ-ի մասնագիտացված գործակալություն է, որը պատասխանատու է նավերից ծովային աղտոտումը կանխելուն ուղղված միջոցների և միջազգային նավարկության անվտանգության բարելավման համար: Չնայած համաշխարհային նավարկության չափազանց մեծ ընդլայնմանը, 1980թ. նավերից ծովերի նավթով աղտոտումը կրճատվեց մոտ 60%-ով, իսկ նավթի արտահոսքը վերջին երկու տասնամյակների ըն-

թայքում նվազեց: Սրան հնարավոր եղավ հասնել մասամբ թափոնների ոչնչացման ավելի լավ վերահսկողության մեթոդների շնորհիվ, մասամբ էլ կոնվենցիաների միջոցով վերահսկողության ուժեղացման շնորհիվ:

*Նավերով ծովի աղտոտումը կանխելու մասին միջազգային կոնվենցիան*՝ առաջինն այս դաշտում, ընդունվել է 1954թ., իսկ 1959թ. ԾՄԿ-ն ստանձնեց դրա պատասխանատվությունը: 1960թ. վերջերին մի շարք մեծ նավթատարների վթարներ հետագա քայլերի պատճառ դարձան: Այդ ժամանակից ի վեր ԾՄԿ-ն մշակել է բազմաթիվ միջոցներ ծովում վթարների և նավթի արտահոսքի կանխման, դրանց հետևանքների նվազեցման համար, ինչպես նաև ծովային աղտոտման դեմ պայքարի համար, ներառյալ ցամաքային գործունեության թափոնների ծով նետումը:

Հիմնական պայմանագրերը հետևյալն են.

- *Միջազգային կոնվենցիա նավթով աղտոտման դեպքերում բաց ծովում միջամտելու վերաբերյալ, 1969թ.*
- *Կոնվենցիա թափոնների և այլ նյութերի արտանետման հետևանքով ծովային աղտոտումը կանխելու մասին , 1972թ.*
- *Միջազգային կոնվենցիա նավթով աղտոտման դեմ պատրաստվածության, արձագանքի և համագործակցության մասին 1990թ.*

ԾՄԿ-ն նաև մեծ ուշադրություն է դարձնում սովորական գործողությունների պատճառով ծագած հետևյալ աղտոտվածքներին. նավթատար տանկերների մաքրում և նավթի շարժիչային բաժանմունքի թափոնների ոչնչացում, որը տոննաժի չափանիշներով վթարներից ավելի մեծ չարիք է: Ձեռք առնված միջոցներից ամենակարևորը 1973թ. *Նավերից աղտոտման կանխման մասին միջազգային կոնվենցիան է, որը փոփոխությունների ենթարկվեց իր 1979 թվականի արձանագրությամբ (MARPOL 73/78):* Այն ընդգրկում է ոչ միայն վթարների և գործողությունների հետևանքով նավթից աղտոտումը, այլ նաև աղտոտումը քիմիկատներից, փաթեթավորված ապրանքներից, կոյուղուց և աղբից: Ըստ 1992թ. կոնվենցիայում կատարված փոփոխությունների, բոլոր նոր նավթատարները պարտավոր են կրկնակի իրան ունենալ կամ այնպիսի նախագիծ, որը կապահովի բեռի համարժեք պաշտպանությունը վթարի կամ ծանծաղուտին բախվելու դեպքում:

ԾՄԿ-ի երկու պայմանագրերը՝ *Նավթով աղտոտման վնասի դեպքում քաղաքացիական պատասխանատվության համար միջազգային կոնվենցիան և Նավթով աղտոտման վնասի համար միջազգային հիմնադրամ հիմնելու մասին միջազգային կոնվենցիան,* աղտոտման հետևանքով ֆինանսապես տուժածների փոխհատուցում տրամադրելու համակարգ են ստեղծում: Պայմանագրերը, որոնք ընդունվել են համապատասխանաբար 1969 և 1971թթ. և վերանայվել են 1992թ., հնարավորություն են ընձեռում նավթի աղտոտումից տուժածներին փոխհատուցում ստանալ զգալիորեն ավելի պարզ և արագ կերպով, քան դա հնարավոր էր անցյալում:

## Օդերևութաբանություն, կլիմա և ջուր

Եղանակի տեսությունից մինչև կլիմայի փոփոխության հետազոտություններ և արևադարձային փոթորիկների կանխատեսում, դրանցով է զբաղվում **Օդերևութաբանական համաշխարհային կազմակերպությունը (ՕՀԿ)**, որը կոորդինացնում է եղանակի ճշգրիտ տեսության և այլ ծառայությունների բարելավման գլոբալ գիտական ջանքերը՝ ուղղված հասարակության, մասնավոր և առևտրական օգտագործմանը, ներառյալ օդային ուղիները և ծովային փոխադրումները: ՕՀԿ-ի գործունեությունն իր ներդրումն ունի կյանքի և գույքի անվտանգության, տնտեսական և սոցիալական զարգացման և շրջակա միջավայրի պաշտպանության գործում:

ՄԱԿ-ի շրջանակներում ՕՀԿ-ը Երկրի մթնոլորտի և կլիմայի վիճակի ու փոփոխությունների վերաբերյալ հեղինակավոր գիտական միտք է:

Գործակալությունը՝

- Աջակցում է միջազգային համագործակցությանը կայանների ցանցի հիմնադրման գործում՝ օդերևութաբանական, հիդրոլոգիական և այլ դիտումներ կատարելու համար,
- Օժանդակում է օդերևութաբանական տեղեկատվության արագ փոխանակմանը, օդերևութաբանական դիտարկումների ստանդարտացմանը և դիտարկումների ու վիճակագրության միատեսակ հրատարակմանը,
- Աջակցում է օդերևութաբանության կիրառմանը ավիացիայում, ծովային փոխադրումներում, ջրային խնդիրներում, գյուղատնտեսության մեջ և այլ բնագավառներում,
- Խթանում է գործնական հիդրոլոգիան և
- Խրախուսում է հետազոտություններն ու ուսուցումը:

ՕՀԿ-ի գործունեության առանցքը *«Համաշխարհային եղանակի տեսություն»* ծրագիրն է, որն ամբողջ աշխարհում եղանակի ամենավերջին տեղեկատվությունն է տրամադրում այն դիտումների համակարգերի և հեռահաղորդակցման կապերի միջոցով, որոնք կատարվում են անդամ պետությունների կողմից՝ օգտագործելով 9 արբանյակներ, 3 հազար օդանավեր, երկրի վրա տեղադրված 10 հազար դիտումների կայաններ, 7300 նավերի վրա տեղադրված կայաններ և 900 խարսխված և ազատորեն շարժվող լողանների վրա տեղադրված եղանակի ավտոմատ կայաններ: Ամեն օր արագ կապի միջոցները եղանակի տվյալներն ու գծագրերը հաղորդում են 3 համաշխարհային, 34 տարածաշրջանային և 185 ազգային օդերևութաբանական կենտրոնների, որոնք համագործակցում են եղանակի վերլուծության և կանխատեսման գործում: Այսպիսով, նավերը և օդանավերը, հետազոտող գիտնականները, զանգվածային լրատվական միջոցները և հասարակությունը մշտապես ապահովվում են եղանակի տեսության վերջին տվյալներով:

ՕՀԿ-ի միջոցով են միջազգայնորեն հիմնադրվում եղանակի նորմերի, կանոնների, չափումների և հաղորդակցությունների վերաբերյալ բարդ համա-

ձայնագրերը: *Արևադարձային ցիկլոնի ծրագիրն* օժանդակում է ցիկլոնների ազդեցությանը ենթակա ավելի քան 50 երկրների՝ ավերածությունները և մարդկային կորուստները նվազեցնելու գործում՝ բարելավելով կանխատեսման և նախազգուշացման համակարգերն ու աղետի դեմ պատրաստվածությունը:

Նկատի ունենալով, որ կլիմայի փոփոխության խնդիրը տարածուն մտահոգության առարկա է դառնում, *Կլիմայի համաշխարհային ծրագիրն* օգնում է կառավարություններին պլանավորելու իրենց գործողությունները փոփոխվող իրավիճակին համապատասխան՝ հավաքելով և պահպանելով կլիմային վերաբերող տվյալներ: Կազմակերպությունը նպատակ ունի կլիմայի մասին տեղեկատվությունն օգտագործել տնտեսական և սոցիալական պլանավորման, հետազոտությունների միջոցով կլիմայական պրոցեսների ըմբռնումը բարելավելու համար և հայտնաբերել ու զգուշացնել կառավարություններին սպասվող կլիմայական տատանումների կամ փոփոխությունների մասին (լինի բնական թե արհեստական), որոնք կարող են ազդեցություն ունենալ մարդկային գործունեության կարևոր ոլորտների վրա: Կլիմայի փոփոխության մասին ամբողջ տեղեկատվության վերլուծության համար 1988թ. ՕՀԿ-ը և ՄԱԸԾԾ-ն հիմնադրել են Կլիմայի փոփոխության հարցերով միջկառավարական փորձագետների խումբ:

*Մթնոլորտային հետազոտությունների և շրջակա միջավայրի ծրագիրը*՝ համակարգում է մթնոլորտի կառուցվածքի և բաղադրության, ամպերի ֆիզիկայի և քիմիայի, եղանակի փոփոխության, արևադարձային օդերևութաբանության և եղանակի կանխատեսման հետազոտությունները: Այն օգնում է անդամ երկրներին փորձահետազոտական ծրագրեր իրականացնել, գիտական տեղեկություններ տարածել և հետազոտությունների արդյունքները ներմուծել կանխատեսման և այլ տեխնիկայի մեջ: Մասնավորապես *Մթնոլորտի գլոբալ հսկողության ծրագրի* համաձայն, 80 երկրների մոտ 340 կայաններ մթնոլորտում ջերմոցային էֆեկտ առաջացնող գազերի մակարդակը հսկելու նպատակով գլոբալ ցանց են կազմում:

Եղանակի հետ կապված գյուղատնտեսական կորուստները որոշ երկրներում կարող են հասնել տարեկան արտադրության 20%-ի: *Օդերևութաբանական կիրառումների ծրագիրը* նպաստում է երկրներում օդերևութաբանությունը կյանքի և սեփականության պաշտպանության, ինչպես նաև սոցիալական և տնտեսական զարգացման համար օգտագործելուն: Այն նպատակ ունի բարելավել եղանակի տեսության պետական ծառայությունները, բարձրացնել ծովային և օդային ճանապարհորդության անվտանգությունը, կրճատել անապատացման ազդեցությունը, ինչպես նաև բարելավել գյուղատնտեսությունը և ջրային էներգետիկ ու այլ աղբյուրների կառավարումը: Գյուղատնտեսության մեջ, օրինակ, օդերևութաբանական հստակ կանխատեսումը կարող է հանգեցնել երաշտների, վնասատուների և հիվանդությունների հետևանքով առաջացած կորուստների էական կրճատմանը:

*Հիդրոլոգիայի և ջրային պաշարների ծրագիրն* օգնում է գնահատել, կառավարել և պահպանել գլոբալ ջրային պաշարները: Այն խրախուսում է գլոբալ համագործակցությունը ջրային պաշարների գնահատման և հիդրոլոգիական ցանցերի ու ծառայությունների զարգացման ուղղությամբ, ներառյալ տվյալների

հավաքումն ու մշակումը, հիդրոլոգիական կանխատեսումը և զգուշացումը, ինչպես նաև օդերևութաբանական և հիդրոլոգիական տվյալների տրամադրումը նախագծային նպատակներով: Այդ ծրագիրն, օրինակ, նպաստում է ընդհանուր ջրային ավազաններ ունեցող երկրների համագործակցությանը և մասնագիտացված կանխատեսում է տրամադրում ջրհեղեղից տուժած տարածքների համար՝ այդպիսով օժանդակելով կյանքի ու սեփականության պաշտպանությանը:

*Կրթական և ուսուցողական ծրագիրը* խրախուսում է գիտական ոլորտի գիտելիքների փոխանակումը դասընթացների, սեմինարների և համաժողովների միջոցով: Ամեն տարի խորացված դասընթացներին մասնակցում են մի քանի հարյուր մասնագետներ ամբողջ աշխարհից:

*Տեխնիկական համագործակցության ծրագիրն* օգնում է զարգացող երկրներին ձեռք բերել տեխնիկական խորհրդատվություն և սարքավորումներ՝ նրանց օդերևութաբանական և հիդրոլոգիական ազգային ծառայությունների բարելավելու նպատակով: Ինչպես նաև նպաստում է տեխնոլոգիայի փոխանցմանը, օդերևութաբանական և հիդրոլոգիական գիտելիքների ու տեղեկատվությանը:

*Տարածաշրջանային ծրագիրն* աջակցում է տարածաշրջանային ուղղվածություն ունեցող ծրագրերի և գործունեության իրականացմանը: Այդ աջակցությունը տրամադրվում է ՕՀԿ-ի՝ աշխարհի տարբեր մասերում տեղակայված հինգ տարածաշրջանային և ենթատարածաշրջանային գրասենյակների միջոցով:

## Բնական պաշարներ և էներգիա

ՄԱԿ-ը վաղուց ի վեր օգնում է երկրներին իրենց բնական պաշարները կառավարելու ուղղությամբ: Արդեն 1952թ. Գլխավոր ասամբլեան հռչակեց, որ զարգացող երկրները «իրենց բնական պաշարները ազատ տնօրինելու իրավունք» ունեն. համաձայն իրենց ազգային շահերի, նրանք պետք է այդ պաշարներն օգտագործեն իրենց տնտեսական զարգացման ծրագրերի զարգացման ուղղությամբ:

24 անդամից բաղկացած **Զարգացման համար էներգիայի և բնական պաշարների կոմիտեն** Տնտեսսոցխորհի մարմինն է, որը կազմված է կառավարությունների կողմից նշանակված փորձագետներից, մշակում է քաղաքականության և ռազմավարության վերաբերյալ ուղենիշներ Տնտեսսոցխորհի և կառավարությունների համար՝ համագործակցելով Կայուն զարգացման հանձնաժողովի հետ: Այն բաժանված է երկու ենթախմբի, յուրաքանչյուրը՝ 12 անդամով: **Էներգիայի հարցերով ենթախումբը** վերանայում է էներգիայի զարգացմանը վերաբերող միտումները ու խնդիրները, ինչպես նաև էներգիայի ոլորտում ՄԱԿ-ի համակարգի գործունեության համադրումը: **Ջրային պաշարների ենթախումբը** քննարկում է խնդիրներ, որոնք վերաբերում են հողային և ջրային պաշարների ինտեգրված կառավարմանը, ինչպես նաև այդ ոլորտում ՄԱԿ-ի համակարգի գործունեության համադրմանը:

**Ջրային պաշարներ:** ՄԱԿ-ը վաղուց ի վեր զբաղվում է այն գլոբալ ճգնաժամի խնդրով, որը մարդկային, կոմերցիոն և գյուղատնտեսական կարիքների բա-

վարարմանն ուղղված աշխարհի ջրային պաշարների հարաճուն պահանջների հետևանք է: 1977թ. ՄԱԿ-ի Ջրային պաշարների հարցերով համաժողովը, 1992թ. Ջրային պաշարների և շրջակա միջավայրի միջազգային համաժողովը, 1992թ. Երկրագնդի գագաթնաժողովը և միջազգային տասնամյակը՝ նվիրված խմելու ջրի մատակարարմանն ու սանիտարական հարցերին (1981-1990թթ.), ուշադրության կենտրոնում պահեցին այդ կենսական հարցը: Տասնամյակի շնորհիվ զարգացող երկրների 1.3 միլիարդ մարդ հնարավորություն ստացավ օգտվելու անվնաս խմելու ջրից:

Այսօր երկրագնդի բնակչության 20%-ը ջրի պակաս ունի, մինչև 2025թ. այդ թիվը կբարձրանա մինչև 30%-ի և կառնչվի ևս 50 երկրների: Ջրի պակասը շատ պատճառներ ունի, ներառյալ անարդյունավետ օգտագործումը, աղտոտման հետևանքով ջրի նվազումը և ստորերկրյա ջրերի պաշարների անխնա օգտագործումը: Անհրաժեշտ է միջոցառումներ ձեռնարկել քաղցր ջրի սակավ պաշարների ավելի լավ կառավարումն ապահովելու համար: Դա հատկապես վերաբերում է ջրամատակարարման և պահանջարկի կառավարմանը, ինչպես նաև ջրի քանակին և որակին:

ՄԱԿ-ի համակարգի գործունեությունն ուղղված է քաղցրահամ ջրի այն պաշարների կայուն զարգացմանը, որոնք սակավ և սահմանափակ են բնակչության աճի, աղտոտման և գյուղատնտեսական ու արդյունաբերական հարաճուն պահանջարկի պատճառներով: Օրինակ, Տնտեսական և սոցիալական հարցերով վարչությունը ջրային պաշարներին վերաբերող տեխնիկական համագործակցության համապարփակ ծրագիր է իրականացնում: ՊԳԿ-ն նպաստում է ջրային պաշարների արդյունավետ օգտագործմանն ու պահպանմանը: Դրա նպատակը պարենի անվտանգությունն է: ՄԱԶԾ-ն և Համաշխարհային բանկն իրականացնում են *ջրային պաշարների և սանիտարական ոլորտին վերաբերող համատեղ ծրագիրը*: Կայուն զարգացման հարցերով հանձնաժողովը քննարկել է շուկայական մեխանիզմների միջոցով ջրի օգտագործման հնարավորությունների ուղիները, ընդհուպ գների սահմանումը՝ կրաշխավորելով չքավոր մարդկանց ջրօգտագործումը:

**Էներգիա:** Համաշխարհային էներգիայի մեծ բաժինն այնպես է արտադրվում ու օգտագործվում, որ այն հնարավոր չի լինի պահել նույն մակարդակի վրա, եթե էներգիայի ընդհանուր սպառումը շարունակի աճել նույն արագ տեմպերով: *Օրակարգ 21-ը* ընդգծում է, որ էներգիայի բոլոր աղբյուրները պետք է այնպես օգտագործվեն, որպեսզի պաշտպանվի մթնոլորտը, մարդու առողջությունն ու շրջակա միջավայրը:

Չնայած զարգացած երկրներում հանքային վառելիքի օգտագործումը դանդաղորեն կարգավորվում է, միևնույն ժամանակ աղտոտող արտանետումների մակարդակն աճում է: Զարգացող շատ երկրներում հանքային վառելիքի օգտագործման արագ աճը հանգեցնում է օդի սարսափելի աղտոտմանը: Կանխատեսվում է, որ էներգիայի ընդհանուր սպառման մակարդակը մինչև 2050թ. կկրկնապատկվի: Միաժամանակ ավելի քան 1.8 միլիարդ մարդկանց համար, որոնք հիմնականում բնակվում են զարգացող երկրների գյուղական տարածքնե-

րում, մատչելի չեն էներգիայի կոմերցիոն ծառայությունները:

ՄԱԿ-ի համակարգի շատ կառույցներ ակտիվ գործունեություն են ծավալել՝ իրականացնելով էներգիայի ոլորտին վերաբերող բազմաթիվ նախագծեր ու ծրագրեր՝ պարբերական կրթական ծրագրի և ուսուցման, իրազեկության բարձրացման ու կադրային բազայի ամրապնդման ձևով: Նախագծերից շատերի նպատակն է օգնել առանձին երկրներին բավարարելու էներգիայի առնչվող իրենց կարիքները: Այլ ծրագրերն արտացոլում են էներգիայի ոլորտին վերաբերող փոփոխվող վիճակն ու շրջակա միջավայրի ազդեցությունն էներգիայի պաշարների զարգացման ու օգտագործման վրա:

**Տեխնիկական համագործակցություն:** ՄԱԿ-ը իրականացնում է տեխնիկական համագործակցության գործուն ծրագիր բնական պաշարների և էներգիայի ոլորտում: Ջրային ու հանքային պաշարներին վերաբերող ծրագրերի միջոցով ՄԱԿ-ը տեխնիկական համագործակցության օժանդակություն և խորհրդատվական ծառայություններ է տրամադրում՝ շեշտը դնելով շրջակա միջավայրի պաշտպանության, ներդրումների խրախուսման, օրենսդրության ու կայուն զարգացման խնդիրների վրա: Էներգիայի բնագավառում տեխնիկական համագործակցությունն իրականացվում է երեք ծրագրերի միջոցով՝ ընդգրկելով էներգիայի գլոբալ արդյունավետությունը, վերականգնվող էներգիան, հանքային վառելիքի ավելի մաքուր տեխնոլոգիաներն ու արտադրական պրոցեսները:

Վերջին երկու տասնամյակների ընթացքում ՄԱԿ-ի և նրա կազմակերպությունների ընտանիքի միջոցով իրականացվել են միլիոնավոր դոլարներ արժեցող հարյուրավոր տեխնիկական համագործակցության ու ներդրումային նախագծեր բնական պաշարների ու էներգիայի ոլորտի առնչությամբ: Գրեթե հավասարազոր դրամային գումար է տրամադրվել օգնություն ստացող կառավարությունների կողմից ազգային աշխատակազմի, արտադրական միջոցների և տեղական ընթացիկ ծախսերի ձևով: Արդյունքում ամեն տարի մոտ 300 նախագծերի միջոցով օգնություն է ցույց տրվում զարգացող երկրներին իրենց բնական պաշարների կայուն զարգացման համար: Այդպիսի նախագծերն ամրապնդում են ազգային հնարավորությունները, խթանում են հետագա ներդրումներն ու խրախուսում են կայուն զարգացումը:

## Միջուկային անվտանգություն

Այսօր 433 միջուկային ռեակտորներ արտադրում են աշխարհի էլեկտրաէներգիայի մոտ 17%-ը: 8 երկրներում միջուկային եղանակով արտադրվում է էլեկտրաէներգիայի 40%-ը: Այս ոլորտում **Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունը՝ ԱԷՄԳ-ն**, որը միջազգային կազմակերպություն է ՄԱԿ-ի ընտանիքում, նպաստում է միջուկային էներգիայի խաղաղ օգտագործմանը և չափանիշներ է սահմանում միջուկային անվտանգության և շրջակա միջավայրի պաշտպանության համար:

ԱԷՄԳ-ն միջուկային բնագավառում գիտական և տեխնիկական համագործակցության համար աշխարհի միջկառավարական կենտրոնական ֆորումն է:

Այն տեղեկությունների փոխանակման և միջուկային ոլորտում ուղենիշների ու նորմերի մշակման կենտրոնակետ է: Գործակալությունը նաև կառավարությունների խնդրանքով նրանց ռեակտորների անվտանգությունը բարելավելու և վթարների վտանգից խուսափելու մեթոդներ է առաջարկում: Նա նաև նշանակալի դեր է խաղում միջազգային ջանքերի համատեքստում, որոնց նպատակն է միջուկային տեխնոլոգիայի ապահովումը կայուն զարգացման համար:

Գործակալության պատասխանատվությունը միջուկային անվտանգության ոլորտում մեծացել է, որովհետև աճել է միջուկային էներգիային առնչվող ծրագրերի թիվը և հասարակական ուշադրությունը կենտրոնացել է միջուկային անվտանգության ասպեկտների վրա: ԱԷՄԳ-ն ձևակերպում է ռադիացիոն պաշտպանության խնդիրների կարգավորման, հատուկ տեսակի գործողությունների վարքի հիմնական չափանիշները, ներառյալ ռադիոակտիվ նյութերի անվտանգ փոխադրումները: Նա օգնություն է ցույց տալիս անդամ պետություններին արտակարգ իրավիճակներում, ռադիացիոն վթարի դեպքում՝ համաձայն հետևյալ կոնվենցիաների. *Կոնվենցիա միջուկային վթարի կամ ռադիոլոգիական վթարային իրավիճակի դեպքում օգնության տրամադրման մասին և Կոնվենցիա միջուկային վթարի վերաբերյալ վաղ ծանուցման մասին:*

Մյուս միջազգային համաձայնագրերը, որոնց ավանդապահն է ԱԷՄԳ-ն, հետևյալն են՝ *Միջուկային նյութի ֆիզիկական պաշտպանության կոնվենցիա, Վիեննայի կոնվենցիա քաղաքացիական պատասխանատվության և միջուկային վնասի համար, Միջուկային անվտանգության մասին կոնվենցիա և Համատեղ կոնվենցիա օգտագործված վառելիքի կառավարման անվտանգության և ռադիոակտիվ թափոնների կառավարման անվտանգության մասին:* Վերջինս առաջին իրավական փաստաթուղթն է, որն այդ խնդիրները բարձրացնում է համաշխարհային մասշտաբով:

ԱԷՄԳ-ն օժանդակում ու միջուկային ծրագրերի վերաբերյալ խորհրդատվություն է ներկայացնում անդամ երկրներին, ինչպես նաև նպաստում է գիտական ու տեխնիկական տեղեկատվության փոխանակմանը: ԱԷՄԳ-ի տեխնիկական համագործակցության գործունեությունը, որը նպաստում է միջուկային էներգիայի խաղաղ օգտագործմանը, երկրներին օգնում է այնպիսի կարևոր բնագավառներում, ինչպիսիք են ջուրը, առողջապահությունը, սնուցումը, բժշկությունն ու պարենի արտադրությունը: Ամենավառ օրինակներից մեկն է մուտացիոն սելեկցիային վերաբերող աշխատանքը, որի միջոցով, օգտագործելով ռադիացիայի վրա հիմնված տեխնոլոգիան, աճեցվեցին մոտ 2000 գյուղատնտեսական նոր արժեքավոր կուլտուրաներ: Ընթացիկ բանավեճում, որը նվիրված է էներգիայի արտադրման եղանակներին՝ գլոբալ տաքացմանը նպաստող ածխածնի դիօքսիդի արտանետումները պակասեցնելու նպատակով, ԱԷՄԳ-ն ընդգծեց միջուկային էներգետիկայի՝ որպես ջերմոցային և այլ թունավոր գազերի արտանետումներից զերծ էներգիայի աղբյուրի, առավելությունը:

ԱԷՄԳ-ն տեղեկություններ է հավաքում և տարածում է միջուկային գիտության և տեխնոլոգիայի ըստ էության բոլոր ասպեկտների մասին *Միջուկային տեղեկատվական միջազգային համակարգի* (ՄՏՄՀ) միջոցով, որը գտնվում է Վիեննայում: Նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համատեղ ղեկավարում է **Տեսական ֆի-**

**զիկայի միջազգային կենտրոնը** Տրիեստում (Իտալիա) և օգտագործման հիմնական ուղղություններով հետազոտություններ անցկացնելու համար տնօրինում է երեք լաբորատորիա: ԱԷՄԳ-ն համագործակցում է ՊԳԿ-ի հետ պարենային և գյուղատնտեսական ոլորտներում միջուկային էներգիային վերաբերող հետազոտություններ անցկացնելու ուղղությամբ, իսկ ՀՕԿ-ի հետ՝ ռադիացիայի հարցերով բժշկության և կենսաբանության ոլորտներում: ԱԷՄԳ-ի Մոնակոյում տեղակայված **Ծովային միջավայրի լաբորատորիան** ՄԱՇՄԾ-ի և ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ համատեղ հետազոտություններ է իրականացնում համաշխարհային ծովային տարածքների աղտոտման վերաբերյալ:

# ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

## Գլուխ 4

## ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ



# ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ՄԱԿ-ի ամենամեծ նվաճումներից մեկը մարդու իրավունքների օրենքների ընդգրկուն դասի ստեղծումն է, որը, պատմության մեջ առաջին անգամ ապահովում է մարդու իրավունքների համընդհանուր և միջազգայնորեն պաշտպանված մի օրենսգիրք, որին բոլոր պետությունները կարող են միանալ, և որին բոլոր ժողովուրդները կարող են ձգտել: ՄԱԿ-ը ոչ միայն ջանասիրաբար սահմանել է մի ամբողջ շարք միջազգայնորեն ճանաչված իրավունքներ, ի թիվս որոնց տնտեսական, սոցիալական ու մշակութային, ինչպես նաև քաղաքական ու քաղաքացիական իրավունքները, այլև հաստատել է այն մեխանիզմները, որոնցով պետք է առաջ մղվեն ու պաշտպանվեն այդ իրավունքները, ինչպես նաև օժանդակություն ցույց տրվի կառավարություններին իրենց պարտականությունները կատարելու գործում:

Օրենքների այս մարմնի հիմքում ընկած են Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությունը և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, որոնք ընդունվել են Գլխավոր ասամբլեայի կողմից 1948թ.: Այդ ժամանակից ի վեր ՄԱԿ-ն աստիճանաբար ընդլայնել է մարդու իրավունքների օրենքները՝ ընդգրկելով հատուկ չափանիշներ կանանց, երեխաների, հաշմանդամների, փոքրամասնությունների, միգրանտ աշխատողների և այլ խոցելի խմբերի համար, որոնք ներկայումս իրենք իրենց խտրական վերաբերմունքից պաշտպանող իրավունքներ ունեն, ինչը վաղուց ի վեր ընդհանուր երևույթ է շատ հասարակություններում:

Իրավունքները ընդլայնվել են Գլխավոր ասամբլեայի վճռորոշ որոշումներով, որոնք աստիճանաբար հաստատել են իրենց համընդհանուր բնույթը, իրենց անբաժանելիությունն ու փոխկապակցվածությունը զարգացման ու ժողովրդավարության հետ: Կրթական արշավները անդադար իրազեկել են աշխարհի ժողովուրդներին իրենց անօտարելի իրավունքների մասին, մինչ բազմաթիվ ազգային դատական ու քրեական համակարգեր բարելավվել են ՄԱԿ-ի վերապատրաստման ծրագրերի ու տեխնիկական խորհուրդների միջոցով: ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքների դաշնագրերի կենսագործումը վերահսկող մեխանիզմը անդամ պետությունների շրջանում նշանակալի ձև ու կշիռ է ձեռք բերել:

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարն աշխատում է ամրապնդել և համակարգել ՄԱԿ-ի աշխատանքը՝ ուղղված ամբողջ աշխարհում բոլոր մարդկանց բոլոր իրավունքների պաշտպանությանն ու առաջմղմանը: Գլխավոր քարտուղարը մարդու իրավունքները դարձրել է հիմնական թեմա, որը համախմբում է կազմակերպության աշխատանքը խաղաղության ու անվտանգության, զարգացման, մարդասիրական օգնության և տնտեսական ու սոցիալական խնդիրների հիմնական ոլորտներում: Փաստացի ՄԱԿ-ի յուրաքանչյուր մարմին և մասնագիտացված գործակալություն որոշակի չափով ներգրավված է մարդու իրավունքների պաշտպանության գործում:

## Մարդու իրավունքների փաստաթղթերը

1945թ. Սան Ֆրանցիսկոյում տեղի ունեցած կոնֆերանսում, որով հիմնադրվեց Միավորված ազգերի կազմակերպությունը, մոտ 40 ոչ կառավարական կազմակերպություններ, որոնք ներկայացնում էին կանանց, արհեստակցական միություններ, կրթական կազմակերպություններ և կրոնական խմբեր, միավորեցին իրենց ջանքերը պատվիրակությունների հետ, որոնց մեծ մասը փոքր երկրներից էին, և պահանջեցին մարդու իրավունքների ավելի որոշակի մատուցում, քան ներկայացված էր այլ երկրների կողմից: Այս հաստատակամ քարոզչության արդյունքում մարդու իրավունքների վերաբերյալ համարձակ դրույթներ ներառվեցին **ՄԱԿ-ի Կանոնադրության** մեջ, որով հիմք դրվեց միջազգային իրավունքի կերտման 1945թ. հաջորդած փուլին:

Կանոնադրության նախաբանը պարզորոշ կերպով վերահաստատում է «հավատը մարդու հիմնարար իրավունքների, արժանապատվության և մարդ էակի արժեքի, տղամարդկանց ու կանանց և մեծ ու փոքր ազգերի հավասար իրավունքների հանդեպ»: 1-ին հոդվածը սահմանում է, որ ՄԱԿ-ի հիմնական խնդիրներից մեկն է առաջ մղել և պաշտպանել «հարգանքը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների հանդեպ բոլորի համար՝ առանց ռասայական պատկանելության, սեռի, լեզվի կամ կրոնի տարբերակման»: Այդ դրույթներ պարտավորեցնում են պետություններին, ՄԱԿ-ի հետ համագործակցելով, ջանքեր գործադրել մարդու իրավունքների հանդեպ համընդհանուր հարգանքի հասնելու համար:

## Մարդու իրավունքների միջազգային օրինագիծ

ՄԱԿ-ի աշխատանքը սկսվելուց երեք տարի անց Գլխավոր ասամբլեան մարդու իրավունքների ներկայիս օրենքների հիմնաքարը դրեց. ընդունվեց **Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը**, որը «բոլոր մարդկանց համար ընդհանուր չափանիշ» էր դառնալու: Այն ընդունվել է 1948թ. դեկտեմբերի 10-ին. ներկայումս այդ օրն ամբողջ աշխարհում նշվում է որպես **Մարդու իրավունքների միջազգային օր**: Հռչակագրի 30 հոդվածները ներկայացնում են քաղաքացիական, տնտեսական, քաղաքական ու սոցիալական հիմնարար իրավունքները, որոնք պետք է ունենա յուրաքանչյուր երկրում ապրող յուրաքանչյուր մարդ:

Համընդհանուր հռչակագրի դրույթները սովորութային միջազգային իրավունքի կշիռ ունեն, քանի որ լայնորեն տարածված են և ընդունվում են որպես պետությունների վարքագիծը գնահատելու չափանիշ: Շատ նորանկախ պետություններ մեջբերում են Համընդհանուր հռչակագիրը կամ ներառել են նրա դրույթներն իրենց հիմնարար օրենքների կամ սահմանադրությունների մեջ:

Մարդու իրավունքների՝ ՄԱԿ-ի ներքո բանակցված, իրավականորեն պարտադիր ուժ ունեցող ամենամեծ արձանագրերը երկու միջազգային դաշնագրերն են. մեկը տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների, իսկ

մյուսը՝ քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին: Այս պայմանագրերը, ընդունված Գլխավոր ասամբլեայի կողմից 1966թ., ավելի առաջ են մղում Համընդհանուր հռչակագրի դրույթները՝ այդ իրավունքները իրավականորեն պարտադիր ուժ ունեցող համաձայնություններ դարձնելով և անդամ պետությունների պարտավորությունների կատարումը վերահսկող մարմիններ ստեղծելով: Աշխարհի պետությունների մեծ մասը միացել է դաշնագրերին:

---

## Համընդհանուր իրավունքների սահմանումը

*Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը տասնամյակների ընթացքում ստեղծված մարդու իրավունքների իրավունքի լայնածավալ դաշտի հիմնաքարն է:*

*Նրա 1-ին և 2-րդ հոդվածները ասում են, որ «բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով» և կարող են օգտվել հռչակագրով սահմանված բոլոր իրավունքներից ու ազատություններից «առանց որևէ ռասայական, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական և այլ համոզմունքների, ազգային կամ սոցիալական ծագման, ունեցվածքի, դասային պատկանելության կամ որևէ այլ կարգավիճակի տարբերակման»:*

*3-ից 21 հոդվածները շարադրում են քաղաքացիական ու քաղաքական այն իրավունքները, որոնք բոլոր մարդիկ ունեն, ներառյալ՝*

- *կյանքի, ազատության ու անվտանգության իրավունքը,*
- *ստրկությունից և կախվածությունից ազատության իրավունքը,*
- *խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու իրավունքը,*
- *օրենքի հանդեպ որպես իրավասուբյեկտ ճանաչվելու իրավունքը, իրավական պաշտպանության իրավունքը, կամայական ձերբակալման, կալանքի կամ աքսորման չենթարկվելու իրավունքը, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից արդարացի ու հրապարակային դատաքննության իրավունքը, մինչև մեղքի ապացուցումը անմեղ ճանաչվելու իրավունքը,*
- *անձնական կյանքի, ընտանիքի, բնակարանի կամ նամակագրության նկատմամբ կամայական միջամտության չենթարկվելու իրավունքը, պատվի կամ հեղինակության հանդեպ ոտնձգություններից զերծ լինելու իրավունքը. նման միջամտությունից կամ ոտնձգությունից օրենքով պաշտպանվելու իրավունքը,*
- *ազատ տեղաշարժի իրավունքը, ապաստան գտնելու իրավունքը, քաղաքացիություն ունենալու իրավունքը,*
- *ամուսնանալու և ընտանիք ստեղծելու իրավունքը, սեփականություն ունենալու իրավունքը,*
- *մտքի, խղճի և կրոնի ազատությունը, համոզմունքի ու արտահայտման իրավունքը,*
- *խաղաղ հավաքների ու միավորումներ կազմելու իրավունքը,*
- *կառավարմանը մասնակցելու և պետական ծառայության անցնելու հավասար հնարավորության իրավունքը:*

*22-27 հոդվածները բովանդակում են տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքները, որոնք ունեն բոլոր մարդիկ, ներառյալ՝*

- *սոցիալական ապահովության իրավունքը,*
- *աշխատելու իրավունքը, հավասար աշխատանքի համար հավասար վարձատրության իրավունքը,*
- *արհեստակցական միություններ ստեղծելու և դրանց անդամակցելու իրավունքը,*
- *հանգստի և ժամանցի իրավունքը,*
- *առողջության ու բարեկեցության համար բավարար կենսամակարդակ ունենալու իրավունքը,*
- *կրթություն ստանալու իրավունքը,*
- *հանրության մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը:*

*Եզրափակիչ՝ 28-30 հոդվածներով ընդունվում է, որ յուրաքանչյուր անհատ իրավունք ունի ապրելու սոցիալական կամ միջազգային այնպիսի կարգում, որով լիովին կիրականացվեն հռչակագրով սահմանված մարդու իրավունքները. այդ իրավունքները կարող են սահմանափակվել միայն այլոց իրավունքների ու ազատությունների հանդեպ ճանաչումն ու հարգանքն ապահովելու նպատակով և ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի և ընդհանուր բարեկեցության պահանջները կատարելու համար, և յուրաքանչյուր անձ իր պարտականություններն ունի այն հանրության առջև, որում ապրում է:*

---

Համընդհանուր հռչակագիրը, մարդու իրավունքների մասին երկու միջազգային դաշնագրերը և դրանց կից կամընտիր արձանագրությունները կազմում են «Մարդու իրավունքների միջազգային օրինագիծը»:

## Տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքներ

**Տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը**, որն ուժի մեջ է մտել 1976թ., 143 մասնակից պետություն ունի (բոլոր թվերը ներկայացվում են առ 2000թ. դեկտեմբերի դրությամբ): Դաշնագրում առաջադրվող ու պաշտպանվող մարդու իրավունքները երեք տեսակի են.

- արդարացի ու բարենպաստ պայմաններում աշխատելու իրավունք,
- սոցիալական պաշտպանվածություն, համապատասխան կենսամակարդակ և ֆիզիկական ու մտավոր բարեկեցության հասանելի ամենաբարձր մակարդակն ունենալու իրավունք,
- կրթության և մշակութային ազատության ու գիտական առաջընթացի օգուտները վայելելու իրավունք:

Դաշնագիրն ապահովում է այս իրավունքների իրականացումը՝ առանց որևէ խտրականության: Այն նաև պահանջում է անդամ պետություններից ընդգրկված դրույթների կատարման վերաբերյալ պարբերական զեկույցներ ներկայացնել **Տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների կոմիտեին**, մի մարմնի, որն ստեղծվել է Տնտեսական ու սոցիալական խորհրդի (Տնտսոցխորհ) կողմից: 18 անդամից բաղկացած այս փորձագիտական մարմինն ուսումնասիրում է այդ զեկույցները և խնդրո առարկա կառավարությունների ներկայացուցիչների հետ քննարկում դրանք: Դաշնագրի վերաբերյալ նրանց դիտողությունները նպատակ ունեն օգնելու անդամ պետություններին կիրարկման հարցում, ինչպես նաև նրանց ուշադրությունը հրավիրելու զեկույցներում ու ընթացակարգերում տեղ գտած թերությունների վրա: Կոմիտեն նաև խորհուրդներ է տալիս անդամ պետություններին այդ զեկույցների ուսումնասիրության հիման վրա:

## Քաղաքական ու քաղաքացիական իրավունքներ

**Քաղաքական ու քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը** և դրան կից **Առաջին կամընտիր արձանագրությունը** ուժի մեջ են մտել

1976թ.: Դաշնագրին միացել է 147 անդամ պետություն, իսկ արձանագրությանը՝ 98:

- Դաշնագիրն առնչվում է այնպիսի իրավունքների, ինչպիսիք են տեղաշարժի ազատությունը, օրենքի առջև հավասարությունը, արդար դատավարության իրավունքը և անմեղության կանխավարկածը, մտքի, խղճի ու կրոնի ազատությունը, կարծիքի ու արտահայտման ազատությունը, խաղաղ հավաքների, միավորման, հասարակական գործերին ու ընտրություններին մասնակցության ազատությունը և փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությունը:
- Արգելում են կյանքից կամայական զրկումը, խոշտանգումը, դաժան կամ նվաստացնող վերաբերմունքը կամ պատիժը, ստրկությունը և հարկադիր աշխատանքը, կամայական ձերբակալումը կամ կալանումը և կամայական միջամտությունն անձնական սեփականությանը, պատերազմի քարոզչությունը և ռասայական կամ կրոնական ատելության քարոզչությունը:

Դաշնագիրն ունի երկու արձանագրություն: *Առաջին կամընտիր արձանագրությունն* (1966թ.) ապահովում է պաշտպանության այն ընթացակարգերը, որոնք անհատներին հայց ներկայացնելու իրավունք են տալիս: *Երկրորդ կամընտիր արձանագրության* (1989թ.) նպատակը մահապատժի վերացումն է. վերջինիս միացել է 43 անդամ պետություն:

Դաշնագրով ստեղծվել է 18 անդամից բաղկացած **Մարդու իրավունքների կոմիտեն**, որը քննարկում է անդամ պետությունների կողմից պարբերաբար ներկայացվող զեկույցները դաշնագրի դրույթների կիրառման ուղղությամբ ձեռնարկված քայլերի մասին: *Առաջին կամընտիր արձանագրությանը* միացած անդամ պետությունների համար հանձնաժողովը քննարկում է նաև այն անհատներից ստացված գրագրությունը, որոնք պնդում են, թե դաշնագրով սահմանված որևէ իրավունքի խախտման զոհ են դարձել: Հանձնաժողովը անհատներից ստացված գրագրությունը քննում է փակ նիստերում, և այդ նամակներն ու այլ փաստաթղթերը գաղտնի են մնում: Հանձնաժողովի վճիռներն այնուհանդերձ հրապարակվում են և զետեղվում հանձնաժողովի՝ Գլխավոր ասամբլեային ներկայացվող տարեկան զեկույցում:

## Այլ կոնվենցիաներ

Համընդհանուր հռչակագիրը ոգեշնչել է ամենատարբեր հարցերի վերաբերյալ մոտ 80 կոնվենցիաների ու հռչակագրերի ստեղծումը, որոնք ընդունվել են ՄԱԿ-ում: Կոնվենցիաներից վեցը ստեղծել են փորձագիտական մարմիններ, որոնք վերահսկում են անդամ պետությունների կողմից կոնվենցիաներում ամրագրված իրավունքների կատարումը: Երբ պետությունները վավերացնում են այդ համաձայնագրերը, նրանք համաձայնում են, որ մարդու իրավունքներին վերաբերող իրենց օրենսդրությունն ու գործողությունները վերանայվեն անկախ փորձագիտական մարմինների կողմից:

- *Ցեղասպանության հանցագործության կանխարգելման ու պատժի մասին կոնվենցիան* (1948թ.), որը Երկրորդ համաշխարհային պատերազմի դաժանությունների ուղղակի արձագանքն էր, ցեղասպանության հանցագործությունը սահմանում է որպես որոշակի գործողությունների հանրագումար, որոնք նպատակ ունեն ոչնչացնելու ազգային, էթնիկ, ռասայական կամ կրոնական որևէ խումբ, և պարտավորեցնում է պետություններին պատասխանատվության ենթարկել ոճրագործներին: Այն ունի 132 անդամ պետություն:
- *Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիան* (1951թ.) սահմանում է փախստականների իրավունքները, հատկապես պարտադրաբար չվերադարձվելու իրավունքն այն երկրները, որտեղ նրանք ենթակա են վտանգի, և դրույթներ է սահմանում նրանց ամենօրյա կյանքի վերաբերյալ, ներառյալ աշխատելու, կրթության, հասարակական աջակցության, սոցիալական ապահովության և ճանապարհական փաստաթուղթ ունենալու իրավունքները: Այն ունի 137 անդամ պետություն: *Փախստականների կարգավիճակի մասին արձանագրությունը* (1967թ.) ապահովում է կոնվենցիայի համընդհանուր կիրառումը, որն ի սկզբանե նախատեսված էր Երկրորդ համաշխարհային պատերազմի փախստականների համար: Արձանագրությունն ունի 136 անդամ պետություն:
- *Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան* (1966թ.) ամենից շատ վավերացված համաձայնագրերից մեկն է, որին միացել է 157 անդամ երկիր: Ելնելով այն նախադրյալից, որ ռասայական տարբերությունների վրա հիմնված ռասայական գերիշխանության որևէ քաղաքականություն արդարացված չէ, գիտականորեն կեղծ է և բարոյապես ու իրավական տեսանկյունից դատապարտելի, կոնվենցիան սահմանում է «ռասայական խտրականությունը» և պարտավորեցնում անդամ պետություններին միջոցներ ձեռնարկել վերացնելու այն թե՛ օրենսդրության մեջ և թե՛ գործողություններում: Կոնվենցիան ստեղծում է վերահսկող մարմին՝ **Ռասայական խտրականության վերացման կոմիտե**, անդամ պետությունների զեկույցները, ինչպես նաև այն անհատներից ստացվող հայցերը քննելու համար, որոնք պնդում են, թե խախտվել է կոնվենցիան, և եթե առնչվող պետությունը միացել է կոնվենցիայի այս կամընտիր ընթացակարգին:
- *Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան* (1979թ.) իր 166 անդամ պետություններով, պաշտպանում է կանանց հավասարությունը օրենքի առջև և մատնանշում է այն միջոցառումները, որոնք ուղղված են կանանց հանդեպ խտրականության վերացմանը քաղաքական ու հասարակական կյանքում, ազգության, կրթության, աշխատանքի, առողջության, ամուսնության և ընտանիքի հարցերում: Կոնվենցիան հիմնել է **Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեն**՝ որպես նրա կիրարկումը վերահսկող և անդամ պետությունների զեկույցները քննող մարմին: Կոնվենցիային կից կամընտիր արձանագրությունը (1999թ.) թույլ է տալիս անհատներին բողոքներ ներկայացնել կոմիտեին կոնվենցիայի խախտումների մասին:
- *Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվու-*

*թյունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի դեմ կոնվենցիան* (1984թ.)՝ իր 123 անդամներով, խոշտանգումը սահմանում է որպես միջազգային հանցագործություն, պետությունների վրա պարտավորություն է դնում կանխել այն և պահանջում է նրանցից պատժել հանցագործներին: Ոչ մի բացառիկ հանգամանք չի կարող վկայակոչվել խոշտանգումն արդարացնելու համար, ոչ էլ խոշտանգումը կարող է պաշտպանվել հրամանների ներքո գործելու հանգամանքով: Կոնվենցիայի կողմից ստեղծված վերահսկիչ մարմինը՝ **Խոշտանգումների դեմ կոմիտեն**, ուսումնասիրում է անդամ պետությունների ներկայացրած զեկույցները և կարող է քննություն սկսել այն երկրների հանդեպ, որտեղ, իր կարծիքով, կանոնավոր կերպով գործում է խոշտանգումների պրակտիկան:

- *Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան* (1989թ.) ընդունում է հատկապես երեխաների խոցելիությունը և մի համապարփակ օրենքի մեջ համախմբում է մարդու իրավունքների բոլոր կարգերին պատկանող երեխաների պաշտպանությունը: Կոնվենցիան հստատուն կերպով երաշխավորում է խտրականության չենթարկվելը և սահմանում է, որ երեխայի շահերը պետք է ուղեցույց լինեն բոլոր գործողությունների համար: Հատուկ ուշադրություն է դարձվում փախստական, հաշմանդամ կամ ազգային փոքրամասնություններին պատկանող երեխաներին: Անդամ երկրները պետք է երաշխիքներ ապահովեն երեխաների գոյատևման, զարգացման, պաշտպանության և մասնակցության ապահովման համար: Կոնվենցիան ամենից շատ վավերացված պայմանագիրն է. ունի 191 անդամ երկիր: **Երեխայի իրավունքների կոմիտեն**, որը հաստատվել է կոնվենցիայի կողմից, վերահսկում է վերջինիս կիրարկումը և քննում է անդամ պետությունների կողմից ներկայացված զեկույցները:
- *Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան* (1990թ.) սահմանում է միգրանտ աշխատողների, անկախ նրանց օրինական կամ անօրինական լինելուց, հիմնական իրավունքներն ու սկզբունքները, ինչպես նաև նրանց պաշտպանության միջոցառումները միգրացիայի ամբողջ ընթացքում: Դժբախտաբար կոնվենցիան դեռևս ուժի մեջ չի մտել, քանի որ մինչև օրս միայն 15 երկիր է վավերացրել այն: Երբ այն ուժի մեջ մտնի, կստեղծվի վերահսկող կոմիտե:

Համընդհանուր հռչակագիրն ու ՍԱԿ-ի այլ փաստաթղթերը նաև ոգեշնչել են մի քանի տարածաշրջանային համաձայնագրերի ստեղծումը, ինչպիսին են *Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան*, *Մարդու իրավունքների ամերիկյան կոնվենցիան* և *Մարդու ու ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիան*:

## Այլ հարակից փաստաթղթեր

Ի լրումն՝ ՍԱԿ-ը սահմանել է մարդու իրավունքների պաշտպանության շատ այլ նորմեր ու կանոններ: Այս «հռչակագրերը», «վարքականոնները», «սկզ-

քունքների» և այլ փաստաթղթերը պայմանագրեր չեն, որոնց միանում են պետությունները, այսուհանդերձ հիմնարար ազդեցություն ունեն հենց միայն այն պատճառով, որ կազմված են պետությունների կողմից մանրակրկիտ կերպով և ընդունվում են կոնսենսուսով: Դրանց շարքում ամենակարևորներից են.

- *Կրոնի կամ հավատքի վրա հիմնված անհանդուրժողականության ու խտրականության բոլոր ձևերի վերացման մասին հռչակագիրը* (1981թ.) հաստատում է բոլորի մտքի, խղճի ու կրոնի ազատության և կրոնի կամ այլ հավատքների հիման վրա խտրականության չենթարկվելու իրավունքները:
- *Զարգացման իրավունքի մասին հռչակագիրը* (1986թ.) հաստատում է այս իրավունքը՝ որպես «մարդու անօտարելի իրավունք, որով յուրաքանչյուր անձ կամ բոլոր ժողովուրդները կարող են մասնակցություն ունենալ նրանում, ներդրում ունենալ ու օգտվել տնտեսական, սոցիալական, մշակութային ու քաղաքական զարգացումից, որում մարդու բոլոր իրավունքներն ու հիմնարար ազատությունները կարող են լրիվին իրականացվել»: Այն հավելում է. «Զարգացման համար հնարավորությունների հավասարությունը առանձնաշնորհ է թե՛ ազգերի, և թե՛ անհատների համար»:
- *Ազգային կամ էթնիկ, կրոնական ու լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին հռչակագիրը* (1992թ.) հռչակում է փոքրամասնությունների իրավունքը՝ վայելելու սեփական մշակույթը, դավանելու իրենց կրոնը, օգտագործելու իրենց լեզուն, ապրելու ցանկացած երկրում, ներառյալ՝ սեփականը, և վերադառնալու իրենց երկիրը: Հռչակագիրը կոչ է անում պետություններին քայլեր ձեռնարկել նրանց իրավունքներն առաջ մղելու և պաշտպանելու ուղղությամբ:
- *Մարդու իրավունքների պաշտպանների մասին հռչակագիրը* (1998թ.) փորձում է ճանաչել, առաջ մղել և պաշտպանել մարդու իրավունքների ակտիվիստների աշխատանքն ամբողջ աշխարհում: Այն ամրագրում է մարդու իրավունքները ազգային ու միջազգային մակարդակներում առաջ մղելու և պաշտպանելու, մարդու իրավունքների խախտումների դեմ խաղաղ գործողություններին մասնակցելու յուրաքանչյուրի իրավունքն անհատապես կամ այլոց հետ միասին: Պետությունները պետք է բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռնարկեն մարդու իրավունքների պաշտպաններին ուժի բռնությունից, սպառնալիքներից, վրեժից, ճնշումից կամ այլ կամայական գործողությունից պաշտպանելու համար:

Այլ կարևոր ոչ պայմանագրային չափանիշները ներառում են *Բանտարկյալների հանդեպ վերաբերմունքիստանդարտ նվազագույն կանոնները* (1957թ.), *Դատավորների անկախության հիմնական սկզբունքները* (1985թ.), *Որևէ ձևի կալանման կամ բանտարկության մեջ գտնվող բոլոր անձանց պաշտպանության սկզբունքների ամբողջությունը* (1988թ.) և *Պարտադրված անհետացումից բոլոր անձանց պաշտպանության մասին հռչակագիրը* (1992թ.) :

## Մարդու իրավունքների խորհրդաժողովը

*Մարդու իրավունքների երկրորդ համաշխարհային խորհրդաժողովը (Վիեննա, 1993թ.) վերահաստատել է մարդու իրավունքների համընդհանուր բնույթն ու կենտրոնական դերը:*

*Խորհրդաժողովը երևան հանեց շատ խնդիրների շուրջ ստեղծված լարվածությունը, ինչպիսիք են ազգային ինքնիշխանությունը, համընդհանրությունը, ոչ կառավարական կազմակերպությունների դերը և մարդու իրավունքների միջազգային գործողությունների անկողմնակալության ու ոչ ընտրողականության հարցը: Այնուհանդերձ Վիեննայի հռչակագրում և Գործողությունների ծրագրում 171 մասնակից պետությունները հաստատեցին, որ մարդու իրավունքները դարձել են «միջազգային հանրության օրինական մտահոգության առարկա», և «մարդու բոլոր իրավունքները համընդհանուր, անբաժանելի, փոխկապակցված ու փոխկախված են»:*

*Հռչակագրում ասվում է. «Ազգային ու տարածաշրջանային առանձնահատկությունների ու տարբեր պատմական, մշակութային ու կրոնական հիմքերի կարևորությունը հաշվի առնելով հանդերձ պետությունները պարտավոր են, անկախ իրենց քաղաքական, տնտեսական ու մշակութային համակարգից, առաջ մղել և պաշտպանել մարդու բոլոր իրավունքներն ու հիմնարար ազատությունները»:*

*Հռչակագիրը վերահաստատել է զարգացման իրավունքը՝ որպես համընդհանուր իրավունք, և մարդու իրավունքների ու զարգացման միջև հարաբերությունը համարել է անբաժանելի՝ ավելացնելով, որ «ժողովրդավարությունը, զարգացումը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների հանդեպ հարգանքը փոխադարձ կախվածության մեջ են և փոխադարձաբար լրացնում են միմյանց»:*

# Մարդու իրավունքների մեխանիզմը

## Մարդու իրավունքների հանձնաժողովը

ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքների առաջմղման ու պաշտպանության նպատակով աշխատող գլխավոր մարմինը **Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների հանձնաժողովն** է, որն ստեղծվել է 1946թ. Տնտեսական և սոցիալական խորհրդի կողմից: Հանձնաժողովն ապահովում է ընդհանուր քաղաքականության ուղղվածությունը, ուսումնասիրում է մարդու իրավունքների հիմնահարցերը, մշակում ու իրավական ձևակերպում է այլիս միջազգային նոր նորմերին և վերահսկում է ամբողջ աշխարհում մարդու իրավունքների պահպանումը: Որպես ՄԱԿ-ում մարդու իրավունքների հարցերի գլխավոր միջկառավարական քաղաքականություն կերտող մարմին՝ հանձնաժողովը լիազորված է քննարկելու մարդու իրավունքների վիճակը աշխարհի ցանկացած կետում և ուսումնասիրելու պետություններից, ոչ կառավարական կազմակերպություններից և այլ աղբյուրներից ստացված տեղեկատվությունը:

Հանձնաժողովը ատյան է դառնում պետությունների, միջկառավարական ու ոչ կառավարական կազմակերպությունների համար՝ արտահայտելու մարդու իրավունքների հարցերի վերաբերյալ իրենց մտահոգությունները: Կազմված 53 անդամ երկրներից, որոնք ընտրվում են երեք տարով, հանձնաժողովն ամեն տարի վեց շաբաթով հավաքվում է Ժնևում: Պետությունները, ինչպես նաև ոչ

կառավարական կազմակերպությունները տեղեկատվություն են ներկայացնում իրենց մտահոգող իրադրությունների վերաբերյալ, առնչվող պետություններն էլ հաճախ ներկայացնում են իրենց պատասխանները: Այսպիսի իրադրությունների ուսումնասիրման նպատակով փաստահավաք խմբեր կամ փորձագետներ կարող են նշանակվել, տեղում այցեր կարող են կազմակերպվել, կառավարությունների հետ քննարկումներ կարող են տարվել, օգնություն տրամադրվել, և խախտումները կարող են դատապարտվել:

Եթե որոշակի իրադրություն հատկապես լուրջ է համարվում, հանձնաժողովը կարող է անկախ փորձագետների (Աշխատանքային խմբի) կամ անհատի (Հատուկ զեկուցողի կամ ներկայացուցչի) կողմից հետաքննություն անցկացնելու հրահանգ տալ: Այս փորձագետներից ստացված տեղեկատվության հիման վրա հանձնաժողովը կոչ է անում առնչվող կառավարությանը անհրաժեշտ փոփոխություններ կատարել:

1947թ. Մարդու իրավունքների հանձնաժողովը ստեղծեց **Մարդու իրավունքների առաջմղման ու պաշտպանության ենթահանձնաժողով** (նախկինում՝ Խտրականության կանխման ու փոքրամասնությունների պաշտպանության ենթահանձնաժողով): Հանձնաժողովը հավաքվում է ամեն տարի, բաղկացած է 26 փորձագետներից, որոնք աշխատում են անհատապես՝ ոչ որպես պետության ներկայացուցիչներ: Ի սկզբանե նվիրվելով խտրականության ու փոքրամասնությունների պաշտպանության հարցերին, ենթահանձնաժողովի տարիների ընթացքում մեծապես ընդլայնել է մտահոգող հարցերի ծիրը՝ ընդգրկելով մարդու իրավունքների լայն շրջանակ: Այն սկիզբ է դրել շատ ուսումնասիրությունների, հատկապես իրավական կանոնների զարգացման ուղղությամբ, և նպաստումներ է ներկայացրել Մարդու իրավունքների հանձնաժողովին: Ոչ կառավարական կազմակերպությունները մասնակցում են ենթահանձնաժողովի աշխատանքներին:

Երեք խոշոր աշխատանքային խմբեր են զբաղվում ենթահանձնաժողովի հովանու ներքո՝ տեղաբնակ բնակչության, ստրկության ժամանակակից ձևերի և փոքրամասնությունների հարցերով:

## Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատար

**ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հարցերով գերագույն հանձնակատարը** ՄԱԿ-ի այն պաշտոնյան է, որը հիմնական պատասխանատվությունն է կրում մարդու իրավունքների ոլորտում ՄԱԿ-ի գործունեության համար: Գերագույն հանձնակատարը նշանակվում է չորս տարի ժամկետով, նրա վրա են դրված բազմաթիվ հանձնարարություններ, ներառյալ բոլորի կողմից մարդու բոլոր իրավունքներից արդյունավետորեն օգտվելուն առնչվող հարցերի առաջմղումն ու պաշտպանությունը, մարդու իրավունքների առումով միջազգային համագործակցության առաջմղումը, ՄԱԿ-ի համակարգում մարդու իրավունքներին առնչվող գործողությունների խթանումն ու համակարգումը, մարդու իրավունքների նոր չափանիշների մշակման հարցում օժանդակությունը և մարդու իրավունք-

ներին առնչվող պայմանագրերի վավերացման գործընթացի առաջմղումը: Գերագույն հանձնակատարը նաև օժտված է մարդու իրավունքների լուրջ խախտումներին արձագանքելու և խախտումները կանխարգելող գործողություններ ձեռնարկելու մանդատով:

Ներկայումս գերագույն հանձնակատարը Մերի Ռոբինսոնն է՝ Իռլանդիայի նախկին նախագահը: Գլխավոր քարտուղարի ղեկավարությամբ և նրա տված լիազորություններով գերագույն հանձնակատարը իր գործունեության մասին զեկուցում է Մարդու իրավունքների հանձնաժողովին և Տնտեսսոցխորհրդի միջոցով՝ Գլխավոր ասամբլեային: Մարդու իրավունքների հանդեպ հարգանքն ապահովելուն և խախտումները կանխելուն ուղղված իր գործունեության ընթացքում գերագույն հանձնակատարը երկխոսության մեջ է մտնում կառավարություններին հետ: Միավորված ազգերի համակարգում նա աշխատում է ՄԱԿ-ի մարդու իրավունքների մարմինները ամրապնդելու և դրանց ուղղորդելու օգտությամբ՝ դրանք առավել արդյունավետ և օգտակար դարձնելու նպատակով:

**Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը (ՄԻԳՀԳ)** մարդու իրավունքների ոլորտում ՄԱԿ-ի գործունեության հիմնական օղակն է և ծառայում է որպես քարտուղարություն Մարդու իրավունքների հանձնաժողովի, պայմանագրային մարմինների (փորձագիտական կոմիտեներ, որոնք վերահսկում են պայմանագրի կատարումը) և ՄԱԿ-ի մարդու իրավունքների այլ կառույցների համար: Գրասենյակը նաև մարդու իրավունքներին առնչվող տեղային գործունեություն է ծավալում, խորհրդատվական ծառայություններ է մատուցում և տեխնիկական օժանդակություն է տրամադրում: Ի հավելումն կանոնավոր բյուջեին՝ նրա գործունեության որոշ մասը ֆինանսավորվում է կամավոր կամ խնամառու հիմնադրամներից:

Գերագույն հանձնակատարը որոշակի քայլեր է ձեռնարկել մարդու իրավունքներին առնչվող ՄԱԿ-ի այլ մարմինների համագործակցությունն ու համակարգումն ինստիտուցիոնալացնելու ուղղությամբ: Գրասենյակը նաև ՄԱԿ-ի քարտուղարության վարչությունների հետ աշխատում է խաղաղության ու անվտանգության ապահովման ոլորտում:

### Գործունեությունը տեղերում

ՄԱԿ-ի մարդու իրավունքների ծրագրի առաջնայնություններից է մարդու իրավունքների գործնական իրականացումը: Համապատասխանաբար ՄԻԳՀԳ-ն տեղային գործունեություն է ծավալում մոտ 30 երկրներում, ներառելով ավելի քան 200 պաշտոնյաներ: Ի լրումն տեխնիկական օժանդակության՝ ՄԻԳՀԳ-ի տեղային գրասենյակները հաճախ իրականացնում են վերահսկման ու իրավունքների պաշտպանության գործառույթներ, ինչպիսիք են տեղեկատվության հավաքումը, մարդու իրավունքներին առնչվող իրադրության ուսումնասիրությունը և խախտումների մասին զեկույցների ներկայացումը: Այս ներկայությունը տեղերում նաև իր նպաստն է բերում մարդու իրավունքներին վերաբերող ազգային օրենսդրության ամրապնդման, վարչարարության ու կրթության գործին՝ օգնելով կառավարություններին անհրաժեշտության դեպքում բարենորոգման քայլեր ձեռնարկել:

### Կրթություն ու տեղեկատվություն

ՄԱԿ-ի համար կրթությունը մարդու հիմնարար իրավունք է և մարդու իրավունքների պաշտպանության ամենաարդյունավետ գործիքներից մեկը: Կրթությունը մարդու իրավունքների ոլորտում, պաշտոնական կամ ոչ պաշտոնական, փորձում է մարդու իրավունքների համընդհանուր մշակույթն առաջ տանել նորարարական ուսումնական մեթոդներով, գիտելիքի տարածման և վերաբերմունքի փոփոխման միջոցով:

**ՄԱԿ-ի տասնամյակը՝ նվիրված մարդու իրավունքների կրթությանը (1995-2004թթ.)** մի փորձ է ավելացնելու իրազեկությունն ամբողջ աշխարհում և զարգացնելու մարդու իրավունքների համընդհանուր մշակույթը: Այն արդեն մոտ 40 երկրներում հանգեցրել է մարդու իրավունքների կրթության առաջընթացի՝ ի շարս այլ առարկաների մարդու իրավունքները ներգրավելով դպրոցական ծրագրերում: Տարբեր երկրներ ընդունել են գործողությունների ազգային ծրագրեր և ներգրավել այս ջանքերում ազգային հաստատություններին:

---

## Տեխնիկական համագործակցության ծրագիր

*Քանի որ մարդու իրավունքները լավագույնս պաշտպանվում են, երբ արմատացած են տեղի մշակույթում, ՄԱԿ-ը ավելացրել է իր ջանքերը մարդու իրավունքների ազգային և տեղական մակարդակներում առաջ մղելու և պաշտպանելու ուղղությամբ: Մարդու իրավունքների միջազգային նորմերը չեն կարող կիրառվել, քանի դեռ նրանք չեն ամրագրվել ազգային օրենսդրության մեջ և չեն վայելում ազգային կառույցների աջակցությունը:*

*Ազգային մակարդակով գոյություն ունեցող շատ խոչընդոտներ դեռևս խանգարում են մարդու իրավունքների համընդհանուր կիրառմանը: Տարբեր անցման երկրներ չունեն այն ենթակառույցները, որոնք թույլ կտային արդյունավետ առաջ մղել և պաշտպանել իրենց քաղաքացիների իրավունքները: Սա հատկապես նկատվում է այն երկրներում, որոնք նոր են սկսել ոտքի կանգնել անողոք քաղաքացիական պատերազմից:*

*Այդ իսկ պատճառով ՄԱԿ-ն ուժեղացրել է կառավարություններին տրամադրվող իր խորհրդատվական ծառայությունները և ընդլայնել է իր տեխնիկական համագործակցության ծրագրերը ժողովրդավարության, զարգացման ու մարդու իրավունքների առաջմղման և պետությունների՝ այս իրավունքներն օրենքով և կիրառման մեջ կատարելագործելու կարողության ամրապնդման լայն շրջանակում:*

*Մարդու իրավունքների հարցերով տեխնիկական համագործակցության ծրագիրը, որը ղեկավարվում է Գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից, ներկայումս մոտ 50 երկրներում գործում է շուրջ 200 ծրագրերով: Դրանք հիմնականում իրականացվում են զարգացող և դեպի ժողովրդավարություն անցումային փուլում գտնվող երկրներում, որոնք գրասենյակի փորձառության կարիքն ունեն մարդու իրավունքների ազգային կառույցները հիմնելիս: Ծրագիրը, որն ունի 1,7 միլիոն դոլար տարեկան բյուջե, ֆինանսավորվում է ՄԱԿ-ի կանոնավոր բյուջեից, ինչպես նաև կամավոր նվիրատվություններից, որոնք, սկսած 1987թ. կազմել են ավելի քան 20 մլն դոլար:*

*Գրասենյակն օգնում է կառավարություններին պարզելու մարդու իրավունքների իրենց խնդիրների տարբեր ասպեկտները և մշակելու քաղաքականություն՝ հատկապես ձևավորելով ու կիրառման մեջ դնելով գործողությունների ընդգրկուն ազգային ծրագրեր: Այսպիսի ծրագրերը սահմանում են մարդու իրավունքների պաշտպանության ու առաջմղման գործում ազգային առաջնայնությունները, նպատակների ու հանձնառությունների շրջանակները և ներառում են մարդու իրավունքների ոլորտում գործող անձանց և ազգային հաստատություններից, և ոչ կառավարական կազմակերպություններից:*

*Գրասենյակը խորհրդատվական ծառայություն է մատուցում օրենսդրական այն բա-*

*րեփոխումների իրականացման համար, որոնք ազդեցություն են ունենում մարդու իրավունքների կիրառման վրա, ինչպես, օրինակ, քրեական օրենսգրքի, բանտային կանոնադրության, դատական ու իրավական վարույթի, ինչպես նաև արտահայտման ու միավորվելու ազատության: Մանրակրկիտ տեխնիկական աջակցություն է ցուցաբերվում մարդու իրավունքների միջազգային չափանիշները ազգային օրենքներում ու քաղաքականության մեջ ներմուծելու հարցում և ազգային հաստատություններ հիմնելիս, որոնք զբաղվում են մարդու իրավունքների, ժողովրդավարության ու օրենքի գերակայության առաջմղման խնդիրներով: Դրանց շարքին է դասվում օմբուդսմենը, որը զբաղվում է անհատներից ստացվող բողոքներով, և Մարդու իրավունքների ազգային հանձնաժողովը, որը վերահսկում է կառավարության գործողությունները և կարող է օգնել վերջինիս՝ հետամուտ լինելու մարդու իրավունքների պաշտպանության ազգային համակարգերի շրջանակներում իր ստանձնած պարտավորություններին:*

*Ի լրումն ազգային ծրագրերի գրասենյակը իրականացնում է համաշխարհային կամ թեմատիկ ծրագրեր, ինչպիսիք են կրթությունը մարդու իրավունքների ոլորտում և ուսուցումը խաղաղապահ ուժերի համար:*

---

## Մարդու իրավունքների առաջմղումն ու պաշտպանությունը

ՄԱԿ-ի գործողությունների դերն ու նշանակությունը մարդու իրավունքների առաջմղման ու պաշտպանության գործում շարունակում է մեծանալ, բայց հիմնական մանդատը մնում է հետևյալը. ապահովել, որ լիովին հարգվի իր ամենաբարձր քվեատուների՝ «Միավորված ազգերի կազմակերպության ժողովուրդների» մարդկային արժանապատվությունը, ում անունից գրվել է կանոնադրությունը: Միջազգային կառույցների միջոցով ՄԱԿ-ն աշխատում է շատ ճակատներում:

- **Որպես համաշխարհային խիղճ:** ՄԱԿ-ը ուղղակի ունակ է սահմանել ազգերի կողմից ընդունելի վարքագծի միջազգային չափանիշեր հաստատելու առումով, և միջազգային հանրության ուշադրությունը սևեռված է պահում մարդու իրավունքների այն գործողությունների վրա, որոնք վտանգում են այս չափանիշները: Մարդու իրավունքների հռչակագրերն ու կոնվենցիաները ընդունվում են Գլխավոր ասամբլեայի կողմից՝ շեշտելով դրանց համընդհանուր բնույթը:
- **Որպես օրենսդիր:** Միջազգային իրավունքի աննախադեպ կանոնագրում է տեղի ունեցել: Մարդու այնպիսի իրավունքներ, որոնք վերաբերում են (միայն մի քանիսը թվելու պարագայում) կանանց, երեխաներին, բանտարկյալներին ու դատապարտվածներին, մտավոր թերզարգացած անձանց, ինչպես նաև այն խախտումները, ինչպիսիք են ցեղասպանությունը, ռասայական խտրականությունն ու խոշտանգումները, այսօր միջազգային իրավունքի կարևորագույն մասն են կազմում, որը մի ժամանակ համարյա բացառապես կենտրոնացած էր պետությունների միջև հարաբերությունների վրա:
- **Որպես վերահսկիչ:** ՄԱԿ-ը կենտրոնական դեր ունի առ այն, որ ապահովում է, որպեսզի մարդու իրավունքները ոչ միայն վերացականորեն սահմանվեն, այլև գործածության մեջ դրվեն: Միջազգային դաշնագրերը քաղաքացիա-

կան ու քաղաքական իրավունքների և տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների (1966թ.) ամենավաղ կնքված պայմանագրային օրինակներ են, որոնք փորձում են միջազգային մարմիններին վերահսկելու, թե ինչպես են պետությունները կատարում իրենց պարտավորությունները: Մարդու իրավունքների հանձնաժողովի պայմանագրային մարմինները, հատուկ զեկուցողներն ու աշխատանքային խմբերը, բոլորն էլ ընդունված գործընթացներ ու մեխանիզմներ ունեն, որոնցով վերահսկում են միջազգային չափանիշների կատարումը և հետաքննում ենթադրվող խախտումները: Նրանց որոշումները որոշակի դեպքերում բարոյական կշիռ ունեն, որը շատ քիչ կառավարություններ են, որ հաշվի չեն առնում:

- **Որպես ճյուղային կենտրոն:** ՄԻԳՀԳ-ն հաղորդագրություններ է ստանում անհատներից կամ խմբերից, որոնք պնդում են, թե իրենց մարդկային իրավունքները խախտվել են: Ամեն տարի ստացվում է ավելի քան 100 հազար բողոք: ՄԻԳՀԳ-ն այս հաղորդագրությունները փոխանցում է ՄԱԿ-ի համապատասխան մարմիններին ու կառույցներին՝ հաշվի առնելով կոնվենցիաներով ու բանաձևերով սահմանված կիրարկման գործընթացները: Տվյալ միջամտության մասին խնդրանքները կարող են ուղարկվել ՄԻԳՀԳ-ին ֆաքսիմիլային (ֆաքս. 41 22 - 917 9003) կամ էլեկտրոնային (էլ-փոստ՝ webadmin.chr@unog.ch) կապով:
- **Որպես պաշտպան:** Երբ զեկուցող կամ աշխատանքային խմբի նախագահը տեղեկատվություն է ստանում առ այն, որ մարդու իրավունքների լուրջ խախտում է պատրաստվում, ասենք, խոշտանգում կամ արտադատական մահապատիժ, նա շտապ հաղորդում է ուղարկում խնդրո առարկա պետությանը՝ խնդրելով պարզաբանումներ և կոչ անելով երաշխավորել ենթադրյալ զոհի իրավունքները: Այսպիսի կոչեր մասնավորապես արվում են հատուկ զեկուցողների կողմից խոշտանգումների կամ կամայական մահապատժի դեպքում, ինչպես նաև աշխատանքային խմբի կողմից՝ անհետացումների կամ կամայական կալանավորման դեպքում:
- **Որպես հետազոտող:** Մարդու իրավունքների խնդիրների վերաբերյալ ՄԱԿ-ի հավաքած տվյալները էական են զարգացման ու մարդու իրավունքներին առնչվող օրենքները կիրառելու համար: Օրինակ՝ երկրների մասին մի քանի ուսումնասիրություններ հիմք դարձան մի օրինագծի, որը մշակվում է բնիկ ժողովուրդների իրավունքները պաշտպանելու համար: ՄԻԳՀ-ն ՄԱԿ-ի մարմինների խնդրանքով մարդու իրավունքների հարցերի շուրջ ուսումնասիրություններ և զեկույցներ է պատրաստում՝ նշելով այն քաղաքականությունը, գործողությունները և նոր հաստատությունները, որոնք կարող են ամրապնդել հարգանքը մարդու իրավունքների հանդեպ:
- **Բողոքարկման ատյան:** Ըստ Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի առաջին կամընտիր արձանագրության, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի, խոշտանգումների դեմ կոնվենցիայի ու Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրության, անհատները կարող են բողոքներ ներկայացնել պետությունների դեմ

որոնք ընդունել են բողոքարկման ընթացակարգը, այն բանից հետո, երբ սպառվել են ներպետական բոլոր միջոցները: Նաև Մարդու իրավունքների հանձնաժողովի կողմից հաստատված ընթացակարգով հանձնաժողովն ինքը, նրա Մարդու իրավունքների առաջմղման ու պաշտպանության ենթահանձնաժողովը և աշխատանքային խմբերը կարող են քննել բազմաթիվ բողոքներ, որոնք ամեն տարի ներկայացվում են ոչ կառավարական կազմակերպությունների ու անհատների կողմից:

- **Որպես փաստաբան:** Մարդու իրավունքների հանձնաժողովը որոշակի բնույթի իրավախախտումների կատարումը և որոշակի երկրում խախտումները վերահսկելու և զեկուցելու մեխանիզմներ է հաստատել: Կառույցը, որին հանձնարարվում է այս քաղաքականապես զգայուն, մանրամասնական և երբեմն վտանգավոր առաջադրանքը, **Հատուկ զեկուցողները / ներկայացուցիչները** կամ **Աշխատանքային խմբերն են:** Նրանք փաստեր են հավաքում, կապ են պահպանում անհատների խմբերի ու կառավարության մարմինների հետ, տեղային այցեր են կատարում կառավարության թույլտվությամբ և նկատառումներ են ներկայացնում, թե ինչպես կարող է ամրապնդվել հարգանքը մարդու իրավունքների հանդեպ:

---

## Հատուկ զեկուցողներ և աշխատանքային խմբեր

*Մարդու իրավունքների հարցերով հատուկ զեկուցողներն ու Աշխատանքային խմբերը գտնվում են մարդու իրավունքների պաշտպանության առաջնային գծում, ուսումնասիրում են խախտումները և միջամտում են առանձին դեպքերում ու արտակարգ իրավիճակներում:*

*Մարդու իրավունքների այս անկախ փորձագետներն ու փորձագիտական խմբերը ստեղծվում են Մարդու իրավունքների հանձնաժողովի ու Տնտեսական ու սոցիալական խորհրդի կողմից և հաշվետու են հանձնաժողովին, խորհրդին ու Գլխավոր ասամբլեային: Իրենց զեկույցները պատրաստելիս նրանք օգտագործում են բոլոր միջոցները՝ ներառյալ անհատական հաղորդակցությունը և ոչ կառավարական կազմակերպություններից ստացվող տեղեկատվությունը: Նրանց ուսումնասիրությունների մեծ մասն իրականացվում է տեղերում՝ թե իշխանությունների, թե զոհերի հետ հարցազրույցներ անցկացնելու և տեղում փաստերի հավաքման միջոցով: Նրանք նաև կիրառում են շտապ գործողության մեթոդը՝ ամենաբարձր մակարդակով կառավարությունների միջամտելու նպատակով: Նրանց զեկույցները հրապարակվում են՝ դրանով իսկ օգնելով խախտումները և կառավարությունների պարտավորությունները հրապարակայնացնելու:*

*Այս փորձագետներն ուսումնասիրում, վերահսկում և հրապարակայնորեն զեկուցում են առանձին երկրներում մարդու իրավունքների իրավիճակի կամ ամբողջ աշխարհում մարդու իրավունքների խախտումների որևէ մեծ խնդրի մասին:*

- *Առանձին երկրների հատուկ զեկուցողները և ներկայացուցիչները ներկայումս զեկուցում են Աֆղանստանի, Բուրունդիի, Կամբոջայի, Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության, Հասարակածային Գվինեայի, Հաիթիի, Իրանի, Իրաքի, Մյանմարի, Պաղեստինյան գրավյալ տարածքների, Ռուանդայի, Սոմալիի, Սուդանի և նախկին Հարավսլավիայի մասին: Ի լրումն, գլխավոր քարտուղարին մանդատ է տրվել զեկուցելու Կիպրոսի, Արևելյան Թիմորի, Կոսովոյի և գրավյալ արաբական տարածքների մասին: ռասայական խտրականության, ներքին տեղահանվածների, միգրանտների, մարդու իրավունքների պաշտպանների, խոսքի ազատության, դատավորների անկախության, զոհերին վնասի հատուցման ու փոխհատուցման, վարձկանների, կառուցվածքային բարեփոխումների ու արտաքին պարտքի,*

*ծայրահեղ աղքատության, զարգացման իրավունքի, կրթության իրավունքի, սննդի իրավունքի, օթևան ունենալու իրավունքի և թունավոր ու վտանգավոր նյութերի ու թափոնների տեղափոխման ու արտանետման բացասական հետևանքների մասին:*

---

- **Որպես շրջանային դիվանագետ:** Գլխավոր քարտուղարը և Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարը անձամբ երկրների հետ գաղտնաբար քննարկում են մարդու իրավունքների վերաբերյալ իրենց մտահոգությունների այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են քաղաքական բանտարկյալների ազատ արձակումը, մահապատժի դատավճռի մեղմացումը և այլն: Մարդու իրավունքների հանձնաժողովը աղաղակող խախտումները կանխելու նպատակով կարող է խնդրել Գլխավոր քարտուղարին միջամտել կամ փորձագետ ուղարկել ուսումնասիրելու մարդու իրավունքներին առնչվող իրավիճակը: Գլխավոր քարտուղարը նույնպես կարող է լուռ դիվանագիտության այսպիսի քայլեր ձեռնարկել՝ օգտագործելով իր «բարի ծառայությունները», դրանով իսկ օգնելով Միավորված ազգերին արտահայտելու իր օրինական մտահոգությունները և զսպելու չարաշահումները:

## Զարգացման իրավունքը

Այն ընկալումը, որ ծանր աղքատությունը և թերզարգացածությունը ազդեցություն են ունենում մարդու իրավունքներից օգտվելու վրա, մարդու իրավունքների նկատմամբ ՄԱԿ-ի մոտեցման մասն է կազմել՝ իր առաջին արտահայտությունը գտնելով Համընդհանուր հռչակագրում: *Զարգացման իրավունքի մասին հռչակագիրը*, որն ընդունվել է Գլխավոր ասամբլեայում 1986թ., շրջադարձային եղավ այս ընկալումն իրականություն դարձնելու խնդրում և գործնական ազդեցություն ունեցավ ազգային ու միջազգային զարգացման քաղաքականության հետամուտ լինելու եղանակի վրա:

Վիեննայի հռչակագրում պետությունները մեծ կարևորություն տվեցին զարգացման իրավունքին, և այս հստակորեն իր դրսևորումն է գտել գերագույն հանձնակատարի մանդատում: 1998թ. Մարդու իրավունքների հանձնաժողովը **Զարգացման իրավունքի անկախ փորձագետ** նշանակեց: Հանձնաժողովը զարգացման գործընթացը վերահսկելու և զարգացման իրավունքը կիրարկելու ռազմավարություն մշակելու համար նաև 1998թ. **աշխատանքային խումբ** հիմնեց:

## Աշխատանքի իրավունքը

Աշխատանքի իրավունքի սահմանումն ու պաշտպանությունը ՄԱԿ-ին մտահոգող մեկ այլ ոլորտ է: **Աշխատանքի միջազգային կազմակերպության** (ԱՄԿ հիմնական մարմիններից մեկը՝ հատկապես **Աշխատանքի միջազգային խորհրդաժողովը**, որը բաղկացած է կառավարությունների, գործատուների և աշխատողների ներկայացուցիչներից, մի շարք կոնվենցիաների և հանձնարարականների միջոցով միջազգային չափանիշներ է սահմանել: Պետությունների կողմից վավերացումը պարտադիր պարտավորություններ է դնում այս կոնվենցիայ

դրույթները ուժի մեջ մտցնելու համար: Հանձնարարականներն ուղեցույցներ են տալիս քաղաքականության, օրենսդրության ու վարույթի վերաբերյալ:

Տարիների ընթացքում անդամ պետությունների կառավարությունները և նրանց գործատուների ու աշխատողների կազմակերպությունները միջազգային չափանիշների համակարգ են ստեղծել աշխատանքին առնչվող բոլոր հարցերում: Ամբողջությամբ ընդունվել են մոտ 183 կոնվենցիա և 191 հանձնարարական: Երբ շատերն առնչվում են այնպիսի խնդիրների, ինչպիսիք են աշխատանքի կառավարումը, արդյունաբերական հարաբերությունները, աշխատանքի քաղաքականությունը, աշխատանքային պայմանները, սոցիալական ապահովագրությունը, աշխատանքային անվտանգությունն ու առողջությունը, այլ մյուսները վերաբերում են աշխատավայրում մարդու հիմնարար իրավունքների ապահովմանը և այնպիսի հարցերի, ինչպիսիք են կանանց, երեխաների ու հատուկ դասակարգերին պատկանողների՝ միգրանտ աշխատողների ու հաշմանդամների պաշտպանության խնդիրները:

ԱՄԿ-ի վերահսկողական ընթացակարգը՝ օրենքում և վարույթում իր կոնվենցիաների կիրառումն ապահովելը, ամենաակատարելագործվածն է միջազգային նման ընթացակարգերի շարքում: Այն հիմնված է պարտավորությունների կատարման մասին անկախ փորձագետների օբյեկտիվ գնահատման և ԱՄԿ-ի եռանդամ մարմինների կողմից գործերի քննության վրա: Միավորման ազատության խախտումները հետաքննելու համար հատուկ ընթացակարգ է գործում:

ԱՄԿ-ն մի շարք հիմնարար կոնվենցիաների սկիզբ է դրել.

- *Պարտադրված աշխատանքի մասին (1930թ.)*, պահանջում է պարտադրված կամ հարկադրական աշխատանքի բոլոր ձևերի վերացումը:
- *Միավորման ազատության ու կազմակերպվելու իրավունքի պաշտպանության մասին (1948թ.)*, հաստատում է աշխատողների ու գործատուների իրավունքը՝ ստեղծելու կազմակերպություններ կամ միանալու նրանց առանց նախնական թույլտվության, երաշխիքներ է սահմանում այսպիսի կազմակերպությունների ազատ գործունեության համար:
- *Կազմակերպվելու և հավաքական սակարկման իրավունքը (1949թ.)*, պաշտպանություն է ապահովում միությունների դեմ գործող խտրականությունից, պաշտպանություն՝ աշխատողների ու գործատուների կազմակերպությունների համար և միջոցառումներ է ապահովում հավաքական սակարկումն առաջ մղելու համար:
- *Հավասար վարձատրության մասին (1951թ.)*. հավասարարժեք աշխատանքի դիմաց հավասար վճարման և նպաստների կոչ է անում:
- *Խտրականության մասին (1958թ.)*, ազգային քաղաքականության ստեղծման կոչ է անում, որը առաջ տանի հնարավորությունների ու վերաբերմունքի հավասարությունը և վերացնի աշխատանքում ռասայական պատկանելության, մաշկի գույնի, սեռի, կրոնի, քաղաքական հայացքների, ծագման ու սոցիալական ծագման հիման վրա խտրականությունը:
- *Նվազագույն տարիքի մասին (1973թ.)*, նպատակ ունենալով մանկական աշխատանքի վերացումը, սահմանում է, որ աշխատանքի նվազագույն տարիքը չպետք է ավելի փոքր լինի, քան պարտադիր դպրոցական ուսուցումն ավար-

տելու տարիքը:

- *Մանկական աշխատանքի վատագույն ձևերի մասին (1999թ.)*. արգելում է մանկական ստրկությունը, պարտքի դիմաց ճորտությունը, պոռնկությունն ու պոռնկագրությունը, վտանգավոր աշխատանքը և ռազմական հակամարտության համար բանի հավաքագրումը:

Ի լրումն՝ Գլխավոր ասամբլեան մի շարք միջոցներ է ձեռնարկել միգրանտ աշխատողների իրավունքների պաշտպանության ուղղությամբ:

## Պայքար խտրականության դեմ

### Ապարտեիդ

ՄԱԿ-ի ամենամեծ հաջողություններից մեկը, որը ցույց տվեց, թե ինչպես կարող է նա վերջ դնել աշխարհում մեծագույն անարդարությանը, Հարավային Աֆրիկայում ապարտեիդի իշխանության վերացման գործում ունեցած դերն էր: Փաստորեն իր սկզբնավորումից ի վեր ՄԱԿ-ը ներգրավված է եղել ապարտեիդի դեմ պայքարում, մի համակարգի դեմ, որը հաստատել էր ռասայական տարբերակումը և խտրականությունը՝ պարտադրված Հարավաֆրիկյան Հանրապետության կառավարության կողմից:

Երբ 1994թ. ՀԱՀ-ի նորընտիր նախագահը՝ Նելսոն Մանդելան, ելույթ ունեցավ Գլխավոր ասամբլեային, նշեց, որ Գլխավոր ասամբլեային, իր գոյության 49 տարիների ընթացքում, առաջին անգամ է ողջունում Հարավաֆրիկյան Հանրապետության ղեկավարը, որը ծագումով աֆրիկյան մեծամասնությունից է: Ողջունելով ապարտեիդի հաղթահարումը՝ նա ասաց. «Այդ պատմական փոփոխության գործում պակաս դեր չեն ունեցել այն ջանքերը, որ գործադրել է Միավորված ազգերի կազմակերպությունը՝ մարդկության դեմ ապարտեիդի հանցագործությունը ճնշելու նպատակով»:

1996թ. ՄԱԿ-ի կողմից դատապարտվելով որպես «հանցագործություն մարդկության դեմ», որը անհամատեղելի է Կանոնադրության և Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի հետ, ապարտեիդի խնդիրը Գլխավոր ասամբլեայի օրակարգում է եղել 1948թ. մինչև 1994թ. վերջը: 1950-ական թվականների ընթացքում Գլխավոր ասամբլեան շարունակաբար կոչ էր անում ՀԱՀ-ի կառավարությանը՝ դադարեցնելու ապարտեիդը Կանոնադրության սկզբունքների լույսի ներքո:

- ՄԱԿ-ի հատուկ հանձնաժողովը ապարտեիդի դեմ՝ ստեղծված 1962թ. Գլխավոր ասամբլեայի կողմից ՀԱՀ-ի ռասայական քաղաքականությունը հսկողության տակ պահելու համար, ապարտեիդի դեմ գործողությունների համապարփակ ծրագրի առաջմղմանն ուղղված միջազգային համերաշխության ջանքերի համար կենտրոնական օղակ դարձավ:
- Գլխավոր ասամբլեան 1973թ. ընդունեց *Ապարտեիդի հանցագործությա*

*պատժման ու արգելման մասին միջազգային կոնվենցիան:*

- 1963թ. Անվտանգության խորհուրդը կամավոր բռնարգելք սկսեց Հարավաֆրիկյան Հանրապետության դեմ և այն պարտադիր դարձրեց 1977թ., երբ որոշեց, որ այդ երկրի ագրեսիան իր հարևանների դեմ և նրա միջուկային պոտենցիալ կարողությունները վտանգ են ներկայացնում միջազգային խաղաղության ու անվտանգության համար. առաջին անգամ խորհուրդը որոշեց նման գործողություններ կիրառել անդամ պետության դեմ:
- 1971թ. Գլխավոր ասամբլեան կոչ արեց բոյկոտել սպորտային միջոցառումները ՀԱՀ-ում, մի քայլ, որն իր շարունակական ազդեցությունն ունեցավ հասարակական կարծիքի վրա Հարավաֆրիկյան Հանրապետությունում և արտասահմանում, իսկ 1985թ. ընդունեց *Սպորտում ապարտեիդի դեմ պայքարի միջազգային կոնվենցիան:*
- Ի թիվս ՀԱՀ-ի բազում պախարակումների, Գլխավոր ասամբլեան 1970-1974թթ. չէր ընդունում նրա լիազորությունները Գլխավոր ասամբլեայի կանոնավոր նիստերի ընթացքում՝ դրանով իսկ մերժելով այդ երկրի պատվիրակությանը մասնակցելու իր աշխատանքներին: ՀԱՀ-ը չի մասնակցել ասամբլեայի հետագա աշխատանքներին մինչև ապարտեիդի վերջը՝ 1994թ.:
- 1985թ., երբ Հարավաֆրիկյան Հանրապետության կառավարությունը հռչակեց արտակարգ իրավիճակ և ուժեղացրեց ռեպրեսիան, Անվտանգության խորհուրդն առաջին անգամ կոչ արեց կառավարություններին Կանոնադրության գլուխ VII-ի համաձայն նշանակալի տնտեսական միջոցառումներ ձեռնարկել ՀԱՀ-ի դեմ:
- Անցումը ապարտեիդի կառավարությունից ոչ ռասայական ժողովրդավարության՝ 1990թ. կառավարության ու խոշոր քաղաքական կուսակցությունների միջև կնքված Ազգային խաղաղության համաձայնագրի օգնությամբ, լրվին վայելում էր ՄԱԿ-ի օժանդակությունը: 1992թ. Անվտանգության խորհրդի երկու բանաձևերը կարևորեցին միջազգային հանրության ներգրավվածությունը անցումային փուլում: Ուժեղացնելու համար խաղաղության համաձայնագրի կառույցները՝ Անվտանգության խորհուրդը 1992թ. ՄԱԿ-ի դիտորդական առաքելություն տեղակայեց Հարավաֆրիկյան Հանրապետությունում: Առաքելությունը հետևեց 1994թ. ընտրություններին, որը հանգեցրեց ոչ ռասայական ու ժողովրդավարական կառավարության հաստատմանը: Նոր կառավարության իշխանության գալով և առաջին ոչ ռասայական, ժողովրդավարական սահմանադրության ընդունմամբ ապարտեիդի համակարգին վերջ դրվեց:

## Ռասիզմ

1963թ. Գլխավոր ասամբլեան ընդունեց *ՄԱԿ-ի հռչակագիրը ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին:* Հռչակագիրը պնդում է, որ բոլոր անձինք հավասար են, և հաստատում է, որ մարդկային էակների միջև խտրականությունը ռասայական պատկանելության, մաշկի գույնի կամ էթնիկ ծագման հիման վրա Համընդհանուր հռչակագրով սահմանված մարդու իրա-

վունքների խախտում է և ազգերի ու ժողովուրդների միջև բարեկամական ու խաղաղ հարաբերությունների խոչընդոտ:

Երկու տարի անց Գլխավոր ասամբլեան ընդունեց *Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիան*, որը պարտավորեցնում է անդամ պետություններին ընդունել օրենսդրություն, դատական, վարչական և այլ միջոցառումներ ձեռնարկել ռասայական խտրականությունը կանխելու և պատժելու համար:

1993թ. Գլխավոր ասամբլեան հռչակեց **Ռասիզմի ու ռասայական խտրականության դեմ պայքարի երրորդ տասնամյակը (1993-2003թթ.)** և կոչ արեց բոլոր պետություններին միջոցներ ձեռնարկել ռասիզմի նոր ձևերի դեմ պայքարելու համար, հատկապես օրենքի, վարչական միջոցառումների, կրթության ու տեղեկատվության միջոցով:

1993թ. նաև Մարդու իրավունքների հանձնաժողովը **ռասիզմի, ռասայական խտրականության, քսենոֆոբիայի և հարակից անհանդուրժողականության ժամանակակից ձևերի հարցերով հատուկ զեկուցող նշանակեց**: Նրա մանդատը ներառում է ամբողջ աշխարհում ռասիզմի ժամանակակից ձևերի, ռասայական խտրականության, սևերի, արաբների ու մահմեդականների հանդեպ խտրականության ցանկացած ձևի, օտարատյացության, հակասեմիթիզմի և համանման անհանդուրժողականության առնչվող դեպքերի, ինչպես նաև դրանց հաղթահարելու ուղղությամբ կառավարության կողմից ձեռնարկվող միջոցառումների ուսումնասիրումը:

Ինչպես որոշվել էր Գլխավոր ասամբլեայի կողմից, **Ռասիզմի, ռասայական խտրականության, օտարատյացության ու հարակից անհանդուրժողականության վերաբերյալ համաշխարհային խորհրդաժողովը** տեղի ունեցավ 2001թ Հարավաֆրիկյան Հանրապետությունում: Նրա ուշադրության կենտրոնում էին գործնական միջոցառումները՝ ուղղված ռասիզմի վերացմանը, ներառյալ կանխումը, կրթությունը և պաշտպանությունը: Նախորդ խորհրդաժողովները կայացել էին Ժնևում 1978թ. և 1983թ.:

## Կանանց իրավունքները

Կանանց իրավահավասարությունը ՄԱԿ-ի աշխատանքների կենտրոնում եղել 1945թ. նրա հիմնադրումից և 1946թ. Կանանց կարգավիճակի հարցերով հանձնաժողովի՝ որպես կանանց հարցերով զբաղվող հատուկ մարմնի, հիմնումից ի վեր: Միավորված ազգերի կազմակերպությունը հավատարիմ դաշնակից է եղել ամբողջ աշխարհում կանանց իրավունքները ձեռք բերելու պայքարում և կանանց համար հասարակական կյանքի մասնակցության հավասար իրավունքների և տնտեսական ու սոցիալական զարգացման բոլոր ասպեկտներում հնարավորությունների ապահովման ջանքերում:

Վերջին տարիներին ՄԱԿ-ի ընտանիքի բոլոր կազմակերպությունները ակտիվ են վերանայել իրենց աշխատանքը՝ ապահովելով, որ կանայք ավելի լավ ներկայացված լինեն որոշումներ կայացնող մարմիններում, և նրանց խնդիրներ համարվեն այդ ոլորտում տարվող քաղաքականության ու ծրագրերի հիմնա-

կան բաղադրիչը: Ի լրումն՝ քայլեր են ձեռնարկվել ողջ ՄԱԿ-ում կանանց առաջխաղացումն ապահովելու համար:

**Կանանց կարգավիճակի հանձնաժողով:** Կանանց կարգավիճակի հանձնաժողովը, որը բաղկացած է 45 անդամ պետություններից, ուսումնասիրում է ամբողջ աշխարհում կանանց առաջխաղացումը դեպի հավասարություն, պատրաստում է հանձնարարականներ կանանց իրավունքները քաղաքական, տնտեսական, սոցիալական և կրթական ոլորտներում առաջ մղելու համար, քննարկում է անմիջական ուշադրության պահանջող կանանց իրավունքներին առնչվող խնդիրները: Հանձնաժողովը նաև պայմանագրեր և այլ փաստաթղթեր է մշակում, որոնք նպատակ ունեն բարելավել կանանց կարգավիճակը օրենսդրությունում և գործնականում:

Հանձնաժողովի գործունեությունը ծավալվել է իրավունքների սահմանումից մինչև գործոնների ուսումնասիրումը, որոնք խանգարում են կանանց օգտվելու այդ իրավունքներից: Այսպիսով շեշտադրումը փոխվել է դեպի սեռային խտրականության խորքում ընկած սոցիալական ու մշակութային պատճառները: Հանձնաժողովն, օրինակ, մշակել է *Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին հռչակագիրը*, որն ընդունվել է Գլխավոր ասամբլեայի կողմից 1993թ.: Հռչակագիրը ներառում է բռնության հստակ սահմանումը, այն է՝ ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական բռնություն, որը տեղի է ունենում ընտանիքում կամ հանրության մեջ՝ հրահրվելով պետության կողմից կամ վերջինիս թողտվությամբ:

Հանձնաժողովը օժանդակել է կանանց առաջխաղացման համար միջազգային ուղեցույցների և օրենքների ստեղծմանը, որոնցից ամենանշանակալին *1979թ. Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան* է և դրա *1999թ. արձանագրությունը*:

**Կանայք և զարգացումը:** Իր գործող մարմինների միջոցով ՄԱԿ-ը, մասնավորապես համընդհանուր զարգացման ջանքերի շրջանակներում, աշխատում է առաջ մղել կանանց իրավահավասարությունները: Ի լրումն ՄԱԿ-ի քարտուղարության կողմից իրականացվող աշխատանքին, մասնավորապես Կանանց առաջխաղացման բաժանմունքում, մասնագիտացված գործակալություններում, հիմնադրամներում ու ծրագրերում, կա երկու մարմին՝ նվիրված հատկապես կանանց՝ **ՄԱԿ-ի Կանանց զարգացման հիմնադրամը (ՄԱԿԶՀ-UNIFEM) և Կանանց առաջխաղացման միջազգային ուսումնասիրությունների ու վերապատրաստական ինստիտուտը (ԿԱՄՈՒՎԻ-INSTRAW)**: Երկուսն էլ ստեղծվել են ի օժանդակություն կանանց կյանքը բարելավող ծրագրերի ու նախագծերի:

---

## Կանանց խորհրդաժողովները

*ՄԱԿ-ի խորհրդաժողովները, համադրված կանանց ազգային շարժումների ջանքերին, ամբողջ աշխարհում կանանց առաջխաղացման վերաբերյալ հետաքրքրության, ընկալման և գործողությունների սկիզբ են դրել:*

*Երեք համաշխարհային խորհրդաժողովները՝ Մեխիկոյում 1975թ., Կոպենհագենում 1980թ. և Նայրոբիում 1985թ., մեծապես ավելացրեցին միջազգային իրազեկությունը կանանց հարցերում և անգնահատելի կապեր ստեղծեցին կանանց ազգային շարժումների ու միջազգային հանրության միջև:*

*Կանանց չորրորդ համաշխարհային խորհրդաժողովում (Պեկին, 1995թ.) 189 երկրների ներկայացուցիչներ ընդունեցին Պեկինյան հռչակագիրը և Գործողությունների պլատֆորմը. դրանք նպատակ ունեին վերացնել այն արգելքները, որոնք խանգարում են կանանց մասնակցությանը հասարակական ու անձնական կյանքի բոլոր ոլորտներում: Պլատֆորմը առանձնացնում է մտահոգության 12 վճռորոշ ոլորտներ.*

- *կանանց վրա աղքատության մշտական ու աճող բեռը,*
- *կրթության անհավասար մատչելիությունը և անբավարար հնարավորությունները,*
- *առողջական հարցերում անհավասարությունը, առողջապահական ծառայությունների անհավասար մատչելիությունը և դրանց անբավարարությունը,*
- *կանանց հանդեպ բռնությունը,*
- *կանանց վրա հակամարտությունների ազդեցությունը,*
- *տնտեսական համակարգերի ու քաղաքականության որոշման և բուն արտադրության գործընթացում կանանց մասնակցության անհավասարությունը,*
- *իշխանական օղակներում և որոշում կայացնելու գործընթացներում անհավասարությունը,*
- *կանանց առաջխաղացումն առաջ տանելու համար առկա անբավարար մեխանիզմները,*
- *միջազգայնորեն և ազգային մակարդակով ճանաչված կանանց իրավունքների հարցերում իրազեկության ու դրանց հանդեպ հանձնառության պակասը,*
- *զանգվածային լրատվության անբավարար մոբիլիզացումը կանանց ներդրումը հասարակության մեջ առաջ մղելու ուղղությամբ,*
- *բնական պաշարները կառավարելու և շրջակա միջավայրը պահպանելու հարցերում կանանց ունեցած ներդրումը բավարար չափով ընդունելու և դրան օժանդակելու պակասը,*
- *աղջիկ երեխաները:*

*Գլխավոր ասամբլեայի՝ խորհրդաժողովի աշխատանքներին հետամուտ լինելուն նվիրված 2000թ. հատուկ նստաշրջանի ժամանակ երկրները լրացուցիչ նախաձեռնություններ առանձնացրին, ինչպիսիք են ընտանեկան բռնության բոլոր ձևերի դեմ ուղղված օրենսդրության ուժեղացումը և այնպիսի վնասակար գործողությունների վերացմանն ուղղված օրենքների ու քաղաքականության կիրառումը, ինչպիսիք են վաղ կամ հարկադրված ամուսնությունն ու կանանց սեռական օրգանների թլպատումը: Նպատակ է դրվել անվճար պարտադիր տարրական կրթություն ապահովել աղջիկների ու տղաների համար և բարելավել կանանց առողջությունը առողջապահական ու կանխարգելիչ ծրագրերի ավելի մեծ մատչելիություն ապահովելու միջոցով:*

---

## Երեխայի իրավունքները

Ամեն տարի միլիոնավոր երեխաներ են մահանում թերսնուցումից ու հիվանդություններից: Անհաշիվ երեխաներ պատերազմի, շահագործման ծայրահեղ ձևերի ու այնպիսի բռնությունների զոհ են դառնում, ինչպիսին է սեռական շահագործումը: **ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը (ՄԱՄՀ)** Միավորված ազգերի կազմակերպության միակ գործակալությունը, որը մանդատ է ստացել երեխաների իրավունքները քարոզելու համար, փորձում է պահպանել համաշխարհային հանձնառությունը *Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի* անշեղությամբ, որը մարմնավորում է երեխաների հանդեպ վերաբերմունքի համընդհա-

նուր էթիկական սկզբունքներն ու միջազգային իրավական չափանիշները:

2000թ. Գլխավոր ասամբլեան ընդունեց կոնվենցիային կից *երկու կամընտիր արձանագրությունները*. մեկն արգելում է 18 տարեկանից ցածր երեխաների հավաքագրումը զինված ուժերում կամ նրանց մասնակցությունը պատերազմական գործողություններին, մյուսը ուժեղացնում է արգելքներն ու տուգանքները երեխաների վաճառքի, երեխաների պոռնկության և երեխաների պոռնկագրության համար:

**Երեխայի իրավունքների կոմիտեն**, որը ստեղծվել է կոնվենցիայի ներքո, հանդիպում է պարբերաբար անդամ պետությունների ստանձնած պարտավորությունների կատարման գործում ունեցած առաջընթացը վերանայելու համար: Կոմիտեն առաջարկություններ ու հանձնարարականներ է ներկայացնում կառավարություններին և Գլխավոր ասամբլեային համաձայն երեխաների իրավունքների պաշտպանության եղանակների մասին:

Ինչ վերաբերում է մանկական աշխատանքին, ԱՄԿ-ի խնդիրն է պաշտպանել աշխատող երեխաներին շահագործումից և այն վտանգավոր պայմաններից, որոնք կարող են վնասել նրանց ֆիզիկական և մտավոր զարգացումը, ինչպես նաև ապահովել երեխաների համար առնվազն նվազագույն կրթության, սննդի ու առողջապահության մատչելիությունը և հեռանկարում հասնել մանկական աշխատանքի աստիճանական վերացմանը:

- Մանկական աշխատանքի վերացման միջազգային ծրագիրը, որը **Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ)** նախաձեռնությունն է, ընդգրկում է տեխնիկական համագործակցության, ինչպես նաև իրազեկության բարձրացման ու մոբիլիզացիայի ծրագրեր: **Ուղղակի միջամտությունն** ուղղվում է մանկական աշխատանքի կանխմանը, այլընտրանքների որոնմանը, ինչպիսին է երեխա աշխատողների ծնողներին պատշաճ աշխատանքով ապահովելը, և երեխաների վերականգնմանը, կրթությանը և մասնագիտական վերապատրաստմանը:
- ՄԱՄՀ-ն օժանդակում է վտանգավոր պայմաններում գտնվող այնպիսի երեխաներին կրթություն, խորհրդատվություն ու խնամք ապահովող ծրագրերին, ինչպիսիք են սեռական ստրուկները կամ տնային աշխատողները, և եռանդուն կերպով նրանց իրավունքների խախտման դեմ քարոզչություն է ծավալում:
- Գլխավոր ասամբլեան կոչ է արել կառավարություններին միջոցներ ձեռնարկել փողոցային երեխաների խնդրի առնչությամբ, որոնք ավելի ու ավելի են ներգրավվում հանցագործության, թմրադեղերի օգտագործման, բռնությունների ու պոռնկության մեջ կամ դրանց ազդեցության տակ ընկնում:
- Մարդու իրավունքների առաջմղման ու պաշտպանության ենթահանձնաժողովը կոչ է արել քայլեր ձեռնարկել երեխաներին զինված ուժեր հավաքագրումը կամ զորակոչը դադարեցնելու ուղղությամբ: Գլխավոր քարտուղարի՝ **երեխաների ու զինված հակամարտությունների հարցերով հատուկ ներկայացուցիչը** աշխատում է հակամարտությունների ժամանակ երեխաների պաշտպանվածությունն ուժեղացնելու ուղղությամբ:

- Մարդու իրավունքների հանձնաժողովը նշանակել է **Հատուկ զեկուցող՝ երեխաների վաճառքի, մանկական պոռնկության և մանկական պոռնկագրության հարցերով:**

## Փոքրամասնությունների իրավունքները

Փոքրամասնությունների վրա ազդեցություն գործող խնդիրների հանդեպ հետաքրքրություն է ձևավորվել էթնիկ, ռասայական ու կրոնական լարվածության ուժեղացման հետ մեկտեղ, որոնք վտանգում են երկրների տնտեսական, սոցիալական ու քաղաքական կառուցվածքը: Ազգային, էթնիկ, կրոնական ու լեզվական խմբերի ձգտումների բավարարումը և փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների պաշտպանումը հաստատում է բոլոր անհատների հավասարությունը, ավելացնում է նրանց մասնակցությունը հասարակության մեջ և նպաստում է սոցիալական լարվածության նվազեցմանը:

ՄԱԿ-ն իր սկզբնավորումից ի վեր մարդու իրավունքների իր օրակարգում բարձր տեղ է հատկացրել փոքրամասնությունների իրավունքներին: Փոքրամասնությունների անդամների մարդու իրավունքների պաշտպանությունը երաշխավորված է խտրականության չենթարկվելու սկզբունքով, որը հիմնական է համարվում ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքներին վերաբերող բոլոր օրենքներում և հատկապես Քաղաքացիական ու քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրում:

1992թ. Գլխավոր ասամբլեայի կողմից *Ազգային կամ էթնիկ, կրոնական ու լեզվական փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների մասին հռչակագրի* ընդունումը նոր խթան դարձավ ՄԱԿ-ի աշխատանքի համար, իսկ 1995թ. Մարդու իրավունքների հանձնաժողովը հաստատեց իր ենթահանձնաժողովի կողմից **Փոքրամասնությունների հարցերով աշխատանքային խմբի** ստեղծումը: Աշխատանքային խումբը գործնական քայլեր է հանձնարարում փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ավելի լավ առաջմղման ու պաշտպանության համար:

## Տեղաբնիկ ժողովուրդներ

ՄԱԿ-ն ավելի ու ավելի է զբաղվում տեղաբնիկ ժողովուրդների դատով, որոնք համարվում են աշխարհի ամենաանբարենպաստ պայմաններում գտնվող խմբերը, մոտ 300 մլն. են և ապրում են հինգ մայրցամաքների ավելի քան 70 երկրներում: Օտարվելով որոշման կայացման գործընթացներից՝ շատերը եզրայնացվել են, շահագործվել, հարկադրաբար ձուլվել և ենթարկվել ռեպրեսիայի, խոշտանգումների ու սպանությունների, երբ հանդես են եկել ի պաշտպանություն իրենց իրավունքների: Վախենալով հետապնդումից՝ նրանք հաճախ փախստական են դառնում և երբեմն ստիպված են թաքցնել ինքնությունը՝ հրաժարվելով իրենց լեզվից ու սովորություններից:

1982թ. Մարդու իրավունքների հանձնաժողովի ենթահանձնաժողովը հիմնեց **Տեղաբնիկ ժողովուրդների հարցերով աշխատանքային խումբ:** Խումբը ուսում-

նասիրում է տեղաբնիկ ժողովուրդների իրավունքներին վերաբերող զարգացումները և առաջ է մղում նրանց իրավունքներին առնչվող միջազգային չափանիշները: Խումբը մշակել է *Տեղաբնիկ ժողովուրդների իրավունքների մասին հռչակագրի նախագիծը*՝ պատրաստելով այն Գլխավոր ասամբլեայի ընդունման համար:

2000թ. Տնտսոցխորհրդի հիմնեց **Տեղաբնիկների հարցերով մշտական ֆորումը**՝ որպես օժանդակ մարմին: 16 փորձագետից բաղկացած ֆորումը, որի կազմում հավասար չափով փորձագետներ են ընդգրկված կառավարություններից ու բնիկներից, խորհուրդներ կտա Տնտսոցխորհրդին, կօգնի համակարգելու ՄԱԿ-ի գործունեությունը և քննարկելու տեղաբնակներին հուզող հարցերը, որոնք առնչվում են զարգացմանը, մշակույթին, շրջակա միջավայրին, առողջապահական խնդիրներին ու մարդու իրավունքներին:

1992թ. Երկրագնդի գագաթաժողովում տեղաբնիկ ժողովուրդները համախմբված հանդես եկան՝ արտահայտելով իրենց մտահոգությունը իրենց հողերի և շրջակա միջավայրի վատթարացող վիճակի շուրջ: ՄԱԶԾ-ն, ՄԱԱՀ-ն, ԳԶՄՀ-ն, ՅՈՒՆԵՍԿՕ-ն, Համաշխարհային բանկը և ԱՀԿ-ն ծրագրեր ունեն՝ ուղղված որոշակի տեղաբնիկ խմբերի, նրանց առողջապահական վիճակի ու կրթվածության բարելավմանը և հայրենի հողերի բնապահպանական քայքայման դեմ պայքարին:

Աշխարհի տեղաբնիկ ժողովուրդների միջազգային տարվա վերջում (1993թ.) Ասամբլեան հռչակեց **Աշխարհի տեղաբնիկ ժողովուրդների միջազգային տասնամյակը (1995-2004թթ.)**, որը նպատակ ունի խթանելու բնիկ ժողովուրդների կենսապայմանների բարելավմանն ուղղված համագործակցությանը:

## Հաշմանդամներ

Ավելի քան 500 մլն. անձ՝ աշխարհի բնակչության 8 տոկոսը, որի 80 տոկոսն ապրում է զարգացող երկրներում, տառապում է որևէ ֆիզիկական, մտավոր կամ զգայական հաշմությամբ:

Հաշմանդամները հաճախ օտարված են հասարակության հիմնական զանգվածից: Խտրականությունն արտահայտվում է ամենատարբեր ձևերով՝ սկսած կրթության ստանալու հնարավորությունից մինչև ավելի աննկատ ձևերը, ինչպիսիք են զատումն ու մեկուսացումը ֆիզիկական ու սոցիալական արգելքներ պարտադրելու միջոցով: Հասարակությունը նույնպես տուժում է, քանի որ զրկվում է հաշմանդամների հսկայական պոտենցիալից, ինչը հանգեցնում է մարդկության աղքատացմանը: Հաշմանդամության ըմբռնումն ու գաղափարը փոխելը ենթադրում է թե՛ արժեքների փոփոխություն, թե՛ հասարակության բոլոր մակարդակներում աճող ընկալման ձևավորում:

Իր սկզբնավորումից ի վեր ՄԱԿ-ը ջանացել է բարելավել հաշմանդամների կարգավիճակը և նրանց կյանքը: ՄԱԿ-ի հոգածությունը հաշմանդամների բարեկեցության և իրավունքների հանդեպ բխում է իր հիմնարար սկզբունքներից, որոնք հիմնված են մարդու իրավունքների, հիմնարար ազատությունների և բոլոր մարդկանց հավասարության վրա:

1970թ. հաշմանդամների իրավունքների գաղափարը ավելի մեծ միջազգային հավանություն ստացավ: Գլխավոր ասամբլեան 1971թ. ընդունեց *Մտավոր տկարությամբ անձանց իրավունքների մասին հռչակագիրը*, իսկ 1975թ.՝ *Հաշմանդամների իրավունքների մասին հռչակագիրը*, որոնք սահմանում են հավասար վերաբերմունքի և նրանց սոցիալական ինտեգրացիան արագացնող ծառայությունների մատչելիության չափանիշները:

Հաշմանդամների միջազգային տարին (1981թ.) հանգեցրեց Գլխավոր ասամբլեայի կողմից *Հաշմանդամներին վերաբերող գործողությունների համաշխարհային ծրագրի* ընդունմանը, որ հաշմանդամների իրավունքների առաջընթացի քաղաքական ուղենիշ է: Ծրագիրը միջազգային համագործակցության համար երկու նպատակ է ճշտում՝ հավասարություն և սոցիալական կյանքում ու զարգացման մեջ հաշմանդամների լիարժեք մասնակցություն:

ՄԱԿ-ի հաշմանդամների տասնամյակի (1983-1992թթ.) մեծագույն արդյունքը Գլխավոր ասամբլեայի կողմից 1993թ. *«Հաշմանդամների համար հնարավորությունների հավասարեցման ստանդարտ կանոնները»* փաստաթուղթն էր: Կանոնները գործիք են քաղաքականության մշակման համար և հիմք՝ տեխնիկական ու տնտեսական համագործակցության համար:

Մտավոր տկարությամբ մարդկանց պաշտպանության համար նոր չափանիշները՝ *Սկզբունքներ մտավոր տկարությամբ մարդկանց պաշտպանության և առողջապահական միջոցառումների բարելավման համար փաստաթուղթը*, ընդունվեց ասամբլեայի կողմից 1991թ.:

1994թ. Գլխավոր ասամբլեան «Հասարակություն բոլորի համար» նպատակին հասնելու համար ընդունեց երկարաժամկետ ռազմավարություն *Գործողությունների համաշխարհային ծրագրի* իրականացումն առաջ տանելու համար: Սնանկությունը, աշխատանքը, սոցիալական ծառայությունները և սոցիալական պաշտպանության ցանցերը 1997թ. ասամբլեայի կողմից առաջադրված առաջնային քաղաքական խնդիրներից են:

**ՄԱԿ-ի գործունեությունը:** Կուտակվող փաստերը վեր են հանում հաշմանդամության խնդիրները ազգային զարգացման համատեքստում և մարդու իրավունքները լայն շրջանակում դիտարկելու անհրաժեշտությունը: Միավորված ազգերն իրազեկություն բարձրացնելու և հաշմանդամների հանդեպ մարդու իրավունքների ընդլայնված մոտեցումների համար ազգային կարողություններ ստեղծելու նպատակով աշխատում է կառավարությունների, ոչ կառավարական կազմակերպությունների, ակադեմիական հաստատությունների և մասնագիտական միությունների հետ:

Հաշմանդամության հարցերի հանդեպ հասարակության հարաճուն աջակցությունը շեշտել է բարելավված տեղեկատվական ծառայությունների, օժանդակության և կառուցվածքային մեխանիզմների համար ազգային կարողությունների ստեղծման անհրաժեշտությունը՝ հնարավորությունների հավասարեցումն առաջ մղելու նպատակով: ՄԱԿ-ն ավելի ու ավելի է ներգրավվում երկրներին օգնելու գործընթացում, որպեսզի նրանք ամրապնդեն իրենց ազգային կարողություններն ընդհանուր զարգացման ծրագրերի շրջանակներում հաշմանդամների խնդիրներն առաջ տանելու համար:

## Միգրանտ աշխատողներ

Աշխատանքի փնտրտուքով միջազգային սահմաններով մարդկանց հարաճուն շարժին զուգահեռ մարդու իրավունքների նոր կոնվենցիա է ընդունվել միգրանտ աշխատողների նկատմամբ խտրականությունը կանխելու համար: 1990թ. 10 տարվա բանակցություններից հետո, Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունվեց *Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության մասին միջազգային կոնվենցիան*:

- Կոնվենցիան արծարծում է թե՛ գրանցված, թե՛ չգրանցված միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների իրավունքները,
- անօրինական է համարում միգրանտ աշխատողներին ազատելը կոլեկտիվ հիմքով կամ նրանց փաստաթղթերը, աշխատանքի իրավունքները կամ անձնագրերը ոչնչացնելը,
- իրավունք է տալիս միգրանտ աշխատողներին ստանալու այն նույն փոխհատուցումը, սոցիալական արտոնությունները և բժշկական սպասարկումը, ինչ քաղաքացիները, ինչպես նաև իրավունք՝ անդամագրվելու արհեստակցական միություններին կամ մասնակցելու նրանց աշխատանքին և աշխատանքից ազատվելուց հետո փոխանցելու վաստակը, խնայողությունները և անձնական գույքը,
- միգրանտ աշխատողների երեխաներին տալիս է ծնունդն ու քաղաքացիությունը գրանցելու և կրթություն ստանալու իրավունք:

## Արդարադատության իրականացումը

ՄԱԿ-ը շատ քայլեր է ձեռնարկել դատական գործընթացներում մարդու իրավունքների պաշտպանությունը զորացնելու համար: Երբ անհատները գտնվում են պետական մարմինների հետաքննության տակ, երբ նրանք կալանված են, ձերբակալված, նրանց նկատմամբ մեղադրանք է հարուցված, դատված են կամ բանտարկված, մշտապես վստահության կարիք կա, որ օրենքի կիրառման ժամանակ պատշաճ կերպով ապահովվում է մարդու իրավունքների պաշտպանությունը:

ՄԱԿ-ը փորձել է չափանիշներ և կանոններ մշակել, որոնք կարող են որպես նմուշներ ծառայել ազգային օրենսդրության համար այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են բանտարկյալների հանդեպ վերաբերմունքը, կալանված անչափահասների պաշտպանությունը, ոստիկանության կողմից զենքի օգտագործումը, իրավապահպան մարմինների վարքագիծը, փաստաբանների ու դատախազների դերը և դատավորների անկախությունը: Այս չափանիշներից շատերը մշակվել են Հանցագործության կանխարգելման ու քրեական արդարադատության մասին ՄԱԿ-ի համաժողովի և Հանցագործության կանխարգելման միջազգային կենտրոնի կողմից:

Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը տեխնի-

կական աջակցության ծրագիր ունի, որը կենտրոնանում է օրենսդիրների, դատավորների, փաստաբանների, իրավապահ մարմինների, բանտային ծառայողների ու զինվորականների՝ մարդու իրավունքների գծով վերապատրաստման վրա:

## Ապագա առաջնահերթություններ

Չնայած ՄԱԿ-ի կողմից տարվող աշխատանքին, մարդու իրավունքների զանգվածային ու լայնածավալ խախտումները շարունակվում են: Մարդու իրավունքների հռչակագրի ընդունումից հինգ տասնամյակ անց խախտումները մարդու իրավունքների լայն ծիրով շարունակում են գերիշխել աշխարհի տարածքներում: Դրանց առնվազն մի մասը կարելի է վերագրել մարդու իրավունքների հանդեպ աճած իրազեկության ու խնդրահարույց ոլորտների վրա ցուցիչ վերահսկողության իրականացմանը. հատկապես երեխաների հանդեպ ոտնձգությունների, կանանց հանդեպ բռնությունների և այնպիսի չարաշահումների առումով, որոնք մինչև վերջերս ավանդական չափանիշներով ընդունելի վարքագիծ են համարվել:

Ինչպես. մարդու իրավունքների պաշտպանության ու առաջմղման ուղղված ջանքերն ավելի հասունանում են, քան նախկինում, և ավելի ու ավելի են կապվում հանուն սոցիալական արդարության, զարգացման ու ժողովրդավարության մղվող պայքարի հետ: ՄԱԿ-ի բարեփոխումների իր ծրագրում Գլխավոր քարտուղար Քոֆի Անանը հայտարարեց, որ մարդու իրավունքները կդառնան կազմակերպության բազմաբնույթ աշխատանքի խաչաձևող թեման՝ դրանով իսկ շեշտելով այն կենտրոնական դերը, որ իրավունքների պաշտպանությունն ու առաջմղումը կունենան իր կողմից տարվող քաղաքականության բոլոր ասպեկտներում և ծրագրերում: Մարդու իրավունքները առավելապես դառնում են ներկայում ՄԱԿ-ի ամենօրյա գործունեության մասը: Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի եռանդուն գործունեությունը և ՄԱԿ-ի գործընկերների միջև համագործակցությունն ու համակարգումը բարելավելուն ուղղված քայլերը այն ուղաշակի ջանքերի դրսևորումն են, որոնք գործադրվում են ՄԱԿ-ի՝ մարդու իրավունքների համար պայքարի կարողությունն ուժեղացնելու ուղղությամբ:

# ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

## Գլուխ 5

## ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ



# ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Եվրոպայում մայրցամաքային տեղահանումներին և ավերածություններին հետևած իր առաջին համակարգված մարդասիրական օգնության գործողությունից հետո Միավորված ազգերի կազմակերպությունն է միջազգային հանրության փոխանում բնական ու արհեստածին աղետներին արձագանքելու պատասխանատվությունը, որը վեր է ազգային իշխանությունների կարողություններից: Այսօր կազմակերպությունն օգնության և երկարաժամկետ օժանդակության խոշոր տրամադրող է, կառավարությունների ու օգնության գործակալությունների գործողությունների խթանող և արտակարգ իրավիճակների առաջ հայտնված ժողովուրդների դատի պաշտպան:

Վերջին տասնամյակում քաղաքացիական պատերազմները դարձել են արտակարգ իրավիճակների հիմնական պատճառը: Միայն 1999թ. պատերազմի հետևանքով միլիոնավոր մարդիկ են տեղահանվել. 1,2 մլն՝ Անգոլայում, 850 հազար՝ Կոսովոյում, 750 հազար՝ Եթովպիայում և Էրիթրեայում, 550 հազար՝ Արևելյան Թիմորում, 200 հազար՝ Չեչնիայում և շատ ուրիշներ՝ աշխարհով մեկ ափռված այլ հակամարտություններում:

Բնական աղետների՝ ջրհեղեղների, երաշտների, փոթորիկների, երկրաշարժերի հետևանքով մահացել է ավելի քան 50 հազար մարդ և 90 մլրդ դոլարը գերազանցող տնտեսական վնաս հասցվել 1998թ.: Սա վերջին տարին է, որի ամբողջական ցուցանիշները առկա են: Միայն այդ տարվա ցուցանիշը գերազանցում է ամբողջ 1980-ական թվականների աղետների ծախսերը: Աղետների զոհերի մոտ 90 տոկոսն ապրում է զարգացող երկրներում, խոսուն ցուցանիշ, թե որքան են աղքատությունը, բնակչության ճնշվածությունն ու բնապահպանական քայքայումը բազմապատկում տառապանքն ու ավերածությունները:

Բախվելով նորովի բռնկվող հակամարտությունների ու բնական աղետների պատճառած մարդկային ու ֆինանսական հսկայական վնասների հետ՝ ՄԱԿ-ը գործում է երկու ճակատով: Մի կողմից՝ փորձում է անմիջական օգնություն տրամադրել զոհերին, հիմնականում իր գործառնական գործակալությունների միջոցով, մյուս կողմից՝ փորձում է առավել արդյունավետ ռազմավարություն որդեգրել՝ հենց սկզբից կանխելու արտակարգ իրավիճակների առաջացումը:

Երբ աղետ է պատահում, ՄԱԿ-ն ու իր գործակալությունները շտապում են մարդասիրական օժանդակություն տրամադրել: Միայն 2000թ. Մարդասիրական օգնության համակարգման գրասենյակը 16 միջգործակալական հայտ է ներկայացրել, որոնք հավաքել են ավելի քան 1,4 մլրդ դոլար 16 երկրների ու տարածաշրջանների 35 մլն մարդու օգնելու համար: Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը միջազգային պաշտպանություն և օժանդակություն է տրամադրում տարեկան ավելի քան 22 մլն մարդու՝ փախստականների և ավելի ու ավելի շատացող ներքին տեղահանվածների: Պարենի համաշխարհային ծրագիրը կանոնավորապես առաքել է աշխարհի պարենի արտակարգ օգնության մեկ երրորդը՝ փրկելով միլիոնավոր կյանքեր:

*Աղետների կանխարգելումը* փորձում է նվազեցնել հասարակությունների խոցելիությունը աղետների հանդեպ և հաղթահարել դրանց արհեստածին պատճառները: Վաղ զգուշացումը հատկապես կարևորվում է կարճաժամկետ կանխարգելման դեպքում, և ՄԱԿ-ի գործակալությունները հզորացնում են իրենց կարողություններն այս ոլորտում: Պարենի ու գյուղատնտեսության կազմակերպությունը վերահսկում է վերահաս սովը, իսկ Համաշխարհային օդերևութաբանական կազմակերպությունն իրականացնում է մերձարևադարձային ցիկլոնների կանխատեսումն ու երաշտների վերահսկումը: Նույնքան կենսական է պատրաստվածությունը, և ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրն օժանդակում է աղետների հանդեպ հակվածություն ունեցող երկրներին անակնկալներին դիմագրավելու ծրագրեր մշակելու և պատրաստվածության այլ միջոցառումներ ձեռնարկելու խնդրում:

*Հակամարտությունների կանխարգելումը* ներառում է այնպիսի ռազմավարական ոլորտներ, ինչպիսիք են կանխարգելիչ դիվանագիտությունը, կանխարգելիչ զինաթափումը և մարդու իրավունքների առաջմղումը: Վերջին ճգնաժամերն ակնհայտորեն վեր են հանել սպառազինման և մարդու իրավունքների խախտումների ու փախստականների հոսքերի միջև առկա կապը: Կանխարգելման երկարաժամկետ ռազմավարությունը համապարփակ ձևով անդրադառնում է հակամարտության արմատներին: Այն խթանում է անվտանգությունը, տնտեսական աճը, լավ կառավարումն ու հարգանքը մարդու իրավունքների հանդեպ, որոնք շարունակում են համարվել ամենալավ պաշտպանությունն ավելի ու ավելի հաճախակի պատահող աղետների դեմ, լինեն դրանք բնական թե արհեստածին:

## Մարդասիրական գործողության համակարգումը

Անցյալ տասնամյակում մեծացավ քաղաքացիական պատերազմների թիվն ու հաճախականությունը: Սրանք բարդ քաղաքական ու ռազմական միջավայրերում հանգեցրել են լայնածավալ մարդասիրական ճգնաժամերի՝ մարդկային մեծաթիվ զոհերով, մարդկանց զանգվածային տեղահանություններով և հասարակություններին հասցված մեծ չափի վնասներով: Այս «բարդ արտակարգ իրավիճակներին» անդրադառնալու համար ՄԱԿ-ը կատարելագործել է իր կարողություններն արագ ու արդյունավետ արձագանքելու համար:

1991թ. Գլխավոր ասամբլեան մարդասիրական ճգնաժամերի միջազգային արձագանքը համակարգելու նպատակով ստեղծեց **Միջգործակալական մշտական կոմիտեն: ՄԱԿ-ի արտակարգ օգնության համակարգողն** այս նախաձեռնության համար կազմակերպության պատասխանատու անձն է, որը գործում է որպես համակարգի քաղաքական հարցերով գլխավոր խորհրդական, համակարգող և մարդասիրական արտակարգ իրավիճակներին առնչվող հարցերի պաշտպան: Արտակարգ օգնության համակարգողը ղեկավարում է **Մարդասիրական հարցերի համակարգման գրասենյակը (ՄՀՀԳ)**, որը համակարգում է

ՄԱԿ-ի կողմից տրամադրվող մարդասիրական օգնությունը այն ճգնաժամերի ժամանակ, որոնք վեր են որևէ առանձին գործակալության կարողություններից ու մանդատից:

Գործող շատ մարմիններ՝ կառավարություններ, ոչ կառավարական կազմակերպություններ, ՄԱԿ-ի գործակալություններ փորձում են միաժամանակ արձագանքել բարդ արտակարգ իրավիճակներին: ՄՀՀԳ-ն աշխատում է նրանց հետ՝ ապահովելով մի համապարփակ շրջանակ, որում յուրաքանչյուրը ժամանակին ու արդյունավետորեն կարող է իր ներդրումը բերել ընդհանուր ջանքերին:

Երբ արտակարգ իրավիճակ է պատահում, ՄՀՀԳ-ն համակարգում է միջազգային արձագանքը: Նա խորհրդակցում է խնդրո առարկա երկրում գտնվող ՄԱԿ-ի թիմի հետ և գործողությունների առաջնայնությունները որոշելու նպատակով միջգործակալական խորհրդակցություններ է սկսում կենտրոնական գրասենյակում: ՄՀՀԳ-ն այնուհետև օժանդակություն է ցույց տալիս տուժած երկրում գործողությունների համակարգման գործում:

---

## Արտակարգ իրավիճակներին արձագանքելը

*Արտակարգ իրավիճակներին ու աղետներին արձագանքելը պահանջում է մարդկային, ֆինանսական ու տեխնիկական պաշարների արագ տեղակայում: ՄՀՀԳ-ն մշակել է մեխանիզմներ, որով հնարավոր է դառնում արագորեն արձագանքել տվյալ շրջանի կարիքներին:*

*24-ժամյա աղետների արձագանքման համակարգը աղետների հանդեպ ամեն պահի պատրաստվածություն է ապահովում: Այն բնական աղետները, բնապահպանական արտակարգ իրավիճակները և արդյունաբերական վթարները հայտնաբերելու նպատակով վերահսկում է իրավիճակը տեղերում՝ օգնելով միջազգային հանրության գործողությունների համակարգմանը:*

*ՄԱԿ-ի աղետների գնահատման ու համակարգման խմբերը թույլ են տալիս արագորեն արձագանքել դժվարին արտակարգ իրավիճակներին: Բաղկացած լինելով արտակարգ իրավիճակների գծով հատուկ պատրաստվածություն ունեցող ազգային փորձագետներից, ինչպես նաև ՄՀՀԳ-ի աշխատակիցներից, խմբերը իրավիճակը գնահատելու և օգնությունը համակարգելու հարցում իշխանություններին օգնելու նպատակով կարող են տեղակայվել ժամերի ընթացքում:*

*Երբ ճգնաժամ է պատահում, ՄՀՀԳ-ն համակարգում է երկրներից ու միջազգային կազմակերպություններից ստացվող ռազմական ու քաղաքացիական պաշտպանության միջոցների մոբիլիզացումն ու տեղակայումը, ինչպիսիք են, օրինակ, մասնագիտացված անձնակազմերն ու աղետների դեմ պայքարի սարքավորումները: ՄՀՀԳ-ն պահում է աղետների կառավարման կարողությունների գլխավոր մատյան, որոնք կարող են օգտագործվել միջազգային օգնության ժամանակ: Իտալիայի Պիզա քաղաքում տեղակայված պահեստում պահվում են օգնության համար տրամադրվող այն առարկաները, որոնք պատրաստ են օդային առաքման:*

*Ի լրումն ՄԱԿ-ի աղետների հանդեպ հակվածություն ունեցող շատ զարգացող երկրներում աղետների կառավարման խմբեր են ստեղծվել՝ բաղկացած ՄԱԿ-ի գործակալությունների՝ տվյալ երկրում գտնվող գրասենյակների ղեկավարներից, մշտական համակարգողի ղեկավարությամբ (սովորաբար ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի գրասենյակից): Այսպիսի խմբերը, արտակարգ իրավիճակ կանխազգալու դեպքում, կարգադրություններ են անում օգնության տրամադրմանն ուղղված գործունեությունը համակարգելու ուղղությամբ:*

*Միջազգային գործակալությունների ու ոչ կառավարական կազմակերպությունների հետ համագործակցելով՝ ՄԱԿ-ն օգնել է ծրագրեր սկսել ավելի քան 70 երկրներում, որոնք ուղղված են աղետների համար պատրաստվածություն ապահովելուն:*

---

Գրասենյակը համակարգում է ՄԱԿ-ի՝ կարիքների գնահատմամբ զբաղվող գործակալությունների կողմից իրականացվող դաշտային առաքելությունները, միջգործակալական միացյալ հայտեր ներկայացնելով՝ նպաստում է պաշարների մոբիլիզացմանը, կազմակերպում է նվիրատուների հանդիպումներ և դրանց իրականացմանը հետամուտ կարգադրություններ անում, վերահսկում է ի պատասխան հայտերի կատարվող վճարումների վիճակը և հրապարակում է իրավիճակային զեկույցներ՝ տեղեկացնելով նվիրատուներին ու այլոց զարգացումների մասին: Տարեկան միջինը 27 միջգործակալական հայտ է ներկայացվում. դրանք արտակարգ իրավիճակների համար 1992-2002թ. հավաքել են ավելի քան 12 մլրդ դոլար:

ՄՀՀԳ-ն աշխատում է իր գործընկերների հետ մարդասիրական համայնքում՝ քաղաքական ուղղությունների շուրջ միաձայնություն ձևավորելու և ջատագովել մարդասիրական բնույթի խնդիրները վեր հանելու համար, որոնք ծագում են դաշտային գործառույթների ժամանակ: Ջանում է հասնել նրան, որ ուշադրություն հատկացվի խոշոր մարդասիրական խնդիրներին, ներառյալ այնպիսիք, որոնք չեն սպառվում մարդասիրական կազմակերպությունների մանդատներով, օրինակ, ներքին տեղահանված անձանց վիճակը:

---

## Արտակարգ օգնության համակարգումը

*Միջգործակալական մշտական հանձնաժողովը ի մի է բերում թե ՄԱԿ-ի ներսում և թե նրանից դուրս գործող բոլոր խոշոր մարդասիրական գործակալություններին: Հանձնաժողովը նախագահում է ՄԱԿ-ի արտակարգ օգնության համակարգողը և վերահսկում է արտակարգ իրավիճակների դեպքում տրամադրվող միջազգային օգնությունը: Նրա անդամներն են.*

- *Փախստականների հարցերով ՄԱԿ-ի գերագույն հանձնակատարը, որը մարդասիրական օգնություն է տրամադրում փախստականներին ու տեղահանվածներին (ծրագրային բյուջեն 2000թ. կազմել է 956,2 մլն դոլար),*
- *Պարենի համաշխարհային կազմակերպությունը, որը պարենային օգնություն է տրամադրում արտակարգ իրավիճակների զոհերին (օգնության ծախսերը 1999թ. կազմել են 1,1 մլրդ դոլար),*
- *ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը, որը կենտրոնանում է երեխաներին ու կանանց տրամադրվող օգնության վրա (մարդասիրական օգնության գծով ծախսերը 1999թ. կազմել են 188 մլն դոլար),*
- *ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը, որն օգնում է վերականգնելու գյուղատնտեսական արտադրությունը (2000թ. օգնության բյուջեն կազմել է 169 մլն դոլար),*
- *Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը, որն օգնություն է տրամադրում առողջապահության բնագավառում (2000-2001թթ. համար մարդասիրական օգնության բյուջեն կազմել է 400 մլն դոլար),*
- *ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը, որը գումարներ է տրամադրում օգնության համար և համակարգում է մարդասիրական օգնությունը ճգնաժամեր ապրող երկրներում,*
- *ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամը, որն աջակցում է վերարտադրողական առողջական ծրագրերին ճգնաժամային իրավիճակներում,*
- *Համաշխարհային բանկը, որն աջակցություն է տրամադրում արտակարգ իրավի-*

*մակների հաղթահարման ու հետհակամարտային վերականգնման ծրագրերի համար,*

- *Մարդու իրավունքների հարցերով Գերագույն հանձնակատարի գրասենյակը, որը խթանում է մարդու իրավունքների պաշտպանությունը իրավական փորձագիտության և դաշտային ներկայության ապահովելու միջոցով,*
- *խոշոր միջկառավարական մարդասիրական կազմակերպություններ. Միգրացիայի միջազգային կազմակերպությունը. Կարմիր խաչի միջազգային կոմիտեն. Կարմիր խաչի և կարմիր մահիկի ընկերությունների միջազգային դաշնությունը,*
- *Գլխավոր քարտուղարի ներքին տեղահանվածների հարցերով ներկայացուցիչը.*
- *ոչ կառավարական կազմակերպությունների երեք միջազգային կոնսորցիումներ՝ «Ինտերէքշըն», Կամավոր գործակալությունների միջազգային խորհուրդը և Մարդասիրական արձագանքման հարցերով ղեկավարող կոմիտեն:*

*Այլ գործակալություններ կարող են հրավիրվել ըստ անհրաժեշտության:*

---

Մարդասիրական խնդիրների շուրջ քարոզչություն իրականացնելով՝ ՄՀՀԳ-ն ձայն է բարձրացնում ճգնաժամերի զոհերի օգտին և ապահովում, որ մարդասիրական հանրության տեսակետներն ու մտահոգությունները արտացոլված լինեն վերականգնմանն ու խաղաղաշինությանն ուղղված ընդհանուր ջանքերում: ՄՀՀԳ-ն խթանում է հարգանքը մարդասիրական նորմերի ու սկզբունքների հանդեպ և ուշադրություն է հրավիրում առանձնահատուկ խնդիրների վրա, ինչպիսիք են մուտքը դեպի աղետի ենթարկված բնակչությունը, պատժամիջոցների ազդեցությունը մարդասիրական խնդիրների վրա, հակահետևակային ականների և փոքր զենքերի չվերահսկվող տարածումը:

ՄՀՀԳ-ի **Արտակարգ իրավիճակների համար հաջորդական հիմնադրամը** կանխիկ դրամ ապահովող մեխանիզմ է, որն օգնում է անմիջապես արձագանքել արտակարգ իրավիճակներին: Այն օգտագործվում է մարդասիրական գործակալություններին կանխիկ դրամի հարցերում օգնելու նպատակով, նախքան կհասնեն նվիրատուների վճարումները: Փոխառու գործակալությունը պետք է գումարը փոխհատուցի մեկ տարվա ընթացքում: 1992թ. սկսած՝ հիմնադրամն օգտագործվել է ավելի քան 50 անգամ, և ընդհանուր հաշվով տրամադրվել է ավելի քան 127 մլն դոլար:

## Օգնության ու պաշտպանության տրամադրումը

ՄԱԿ-ի չորս մարմին՝ ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարը, Պարենի համաշխարհային ծրագիրը, ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը և ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը առաջնային դեր են խաղում մարդասիրական ճգնաժամերի ժամանակ պաշտպանության ու օժանդակության ապահովելու գործում:

Երեխաներն ու կանայք կազմում են փախստականների ու տեղահանվածների մեծամասնությունը: Այդ ճգնաժամերի ժամանակ **ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամը (ՄԱՄՀ)** աշխատում է օգնություն տրամադրող այլ գործակալությունների կողքին՝ օժանդակելով տարրական ծառայությունների վերականգնմանը, ինչպիսիք են ջրամատակարարումն ու առողջապահությունը, դպրոցների հիմնադրմանը և իմունիզացիայի անցկացմանը, դեղամիջոցների և այլ պաշարնե-

րի տրամադրմանը տեղահանված բնակչությանը:

ՄԱՄՀ-ն նաև մշտապես կոչ է անում կառավարություններին ու պատերազմող կողմերին ավելի արդյունավետորեն գործել երեխաներին պաշտպանելու համար: Նրա ծրագրերը հակամարտությունների փուլերում ներառել են զինադադարների բանակցությունները այնպիսի ծառայություններ իրականացնելու նպատակով, ինչպիսիք են երեխաների իմունիզացիայի անցկացումը: Այդ նպատակով ՄԱՄՀ-ն հանդես է եկել «Երեխաները որպես խաղաղության գոտիներ» գաղափարով և ստեղծել է «Անդորրի օրեր» ու «Խաղաղության միջանցքներ» պատերազմող շրջաններում: Հատուկ ծրագրերն օժանդակում են վնասվածքներ ստացած երեխաներին և օգնում միայնակ մնացած երեխաներին՝ վերամիավորվելու իրենց ծնողների կամ հարազատների հետ: 1999թ. ՄԱՄՀ-ն մարդասիրական օգնություն է տրամադրել 39 երկրներում:

**ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը (ՄԱԶԾ)** այն գործակալությունն է, որը պատասխանատու է բնական աղետների մեղմացման, կանխարգելման ու դրանց դեմ պատրաստվածության գործողությունների համակարգման համար: Երբ արտակարգ իրավիճակներ են պատահում, ՄԱԿ-ի տվյալ երկրի համակարգողները ազգային մակարդակով համակարգում են օգնության ու վերականգնման աշխատանքները: Հաճախ կառավարությունները խնդրում են ՄԱԶԾ-ին աջակցել վերականգնման ծրագրերի կազմմանը և ուղղորդել նվիրատուների կողմից տրված օգնությունը:

---

## Պատերազմում երեխաների պաշտպանությունը

*Ավելի քան 30 երկրներում 18 տարեկանից ցածր 300 հազար երիտասարդ անողոքաբար շահագործվում է որպես զինվոր, շատերը յոթ կամ ութ տարեկան են, կան թե՛ աղջիկներ, թե՛ տղաներ: Անցյալ տասնամյակի ընթացքում երկու միլիոն երեխա է սպանվել պատերազմներում կամ քաղաքացիական պայքարում, իսկ 6 միլիոնը խեղանդամվել կամ հաշմվել է: Շատերը պատերազմի հետևանքով դարձել են որբ կամ կորցրել են ծնողներին, վնասվածքներ ստացել գոյատևման պայքարում: Այս ողբերգությունը հաղթահարելու համար արվել է հետևյալը:*

- *Անվտանգության խորհուրդը կոչ է արել ավելի եռանդուն քայլեր գործադրել վերջ տալու երեխաների՝ որպես զինվորների օգտագործմանը: Խաղաղապահ գործողությունները ներառում են, որպես իրենց մանդատի մաս, երեխաների պաշտպանությունը, իսկ երկու նոր խաղաղապահ առաքելություններ Սիերա Լեոնեում և Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետությունում ներառում են երեխաների պաշտպանության հարցերով քաղաքացիական մասնագետներ:*
- *Գլխավոր քարտուղարի **Երեխաների ու զինված հակամարտությունների հարցերով հատուկ ներկայացուցիչը**՝ պրն Օլարա Օտունուն, 1997թ.-ից աշխատում է երեխաների վրա հակամարտությունների թողած ազդեցության վերաբերյալ համաշխարհային իրազեկությունը մեծացնելու և երեխաների պաշտպանվածությունն ամրապնդելու համար կառավարությունների ու քաղաքացիական հասարակությունների քաղաքական աջակցությունը մոբիլիզացնելու ուղղությամբ: Նա հանդես է եկել ի պաշտպանություն այնպիսի հիմնական պաշտպանական գործողությունների, ինչպիսիք են երեխաների բարեկեցության հարցերը խաղաղության օրակարգում ընդգրկելը և երեխաների կարիքները հակամարտությունների ավարտից հետո իրականացվող վերականգնողական ծրագրերի հիմքում ընդգրկելը: Ճամփորդելով պատերազմական գոտիներում նա կոչ է արել պատերազմող կողմերին հավատարիմ լինել երեխաների անվտանգության հանձնառությանը, թիրախ չդարձնել քաղաքացիա-*

*կամ կյանքը, ինչպիսիք են դպրոցներն ու հիվանդանոցները, և դադարեցնել 18 տարեկանից ցածր երեխաների զինակոչը:*

- *ՄԱՄՀ-ն արդեն երկար ժամանակ է, ինչ աշխատում է կառավարությունների ու ապստամբ շարժումների հետ զինվոր երեխաներին զորացրելու, իրենց ընտանիքների հետ վերամիավորելու և սոցիալական վերաինտեգրումը խթանելու ուղղությամբ:*
- *2000թ. Գլխավոր ասամբլեան Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրության նախագիծ է ընդունել, որով անդամ պետությունները համաձայնում են պարտադիր զորակոչի և մարտերին մասնակցության տարիքային սահմանը 15-ից հասցնել 18-ի: Հազարամյակի հռչակագրում աշխարհի ղեկավարները կոչ արեցին վավերացնել կոնվենցիան ու արձանագրությունը և այն լրիվ կիրառել:*

---

Վստահ լինելու համար, որ օգնության ծրագրերը զարգացման ճանապարհ են հարթում, ՄԱԶԾ-ն և մարդասիրական գործակալները աշխատում են միասին, որպեսզի երկարաժամկետ զարգացման խնդիրն ընդգրկեն օգնության գործողություններում: ՄԱԶԾ-ն օժանդակում է նախկին մարտիկների զորացրմանը, համընդհանուր ականազերծման գործողություններին, փախստականների ու ներքին տեղահանվածների վերադարձին ու վերաինտեգրմանը, ինչպես նաև կառավարման հաստատությունների վերականգնմանն առնչվող ծրագրերին:

Վստահ լինելու համար, որ տրամադրվող պաշարները հնարավորինս առավելագույն ազդեցություն կունենան, յուրաքանչյուր ծրագիր իրականացվում է տեղական ու ազգային պետական պաշտոնյաների հետ խորհրդակցության ընթացքում: Համայնքի վրա հիմնվող այս մոտեցումը հնարավորություն է տվել պատերազմի ու քաղաքացիական հեղաշրջումների հարյուր հազարավոր զոհերի տրամադրել հրատապ, բայց և երկարաժամկետ օգնություն: Այսօր հակամարտություններից տուժած շատ հասարակություններ վերապատրաստման, վարկային ու ենթակառուցվածքներին առնչվող ծրագրերի շնորհիվ բարելավել են իրենց կենսակերպը:

---

## Պաշտպանողներին պաշտպանելը

*ՄԱԿ-ի անձնակազմի և այլ մարդասիրական աշխատանք կատարողների հանդեպ հարձակումները վերջին մի քանի տարիների ընթացքում կտրուկ կերպով աճել են, որի հետևանքով աշխատակազմի շատ անդամներ հակամարտությունների գոտում աշխատելիս սպանվել, գերի են վերցվել կամ բանտարկվել են:*

*1992-2000թթ. 198 քաղաքացիական աշխատող է զոհվել պարտքը կատարելիս, իսկ 228-ը պատանդ է վերցվել կամ առևանգվել ամբողջ աշխարհում տարվող ՄԱԿ-ի գործողություններին մասնակցելիս: Միայն 1999թ. 16 քաղաքացիական աշխատող է զոհվել, նույն տարում 292 բռնի դեպք է արձանագրվել՝ զինված գողությամբ, հարձակմամբ և բռնաբարությամբ:*

*Դատապարտելով այսպիսի հարձակումները՝ Անվտանգության խորհուրդը շեշտել է, որ ՄԱԿ-ի անձնակազմի ապահովության համար պատասխանատվություն են կրում ընդունող երկրներն ու պատերազմող կողմերը: 1994թ. ՄԱԿ-ի և հարակից աշխատակազմերի անվտանգության մասին կոնվենցիան պարտավորեցնում է այն երկրների կառավարություններին, որտեղ աշխատում է ՄԱԿ-ը, ապահովել իր աշխատակազմի անվտանգությունը և կանխարգելիչ միջոցներ ձեռնարկել սպանությունների և առևանգումների դեմ: ՄԱԿ-ի պաշտոնյաները հույս ունեն ՄԱԿ-ի և մարդասիրական աշխատանք իրականացնող անձնակազմերի դեմ հարձակումները դասակարգել որպես պատերազմական հանցագործություն, որը հետապնդվում է դատական կարգով Միջազգային*

*քրեական դատարանի կողմից: 2000թ. Գլխավոր ասամբլեան հատկացրել է լրացուցիչ միջոցներ օգտագործել՝ թույլ տալով կազմակերպությանն անմիջական քայլեր ձեռնարկել անվտանգության կառավարման իր համակարգն ուժեղացնելու համար:*

---

**Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի (ՓԳՀԳ)** մասին տես ստորև՝ *«Փախստականների պաշտպանությունն ու օգնության տրամադրումը»* հատվածում:

Արտակարգ իրավիճակներում **Պարենի համաշխարհային ծրագիրը (ՊՀԾ)** բնական կամ արհեստածին աղետների զոհ դարձած միլիոնավոր մարդկանց, այդ թվում նաև փախստականներին ու ներքին տեղահանվածներին ապահովում է արագ, արդյունավետ ու ինքնարատ օգնությամբ: Այսպիսի ճգնաժամերը կլանում են ՊՀԾ-ի պաշարների մեծ մասը: Մի տասնամյակ առաջ ՊՀԾ-ի կողմից տրամադրվող պարենային օգնության երեք հինգերորդից ավելին օգտագործվում էր մարդկանց ինքնաբավ դարձնելու նպատակով: Այսօր պատկերը հակառակն է, ՊՀԾ-ի պաշարների 80 տոկոսը տրամադրվում է արհեստածին աղետների զոհերին:

1999թ. ՊՀԾ-ն օգնել է 29 մլն ներքին տեղահանվածների, փախստականների ու վերադարձածների և 41 մլն բնական աղետների զոհերի: Գործակալությունը պատասխանատու է ՓԳՀԳ-ի կողմից ղեկավարվող, փախստականներին սննդով ապահովելուն ուղղված մեծածավալ բոլոր գործողություններին անհրաժեշտ սննդի ու փոխադրման գումարների հավաքագրման համար:

ՊՀԾ-ն ավելի ու ավելի է ներգրավվում այն ծրագրերում, որոնք պարենային օգնությունն օգտագործում են նախկին մարտիկների զորացրմանն ու պատերազմական գոտիների ականազերծմանն օժանդելու համար: Պատերազմն ավարտվելուց կամ աղետից հետո ՊՀԾ-ն արկիր է մտնում վերականգնման ու վերակառուցման ծրագրերով, որոնք նպատակ ունեն վերանորոգել վնասված ենթակառուցվածքները:

Աղետներից տուժածների մեծ մասն ապրում է գյուղական վայրերում: **ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունը (ՊԳԿ)** այն հիմնական գործակալությունն է, որը վաղ նախազգուշացում է անում վերահաս սննդային աղետների մասին և ամբողջ աշխարհում սննդային ապահովման խնդիրների գնահատում է կատարում:

ՊԳԿ-ի համաշխարհային տեղեկատվության ու վաղ նախազգուշացման համակարգն ապահովում է աշխարհի պարենի վիճակի մասին կանոնավոր ու թարմացված տեղեկատվությամբ: Կազմակերպությունը նաև պարենի վիճակի գնահատում է կատարում արհեստածին կամ տարերային աղետների հետևանքով պարենային անբավարարություն ապրող երկրների համար:

ՊՀԾ-ի հետ իրականացված գնահատումների վրա հիմնվելով՝ կազմակերպվում են պարենային օգնության արտակարգ գործողություններ, որոնք հաստատվում են թե՛ ՊԳԿ-ի և թե՛ ՊՀԾ-ի կողմից: ՊԳԿ-ն ապահովում է գյուղատնտեսական պաշարներով՝ պարենային արտադրությունը վերականգնելու հա-

մար և գյուղատնտեսական արտակարգ իրավիճակների դեպքում տեխնիկական խորհրդատվություն է տրամադրում: Վերջինիս հատուկ օգնության գործողությունների ծառայությունը զգալի օժանդակություն է ցույց տալիս աղետներից տուժած ֆերմերներին:

**Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ)** օգնության ծրագրերը կենտրոնանում են արտակարգ իրավիճակներից կամ աղետներից տուժածների առողջապահական կարիքների գնահատման, առողջապահական տեղեկատվության տրամադրման ու համակարգման և ծրագրման աջակցության վրա: ԱՀԿ-ն արտակարգ ծրագրեր է իրականացնում այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են սնուցման ու համաճարակաբանական հսկողությունը, համաճարակների վերահսկումը (ներառյալ՝ ՁԻԱՀ/ՄԻԱՎ-ը), իմունիզացիան, կենսական դեղորայքի ու բժշկական պաշարների կառավարումը, վերարտադրողական առողջապահությունը և մտավոր առողջությունը: ԱՀԿ-ն հատուկ ջանքեր է գործադրում՝ վերացնելու պոլիոմիելիտը և վերահսկելու մալարիայի տարածումը արտակարգ իրավիճակներում հայտնված երկրներում:

## Փախստականների միջազգային պաշտպանությունը և օգնության տրամադրումը

1999թ. ընթացքում **ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը (ՓԳՀԳ)** ապահովել է պատերազմից ու հետապնդումից խույս տված ավելի քան 22 միլիոն մարդկանց միջազգային պաշտպանությունն ու նրանց օգնության տրամադրել : Վերջիններից մոտ 17 միլիոնը փախստականներ ու վերադարձողներ են եղել, իսկ մոտ 4,6 միլիոնը՝ ներքին տեղահանվածներ: Ներքին հակամարտությունները դարձել են փախստականության հարուցող ճգնաժամերի հիմնական պատճառը:

ՓԳՀԳ-ն առաջատար մարդասիրական գործակալություն է եղել Բալկաններում տեղի գտած հակամարտությունների ժամանակ, որոնց հետևանքով Երկրորդ համաշխարհային պատերազմից ի վեր ամենամեծ թվով փախստականների հոսքն է առաջացել Եվրոպայում: Գրասենյակը նաև 1999թ. Կոսովոյից ու Արևելյան Թիմորից զանգվածային տեղաշարժի խնդիրներով զբաղվող առաջատար գործակալությունն է եղել: Այն փախստականներին, տեղահանվածներին ու վերադարձողներին օժանդակել է նաև Աֆրիկայի Մեծ լճերի շրջանում, Հարավարևմտյան Ասիայում և աշխարհի այլ մասերում:

Փախստականներ են համարվում այն մարդիկ, որոնք փախել են իրենց երկրից ռասայական, կրոնական, ազգային պատկանելության, քաղաքական տեսակետների կամ որոշակի սոցիալական խմբին անդամակցելու պատճառով ծագած հետապնդումով հիմնավորված վախի հետևանքով և չեն կարող կամ չեն կամենում վերադառնալ:

# Փախստականներ իրենց սեփական երկրում

*Ներքին տեղահանվածներն այն մարդիկ են, որոնք ստիպված են եղել լքել իրենց տները պատերազմից, ընդհանուր բռնություններից, մարդու իրավունքների խախտումներից կամ բնական ու արհեստածին աղետներից խուսափելու համար և չեն հատել երկրի միջազգային սահմանը: Քաղաքացիական պատերազմների հետևանքով ամբողջ աշխարհում ներքին տեղահանվածների հոծ խմբեր են առաջացել: Այսօր մոտ 20-25 միլիոն ներքին տեղահանված կա, որ ավելին է, քան փախստականների թիվը:*

*Ներքին տեղահանվածների համար առաջնային պատասխանատվություն են կրում նախ և առաջ ազգային կառավարությունները: Բայց լինում են պահեր, երբ կառավարությունները ի վիճակի չեն կամ չեն ցանկանում կատարել իրենց պարտականությունները:*

*Փախստականները սովորաբար մի երկրորդ երկրում ապահովություն, սնունդ և օթևան գտնում են: Նրանք պաշտպանված են միջազգային օրենքների ու կոնվենցիաների լավ ձևավորված փաթեթով և օգնություն են ստանում ՓԳՀԳ-ից ու այլ կազմակերպություններից: Ներքին տեղահանվածները հաճախ հայտնվում են շատ ավելի անապահով պայմաններում: Նրանք կարող են ընկնել շարունակվող ներքին հակամարտության ծուղակը՝ մնալով պատերազմող կողմերի հույսին, որոնք վտանգավոր, իսկ երբեմն նաև անհնարին են դարձնում օգնության տրամադրումը: Կառավարությունը, որը կարող է նրանց դիտել որպես «պետության թշնամի», լիովին վերահսկում է նրանց ճակատագիրը: Չկան նրանց առնչվող առանձնահատուկ միջազգային կոնվենցիաներ, և մինչև վերջերս նվիրատուները ներքին հակամարտություններին չմիջամտելու պատճառով չէին կամենում օգնել նրանց:*

*Ներքին տեղահանվածների կարիքները նույնական են փախստականների կարիքներին. նրանք անմիջական պաշտպանության և օգնության, ինչպես նաև երկարաժամկետ լուծումների կարիք ունեն, ինչպիսիք են վերադարձը և վերաբնակեցումը:*

*Արդյունավետ համակարգումը հատկապես կարևորվում է ներքին տեղահանվածներին օգնելիս, քանի որ չկա որևէ առաջնորդող միջազգային գործակալություն: Աշխատանքն այս բնագավառում իրականացվում է Կարմիր խաչի միջազգային կոմիտեի, ՓԳՀԳ-ի, ՄՀՀԳ-ի, Գլխավոր քարտուղարի ներքին տեղահանվածների հարցերով ներկայացուցչի և Մարդու իրավունքների հարցերով բարձրագույն հանձնակատարի գրասենյակի համատեղ ջանքերով:*

*Գլխավոր քարտուղարի ներկայացուցիչը՝ պրն Ֆրանսիս Մ. Դենգը, ներքին տեղահանվածների մասին ուղեցույց սկզբունքներ է հրապարակել, որոնք սահմանում են, թե ովքեր են նրանք, նշում են միջազգային իրավունքի այն մասնիկները, որոնք պաշտպանում են անձի հիմնարար իրավունքները և սահմանում են պետության պարտականությունները: Սկզբունքները հետզհետե ավելի ու ավելի մեծ թվով պետությունների կողմից են ընդունվում:*

*ՓԳՀԳ-ն կոչված է օգնելու մոտ 4.6 միլիոն տեղահանվածների ամենատարբեր շրջաններում: Հատկապես նախկին Հարավսլավիայում, Արևելյան Թիմորում, Կոլումբիայում ու Չեչնիայում ՓԳՀ-ն որոշել է հոգալ բոլոր տեղահանվածների մարդասիրական կարիքները՝ անկախ նրանից՝ ունե՞ն նրանք փախստականի կարգավիճակ, թե՞ ոչ:*

*Չնայած այս ջանքերին, շատ ներքին տեղահանվածներ մնում են առանց մարդասիրական օգնության կամ պաշտպանության՝ վեր հանելով ազգային իշխանությունների ու միջազգային հանրության ընտրողական, անհամաչափ, շատ դեպքերում անհամապատասխան արձագանքը և ներքին տեղահանվածներին օգնելու համար առավել արդյունավետ ուղիներ որոնելու անհրաժեշտությունը:*

Փախստականների իրավական կարգավիճակը սահմանվում է երկու միջազգային պայմանագրում՝ 1951թ. *Փախստականների կարգավիճակի մասին կոնվենցիայում* և նրա 1967թ. *արձանագրությունում*, որոնք ներկայացնում են նրանց իրավունքները ու պարտականությունները: 2000թ. դեկտեմբերի դրությամբ 137 պետություն է միացել պայմանագրերից մեկին կամ երկուսին:

ՓԳՀԳ-ի ամենակարևոր գործառույթը միջազգային պաշտպանությունն է, փախստականների՝ մարդու հիմնարար իրավունքների, ներառյալ ապաստան խնդրելու կարողության հանդեպ հարգանքի ապահովումը և վստահ լինելը, որ որևէ մեկն իր կամքին հակառակ չի վերադարձվում այն երկիրը, որում հետապնդման ենթարկվելու հիմնավոր պատճառներ ունի: Այդ կարգի օժանդակությունը ներառում է հետևյալը.

- օգնություն խոշոր արտակարգ իրավիճակների ժամանակ, որոնք ներառում են մեծաթիվ փախստականների տեղաշարժեր,
- կանոնավոր ծրագրերի իրականացում այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են կրթությունը, առողջապահությունը և օթևանով ապահովելը,
- օգնություն՝ ուղղված փախստականների ինքնաբավության և ընդունող երկրում ինտեգրման խթանմանը,
- կամավոր վերադարձ հայրենիք,
- վերաբնակեցում երրորդ երկրում այն փախստականների համար, որոնք չեն կարող վերադառնալ իրենց տները և պաշտպանության խնդիրների են առնչվում այն երկրում, ուր առաջինն են ապաստանել:

Թեև ՓԳՀԳ-ի մանդատը տրված է փախստականներին պաշտպանելու և օժանդակելու համար, նա ավելի ու ավելի հաճախ է զբաղվում առավել լայն շերտի մարդկանց օգնության խնդիրներով, որոնք ապրում են փախստականների պայմանների նման իրավիճակում: Սա ներառում է իրենց սեփական երկրում փախստական դարձած մարդկանց, նախկին փախստականներին, որոնց անհրաժեշտ է ՓԳՀԳ-ի վերահսկողությունը և օգնությունը տուն վերադառնալուց հետո, անպետություն մարդկանց և նրանց, ովքեր ժամանակավոր պաշտպանություն են ստանում իրենց հայրենի երկրից դուրս, բայց լիարժեք կերպով փախստականի կարգավիճակ չեն ստանում: Այսօր փախստականները ՓԳՀԳ-ի հոգածության տակ գտնվող մարդկանց կեսից մի փոքր ավելին են կազմում:

Ապաստան փնտրողներն այն մարդիկ են, որոնք լքել են իրենց ծագման երկիրը և այլ երկրներում դիմել են փախստականի կարգավիճակ ստանալու համար, և որոնց դիմումները դեռ ընթացքի մեջ են: ՓԳՀԳ-ն ներկայումս օժանդակում է այս կարգավիճակն ունեցող 1,2 մլն մարդու: Ապաստան փնտրողների ամենամեծ խմբերն ապրում են զարգացած արդյունաբերական երկրներում:

Փախստականների մեծ մասը ցանկություն ունի հանգամանքները թույլ տալուն պես տուն վերադառնալ, և ՓԳՀԳ-ն ներկայումս օժանդակում է 2,6 մլն վերադարձողի: Ամենահաջողված վերադարձի գործողություններից մեկն ավելի քան 1,7 մլն փախստականի վերադարձն էր Մոզամբիկ 1993թ. քաղաքացիա-

կամ պատերազմի բարեհաջող ավարտից հետո: 1999թ. ՓԳՀԳ-ի օգնությամբ իրականացված ամենախոշոր վերադարձի շարժումները եղել են դեպի Կոսովո (751 400), Աֆղանստան (252 700), Արևելյան Թիմոր (127 500) և Լիբիա (94 900):

---

## Փախստական ժողովուրդներ

### ՄԱՓԳՀԳ-ի մտահոգության կենտրոնում գտնվող մարդկանց թիվը*

| | |
|---|---|
| *Ընդհանուր* | *22,2մլն* |
| *Ըստ տարածաշրջանի* | |
| *Աֆրիկա* | *6,2մլն* |
| *Ասիա* | *7,3մլն (Աֆղանստան 2,6մլն)* |
| *Եվրոպա* | *7,3մլն (Նախկին Հարավսլավիա 2,9մլն)* |
| *Լատինական Ամերիկա և Կարիբյան ավազան* | *0,1մլն* |
| *Հյուսիսային Ամերիկա* | *1,2մլն* |
| *Օվկիանիայի երկրներ* | *0,08մլն* |

*3,7 մլն պաղեստինցիներ, որոնց աջակցում է ՄԱՊՓՕԱԳ-ը, ընդգրկված չեն այս ցուցակում: Այնուհանդերձ, այն պաղեստինցիները, որոնք ՄԱՊՓՕԱԳ-ի գործողությունների ոլորտում չեն, օրինակ՝ Իրաքի կամ Լիբիայի պաղեստինցի փախստականները, գտնվում են ՄԱՓԳՀ մտահոգության կենտրոնում:*

**2000թ. հունվարի տվյալներով*

*Այդ թվում են փախստականները, ապաստան փնտրողները, հայրենադարձները, տեղահանվածները և մտահոգության կենտրոնում գտնվող այլ մարդիկ:*

*Աղբյուրը՝ ՄԱՓԳՀԳ*

---

Այնուամենայնիվ մեծ թվով մարդկանց հանկարծակի վերադարձը կարող է արագորեն ծանրաբեռնել փխրուն տնտեսական ու սոցիալական ենթակառուցվածքները: Վստահ լինելու համար, որ վերադարձողները կարող են վերակառուցել իրենց կյանքը տուն վերադառնալուց հետո, ՓԳՀԳ-ն վերաինտեգրացումն ապահովելու նպատակով աշխատում է մի շարք կազմակերպությունների հետ: Սա պահանջում է արտակարգ օգնության տրամադրում նրանց, ովքեր դրա կարիքն ունեն, զարգացման ծրագրերի իրականացում այն շրջանների համար, որոնք ավերվել են, և աշխատանքային տեղերի ստեղծման նախագծերի կազմում:

Փախստականների խնդիրներին հաստատուն լուծումներ տալու ճանապարհին կապը խաղաղության, կայունության, անվտանգության, մարդու իրավունքների հանդեպ հարգանքի և կայուն զարգացման միջև ավելի ու ավելի վճռական է դառնում:

## Պաղեստինի փախստականներ

**ՄԱԿ-ի Մերձավոր Արևելքում Պաղեստինի փախստականների օգնության և աշխատանքների գործակալությունը (ՄԱՕԱԳ)**, 1950թ. սկսած, կրթության, առողջապահության, օգնության ու սոցիալական ծառայություններ է մատուցում Պաղեստինի փախստականներին: Գլխավոր ասամբլեան 1948թ. հիմնեց ՄԱՕԱԳ-ը արաբ-իսրայելյան հակամարտության հետևանքով իրենց տներն ու ունեցվածքը կորցրած մոտ 750 հազար պաղեստինյան փախստականներին արտակարգ օգնություն տրամադրելու նպատակով: Մինչև 2000թ. ՄԱՕԱԳ-ն կենսական ծառայություններ է մատուցել ավելի քան 3,7 մլն գրանցված պաղեստինյան փախստականների Հորդանանում, Լիբանանում, Սիրիայի Արաբական Հանրապետությունում և Արևմտյան ափին ու Գազայում:

ՄԱՕԱԳ-ի մարդասիրական դերը ամրապնդվել է Մերձավոր Արևելքում կրկնվող հակամարտությունների պատճառով, ինչպիսիք են քաղաքացիական պատերազմը Լիբանանում և պաղեստինյան ապստամբությունը (*ինտիֆադա*):

Կրթությունը ՄԱՕԱԳ-ի գործունեության ամենամեծ ոլորտն է, որը կազմում է իր կանոնավոր բյուջեի կեսը և անձնակազմի երկու երրորդը: Նրա 647 տարրական ու միջնակարգ դպրոցներում 1999/2000 ուսումնական տարում սովորում էր ավելի քան 468 հազար աշակերտ, իսկ ՄԱՕԱԳ-ի ութ մասնագիտացված վերապատրաստման կենտրոններն ունեցել են 4600 ուսանող:

Գործակալության 122 առողջապահական կենտրոններից բաղկացած ցանցը 1999թ. սպասարկել է 7,1 մլն հիվանդի: Բնապահպանական, առողջապահական ծառայություններ են մատուցվել 59 փախստականական ճամբարներում ապրող 1,2 մլն փախստականի:

Մոտ 205 հազար հատուկ դժվարությունների հանդիպած մարդ 1999թ. օգնություն է ստացել. փորձ էր արվում ապահովել սննդի ու ապաստանի նվազագույն պայմանները և աղքատության նվազեցմանն ուղղված ծրագրերի միջոցով խթանել ինքնապահովումը: Եկամուտ ստանալուն ուղղված ծրագրով Արևմտյան ափին ու Գազայի սեկտորում փոքր բիզնեսներին ու միկրոձեռնարկություններին տրվել է ավելի քան 27 հազար վարկ՝ 41 մլն դոլար ընդհանուր արժեքով, որի տոկոսը Գազայում հասնում է 100-ի:

ՄԱՕԱԳ-ն սերտորեն համագործակցում է Պաղեստինի իշխանությունների հետ: Իսրայելի ու Պաղեստինի ազատագրման կազմակերպության միջև 1993թ. ձեռք բերված համաձայնությունից և Արևմտյան ափին ու Գազայում Պաղեստինի իշխանությունների հիմնումից հետո ՄԱՕԱԳ-ն սկսեց իր «Խաղաղության կիրարկման ծրագիրը»՝ ուղղված նրան, որ խաղաղ գործընթացի պտուղները հասանելի լինեն տեղական մակարդակով: Ծրագիրը գործողության ողջ տարածքի փախստականների համայնքներում նպաստել է ենթակառուցվածքների վերանորոգմանը, աշխատատեղեր ստեղծելուն և սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը: Մինչև 1999թ. վերջը ծրագիրը ստացել է ավելի քան 181 մլն դոլարի նվիրատվություններ և երաշխիքներ: Գազայի եվրոպական հիվանդանոցը, որը Եվրոպական միության ու ՄԱՕԱԳ-ի նախաձեռնությունն է,

բացվել է 2000թ.: Միջազգային հանրությունը ՄԱՕԱԳ-ը համարում է կայու
նացնող գործոն Մերձավոր Արևելքում: Իրենք՝ փախստականները, ՄԱՕԱԳ-ի
ծրագրերը դիտում են որպես Պաղեստինի փախստականների խնդրի լուծման
գործում միջազգային հանրության համաձայնության խորհրդանիշ:

# ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

## Գլուխ 6

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ



# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Միավորված ազգերի կազմակերպության ամենատպավորիչ նվաճումը միջազգային իրավունքի նորմերի ամբողջության՝ կոնվենցիաների, պայմանագրերի ու ստանդարտների մշակումն է, որոնք կենտրոնական դեր են խաղում տնտեսական ու սոցիալական զարգացումը, ինչպես նաև խաղաղությունն ու անվտանգությունն առաջ մղելու գործում: Համաձայնագրերից շատերը, որ ստեղծվել են ՄԱԿ-ի կողմից, կազմում են ազգերի միջև հարաբերությունները կարգավորող օրենքների հիմքը: Որքան էլ ՄԱԿ-ի աշխատանքն այս ոլորտում միշտ չէ, որ ուշադրության է արժանանում, այն ամենօրյա ազդեցություն է ունենում մարդկանց կյանքի վրա:

ՄԱԿ-ի Կանոնադրությունը հատկապես կոչ է անում օգնել կազմակերպությանը՝ անդամների վեճերը կարգավորելու խաղաղ ճանապարհով, ներառյալ արբիտրաժն ու դատավարությունը (հոդված 33), և խրախուսել միջազգային իրավունքի և նրա կոդիֆիկացիայի հարաճուն զարգացումը (հոդված 13): Տարիների ընթացքում ՄԱԿ-ը հովանավորել է ավելի քան 500 բազմակողմ պայմանագրերի ստեղծմանը, որոնք անդրադառնում են պետությունների միջև առկա բնդհանուր մտահոգությունների լայն շրջանակի և իրավականորեն պարտադիր ուժ ունեն այն երկրների համար, որոնք վավերացրել են դրանք:

Շատ ոլորտներում ՄԱԿ-ի իրավական աշխատանքը առաջինն է եղել: Նա եղել է խնդիրների լուծման առաջնային գծում, երբ դրանք ստացել են միջազգային նշանակություն՝ ապահովելով իրավական հենքը շրջակա միջավայրի պահպանության համար, կանոնակարգելով միգրանտ աշխատողների աշխատանքը, կանխելով թմրանյութերի ապօրինի շրջանառությունը և պայքարելով ահաբեկչության դեմ, եթե թվելու լինենք խնդիրներից միայն մի քանիսը:

Այս աշխատանքն այսօր էլ շարունակվում է, երբ հարաբերությունների կանոնակարգման առումով ՄԱԿ-ն իր նպաստն է բերում միջազգային իրավունքի առավել կենտրոնացվածությանը խնդիրների այնպիսի լայն շրջանակում, ինչպիսիք են մարդու իրավունքների մասին օրենքները և միջազգային մարդասիրական օրենքները:

## Վեճերի դատական կարգավորումը

Վեճերի կարգավորման առումով ՄԱԿ-ի հիմնական մարմինը **Արդարադատության միջազգային դատարանն** է: 1946թ. նրա հիմնադրումից հետո պետությունները ներկայացրել են 119 գործ, իսկ միջազգային կազմակերպությունները 23 խորհրդատվական կարծիք են հայցել: Գործերի մեծ մասը լսվել է ամբողջական դատարանի կողմից, բայց 1981թ.-ից չորս գործ, կողմերի խնդրանքով, ներկայացվել է հատուկ պալատների:

Համաշխարհային դատարանը, ինչպես հանրամատչելիորեն կոչվում է այն, բազմաթիվ դատավճիռներ է կայացրել միջազգային վեճերի վերաբերյալ, որոնք առնչվել են տնտեսական իրավունքներին, անցման իրավունքին, ուժի չկի-

բռնման, պետությունների ներքին գործերին չմիջամտելու, դիվանագիտական հարաբերությունների, պատանդ վերցնելու, ապաստանի իրավունքին ու քաղաքացիությանը: Երկրները այսպիսի վեճերը ներկայացնում են դատարանին՝ իրենց տարաձայնությունների անկողմնակալ լուծումներ ստանալու ակնկալիքով: Հասնելով խաղաղ կարգավորման այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են տարածքային սահմանները, ծովային սահմանները և տարածքային ամբողջականությունը, դատարանը հաճախ օգնում է խուսափել վեճերի սրումից:

Տարածքային իրավունքներին առնչվող մի նշանակալի դեպքում դատարանը 1999թ. կարգավորեց մի զգայուն տարածքային հարց Բոտսվանայի ու Նամիբիայի միջև, և դատարանի վճիռն ընդունվեց երկու երկրների կողմից: 1994թ., երբ նիգերիական զորքերը բախվեցին կամերունյան ոստիկանների հետ, Կամերունը դատավարություն սկսեց Նիգերիայի դեմ՝ վիճելով նավթահանքերով հարուստ Բակասի թերակղզու, իսկ հետո ամբողջ հողատարածքի ու ծովային սահմանի հանդեպ ինքնորոշման իրավունքի հարցում: Գործը դեռևս ընթացքի մեջ է դատարանում: 1992թ. դատարանը կարգավորեց Էլ Սալվադորի ու Հոնդուրասի միջև վեճը, որը շարունակվում էր մոտ մեկ դար և 1969թ. հանգեցրել էր թեև կարճ, բայց արյունալի պատերազմի: Մեկ այլ վեճ է միասնաբար ներկայացվել դատարանին Լիբիայի Արաբական Ջամահիրիայի ու Չադի կողմից: Դատարանը որոշում կայացրեց 1994թ., որ տարածքի բաժանումը որոշված է Լիբիայի ու Ֆրանսիայի միջև 1955թ. կնքված համաձայնագրով. դրանից հետո Լիբիան ետ քաշեց իր զորքերը Չադից բաժանող իր հարավային սահմաններից:

Բազմաթիվ գործեր են ներկայացվել դատարանին ընթացող հակամարտությունների ու քաղաքական հեղաշրջումների ժամանակ: 1980թ. Միացյալ Նահանգները գործ ներկայացրեց, որը բխում էր Թեհրանում իր դեսպանատան գրավումից և նրա անձնակազմի կալանումից: Դատարանը որոշեց, որ Իրանը պետք է ազատ արձակի պատանդներին, վերադարձնի դեսպանատունը և փոխհատուցում վճարի. գործը հետ վերցվեց երկու երկրների միջև ձեռք բերված պայմանավորվածություններից հետո: 1989թ. Իրանը խնդրեց դատարանին դատապարտել ԱՄՆ-ի ռազմանավի կողմից իրանական ինքնաթիռի կործանումը և ԱՄՆ-ին պատասխանատու համարել՝ պարտադրելով փոխհատուցում վճարել Իրանին: Գործը փակվեց 1996թ.՝ փոխհատուցման հարցում կարգավորման հասնելուց հետո:

1986թ. ԱՄՆ-ի դեմ Նիկարագուայի կողմից հարուցված գործով նիկարագուական «կոնտրաներին» առաջինի կողմից ցույց տրված օժանդակության համար դատարանը որոշեց, որ «կոնտրաներին» օժանդակելով և նիկարագուական նավահանգիստներից դուրս ականներ տեղադրելով, գործողությունները, որոնք, դատարանի որոշմամբ, ԱՄՆ-ն չէր կարող արդարացնել կոլեկտիվ ինքնապաշտպանության սկզբունքով, Միացյալ Նահանգները խախտել է իր միջազգային պարտավորությունները՝ այլ պետությունների ներքին գործերին չմիջամտելու, այլ պետության հանդեպ ուժ չկիրառելու և այլ պետության ինքնիշխանության դեմ ոտնձգություններ չկատարելու առումով: Հետևաբար, դատա-

րանը որոշեց, որ ԱՄՆ-ն պետք է փոխհատուցում վճարի: Այնուհանդերձ 1991թ.՝ նախքան փոխհատուցման գումարի չափը որոշելը, Նիկարագուան խնդրեց, որ գործը փակվի:

1992թ. Լիբիան երկու գործ բացեց, մեկը Մեծ Բրիտանիայի, մյուսը՝ ԱՄՆ-ի դեմ Քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ անօրինական գործողությունների կանխման մասին կոնվենցիայի կիրառման կամ մեկնաբանման վերաբերյալ, որը բխում էր 1988թ. «Պան Ամերիքըն» 103 չվերթի ինքնաթիռի՝ Շոտլանդիայի Լոքերբի քաղաքի մոտ տեղի ունեցած վթարից: Գործը դեռևս լսվում է դատարանում:

1993թ. Բոսնիա և Հերցեգովինան գործ հարուցեց Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության դեմ Ցեղասպանության հանցագործության կանխարգելման ու պատժի մասին կոնվենցիայի կիրառման վերաբերյալ: Դատարանը կոչ արեց կողմերին կանխել ցեղասպանության հանցագործության հետագա բռնությունը և վեճի հետագա սրումը: 1996թ. դատարանը մերժեց իր իրավասությունների հանդեպ Հարավսլավիայի կողմից ներկայացված առարկությունները, իսկ գործը դեռևս ընթացքի մեջ է:

Դատարանը 1996թ. մերժեց ԱՄՆ-ի կողմից ներկայացված առարկությունները իր իրավասությունների հանդեպ ԱՄՆ-ի ռազմանավերի կողմից իրանական նավթային կառամատույցների ավերմանն առնչվող գործում և որոշեց, որ ինքն իրավասություն ունի քննելու Իրանի կողմից ներկայացված հայցի մի մասը:

Պետությունները հաճախ ներկայացրել են հայցադրումներ տնտեսական իրավունքների մասին: Օրինակ՝ 1989թ. դատարանի պալատներից մեկը մերժեց ԱՄՆ-ի կողմից Իտալիային ներկայացված փոխհատուցման հայցը՝ ԱՄՆ-ի կորպորացիաներին պատկանող իտալական ընկերությունը ձեռք բերելու համար: 1995թ. Կանադայի ու Եվրոպական միության միջև ձկնորսական գոտիների հանդեպ իրավասության շուրջ ընթացող վեճի շրջանակներում Իսպանիան գործ հարուցեց Կանադայի դեմ վերջինիս կողմից ծովում իսպանական ձկնորսանավը կալանելուց հետո:

Շրջակա միջավայրի պաշտպանությանն առնչվող մի հայց ներկայացվել է Հունգարիայի ու Սլովակիայի կողմից Դանուբ գետի վրա ամբարտակ կառուցելու մասին 1997թ. կնքված պայմանագրի օրինականության վերաբերյալ: 1997թ. դատարանը որոշեց, որ երկու պետություններն էլ խախտել են իրենց իրավական պարտավորությունները, և կոչ արեց նրանց կատարել պայմանագրի պահանջները:

Դատարանի խորհրդատվական կարծիքին են ներկայացվել, այլ խնդիրների թվում, ՄԱԿ-ին անդամակցության, ՄԱԿ-ում ծառայելու ընթացքում ստացած վնասների համար փոխհատուցման, Արևմտյան Սահարայի տարածքային կարգավիճակի և որոշակի խաղաղապահ գործողությունների ծախսերի հարցերը: Երկու կարծիք, տրված 1996թ. Գլխավոր ասամբլեայի ու Առողջապահության համաշխարհային կազմակերպության խնդրանքով, վերաբերում էին միջուկային զենքերի օգտագործման կամ դրա սպառնալիքի օրինականությանը:

1971թ., Անվտանգության խորհրդի կողմից հարցված խորհրդատվական կարծիքում դատարանը նշել է, որ Հարավաֆրիկյան Հանրապետության շարու-

ճակվող ներկայությունը Նամիբիայում անօրինական է, և Հարավաֆրիկյան Հանրապետությունը պարտավոր է դադարեցնել իր կառավարումն ու զավթումը՝ դրանով իսկ ճանապարհ բացելով Նամիբիայի անկախության համար:

## Միջազգային իրավունքի զարգացումն ու կոդիֆիկացիան

**Միջազգային իրավունքի հանձնաժողովը** հիմնվել է 1947թ., Գլխավոր ասամբլեայի կողմից, միջազգային իրավունքի հարաճուն զարգացումն ու նրա կոդիֆիկացիան խթանելու նպատակով: Հանձնաժողովը, որը հանդիպում է տարեկան մեկ անգամ, բաղկացած է 34 անդամից՝ ընտրված Գլխավոր ասամբլեայի կողմից՝ հինգ տարի ժամկետով: Որպես համախումբ՝ անդամները ներկայացնում են աշխարհի հիմնական իրավական համակարգերը և աշխատում են անհատապես՝ որպես փորձագետներ, ոչ թե որպես իրենց կառավարությունների ներկայացուցիչներ: Հանձնաժողովի աշխատանքը պետությունների միջև հարաբերությունները կարգավորող միջազգային իրավունքի խնդիրների ամենալայն շրջանակ է ընդգրկում:

Հանձնաժողովի աշխատանքի մեծ մասը ներառում է միջազգային իրավունքի հարցերի վերաբերյալ նախագծերի կազմումը: Որոշ հարցեր ընտրվում են հանձնաժողովի կողմից, մյուսները փոխանցվում են Գլխավոր ասամբլեայի կողմից: Երբ հանձնաժողովն ավարտում է իր աշխատանքը որևէ հարցի շուրջ, գլխավոր ասամբլեան նախագիծը կոնվենցիայի վերածելու համար սովորաբար հրավիրում է լիազոր ներկայացուցիչների միջազգային համաժողով, որը հետագայում բացվում է պետությունների անդամակցության համար և նշանակում է, որ երկրները պաշտոնապես համաձայնում են հավատարիմ լինել նրա դրույթներին: Այս կոնվենցիաներից մի քանիսը հանդիսանում են պետությունների միջև հարաբերությունները կարգավորող ամենահիմնարար օրենքները: Օրինակ.

- *Միջազգային գետային հունի նավագնացության նպատակներով չօգտագործելու մասին կոնվենցիան* ընդունված Գլխավոր ասամբլեայի կողմից 1997թ., որը կարգավորում է երկու կամ ավելի երկրներով անցնող գետային հուների հավասարաչափ ու խելամիտ օգտագործումը,
- *Պետությունների և միջազգային կազմակերպությունների միջև պայմանագրային իրավունքի մասին կոնվենցիան*՝ ընդունված Վիեննայում, 1986թ.՝ համաժողովի ժամանակ,
- *Պետական սեփականության, արխիվների ու պարտքերի առումով պետությունների իրավահաջորդության մասին կոնվենցիան* ընդունված Վիեննայում, 1983թ՝ համաժողովի ժամանակ,
- *Միջազգայնորեն պաշտպանված անձանց, այդ թվում դիվանագիտական աշխատակազմի դեմ հանցագործությունների կանխման ու դրանց պատժի մասին կոնվենցիան* ընդունված Գլխավոր ասամբլեայի կողմից 1973թ.,
- *Պայմանագրային իրավունքի մասին կոնվենցիան* ընդունված Վիեննայում, 1969թ.՝ համաժողովի ժամանակ,
- *Դիվանագիտական հարաբերությունների մասին* (1961թ.) և *Հյուպատոսա-*

*կամ հարաբերությունների մասին* (1963թ.) *կոնվենցիաները*՝ ընդունված Վիեննայի համաժողովների ժամանակ:

Հանձնաժողովը 1999թ. ընդունեց հռչակագրի նախագիծ, որը նպատակ ուներ կանխել մարդկանց անպետություն դառնալն այնպիսի իրադրություններում, ինչպիսիք են տարածքի անջատումը կամ պետության քայքայումը: Հանձնաժողովը ներկայումս անդրադառնում է այնպիսի խնդիրների, ինչպիսիք են վտանգավոր գործողությունների անդրսահմանային վնասների կանխումը, պետությունների պատասխանատվությունը, պետությունների կողմից միակողմանի գործողությունների իրականացումը, դիվանագիտական պաշտպանության իրավունքը, պայմանագրերում վերապահումներ անելը և պետությունների ու նրանց սեփականության դատական անձեռնմխելիությունը:

## Միջազգային առևտրային իրավունք

**ՄԱԿ-ի միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովը (ՄԱՄԻՀ)** նպաստում է համաշխարհային առևտրին կոնվենցիաներ, մոդելային օրենքներ, կանոններ ու իրավական ուղեցույցներ մշակելով, որոնք նպատակ ունեն ներդաշնակեցնել միջազգային առևտրային իրավունքը: 1966թ. Գլխավոր ասամբլեայի կողմից հիմնված և 36 պետություններից բաղկացած այս մարմինն ի մի է բերում աշխարհի աշխարհագրական տարածքների ու հիմնական տնտեսական ու իրավական համակարգերի ներկայացուցիչներին:

ՄԱՄԻՀ-ն միջազգային առևտրային իրավունքի բնագավառում դարձել է ՄԱԿ-ի համակարգի հիմնական իրավական մարմինը: ՄԱԿ-ի Իրավական հարցերով գրասենյակի միջազգային առևտրային իրավունքի բաժինը ծառայում է որպես նրա քարտուղարություն:

Իր 32-ամյա պատմության ընթացքում հանձնաժողովը մշակել է լայնորեն ընդունված տեքստեր, որոնք համարվում են հիմնաքարային իրավունքի ամենատարբեր ոլորտներում: Ներկայիս աշխատանքը ներառում է անհատապես ֆինանսավորվող ենթակառուցվածքների ծրագրերի մասին օրենսդրական ուղեցույցի պատրաստումը, որը կարող է ուղենիշ դառնալ այս ծրագրերին առնչվող օրենսդրության մշակող կամ վերանայող պետությունների համար, էլեկտրոնային ստորագրությունների համար միանման օրենքների մշակումը, ՄԱՄԻՀ-ի տեքստերի վերաբերյալ նախադեպային իրավունքի կազմումն ու հրատարակումը և պարտապահանջների ֆինանսավորման հարցերով հանձնառությունների մասին կոնվենցիայի նախագծի կազմումը, որը կօժանդակի վարկերի հասանելիությանը ավելի ցածր արժեքով:

## Շրջակա միջավայրի իրավունք

ՄԱԿ-ն առաջինն է սկսել միջազգային շրջակա միջավայրի իրավունքի մշակումը՝ միջնորդելով խոշոր համաձայնագրերի կնքմանը, որոնք ամենուրեք ա-

ռաջ են մղել շրջակա միջավայրի պաշտպանությունը: ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիրը (ՄԱՇՄԾ) վերահսկում է այս պայմանագրերից շատերը:

- *Միջազգային կոնվենցիա անապատացման դեմ պայքարի համար այն երկրներում, որտեղ լուրջ երաշտներ են պատահում, կամ սպառնում է անապատացումը, հատկապես Աֆրիկայում* (1994թ.). փորձում է խթանել միջազգային համագործակցությունը անապատացման դեմ պայքարին և երաշտի հետևանքների նվազեցմանն ուղղված գործողություններում:
- *Կենսաբազմազանության մասին կոնվենցիան* (1992թ.) փորձում է պահպանել կենսաբազմազանությունը, խթանել նրա բաղադրիչների կայուն օգտագործումը և խրախուսել գենետիկ հնարավորությունների կիրառումից ստացվող օգուտների հավասարաչափ և համատեղ օգտագործումը: Կենսաբանական անվտանգության մասին *Կարթագենի արձանագրությունը* (2000թ.) պարտադիր կերպով պահանջում է հստակորեն պիտակավորել արտահանվող գյուղատնտեսական մթերքները, որոնք կարող են գենետիկորեն փոփոխված օրգանիզմներ պարունակել, և թույլ է տալիս կառավարություններին հայտարարել՝ արդյոք կամենում են ընդունել այդպիսի արտահանվող ապրանքները:
- *Կլիմայական փոփոխությունների մասին շրջանակային կոնվենցիան* (1992թ.) և դրան *կից Կիոտոյի արձանագրությունը* (1997թ.) պարտավորեցնում է անդամ պետություններին նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները, որոնք հանգեցնում են համաշխարհային տաքացման և դրան առնչվող մթնոլորտային խնդիրների:
- *Վտանգավոր թափոնների ու դրանց տեղափոխումների միջսահմանային շարժի վերահսկման մասին Բազելի կոնվենցիան* (1989թ.) պարտավորեցնում է անդամ պետություններին նվազեցնել վտանգավոր թափոնների տեղափոխումն ու թափումը սահմաններից այն կողմ, նվազեցնել վտանգավոր թափոններից արտանետված թունավոր նյութերի քանակն ու աստիճանը և իրականացնել դրանց բնապահպանորեն անվտանգ պահպանումը հնարավորինս մոտ արտադրության վայրին: Անդամ պետությունները 1999թ. ընդունեցին *արձանագրություն վտանգավոր թափոնների միջսահմանային տեղաշարժի համար պատասխանատվության ու փոխհատուցման մասին*:
- *Օզոնի շերտի պաշտպանության Վիեննայի կոնվենցիան* (1985թ.), *Մոնրեալի արձանագրությունը* (1987թ.) և դրա փոփոխությունները փորձում են նվազեցնել մթնոլորտում օզոնի շերտին հասցված վնասը, որը պաշտպանում է երկիրը արևի վնասակար ուլտրամանուշակագույն ճառագայթներից:
- *1979թ. Մեծ հեռավորության միջսահմանային օդային աղտոտման մասին կոնվենցիան (Թթվածնային անձրևի կոնվենցիան)* և դրա *արձանագրությունները*, որոնք բանակցվել են ՄԱԿ-ի Եվրոպայի հարցերով տնտեսական հանձնաժողովի կողմից (ԵՏՀ), վերահսկողություն է ապահովում օդի աղտոտվածության և դրա նվազեցման հանդեպ Եվրոպայում ու Հյուսիսային Ամերիկայում:
- *Միջազգային առևտրում որոշակի վտանգավոր քիմիկատների ու պեստիցիդների վերաբերյալ նախապես տեղեկացման ընթացակարգի մասին Ռոտեր-*

*դամի կոնվենցիան* (1998թ.) պարտավորեցնում է վտանգավոր քիմիկատների կամ պեստիցիդների արտահանողներին տեղեկատվություն տրամադրել ներմուծող երկրին առողջության կամ շրջակա միջավայրի համար տվյալ նյութի հնարավոր վնասակարության մասին:

1971թ. *Միջազգային կարևորության ջրային տարածքների, հատկապես ջրային թռչունների բնակավայրերի մասին կոնվենցիան* պարտավորեցնում է անդամ պետություններին խելամտորեն օգտագործել իրենց իրավասության տակ գտնվող բոլոր ջրային տարածքները: 1972թ. *Աշխարհի մշակութային ու բնական ժառանգության պաշտպանության մասին կոնվենցիան* պարտավորեցնում է անդամ պետություններին պահպանել բնական ու մշակութային եզակի տարածքները: Երկուսն էլ առաջ են մղվել ՄԱԿ-ի Կրթության, գիտության ու մշակույթի կազմակերպության (ՅՈՒՆԵՍԿՕ) կողմից:

Ծովային միջազգային կազմակերպությունը (ԾՄԿ) առաջ է մղել կոնվենցիաներ, որոնք օգնել են նվազեցնել ծովային աղտոտումը:

## Ծովային իրավունք

*Ծովային իրավունքի մասին ՄԱԿ-ի կոնվենցիան* համարվում է միջազգային իրավունքի ամենաընդգրկուն իրավունքներից մեկը: Այս շրջադարձային պայմանագիրը նախատեսում է օվկիանոսի ինքնիշխանության, իրավազորության և օգտագործման բոլոր ասպեկտների, ինչպես նաև պետությունների իրավունքների ու պարտավորությունների շրջանակը: Այն մեկ փաստաթղթի մեջ ամփոփում է օվկիանոսների օգտագործման ավանդական կանոնների կոդիֆիկացիան, ինչպես նաև նոր կանոնների մշակումը, որոնք վերաբերում են ծագող խնդիրներին: Այն եզակի իրավական փաստաթուղթ է և հաճախ կոչվում է սահմանադրություն օվկիանոսների համար:

Այսօր համընդհանուր կերպով ընդունվում է, որ օվկիանոսի դյուրին առնչվող ցանկացած գործունեություն և ծովային իրավունքը պետք է համապատասխանեն կոնվենցիայի դրույթներին: Այս իրավական օրինականությունը կնում է կոնվենցիայի՝ գրեթե բոլորի կողմից ընդունված լինելու իրողությունից. այն ավելի քան 130 անդամ պետություն ունի, շատերը վավերացման կամ միացման գործընթացում են, և համարյա բոլորը, բացառությամբ շատ փոքր թվով պետությունների, ընդունում են կոնվենցիան ու նրա դրույթները կամ հարում են դրանց:

Կոնվենցիան ընդգրկում է օվկիանոսային տարածքի և նրա օգտագործման հետ կապված բոլոր խնդիրները՝ ծովագնացություն և ջրային տարածքի վրայով թռիչքներ, պաշարների հետազոտում և շահագործում, պահպանություն և աղտոտում, ձկնորսություն և նավարկում: Նրա 320 հոդվածները և 9 հավելվածները ուղեցույց են, որով առաջնորդվում են պետությունները օվկիանոսներում, սահմանում են ծովային գոտիները, կանոններ ծովային սահմանների գծման համար, շնորհում են սուբյեկտիվ իրավունքներ, սահմանում են պարտականություններ ու պարտավորություններ և մեխանիզմ են ապահովում վեճերի լուծման համար:

## Կոնվենցիայի ազդեցությունը

Պետությունները մշտապես ազգային կամ միջազգային օրենսդրության ու նախակից որոշումների կայացման միջոցով հաստատել են կոնվենցիայի՝ որպես տվյալ ոլորտում բարձրագույն միջազգային իրավական մեխանիզմի, դերը: Առ այսօր նրա ամենամեծ ազդեցությունը եղել է 12 ծովային մղոնի՝ որպես տարածքային ծովերի համար սահմանի, գրեթե համընդհանուր ճանաչումը, ինչպես նաև ծովափնյա պետությունների իրավասությունը մինչև 200 ծովային մղոն «բացառիկ տնտեսական գոտու» պաշարների և այս գոտու սահմաններից դուրս ձգված մայրցամաքային շելֆերի պաշարների հանդեպ: Այն նաև կանոնակարգել է ծովագնացության ոլորտը թե՛ տարածքային ծովերով առանց հետին նպատակների անցման գաղափարի, թե՛ միջազգային ծովագնացության համար օգտագործվող նեղ նեղուցներով տարանցման ընդունմամբ:

Կոնվենցիայի համընդհանուր ճանաչմանը խթանեց 1994թ. Գլխավոր ասամբլեայի կողմից *Կոնվենցիայի XI մասի կիրառմանը վերաբերող համաձայնագրի* ընդունումը: Համաձայնությունը վերացրեց որոշակի խոչընդոտները, որոնք խանգարում էին հիմնականում արդյունաբերական երկրների միանալու դրան:

Կոնվենցիան հայտնի է նաև այն ազդեցությամբ, որ ունեցել է ծովափնյա պետությունների կողմից ծովային գիտական հետազոտությունների վրա ունեցած վերահսկողության, աղտոտումների կանխման և ցամաքային երկրների դեպի ծով ելքի խնդիրների վրա: Ավելին, այն ներկայումս ընդունվում է որպես շրջանակ և հիմք ցանկացած ապագա մեխանիզմի համար, որը կփորձի առավել հստակ սահմանել իրավունքներն ու պարտականությունները օվկիանոսում, մի փաստ, որն, օրինակ, իր արտացոլումը գտավ 1995թ. *Մնայուն ձկնային պաշարների և խիստ տեղաշարժվող ձկնային պաշարների մասին համաձայնագրում*:

## Կոնվենցիայի հիման ստեղծված մարմինները

Կոնվենցիան հիմնեց երեք առանձնահատուկ մարմին ծովային օրենքի տարբեր խնդիրներով զբաղվելու համար:

**Ծովի հատակի հարցերով միջազգային մարմինն** այն կազմակերպությունն է, որի միջոցով անդամ պետությունները կազմակերպում և վերահսկում են ազգային իրավասությունից դուրս գտնվող միջազգային ծովային հատակի շրջանում խորը հատակի հանքային պաշարներին առնչվող գործունեությունը: Այն հիմնվել է 1994թ. և տեղաբաշխված է Ջամայկայի Քինգսթոն քաղաքում: Մարմինը հավանության է արժանացրել որոշակի տեսակի խորը ծովային հանքանյութերի հետազոտման աշխատանքների ծրագրերը, որոնք գործարքային հիմունքներով կտրվեն պետությունների կամ այլ մարմինների, երբ կընդունվի այսպես կոչված «Հանքահանման օրենսգիրքը», որը կանոնակարգում է հետազոտումն ու շահագործումը:

**Ծովային օրենքի միջազգային տրիբունալը**, որը գործում է 1996թ-ից վեճերի

կարգավորման մարմինն է, որոնք ծագում են կոնվենցիայի կիրառման կամ մեկնաբանման ժամանակ: Բաղկացած է 21 դատավորից, որոնք ընտրվում են անդամ պետությունների կողմից, և տեղակայված է գերմանական Համբուրգ նավահանգստային քաղաքում:

**Մայրցամաքային շելֆի սահմանների հարցերով հանձնաժողովը** խորհուրդներ է տալիս այն պետություններին, որոնք հայտ են ներկայացնում իրենց ծովափնյա եզրից 200 մղոնը գերազանցող շելֆի մասին: Այն տեղակայված է ՄԱԿ-ի կենտրոնական գրասենյակում, սկսել է աշխատանքները 1997թ.: Նրա 21 անդամները, որոնք ընտրվում են անդամ պետությունների կողմից, ծառայում են անհատապես:

## Անդամ պետությունների համաժողովները

Թեև կոնվենցիան չի ենթադրում կանոնավոր հավաքներ գումարել անդամ պետությունների մասնակցությամբ, անդամ պետությունների տարեկան հանդիպումները, որոնք գումարվում են Գլխավոր քարտուղարի կողմից, ծառայում են որպես մտահոգող հարցերի քննարկման ատյան: Սա կատարվում է ի հավելումն նախատեսված վարչական գործառույթների, ինչպիսիք են տրիբունալի կամ հանձնաժողովի անդամների ընտրությունը, ինչպես նաև բյուջետային կամ վարչական այլ խնդիրներ:

Օվկիանոսային խնդիրներին ու ծովային օրենքին առնչվող հարցերի վերահսկողությունն իրականացվում է Գլխավոր ասամբլեայի կողմից: Բայց 2000թ. ասամբլեան զարգացումների սեփական տարեկան գնահատումներին օժանդակելու նպատակով բաց անպաշտոն խորհրդակցական գործընթաց սկսեց: Խորհրդակցական գործընթացը, որը հավաքվում է ամեն տարի, պետք է առաջարկություններ ներկայացնի ասամբլեային առանձնահատուկ հարցերի վերաբերյալ՝ շեշտելով այն ոլորտները, որտեղ պետք է բարելավվի կառավարությունների ու գործակալությունների միջև համագործակցությունը:

## Միջազգային մարդասիրական իրավունք

Միջազգային մարդասիրական իրավունքն ընդգրկում է այն սկզբունքներն ու նորմերը, որոնք կարգավորում են պատերազմի միջոցներն ու եղանակները, ինչպես նաև քաղաքացիական բնակչության, հիվանդ ու վիրավոր զինվորների և պատերազմի գերիների մարդասիրական պաշտպանությունը: Այս ոլորտում հիմնական օրենքներն են 1949թ. *Պատերազմի զոհերի պաշտպանության Ժնևի կոնվենցիան* և դրա 1977թ. *երկու արձանագրությունները*, որոնք կնքվել են Կարմիր խաչի միջազգային կոմիտեի ներքո:

Վերջին տարիներին ՄԱԿ-ն առաջնորդող դեր է ստանձնել միջազգային մարդասիրական իրավունքը կատարելագործելու խնդրում: Անվտանգության խորհուրդը առավելագույնս է ներգրավվել զինված հակամարտությունների ժամանակ քաղաքացիական բնակչությանը պաշտպանելու, մարդու իրավունք-

ների առաջ մղելու և պատերազմում երեխաներին պաշտպանելու հարցերում: Խորհուրդը նաև Միջազգային հանցագործությունների երկու տրիբունալ է հաստատել նախկին Հարավսլավիայի ու Ռուանդայի հարցերով, որոնք իրենց ներդրումն են ունեցել մարդասիրական իրավունքում: Նույնպիսի ներդրում են ունեցել Միջազգային հանցագործությունների դատարանի նախապատրաստությունները, որոնք շեշտել են ցեղասպանություն, պատերազմական հանցագործություններ և մարդկության դեմ ուղղված հանցագործություններ գործած անձանց անպատժելիությանը վերջ դնելու անհրաժեշտությունը:

Գլխավոր ասամբլեան՝ որպես ՄԱԿ-ի քաղաքական ատյան, իր նպաստն է բերել մի շարք օրենքների մշակմանը: Դրանց թվում են 1948թ. *Ցեղասպանության հանցագործության կանխարգելման ու պատժի մասին կոնվենցիան*, 1968թ. *Պատերազմի հանցագործությունների ու մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ օրենսդրական սահմանափակումների չկիրառելիության մասին կոնվենցիան*, 1980թ. *Չափազանց վնասակար համարվող կամ անխտրական ազդեցություն ունեցող սովորական սպառազինությունների որոշակի տեսակների կիրառման նկատմամբ արգելքի կամ սահմանափակումների մասին կոնվենցիան և դրա չորս արձանագրությունները*, և *Պատերազմական հանցագործությունների ու մարդկության դեմ ուղղված հանցագործությունների մեջ մեղադրվող անձանց հայտնաբերման, կալանավորման, հանձնման ու պատժի հարցերում միջազգային համագործակցության սկզբունքները*, որոնք ընդունվել են ասամբլեայի կողմից 1973թ.:

## Միջազգային տրիբունալներ

Նախկին Հարավսլավիայում և Ռուանդայում միջազգային մարդասիրական իրավունքի զանգվածային խախտումները ստիպեցին Անվտանգության խորհրդին ստեղծել երկու միջազգային տրիբունալ այսպիսի խախտումների համար պատասխանատվություն կրող մարդկանց դատապարտելու նպատակով: Երկու տրիբունալներն էլ ստեղծվել են Կանոնադրության VII գլխի հիման վրա, որում խոսվում է հարկադրման մեխանիզմների մասին, և երկուսն էլ Անվտանգության խորհրդի ենթակա մարմիններ են:

- **Նախկին Հարավսլավիայի հարցերով Միջազգային քրեական տրիբունալ**՝ հիմնված 1993թ.: Բաղկացած է չորս պալատից (երեք դատական լսումների պալատ և մեկ բողոքարկման պալատ), դատախազից և մատենավարից: Իր կանոնադրության համաձայն, այն կարող է պատասխանատվության ենթարկել չորս տեսակի հանցանքի համար՝ Ժնևի կոնվենցիայի ծանրագույն խախտումների, պատերազմի օրենքների կամ սովորույթների խախտումների, ցեղասպանության և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների: Տրիբունալը գտնվում է Նիդեռլանդների Հաագա քաղաքում:
- **Ռուանդայի հարցերով Միջազգային քրեական տրիբունալ**՝ հիմնված 1994թ., բաղկացած դատական լսումների երեք պալատից, դատախազից և մատենավարից: 1998թ. Տրիբունալը կայացրեց միջազգային դատարանի կողմից երբևէ տրված առաջին վճիռը, որը դատապարտում է ցեղասպանությունը:

Տրիբունալը գտնվում է Տանզանիայի Արուշա քաղաքում, դատախազի գրասենյակը գտնվում է Ռուանդայի Կիգալի քաղաքում:

Տրիբունալներն ունեն ընդհանուր բողոքարկման պալատ և ընդհանուր դատախազ: Նրանք զբաղված են մի շարք դատավարություններով և մեղադրանք են ներկայացրել պատերազմական հանցագործությունների մեջ մեղադրվող ավելի քան 120 անձի:

2000թ. խորհուրդը սկսեց Սիեռա Լեոնեում նման դատարանի հիմնման գործընթաց:

## Միջազգային քրեական դատարան (ՄՔԴ)

Մշտական միջազգային քրեական դատարանի գաղափարը, որը պետք է դատական կարգով հետապնդեր մարդկության դեմ գործած հանցագործությունները, առաջին անգամ Միավորված ազգերի կազմակերպությունում քննարկվել է 1948թ.՝ Ցեղասպանության մասին կոնվենցիայի ընդունման ենթատեքստում: Տարիներ շարունակ տարակարծությունները խափանեցին հետագա զարգացումները: 1992թ. Գլխավոր ասամբլեան հրահանգեց Միջազգային իրավունքի հանձնաժողովին պատրաստել դատարանի կանոնադրության նախագիծը: Զարդերը Կամբոջայում, նախկին Հարավսլավիայում և Ռուանդայում առավել հրատապ դարձրեցին դրա ստեղծումը:

*Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությունն* ընդունվել է Հռոմում 1998թ. տեղի ունեցած լիագումար կոնֆերանսի ժամանակ. 120 երկիր կողմ քվեարկեց, 7-ը՝ դեմ, 21-ը՝ ձեռնպահ: Այն ուժի մեջ մտնելու համար պետք է վավերացվի առնվազն 60 երկրների կողմից: Մինչև 2000թ. դեկտեմբերը արդեն 27 երկիր վավերացրել էր այն:

Կանոնադրությունը կոչ է անում ստեղծել մշտական միջազգային քրեական դատարան, որը լիազորված լինի հետապնդելու և դատական պատասխանատվության ենթարկելու այն անձանց, ովքեր միջազգային հանրության համար մտահոգություն հարուցող ծանրագույն հանցագործություններ են կատարել, ներառյալ՝ ցեղասպանությունը, մարդկության դեմ ուղղված և պատերազմական հանցագործությունները: Դատարանը նաև իրավազորություն կունենա հետապնդելու ագրեսիայի հանցագործությունը, երբ վերջինս սահմանող դրույթ ընդունվի, և երբ ներկայացվեն այն պայմանները, որոնց առկայությամբ դատարանը պետք է իրականացնի իր իրավազորությունը:

Դատարանը լինելու է մշտապես գործող դատական մարմին, որը իրավազորություն կունենա հետապնդելու միայն անհատների կողմից կատարված հանցագործությունները: Առաջնահերթությունը տրվում է ազգային դատարաններին. անդամ պետություններից պահանջվում է առաջին հերթին օգտագործել իրենց սեփական տրիբունալները, և դատարանը կարող է միջամտել միայն այն դեպքում, երբ ազգային դատարանները չեն կարող կամ չեն կամենում գործել: Անդամ պետությունները, Անվտանգության խորհուրդը և դատարանի սեփական դատախազը իրավունք կունենան գործեր հարուցել դատարանի քննության համար: Անվտանգության խորհուրդը իրավունք կունենա կասեց-

նելու ցանկացած գործ, որն անհարիր կհամարի:

Դատարանը կունենա 18 դատավոր՝ ընտրված անդամ պետությունների կողմից ինը տարի ծառայության ժամկետով: Երկու դատավոր միևնույն երկրից չեն կարող լինել: Դատավորները կընտրեն նախագահ, իսկ դատախազը կընտրվի անդամ երկրների կողմից, փակ քվեարկությամբ: Դատարանը կտեղակայվի Նիդեռլանդներում՝ Հաագայում:

## Միջազգային ահաբեկչություն

ՄԱԿ-ը մշտապես անդրադարձել է ահաբեկչության խնդրին՝ դիմելով թե՛ իրավական, թե՛ քաղաքական քայլերի:

Իրավական առումով ՄԱԿ-ն ու նրա մասնագիտացված գործակալությունները, ինչպիսիք են Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպությունը (ՔԱՄԿ), Ծովային միջազգային կազմակերպությունը (ԾՄԿ) և Ատոմային էներգիայի միջազգային գործակալությունը (ԱԷՄԳ), ստեղծել են միջազգային համաձայնագրերի ցանց, որը ահաբեկչության դեմ պայքարի իրավական հիմքն է: Դրանք են.

- *Օդանավերում կատարվող հանցագործությունների և մի շարք այլ ակտերի մասին կոնվենցիան* (ընդունվել է Տոկիոյում 1963թ.),
- *Օդանավերի անօրինական զավթումների մասին կոնվենցիան* (Հաագա, 1970թ.),
- *Քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված անօրինական գործողությունների պայքարի մասին կոնվենցիան* (Մոնրեալ, 1971թ.),
- *Միջազգային պաշտպանությունից օգտվող անձանց, այդ թվում՝ դիվանագիտական գործակալների դեմ ուղղված հանցագործությունների կանխման և պատժի մասին կոնվենցիան* (Նյու Յորք, 1973թ.),
- *Միջուկային նյութի ֆիզիկական պաշտպանության մասին կոնվենցիան* (Վիեննա, 1980թ.),
- *Միջազգային օդանավակայաններում բռնության անօրինական ձեռնարկումների դեմ պայքարելու մասին արձանագրությունը* (Մոնրեալ, 1988թ.),
- *Ծովագնացության անվտանգության դեմ ուղղված անօրինական գործողությունների դեմ պայքարի մասին կոնվենցիան* (Հռոմ, 1988թ),
- *Մայրցամաքային շելֆի վրա տեղակայված կառամատույցների անվտանգության դեմ ուղղված անօրինական գործողությունների դեմ պայքարի մասին արձանագրությունը* (Հռոմ, 1988թ) և
- *Հայտնաբերման նպատակով պլաստիկ պայթուցիկները դրոշմելու մասին կոնվենցիան* (Մոնրեալ, 1991թ):

Գլխավոր ասամբլեան չորս կոնվենցիա է ընդունել:

- *Պատանդ վերցնելու դեմ կոնվենցիա* (1979թ.), որով պետությունները համաձայնում են պատանդ վերցնելը պատժելի դարձնել համապատասխան պատիժներով: Նրանք նաև համաձայնում են արգելել որոշ գործողությունների

իրականացումն իրենց տարածքներում, փոխանակել տեղեկատվություն և հնարավորություն ստեղծել ցանկացած քրեական կամ ոճրագործների հանձնման մասին դատավարությունների անցկացման համար։ Եթե անդամ պետությունը չի հանձնում հանցանքի մեջ մեղադրվողին, ապա պետք է գործը դատաքննման հանձնի իր իսկ մարմիններին։ Առ 2000թ. դեկտեմբերը կոնվենցիային միացել է 94 անդամ պետություն։

- *ՄԱԿ-ի և հարակից անձնակազմի անվտանգության մասին կոնվենցիան*, (1994թ.) առաջարկվեց ասամբլեայի կողմից 1993թ. դաշտային առաքելություններում ՄԱԿ-ի անձնակազմի վրա կատարված բազմաթիվ հարձակումների պատճառով, որոնց հետևանքով մարդիկ զոհվել են և վիրավորվել։ Առ 2000թ. դեկտեմբերը նրան միացել է 49 անդամ պետություն։
- *Ահաբեկչական ռմբակոծումները դադարեցնելու մասին միջազգային կոնվենցիան* (1997թ.) նպատակ ունի մերժել ապահով հանգրվանի տրամադրումն այն անձանց, որոնք որոնման մեջ են ահաբեկչական ռմբակոծումների համար, պարտավորեցնելով յուրաքանչյուր անդամ երկրի դատական կարգով հետապնդել այդպիսի մարդկանց, եթե չեն հանձնում այն պետությանը, որը հայտ է ներկայացրել հանձնման մասին։ Այն ուժի մեջ կմտնի, երբ վավերացվի 22 պետության կողմից։ Առ 2000թ. դեկտեմբերը այն վավերացրել է 17 պետություն։
- *Ահաբեկչության ֆինանսավորման դադարեցման մասին միջազգային կոնվենցիան* (1999թ.) պարտավորեցնում է անդամ պետություններին կամ դատական կարգով հետապնդել, կամ հանձնել այն անձանց, որոնք մեղադրվում են ահաբեկչական գործողությունները ֆինանսավորելու մեջ, և պահանջում է բանկերից մեխանիզմներ կիրառել կասկածելի բանկային գործառնությունները բացահայտելու համար։ Այն ուժի մեջ կմտնի, երբ վավերացվի 22 պետության կողմից։ Առ 2000թ. դեկտեմբերը այն վավերացրել է 2 պետություն։

Ասամբլեայի կողմից 1996թ. ստեղծված հանձնաժողովը մշակում է միջուկային ահաբեկչության գործողությունների դադարեցման մասին կոնվենցիա։

Քաղաքական առումով Գլխավոր ասամբլեան 1994թ. ընդունեց *Միջազգային ահաբեկչության վերացմանն ուղղված միջոցառումների մասին հռչակագիր*, *իսկ 1996թ.՝ Հռչակագիր 1994թ. հռչակագրում լրացում կատարելու մասին*, որոնք դատապարտում են ահաբեկչական բոլոր գործողություններն ու գործունեությունը որպես քրեապես պատժելի և արդարացման չենթարկվող, որտեղ և ում կողմից էլ դրանք կատարված լինեն։ Ասամբլեան պետություններին կոչ արեց ազգային և միջազգային մակարդակներում քայլեր ձեռնարկել միջազգային ահաբեկչությունը վերացնելու ուղղությամբ։

## Այլ իրավական հարցեր

Գլխավոր ասամբլեան իրավական փաստաթղթեր է ընդունել բազմաթիվ այլ հարցերի շուրջ։ Դրանց թվում են *Վարձկանների հավաքագրման, օգտագործման, ֆինանսավորման ու վարժեցման դեմ միջազգային կոնվենցիան* (1989թ.),

*Ցանկացած տեսակի կալանքի կամ բանտարկության մեջ գտնվող բոլոր անձանց պաշտպանության մասին սկզբունքների համալիրը* (1988թ.) և *Միջազգային հարաբերություններում ուժի կիրառումից կամ դրա սպառնալիքից զերծ մնալու սկզբունքի արդյունավետության բարձրացման մասին հռչակագիրը* (1987թ.):

Ասամբլեան ընդունել է բազմաթիվ միջազգային փաստաթղթեր իր կողմից 1974թ. ստեղծված **ՄԱԿ-ի Կանոնադրության և կազմակերպության դերի ուժեղացման հարցերով հատուկ կոմիտեի խորհուրդներով**: Սրանց թվում են *Պետությունների միջև վեճերի հարթման ՄԱԿ-ի մոդելային կանոնները* (1995թ.), *Միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման հարցերում ՄԱԿ-ի և տարածաշրջանային կառույցների կամ գործակալությունների միջև համագործակցության բարելավման մասին հռչակագիր* (1994թ.). *Միջազգային խաղաղության ու անվտանգության պահպանման ոլորտում ՄԱԿ-ի փաստահավաքության մասին հռչակագիրը* (1991թ.). *Հռչակագիր վեճերի ու այն իրավիճակների կանխման ու հարթման մասին, որոնք կարող են սպառնալիք ներկայացնել միջազգային խաղաղության ու անվտանգության համար, և այս ոլորտում ՄԱԿ-ի դերի մասին* (1988թ.) և *Միջազգային վեճերի խաղաղ կարգավորման մասին հռչակագիրը* (1982թ.):

Համաձայն Կանոնադրության (հոդված 102), անդամ պետությունները պետք է Միավորված ազգերի կազմակերպությունում գրանցեն այն միջազգային պայմանագրերը, որոնց իրենք միացել են: **ՄԱԿ-ի Իրավական հարցերի գրասենյակը** պատասխանատու է գրանցման, ավանդապահման և պայմանագրերի ու կոնվենցիաների հրատարակման համար: Նա հրատարակում է *«ՄԱԿ-ի պայմանագրերի շարքը»*, որը ավելի քան 34 հազար պայմանագրերի ու հարակից մեխանիզմների բնագրեր է պարունակում: Գրասենյակը հրատարակում է նաև *«Գլխավոր քարտուղարին ի պահ հանձնված բազմակողմ պայմանագրերի»* հատորյակը, որը ավելի քան 500 խոշոր պայմանագրեր է բովանդակում` ի պահ տրված անդամ պետությունների կողմից:

# ՄԱՍ ԵՐԿՐՈՐԴ

## Գլուխ 7

## ԱՊԱԳԱՂՈՒԹԱՑՈՒՄ



# ԱՊԱԳԱՂՈՒԹԱՑՈՒՄ

Ավելի քան 80 պետություն, որոնց ժողովուրդները եղել են գաղութային լծի տակ, 1945թ. կազմակերպության ստեղծումից ի վեր միացել են ՄԱԿ-ին որպես անկախ պետություններ: Շատ այլ տարածքներ ինքնորոշվել են ուրիշ անկախ պետությունների հետ քաղաքական միացման կամ նրանց ինտեգրվելու միջոցով: ՄԱԿ-ը որոշիչ դեր է խաղացել այդ պատմական փոփոխության հարցում՝ խրախուսելով կախյալ ժողովուրդների հավակնությունները և հաստատելով նպատակներ ու չափանիշներ նրանց կողմից անկախության ձեռքբերումն արագացնելու համար: Կազմակերպությունը նաև վերահսկել է անկախության տանող ընտրությունները Տոգոլենդում (1956թ. և 1968թ.), Արևմտյան Սամոայում (1961թ.), Նամիբիայում (1989թ.) և բոլորովին վերջերս՝ ժողովրդական խորհրդակցությունները Արևելյան Թիմորում:

ՄԱԿ-ի ապագաղութացման ջանքերը բխում են Կանոնադրության՝ «ժողովուրդների հավասար ու ինքնորոշման իրավունքների» մասին սկզբունքից, ինչպես նաև Կանոնադրության՝ կախյալ ժողովուրդների խնդիրներին նվիրված XI, XII և XIII հատուկ գլուխներից: 1960թ. ի վեր Գլխավոր ասամբլեան առաջնորդվել է նաև *Գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն շնորհելու մասին հռչակագրով*, որը հայտնի է նաև որպես Ապագաղութացման հռչակագիր, որով անդամ պետությունները հռչակեցին գաղութատիրությանն արագ վախճանի հասցնելու անհրաժեշտությունը: Կազմակերպությունը նաև առաջնորդվել է Գլխավոր ասամբլեայի 1960թ. ընդունված թիվ 1541 (XV) բանաձևով, որը երեք տարբերակ է սահմանել ոչ ինքնակառավարվող տարածքներին լիիրավ ինքնակառավարում վերապահելու համար:

Չնայած գաղութատիրության դեմ պայքարում արձանագրված մեծ առաջխաղացմանը, մոտ 1,3 մլն մարդ է ապրում գաղութատիրության պայմաններում, և ՄԱԿ-ը շարունակում է իր ջանքերը՝ ուղղված մնացած ոչ ինքնակառավարվող տարածքներում ինքնորոշման կամ անկախության ձեռքբերմանը: Այդ նպատակով 2000թ. Գլխավոր ասամբլեան 2001-2010թթ. հայտարարեց Գաղութատիրության վերացման միջազգային երկրորդ տասնամյակ:

## Միջազգային խնամակալական համակարգ

Ըստ Կանոնադրության XII գլխի, ՄԱԿ-ը խնամակալության տակ գտնվող տարածքների վերահսկման համար ստեղծեց Միջազգային խնամակալական համակարգ, որում ընդգրկված էին առանձին համաձայնագրերով տարածքները վերահսկող պետությունները:

Համակարգը տարածվում էր. ա) Առաջին համաշխարհային պատերազմից հետո Ազգերի լիգայի կողմից տրված մանդատի ներքո գտնվող տարածքների վրա, բ) Երկրորդ համաշխարհային պատերազմի արդյունքում «թշնամի պետություններից» անջատված տարածքների վրա և գ) այն տարածքների վրա, որոնք այդ տարածքները տնօրինող պետությունների կողմից կամովին հանձ-

վել են համակարգին: Համակարգի նպատակն է եղել խրախուսել տարածքների քաղաքական, տնտեսական ու սոցիալական առաջխաղացումը և նրանց զարգացումն ինքնակառավարման ու ինքնորոշման ուղղությամբ:

**Խնամակալության խորհուրդը** հիմնվել է, Կանոնադրության XIII գլխի համաձայն. խնամակալության տակ գտնվող տարածքների կառավարումը վերահսկելու համար և ապահովելու, որ նրանց կառավարման համար պատասխանատու կառավարությունները համապատասխան քայլեր ձեռնարկեն Կանոնադրության կողմից սահմանված նրանց նպատակներին հասնելու համար:

ՄԱԿ-ի սկզբնավորման առաջին շրջանում 11 տարածք է դրվել խնամակալական համակարգի ներքո: Բոլոր տարածքները դարձել են անկախ պետություններ կամ կամովին միացել են մեկ այլ պետության:

Վերջին տարածքը, որ անկախություն ձեռք բերեց, Խաղաղօվկիանոսյան կղզիների խնամառու տարածքն էր (Պալաուն), որը կառավարվում էր Միացյալ Նահանգների կողմից: Անվտանգության խորհուրդը 1994թ. դադարեցրեց ՄԱԿ-ի խնամակալության պայմանագիրն այդ տարածքի համար՝ վերջինիս կողմից 1993թ. ազատ հանրաքվեի արդյունքում ԱՄՆ-ի հետ ազատ միավորումն ընտրելուց հետո: Պալաուն 1994թ. դարձավ անկախ և նույն տարում միացավ ՄԱԿ-ին:

Խնամակալական համակարգն ավարտեց իր պատմական առաքելությունը, քանի որ ոչ մի տարածք չի մնացել նրա օրակարգում:

## Ոչ ինքնակառավարվող տարածքներ

Կանոնադրությունը նաև արծարծում է ոչ ինքնակառավարվող տարածքների հարցը, որոնք ներառված չեն խնամակալության համակարգում:

Կանոնադրության XI գլուխը՝ Ոչ ինքնակառավարվող տարածքների մասին հռչակագիրը, նշում է, որ ինքնակառավարում ձեռք չբերած տարածքները կառավարող անդամ պետությունները պետք է ընդունեն, որ «այդ տարածքների բնակիչների շահերն առաջնային են» և «սուրբ գործ» համարեն նրանց բարեկեցությունն ապահովելու պարտականությունը:

Այս նպատակով կառավարող ուժերը, ի լրումն այդ ժողովուրդների քաղաքական, տնտեսական ու կրթական առաջխաղացմանը, հանձն են առնում օգնել նրանց զարգացնելու ինքնակառավարումն ու ժողովրդավարական քաղաքական կառույցները: Կառավարող ուժերը պարտավորություն ունեն կանոնավորապես Գլխավոր քարտուղարին տեղեկատվություն հաղորդելու իրենց կառավարման տակ գտնվող տարածքների տնտեսական, սոցիալական ու կրթական վիճակի մասին:

1946թ. ութ անդամ պետություն՝ Ավստրալիան, Բելգիան, Դանիան, Ֆրանսիան, Նիդեռլանդները, Նոր Զելանդիան, Մեծ Բրիտանիան ու Միացյալ Նահանգները, թվարկեցին իրենց կառավարման տակ գտնվող այն տարածքները, որոնք համարում էին ոչ պատրաստ ինքնակառավարմանը: Ընդհանուր հաշվով թվարկվել էին 72 տարածք, որոնցից ութը անկախություն ստացան մինչև 1959թ.:

Կառավարող երկրների կողմից այլևայլ պատճառներով տեղեկատվության տրամադրումը դադարեցվել էր 21 այլ տարածքների վերաբերյալ: Որոշ տարածքների դեպքում, ինչպիսիք են Պուերտո Ռիկոն, Գրենլանդիան, Ալյասկան և Հավայան կղզիները, Գլխավոր ասամբլեան տվել էր տեղեկատվության դադարեցման իր համաձայնությունը, մյուս դեպքերում որոշումը կառավարող երկրների կողմից կայացվել էր միանձնյա:

1963թ. ասամբլեան հաստատեց 64 տարածքից բաղկացած վերանայված ցուցակը, որոնց համար կիրառելի էր 1960թ. Ապագաղութացման մասին հռչակագիրը: Ցուցակում ընդգրկված էին մնացյալ երկու խնամակալության տակ գտնվող տարածքները (Նաուրուն և Խաղաղօվկիանոսյան կղզիների խնամառու տարածքը), այն ոչ ինքնակառավարվող տարածքները, որոնց համար տեղեկատվություն է փոխանցվում ըստ Կանոնադրության XI գլխի (հոդված 73ե), ներառյալ Իսպանիայի կողմից կառավարվող չորս տարածքները, Նամիբիան (այն ժամանակ՝ Հարավ-արևմտյան Աֆրիկա), և այն տարածքները, որոնց վերաբերյալ ոչ մի տեղեկություն չի հաղորդվել, բայց որոնք ասամբլեան ոչ ինքնակառավարվող է համարել, մասնավորապես պորտուգալական կառավարման տակ գտնվող տարածքները և Հարավային Ռոդեզիան (ներկայումս՝ Զիմբաբվե): Ցուցակն ընդարձակվել է 1965թ.՝ ընդգրկելով ֆրանսիական Սոմալի երկիրը (ներկայումս՝ Ջիբութի) և Օմանը: Կոմորյան կղզիները ընդգրկվել են 1972թ., իսկ Նոր Կալեդոնիան՝ 1986թ.:

1960-1990թթ. 53 տարածք է ինքնակառավարում ստացել: 2000թ. դրությամբ, մնացել են 17 ոչ ինքնակառավարվող տարածքներ: Ներկայիս կառավարող երկրներն են Ֆրանսիան, Նոր Զելանդիան, Մեծ Բրիտանիան և Ամերիկայի Միացյալ Նահանգները:

## Գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն շնորհելու մասին հռչակագիրը

Տարածքների ժողովուրդների՝ ինքնորոշման հասնելու ջանքերը և միջազգային հանրության ըմբռնումը, որ Կանոնադրության սկզբունքները չափազանց դանդաղ են կիրառվում, Գլխավոր ասամբլեային ստիպեցին 1960թ. դեկտեմբերի 14-ին ընդունելու *Գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն շնորհելու մասին հռչակագիրը (բանաձև 1514 (XV))*:

Հռչակագրում ասվում է, որ ժողովուրդներին օտար ենթակայության, գերիշխանության կամ շահագործման ենթարկելը խախտում է մարդու հիմնարար իրավունքները, հակասում Կանոնադրությանը և խոչընդոտում համաշխարհային խաղաղության ու համագործակցության առաջ մղելու համար: Ի լրումն՝ ասվում է, որ պետք է անհապաղ քայլեր ձեռնարկվեն խնամառու և ոչ ինքնակառավարվող կամ դեռևս անկախություն ձեռք չբերած բոլոր տարածքներում ողջ իշխանությունը դրանց ժողովուրդներին փոխանցելու ուղղությամբ՝ առանց պայմանների կամ վերապահումների, համաձայն իրենց կողմից ազատորեն արտահայտված կամքի և ցանկությունների, առանց ռասայի, ծագման

կամ մաշկի գույնի հատկանիշով որևէ խտրականության, բայց տալով նրանց վայելելու լիակատար անկախություն և ազատություն»:

## Տարածքներ, որոնց համար շարունակում է կիրառելի մնալ Գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն շնորհելու մասին հռչակագիրը (2000թ. դրությամբ)

| Տարածք | Կառավարող երկիր |
|---|---|
| **Աֆրիկա-** | |
| Արևմտյան Սահարա | Իսպանիա[1] |
| **Ասիա և Խաղաղ օվկիանոսյան տարածքներ** | |
| Ամերիկյան Սամոա | ԱՄՆ |
| Արևելյան Թիմոր[2] | |
| ԳուամԱՄՆ | |
| Նոր Կալեդոնիա[3] | Ֆրանսիա |
| Պիտկաիրն | Մեծ Բրիտանիա |
| Տոկելաու | Նոր Զելանդիա |
| **Ատլանտյան օվկիանոսի, Կարիբյան ավազանի և Միջերկրածովյան տարածքներ** | |
| Անգիլա | Մեծ Բրիտանիա |
| Բերմուդյան կղզիներ | Մեծ Բրիտանիա |
| Բրիտանական Վիրջինյան կղզիներ | Մեծ Բրիտանիա |
| Կայմանյան կղզիներ | Մեծ Բրիտանիա |
| Ֆոլկլենդյան կղզիներ /Մալվինյան/ | Մեծ Բրիտանիա |
| Ջիբրալթար | Մեծ Բրիտանիա |
| Մոնսերատ | Մեծ Բրիտանիա |
| Սբ. Հեղինե | Մեծ Բրիտանիա |
| Տյորկս և Կայկոս | Մեծ Բրիտանիա |
| ԱՄՆ-ի Վիրջինյան կղզիներ | ԱՄՆ |

1 1976թ. փետրվարի 26-ին Իսպանիան տեղեկացրեց Գլխավոր քարտուղարին, որ այդ օրվա դրությամբ դադարեցնում է իր ներկայությունը Սահարայի տարածքում և անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Իսպանիան այսուհետ զերծ է համարում իրեն այդ կառավարումից բխող որևէ միջազգային պատասխանատվությունից՝ կապված տարածքի համար ստեղծված ժամանակավոր կառավարման մարմնում իր մասնակցության դադարեցման հետ: 1990թ. Գլխավոր ասամբլեան վերահաստատեց, որ Արևմտյան Սահարայի հարցը ապագաղութացման հարց է, որը պետք է իր ավարտին հասցվի Արևմտյան Սահարայի ժողովրդի կողմից:

2 Նախկինում կառավարվելով Պորտուգալիայի կողմից և 1975-1999թթ. լինելով Ինդոնեզիայի վերահսկողության ներքո՝ Արևելյան Թիմորը գտնվում էր Արևելյան Թիմորում ՄԱԿ-ի անցումային կառավարման ներքո, որը հաստատվել էր Անվտանգության խորհրդի 1272 բանաձևով (1999թ.) և կրում էր ողջ պատասխանատվությունը տարածքի կառավարման համար: 2002թ. մայիսի 20-ին Արևելյան Թիմորը դարձավ անկախ պետություն, իսկ նույն թվականի սեպտեմբերի 27-ին՝ ՄԱԿ-ի 191-րդ անդամը:

3 1986թ. դեկտեմբերի 2-ին Գլխավոր ասամբլեան որոշեց, որ Նոր Կալեդոնիան ոչ ինքնակառավարվող տարածք է:

1960թ. դեկտեմբերի 15-ին Ասամբլեան հաստատեց 1541 (XV) բանաձևը՝ սահմանելով լիարժեք ինքնակառավարում առաջարկող օրինական քաղաքական կարգավիճակի երեք տարբերակ՝ ազատ միավորում անկախ պետության հետ, ինտեգրացում անկախ պետության հետ և անկախություն:

1961թ. Ասամբլեան հիմնեց 17 անդամից բաղկացած հատուկ հանձնաժողով, որը 1962թ. ընդարձակվեց՝ դառնալով 24 անդամից բաղկացած, որպեսզի ուսումնասիրի հռչակագրի կիրառումը և նկատառումներ ներկայացնի դրա իրականացման վերաբերյալ: Սովորաբար այն կոչում են **24-ի ապագաղութացման հատուկ կոմիտե**, լրիվ անունը՝ **Գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն շնորհելու մասին հռչակագրի իրականացման վիճակի հարցերով հատուկ կոմիտե**:

Կոմիտեն հավաքվում է ամեն տարի, լսում է տարածքների նշանակված ու ընտրված ներկայացուցիչներին և խնդրարկուներին, այցելու առաքելություններ է ուղարկում տարածքներ և կազմակերպում է սեմինարներ տարածքների քաղաքական, սոցիալական, տնտեսական ու կրթական իրավիճակի մասին:

Հռչակագրի ընդունմանը հաջորդած տարիներին մոտ 60 նախկին գաղութային տարածքներ՝ ավելի քան 80 մլն բնակչով, ինքնորոշվել են՝ անկախություն ձեռք բերելով և միացել ՄԱԿ-ին որպես ինքնիշխան անդամներ:

Քննարկելով ոչ ինքնակառավարվող տարածքների հարցերը՝ Գլխավոր ասամբլեան ամեն տարի վերահաստատում է, որ գաղութատիրության շարունակումը որևէ ձևով և տեսքով անհամատեղելի է Կանոնադրության, Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի և Ապագաղութացման հռչակագրի հետ:

Ասամբլեան կոչ է արել կառավարող երկրներին ձեռնարկել բոլոր անհրաժեշտ քայլերը, որպեսզի հնարավոր լինի ոչ ինքնակառավարվող տարածքների ժողովուրդների կողմից իրենց ինքնորոշման ու անկախության իրավունքի լիակին օգտագործումը: Ասամբլեան կոչ է արել կառավարող երկրներին ավարտին հասցնել տարածքներում մնացած ռազմակայանների դուրսբերումը և ապահովել, որ արտաքին տնտեսական կամ այլ կարգի շահերից բխող որևէ գործունեություն չխոչընդոտի հռչակագրի իրականացումը:

Այս ուղղությամբ Նոր Զելանդիան շարունակական համագործակցության մեջ է հանձնաժողովի հետ Տոկելաուի առնչությամբ, իսկ Պորտուգալիան՝ Արևելյան Թիմորի: Ֆրանսիան սկսեց համագործակցել հանձնաժողովի հետ 1999թ.՝ Նոր Կալեդոնիայի ապագայի վերաբերյալ պայմանագրի ստորագրումից հետո:

Երկու կառավարող երկիր վերջին տարիներին չի մասնակցել հանձնաժողովի աշխատանքներին: ԱՄՆ-ն պնդում է, որ գիտակցում է իր դերը՝ որպես կառավարող երկիր և կշարունակի Կանոնադրությունից բխող իր պարտականությունների կատարումը: Մեծ Բրիտանիան նշել է, որ իր կառավարման ներքո գտնվող տարածքների մեծ մասն անկախություն է ընտրել և փոքր թիվ են կազմում այնպիսիները, որոնք գերադասել են իր հետ միավորված մնալ:

1990թ. հռչակագրի երեսունամյակի տարեդարձը նշելու համար 1988թ. Ասամբլեան 1990-2000թթ. հռչակեց **Գաղութատիրության վերացման միջազգային տասնամյակ**: 2000թ. Գլխավոր ասամբլեան ընդունեց 2001-2010թթ. Գաղութա-

տիրության վերացման միջազգային երկրորդ տասնամյակ հռչակելու օգտին:

Որոշ տարածքների առնչությամբ, ինչպիսին է Արևմտյան Սահարան, ասամբլեան Գլխավոր քարտուղարին հատուկ առաջադրանք է տվել՝ Կանոնադրության ու հռչակագրի նպատակների համաձայն լուծելու ապագաղութացման գործընթացը:

## ՆԱՄԻԲԻԱ

1990թ. Միավորված ազգերի կազմակերպությունն օգնեց Նամիբիայի անկախության ձեռքբերմանը, մի դարի պատմություն, որը բացահայտում է խաղաղ անցում ապահովելու համար պահանջվող ջանքերի բազմությունը:

Նախկինում ճանաչված լինելով որպես Հարավ-արևմտյան Աֆրիկա՝ Նամիբիան աֆրիկյան տարածք էր, որը մի ժամանակ գտնվում էր Ազգերի լիգայի մանդատային համակարգի ներքո: 1946թ. Գլխավոր ասամբլեան խնդրեց Հարավաֆրիկյան Հանրապետությանը կառավարելու այս տարածքը խնամակալական համակարգի ներքո: Հարավաֆրիկյան Հանրապետությունը հրաժարվեց և 1949թ. տեղեկացրեց ՄԱԿ-ին, որ այլևս տեղեկություններ չի հաղորդի տարածքի մասին՝ պնդելով, որ մանդատն ավարտվել է Ազգերի լիգայի վերացումով:

1950թ. Արդարադատության միջազգային դատարանը որոշեց, որ Հարավաֆրիկյան Հանրապետությունը շարունակում է միջազգային պարտավորություններ ունենալ տարածքի հանդեպ, և ՄԱԿ-ը պետք է վերահսկի նրա կողմից իրականացվող ղեկավարումը. ՀԱՀ-ն մերժեց այս կարծիքը:

1966թ. Գլխավոր ասամբլեան՝ նշելով, որ ՀԱՀ-ն չի կատարել իր պարտականությունները, դադարեցրեց մանդատը և տարածքը դրեց ՄԱԿ-ի պատասխանատվության տակ: Տարածքը կառավարելու համար, մինչև նրա կողմից անկախության ձեռքբերումը, Ասամբլեան 1967թ. ստեղծեց ՄԱԿ-ի Հարավ-արևմտյան Աֆրիկայի հարցերով խորհուրդ: Այն 1968թ. անվանափոխվեց Նամիբիայի հարցերով խորհրդի, երբ ասամբլեան հռչակեց, որ այդ տարածքը, նրա ժողովրդի ցանկությամբ, կկոչվի Նամիբիա:

1969թ. Անվտանգության խորհուրդը Հարավաֆրիկյան Հանրապետության ներկայությունն անօրինական որակեց և նրան դուրս գալու կոչ արեց: Արդարադատության միջազգային դատարանը 1971թ. որոշեց, որ ՀԱՀ-ն պարտավոր դուրս գալ: Սակայն ՀԱՀ-ն մնաց՝ պարտադրելով ապարտեիդի օրենքները՝ շարունակելով շահագործել Նամիբիայի պաշարները:

1976թ. Անվտանգության խորհուրդը պահանջեց, որ Հարավաֆրիկյան Հանրապետությունն ընդունի տարածքում ՄԱԿ-ի վերահսկողությամբ ընտրությունների անցկացումը: Գլխավոր ասամբլեան նշեց, որ անկախության բանակցություններում պետք է մասնակցի Հարավ-արևմտյան Աֆրիկայի ժողովրդական կազմակերպությունը (ՀԱԱԺԿ), որը Նամիբիայի ժողովրդի միակ ներկայացուցիչն էր:

1978թ. Կանադան, Ֆրանսիան, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը, Մեծ Բրիտանիան և Ամերիկայի Միացյալ Նահանգները Գլխավոր քարտու-

դարյան խնդրի կարգավորման առաջարկ ներկայացրեցին: Այն նախատեսում էր ՄԱԿ-ի հսկողությամբ Սահմանադիր ժողովի ընտրությունների անցկացում: Խորհուրդը ընդունեց Գլխավոր քարտուղարի խորհրդատուների առաջարկն իրականացնելու վերաբերյալ, խնդրեց նրան նշանակել Նամիբիայի հարցերով հատուկ ներկայացուցիչ և հիմնեց ՄԱԿ-ի Անցումային հարցերով օժանդակության խումբը (ՄԱԱՕԽ):

Գլխավոր քարտուղարի և իր հատուկ ներկայացուցչի կողմից տարիներ շարունակ տարվող բանակցությունները, ինչպես նաև Ամերիկայի Միացյալ Նահանգների միջնորդությունը հանգեցրեցին Հարավային Աֆրիկայում խաղաղության հասնելու 1988թ. համաձայնագրերին, որով ՀԱՀ-ն համաձայնեց համագործակցել Գլխավոր քարտուղարի հետ ընտրությունների միջոցով Նամիբիայի անկախությանը հասնելու հարցում:

Նամիբիայի անկախությանը տանող գործընթացը սկսվեց 1989թ. ապրիլին: ՄԱԱՕԽ-ի քաղաքացիական անձնակազմը ղեկավարեց և հսկեց ողջ ընտրական գործընթացը, որն անցկացնում էին Նամիբիայի իշխանությունները: ՄԱԱՕԽ-ի զինվորական անձնակազմը վերահսկում էր հրադադարը ՀԱԱԺԿ-ի ու Հարավաֆրիկյան Հանրապետության միջև և ողջ զինված ուժերի զորացրումը: Նրա ոստիկանները ապահովեցին ամբողջ ընտրական գործընթացը և վերահսկեցին տեղական ոստիկանությանը:

Սահմանադիր ժողովի՝ նոյեմբերին անցկացված ընտրություններում հաղթեց ՀԱԱԺԿ-ն: Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչը՝ Մարտի Ահտիսաարին, ընտրությունները հռչակեց «ազատ և արդար»:

Ընտրություններից հետո Հարավաֆրիկյան Հանրապետությունը դուրս բերեց իր մնացյալ զորքերը: Սահմանադիր ժողովը մշակեց նոր սահմանադրություն, որն ընդունվեց 1990թ. փետրվարին, և հինգ տարով նախագահ ընտրեց ՀԱԱԺԿ-ի առաջնորդ Սեմ Նուջոմային: Մարտին Նամիբիան դարձավ անկախ, և Գլխավոր քարտուղարը ղեկավարեց Նամիբիայի առաջին նախագահի երդման արարողությունը: Ապրիլին երկիրը միացավ ՄԱԿ-ին:

## Արևմտյան Սահարա

1963թ.-ի վեր ՄԱԿ-ը գործ ունի Աֆրիկայի հյուսիս-արևմտյան ափին գտնվող Մարոկկոյին, Մավրիտանիային ու Ալժիրին սահմանակից Արևմտյան Սահարայի տարածքի շուրջ շարունակվող վեճի հետ:

Արևմտյան Սահարան իսպանական գաղութ է դարձել 1884թ.: 1963թ. թե՛ Մարոկկոն, թե՛ Մավրիտանիան հայտ ներկայացրեցին նրա հանդեպ: Արդարադատության միջազգային դատարանը, Գլխավոր ասամբլեայի կողմից 1975թ. խնդրանքին ի պատասխան տրված կարծիքում մերժեց թե՛ Մարոկկոյի, թե՛ Մավրիտանիայի տարածքային ինքնիշխանության հայտերը:

ՄԱԿ-ն Արևմտյան Սահարայի հարցի կարգավորման շուրջ ջանքեր է գործադրում 1976թ. այնտեղից Իսպանիայի դուրս գալուց և դրա հետևանքով Մարոկկոյի, որը «վերամիավորել է» տարածքը, և Ալժիրի աջակցությունը վայելող Սագիա էլ-Համրայի և Ռիո դե Օրոյի ազատագրման ժողովրդական ճակատի

(ՊՈԼԻՍԱՐԻՕ ճակատ) միջև ծագած պատերազմից ի վեր:

Աֆրիկյան միասնության կազմակերպությունը (ԱՄԿ) 1979թ. կոչ արեց հանրաքվե անցկացնել՝ թույլ տալով տարածքի ժողովրդին կիրառելու իր ինքնորոշման իրավունքը: Մարոկկոն 1981թ. համաձայնեց զինադադարին և միջազգայնորեն վերահսկվող հանրաքվեին՝ միևնույն ժամանակ հստակ դարձնելով, որ չի բանակցի ՊՈԼԻՍԱՐԻՕ-ի հետ: Մինչ 1982թ. ԱՄԿ-ի 26 անդամ երկրներ ճանաչել էին 1976թ. ՊՈԼԻՍԱՐԻՕ-ի կողմից հռչակած Սահարայի Արաբական Ժողովրդավարական Հանրապետությունը (ՍԱԺՀ): Երբ ՊՈԼԻՍԱՐԻՕ-ն մասնակցեց 1984թ. ԱՄԿ-ի գագաթաժողովին, Մարոկկոն դուրս եկավ ԱՄԿ-ից:

Գլխավոր ասամբլեան 1983-1984թթ. վերահաստատեց, որ տարածքի ժողովուրդը դեռևս պետք է իրականացնի ինքնորոշման ու անկախության իր իրավունքը, և կողմերը պետք է բանակցեն զինադադարի հասնելու համար, որը հանրաքվե անցկացնելու հնարավորություն կտար:

Գլխավոր քարտուղարի և ԱՄԿ-ի նախագահի համատեղ բարի ծառայությունների առաքելությունը հանգեցրեց նրանց 1988թ. կարգավորման առաջարկությանը, որը նախատեսում էր զինադադարի հաստատում և հանրաքվեի անցկացում անկախության և Մարոկկոյի հետ միավորվելու միջև ընտրության կատարելու համար, մի առաջարկ, որն ընդունեցին երկու կողմերը:

Անվտանգության խորհուրդը 1990թ. ընդունեց Գլխավոր քարտուղարի այն առաջարկը, որ անցումային շրջանում Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչը, որին կօժանդակի **Արևմտյան Սահարայում հանրաքվեի հարցերով ՄԱԿ-ի առաքելությունը (ԱՍՀՄԱԱ)**, պատասխանատու լինի հանրաքվեին առնչվող բոլոր հարցերի համար: Բոլոր 18 և ավելի տարիքի արևմտյան սահարացիները, որոնք մասնակցել էին 1974թ. Իսպանիայի անցկացրած մարդահամարում, իրավունք կունենային քվեարկել՝ տարածքում թե նրանցից դուրս: Ինքնությունը հաստատող հանձնաժողովը պետք է թարմացներ մարդահամարը և հաստատեր քվեարկողների ինքնությունը: Տարածքից դուրս ապրող փախստականները պետք է հաստատվեին ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակի կողմից:

1991թ. Անվտանգության խորհուրդը ստեղծեց ԱՍՀՄԱԱ-ն, և Գլխավոր քարտուղարը կոչ արեց սեպտեմբերի 6-ից զինադադար հաստատել: Հաշվի առնելով չարունակվող հատուկենտ բախումները՝ խորհուրդը ԱՍՀՄԱԱ-ի 228 զինվորական դիտորդներ ուղարկեց պատերազմական գործողությունների ավարտը հաստատելու համար:

Մինչ երկու կողմն էլ վերահաստատեցին իրենց վստահությունը ՄԱԿ-ին և իրենց համաձայնությունը ծրագրի հանդեպ, նրանց տեսակետները, հատկապես ընտրելու իրավունք ունեցողների չափանիշների հարցում, շարունակում էին տարբերվել:

Գլխավոր քարտուղարն այդպիսի չափանիշներ էր առաջարկել 1991թ. Անվտանգության խորհրդին ներկայացրած զեկույցում: Մարոկկոն ընդունեց դրանք, թեև համարեց չափազանց սահմանափակ: ՊՈԼԻՍԱՐԻՕ-ն նշեց, որ ինքը ի սկզբանե համաձայն էր, որ ընտրողների համար միակ հիմքը կարող է լինել 1974թ. մարդահամարում հաշվառված սահարացիների ցուցակը և որ չա

փաստերն անհարկի կընդլայնեն մարդահամարում ընդգրկվածների թիվը՝ հնարավորություն տալով ընդգրկել մարդկանց, որոնք այդ տարածքում ապրող սահարացի չեն եղել:

1994թ. Անվտանգության խորհուրդը հանձնարարեց Ինքնության հաստատող հանձնաժողովին Գլխավոր քարտուղարի կողմից առաջարկված և երկու կողմերի հավանությանն արժանացած փոխզիջումային տարբերակի հիման վրա սկսել ինքնության հաստատման ու ընտրողների գրանցման գործընթացը: 1999թ. հանձնաժողովը հրապարակեց մոտ 85 հազար ընտրելու իրավունք ունեցողների նախնական ցուցակ. նրանք, ում ընտրելու իրավունք չէր տրվել, կարող էին բողոքարկել որոշումը: Բայց տարաձայնությունները շարունակվում էին, հատկապես Մարոկկոյում ապրող սահարացիների ընտրելու իրավունքի առնչությամբ:

Չնայած Գլխավոր քարտուղարի, նրա հատուկ ներկայացուցչի և իր անձնական պատվիրակի՝ ԱՄՆ-ի նախկին պետքարտուղար Ջեյմս Ա. Բեյքեր III-ի միջնորդական ջանքերին, տարաձայնությունները շարունակվել են: Առկախ են մնացել այնպիսի հարցեր, ինչպիսիք են փախստականների վերադարձը, ընտրողների ինքնության հաստատման ավարտին հասցնելը, ընտրողների երկրորդ նախնական ցուցակ հրապարակելը և բողոքարկման գործընթացին առնչվող հարցերը. ներառված է երեք ցեղախումբ, որոնց Մարոկկոն համարում է սահարացիներ, իսկ ՊՈԼԻՍԱՐԻՕ-ն՝ մարոկկացիներ:

## Արևելյան Թիմոր

ՄԱԿ-ը մի խոշոր գործողություն է իրականացրել՝ Արևելյան Թիմորի դեպի անկախություն անցումային շրջանի վերահսկողությունը, այն բանից հետո, երբ 1999թ. ՄԱԿ-ի կողմից անցկացված ժողովրդական խորհրդակցության ընթացքում Արևելյան Թիմորի ժողովուրդը քվեարկեց հօգուտ այդպիսի անցման:

Թիմոր կղզին գտնվում է Ավստրալիայի հյուսիսում, Ինդոնեզիայի Հանրապետությունը կազմող կղզիների շղթայի հարավկենտրոնական մասում: Կղզու արևմտյան մասը հոլանդական գաղութ է եղել և դարձել է Ինդոնեզիայի մասը, երբ վերջինս անկախություն է ստացել: Արևելյան Թիմորը եղել է պորտուգալական գաղութ:

Գլխավոր ասամբլեան 1960թ. Արևելյան Թիմորն ընդգրկեց ոչ ինքնակառավարվող տարածքների ցուցակի մեջ: 1974թ. ճանաչելով իր գաղութի ինքնորոշման ու անկախության իրավունքը՝ Պորտուգալիան փորձեց ստեղծել ժամանակավոր կառավարություն և ժողովրդային ժողով, որոնք կորոշեին Արևելյան Թիմորի կարգավիճակը:

Սակայն 1975թ. քաղաքացիական պատերազմ բռնկվեց նոր ձևավորված քաղաքական կուսակցությունների միջև: Պորտուգալիան հեռացավ՝ նշելով, որ ի վիճակի չէ վերահսկել դրությունը: Արևելյան Թիմորի մի մասը՝ որպես առանձին երկիր, անկախություն հռչակեց, մինչդեռ մյուսը հռչակեց անկախություն և միավորում Ինդոնեզիայի հետ: Դեկտեմբերին ինդոնեզական զորքերը մտան Արևելյան Թիմոր, և «ժամանակավոր կառավարություն» ստեղծվեց: Պորտուգալիան

հարաբերությունները խզեց Ինդոնեզիայի հետ և խնդիրը բարձրացրեց Անվտանգության խորհրդի առջև:

Խորհուրդն ու Գլխավոր ասամբլեան կոչ արեցին Ինդոնեզիային դուրս բերել իր զորքերը և բոլոր պետություններին՝ հարգել Արևելյան Թիմորի տարածքային ամբողջականությունը, ինչպես նաև, ըստ Ապագաղութացման մասին հռչակագրի, նրա ժողովրդի ինքնորոշման իրավունքը:

1976թ. «ժամանակավոր կառավարությունը» Ազգային ժողովի ընտրություններ անցկացրեց, որը գումարվելուն պես Ինդոնեզիային միանալու կոչ արեց: Ինդոնեզիան օրենք ընդունեց տարածքի միացման մասին, և անկախության կողմնակիցների շարժումը զինված դիմադրության անցավ և սկսեց ընդդիմության միջազգային արշավը: Պորտուգալիան պնդում էր, որ Արևելյան Թիմորի բնակչությունը չի իրականացրել ինքնորոշման իր իրավունքը, Ինդոնեզիան պնդում էր, որ ապագաղութացման գործընթացն Արևելյան Թիմորում ավարտված է, և նրա ժողովուրդն ընտրել է ինքնակառավարումը Ինդոնեզիային միանալու միջոցով: ՄԱԿ-ը չճանաչեց ո՛չ ժողովի օրինականությունը, ո՛չ էլ Ինդոնեզիայի կողմից բռնակցումը, և շարունակեց Պորտուգալիային համարել օրինական կառավարող ուժ:

Գլխավոր ասամբլեայի խնդրանքով Գլխավոր քարտուղարը 1983թ. արդարացի ու համընդհանուր կարգավորման հասնելու նպատակով բանակցություններ սկսեց Ինդոնեզիայի ու Պորտուգալիայի հետ: Նրա «բարի ծառայությունները» և 1997թ. նշանակված իր անձնական ներկայացուցչի ջանքերի արդյունքում 1999թ. մայիսին ձեռք բերվեցին համաձայնություններ, որոնք ճանապարհ հարթեցին ժողովրդային խորհրդակցությունների համար: Դա հնարավորություն էր տալիս Արևելյան Թիմորի ժողովրդին ընտրություն կատարելու Ինդոնեզիայի կազմում ինքնավարության կարգավիճակի և ՄԱԿ-ի հովանու ներքո անկախության անցման միջև:

Այս համաձայնությունների հիման վրա կազմավորվեց **ՄԱԿ-ի առաքելությունը Արևելյան Թիմորում (ՄԱԱԹ)**, որն իրականացրեց ընտրողների գրանցումը և օգոստոսի 30-ի քվեարկությունը: Արդյունքում գրանցված 450 հազար քվեարկողների 78,5 տոկոսը մերժեց առաջարկված ինքնավարությունն Ինդոնեզիայի կազմում: Երբ հրապարակվեցին արդյունքները, անկախության դեմ հանդես եկող զինյալները սիստեմատիկ բռնությունների ու ավերածությունների արշավ սկսեցին՝ սպանելով շատերին և ստիպելով Արևելյան Թիմորի ավելի քան 200 հազար բնակչի լքել իրենց տները ու փախչել հիմնականում Արևմտյան Թիմոր: ՄԱԿ-ը ստիպված էր էվակուացնել իր անձնակազմի մեծ մասին, բայց 86 միջազգային աշխատողներ մոտ 1000 այնտեղ ապաստանած արևելյան թիմորցիների հետ մնացին մայրաքաղաք Դիլիի ՄԱԿ-ի կենտրոնական գրասենյակում:

Լարված բանակցություններից հետո, որոնց նպաստում էր նաև Անվտանգության խորհրդի կողմից Ջակարտա ու Դիլի ուղարկված բարձրաստիճան առաքելությունը, Ինդոնեզիան համաձայնեց խաղաղության ու անվտանգության վերահաստատման նպատակով ՄԱԿ-ի կողմից արտոնված միջազգային ուժերի տեղակայմանը: Գործելով Կանոնադրության VII գլխի դրույթներով՝ Անվտանգու

թյան խորհուրդը 1999թ. սեպտեմբերին լիազորեց Արևելյան Թիմորում միջազգային ուժերի տեղակայումը (ԱԹՄՈՒ), որն օգնեց վերականգնել կարգուկանոնը:

Հոկտեմբերին խորհուրդը մեծ գործողություն սկսեց՝ **ՄԱԿ-ի անցումային վարչակազմը Արևելյան Թիմորում (ՄԱԱՎԱԹ)**, որը երկրի անկախության անցման շրջանում օժտված է բոլոր գործադիր ու օրենսդիր իրավասություններով: Սերջիո Վիերա դե Մելոն նշանակվեց ՄԱԱՎԱԹ-ի ղեկավար և Արևելյան Թիմորում Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ: 2000թ. փետրվարին ԱԹՄՈՒ-ից խաղաղության ու անվտանգության պահպանման պատասխանատվությունն անցավ ՄԱԱՎԱԹ-ի ռազմական ստորաբաժանմանը:

Կառավարման մանդատն ընդգրկում էր անվտանգության ապահովումը և օրենքի ու կարգի պահպանումը, իսկ նրան օժանդակում էր ռազմական ստորաբաժանումը՝ բաղկացած 8800 զինվորներից և 1600 քաղաքացիական ոստիկաններից: Համաձայն իր մանդատի, ՄԱԱՎԱԹ-ն ամբողջ տարածքում քաղաքացիական կառավարում էր հաստատում և օգնում էր զարգացնել սոցիալական ծառայությունները, իրականացնել վերականգնողական աշխատանքները և զարգացնել Արևելյան Թիմորի պետականության կերտելու կարողությունները:

# ՍԱՄ ԵՐԲՈՒՅԶ

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



# ՄԱԿ-ի անդամ երկրները

## (Առ 2000թ. դեկտեմբերը)

| Անդամ պետությունը | Անդամության տարեթիվը | Վճարման աստիճանը, ըստ 2000թ. (տոկոսներով) | Բնակչությունը (մոտավոր հաշվարկված) |
|---|---|---|---|
| Ադրբեջան | 2 մարտի 1992 | 0,011 | 7 953 000 |
| Ալբանիա | 14 դեկտեմբերի 1955 | 0,003 | 3 791 000 |
| Ալժիր | 8 հոկտեմբերի 1962 | 0,086 | 29 800 000 |
| Ամերիկայի Միացյալ Նահանգներ | 24 հոկտեմբերի 1945 | 25,000 | 270 561 000 |
| Անգոլա | 1 դեկտեմբերի 1976 | 0,010 | 12 092 000 |
| Անդորրա | 28 հուլիսի 1993 | 0,004 | 72 000 |
| Անտիգուա և Բարբուդա | 11 նոյեմբերի 1981 | 0,002 | 67 000 |
| Ավստրալիա | 1 նոյեմբերի 1945 | 1,483 | 18 750 000 |
| Ավստրիա | 14 դեկտեմբերի 1955 | 0,942 | 8 077 000 |
| Արաբական Միացյալ Էմիրություններ | 9 դեկտեմբերի 1971 | 0,178 | 2 724 000 |
| Արգենտինա | 24 հոկտեմբերի 1945 | 1,103 | 36 125 000 |
| Աֆղանստան | 19 նոյեմբերի 1946 | 0,003 | 18 797 000 |
| Բահամյան կղզիներ | 18 սեպտեմբերի 1973 | 0,015 | 298 000 |
| Բահրեյն | 21 սեպտեմբերի 1971 | 0,017 | 642 000 |
| Բանգլադեշ | 17 սեպտեմբերի 1974 | 0,010 | 124 774 000 |
| Բարբադոս | 9 դեկտեմբերի 1966 | 0,008 | 266 000 |
| Բելառուս[1] | 24 հոկտեմբերի 1945 | 0,057 | 10 190 000 |
| Բելգիա | 27 դեկտեմբերի 1945 | 1,104 | 10 213 000 |
| Բելիզ | 25 սեպտեմբերի 1981 | 0,001 | 238 000 |
| Բենին | 20 սեպտեմբերի 1960 | 0,002 | 6 044 000 |
| Բոլիվիա | 14 նոյեմբերի 1945 | 0,007 | 7 949 000 |
| Բոսնիա և Հերցեգովինա[2] | 22 մայիսի 1992 | 0,005 | 4 211 000 |
| Բոտսվանա | 17 հոկտեմբերի 1966 | 0,010 | 1 571 000 |
| Բրազիլիա | 24 հոկտեմբերի 1945 | 1,471 | 161 790 000 |
| Բրունեյ Դարուսալամ | 21 սեպտեմբերի 1984 | 0,020 | 315 000 |
| Բութան | 21 սեպտեմբերի 1971 | 0,001 | 2 004 000 |
| Բուլղարիա | 14 դեկտեմբերի 1995 | 0,011 | 8 256 000 |
| Բուրկինա Ֆասո | 20 սեպտեմբերի 1960 | 0,002 | 10 682 000 |
| Բուրունդի | 18 սեպտեմբերի 1962 | 0,001 | 6 300 000 |
| Գաբոն | 20 սեպտեմբերի 1960 | 0,015 | 1 188 000 |
| Գամբիա | 21 սեպտեմբերի 1965 | 0,001 | 1 229 000 |
| Գայանա | 20 սեպտեմբերի 1966 | 0,001 | 850 000 |
| Գանա | 8 մարտի 1957 | 0,007 | 19 162 000 |

| Անդամ պետությունը | Անդամության տարեթիվը | Վճարման սանդղակը, ըստ 2000թ. (տոկոսներով) | Բնակչությունը (մոտավոր հաշվարկված) |
|---|---|---|---|
| Գերմանիա | 18 սեպտեմբերի 1973 | 9,857 | 82 024 000 |
| Գվատեմալա | 21 նոյեմբերի 1945 | 0,018 | 10 799 000 |
| Գվինեա | 12 դեկտեմբերի 1958 | 0,003 | 7 337 000 |
| Գվինեա-Բիսաու | 17 սեպտեմբերի 1974 | 0,001 | 1 161 000 |
| Գրենադա | 17 սեպտեմբերի 1974 | 0,001 | 93 000 |
| Դանիա | 24 հոկտեմբերի 1945 | 0,692 | 5 301 000 |
| Դոմինիկա | 18 սեպտեմբերի 1978 | 0,001 | 71 000 |
| Դոմինիկյան Հանրապետություն | 24 հոկտեմբերի 1945 | 0,015 | 9 327 000 |
| Եգիպտոս[3] | 24 հոկտեմբերի 1945 | 0,065 | 65 978 000 |
| Եթովպիա | 13 նոյեմբերի 1945 | 0,006 | 59 882 000 |
| Եմեն | 30 սեպտեմբերի 1947 | 0,010 | 17 071 000 |
| Զամբիա | 1 դեկտեմբերի 1964 | 0,002 | 8 781 000 |
| Զիմբաբվե | 25 օգոստոսի 1980 | 0,009 | 12 684 000 |
| Էկվադոր | 21 դեկտեմբերի 1945 | 0,020 | 12 174 000 |
| Էստոնիա | 17 սեպտեմբերի 1991 | 0,012 | 1 429 000 |
| Էրիթրեա | 28 մայիսի 1993 | 0,001 | 3 577 000 |
| Թաիլանդ | 16 դեկտեմբերի 1946 | 0,170 | 61 201 000 |
| Թունիս | 12 նոյեմբերի 1956 | 0,028 | 9 332 000 |
| Թուրքիա | 24 հոկտեմբերի 1945 | 0,440 | 63 451 000 |
| Թուրքմենստան | 2 մարտի 1992 | 0,006 | 4 858 000 |
| Ինդոնեզիա[4] | 28 սեպտեմբերի 1950 | 0,188 | 204 392 000 |
| Իռլանդիա | 14 դեկտեմբերի 1955 | 0,224 | 3 705 000 |
| Իսլանդիա | 19 նոյեմբերի 1946 | 0,032 | 273 000 |
| Իսպանիա | 14 դեկտեմբերի 1955 | 2,591 | 39 371 000 |
| Իսրայել | 11 մայիսի 1949 | 0,350 | 5 963 000 |
| Իտալիա | 14 դեկտեմբերի 1955 | 5,437 | 57 588 000 |
| Իրանի Իսլամական Հանրապետություն | 24 հոկտեմբերի 1945 | 0,161 | 61 626 000 |
| Իրաք | 21 դեկտեմբերի 1945 | 0,032 | 21 800 000 |
| Լաոսի Ժողովրդադեմոկրատական Հանրապետություն | 14 դեկտեմբերի 1955 | 0,001 | 5 163 000 |
| Լատվիա | 17 սեպտեմբերի 1991 | 0,017 | 2 449 000 |
| Լեհաստան | 24 հոկտեմբերի 1945 | 0,196 | 38 671 000 |
| Լեսոտո | 17 հոկտեմբերի 1966 | 0,02 | 2 062 000 |
| Լիբանան | 24 հոկտեմբերի 1945 | 0,016 | 3 191 000 |
| Լիբերիա | 2 նոյեմբերի 1945 | 0,002 | 2 062 000 |
| Լիբիայի Արաբական | | | |

| Անդամ պետությունը | Անդամության ամսաթիվը | Վճարման սանդղակը, ըստ 2000թ. (տոկոսներով) | Բնակչությունը (մոտավոր հաշվարկված) |
|---|---|---|---|
| Ջամահիրիա | 14 դեկտեմբերի 1955 | 0,124 | 5 339 000 |
| Լիխտենշտեյն | 18 սեպտեմբերի 1990 | 0,006 | 32 000 |
| Լիտվա | 17 սեպտեմբերի 1991 | 0,015 | 3 072 000 |
| Լյուքսեմբուրգ | 24 հոկտեմբերի 1945 | 0,068 | 426 000 |
| Խորվաթիա[5] | 22 մայիսի 1992 | 0,030 | 4 572 000 |
| Կամբոջա | 14 դեկտեմբերի 1955 | 0,001 | 11 426 000 |
| Կամերուն | 20 սեպտեմբերի 1960 | 0,013 | 14 305 000 |
| Կանադա | 9 նոյեմբերի 1945 | 2,732 | 30 301 000 |
| Կաբո Վերդե | 16 սեպտեմբերի 1975 | 0,001 | 417 000 |
| Կատար | 21 սեպտեմբերի 1971 | 0,033 | 543 000 |
| Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն | 20 սեպտեմբերի 1960 | 0,001 | 3 485 000 |
| Կիպրոս | 20 սեպտեմբերի 1960 | 0,034 | 749 000 |
| Կիրիբաթի | 14 սեպտեմբերի 1999 | 0,001 | 81 000 |
| Կոլումբիա | 5 նոյեմբերի 1945 | 0,109 | 40 826 000 |
| Կոմորոս | 12 նոյեմբերի 1975 | 0,001 | 658 000 |
| Կոնգո | 20 սեպտեմբերի 1960 | 0,003 | 2 785 000 |
| Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետություն[6] | 20 սեպտեմբերի 1960 | 0,007 | 46 812 000 |
| Կոստա Ռիկա | 2 նոյեմբերի 1945 | 0,016 | 3 340 000 |
| Կոտ-դ' Իվուար | 20 սեպտեմբերի 1960 | 0,009 | 14 292 000 |
| Կորեայի Հանրապետություն | 17 սեպտեմբերի 1991 | 1,006 | 46 429 000 |
| Կորեայի Ժողովրդադեմոկրատական Հանրապետություն | 17 սեպտեմբերի 1991 | 0,015 | 23 348 000 |
| Կուբա | 24 հոկտեմբերի 1945 | 0,024 | 11 116 000 |
| Հայաստան | 2 մարտի 1992 | 0,006 | 3 536 000 |
| Հայիթի | 24 հոկտեմբերի 1945 | 0,002 | 7 647 000 |
| Հասարակածային Գվինեա | 12 նոյեմբերի 1968 | 0,001 | 431 000 |
| Հարավային Աֆրիկա | 7 նոյեմբերի 1945 | 0,366 | 39 357 000 |
| Հարավսլավիա[7] | 1 նոյեմբերի 2000 | 0,026 | 10 615 000 |
| Հնդկաստան | 30 հոկտեմբերի 1945 | 0,299 | 970 933 000 |
| Հոնդուրաս | 17 դեկտեմբերի 1945 | 0,003 | 6 179 000 |
| Հորդանան | 14 դեկտեմբերի 1955 | 0,006 | 6 304 000 |
| Հունաստան | 25 հոկտեմբերի 1945 | 0,351 | 10 515 000 |
| Հունգարիա | 14 դեկտեմբերի 1955 | 0,120 | 10 113 000 |
| Ղազախստան | 2 մարտի 1992 | 0,048 | 15 049 000 |
| Ղրղզստան | 2 մարտի 1992 | 0,006 | 4 699 000 |

| Անդամ պետությունը | Անդամության ամսաթիվը | Վճարման տոկոսը, ըստ 2000թ. (տոկոսներով) | Բնակչությունը (մոտավոր հաշվարկված) |
|---|---|---|---|
| Ճապոնիա | 18 դեկտեմբերի 1956 | 20,573 | 126 410 000 |
| Մադագասկար | 20 սեպտեմբերի 1960 | 0,003 | 15 057 000 |
| Մալայզիա* | 17 սեպտեմբերի 1957 | 0,183 | 22 179 000 |
| Մալավի | 1 դեկտեմբերի 1964 | 0,002 | 10 346 000 |
| Մալդիվներ | 21 սեպտեմբերի 1965 | 0,001 | 271 000 |
| Մալթա | 1 դեկտեմբերի 1964 | 0,014 | 377 000 |
| Մալի | 28 սեպտեմբերի 1960 | 0,002 | 10 694 000 |
| Մակեդոնիայի Նախկին Հարավսլավիայի Հանրապետություն* | 8 ապրիլի 1993 | 0,004 | 1 999 000 |
| Մավրիկոս | 24 ապրիլի 1968 | 0,009 | 1 159 000 |
| Մավրիտանիա | 7 հոկտեմբերի 1961 | 0,001 | 2 529 000 |
| Մարշալյան կղզիներ | 17 սեպտեմբերի 1991 | 0,001 | 63 000 |
| Մարոկկո | 12 նոյեմբերի 1956 | 0,041 | 27 775 000 |
| Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն | 24 հոկտեմբերի 1945 | 5,092 | 58 649 000 |
| Մեքսիկա | 7 նոյեմբերի 1945 | 0,995 | 95 831 000 |
| Միկրոնեզիայի Ֆեդերատիվ Նահանգներ | 17 սեպտեմբերի 1991 | 0,004 | 114 000 |
| Մյանմար | 19 ապրիլի 1948 | 0,008 | 44 497 000 |
| Մոզամբիկ | 16 սեպտեմբերի 1975 | 0,001 | 16 916 000 |
| Մոլդովայի Հանրապետություն | 2 մարտի 1992 | 0,010 | 3 652 000 |
| Մոնակո | 28 մայիսի 1993 | 0,004 | 33 000 |
| Մոնղոլիա | 27 հոկտեմբերի 1961 | 0,002 | 2 403 000 |
| Ճամայկա | 18 սեպտեմբերի 1962 | 0,006 | 2 576 000 |
| Նամիբիա | 23 ապրիլի 1990 | 0,007 | 1 666 000 |
| Նաուրու | 14 սեպտեմբերի 1999 | 0,001 | 11 000 |
| Նեպալ | 14 դեկտեմբերի 1955 | 0,004 | 21 843 000 |
| Նիգեր | 20 սեպտեմբերի 1960 | 0,002 | 10 078 000 |
| Նիգերիա | 7 հոկտեմբերի 1960 | 0,032 | 106 409 000 |
| Նիկարագուա | 24 հոկտեմբերի 1945 | 0,001 | 4 807 000 |
| Նիդեռլանդներ | 10 դեկտեմբերի 1945 | 1,632 | 15 707 000 |
| Նոր Զելանդիա | 24 հոկտեմբերի 1945 | 0,221 | 3 790 000 |
| Նորվեգիա | 27 նոյեմբերի 1945 | 0,610 | 4 431 000 |
| Շվեդիա | 19 նոյեմբերի 1946 | 1,079 | 8 854 000 |
| Շրի Լանկա | 14 դեկտեմբերի 1955 | 0,012 | 18 774 000 |
| Չադ | 20 սեպտեմբերի 1960 | 0,001 | 7 270 000 |
| Չեխիայի Հանրապետություն | 19 հունվարի 1993 | 0,107 | 10 294 000 |
| Չիլի | 24 հոկտեմբերի 1945 | 0,136 | 14 821 000 |

| Անդամ պետությունը | Անդամության ամսաթիվը | Վճարման սանդղակը, ըստ 2000թ. (տոկոսներով) | Բնակչությունը (մոտավոր հաշվարկված) |
|---|---|---|---|
| Չինաստան | 24 հոկտեմբերի 1945 | 0,995 | 1 255 698 000 |
| Պալաու | 15 դեկտեմբերի 1994 | 0,001 | 19 000 |
| Պակիստան | 30 սեպտեմբերի 1947 | 0,059 | 148 166 000 |
| Պանամա | 13 նոյեմբերի 1945 | 0,013 | 2 763 000 |
| Պապուա Նոր Գվինեա | 10 հոկտեմբերի 1975 | 0,007 | 4 600 000 |
| Պարագվայ | 24 հոկտեմբերի 1945 | 0,014 | 5 218 000 |
| Պերու | 31 հոկտեմբերի 1945 | 0,099 | 24 800 000 |
| Պորտուգալիա | 14 դեկտեմբերի 1955 | 0,431 | 9 957 000 |
| Ջիբութի | 20 սեպտեմբերի 1977 | 0,001 | 623 000 |
| Ռուանդա | 18 սեպտեմբերի 1962 | 0,001 | 6 604 000 |
| Ռումինիա | 14 դեկտեմբերի 1955 | 0,056 | 22 502 000 |
| Ռուսաստանի Դաշնություն[16] | 24 հոկտեմբերի 1945 | 1,077 | 147 739 000 |
| Սալվադոր | 24 հոկտեմբերի 1945 | 0,012 | 6 031 000 |
| Սամոա | 15 դեկտեմբերի 1976 | 0,001 | 112 000 |
| Սան Մարինո | 2 մարտի 1992 | 0,002 | 26 000 |
| Սան Տոմե և Պրինսիպ | 16 սեպտեմբերի 1975 | 0,001 | 141 000 |
| Սանտա Լուչիա | 18 սեպտեմբերի 1979 | 0,001 | 151 000 |
| Սաուդյան Արաբիա | 24 հոկտեմբերի 1945 | 0,562 | 20 181 000 |
| Սեյշելյան կղզիներ | 21 սեպտեմբերի 1976 | 0,002 | 78 000 |
| Սենեգալ | 28 սեպտեմբերի 1960 | 0,006 | 9 037 000 |
| Սենտ Քիթս և Նևիս | 23 սեպտեմբերի 1983 | 0,001 | 39 000 |
| Սենտ Վինսենթ և Գրենադիններ | 16 սեպտեմբերի 1980 | 0,001 | 112 000 |
| Սիեռա Լեոնե | 27 սեպտեմբերի 1961 | 0,001 | 4 568 000 |
| Սինգապուր | 21 սեպտեմբերի 1965 | 0,179 | 3 865 000 |
| Սիրիայի Արաբական Հանրապետություն[18] | 24 հոկտեմբերի 1945 | 0,064 | 15 597 000 |
| Սլովակիա | 19 հունվարի 1993 | 0,035 | 5 390 000 |
| Սլովենիա[17] | 22 մայիսի 1992 | 0,061 | 1 983 000 |
| Սողոմոնյան կղզիներ | 19 սեպտեմբերի 1978 | 0,001 | 417 000 |
| Սոմալի | 20 սեպտեմբերի 1960 | 0,001 | 9 237 000 |
| Սվազիլենդ | 24 սեպտեմբերի 1968 | 0,002 | 952 000 |
| Սուդան | 12 նոյեմբերի 1956 | 0,007 | 28 292 000 |
| Սուրինամ | 4 դեկտեմբերի 1975 | 0,004 | 414 000 |
| Վանուատու | 15 սեպտեմբերի 1981 | 0,001 | 182 000 |
| Վենեսուելա | 15 նոյեմբերի 1945 | 0,160 | 23 436 000 |
| Վիետնամ | 20 սեպտեմբերի 1977 | 0,007 | 76 325 000 |
| Վրաստան | 31 հուլիսի 1992 | 0,007 | 5 059 000 |

| Անդամ պետությունը | Անդամության տարեթիվը | Վճարման տոկոսը, ըստ 2000թ. (տոկոսներով) | Բնակչությունը (մոտավոր հաշվարկված) |
|---|---|---|---|
| Տանզանիայի Միացյալ Հանրապետություն[11] | 14 դեկտեմբերի 1961 | 0,003 | 32 102 000 |
| Տաջիկստան | 2 մարտի 1992 | 0,004 | 6 103 000 |
| Տոգո | 20 սեպտեմբերի 1960 | 0,001 | 4 397 000 |
| Տոնգա | 14 սեպտեմբերի 1999 | 0,001 | 98 000 |
| Տրինիդադ և Տոբագո | 18 սեպտեմբերի 1962 | 0,016 | 1 283 000 |
| Տուվալու | 5 սեպտեմբերի 2000 | | 10 000 |
| Ուգանդա | 25 հոկտեմբերի 1962 | 0,004 | 21 029 000 |
| Ուզբեկստան | 2 մարտի 1992 | 0,025 | 24 050 000 |
| Ուկրաինա | 24 հոկտեմբերի 1945 | 0,190 | 50 499 000 |
| Ուրուգվայ | 18 դեկտեմբերի 1945 | 0,048 | 3 289 000 |
| Քենիա | 16 դեկտեմբերի 1963 | 0,007 | 29 008 000 |
| Քուվեյթ | 14 մայիսի 1963 | 0,128 | 2 017 000 |
| Օման | 7 հոկտեմբերի 1971 | 0,051 | 2 287 000 |
| Ֆիլիպիններ | 24 հոկտեմբերի 1945 | 0,081 | 75 154 000 |
| Ֆինլանդիա | 14 դեկտեմբերի 1955 | 0,543 | 5 154 000 |
| Ֆիջի | 13 հոկտեմբերի 1970 | 0,004 | 796 000 |
| Ֆրանսիա | 24 հոկտեմբերի 1945 | 6,545 | 58 846 000 |

*Այն երկրները, որոնք ՄԱԿ-ի անդամ չեն, բայց մասնակցում են ՄԱԿ-ի որոշ միջոցառումներին, կազմակերպության ծախսերին մասնակցում են հետևյալ տոկոսային մասնաբաժնով.*

| | |
|---|---|
| *Վատիկան* | *0,001* |
| *Շվեյցարիա*[4] | *1,215* |

*(2002 թ. սեպտեմբերի 10-ին Շվեյցարիան դարձավ ՄԱԿ-ի 190-րդ անդամը, իսկ 191-րդը սեպտեմբերի 27-ին դարձավ Արևելյան Թիմորը)*

[1] 1991թ. սեպտեմբերի 19-ին Բելառուսիան տեղեկացրեց Միավորված ազգերի կազմակերպությանը, որ փոխել է իր անունը Բելառուսի:

[2] Հարավսլավիայի Սոցիալիստական Դաշնային Հանրապետությունը ի սկզբանե եղել է ՄԱԿ-ի անդամ, ստորագրել է կանոնադրությունը 1945թ. հունիսի 26-ին և վավերացրել 1945թ. հոկտեմբերի 19-ին, մինչև իր քայքայումը, որի հետևանքով հիմնվել և հետևաբար ՄԱԿ-ի անդամ են դարձել Բոսնիա և Հերցեգովինան, Խորվաթիայի Հանրապետությունը, Սլովենիայի Հանրապետությունը, Հարավսլավիայի Նախկին Հանրապետություն Մակեդոնիան և Հարավսլավիայի Դաշնային Հանրապետությունը: Բոսնիա և Հերցեգովինայի Հանրապետությունը ՄԱԿ-ի անդամ է դարձել Գլխավոր ասամբլեայի 1992թ. մայիսի 22-ի A/RES/46/237 բանաձևով:

[3] Եգիպտոսն ու Սիրիան ի սկզբանե՝ 1945թ. հոկտեմբերի 24-ից եղել են ՄԱԿ-ի անդամ: 1958թ. փետրվարի 21-ին անցկացված հանրաքվեի արդյունքում ստեղծվեց Միացյալ Արաբական Հանրապետությունը՝ միավորելով Եգիպտոսին ու Սիրիային, որոնք շարունակեցին որպես մեկ անդամ եր-

կիր: 1961թ. հոկտեմբերի 13-ին Սիրիան, վերականգնելով իր կարգավիճակը՝ որպես անկախ պետություն, վերականգնեց իր առանձին անդամակցությունը ՄԱԿ-ին: 1971թ. սեպտեմբերի 2-ին Միացյալ Արաբական Հանրապետությունն իր անունը փոխեց Եգիպտոսի Արաբական Հանրապետության:

4 1965թ. հունվարի 20-ի նամակով Ինդոնեզիան հայտարարեց ՄԱԿ-ից դուրս գալու իր որոշման մասին՝ «այս պահին և ներկա հանգամանքների բերումով»: 1966թ. սեպտեմբերի 19-ի հեռագրով նա տեղեկացրեց «ՄԱԿ-ի հետ իր լիակատար համագործակցությունը վերսկսելու և վերջինիս գործունեության մեջ մասնակցությունը վերսկսելու» իր որոշման մասին:

5 Հարավսլավիայի Սոցիալիստական Դաշնային Հանրապետությունը ի սկզբանե եղել է ՄԱԿ-ի անդամ, ստորագրել է կանոնադրությունը 1945թ. հունիսի 26-ին և վավերացրել է 1945թ. հոկտեմբերի 19-ին, մինչև իր քայքայումը, որի հետևանքով հիմնվել և հետագայում ՄԱԿ-ի անդամ են դարձել Բոսնիա և Հերցեգովինան, Խորվաթիայի Հանրապետությունը, Սլովենիայի Հանրապետությունը, Հարավսլավիայի Նախկին Հանրապետություն Մակեդոնիան և Հարավսլավիայի Դաշնային Հանրապետությունը: Խորվաթիայի Հանրապետությունը ՄԱԿ-ի անդամ է դարձել Գլխավոր ասամբլեայի 1992թ. մայիսի 22-ի A/RES/46/238 բանաձևով:

6 Զաիրի Հանրապետությունը ՄԱԿ-ին տեղեկացրեց, որ 1997թ. մայիսի 17-ից փոխել է իր անունը Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետության:

7 Հարավսլավիայի Սոցիալիստական Դաշնային Հանրապետությունը ի սկզբանե եղել է ՄԱԿ-ի անդամ, ստորագրել է կանոնադրությունը 1945թ. հունիսի 26-ին և վավերացրել 1945թ. հոկտեմբերի 19-ին, մինչև իր քայքայումը, որի հետևանքով հիմնվել և հետագայում ՄԱԿ-ի անդամ են դարձել Բոսնիա և Հերցեգովինան, Խորվաթիայի Հանրապետությունը, Սլովենիայի Հանրապետությունը, Հարավսլավիայի Նախկին Հանրապետություն Մակեդոնիան և Հարավսլավիայի Դաշնային Հանրապետությունը: Հարավսլավիայի Դաշնային Հանրապետությունը ՄԱԿ-ի անդամ է դարձել Գլխավոր ասամբլեայի 2000թ. նոյեմբերի 1-ի A/RES/55/12 բանաձևով:

8 Մալայան Դաշնությունը միացավ ՄԱԿ-ին 1957թ. սեպտեմբերի 17-ին: 1963թ. սեպտեմբերի 16-ին՝ նոր դաշնությանը Սինգապուրի, Սաբահի (Հյուսիսային Բորնեո) և Սարավակի անդամակցությունից հետո նրա անունը փոխվեց Մալայզիայի: Սինգապուրը անկախ պետություն դարձավ 1965թ. օգոստոսի 9-ին, իսկ ՄԱԿ-ի անդամ՝ 1965թ. սեպտեմբերի 21-ին:

9 Հարավսլավիայի Սոցիալիստական Դաշնային Հանրապետությունը ի սկզբանե եղել է ՄԱԿ-ի անդամ, ստորագրել է կանոնադրությունը 1945թ. հունիսի 26-ին և վավերացրել 1945թ. հոկտեմբերի 19-ին, մինչև իր քայքայումը, որի հետևանքով հիմնվել և հետագայում ՄԱԿ-ի անդամ են դարձել Բոսնիա և Հերցեգովինան, Խորվաթիայի Հանրապետությունը, Սլովենիայի Հանրապետությունը, Հարավսլավիայի Նախկին Հանրապետություն Մակեդոնիան և Հարավսլավիայի Դաշնային Հանրապետությունը: 1993թ. ապրիլի 8-ի A/RES/225 բանաձևով Գլխավոր ասամբլեան որոշեց ՄԱԿ-ի անդամ ընդունել այն պետությանը, որը ՄԱԿ-ի շրջանակներում պայմանականորեն կոչվում էր «Մակեդոնիայի Նախկին Հարավսլավիայի Հանրապետություն», մինչև նրա անվան շուրջ ծագած տարաձայնությունների հարթումը:

10 Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը ի սկզբանե եղել է ՄԱԿ-ի անդամ՝ 1945թ. հոկտեմբերի 24-ից: 1991թ. դեկտեմբերի 24-ի նամակով Բորիս Ելցինը՝ Ռուսաստանի Դաշնության նախագահը, տեղեկացրել է Գլխավոր քարտուղարին, որ Անվտանգության խորհրդում և ՄԱԿ-ի բոլոր մյուս մարմիններում ԽՍՀՄ-ի անդամակցությունը կշարունակվի Ռուսաստանի Դաշնության կողմից՝ Անկախ պետությունների համագործակցության 11 անդամ երկրների աջակցությամբ:

11 Եգիպտոսը ու Սիրիան ի սկզբանե՝ 1945թ. հոկտեմբերի 24-ից եղել են ՄԱԿ-ի անդամ: 1958թ. փետրվարի 21-ին անցկացված հանրաքվեի արդյունքում ստեղծվեց Միացյալ Արաբական Հանրապետությունը՝ միավորելով Եգիպտոսին ու Սիրիային, որոնք շարունակեցին որպես մեկ անդամ երկիր: 1961թ. հոկտեմբերի 13-ին Սիրիան, վերականգնելով իր կարգավիճակը՝ որպես անկախ պետություն, վերականգնեց իր առանձին անդամակցությունը ՄԱԿ-ին:

12 Հարավսլավիայի Սոցիալիստական Դաշնային Հանրապետությունը ի սկզբանե եղել է ՄԱԿ-ի անդամ, ստորագրել է կանոնադրությունը 1945թ. հունիսի 26-ին և վավերացրել է 1945թ. հոկտեմբերի 19-ին, մինչև իր քայքայումը, որի հետևանքով հիմնվել և հետագայում ՄԱԿ-ի անդամ են դարձել

Բոսնիա և Հերցեգովինան, Խորվաթիայի Հանրապետությունը, Սլովենիայի Հանրապետությունը, Հարավսլավիայի Նախկին Հանրապետություն Մակեդոնիան և Հարավսլավիայի Դաշնային Հանրապետությունը: Սլովենիայի Հանրապետությունը ՄԱԿ-ի անդամ է դարձել Գլխավոր ասամբլեայի 1992թ. մայիսի 22-ի A/RES/46/236 բանաձևով:

[13] Տանգանիկան ՄԱԿ-ի անդամ է եղել 1961թ. դեկտեմբերի 14-ից, իսկ Զանզիբարը՝ 1963թ. դեկտեմբերի 16-ից: 1964թ. ապրիլի 26-ին Տանգանիկայի ու Զանզիբարի միջև Միության հոդվածների վավերացումից հետո, Տանգանիկայի ու Զանզիբարի Միացյալ Հանրապետությունը շարունակեց որպես մեկ անդամ երկիր՝ 1964թ. նոյեմբերի 1-ին փոխելով իր անունը Տանզանիայի Միացյալ Հանրապետության:

# ԱԶԸ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1945-2000թթ.

| Թվականը | Համարը սկզբնական | Անդամ պետությունները |
| --- | --- | --- |
| 1945 | 51 | Արգենտինա, Ավստրալիա, Բելգիա, Բոլիվիա, Բրազիլիա, Բելառուս, Կանադա, Չիլի, Չինաստան, Կոլումբիա, Կոստա Ռիկա, Կուբա, Չեխոսլովակիա, Դանիա, Դոմինիկյան Հանրապետություն, Էկվադոր, Եգիպտոս, Սալվադոր, Եթովպիա, Ֆրանսիա, Հունաստան, Գվատեմալա, Հաիթի, Հոնդուրաս, Հնդկաստան, Իրան, Իրաք, Լիբանան, Լիբերիա, Լյուքսեմբուրգ, Մեքսիկա, Նիդեռլանդներ, Նոր Զելանդիա, Նիկարագուա, Նորվեգիա, Պանամա, Պարագվայ, Պերու, Ֆիլիպիններ, Լեհաստան, Ռուսաստանի Դաշնություն, Սաուդյան Արաբիա, Հարավային Աֆրիկա, Սիրիայի Արաբական Հանրապետություն, Թուրքիա, Ուկրաինա, Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն, Ամերիկայի Միացյալ Նահանգներ, Ուրուգվայ, Վենեսուելա, Հարավսլավիա |
| 1946 | 55 | Աֆղանստան, Իսլանդիա, Շվեդիա, Թաիլանդ |
| 1947 | 57 | Պակիստան, Եմեն[1] |
| 1948 | 58 | Մյանմար |
| 1949 | 59 | Իսրայել |
| 1950 | 60 | Ինդոնեզիա |
| 1955 | 76 | Ալբանիա, Ավստրիա, Բուլղարիա, Կամբոջա, Ֆինլանդիա, Հունգարիա, Իռլանդիա, Իտալիա, Հորդանան, Լաոսի Ժողովրդադեմոկրատական Հանրապետություն, Լիբիայի Արաբական Ջամահիրիա, Նեպալ, Պորտուգալիա, Ռումինիա, Իսպանիա, Շրի Լանկա |
| 1956 | 80 | Ճապոնիա, Մարոկկո, Սուդան, Թունիս |
| 1957 | 82 | Գանա, Մալայզիա |
| 1958 | 82[2] | Գվինեա |
| 1960 | 99 | Բենին, Բուրկինա Ֆասո, Կամերուն, Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետություն, Չադ, Կոնգո, Կոտ դ'Իվուար, Կիպրոս, Գաբոն, Մադագասկար, Մալի, Նիգեր, Նիգերիա, Սենեգալ, Սոմալի, Տոգո, Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետություն |

| Թվականը | Համարը | Անդամ պետությունները |
|---|---|---|
| 1961 | 104[3] | Մավրիտանիա, Մոնղոլիա, Սիեռա Լեոնե, Տանգանիկայի Միացյալ Հանրապետություն |
| 1962 | 110 | Ալժիր, Բուրունդի, Ճամայկա, Ռուանդա, Տրինիդադ և Տոբագո, Ուգանդա |
| 1963 | 112 | Քենիա, Քուվեյթ |
| 1964 | 115 | Մալավի, Մալթա, Զամբիա |
| 1965 | 117[4] | Գամբիա, Մալդիվներ, Սինգապուր |
| 1966 | 122[5] | Բարբադոս, Բոթսվանա, Գայանա, Լեսոտո |
| 1967 | 123 | Ժողովրդավարական Եմեն[1] |
| 1968 | 126 | Հասարակածային Գվինեա, Մավրիկոս, Սվազիլենդ |
| 1970 | 127 | Ֆիջի |
| 1971 | 132 | Բահրեյն, Բութան, Օման, Կատար, Արաբական Միացյալ Էմիրություններ |
| 1973 | 135 | Բահամյան կղզիներ, Գերմանիայի Ժողովրդավարական Հանրապետություն, Գերմանիա՝ Դաշնային Հանրապետություն[6] |
| 1974 | 138 | Բանգլադեշ, Գրենադա, Գվինեա-Բիսաու |
| 1975 | 144 | Կաբո Վերդե, Կոմորոս, Մոզամբիկ, Պապուա Նոր Գվինեա, Սան Տոմե և Պրինսիպ, Սուրինամ |
| 1976 | 147 | Անգոլա, Սամոա, Սեյշելյան կղզիներ |
| 1977 | 149 | Ջիբութի, Վիետնամ |
| 1978 | 151 | Դոմինիկա, Սողոմոնյան կղզիներ |
| 1979 | 152 | Սանտա Լուչիա |
| 1980 | 154 | Սենտ Վինսենթ և Գրենադիններ, Զիմբաբվե |
| 1981 | 157 | Անտիգուա և Բարբուդա, Բելիզ, Վանուատու |
| 1983 | 158 | Սենտ Քիթս և Նևիս |
| 1984 | 159 | Բրունեյ Դարուսսալամ |
| 1990 | 159[1,6] | Լիխտենշտեյն, Նամիբիա |
| 1991 | 166 | Կորեայի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետություն, Էստոնիա, Միկրոնեզիայի Դաշնային Նահանգներ, Լատվիա, Լիտվա, Մարշալյան կղզիներ, Կորեայի Հանրապետություն |
| 1992 | 179 | Հայաստան, Ադրբեջան, Բոսնիա և Հերցեգովինա[7], Խորվաթիա[7], Վրաստան, Ղազախստան, Ղրղզստան, Մոլդովա, Սան Մարինո, Սլովենիա[7], Տաջիկստան, Թուրքմենստան, Ուզբեկստան |
| 1993 | 184[8] | Անդորա, Չեխիայի Հանրապետություն, Էրիթրեա, Մոնակո, Սլովակիայի Հանրապետություն, Մակեդոնիայի Նախկին Հարավսլավիայի Հանրապետություն[7] |

| | | |
|---|---|---|
| 1994 | 185 | Պալաու |
| 1999 | 188 | Կիրիբաթի, Նաուրու, Տոնգա |
| 2000 | 189 | Տուվալու, Հարավսլավիա[7] |

(2002 թ. սեպտեմբերի 10-ին Շվեյցարիան դարձավ ՄԱԿ-ի 190-րդ անդամը, իսկ 191-րդը սեպտեմբերի 27-ին դարձավ Արևելյան Թիմորը)

---

[1] Եմենը ՄԱԿ-ի անդամ է դարձել 1947թ. սեպտեմբերի 30-ին, իսկ Դեմոկրատական Եմենը՝ 1967թ. դեկտեմբերի 14-ին: 1990թ. մայիսի 22-ին երկու երկրները միացան և այդ օրվանից ի վեր ներկայացված են որպես մեկ երկիր՝ «Եմեն» անվան տակ:

[2] Ընդհանուր թիվը նույնն է մնում, որովհետև 1958թ. հունվարի 21-ից Սիրիան և Եգիպտոսը շարունակել են հանդես գալ որպես մեկ անդամ երկիր (Միացյալ Արաբական Հանրապետություն):

[3] Սիրիան վերականգնեց իր կարգավիճակը որպես անկախ պետություն:

[4] Ինդոնեզիան դուրս եկավ 1965թ. հունվարի 20-ին:

[5] Ինդոնեզիան վերականգնեց իր անդամակցությունը 1966թ. սեպտեմբերի 28-ին:

6 Գերմանիայի Դաշնային Հանրապետությունն ու Գերմանիայի Ժողովրդավարական Հանրապետությունը ՄԱԿ-ի անդամ են դարձել 1973թ. սեպտեմբերի 18-ին: Գերմանիայի Ժողովրդավարական Հանրապետության Գերմանիայի Դաշնային Հանրապետությանը միանալուց հետո, որը ուժի մեջ է 1990թ. հոկտեմբերի 3-ից, երկու գերմանական պետությունները միացել են՝ կազմելով մեկ ինքնիշխան պետություն:

[7] Հարավսլավիայի Սոցիալիստական Դաշնային Հանրապետությունը ի սկզբանե եղել է ՄԱԿ-ի անդամ, ստորագրել է կանոնադրությունը 1945թ. հունիսի 26-ին և վավերացրել 1945թ. հոկտեմբերի 19-ին, մինչև իր կազմալուծումը, որի հետևանքով հիմնվել և հետագայում ՄԱԿ-ի անդամ են դարձել Բոսնիա և Հերցեգովինան, Խորվաթիայի Հանրապետությունը, Սլովենիայի Հանրապետությունը, Հարավսլավիայի Նախկին Հանրապետություն Մակեդոնիան և Հարավսլավիայի Դաշնային Հանրապետությունը: Բոսնիա և Հերցեգովինայի Հանրապետությունը, Խորվաթիայի Հանրապետությունը և Սլովենիայի Հանրապետությունը ՄԱԿ-ի անդամ են դարձել 1992թ. մայիսի 22-ին: 1993թ. ապրիլի 8-ին Գլխավոր ասամբլեան որոշեց ՄԱԿ-ի անդամ ընդունել այն պետությանը, որը ՄԱԿ-ի շրջանակներում պայմանականորեն կոչվում էր «Մակեդոնիայի Նախկին Հարավսլավիայի Հանրապետություն», մինչև նրա անվան շուրջ ծագած տարաձայնությունների հարթումը: Հարավսլավիայի Դաշնային Հանրապետությունը ՄԱԿ-ի անդամ է դարձել 2000թ. նոյեմբերի 1-ին:

[8] Չեխոսլովակիան ի սկզբանե՝ 1945թ. հոկտեմբերի 24-ից եղել է ՄԱԿ-ի անդամ: 1992թ. դեկտեմբերի 10-ի նամակով նրա մշտական ներկայացուցիչը տեղեկացրեց Գլխավոր քարտուղարին, որ Չեխիայի ու Սլովակիայի Դաշնային Հանրապետությունը կդադարեցնի իր գոյությունը 1992թ. դեկտեմբերի 31-ից և Չեխիայի Հանրապետությունն ու Սլովակիայի Հանրապետությունը՝ որպես իրավահաջորդ պետություններ, անդամակցության համար կդիմեն ՄԱԿ-ին: Այդ դիմումները ստանալուց հետո Անվտանգության խորհուրդը 1993թ. հունվարի 8-ին հանձնարարեց Գլխավոր ասամբլեային ընդունել Չեխիայի Հանրապետության ու Սլովակիայի Հանրապետության անդամակցությունը ՄԱԿ-ին: Դրա արդյունքում, 1993թ. հունվարի 19-ին նրանք դարձան ՄԱԿ-ի անդամ:

# ԽԱՂԱՂԱՊԱՀ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՆՑՅԱԼ ԵՎ ՆԵՐԿԱ

**(Առ 2000թ. դեկտեմբերը)**

***UNTSO**
ՄԱԿ-ի Զինադադարի վերահսկման կազմակերպություն (Երուսաղեմ)
1948թ. հունիս

***UNMOGIP**
ՄԱԿ-ի Ռազմական դիտորդական խումբ Հնդկաստանում և Պակիստանում
1949 թ. հունվար

**UNEF I**
ՄԱԿ-ի Առաջին արտակարգ ուժեր (Գազա)
1956թ. նոյեմբեր - 1967թ. հունիս

**UNOGIL**
ՄԱԿ-ի Դիտորդական խումբ Լիբանանում
1958թ. հունիս-դեկտեմբեր

**ONUC**
ՄԱԿ-ի Գործողություն Կոնգոյում
1960թ. հուլիս -1964թ. հունիս

**UNSF**
ՄԱԿ-ի Անվտանգության ուժ Արևմտյան Նոր Գվինեայում (Արևմտյան Իրիան)
1962թ. հոկտեմբեր - 1963թ. ապրիլ

**UNYOM**
ՄԱԿ-ի Դիտորդական առաքելություն Եմենում
1963թ. հուլիս - 1964թ. սեպտեմբեր

***UNFICYP**
ՄԱԿ-ի Խաղաղապահ ուժ Կիպրոսում
1964թ., մարտ

**DOMREP**
Գլխավոր քարտուղարի ներկայացուցչի առաքելություն Դոմինիկյան Հանրապետությունում
1965թ. մայիս - 1966թ. հոկտեմբեր

**UNIPOM**
ՄԱԿ-ի Հնդկա-պակիստանյան դիտորդական առաքելություն
1965թ. սեպտեմբեր- 1966թ. մարտ

**UNEF II**
ՄԱԿ-ի Երկրորդ արտակարգ ուժեր (Սուեզի ջրանցք և հետագայում Սինայի թերակղզի)
1973թ. հոկտեմբեր- 1979թ. հուլիս

***UNDOF**
ՄԱԿ-ի Տարանջատման դիտորդական ուժեր (Սիրիական Գոլանի բարձունքներ)
1974թ. հունիս

***UNIFIL**
ՄԱԿ-ի Ժամանակավոր ուժ Լիբանանում
1978թ. մարտ

**UNGOMAP**
ՄԱԿ-ի Բարի ծառայությունների առաքելություն Աֆղանստանում և Պակիստանում
1988թ. մայիս - 1990թ. մարտ

**UNIMOG**
ՄԱԿ-ի Իրանա-իրաքյան ռազմական դիտորդական խումբ
1988թ. օգոստոս - 1991թ. փետրվար

**UNAVEM I**
ՄԱԿ-ի Անգոլայի տեսչական առաքելություն I
1989թ. հունվար - 1991թ. հունիս

**UNTAG**
ՄԱԿ-ի Անցումային օժանդակության խումբ (Նամիբիա և Անգոլա)
1989թ., ապրիլ - 1990թ., մարտ

**ONUCA**
ՄԱԿ-ի Դիտորդական խումբ Կենտրոնական Ամերիկայում
1989թ. նոյեմբեր - 1992թ. հունվար

***UNIKOM**
ՄԱԿ-ի Իրաքա-քուվեյթյան դիտորդական առաքելություն
1991թ. ապրիլ

**UNAVEM II**
ՄԱԿ-ի Անգոլայի ստուգման առաքելություն II
1991թ. հունիս - 1995թ. ապրիլ

**ONUSAL**
ՄԱԿ-ի Դիտորդական առաքելություն Սալվադորում
1991թ. հուլիս - 1995թ. ապրիլ

***MINURSO**
ՄԱԿ-ի Առաքելություն Արևմտյան Սահարայի հանրաքվեի համար
1991թ. ապրիլ

**UNAMIC**
ՄԱԿ-ի Առաջատար առաքելություն Կամբոջայում
1991թ. հոկտեմբեր - 1992թ. մարտ

**UNPROFOR**
ՄԱԿ-ի Պաշտպանական ուժեր (նախկին Հարավսլավիա)
1992թ. մարտ - 1995թ. դեկտեմբեր

**UNTAC**
ՄԱԿ-ի Անցումային իշխանություն Կամբոջայում
1992թ. մարտ - 1993թ. սեպտեմբեր

**UNOSOM I**
ՄԱԿ-ի I գործողություն Սոմալիում
1992թ. ապրիլ - 1993թ. մարտ

**ONUMOZ**
ՄԱԿ-ի գործողություն Մոզամբիկում
1992թ. դեկտեմբեր - 1994թ. դեկտեմբեր

**UNOSOM II**
ՄԱԿ-ի II գործողություն Սոմալիում
1993թ. մարտ - 1995թ. մարտ

**UNOMUR**
ՄԱԿ-ի Դիտորդական առաքելություն Ուգանդա-Ռուանդայում
1993թ. հունիս - 1994թ. սեպտեմբեր

***UNOMIG**
ՄԱԿ-ի Դիտորդական առաքելություն Վրաստանում
1993թ. օգոստոս

**UNOMIL**
ՄԱԿ-ի Դիտորդական առաքելություն Լիբերիայում
1993թ. սեպտեմբեր - 1997թ. սեպտեմբեր

**UNMIH**
ՄԱԿ-ի Առաքելություն Հայիթիում
1993թ. սեպտեմբեր - 1996թ. հունիս

**UNAMIR**
ՄԱԿ-ի Օժանդակության առաքելություն Ռուանդայի համար
1993թ. հոկտեմբեր - 1996թ. մարտ

**UNASOG**
ՄԱԿ-ի Աուզուի գոտում դիտորդական խումբ (Չադ/Լիբիա)
1994թ. մայիս-հունիս

**UNMOT**
ՄԱԿ-ի Դիտորդների առաքելություն Տաջիկստանում
1994թ. դեկտեմբեր - 2000թ. մայիս

**UNAVEM III**
ՄԱԿ-ի Անգոլայի տեսչական առաքելություն III
1995թ. փետրվար - 1997թ. հունիս

**UNCRO**
ՄԱԿ-ի Վստահության վերականգնման գործողություն Խորվաթիայում
1995թ. մարտ - 1996թ. հունվար

**UNPREDEP**
ՄԱԿ-ի Կանխարգելման տեղակ ուժի (Խորվաթիա) համար
1996թ. հունվար - 1998թ. հունվար

***UNMOP**
ՄԱԿ-ի Դիտորդների առաքելություն Պրևլակայում (Խորվաթիա)
1996թ. հունվար

**UNSMIH**
ՄԱԿ-ի Աջակցության առաքելություն Հայիթիում
1996թ. հուլիս - 1997թ. հուլիս

**MINUGUA**
ՄԱԿ-ի Տեսչական առաքելություն Գվատեմալայում
1997թ. հունվար-մայիս

**MONUA**
ՄԱԿ-ի Դիտորդական առաքելություն Անգոլայում
1997թ. հուլիս - 1999թ. փետրվար

**UNTMIH**
ՄԱԿ-ի Անցումային առաքելություն Հաիթիում
1997թ. օգոստոս-նոյեմբեր

**MIPONUH**
ՄԱԿ-ի Քաղաքացիական ոստիկանության առաքելություն Հաիթիում
1997թ. դեկտեմբեր - 2000թ. մարտ

**UNPSG**
ՄԱԿ-ի Քաղաքացիական ոստիկանության աջակցության խումբ (Խորվաթիա)
1998թ. հունվար-հոկտեմբեր

**MINURCA**
ՄԱԿ-ի Առաքելություն Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությունում
1998թ. ապրիլ -2000թ. փետրվար

**UNOMSIL**
ՄԱԿ-ի Դիտորդական առաքելություն Սիերա Լեոնեում
1998թ. հուլիս -1999թ. հոկտեմբեր

***UNMIK**
ՄԱԿ-ի Ժամանակավոր կառավարման առաքելություն Կոսովոյում
1999թ. հունիս

***UNAMSIL**
ՄԱԿ-ի Առաքելություն Սիերա Լեոնեում
1999թ. հոկտեմբեր

***UNTAET**
ՄԱԿ-ի Անցումային Կառավարում Արևելյան Թիմորում
1999թ. հոկտեմբեր

***MONUC**
ՄԱԿ-ի Դիտորդական առաքելություն Կոնգոյի Ժողովրդավարական Հանրապետությունում
1999թ. դեկտեմբեր

***UNMEE**

ՄԱԿ-ի Առաքելություն Եթովպիայում և Էրիթրեայում

2000թ. հուլիս

---

* Ընթացիկ առաքելության 2000թ. դեկտեմբերի կազմությամբ:

# ԱՊԱԳԱՂՈՒԹԱՑՈՒՄ

Խնամակալության տակ գտնվող և ոչ ինքնակառավարվող տարածքները, որոնք անկախություն են ստացել 1960թ. հռչակագրի ընդունումից հետո:*

| Պետություն կամ տարածքային միավոր | ՄԱԿ-ին անդամակցելու թվականը |
|---|---|
| **Աֆրիկա** | |
| Ալժիր | 8 հոկտեմբերի 1962 |
| Անգոլա | 1 դեկտեմբերի 1976 |
| Բոթսվանա | 17 հոկտեմբերի 1966 |
| Բուրունդի | 18 սեպտեմբերի 1962 |
| Կաբո Վերդե | 16 սեպտեմբերի 1975 |
| Կոմորոս | 12 նոյեմբերի 1975 |
| Ջիբութի | 20 սեպտեմբերի 1977 |
| Հասարակածային Գվինեա | 12 նոյեմբերի 1968 |
| Գամբիա | 21 սեպտեմբերի 1965 |
| Գվինեա-Բիսաու | 17 սեպտեմբերի 1974 |
| Քենիա | 16 դեկտեմբերի 1963 |
| Լեսոտո | 17 հոկտեմբերի 1966 |
| Մալավի | 1 դեկտեմբերի 1964 |
| Մավրիկիոս | 24 ապրիլի 1968 |
| Մոզամբիկ | 16 սեպտեմբերի 1975 |
| Նամիբիա | 23 ապրիլի 1990 |
| Ռուանդա | 18 սեպտեմբերի 1962 |
| Սան Թոմե և Պրինսիպ | 26 սեպտեմբերի 1975 |
| Սեյշելյան կղզիներ | 21 սեպտեմբերի 1976 |
| Սիեռա Լեոնե | 27 սեպտեմբերի 1961 |
| Սվազիլենդ | 24 սեպտեմբերի 1968 |
| Ուգանդա | 25 հոկտեմբերի 1962 |
| Տանզանիայի Միացյալ Հանրապետություն' | 14 դեկտեմբերի 1961 |
| Զամբիա | 1 դեկտեմբերի 1964 |
| Զիմբաբվե | 18 ապրիլի 1980 |
| **Ասիա** | |
| Բրունեյ Դարուսսալամ | 21 սեպտեմբերի 1984 |
| Ժողովրդավարական Եմեն | 14 դեկտեմբերի 1967 |
| Օման | 7 հոկտեմբերի 1971 |
| Սինգապուր | 21 սեպտեմբերի 1965 |

* Գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն շնորհելու մասին հռչակագիրն ընդունվել է Գլխավոր ասամբլեայի կողմից 1960թ. դեկտեմբերի 14-ին:

| Պետություն կամ տարածքային միավոր | ՄԱԿ-ին անդամակցության թվականը |
| --- | --- |

## Կարիբյան ավազան

| | |
| --- | --- |
| Անտիգուա և Բարբուդա | 11 նոյեմբերի 1981 |
| Բահամյան կղզիներ | 18 սեպտեմբերի 1973 |
| Բարբադոս | 9 դեկտեմբերի 1966 |
| Բելիզ | 25 սեպտեմբերի 1981 |
| Դոմինիկա | 18 դեկտեմբերի 1978 |
| Գրենադա | 17 դեկտեմբերի 1974 |
| Գայանա | 20 սեպտեմբերի 1966 |
| Ճամայկա | 18 սեպտեմբերի 1962 |
| Սենտ Քրիստոֆեր և Նևիս | 23 սեպտեմբերի 1983 |
| Սանտա Լուչիա | 18 սեպտեմբերի 1979 |
| Սան Վինսենթ և Գրենադիններ | 16 սեպտեմբերի 1980 |
| Սուրինամ[2] | 24 դեկտեմբերի 1975 |
| Տրինիդադ և Տոբագո | 18 սեպտեմբերի 1962 |

## Եվրոպա

| | |
| --- | --- |
| Մալթա | 1 դեկտեմբերի 1964 |

## Խաղաղ օվկիանոսյան տարածքներ

| | |
| --- | --- |
| Միկրոնեզիայի Դաշնային Նահանգներ | 17 սեպտեմբերի 1991 |
| Ֆիջի | 13 հոկտեմբերի 1970 |
| Կիրիբաթի | 14 սեպտեմբերի 1999 |
| Մարշալյան կղզիներ | 17 սեպտեմբերի 1991 |
| Նաուրու | 14 սեպտեմբերի 1999 |
| Պապուա Նոր Գվինեա | 10 հոկտեմբերի 1975 |
| Պալաու | 15 դեկտեմբերի 1994 |
| Սամոա | 15 դեկտեմբերի 1976 |
| Սողոմոնյան կղզիներ | 19 սեպտեմբերի 1978 |
| Տուվալու | 5 սեպտեմբերի 2000 |
| Վանուատու | 15 սեպտեմբերի 1981 |

---

[1] Նախկինում խնամակալության տակ գտնվող Տանգանիկա տարածքը, որն անկախացավ 1961թ. դեկտեմբերին, և Զանզիբարի նախկին պրոտեկտորատը, որն անկախություն ստացավ 1963թ. դեկտեմբերին, 1964թ. ապրիլին միավորվեցին մեկ պետության մեջ:

[2] 945 (X) բանաձևով Գլխավոր ասամբլեան ընդունեց Սուրինամի վերաբերյալ տեղեկատվության փոխանցման դադարեցման փաստը՝ ի հետևանք Նիդեռլանդների, Սուրինամի ու Նիդեռլանդական Անթիլների միջև սահմանադրական փոփոխությունների:

# ԱՊԱԳԱՂՈՒԹԱՑՈՒՄ

## Կախյալ տարածքներ, որոնք ինտեգրվել կամ միացել են անկախ պետությունների 1960թ. հռչակագրից ի վեր*

| Տարածք | Դիտարկումներ |
|---|---|
| Կամերունները բրիտանական կառավարման ներքո | Խնամակալության տակ գտնվող տարածքի հյուսիսային մասը 1961թ. հունիսի 1-ին միացավ Նիգերիայի Դաշնությանը, իսկ հարավային մասը 1961թ. հոկտեմբերի 1-ին միացավ Կամերունի Հանրապետությանը: |
| Կուկի կղզիները | 1965թ. օգոստոսից լիակատար ինքնակառավարում Նոր Զելանդիայի հետ ազատ ասոցիացվածի կարգավիճակով: |
| Իֆնի | Վերադարձվել է Մարոկկոյին 1969թ. հունիսին: |
| Նիուե | 1974թ. օգոստոսից լիակատար ինքնակառավարում Նոր Զելանդիայի հետ ազատ ասոցիացվածի կարգավիճակով: |
| Հյուսիսային Բորնեո | Հյուսիսային Բորնեոն ու Սարավակը 1963թ. միացել են Մալայայի Դաշնությանը և կազմել Մալայզիայի Դաշնությունը: |
| Սան Ժուան Բատիստա դը Աջուդա | 1961թ. օգոստոսին ազգային հատկանիշով միացել է Դահոմեյի հետ (ներկայումս՝ Բենին): |
| Սարավակ | Սարավակն ու Հյուսիսային Բորնեոն 1963թ. միացել են Մալայայի Դաշնությանը և կազմել Մալայզիայի Դաշնությունը: |
| Արևմտյան Նոր Գվինեա (Արևմտյան Իրիան) | 1963թ, միացել է Ինդոնեզիային: |
| Կոկոսյան (Կիլինգ) կղզիներ | 1984թ. ինտեգրվել է Ավստրալիային: |

* Գաղութային երկրներին ու ժողովուրդներին անկախություն շնորհելու մասին հռչակագիրն ընդունվել է Գլխավոր ասամբլեայի կողմից 1960թ. դեկտեմբերի 14-ին:

# ԱՊԱԳԱՂՈՒԹԱՑՈՒՄ

## Խնամակալության տակ գտնվող ինքնորոշված տարածքներ

**Տոգոլենդ** (բրիտանական կառավարման ներքո)
1957թ. միացել է Ոսկե ափին (գաղութի և պրոտեկտորատի)՝ Մեծ Բրիտանիայի կառավարման տակ գտնվող ոչ ինքնակառավարվող տարածքի հետ Գանա ստեղծելու նպատակով:

**Սոմալիլենդ** (իտալական կառավարման ներքո)
1960թ. միացավ բրիտանական Սոմալիլենդ պրոտեկտորատին՝ ստեղծելով Սոմալին:

**Տոգոլենդ** (ֆրանսիական կառավարման ներքո)
1960թ. անկախացավ որպես Տոգո:

**Կամերուններ** (ֆրանսիական կառավարման ներքո)
1960թ. անկախացավ որպես Կամերուն:

**Կամերուններ** (բրիտանական կառավարման ներքո)
Խնամակալության տակ գտնվող տարածքի հյուսիսային մասը 1961թ. հունիսի 1-ին միացավ Նիգերիայի Դաշնությանը, իսկ հարավային մասը 1961թ. հոկտեմբերի 1-ին միացավ Կամերունի Հանրապետությանը:

**Տանգանիկա** (բրիտանական կառավարման ներքո)
Անկախացավ 1961թ. (1964թ. Տանգանիկան և Զանզիբարի նախկին պրոտեկտորատը, որն անկախություն ստացավ 1963թ., միավորվեցին մեկ՝ Տանզանիայի Միացյալ Հանրապետություն անունը կրող պետության մեջ:

**Ռուանդա-Ուրունդի** (բելգիական կառավարման ներքո)
1962թ. քվեարկեց երկու ինքնիշխան պետությունների՝ Ռուանդայի և Բուրունդիի բաժանվելու օգտին:

**Արևմտյան Սամոա** (նորզելանդական կառավարման ներքո)
1962թ. դարձավ անկախ՝ որպես Սամոա:

**Նաուրու** (կառավարում էր Ավստրալիան՝ Ավստրալիայի, Նոր Զելանդիայի և Մեծ Բրիտանիայի կողմից)
Դարձավ անկախ 1968թ.:

**Նոր Գվինեա** (կառավարվել է Ավստրալիայի կողմից)
Պապուայի ոչ ինքնակառավարվող տարածքի հետ միավորվելով, որը նույնպես կառավարվում էր Ավստրալիայի կողմից, 1975թ. դարձավ Պապուա Նոր Գվինեայի անկախ պետություն:

**Խաղաղօվկիանոսյան խնամակալության տակ գտնվող տարածքները.**

**(ա) Միկրոնեզիայի Դաշնային Նահանգներ**

1990թ. դարձավ լիովին ինքնակառավարվող՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ ազատ ասոցիացվածի կարգավիճակով:

**(բ) Մարշալյան կղզիների Հանրապետություն**

1990թ. դարձավ լիովին ինքնակառավարվող՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ ազատ ասոցիացվածի կարգավիճակով:

**(գ) Հյուսիսային Մարիանյան կղզիների Համագործակցություն**

1990թ. դարձավ լիովին ինքնակառավարվող՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ համագործակցության կարգավիճակով:

**(դ) Պալաու**

1994թ.դարձավ լիովին ինքնակառավարվող՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների հետ ազատ ասոցիացվածի կարգավիճակով:

# ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲՅՈՒՋԵՆ

2000-2001թթ. երկամյակի համար ՄԱԿ-ի հատկացումները կանոնավոր բյուջեին (այսինքն՝ չհաշված գրասենյակների ու ծրագրերի, ինչպես նաև մասնագիտացված գործակալությունների ու հարակից մարմինների ամբողջությունը), ինչպես նախապես հաստատվել է 1999թ., կազմեց 2 535 689 200 դոլար, որը բաշխվել է ծախսերի հետևյալ հիմնական 13 տեսակներին (ԱՄՆ դոլարով).

| | | |
|---|---|---|
| 1. | Ընդհանուր քաղաքականության իրագործում, ուղղորդում և համակարգում | 473 645 300 |
| 2. | Քաղաքական հարցերի լուծում | 231 586 300 |
| 3. | Միջազգային արդարադատություն և իրավունք | 55 386 800 |
| 4. | Միջազգային համագործակցություն զարգացման համար | 268 767 900 |
| 5. | Տարածաշրջանային համագործակցություն զարգացման համար | 347 230 400 |
| 6. | Մարդու իրավունքներ և մարդասիրական հարցեր | 123 613 100 |
| 7. | Հանրային տեղեկատվություն | 143 605 500 |
| 8. | Ընդհանուր աջակցության ծառայություններ | 441 857 400 |
| 9. | Ներքին հսկողության տեսչություն | 19 220 600 |
| 10. | Համատեղ ֆինանսավորվող միջոցառումներ և հատուկ ծախսեր | 60 845 500 |
| 11. | Կապիտալ ծախսեր | 42 617 400 |
| 12. | Աշխատակազմի հարկում* | 314 248 000 |
| 13. | Զարգացման հաշիվ | 13 065 000 |

* ՄԱԿ-ի ողջ աշխատակազմի ընդհանուր վճարը հավասարեցնելու նպատակով, ինչպիսիք էլ լինեն նրանց ազգային հարկային պարտավորությունները, կազմակերպությունը աշխատավարձերից որոշակի գումար է հանում՝ որպես «աշխատակազմի հարկում»: Պահումների չափը մոտավորապես հավասար է ԱՄՆ-ի քաղաքացիների կողմից սովորական չափով վճարվող ֆեդերալ, նահանգային ու տեղական հարկերի գումարին՝ միասին վերցրած: ՄԱԿ-ի կողմից որպես աշխատակազմի հարկում գանձված գումարը հետագայում հանվում է աշխատակցի երկրի՝ ՄԱԿ-ին տրվող անդամավճարի հաշվից:

Բացառությունների մեծ մասն իր՝ ՄԱԿ-ի աշխատակից հանդիսացող քաղաքացիներին ազատում է հետագա հարկումից: ԱՄՆ-ն բացառություն է. նրա քաղաքացիները, որոնք աշխատում են քարտուղարությունում, պետք է վճարեն նույն հարկերը, ինչ ԱՄՆ-ի բոլոր քաղաքացիները: ՄԱԿ-ը փոխհատուցում է ԱՄՆ-ի քաղաքացի հանդիսացող աշխատակիցներին իրենց աշխատակազմի հարկման այն մասից, որը հավասար է երկրի հարկային մարմինների կողմից պահանջվող հարկի գումարին, որպեսզի օգնի նրանց վճարել իրենց հարկերը: Քաղաքացին այնուհետև այդ գումարը վճարում է հարկային մարմիններին: Այս կերպ ԱՄՆ-ի քաղաքացիները ստիպված չեն լինում կրկնակի հարկ վճարել:

Կանոնավոր ծրագրային բյուջեն, որի մասն են կազմում այս հարկերը, ծածկում է առանձին ծրագրերի, ծրագրային աջակցության ու կազմակերպության վարչական գործունեության առնչվող ծախսերը թե՛ կենտրոնակայանում, թե՛ ամբողջ աշխարհում:

Կանոնավոր բյուջեի ֆոնդերի հիմնական աղբյուրը անդամ երկրների վճարումներն են, որոնք գնահատվում են ասամբլեայի կողմից հաստատված սանդղակով, ըստ 18-հոգուց բաղկացած Վճարումների կոմիտեի ներկայացրած հանձնարարականի: Հիմնական չափանիշը, որի վրա է հիմնվում անդամավճարների սանդղակը, անդամ պետության՝ վճարումները կատարելու իրական կարողությունն է: Ասամբլեան մեկ վճարող երկրի համար սահմանել է առավելագույնը 22 տոկոս և նվազագույնը 0,001 տոկոս վճարման չափ:

2000-2001թթ. երկամյակի համար եկամտի նախնական գնահատումը, չհաշված անդամ պետությունների անդամավճարները, կազմել է 361 298 900 ԱՄՆ դոլար:

| | | |
|---|---|---|
| ա. | Եկամուտ աշխատակազմի հարկերից | 318 911 500 |
| բ. | Ընդհանուր եկամուտ | 37 178 000 |
| գ. | Հանրությանը մատուցած ծառայություններ | 5 209 400 |

# ՄԱԿ-Ի ՀԱՏՈՒԿ ՆՇՎՈՂ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐԸ, ՏԱՐԵԹՎԵՐԸ ԵՎ ՕՐԵՐԸ

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԱՍՆԱՄՅԱԿՆԵՐ ԵՎ ՏԱՐԻՆԵՐ

| | |
|---|---|
| 1993-2002 | Աֆրիկայի արդյունաբերական զարգացման երկրորդ տասնամյակ |
| 1993-2002 | Հաշմանդամների ասիական ու խաղաղօվկիանոսյան տասնամյակ |
| 1993-2003 | Ռասիզմի ու ռասայական խտրականության դեմ պայքարի երրորդ տասնամյակ |
| 1994-2004 | Աշխարհի բնիկ ժողովուրդների միջազգային տասնամյակ |
| 1995-2004 | Մարդու իրավունքների կրթության ՄԱԿ-ի տասնամյակ |
| 1997-2006 | Աղքատության վերացման ՄԱԿ-ի տասնամյակ |
| 2001-2010 | Գաղութատիրության վերացման երկրորդ միջազգային տասնամյակ |
| 2001-2010 | Աշխարհի երեխաների համար խաղաղության ու բռնություններից զերծ մշակույթի միջազգային տասնամյակ |
| 2001 | Կամավորների միջազգային տարի |
| 2001 | ՄԱԿ-ի քաղաքակրթությունների միջև երկխոսության տարի |
| 2001 | Ռասիզմի, ռասայական խտրականության, օտարատյացության ու դրանց առնչվող այլ անհանդուրժողականության դեմ մոբիլիզացման միջազգային տարի |
| 2002 | Լեռների միջազգային տարի |
| 2002 | Էկոտուրիզմի միջազգային տարի |
| 2003 | Քաղցրահամ ջրի միջազգային տարի |
| 2005 | Միկրովարկերի միջազգային տարի |

## ԱՄԵՆԱՄՅԱ ՆՇՎՈՂ ՕՐԵՐ ԵՎ ՇԱԲԱԹՆԵՐ

| | | |
|---|---|---|
| 8 | մարտի | Կանանց իրավունքների և միջազգային խաղաղության ՄԱԿ-ի օր |
| 21 | մարտի | Ռասայական խտրականության վերացման միջազգային օր |
| Սկսյալ | | |
| 21 | մարտից | Ռասիզմի ու ռասայական խտրականության դեմ պայքարող ժողովուրդների հետ համերաշխության շաբաթ |
| 22 | մարտի | Ջրի համաշխարհային օր |
| 3 | մայիսի | Մամուլի ազատության համաշխարհային օր |

| | |
|---|---|
| 15 մայիսի | Ընտանիքների միջազգային օր |
| 22 մայիսի | Կենսաբանական զանազանության միջազգային օր |
| Սկսյալ 25 մայիսից | Ոչ ինքնակառավարվող տարածքների ժողովուրդների հետ համերաշխության շաբաթ |
| 4 հունիսի | Ագրեսիայի զոհ դարձած անմեղ երեխաների միջազգային օր |
| 5 հունիսի | Շրջակա միջավայրի համաշխարհային օր |
| 17 հունիսի | Անապատացման ու երաշտի դեմ պայքարի համաշխարհային օր |
| 20 հունիսի | Փախստականների համաշխարհային օր |
| 26 հունիսի | Թմրամիջոցների չարաշահման ու ապօրինի շրջանառության դեմ պայքարի միջազգային օր |
| 26 հունիսի | Խոշտանգումների զոհերի աջակցության միջազգային օր |
| հուլիսի առաջին շաբաթ օրը | Կոոպերատիվների միջազգային օր |
| 11 հուլիսի | Բնակչության համաշխարհային օր |
| 9 օգոստոսի | Տեղաբնակ ժողովուրդների համաշխարհային օր |
| 12 օգոստոսի | Երիտասարդության միջազգային օր |
| 16 սեպտեմբերի | Օզոնի շերտի պահպանման միջազգային օր |
| 21 սեպտեմբեր | Խաղաղության միջազգային օր |
| 1 հոկտեմբերի | Տարեցների միջազգային օր |
| հոկտեմբերի առաջին երկուշաբթին | Հաբիտատի համաշխարհային օր |
| հոկտեմբերի երկրորդ չորեքշաբթին | Բնական աղետների նվազեցման միջազգային օր |
| 4-10 հոկտեմբերի | Տիեզերքի համաշխարհային շաբաթ |
| 16 հոկտեմբերի | Սննդի համաշխարհային օր |
| 17 հոկտեմբերի | Աղքատության վերացման միջազգային օր |
| 24 հոկտեմբերի | ՄԱԿ-ի օր |
| 24-30 հոկտեմբերի | Զինաթափման շաբաթ |
| 16 նոյեմբերի | Հանդուրժողականության միջազգային օր |
| 20 նոյեմբերի | Աֆրիկայի արդյունաբերականացման օր |
| 21 նոյեմբերի | Հեռուստատեսության համաշխարհային օր |
| 25 նոյեմբերի | Կանանց հանդեպ բռնությունների վերացման միջազգային օր |
| 29 նոյեմբերի | Պաղեստինյան ժողովրդի հետ համերաշխության միջազգային օր |

| | | |
|---|---|---|
| 1 | դեկտեմբերի | ՁԻԱՀ-ի դեմ պայքարի համաշխարհային օր |
| 2 | դեկտեմբերի | Ստրկության վերացման միջազգային օր |
| 3 | դեկտեմբերի | Հաշմանդամների միջազգային օր |
| 10 | դեկտեմբերի | Մարդու իրավունքների օր |
| 18 | դեկտեմբերի | Միգրանտների միջազգային օր |

# ԱՅԼ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԵՐ

***Այլ միջազգային օրեր, որոնք նշվում են ամբողջ ՄԱԿ-ի համակարգում.***

| | | |
|---|---|---|
| 21 | փետրվարի | Մայրենի լեզվի միջազգային օր |
| 23 | մարտի | Օդերևութաբանության համաշխարհային օր |
| 7 | ապրիլի | Առողջության համաշխարհային օր |
| 23 | ապրիլի | Գրքի և հեղինակային իրավունքի համաշխարհային օր |
| 17 | մայիսի | Հեռահաղորդակցության համաշխարհային օր |
| 31 | մայիսի | Ծխախոտի դեմ համաշխարհային օր |
| 23 | օգոստոսի | Ստրուկների առևտրի և դրա վերացման հիշատակի միջազգային օր |
| 8 | սեպտեմբերի | Գրագիտության միջազգային օր |
| սեպտեմբերի վերջին շաբաթը | | Ծովի համաշխարհային օր |
| 5 | հոկտեմբերի | Ուսուցիչների համաշխարհային օր |
| 9 | հոկտեմբերի | Փոստի համաշխարհային օր |
| 10 | հոկտեմբերի | Մտավոր առողջության համաշխարհային օր |
| 24 | հոկտեմբերի | Զարգացման տեղեկատվության համաշխարհային օր |
| 20 | նոյեմբերի, փոփոխական է | Երեխաների համաշխարհային օր |
| 5 | դեկտեմբերի | Տնտեսական ու սոցիալական զարգացման կամավորների միջազգային օր |
| 7 | դեկտեմբերի | Քաղաքացիական ավիացիայի միջազգային օր |

Հրատարակիչները երախտապարտ կլինեն
ընթերցողների արձագանքների և առաջարկությունների համար

Հասցեն՝ Հանրային տեղեկատվության վարչության
Երևանյան գրասենյակ
Կ. Լիբկնեխտի 14, Երևան 375010
E-mail: dpi@undp.am

Տպագրվել է «Տիգրան Մեծ» ՓԲԸ հրատարակչատանը: